

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Доклады республиканской научной сессии
(Ереван, 2013 г., 22-24 мая)

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

DJAHUKIAN READINGS

Republican scientific session reports
(Yerevan, 2013, May 22-24)

Ереван 2013
Yerevan 2013

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՅՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, 2013 թ., մայիսի 22-24)

Երևան 2013

**Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտա-
կան խորհրդի որոշմամբ**

	ՋԱՅՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Հանրապետական գիտական ստաշոջանի գեկու- ցումներ <i>(Երևան, 2013 թ., մայիսի 22-24).</i> - Ե.:
--	--

Խմբագրական խորհուրդ՝ Բ.Գ.Թ. Վ.Կատվալյան (նախագահ), Բ.Գ.Դ., պրոֆ.
Վ.Համբարձումյան, Բ.Գ.Դ., պրոֆ. Գ.Խաչատրյան, Բ.Գ.Դ., պրոֆ. Լ. Հովհան-
նիսյան, Բ.Գ.Դ., պրոֆ. Լ.Հովսեփյան, Բ.Գ.Դ., պրոֆ. Ա. Սարգսյան, Բ.Գ.Դ.
Ռ.Թոխմախյան, Բ.Գ.Թ. Ա. Գալստյան, Բ.Գ.Թ. Ն. Հովհաննիսյան, Բ.Գ.Թ. Ժ. Միքա-
յելյան, Բ.Գ.Թ. Ն. Սարգսյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաքելյան Կարինե - Առարկայահասկացական և գնահատողական բառաշերտը Գ. Ջահուկյանի բանաստեղծական գրքում	6
Ասոյան Թաթուլ - Նկատառումներ Մխիթարյանների հայերենագիտական գործունեության վերաբերյալ.....	14
Գալստյան Անահիտ - Լեզվաբանական տերմինների գործածության սխալների և հարակից այլ հարցերի մասին.....	20
Գալստյան Աշոտ - Գեղարվեստական վավերագրության տեսակները և դրանց լեզվաոճական կառուցվածքը.....	25
Գրիգորյան Սուսաննա - Բժշկագիտական հասկացությունները Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ.....	35
Դիրքարյան Նարինե - Բնիկ և փոխառյալ կազմիչները Հայաստանի տեղանվանական համակարգում.....	45
Դոխոյան Ռուզաննա - Գրավոր խոսքի ասացականները արդի հայերենում.....	55
Թադևոսյան Հասմիկ - Բարբառային բառեր և բարբառային ձևեր 17-րդ դարի բժշկարաններում (Ասար և Բունիաթ Մեքաստացիներ).....	63
Խաչատրյան Լալիկ - Լեզվամշակութաբանության հարցեր.....	71
Հարությունյան Խաչիկ - 14-15-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների բառապաշարի քննություն.....	79
Ղազարյան Շուշանիկ - Համեմատությունները Հակոբ Օշականի փոքր արձակում.....	87
Ղամոյան Լուսինե - Անկախ արմատով և կախյալ բայահիմքով համանունների բառակազմության իմաստաբանություն.....	92
Մկրյան Արամ - «Բարկանալ» և «վախենալ» նշանակությամբ կազմաբանական դարձվածքների զուգադրական քննություն (արդի հայերենի և իտալերենի նյութերի հիման վրա).....	98
Մկրտումյան Արմինե - Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորները և նրանց հոմանշությունը.....	107
Պողոսյան Նորայր - Հնչյունափոխական-բառապաշարային նոր դրսևորումներ վաղ աշխարհագրում.....	115
Սանթրյան Արեն - Զրո. գոյակա՞ն, թե՞ անկանոն թվական.....	128
Սարգսյան Նվեր - Գործառական ակտիվությամբ բնութագրվող բառաքերականական կարգեր խոսակցական լեզվում.....	137
Սիրունյան Նեկտար - Գրաբարի յ- նախամասնիկով բայերը.....	143
Տիտյան Սուսաննա - <i>Արդարև</i> վերաբերականի իմաստային դրսևորումները <<Արեվակ>>-ում.....	148
Աղաբեկյան Մելադա - Հայոց լեզվի բարբառային ձեռագիր նյութերի համակարգչային մշակման խնդիրները.....	154
Բառնապյան Ջեմմա - Հայերենի բարբառների դերանվանական որոշ ձևերի շուրջ.....	159
Գևորգյան Գայանե - Քերականական համանիշության դրսևորումները հայերենի բարբառների բայի անցյալ ժամանակաձևերում.....	165
Խաչատրյան Հասմիկ - <i>Առու</i> հասկացության զուգաբանությունների	

բարբառային քննություն.....	171
Կատվայան Վիկտոր - Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը.....	179
Միքայելյան Ժաննա - Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները հայերենի արևելյան խմբակցության մի քանի բարբառներում	189
Միքայելյան Սոնա - Արաբերենի բաղաձայնների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում (հնչյունաբանական քննություն).....	200
Տեր-Գրիգորյան Լիլիթ, Մկրտումյան Անահիտ - Գունանունները պարսկահայ տարածքի խոսվածքների օրինանքներում և անեծքներում.....	208
Մկրտչյան Գարիկ - Միջին հայերենի եվ Մշո բարբառի անվանական հոլովումների զուգադրահամեմատական բնութագիրը.....	215

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գալստյան Հասմիկ - Նախդիրների օգնությամբ ածականացված գոյականների իմաստաբանական քննության փորձ (ժամանակակից ֆրանսերենի նյութի հիման վրա).....	225
Գրիգորյան Գայանե - Արդի փորձառական հնչյունաբանության վիճակը արտերկրում.....	230
Խաչատրյան Օֆելյա, Մուրադյան Անահիտ - Վերլուծական բարդությունները Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունում.....	237
Մանուկյան Անժելա, Ուռուտյան Ռոբերտ - Հայերենի այբուբենի տառերի հաճախության վերլուծություն.....	247

ԱՌԱՐԿԱՅԱՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ
Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳՐՔՈՒՄ

Այս կամ այն հեղինակի բառապաշարի իմաստային կառուցվածքը քննելիս հաճախ հարկ է լինում կատարել մի քանի ստորաբաժանումներ, քանի որ բառերը կարող են օժտված լինել տարբեր՝ առարկայահասկացական, գնահատողական, հուզաարտահայտչական, փոխաբերական և այլ իմաստներով:

Ցանկացած բառ, որ պատկանում է բառապաշարի չեզոք շերտին, օժտված է անվանողական արժեքով, որը հիմնականում նրա առաջնային, ուղղակի իմաստն է: «Չեզոք բառապաշարը ծառայում է իբրև ֆոն, որի վրա և որի շնորհիվ իր ամբողջ բազմազանությամբ ու նուրբ երանգավորմամբ ի հայտ է գալիս խոսակցական և գրքային բառերի հուզաարտահայտչական բնութագիրը... Բառերը միավորվում են բառապաշարային խմբերի մեջ գործառնաարտահայտչական տեսակետից»¹:

Չեզոք շերտի բառերը «կազմում են ամեն մի լեզվի, նմանապես նաև հեղինակային լեզվի հիմնական բառաշերտը: Այսպես, օրինակ, ըստ հետազոտությունների... «չեզոք հիմքը ներկայացնում է ժամանակակից ռուսաց գրական լեզվի տարրերի երեք քառորդը...»²:

Շատ անգամ գեղարվեստական պատկեր ստեղծելու համար այս կամ այն հեղինակը բառերն օգտագործում է ոչ ուղղակի կամ առաջնային, այլ փոխաբերական իմաստներով: Սակայն շատ հաճախ իրենց անվանողական իմաստներով բառերն ստեղծում են հիացմունքի արժանի պատկերներ, արվեստի գլուխգործոցներ, և Ջահուկյանի քնարերգությունն էլ այս առումով բացառություն չէ: Համոզվելու համար դիմենք բնագրային վկայություններին:

Հիշենք *պատկեր* բառը: Այն հասարակ գոյական է, և բառարաններն այն հիմնականում բացատրում են որպես «Գեղանկարչական ստեղծագործություն թղթի, կտավի, տախտակի վրա, նկար: Որևէ բանի ընդօրինակված վերարտադրություն... Առարկայի անդրադարձած տեսք երևույթ: Տեսք, կերպարանք, դեմք: Տեսարան, բնապատկեր»³ և այլն, նաև նշում ինչ-ինչ փոխաբերական իմաստներ:

Բառն իր տեղն է գտել հեղինակի ամենավաղ շրջանի ստեղծագործություններում: Տակավին պատանի՝ տասնհինգամյա Ջահուկյանը բանաստեղծական ճանապարհին անում էր անդրանիկ փորձերը, թեպետև, ինչպես ինքն էր խոստովանում. «Ճիշտ է, եղել են ավելի վաղ (7-8 տարեկանից) փորձեր, բայց 1935 թվականից ես պարբերաբար բանաստեղծություններ եմ գրել՝ առանց դրանք հրատարակելու»⁴: Ահա հենց 1935-ին գրված բանաստեղծություններից մեկում կարդում ենք.

Դողդողաց մի պատկեր
Անձրևոտ փողոցում... (5)

Թվում է՝ գործ ունես հասարակ պատմողական նախադասության հետ, որտեղ բոլոր բառերն օգտագործված են իրենց առաջնային, անվանողական իմաստներով, սակայն ամեն հաջորդ բառի հետ համոզվում ես, որ ոտանավորը կառուցված է փոխաբերության հիմքի վրա, և պատկերն էլ թերևս անդրադարձ է, բայց ոչ որևէ առարկայի, այլ ցաված հոգու անդրադարձ անձրևոտ փողոցում, որն այս դեպքում կարելի է ընկալել իբրև տխրության խորհրդանիշ.

Ուր հազար կաթիլներ
Լալիս են, հեծեծում,
Ուր երգերն իմ անտեր

Ցավով սիրտ են խոցում... (5) Նմանատիպ երևույթ նկատում ենք նաև «Գիշեր» բանաստեղծության մեջ, որտեղ բոլոր տներն սկսվում են նույն «Քայլում էր նա...» պատմողական նախադասությամբ, ապա կառուցվում այլաբանական պատկերներ, ինչպես.

Քայլում էր նա... Հուր ծիծաղով
Կանչում էր լույսն ու մարում,
Թավալվում էր գետը խաղով
Հազարաչա խավարում (15):

Երբեմն բանաստեղծը մեկ բանատան, անգամ ամբողջական բանաստեղծության բոլոր կամ գրեթե բոլոր բառերն է օգտագործում առաջնային-անվանողական իմաստով և ստեղծում գեղարվեստական պատկերներ, որոնք որևէ կերպ չեն զիջում հուզաարտահայտչական երանգով օժտված բառերով կազմված պատկերներին, ինչպես.

Առավոտյան գային աշխույժ մանուկներ,
Թափառեին իմ շիրիմի մոտ լի ցողով,
Հնչեցնեին ուրախ խոսքեր ու երգեր
Քրքջային անմահական ծիծաղով... (27)

Անշուշտ «ոչ միայն իրական դեպք կամ տպավորիչ պատկեր, այլև խորը փիլիսոփայական խորհրդածություններ կարելի է պատկերավոր կերպով արտահայտել բառերի ուղղակի իմաստների օգնությամբ»⁵:

Հաճախ անվանողական արժեքով օժտված բառերը հեղինակին օգնում են կերտելու պատկերավորման այլազան միջոցներ, ինչպես, համեմատություն- «Մրահոն ճակատիդ ներքևում՝ Փայլփլող զուգ աչքերն են սիրում, Բոլորող լուսնի պես լուսավառ Իմ անո՛ւշ, իմ անո՛ւշ սիրահար» (7) , «Ըկած էր նա այդպես տխուր, գլխաբաց, Ընկած էր նա որպես անձայն մի ուրու» (59). փոխաբերություն - «Ոչ ելք ենք գտնում անտառից հսկա, ոչ կարողանում դառնալ դեպի հետ... Մեզ համար երբեք փրկություն չկա, Մեր ճանապարհը փակված է հավետ» (71) , կրկնություն. «Մոռացել ես, մոռացել ինձ, Եվ ուժ չկա էլ խոսելու» (183). չափազանցություն - «Նա չխոսեց, նա չարտասվեց, չսգաց Արև ծածկող դագաղի մոտ սիրուհու» (59) և այլն:

Բառերն իրենց անվանողական-առաջնային իմաստներով հաճախ օգտագործվում են հեղինակի արձակ բանաստեղծություններում: Երբեմն միայն այս միավորների միջոցով կառուցվում են ամբողջական պարբերություններ, ու միշտ խոսքը հարստանում է զանազան նրբերանգներով, ինչպես. «Այսօր ես ցանկանում էի մենակ լինել: Ես վերցրի գիրքը և գնացի պուրակը: Եթե մեկը նայեր ինձ, կգարմանար, թե ինչու եմ ես այդքան ուշադիր նայում միշտ միևնույն էջին: Ա՛խ, ինչ իմանար զարմացողը, որ դու հեռանում ես ինձնից և հեռանում ես գուցե հավիտյան» (138):

Այստեղ բոլոր բառերն արտահայտում են իրենց ուղղակի իմաստները, վերաիմաստավորում չկա, սակայն դրանից ամենևին չի տուժում պատկերի բանաստեղծականությունն ու արտահայտչականությունը: Որոշ լեզվաբաններ առարկում են բանաստեղծական պատկերները միայն մակդիրներին և դարձույթներին հանգեցնելու դեմ՝ պնդելով, որ «հարցը միայն պատկերավոր արտահայտությունները չէ, այլ յուրաքանչյուր բառի անխուսափելի պատկերավորությունը, քանի որ այն մատուցվում է գեղարվեստական նպատակներով, քանի որ այն տրվում է ամբողջական պատկերավորության համատեքստում»⁶:

Երբեմն բառերի անվանողական իմաստներից բանաստեղծը կտրուկ անցում է կատարում նույն բառերի փոխաբերական իմաստներին՝ ստեղծելով հակադրության ինքնատիպ օրինակներ, ինչպես «Գարունը եկավ» տողով սկսվող արձակ բանաստեղծության մեջ. «Գարունը եկավ, բոլոր պարտեզները ծաղկեցին, երգեցին բոլոր թռչունները: Բայց իմ հոգու պարտեզը երբեք չծաղկեց, ու երբեք չերգեց իմ հոգու թռչունը» (116):

Բացի անվանողական արժեքով օժտված բառերից Ջահուկյանի քնարերգության մեջ մեծ դեր ու կշիռ ունեն գնահատողական արժեքով օժտված բառերը: Գնահատողական նշանակություն ունեցող բառերն արտահայտում են հասարակության կողմից ընդունված դրական կամ բացասական բնութագիր ունեցող իրերի, երևույթների կամ դրանց հատկանիշների հասկացություններ⁷: Ինքնին վերցրած՝ այս միավորները հուզաարտահայտչական երանգավորում և ոճական գործառույթ չունեն: Սակայն գեղարվեստական գրականության մեջ, խոսքային համապատասխան միջավայրում, նման բառերը հաճախ ստանում են ոճական երանգավորում, նպաստում խոսքի հարստացմանը և ծառայում ոճական այլևայլ նպատակների: Սա, անշուշտ, կատարվում է նախ և առաջ հեղինակի՝ տվյալ իրի կամ երևույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքի շնորհիվ: Ըստ որոշ լեզվաբանների «ուշադրություն դարձնելով ոճական երևույթի հատկապես գնահատողական իմաստին... նկատենք, որ այն կարող է ընկնել ոչ միայն ոճաբանական միջոցի (ոճաբանական իմաստի շնորհիվ), այլև ոճաբանական հնարանքի ստեղծման հիմքում, անկախ այն բանից, թե ինչպիսի ոճաբանական միջոց է նրա միջուկը»⁸:

Ջահուկյանի քնարերգությունն առատ է թե՞ դրական, թե՞ բացասական գնահատողական երանգավորմամբ օժտված բառերով: Դրական երանգավոր-

մամբ բառերը խոսքին հիմնականում հաղորդում են վեհություն, գրավչություն, նրբագեղություն, օժտում այլ արժանիքներով: Այսպիսին է պարագան *հմայուն* և *պերճ* բառերի դեպքում «Քո աչքերը» բանաստեղծության մեջ.

Այդ քո մանկական շող աչքերի մեջ

Մի ողջ աշխարհ կա *հմայուն* ու *պերճ...* (65)

«Խնդություն» ոտանավորի մեջ, սկսյալ վերնագրից, բանաստեղծը խտացրել է դրական երանգավորմամբ բազմաթիվ բառեր՝ ստեղծելով մարդու և բնության ներդաշնակության, հոգեկան ցնծության գեղարվեստական պատկեր.

Նայեցի դուրս՝ պայծառ օր,

Հուսո երգ կար չորսքույր,

Լի էր երկինքը անամպ

Անեզրական խնդությամբ... (173)

Կապված ասելիքի առանձնահատկությունների հետ՝ գնահատողական արժեքով օժտված բառերը հեղինակին օգնում են խոսքը հումորով համեմատելու կամ առաջացնում են հեզնական տրամադրություն, ինչպես *ծաղր* բառի դեպքում «Համառորեն կարծում է նա» տողով սկսվող բանաստեղծության մեջ.

Կերպարանքում իմ տխրադեմ

Ոչինչ չկա *ծաղրից* բացի.

Հոգյա՞կս, ես վաղուց գիտեմ

Բոլոր խաղերը կանացի (65)

Նկատելի է նաև մի երևույթ. բացասական գնահատողական իմաստով բառերի դրական երանգավորմամբ գործածությունը: Այսպիսին է *խենթ* բառի կիրառությունը «Հուսահատ թափառում եմ կյանքի անտառում» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ խենթությունը շատ ավելի վերաբերում է պատանեկան վառ հույսերին ու ոգևորությանը, կամ *կոպիտ* ու *դաժան* բառերի կիրառությունը «Ինձ համար չունես դու ոչ մի ժպիտ» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ խոսքը ներված, սպասված ու սիրված կոպտության ու դաժանության մասին է.

Ու խորհում ենք անվերջ, ու թախծում իրար հետ

Օրերի համար վառ, հույսերի համար *խենթ...* (117)

Թող լինես *կոպիտ*, թող լինես *դաժան*,

Միայն թե ապրես ինձնից անբաժան... (67)

Նմանատիպ է նաև *մեղսային* բառի գործածությունը «Դու քո տաժած սիրո մասին» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ բառը չի կարելի հասկանալ իր առաջնային-բառարանային իմաստով, որ նշանակում է. «1. Մեղք, հանցանք հանդիսացող: 2. Մեղքեր՝ հանցավոր արարքներ կատարած՝ կատարող: 3. Մեղավոր՝ հանցավոր ձգտումներ պարունակող: 4. Ախտավոր, մոլի, դատապարտելի»⁹: Բնագրում բառը գուցե և հականիշ է իր բառարանային իմաստին.

Դու քո տաճած սիրո մասին
Ոչինչ չես ասում,
Քո փոխարեն քո մեղսային
Աչքերն են խոսում... (38)

Նկատելի է նմանություն հայ քնարերգության գագաթներից մեկի՝
Վահան Տերյանի բանաստեղծության հետ.

Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր,
Գիշերի պես խորհրդավոր...¹⁰

Ճիշտ է նշվել, որ «ցանկացած խոսքային միջավայր օժտված է ձուլող ուժով, որն ստիպում է բառին կատարել այս և ոչ այն գործառնությունները և գունագարդում է նրան գործունեության երանգով: Գրականության մեջ գործառնությունների յուրօրինակությունը և անկրկնելիությունը որոշակի է դարձնում բառընտրությունը: Յուրաքանչյուր բառ, տեղ գտնելով այստեղ, ձուլվում է նրան, սակայն բանաստեղծության կազմում հայտնվելու համար բառի բառապաշարային բնութագիրը պետք է կառուցողականորեն գիտակցված լինի գրական առումով: «Գրականության ավանդական նկարագիրը, -գրում էր Պատուր,- նկարագարողում է բառամթերքը: Միջնադարյան ժողովրդական էպոսը, պալատական ասպետական վեպը և այլն չեն անդրադառնում բառերի մի ամբողջ ծավալի: Բառը տեղ է գտնում գրականության մեջ որոշակի պայմանների դեպքում»¹¹:

Գնահատողական արժեքով օժտված բառերը դառնում են պատկերավորման զանազան միջոցների միջուկը: Մի քանի օրինակ. մակդիր. «Չուզեցի իմ *խախտու* բախտի հետ քեզ կապել, Իմ կողմից կլինե՞ր այդ արարք *տմարդի...*» (45), «Երբեք բախտը, ինձ *կույր* բախտը չգթաց, Ա՛խ, օտար են միշտ աչքերը քո *խոսուն...*» (102), համեմատություն. «Հիշում ես՝ անցնում էինք ես և դու: Դու՝ ծագող արևի պես պայծառ, ես՝ մայր մտնող աստղի պես դժգույն...» (144), «Դու այլևս առաջվանը չես: Դու այնպես մեղմ էիր, ինչպես զարնան արևաշող առավոտը, իսկ հիմա ձմեռվա ցրտի ես նման...» (144), փոխաբերություն. «Անվերջ հեծեծում է չար հողմը, կանչում է, կանչում է և ո՞ւր. Մշուշը պատել է չորս կողմը, Եվ սիրտս մթին է ու լուռ...» (172), «Բայց նա հեկեկում միշտ անմխիթար, Լալիս է անհույս, անարև, օտար: Եվ գիշերցերեկ հոգուս անկյունում Անվերջ իր տանջող զանգատն է անում» (137), փոխանունություն. «Անհույս, անարև մշուշների մեջ Հագիվ է շողում աստղիկը կյանքի, Եվ չկա գոնե լուսեղեն մի էջ Անծիր գիշերում իմ տառապանքի...» (172), շրջասություն. «Իմ ցավն աշխարհն է բռնել Կյանքիս դղյակն է վառում, Ինձ վիճակված է մեռնել՝ Չտեսած կյանք ու գարուն...» (91), չափազանցություն. «Դու ինձ նոր կյանք ես խոստանում, իմ բարեկա՛մ, իմ մտերի՛մ, Իսկ նա առանց խղճի խայթի մղում է ինձ դեպի շիրիմ, Առանց վշտի նա կիյուսի կախաղանիս համար պարան, Բայց ես նրան եմ լոկ սիրում, միայն նրան, նրան, նրան...» (122) և այլն:

Գնահատողական արժեքով օժտված բառերի միջոցով հեղինակն արտահայտել է զանազան հակադրություններ, ինչը պատահական չէ, քանի

որ հակադրությունը «միաժամանակ ենթադրում է առարկաների ու երևույթների համեմատություն, սակայն համեմատության հետ առնչություններ ունենալով հանդերձ՝ հակադրությունն ընդգծում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների ընդհանրությունները, այլ նրանց այն տարբերությունները, որոնք հակադրական են»¹²:

Մի քանի օրինակ. «Լսի՛ր շրջապատին, քանի խելոք է նա, Իսկ երբ խենթի փոխվի, լարի՛ր ըմբոստ քնար...» (78), «Տիրապետի՛ր խոսքերի մեջ ժլատության արվեստին Ու նրանով արտահայտի՛ր շռայլությունն իմաստի...» (78), «Ծիծաղի տեղ՝ դառը լաց, Ու ժպիտի տեղ՝ արտասուք...» (79), «Ինձ խելոք են կարծել, Խորհուրդ նստել ինձ հետ, Մինչդեռ վաղ եմ դարձել Անհուսալի մի խենթ...» (101), «Ինչ որ չար եմ արել, պատահական էր այն, ինչ որ բարի արի, նրանով կամ լոկ ես...» (119):

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, հեղինակը հակադրությունները հիմնականում կազմել է հականիշների միջոցով, սակայն հետաքրքրական է նկատել, որ ոչ միշտ: Ջահուկյանը հակադրել է նաև հասկացություններ, որոնք սովորական դեպքում ամեննին հակադրական չեն, և ստեղծել, կարելի է ասել, դիպվածային հականշության ինքնատիպ օրինակներ: Այսպիսին է պարագան «Հոգուս մեջ ահա մտել են վեճի» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ հակադրված են աշխարհաճանաչողության երկու տարբեր ճանապարհներ, և երկուսն էլ ճիշտ են՝ հաճախ իրարամերժ լինելով հանդերձ:

Հոգուս մեջ ահա մտել են վեճի

Հանճարեղ պոետն ու փիլիսոփան... (92)

Սակայն բանաստեղծն ու փիլիսոփան չեն կարող մշտապես հակադրվել, ի վերջո պիտի լրացնեն միմյանց, գուցե միավորվեն միևնույն գաղափարի ու նպատակի շուրջ, և բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ քառատողով:

Նոր հուր կվառեն, նոր անշեջ քուրա,

Կհերկեն բոլոր դաշտերը խոպան

Եվ կիշխեն բոլոր սրտերի վրա

Հանճարեղ պոետն ու փիլիսոփան... (92)

Երբեմն մեկ բանատան մեջ հեղինակն օգտագործում է գնահատողական արժեքով օժտված մի քանի բառեր՝ դրանով ավելի ընդգծելով ասելիքը, ավելի ցայտուն դարձնելով հոգեվիճակը, ավելի խտացնելով գույները, ինչպես.

Հոգուս մեջ՝ մութ վրեժ ու հանցանք,

Գլխիս մեջ՝ ահավոր գառանցանք:

Լոկ մի քայլ՝ դառնալու խելագար,

Մարելու այս խարույկը տկար:

–Բայց արժի՞ լինել խենթ ու խռով

Մի անմիտ ցնորքի պատճառով (12):

Երբեմն էլ մեկ բանատան մեջ օգտագործել է գնահատողական արժեքով օժտված հոմանիշ բառեր՝ ստեղծելով հոմանշային կրկնության գեղեցիկ օրինակեր, ավելի համակողմանիորեն բնութագրելով առարկան կամ երևույթը.

Մեր դեմը վշտերն են, ցավերը, վերքերը,
Եվ սուտ է աշխարհը, և կյանքը մեր՝ սին...
Ամեն ինչ ունայն է, դատարկ է ու սին է,
Ամեն ինչ խաբկանք է՝ ընկած մեր առաջ... (183)

Տեղին է նշել, որ «անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ օգտագործումը վնասում է խոսքի սեղմությանը: Համենայն դեպս, դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, ուր հոմանիշների այդպիսի օգտագործումով ընդգծվում է նախադասության առանձնապես կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է զորեղանում խոսքի արտահայտչականությունը»¹³:

Անվանողական և գնահատողական արժեքով օժտված բառերի, երբեմն դրանցով կազմված տողերի ամբողջական կամ մասնակի կրկնությունները ևս հատուկ են Ջահուկյանի լեզվին և խոսքին հաղորդում են լրացուցիչ հուզականություն և արտահայտչականություն, այսպես.

Ավելորդ են հիմա բոլոր խոսքերը ջերմ,
Ավելորդ են հիմա բոլոր խոսքերն անուշ... (145)

Կամ՝

Մահն է միայն փրկություն,
Մահն է հավերժ կանչում ինձ,
Մահը, մահն է ինձ դյուրում
Քո արևշող աչքերից... (145)

Ինչպես երևում է այս համառոտ քննությունից, Գևորգ Ջահուկյանի չափաճոյում անվանողական և գնահատողական իմաստներով օժտված բառերն ունեն իրենց ուրույն տեղը: Գեղարվեստական պատկերի ստեղծման գործում այս միավորները հաճախ չեն զիջում մինչև իսկ հուզաարտահայտչական բովանդակությամբ բառերին, և շատ անգամ հենց սրանցով են պայմանավորված խոսքի բանաստեղծականությունն ու կատարելությունը:

Հավելենք նաև, որ Ջահուկյանը գերազանց էր տիրապետում բառընտրության արվեստին, և այն գաղափարը, որ «միտքը ճշգրիտ արտահայտելու նպատակով առաջացած բառընտրության խնդրի հաջող լուծման համար չափազանց օգտակար է ուշադրությամբ «զննել» և «լսել» բառերը՝ ուղեցույց ունենալով տվյալ լեզվում եղած իմաստաբանական փոխհարաբերությունները»¹⁴, լիովին հասու էր իրեն: Երբեմն բանաստեղծական մի փոքրիկ տան մեջ խտացրել է անվանողական, գնահատողական և հուզաարտահայտչական արժեքով օժտված բառեր միանգամից և պատկերն օժտել բազմաթիվ հոգեբանական ենթաշերտերով, ինչպես «Չէի տենչում գանձեր բազում» տողով սկսվող ոտանավորում, որը գուցե լավագույնս

արտահայտում է այս անգամ արդեն Ջահուկյան մարդու սրտի խորքից արված խոստովանությունը.

Չէի տենչում գանձեր բազում
Եվ կյանքի փառք արևահաղթ,
Փոքրիկ մի սեր էի ուզում
Եվ նրա հետ փոքրիկ մի բախտ... (169):

Ծանոթագրություններ

1. Ю.А.Бельчиков, Лексическая стилистика, Москва, 1988, стр. 30.
2. Ա.Պապոյան, Ակնարկներ Պարույր Սևակի բառապաշարի և տաղաչափության, Ե., 1991, էջ 32:
3. Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
4. Գ.Ջահուկյան, Բանաստեղծական գիրք, Ե., 2001, էջ 3: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:
5. П.Г.Пустовойт, Взаимоотношение слова и образа, в книге Поэтическая стилистика, Воронеж, 1982, стр. 17.
6. А.М.Пешковский, Вопросы методики родного языка, лингвистики и стилистики, М.-Л. , 1930, стр. 158.
7. Հմմտ. Ա.Պապոյան, նշվ. աշխ., էջ 37:
8. Т.Г.Винокур, Закономерности стилистического использования языковых единиц, Москва, 1980, стр. 62-63.
9. Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
10. Վ.Տերյան, Բանաստեղծություններ, Լիակատար ժողովածու, Ե., 1985, էջ 303:
11. Ю.Н.Тынянов, Проблемы стихотворного языка, Москва, 1965, стр. 90.
12. Պ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Ե., 1991, էջ 165-166:
13. Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 77:
14. Ю.А.Бельчиков, Лексическая стилистика, Москва, 1988, стр. 108.

Karine Arakelyan- The Object -conceptive and Appreciative Words in the Poetical Book of G.Jahookyan.-The article deals with object-conceptive and appreciative words in the poetry of G.Jahookyan. It is very rich and pithy. In creating the poetical image these lexical units do not yield to words with expressive-emotional meanings. The poetical way of thinking of G.Jahookyan is closely connected with using of object – conceptive and appreciative words, which create unique beauty.

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1701թ. սեպտեմբերի 8-ին Պոլսում Մ. Սեբաստացին հավաքում է իր 10 աշակերտներին, պարզաբանում ստեղծվելիք միաբանության նպատակն ու խնդիրները, որոնք բոլորի կողմից ձևակերպվում են հետևյալ կերպ. Ծառայել հայ ազգին, նրա կրոնական, բարոյական և մտավոր վերելքին:

Միաբանությունն ստեղծելու գաղափարը այսրոպեական որոշման արդյունք չէր, ծնվել էր երկար թափառումների ու ճանապարհորդությունների արդյունքում: Նա իր իսկ փորձով հասկացավ, որ տգիտության ու մտավոր խավարի մեջ խարխափող հայ ժողովրդին բարձրացնելու համար անհրաժեշտ են հոգևոր և մտավոր ուժերի կենտրոնացում ու զերլարում: Պետք է ասել, որ երկաթյա կամքի տեր այդ մարդը և իր ստեղծած միաբանությունը դիմացան ժամանակի փորձություններին, հաղթահարեցին բազում արգելքներ, կրեցին անասելի զրկանքներ, սակայն իրագործեցին իրենց հայանպաստ ծրագրերը:

Մխիթարի ստեղծած միաբանության գործունեությունը արժևորել ու գնահատել է հայ հասարակական միտքը, սակայն այդ գնահատականները տարբեր են ու վերաբերում են նրանց գործունեությանն ընդհանրապես կամ գիտամշակութային որոշակի ոլորտի: Կեղծավոր ու խավարամիտ հոգևորականներից մինչև մշակույթի ու մտքի տիտաններ. ահա գնահատանքի ողջ գունապնակը: Ժամանակն իհարկե իր ուղղումներն է կատարում, ուստի արդեն մեր օրերում անհրաժեշտ է վերանայել և ըստ արժանվույն գնահատել ինչպես անհատների, այնպես էլ գիտամշակութային կենտրոնների ծավալած գործունեությունը: Մա վերաբերում է ոչ միայն Մխիթարին ու նրա միաբանությանը:

Մխիթարյանները ծավալեցին բազմաբնույթ գործունեություն, սակայն առավել հաջողությունների հասան հայերենագիտության մեջ: Փաստ է, որ նրանք հետաքրքրվում էին գրաբարով, սակայն կանգնած լինելով արևմտահայերի ձևավորման ակունքներում՝ չէին կարող ուշադրությունից դուրս թողնել հայերենի նոր դրսևորումը: Հայ լեզվաբանության ուշադրության կենտրոնում հիմնականում գրաբարի ուսումնասիրության ոլորտում Մխիթարյանների ծավալած գործունեությունն է եղել, մինչդեռ աշխարհաբարի նկատմամբ ցուցաբերած մոտեցումները մեծ մասամբ տեսադաշտից դուրս են մնացել: Իրերի այսպիսի դասավորությունը ծնում է մի շարք հարցեր, որոնք բացատրության կարիք ունեն, և որոնց պարզաբանումը թույլ կտա ճիշտ գնահատելու գրաբարի ու աշխարհաբարի և հարակից

այլ հարցերի փոխհարաբերությունների վերաբերյալ նրանց մոտեցումները: Առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել նրանց արտահայտած կարծիքները աշխարհաբարի վերաբերյալ, առավել ևս չի կատարվել նրանց հեղինակած աշխարհաբար գրությունների լեզվական քննություն: Այս տեսակետից պետք է փաստել, որ, ի տարբերություն արևելահայ հեղինակների, որոնց լեզուն հաճախ է դարձել առանձին ուսումնասիրության նյութ, արևմտահայ հեղինակների լեզվի համալիր ուսումնասիրություններ չեն կատարվել, մինչդեռ լեզվի պատմությունը ճշգրիտ ներկայացնելու համար նման ուսումնասիրությունները պարզապես անհրաժեշտություն են: Այս բացը մասամբ լրացվեց Յու. Ավետիսյանի արևմտահայ բանաստեղծության լեզվին վերաբերող ուսումնասիրությամբ, սակայն այս ուղղությամբ անելիքներ դեռ շատ կան:

Ելնելով մեր ուսումնասիրությունների արդյունքներից՝ կարելի է անել եզրակացություններ, որոնք ճշգրտում են ժամանակի ընթացքում Մխիթարյաններին, նրանց գործունեությանը տրված մի շարք գնահատականներ: Այսպես՝

1. Արդյոք Մխիթարյաններին ու նրանց գործունեությանը տրված գնահատականները ճիշտ են ներկայացնում իրականությունը: Այս հարցադրումն ու նրա պատասխանը կարևորվում են նրանով, որ միաբանությանը և նրա անդամներին տրված գնահատականները խիստ հակասական են. եթե խոսքը վերաբերում է առանձին գործչի, ապա միանշանակ գնահատականը բարձր է, իսկ եթե խոսքը վերաբերում է ընդհանրապես միաբանության գործունեությանը, ապա այն միանշանակ բացասական է, նույնիսկ այն աստիճան, որ միաբանությունը բնորոշվել է որպես «ռեակցիայի բույն»¹:

Մխիթարյանների գործունեությունը գնահատել են Մ. Նալբանդյանը, Գ. Այվազովսկին, Լեոն, խորհրդային շրջանի լեզվաբանները ինչպես առանձին ուսումնասիրություններով, այնպես էլ հրթրացս այլ հարցերի: Տրված գնահատականներում ակնհայտ հակասություններ կան, որոնք արդյունք են նրանց հասարակական-քաղաքական հայացքների ազդեցության: Բերենք մի օրինակ. Մ. Նալբանդյանը շատ բարձր է գնահատում Մ. Սեբաստացուն՝ ասելով, թե հայկական դպրությունը վերստին բորբոքվեց այն կայծից, որ վառեց Մ. Սեբաստացին իր հանճարեղ մտքերի «ծննդականությամբ», մյուս կողմից էլ ասում է, որ Մխիթարը չէր կարող համարվել «մեծ պտղաբեր հեղինակ»²: Մի կողմից՝ Մխիթարյանների շնորհիվ «եվրոպական մարդը այսօր ճանաչում է հայոց ազգը», մյուս կողմից՝ «ընդհանուր լուսավորություն տարածել մեր ազգի մեջ, նրա գործը չէր, և նա բոլորովին ապարդյուն գտնվեցավ»³: Մի կողմից՝ բարձր է գնահատում Ավգերյան եղբայրների, Ինճիճյանի, Չամչյանի և մյուսների վաստակը, նշում է, որ «տպագրությունը ևս հասնելու չէր այն կատարելության աստիճանին, ինչ աստիճանի հասավ Մխիթարյանց հոգաբարձությամբ»⁴, մյուս կողմից քննադատում ու թերագնահատում է նրանց դպրոցների,

ստեղծած գիտական ու գրական արժեքների դերը հասարակական կյանքում, ավելին, Մխիթարյան միաբանությունը անվանում է «հերձվածողական կենտրոն»⁵: Այնուհետև Մ. Նալբանդյանը Մխիթարյանների գործունեությունը սահմանափակում է գրաբարի շրջանակներում՝ չնկատելով նրանց արածը աշխարհաբարի ոլորտում: Նույն մոտեցումը Լեոյինն է: «Միակ հիմնարկությունն էր, որ լույս ու գիտություն էր մատակարարում հայերին»⁶, -գրում էր նա՝ ասելով նաև, թե նրանք անհաղթելի և աննկուն գիտունների նման են եղել ազգի աչքին, սակայն հետո ազգի կրթությունը վանականության ձեռքով համարում է «հետադիմություն և դժբախտություն»: Անկասկած է, որ և՛ Մ. Նալբանդյանի, և՛ Լեոյի նման մոտեցումները պայմանավորված են վանականությանը քաղաքական պահպանողականություն համարելու հանգամանքով: Բայց եթե Նալբանդյանի ու Լեոյի դեպքում Մխիթարյանների գործունեության արժևորումը աշխարհայացքային համոզվածության արդյունք է, ապա խորհրդային շրջանի որոշ լեզվաբանների շրջանում՝ կուսակցական քաղաքական գաղափարախոսության պարտադրանքի ազդեցության, որը թույլ չէր տալիս խուսափել ուղղակի խեղաթյուրումներից:

Դա կա Գ. Սևակի մոտ⁷, բայց առավել բացահայտ երևում է Ալ. Մարգարյանի որոշ ուսումնասիրություններում⁸:

Այսօր, երբ չկան մտածողության նախապես մշակված կաղապարներ, և հասարակական միտքը ազատագրվում է իշխող գաղափարախոսության ուղղակի ազդեցությունից, հնարավորություն է ստեղծվել ավելի իրատես ու ճշմարիտ գնահատականներ տալու: Մխիթարյանների դեպքում կարելի է վստահաբար ասել՝ նրանք ապահովեցին հայոց առաջընթացը և՛ մշակույթի, և՛ գիտության, մասնավորապես հայագիտության բնագավառներում:

2. Արդյո՞ք Մխիթարյանները «գրաբարամուլներ» են բառիս բացասական իմաստով, որոնք խնդիր են դրել վերակենդանացնելու գրաբարը՝ աշխարհաբարն օգտագործելով այդ նպատակին: Այս տեսակետի ձևավորման համար հիմք են հանդիսացել հետևյալ հանգամանքները. ա/ գրաբարն աղավաղումներից մաքրելու համար ցուցաբերած ջանքն ու եռանդը, բ/ դրվատական ու հիացական վերաբերմունքը գրաբարի մշակվածության, բառապաշարի հարստության, կանոնավոր բնույթի նկատմամբ, գ/ գրաբարով մեծ քանակությամբ բազմաբնույթ գրքեր հեղինակելը և այլն: Հիշենք, որ Մ. Նալբանդյանն ու Լեոն, հետագայում ուրիշները ևս Մխիթարյաններին գնահատում էին գրաբարի շրջանակներում, ընդ որում առաջին երկուսը գրաբարով տարվելը համարեցին մեռած լեզվի վերակենդանացման հետադիմական և անիմաստ փորձ: Մինչդեռ այդ հարցին կարելի է այլ լուծում տալ: Իրականում գրաբարի «վերակենդանացումը» պայմանավորված էր և՛ պատմական, և՛ լեզվական յուրահատուկ իրավիճակներով: Վկայակոչենք միայն մի փաստ: Հայտնի է, որ Մխիթարյանները ինքնամոռաց ձեռնամուխ եղան մեր պատմիչների

գործերի հրատարակմանը: Հասկանալի է, որ այս դեպքում գրաբարի վերականգնումը դառնում էր անհրաժեշտություն: Ինքնանպատակ էր այս աշխատանքը, թե՛ որոշակի խնդիրներ էր լուծում: Այս դեպքում չպիտի մոռանանք Մխիթարյանների՝ հայոց հոգևոր – մշակութային, գիտական կարիքները բավարարելու ակնհայտ ձգտումը: Մեր պատմիչների գործերի հրատարակումը արդյունք է հասարակական-քաղաքական որոշակի տեղաշարժերի: Հայտնի է, որ 18-րդ դարը ազգային-ազատագրական պայքարի ձևավորման և ամբողջացման ժամանակաշրջան էր, իսկ հայ ժողովրդի հայրենասիրական զգացումների ձևավորումը հայ մտավորականությունը մեծ մասամբ կապել է մեր հերոսական անցյալի հետ: Փաստորեն իրենց գործունեությամբ Մխիթարյանները ժամանակակիցներին կապում էին սեփական պատմության հետ: Սակայն մի մեծ խոչընդոտ կար՝ գրաբարի անհասկանալի լինելը: Ուրեմն պետք էր սովորել ու սովորեցնել գրաբարը, իսկ դա հնարավոր էր միայն աշխարհաբարի միջոցով: Ահա թե ինչու Մխիթարյաններից շատերը աշխարհաբարը համարում էին դուռ, միջոց՝ գրաբարը սովորելու համար: Կնշանակի՝ խոսքը գրաբարը սովորելու, յուրացնելու և ոչ թե դեպի գրաբար հետդարձի մասին է: Իհարկե, կային նաև այնպիսիները, օրինակ՝ Ա. Բագրատունին, որոնք իսկապես ցանկանում էին գրաբարը դարձնել գրականության լեզու, բայց դա էական ազդեցություն չունեին ընդհանուր ուղղվածության վրա: Այսպիսով, իրականությունն այն է, որ Մխիթարյանները ստեղծագործել են և՛ գրաբար, և՛ աշխարհաբար՝ ժամանակի առաջացման հետ ավելացնելով աշխարհաբար գրականության ծավալը:

3.Արդյո՞ք Մխիթարյանների վերաբերմունքն աշխարհաբարի նկատմամբ ժխտական է: Տեսակետ կա, թե Մխիթարյանները, հիացած ու տարված գրաբարով, խոչընդոտում էին աշխարհաբարի զարգացմանը: Լեոյի այս գնահատականը հետագայում կրկնեցին ուրիշները՝ առանց խորանալու երևույթի էության մեջ: Մինչդեռ ուսումնասիրություններն այլ բան են ցույց տալիս: Գրաբարին զարկ տալը չխանգարեց նրանց նույնն անելու աշխարհաբարի դեպքում: Սկզբնական շրջանում նկատելի հակվածությունը դեպի գրաբար ինչ-որ տեղ պայմանավորված էր նաև աշխարհաբարի իսկապես անկազմակերպ բնույթով և միասնական ու ընդհանուր լեզվական նորմաների բացակայությամբ: Մխիթարյանների հայացքների և աշխատասիրած աշխարհաբար գրքերի լեզվի քննությունը բացահայտում է հետևյալ պատկերը.

ա/ Մխիթարյանները կանգնած են արևմտահայերենի սկզբնավորման ակունքներում: Մասնավորապես այն, որ Մ. Մեբաստացին է արևմտահայերենի քերականության առաջին գրքերի հեղինակը, արդեն բավական է որոշակի պատկերացում կազմելու նրանց՝ աշխարհաբարի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի մասին: Նույն՝ 1727թ., Մեբաստացին հրատարակում է երկրորդ աշխարհաբար գիրքը: Նմանօրինակ աշխարհաբար

գրքեր ուրիշները հրատարակում են 20 տարի հետո միայն /Հ. Նալյան, «Քրիստոնեական ուսանելի», 1747թ./:

բ/Մխիթարյանները, փաստորեն, դարձան արևմտահայերենի առաջին գործածողները, ընդ որում և՛ գրականության, և՛ գիտության, և՛ թատրոնի ու մամուլի բնագավառներում:

գ/ Մխիթարյանները դարձան ոչ միայն աշխարհաբարի առաջին գործածողները, այլև առաջին լուրջ պաշտպանները, ինչքան թույլ էր տալիս ժամանակի մտայնությունը:

Նրանք ուշադրություն են դարձրել այն հանգամանքին, որ հնարավոր չէ աշխարհաբարի աղբատիկ բառապաշարով և անկայուն քերականությամբ, ինչպես իրենք են ասում, «բարակ մտքեր» արտահայտել, սակայն դրանով հանդերձ կարևորել են լեզվաորակի հասկանալիությունը: «Զայս քերականութիւնս գրաբառ լեզուով չգրեցի, քանզի ձեզի աշխարհաբար հայերենն պէտք է», «Թէ այս լեզուովս խօսիք, թէ այն լեզուովն, ամէնքն թող ի փառս աստուծոյ լինին, և այնն է ամէնէն լաւն», - գրում է Սեբաստացին: Փաստորեն Մ. Սեբաստացին հավասարության նշան է դրել գրաբարի ու աշխարհաբարի միջև:

Մխիթարյանները դարձան աշխարհաբարի առաջին մշակողները: Աշխարհաբարի նկատմամբ նրանց վերաբերմունքը կոնկրետ է ու որոշակի. երևում է ոչ միայն նրանց՝ աշխարհաբարի կարևորության գիտակցումը, այլև նրա նկատմամբ զգույշ վարվելու ձգտումն ու պահանջը, որը նույնպես Մ. Սեբաստացուց էր գալիս: Վերջինս պատվիրում է խիստ զգուշությամբ վերաբերվել աշխարհաբարին, ճիշտ գնահատել նրա «մեծագունեղ օգտակարությունը»: Իրենց ուսուցչի պատվերին հավատարիմ՝ Սեբաստացու աշակերտները 19-րդ դարի սկզբին ներկայանում են կանոնավոր և օտարաբանություններից զերծ արևմտահայ աշխարհաբարով:

19-րդ դարի 50-60-ական թվականներին, երբ «գրաբար, թե՛ աշխարհաբար» հարցադրումը հասել էր մեծ լարվածության, Մխիթարյանները հարցը մեծ մասամբ դնում էին վերջինիս օգտին՝ միաժամանակ խորհուրդ տալով բռնի փոփոխությունների չենթարկել աշխարհաբարի քերականական համակարգը: Ահա թե ինչ են որոշել կաճառականները 1849թ. իրենց նիստում. «...դեկտեմբերի 19-ի գումարման մեջ կաճառականաց մեծագոյն մասն այս կէտս կըպնդէր, թէ բացի արտաքսմանէ այլագգի կամ օտար բառից և ածանցներու, պէտք չէ ուրիշ փոփոխութիւններ ընել աշխարհաբար լեզուին մէջ...:..թողլու է ժամանակին, որ գործէ և կատարելագործէ աշխարհիկ բարբառը»⁹:

Այսպիսով, ամփոփելով ասվածը, կարելի է պնդել, որ բացասական ու մերժողական այն վերաբերմունքը, որ դրսևորվել է Մխիթարյանների նկատմամբ /Նալբանդյան, Լեո, Գ. Սևակ, Ալ. Մարգարյան և ուրիշներ/, զուրկ է տրամաբանական հիմքից: Եվ ի վերջո, լեզվական հարցերը չի կարելի քննել՝ ելնելով հեղինակների հասարակական-քաղաքական հայացքներից:

Ծանոթագրություններ

1. Հր.Թամրազյան, Հայ քննադատություն, Երևան, 1992, էջ 15:
2. Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1980, էջ 271:
3. Նույն տեղում, էջ 270:
4. Նույն տեղում, էջ 273:
5. Նույն տեղում, էջ 276:
6. Լեո, Երկեր, հտ. 5, Երևան, 1986, էջ 360:
7. Տես Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948:
8. Տես Ալ. Մարգարյան, Խ. Աբովյանը և աշխարհաբարը, Երևան, 1958:
9. Բ. Սարգիսեան, Երկհարերամեայ գրականական գործունեություն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Միխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905, էջ 367:

Օգտագործված գրականություն

1. Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971:
2. Ասոյան Թ., Վենետիկի Միխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:
3. Թամրազյան Հր., Հայ քննադատություն, հտ. Գ, Երևան, 1992:
4. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության, լեզվի պատմություն, Երևան, 1978:
5. Լեո, Երկերի ժողովածու, հտ. 5, Երևան, 1986:
6. Մարգարյան Ալ., Խ. Աբովյանը և աշխարհաբարը, Երևան, 1958:
7. Նալբանդյան Մ., Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1980:
8. Սարգիսեան Բ., Երկհարերամեայ գրականական գործունեություն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Միխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905:

Asoyan Tatul – Consideration relating to the mkhitaryans activities on the armenian studies. – The Mkhitaryans activities have been appreciated and evaluated by the Armenian public mind, but the opinions expressed by them are different and often contradictory. The Mkhitaryans have been engaged in various activities but made a success in their studies of the Armenian language. They have studied both the old Armenian /grabar/ and modern Armenian /ashkharabar/. The Armenian linguistics mostly paid attention to their studies of grabar and ignored their attitude displayed to the modern language. It is obvious that only comprehensive study will permit to appreciate the Mkhitaryans activities correctly. Considering these circumstances the following article examines the following issues; 1. do the estimates given to the Mkhitaryans and their activities give the correct picture of reality?, 2. Did the Mkhitaryans want to revive grabar by means of modern Armenian and make it language literature?, 3. Did the Mkhitaryans have a negative attitude to modern Armenian?

Appropriate conclusions have been made at the end of the article.

**ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԽԱԼՆԵՐԻ ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գործնական աշխատանքների ձեռնարկներում, քննությունների առաջադրանքների շտեմարաններում, հոդվածներում, լեզվաբանության գծով պաշտպանվող ատենախոսություններում առկա են մի շարք անճշտություններ, վրիպումներ, որոնց անդրադառնալն անհրաժեշտ ենք համարում: Նկատելի են տերմինագործածության անճշտություններ, ենթակայի և ստորոգյալի համաձայնության սխալներ, բանավոր խոսքից գրավոր խոսք ներթափանցած չհղկված արտահայտություններ, խմբագրման կարիք ունեցող ձևակերպումներ, բնորոշումներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

2013թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների «Հայոց լեզու և հայ գրականություն» շտեմարանի (Երևան, 2012) I մասի 21-24-րդ էջերում 43 վարժության պահանջը ձևակերպված է հետևյալ կերպ. «Քանի՞ **եռաշարք հոմանիշ** կարող է կազմվել տրված բառացանկից»: Հեղինակները նկատի ունեն **հոմանիշների եռյակը** կամ **հոմանիշների եռանդամ շարքը**¹:

«Պնդումների փունջ» գլխում (էջ 140-151) կարդում ենք. «Ու ձայնավորը հնչյունափոխվում է միայն բազմավանկ բառերի սկզբում, **միջում** և վերջում»: Նույն էջում. «Արմատ + գրաբարյան նախդիր (հ,գ,ի) ածանցավոր բառեր են»:

Շարունակենք: **Հեռացած հատկացուցիչը միշտ չէ, որ տրոհվում է նախադասության մյուս անդամներից: (էջ 147): Բոլոր պարագաները կարող են ունենալ մասնավորեցնող բացահայտիչ: (էջ 150): Հատկացուցիչը հատկացյալի հետ համաձայնեցվում է դեմքով և թվով: (էջ 150): Որևէ խոսքի մասից և հանգույցից կազմված ստորոգյալը բաղադրյալ է: (էջ 149): Նշել այն**

-
1. Հոդվածի նյութը քաղել ենք 2012-2013թթ. հրատարակված մի շարք աշխատություններից, շտեմարաններից, պարբերականներից, հանրապետական գիտաժողովների նյութերից.
 - ա. Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2012թ., հունիսի 14-15) ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ,- Ե., Զանգակ-97, 2012:
 - բ. Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետ. լեզվաբանական համալսարանի, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, 2(23): Ե., Լինգվա, 2012:
 - գ. Հանրապետական գիտաժողով /ՀՀ ԿԳՆ, Վանաձորի պետ. մանկավարժական ինստիտուտ: Խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և ուրիշ.- Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013:
 - դ. Հայոց լեզու և գրականություն: 2013թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան,- Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012,
 - ե. Շտեմարան, մաս 2, Ե., 2012:

նախադասությունների թվահամարները, որոնց կազմում համառոտ նախադասություն կա: (Շտեմարան 2-րդ մաս, էջ 76):

Տրված հատվածում նշել **համառոտ նախադասությունների քանակը**: (Շտեմարան, 2-րդ մաս, էջ 76):

Հետևյալ նախադասություններում անհրաժեշտ էր պահպանել արդի գրական արևելահայերենի ենթակայի և ստորոգյալի համաձայնության կանոնները:

Ան արտաքին հոլովման պատկանող գոյականների մի մասը ունեն գուգաձև հոլովում: (էջ 144): Ան հոլովման ենթարկվող բառերից **մի քանիսը կարող է հոլովվել նաև վա հոլովմամբ**: (Շտեմարան, 2-րդ մաս, էջ 199):

Տրված **բառահոլվածները** բառարանի *ո՞ր տեսակից է վերցված*: (էջ 139):

Բարեխիղճ խմբագրելու դեպքում հետևյալ ձևակերպումները առավել ճշգրիտ կարտահայտեն հեղինակի միտքը:

Հետադաս որոշիչները կարող են արտահայտվել **և՛ բառով, և՛ բառակապակցությամբ, և՛ դերբայական դարձվածով**: (էջ 147):

Խախտված է բաժանման տրամաբանական հիմքը:

Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կարող են **կապակցվել թե՛ համադասությամբ, թե՛ ստորադասությամբ**: (էջ 148):

Եթե բայի կազմության մեջ կա –ոտ ածանցը, ապա այդ բայը **պարտադիր բազմապատկական է**: (Շտեմարան, 2-րդ մաս, էջ 195):

Շտեմարանի 1-ին մասի 114, 115, 123 էջերում այսպիսի առաջադրանքներ կան. «Նշի՛ր, թե փակագիծ ունեցող քանի նախադասություն կա տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն)», «Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում առոգանության նշան կա (նախադասությունները կետադրված չեն)», «Ո՞ր նախադասություններում ստորակետ կա (նախադասությունները կետադրված չեն)», «Ո՞ր նախադասություններում միջակետ կա (նախադասությունները կետադրված չեն)», «Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում բութ կա (նախադասությունները կետադրված չեն)»:

Վերոհիշյալ ձևակերպումները շտկման կարիք ունեն:

Շտեմարանի I մասի V գլխում, որն անվանված է «Բարդ նախադասության գծապատկերներ» (էջ 76-90), բարդ նախադասության գծապատկերները ներկայացված են շրջանակների միջոցով, այնինչ լեզվաբանական աշխատանքներում այդ գծապատկերները ընդունված է ներկայացնել ուղղանկյունների միջոցով, և այդ ավանդույթը պետք էր պահպանել: Լեզվաբանական և մեթոդական, ուսումնական աշխատանքներում ընդունված պայմանական նշանները, գծապատկերները միօրինակ ներկայացնելու անհրաժեշտությանը արդեն անդրադարձել ենք մեր հոդվածներից մեկում (տե՛ս «Ջահուկյանական ընթերցումներ» 2012 թ., էջ 45):

Տարբեր ձեռնարկներում տերմինագործածության ժամանակ նկատելի են մի շարք անճշտություններ: Այսպես՝ շրջանառության մեջ է դրվել **պարզ ածանցավոր բառեր** տերմինը, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներում» կարդում ենք **միացման գծիկ** (փխ. **միության գծիկ**): Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի պարբերականում կարդում ենք **զեղչավոր նախադասություններ**²:

Երբեմն սխալներ և անճշտություններ են առկա հոդվածների ամփոփումների և վերնագրերի թարգմանություններում:

Слова со значением родственных отношений թարգմանված է **հարազատական հարաբերություն անվանախումբ կազմող բառեր**³ (փխ. ազգակցական հարաբերություն արտահայտող բառեր):

Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պարբերականի «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն» անվանումը տարիներ շարունակ ներկայացվել է "Арменистика и сопоставительная лингвистика": Միայն 2012թ. լույս տեսած համարի վերնագիրը ճշգրիտ էր ներկայացված. "Арменоведение и сопоставительная лингвистика":

Հաճախ նկատվող կետադրական սխալներից հարկ ենք համարում նշել բազմակետի փոխարեն կախման կետերի գործածությունը. մի բան, որ անհանդուրժելի է:

Լեզվաբանական ուսումնասիրություններում նկատելի են նաև բանավոր խոսքի բառապաշարի միավորների անհարկի ներթափանցում գրավոր խոսք, վատ խմբագրված շարադրանք, որոշիչ հոդի գործածության սխալներ (**հ** բաղաձայնից առաջ **և** հոդի գործածություն **ը**-ի փոխարեն): Այսպես. «Հայտնի է, որ –ուհի վերջածանցը հայերենը **փոխ է առել** պարսկերենից....»: (Հանրապետական գիտաժողով, Վանաձոր, 2013, էջ 33): Տարբեր աշխատանքներում կարելի է հանդիպել **վեր է լուծում**, **վեր է հանում**, **վեր է ածվել**, **գործ է ածվում** և այս կարգի այլ արտահայտությունների:

Բազմաթիվ հեղինակների աշխատանքներում նկատել ենք այսպիսի ձևակերպումներ. «Հին կազմությունների մեջ առաջին բաղադրիչի ի-ն հաջորդ ա-ի հետ միանալով **տալիս էր** եա,ե....»⁴: «Ու հոլովիչով հոլովելիս եզակիում ի-ն **գցում են**. օրինակ՝ թագուհու, թագուհով....»⁵: «Հին կազմությունների մեջ կան նաև այնպիսի բառեր, որտեղ ի-ն մնացել է անփոփոխ և ա-ի հետ **տվել է** իա....»⁶: «Բառասկզբի շեշտյալ ու-ն նույնպես համաբանությամբ **տվել է....**»⁷: «....Տի-ն օրինաչափորեն **տվել է տե....**»⁸:

² Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի: Բանասիրություն, լեզվաբանություն: 1(27)- Երևան, Լինգվա, 2013, էջ 83-87:

³ Հանրապետական գիտաժողով, ՀՀ ԿԳՆ, Վանաձորի պետ. մանկ. ինս., Վանաձոր, 2013, էջ 22:

⁴ Հայոց լեզու, «Լույս» հրատ., I մաս, Ա պրակ, հեղ. կող., 1980, էջ 135:

⁵ Ն.տ., էջ 134:

⁶ Ն.տ., էջ 135:

⁷ Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Ե., Նաիրի, 2010, էջ 75:

⁸ Ն.տ., էջ 89:

Այժմ էլ անդրադառնանք որոշ անվանակարգային միավորների և արտահայտությունների սխալ գործածության մի քանի դեպքերի: Լեզուների անվանումներ կազմող -երեն ածանցը բանավոր խոսքում ընդհանրացնում են, և նույնիսկ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ուսանողներին անընդհատ հարկադրված ենք լինում հիշեցնել, որ պետք է ասել ոչ թե **չիներեն, հուներեն, այլ չինարեն, հունարեն**: Հաճախ կարելի է լսել՝ **անգլերեն լեզվի ամբիոն, ռուսերեն լեզու, հայերեն լեզու, ֆրանսերեն լեզվի դասընթաց, գերմաներեն լեզվի կաբինետ** և այլն: Դա արդեն թափանցել է նաև գրավոր խոսք: Այստեղ առկա է ածանցի իմաստի մթագնում:

Լեզվական արմատացած սխալները քիչ չեն: Հիշենք ոչ վաղ անցյալում Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի անվանումը՝ Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտ: Ռուսաց լեզուն, որը գործածվում էր որպես ՄՍՀՄ ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցության լեզու, չգիտես ինչու, օտար լեզու չէր համարվում. բայց չէ՞ որ լեզուն լինում է մայրենի և օտար: Ի դեպ, նշենք նաև որ **մայրենի և օտար լեզուներ, պետական լեզու, ազգամիջյան հաղորդակցման լեզու, առաջին, երկրորդ, երրորդ լեզուներ, երկլեզվություն, վաղ երկլեզվություն** և հարակից այլ հասկացությունների (և դրանք արտահայտող տերմինների) հարաբերակցությունը, դրանց բովանդակային սահմանների ուրվագծումը, պարզաբանումն ու ճշգրտումը լեզվաբանության, մասնավորապես հոգելեզվաբանության ու հանրալեզվաբանության մեջ բավարար ուսումնասիրության դեռևս չեն արժանացել: Լ. Ֆլյանը «Մայրենի լեզվի դերը միջմշակութային կրթության համատեքստում» հոդվածում գրում է. «...«Հայերենը օտարների համար» հայեցակարգը մեր երկրում դեռ գտնվում է ներդրման փուլում»⁹:

Անդրադառնանք ՀՀ-ում ներդրման փուլում գտնվող այդ հայեցակարգի անվանմանը: Խոսքը արևելահայերենը որպես երկրորդ լեզու դասավանդելու մասին է: Ու՞մ ենք դասավանդելու. աշխարհասփյուռ հայերի նոր սերնդին, որը տարբեր պետություններում կրթությունը ստանում է այլ լեզվով, և ցանկալի է, որ գրքեր, նյութեր, ընթերցարաններ ունենա նաև մայրենի լեզուն սովորելու, մայրենի լեզվով կարդալու համար: Հայերենը որպես երկրորդ լեզու կարող են սովորել նաև հայերենով հետաքրքրվող այլազգի քաղաքացիներ, որոնց համար այս հայեցակարգը նպատակահարմար կլինի անվանել ոչ թե «Հայերենը օտարների համար», այլ որևէ այլ կերպ, ասենք՝ «Հայերենը այլազգիների համար», «Հայերենը որպես երկրորդ լեզու», «Հայերենի դասավանդումը որպես օտար լեզու» և այլն: Այդպիսի աշխատանքներ արդեն կան: Այսպես, Դորա Սաքայանի «Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար» (Ե., ԵՊՀ հրատ., 2007) գրքի վերնագիրը ճշգրիտ է, դիպուկ և արդարացված: Նույն ձևով այդ շարքի ձեռնարկները կարող են կոչվել՝ «Արևելահայերենը ֆրանսախոսների համար», «Հայերենը իսպանախոսների համար», բայց ոչ՝ «Հայերենը օտարների համար»:

⁹ Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Ե., 2012 (23), էջ 64:

Ռուսալեզու ընթերցողի համար են նախատեսված Ա. Ս. Մարկոսյանի աշխատանքները¹⁰:

Ամփոփելով լեզվաբանական տերմինների գործածության վերաբերյալ մեր համառոտ դիտարկումները՝ նշենք, որ մանրակրկիտ ուսումնասիրության կարոտ են այս ոլորտի բազմաթիվ այլ հարցեր, ինչպես՝ տերմինների համաժամանակյա կիրառության ժամանակ դրսևորվող անհարկի հոմանիշության դեպքերը, տերմինատարբերակների անտեղի ներմուծումը, ռուսերենից կամ անգլերենից կատարվող՝ տերմինների անհաջող թարգմանության և պատճենման դեպքերը և այլն:

Анаит Галстян – Об ошибках в употреблении лингвистических терминов и о некоторых смежных вопросах. – В статье рассматриваются случаи употребления некоторых nereкомендуемых лингвистических терминов. Исследуются также некоторые случаи неправильного употребления наименований языков, распространенные в устной речи носителей языка. Анализируются взаимоотношения между терминами и понятиями մայրենի և օտար լեզու, ազգամիջյան հաղորդակցության լեզու, առաջին, երկրորդ լեզու. Предлагается правильная формулировка концепции «Преподавание армянского как второго языка».

Anahit Galstyan – Some Considerations on the Wrong Usage of Linguistic Terms. – The article examines the wrong usage of Linguistic Terms. Some examples of unrecommended linguistic terms are discussed. Wrong usages of using the names of languages in oral speech are presented. The article also touches upon the relationship between terms expressing the notions: մայրենի, օտար լեզու, ազգամիջյան հաղորդակցության լեզու, առաջին, երկրորդ լեզու. It is suggested that for the purpose teaching Armenian in the Armenian Diaspora it is preferable to use 'Teaching Armenian as a Second Language', rather than 'Teaching Armenian as a Foreign Language'.

¹⁰ А.С.Маркосян, 1. Крунк Айастани, 1 часть, "Вводный курс", "Баласс", 1998г., 2. Крунк Айастани, учебник армянского языка, Часть вторая: Основной курс,- М., "Баласс", 2001,-256 с. с илл, 3.часть третья: Продвинутый курс, - Баласс, 2004, 240с., илл, 4. Крунк Айастани, Учебный армянско-русский словарь (ок. 4500 слов),-М., Баласс, 2004.- 192с.

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Հայ գեղարվեստական վավերագրության արմատները ձգվում են դարերի խորքը: Դեռևս վաղ միջնադարում ստեղծվել է հիշատակարանային գրականություն, որի հեղինակները մի կողմից եղել են իրադարձությունների կիզակետում, մյուս կողմից ականատեսի գրչով մանրամասնորեն գրի են առել այդ ամենը: Մեզանում հուշագրության սկզբնավորողը եղել է 5-րդ դարի պատմիչ Եղիշեն: Նա Վարդանանց պատերազմի տարեգրությամբ պատմական հուշագրության նոր ուղղության սկիզբն է դրել՝ դառնալով ականատես-հուշագրող:

Գեղարվեստական վավերագրությունն ունեցել է զարգացման ուրույն ուղի:

13-րդ դարում Հեթում պատմիչը, լինելով Կիլիկյան Հայաստանի դեսպանը և հայկական զորքերի հրամանատարը, իր տեսած 14 երկրների մասին գրել է «Պատմութիւն թաթարաց» տեղեկատու բնույթի երկը: Այնուհետև 15-17-րդ դդ. բավական տարածում ստացան օրագրերը և ուղեգրությունները (Մարտիրոս Երզնկացի, Սարգիս Աբեղա, Խաչատուր Եվդոկիացի, Սիմեոն Դպիր Լեհացի, Ջաքարիա Ագուլեցի և այլք):

19-րդ դարի առաջին կեսի արևելահայ գեղարվեստական վավերագրության հուշարձաններից են Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերը» և «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ուղեգրությունը:

Հետագայում Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Շիրվանզադեն, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Բասիակյանը, Ստեփան Զորյանը, Գուրգեն Մահարին, շարունակելով արևելահայ գեղարվեստական վավերագրության ուղին, իրենց հուշագրական երկերում արվեստագետի նուրբ գրչով ոչ միայն ներկայացրին ժամանակի ամբողջական պատկերը, այլև ընդլայնեցին գեղարվեստավավերագրական ժանրի սահմանները:

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրությունը հաճախ անվանում են մեմուարային գրականություն¹, որի մեջ մտնում են հիշատակարանները, հուշագրությունները, ուղեգրությունները և օրագրերը:

1. Էդ. Զրբաշյանի «Գրականության տեսություն» բուհական դասագրքում ներկայացվում է մեմուարների երկու տեսակ: Առաջինը ինքնակենսագրական բնույթի հուշեր են, որոնց «սյուժեն» հեղինակի կյանքի, տեսածի և ապրածի ընթացքն է, իսկ երկրորդը գրական դիմանկարն է, որտեղ գծագրվում է նշանավոր մարդկանց բնավորությունը, գնահատվում նրանց կատարած գործունեությունը [9, 359]:

20-րդ դարում արևելահայ գեղարվեստական վավերագրության մեջ բուռն զարգացում է ունենում նաև էսսեն²:

Հուշագրությունը ժամանակակիցների կողմից անցյալի հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողության գրառում է: Հուշագրության ժանրը հանդես է բերում տեսակային լայն բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների հուշեր, գրողի կյանքի գլխավոր դեպքերի խաչաձևում գրական-հասարակական կյանքին և այլն: Առավել շատ են հուշային դիմանկարները:

Ուղեգրությունը գրողի ճամփորդության ընթացքում ստացած անմիջական տպավորության գրառում է, որտեղ հեղինակի նպատակն է ընթերցողին ծանոթացնել, պատմել ուղևորության ընթացքում տեսածն ու զգացածը, ներկայացնել հանդիպած մարդկանց կյանքն ու կենցաղը, նաև որոշ չափով հարստացնել ընթերցողի աշխարհաճանաչողական գիտելիքները: Երբեմն ուղեգրությունը կարող է դառնալ հուշագրության մի ենթատեսակը՝ իր մեջ ներառելով հուշագրության կառուցվածքային որոշ տարրեր:

Օրագրությունը հեղինակի կյանքի մանրամասն նկարագրությունն է՝ վավերական պատմություններով հագեցած: Օրագրողը գրանցում է փաստեր, որոնք կարող են ձևավորվել ազատ արտահայտություններով, թերի նախադասություններով, համառոտագրություններով: Հատկանշական է, որ Հովհաննես Թումանյանն իր զավակներին խորհուրդ էր տալիս հիշատակարան պահել և գրի առնել տպավորությունները՝ քաղված կյանքից ու կարդացած գրքերից:

Օրագրական խոսքը մեծ չափով մենախոսություն է, թեև օրագրության մեջ երբեմն կարող են տեղ գտնել երկխոսության տարրեր:

Ժամանակակից հեղինակներն օրագրային «հին մեթոդին» զուգադրում են նոր օրագիր հասկացությունը: Բնականաբար առաջինը հատկանշվում է լոկ խորհրդածության վերլուծմամբ և դեպքերի արձանագրմամբ, նոր օրագրում սեղմ փաստեր են, կոնկրետ ու գործնական մտքեր, դիտումներ ու դիպաշարեր:

Ինչպես նշեցինք, գեղարվեստական վավերագրության տեսակներից է նաև էսսեն՝ խոհագրությունը, որը յուրահատուկ հիշատակարան-օրագիր է՝ բազմապիսի բովանդակությամբ: Այն գեղարվեստական ստեղծագործության, բնապատկերի կամ որևէ հանդիպման տպավորությունից ծնված արձակ պատում է: Որոշ հեղինակներ էսսեն անվանում են գրական ուրվագիծ, փոքր ծավալի և ազատ կոմպոզիցիայի արձակ ստեղծագործություն, որն արտահայտում է ինչ-որ կոնկրետ հարցի կամ առիթի մասին հեղինակի անհատական

2. Էսսեի ժանրն իր անվանումով ծնունդ է առել, երբ ֆրանսիացի գրող-փիլիսոփա Միշել դը Մոնտեյնը 1580թ. լույս ընծայեց իր դարակազմիկ երկը, որը կոչեց Essais (Փորձեր), և որի վրա աշխատեց շուրջ քսան տարի:

տպավորություններն ու նկատառումները և «չի հավակնում քննության առարկայի սպառիչ ու վերջնական մեկնաբանության» [10, 80]:

Էսսեն աչքի է ընկնում տարբեր տեսակներով՝ պատմողական, դատողական-վերլուծական, նամակ-էսսե, կենսագրական էսսե, վիպակ-էսսե, որոնք գեղարվեստի հետ միաժամանակ հայ և համաշխարհային արվեստի ու գրականության հարցեր են շոշափում:

Գեղարվեստական վավերագրության տեսակները քննելիս հանդիպում ենք մի նոր դրսևորման՝ փաստագրության, որը, կարծում ենք, արժանի է ուշադրության: Փաստագրությունը, աղերսներ ունենալով հուշագրության հետ, հանդես է բերում որոշակի առանձնահատկություններ: Այն հեղինակային ոճով գրված յուրօրինակ ստեղծագործություն է, որը իրականության կարևոր դեպքերի, իրադարձությունների, փաստերի արձանագրումն է, դրանց համառոտ մեկնաբանությունը: Փաստագրողը հանդես է գալիս սոցիալ-քաղաքական լուրջ հարցադրումներով, կատարում է ընդհանրացումներ: Հեղինակը փաստերը ոչ թե սոսկ արձանագրում է, այլ բնագրի ամբողջության մեջ լայնորեն կիրառում է իրականության նյութի գեղարվեստական մարմնավորման հնարքները:

Այսպիսով՝ առանձնացնելով գեղարվեստական վավերագրության տեսակները՝ հուշագրությունը, ուղեգրությունը, օրագրությունը, էսսեն և փաստագրությունը, նկատում ենք, որ դրանք, ընդհանրություններ ունենալով հանդերձ, հանդես են գալիս որոշակի առանձնահատկություններով:

Գեղարվեստական վավերագրության տեսակները հետաքրքրական իրողություններ են վեր հանում նաև լեզվական կառուցվածքային տեսանկյունից:

Հուշերի զգալի մասում առկա են կառուցվածքային, լեզվաոճական և բովանդակային նմանություններ ունեցող բաղադրատարրեր: Հուշային դիմանկարների գրեթե մեծ մասը սկսվում է յուրահատուկ մուտքով կամ սկիզբ ազդարարող կաղապարային արտահայտություններով: Դրանցից են օրինակ՝ «նրան առաջին անգամ տեսա...», «ծանոթությունն սկսվեց...», «հանդիպեցինք...» և այլ արտահայտություններ:

Հուշագրության կենտրոնում հեղինակն է: Նա կարող է լինել ներկայացվող դեպքերի մասնակից և գրի առնել այն ամենը, ինչ հանդիպել է իրեն, տեսել է ու զգացել:

Հուշագիրը հանդիպում է իր բնորդին և մյուս հերոսներին, գրուցում նրանց հետ, դատողություններ անում: Այս առումով զգալի ակտիվություն ունի առաջին և երրորդ դեմքի անձնական դերանունների գործածությունը. «Ես եղա ականատեսը և մասնակիցը այդ մեծ միջոցառման»: «Այդ օրը նշանավորվեց նաև ծանոթությամբ այն անձնավորության հետ, որը հետագայում պետք է դառնար Ամենայն Հայոց կաթողիկոսը, *մե՛ր* Կաթողիկոսը»: «Նրա կերպարանքում, *նրա* իմաստության մեջ Սողոմոն թագավորից ինչ-որ բան կար»:

Հուշագրության, ուղեգրության և փաստագրության կարևոր շերտերից է նկարագրական խոսքը: Հեղինակը տարբեր տեսանկյուններից բնութագրում է իր բնորոշներին (արտաքին, գնահատող, հոգեբանական և այլն):

Նկարագրական խոսքի տեսակներից է դիմանկարը, ուր անձի արտաքին և ներքին հատկանիշներն են գծագրվում: Ինքնատիպ է հայ զորավար Անդրանիկի արտաքին նկարագրությունը. *«Ջլապինդ մարդ էր, դեպի հետ սանրած առատ մազերով և արնեյան ոճի մեծ բեղերով: Կլիներ մոտ քառասուն տարեկան, թեև նրա ասես քարակերտ դեմքին՝ կոպերի տակ և շուրթերի անկյուններում, կնճիռներ էին երևում»* [4, 288]:

Դիմանկարն ինչ-որ չափով արտահայտում է կերպարի ներքին էությունը: Հաճախ արտաքին հատկանիշները շաղախվում են բնավորության ներքին գծերին՝ ամբողջացնելով դիմանկարը. *«Նրա ներշնչված դեմքին անսահման խաղաղություն կա, զարմանալի վճիտ աչքերում՝ անսպառ բարություն, որ շռայլում է համայն հայությանը, բոլորին, առանց սպասումի երկյուղի»* [3, 33]:

Հայտնի իրողություն է, որ մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ երկխոսությունն ունի խոշոր կշիռ: Հաղորդակցման այդ եղանակը գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարբեր պատկերներ է ներկայացնում: Հուշագրական և ուղեգրական երկխոսությունը կառուցվում են նախ հարցուպատասխանական կաղապարով.

- *«Դուք գերմաներեն գիտե՞ք, - հարցնում է վարդապետը:*
- Գիտեմ, - պատասխանում եմ [1, 197]:»*

Հայտնի է, որ երկխոսություններում մեծ կշիռ ունի հարցական հնչեքանգը: Երկխոսություններում գործածության հաճախականություն է հանդես բերում *«հարցում-հարցում»* կառույցը.

«Սեդայի տրամադրությունն այդ օրը պայծառ էր: Ջարմանում էր, թե մեզ ի՞նչ է պատահել, ինչ-որ բան էր զգում ու հարցնում էր.

«Ինչո՞ւ եք տխուր:

Հարցին հարցով պատասխանեցի:

- Ինչո՞ւ ես ուրախ»* [6, 287]:

Ուշագրավ է միակողմանի երկխոսությունը հեղինակի և ժողովրդի կյանքում կարևորություն ներկայացնող որևէ առարկայի միջև: Բնական է, որ հեղինակն օգտագործում է անձնավորման եղանակը: Օրինակ՝ *«Կիլիկիա»* նավը հայերի կյանքում կայուն ու հաստատուն պետականության խորհրդանիշներից է, և հետաքրքրական է այդօրինակ երկխոսությունը *«Զիմ Կիլիկիա...»* ուղեգրության հեղինակ Զորի Բալայանի և *«Կիլիկիա»* նավի միջև. *«Խոսում էի նավի հետ: Երբեմն թվում էր, թե նա ինձ պատասխանում է: Դիմում էի մեծատառ Դու-ով: Ահա պառկել և մտածում եմ ոչ միայն Քո նախնիների՝ կիլիկյան նավերի, այլև իմ նախնիների՝ կիլիկյան ծովայինների մասին»* [2, 35]:

Երկխոսություններում խոսակիցը երբեմն կարող է ժեստով պատասխանել.

«Մոնթեն ճանաչեց իրենց երկհարկանի տունը:

-Մերն է, չէ՞:

Հայրը գլխով արեց. (Համաձայնության նշան)

-Բա ինչո՞ւ ներս չենք մտնում» [6, 9]:

Ժեստերը աչքի են զարնում ոչ միայն երկխոսություններում, այլև հուշային դիմանկարների պատումներում. այստեղ դրանք խոսքի արտաքին տեսողական բաղադրիչներ են: Օրինակ՝ **թևը քաշել**-ստիպել. «Եվ թևս քաշելով՝ տարավ իր նոր բնակարանը», **գլուխն օրորել**-չընդունել, չհավանել, անհամաձայնություն արտահայտել. «Առաջին շաբթում նստած՝ գլուխն օրորում էր... և մի հայացք նետում գեկուցողի վրա», **ձեռքը թափ տալ**-անհամաձայնություն արտահայտել. «Վերջին բառը նա շեշտեց ուժգին՝ դրա մեջ դնելով իր բարկությունն ու դժգոհությունը, և ձեռքը թափ տալով՝ նստեց», **ձեռքը մեկնել**-ողջունել. «Երբ ձեռքս մեկնեցի, ամուր սեղմեց ժպտալով»:

Հեղինակի գրույցը ինքն իր հետ գեղարվեստական վավերագրության կառուցվածքային ձևերից է. «*Ես խոսում էի ինքս ինձ հետ. «Մարյանը Հայաստանի պեյզաժների, բնության, վառ երանգների երգիչն է, արդյոք ի՞նչ են զգալու օտարները»*»: Հուշագրության մեջ երբեմն հանդիպում են հեղինակային ինքնահարցադրումներ. «*Նա պաշտոն ուներ... ի՞նչ էր պաշտոնի անունը՝ չեմ հիշում, սակայն միշտ ընկերության գրասենյակում էր*»:

Հուշագրության մեջ հաճախ է գործածվում **հիշում եմ (չեմ հիշում)** բայաձևը, և դա բնական է, որովհետև հուշագրողը թերթում է անցյալը, թղթին հանձնում բնորդի կյանքի մանրամասները: Գործածության հաճախականություն ունեն *ասում էին, պատմում էին, լսել եմ* բայաձևերը:

Գեղարվեստավավերագրական պատկերները հուշերում կերտվում են տարբեր բառամիավորների միջոցով: Հաճախ հուշային դիմանկարներում աչքի են ընկնում տվյալ ոլորտը և այդտեղ գործող ու աշխատող անհատին ներկայացնող բառափնջեր: Օրինակ՝ Վազգեն Առաջին Կաթողիկոսին նվիրված հուշերում մեծապես գործածվում են նաև կրոնական եկեղեցական լեզվական միավորներ, այսպես՝ վանքերի, եկեղեցիների, տաճարների անուններ՝ Մբ. Էջմիածնի Մայր տաճար, Մբ. Գայանե վանք, Սուրբ Հովհաննես եկեղեցի, Սուրբ Սարգիս եկեղեցի, Մբ. Խաչ եկեղեցի, Մբ. Սիմեոն եկեղեցի, Ամենափրկիչ եկեղեցի, Աստվածածին եկեղեցի, Ս. Համբարձման եկեղեցի, Ս. Փրկիչ եկեղեցի, Տաթևի վանք, Վարազավանք, Անթիլիասի մայրավանք, Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց եկեղեցի, Երուսաղեմի Ս. Յարություն տաճար, Վատիկան. Ս. Պետրոսի տաճար, Փարիզի Աստվածամոր տաճար և այլն:

Եկեղեցական զգեստների անուններ՝ թասակ, վեղար, կնգուղ, հայրապետական քող, սքեմ, պարեգոտ (կապա), սև գլխարկ (թասակ), փարաջա, եկեղեցական վերարկու, դրվագագարդ գավազան:

Նվիրական առարկաների անուններ. որպես պատվո նշան քահանայական կարգ ունեցողներին շնորհված իրեր՝ լանջախաչ, եպիսկոպոսական մատանի, պանակե, ձեռաց խաչ:

Կրոնական գրքերի անվանումներ՝ Սուրբ Գիրք, Աստվածաշունչ, Ավետարան, Նոր Կտակարան, Հայսմավուրք:

Հայաստանի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանին նվիրված հուշերում առանձնանում են ռազմական ոլորտի բառամիավորներ՝ ակն, ականապատել, ականանետ, ռումբ, ավիառումբ, փամփշտատուփ, ինքնաձիգ, հրետանի, հրանոթ, գնդացի, նռնականետ, զրահաբաճկոն, զրահամեքենա, զորագունդ, զորամիավորում, գումարտակ, մարտադաշտ, զորահրամանատար, զորավար, դիպուկահար, նշանառու, զրահահար և այլն:

Գեղարվեստական վավերագրության մեջ հաճախ ենք հանդիպում թևավոր խոսքերի. «Հորդ աղբյուրի ջուրը բաժակում չես տեղավորի», «Մի ծաղկով էլ զարուն կգա», «Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունը ունի»:

Գեղարվեստական պատկերն ուժեղացնելու նպատակադրումով հուշագիրները հյուսում են նաև ինքնատիպ նախադասություններ, որոնք իմաստախոսություններ են և փոքր չափով մոտենում են թևավոր խոսքերին. «Կյանքում որևէ բանի հասնելու համար հարկավոր է պայքարել»: «Անձնական ազատությունից առավել ոչինչ չկա»: «Հրաժեշտի թախիծը սիրո նշան է»: «Ընկերը լավ բան է, թանկ բան»:

Հուշագրությունների լեզուն հարուստ է դարձվածքներով, որոնք վերաիմաստավորված փոխաբերական-այլաբերական դրսևորում ունեն: Այսպես՝ **աչքի լույսի չափ** «չափազանց շատ»-Աչքի լույսի չափ գնահատում է հայ ձեռագրերը: **Աստղերը բռնել** «իրար հավանել, բարեկամանալ»-Հանդիպել էին, և ինչպես հայերն են ասում, երկուսի աստղերը բռնել էին. բարեկամացել էին, մտերմացել: **Լեզու գտնել** «համաձայնության գալ»-Նրանց հետ ավելի շուտ կարելի է լեզու գտնել: **Մեղանի գլխին լինել** «հարգանքի արժանանալ»-Մայրս, որ մշտապես մեր սեղանների գլխին էր լինում, իր տեղը զիջեց հյուրին: **Շուրթից շուրթ հաղորդվել** «լուրը (պատմությունը, զրույցը) տարածվել»-Ես այդ պատմությունը բազմիցս լսեցի նաև ուրիշներից. բանահյուսության նման շուրթից շուրթ է հաղորդվում: **Աշխարհ տեսած** «կյանքի մեծ փորձ ունեցող, շատ բաների ականատես եղած»-Ոսկանը շատ հետաքրքիր, բանիմաց և աշխարհ տեսած մարդ էր: **Մուխը մարել** «օջախը մարելու պատճառով մղկտալ» (կարեկցաբար ասվում է աղետյալների մասին)-Իսկ ես, երբ զբոսաշրջիկ էի Թուրքիայում, անցնում էին այդ կողմերով և հանդիպում ճանապարհային սլաքների, որ ցույց էին տալիս՝ դեպի Սեբաստիա, դեպի Կեսարիա... մուխս մարում էր: **Զուրը մաղվել** «տանջվել»-Ընտանիքի բոլոր անդամները կարծես ջուրն էին մաղվել:

Հուշագրությունների լեզուն հաճախ է հյուսվում հեղինակային շրջասական կապակցություններով, որոնք ըստ էության հարստացնում են շրջասությունների շարքը: Շրջասությունը փոխաբերության տեսակ է, երբ

որևէ անձ, առարկա կամ իրողություն ուղղակի անվանելու փոխարեն հեղինակները տալիս են նրա ծավալուն նկարագրական բնութագրությունը. [5, 349]. այսպես՝ *Մարտիրոս Մարյան-Հարություն Կալենց-Մինաս-Աստվածներ գույների, Վիլյամ Մարտյան-Վիկտոր Համբարձումյան-Վազգեն Առաջին-*

20-րդ դարի երեք մեծ հասակակիցներ, Վազգեն Առաջին-մտքերի հսկա, Անդրանիկ-Սպիտակ ձիավոր, Անգելա Մերկել-մեծ սրտի տեր կին, Ֆրանսիա-իրավունքների և ազատության երկիր, Ֆլորենցիա-բացօթյա թանգարան, Վենետիկ-Եվրոպայի ամենաբանաստեղծական քաղաքը, Երուսաղեմ-Սուրբ քաղաք, Բեթղեհեմ-աշխարհի ամենահռչակավոր սրբավայրը, Շիրազ-Պարսկաստանի ամենագեղեցիկ քաղաքը, վարդի, երգի և գինու քաղաք, հայեր-երգի և գույնի ժողովուրդ և այլն:

Գեղարվեստական վավերագրության պատկերավորման միջոցների համակարգում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում համեմատությունը, որով էլ բացահայտվում են հեղինակների լեզվական անհատական հատկանիշները՝ դրանք դիտարկվելով որպես գեղարվեստական մտածողության տարրեր և արտահայտության ձևեր: Համեմատության ճիշտ կառուցումը պայմանավորված է գրողի դիտողականությամբ, արտաքին առարկաների և երևույթների միջև եղած կապերը տեսնելու և ճիշտ ընկալելու ունակությամբ:

Օրինակներ՝ «Կինը թագուհու նման պիտի պահի իրեն՝ հպարտ, բարձր, լուրջ»: «Մեր տղաները հիացած էին նրանով, իսկ նա անտառի եղնիկի նման փախչում էր դեպի ծառերի խորքը»: «Գնացքից իջավ մի շատ գեղեցիկ, տարեց մարդ՝ աչքերը բարությամբ լցված, մորուքը արծաթե գետի նման, հագին սպիտակ փարաջա»:

Կարելի է ասել, որ գեղարվեստական վավերագրությունն ունի հանրագիտարանային իմացաբանական արժեք: Այստեղ մեկնաբանվում են որոշակի բառեր և արտահայտություններ՝ պատումը դարձնելով ավելի տարողունակ և ընդգրկուն:

Փաստագրության եզակի նմուշ է Մարգո Ղուկասյանի «Անվերնագիր...1915» ստեղծագործությունը: Այստեղ մեկտեղված է իրողությունը վերապրողների և նոր կյանք ստեղծելու հաստատակամությամբ օժտված անձանց պատմությունը: Միջանկյալ անցումները, հետադարձ գրույցներն ու ժամանակակից անցուդարձերի համեմատականներն էլ ավելի հետաքրքրական են դարձնում պատումը: Փաստագրության մեջ փրկվում են կարևոր մասունքներ, որոնք պետք է փոխանցվեն հետագա սերունդներին: Այսպես՝ Մեծ Եղեռնից փրկվածների հարյուրավոր փաստագրությունների մեջ առանձնահատուկ կարևոր են այն ձեռագիր հուշապատումները, որոնցում կան ժողովրդական բանահյուսության պատառիկներ՝ երգեր, ասացվածքներ, առակներ: Այս փաստագրությունը կարևոր տեղեկություններ է պարունակում Սեբաստիայի գավառի Կարագյոլ և Իշխան գյուղերի բնակչության, նրա զբաղմունքների ու առօրյայի մասին: Գերդաստաններ, անուններ, Եղեռնին զոհ դարձած և դրա արդյունքում խեղված ճակատագրեր:

Ներկայացվում է բարի, սիրառատ Ալմաստ տատի կյանքի պատմությունը, ով ծնվել է Սեբաստիայի Թոնուս գավառի Կարագյոլ գյուղում:

«Կարագյոլ՝ Սև լիճ: Մոտակայքի պաղ, զուլալ, հորդաբուխ աղբյուրի ջրից էր գոյացել:

— Առանց ջուրի գյուղ կլլա, — ասում էր: — Ադ ջուրն էր կյանք տվողը: Արևը երբ մեջը կիյնար, հայելու պես կփայլկոտեր» [8, 11]:

Այս փաստագրությունը կառուցվածքային յուրահատուկ ձև ունի: Տարբեր ենթագլուխներում գեղարվեստական շնչով ներկայացվում են Ալմաստի և իր հարազատների վկայությունները: Գրքի յուրաքանչյուր մաս սկսվում է բնաբանով: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Կիլիկիոյ աղետը» գրքից քաղված բնաբանը գեղարվեստական վավերագրության արժեքն է ներկայացնում. «Եղելություններ կան, որ չեն հիննար, հիշատակներ կան, որ չեն մոռացվիր, և Ձեր աշխատասիրած հատորները որչափ ևս երեք տարի առաջ կատարված գործեր կը պատմեն, սակայն իրենց ականատեսի շեշտովը և խղճմիտ ճշմարտությամբը այժմեության կենդանի կնիք կը կրեն» [8, 16]:

Հեղինակը երբեմն շեղվում է բուն նյութից և ընթերցողին հաղորդում հավելյալ փաստեր, որոնք քաղել է ականատեսների պատմությունից և տարբեր աղբյուրներից:

«Սուրբ Նշան: Հայ ժողովրդի կողմից որքան սեր ու հարգանք, որքան գորովանք, եթե միայն հիշենք նրան տրված անունները՝ Արեգա կ Սուրբ Նշան, Ս. Հովնան Ոսկեբերա՛ն, Սեբաստիայի Սուրբ Նշան...»

Վանքը Փոքր Հայքի Մարագում լեռան փեշին էր, մոտակայքում բազում աղբյուրներ կային, զառ-վառ ծաղկահովիտներ: Եկեղեցու ներսը՝ բարձրության մինչև կեսը երեսապատված էր Կուտինայի (Կոմիտասի ծննդավայրի) հախճապակե սալիկներով: Պատերի մեջ ագուցված էին խաչքարեր: Հատակը ծածկված էր գեղեցիկ խճանկարով...

1915-ին ավերվում և կողոպտվում է նաև Սուրբ Նշանը» [8, 39]:

Այս ստեղծագործության մեջ խառնված են Սեբաստիայի և Բասենի բարբառները, երբեմն նաև արևմտահայերենը, ինչպես նաև Գյումրու խոսվածքը:

Բարբառային բառամիավորներ՝ *արզն* «անձրև»-Արզնեն փախավ, կարկուտի հանդիպեցավ (առած), *թեշիկ* «իլիկ»-Տաթիս թեշիկը լավ պահեք, *դոլաք* «պահարան, որմնապահարան»-Երբ ներս մտանք, առաջին բանը, որ տեսա, մեր դոլաքն էր, *դայմադ* «կաթի սեր (ցամաքեցրած և հատուկ ամանի մեջ պահվող)», *պոռչտուկ* «աղմուկ-աղաղակ»-Ջո՛ւր, ջո՛ւր, պոռչտուկը դիս ականջներուս մեջն է, *պահունի* «տոն օրերի համար պահած»-...Քիչ հետո ժամերգություն է լինելու. մարդիկ, իրենց պահունի շորերը հագած, շարվեշարան գալիս ու խաչակնքելով ներս են մտնում:

Բնական է, որ փաստագրության մեջ զգալի տեղ ունեն հատուկ անունները. «Կարագյոլից, օրինակ, Ալմաստի գյուղից առաջին քարավանում 1200 մարդ է եղել, ողջ են մնացել ընդամենը երեքը: Համարյա թե գավառի

մյուս գյուղերում ևս՝ Զառա, Ուլաշ, Բրգնիկ (Դանիել Վարուժանի գյուղը), Կովտուն (Սեբաստացի Մուրադի գյուղը), Դդմաճ, Իշխանի, Տիվրիկ, Պարտիզակ, Թոնդրակ, Բոաբերդ...» [8, 18]:

Ի դեպ Սեբաստիայի գավառում տարածված ազգանուններից շատերը կրոնասիրության արդյունք են՝ Գմբեթյան, Պատրիարքյան, Գուշակյան, Տաղավարյան, Լուսարարյան, Օրինաձյան և այլն:

Սոխակերաց վանք (գտնվել է Սեբաստիա քաղաքից մի քանի կիլոմետր արևմուտք): «Ինչո՞ւ: Քանզի միաբանները սնվում էին միայն հացով ու սոխով: Սակավապետ, բայց ի՛նչ նվիրյալ: Ամուր իրենց հավատքին ու մխիթարող իրենց հոտին» [8, 44]:

Հարցական հնչերանգի առատությունը նկատելի է պատումի **միջանկյալ** խորագրով հատվածներում.

«Միջանկյալ.

Դժվար է դիմանալը: Ախր ինչո՞ւ: Ինչո՞ւ պետք է այսպես լիներ: Թերևս պետք չէ՞ր գրել, թե որ ազգը որ թվականին է հարձակվել Հայաստանի վրա, կոտորել, տեղահանել և գերեվարել: Թերևս պետք էր ոչ թե այդ մասին հազարավոր գրքեր ստեղծել, այլ այն, թե մեր ժողովրդի, մեր կուսակցությունների, մեր առաջնորդների, անձնապես մեզնից յուրաքանչյուրիս ո՞ր սխալների պատճառով են դժվարության այդ հեղեղները թափվել հայ ժողովրդի գլխին» [8, 31-32]:

Առած-ասացվածքների և թևավոր խոսքերի շտեմարան է այս փաստագրությունը.

Առած-ասացվածքներ՝ «Աստված մի դուռը փակում է, մյուսն է բացում», «Աչքը տեսածից է վախենում», «Գող, սիրտը դող»: «Մի պարկ ցորենն իրար վրա հատ-հատ շարելն ավելի հեշտ է, քան մի երեխա արամազի մեծացնելը»:

Թևավոր խոսքեր՝ «Գաղթես էլ՝ ճանապարհի երկու կողմը ցանելով գնա»: «Ազգը պահողը լեզուն է»: «Կորցրած երկրի կարոտն արյան միջով է անցնում սերունդներին»: «Թշնամին միայն զարկողից կվախենա»: «Աղջիկը տան ծաղիկ է»: «Աղջկա կծախեմ, տղիս չամիչ կառնեմ»: «Հնուց եկող մի խոսք կա. կինը տան ներսի պատն է, տղամարդը՝ դրսի»: «Ուր որ գնաս, հայի կհանդիպես»: «Օձն իր պորտով, հավքն իր թևով չէր կարող անցնել»: Ներկայացված է սեբաստացիների պատկերավոր խոսքերից մեկը. «Կայենն իր կոտոշներից մեկը Հայաստան է նետել»:

Հանդիպում ենք նաև ժողովրդական իմաստախոսությունների, որոնք հաճախ աչքի են ընկնում պատկերավոր արտահայտություններով. «Ճիշտ է այն խոսքը, որ ասում են. քանի մարդուն հիշում են, նա ապրում է»: «Որդին

3. Հայերի կրոնասիրությունը ազգապահպանության կարևոր գործոն էր: Փաստեր կան, որոնք զարմացնում և հիացնում են. «Ամեն տուն պետք է ունենար իր Աստվածաշունչը: Եղբայրները, երբ հարկ համարեին բաժանվել, առանձին տուն-տեղ ըլլալ, գույքերը հավասար մասի կբաժնեին, իսկ երբ կարգը կու գար հորենական տունը բաժնելու, տունը մեկ կողմ, իսկ Աստվածաշունչը մյուս կողմ կդնեին: Վիճակը որ մեկուն էլլեր, բաժանքի հարցը վճռված կըլլար» [8, 43]:

որքան նման է հորը: Ինչպես ասում են՝ մի խնձոր կիսած»: «Տասը օր Ղուկաս Խաչատրյանի տան դուռը, ինչպես ժողովուրդն է ասում, դարձել է ջաղչի դուռ»: «Այս արտահայտությունը շատ ենք լսել մեր մեծերից. տարիներ են կուգան ու կերթան»:

Գեղարվեստական վավերագրության տարբեր մակարդակների լեզվաոճական վերլուծությունը այսքանով, անշուշտ, չի սահմանափակվում, սակայն եղածն էլ, կարծում ենք, որոշակի նյութ և ինքնատիպ փաստեր կարող է տալ լեզվի պատմական զարգացման ընդհանուր շղթային:

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հր., Կյանքիս հուշերից, Ե., 1967:
2. Բալայան Զ. «...Զիմ Կիլիկիա», Էսսե, ճամփորդական նոթեր, Ե., 2005:
3. «Ապրել գալիքի տեսիլքով. Վազգեն Ա. Երջանկահիշատակ Հայրապետի ծննդյան 100-ամյակին» (Հուշեր Վազգեն Վեհափառի մասին), Ս. Էջմիածին, 2008:
4. Գուարչ Գ., Հայոց կտակ (պատմավեպ-հուշագրություն), Ե., 2011:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Ե., 2003:
6. Ծառուկյան Ա., Բարև, ինչպե՞ս եք, լա՞վ եք..., Հուշեր, Ե., 2007:
7. Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա., Ե., 2001:
8. Ղուկասյան Մ., Անվերնագիր...1915, Ե., 2011:
9. Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Ե., 1980:
10. Սանթրոյան Մ., Գրականագիտական բառարան, Ե., 2009:
11. Галстян А., Несколько лингво-стилистических вопросов мемуаристики, «Филология, искусствоведение и культурология: тенденции развития»: материалы международной заочной научно-практической конференции, Новосибирск, 2013, ст. 64-70.

Galstyan Ashot - The types of fiction documentary and their construction.– The roots of Armenian fiction documentary go back to many centuries. Being in the center of events the authors of memoranda literature have composed their stories becoming witnesses at the same time. Later the borders of fiction documentary enlarged.

In scientific literature, fiction documentary is usually called memoir literature, which includes memoranda, diary writing and travel writing. In the twentieth century essays also greatly advanced.

Discussing the linguistic roots of fiction documentary, one can meet a new type: factual writing. Although the latter has much in common with memorandum it also has its own linguistic peculiarities.

**ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ
ՏԱԹԵՎԱՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Շուրջ յոթանասուն տարի առաջ՝ 1946 թվականին, հրատարակվել է չափազանց ուշագրավ մի աշխատություն. «Л. А. Оганесян, История медицины в Армении, часть вторая, Ереван 1946», որտեղ անդրադարձ կա նաև Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքներին: Մի քանի էջում գիտական պատշաճ մակարդակով հեղինակը ներկայացնում է Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ տեղ գտած բժշկագիտական հարցադրումները, և միայն զարմանալ կարելի է, որ մինչև այժմ այդ թեմայով չի գրվել մասնագիտական մենագրություն:

Մեր կողմից միայն Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ից առանձնացված բժշկագիտական հարցադրումները և վերլուծությունները գերազանցում են մի քանի տասնյակ էջերը, այսինքն՝ Տաթևացու գրական ժառանգության մեջ տեղ գտած մնացած բժշկագիտական հարցադրումները ի մի բերելու, այլ միջնադարյան հեղինակների հետ համեմատելու դեպքում հաստատապես կարելի է խոսել Գրիգոր Տաթևացու համակարգված բժշկագիտական հայացքների մասին: Ասենք ավելին. մենք գործ ունենք սովորում մնացած հետաքրքիր մի բժշկապետի հետ, որի հարցադրումներից շատերի պատասխանը հաստատվում է ժամանակակից բժշկության տվյալներով: Իսկ արդյո՞ք բժշկապետի. կարծում ենք, այո՞, քանի որ հարցերի այսքան բազմազանություն, այսքան սովորածավալ վերլուծություններ մեկ այլ միջնադարյան հեղինակ չունի:

Բժշկության մեջ բավականաչափ առաջացած լինելը հաստատում են նաև նրա աշխատությունների գլուխների և այսպես կոչված «պրակների» (այսինքն՝ բաժինների, ենթաբաժինների) վերնագրերը.

Զի՞նչ է հիւանդութիւն:

Հիւանդութիւն և բժշկութիւն:

Վասն է՞ր երիկամունքն ճարպով պատեալ է, և սիրտն և լեարդն ոչ:

Վասն Ստամոքսին:

Վասն Խուխին Հարցումն:

Վասն է՞ր մի ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն:

Վասն է՞ր մարդոյն աջ կողմն ուժով է քան զձախն:

Քանի՞ են զօդուածք և ոսկերք մարդոյն:

Վասն ջլաց և ոսկերաց:

Վասն գունոց մարդկան Հարցումն: Վասն է՞ր թաթարին մորուս ո՛չ բուսանի:

Հետաքրքիր են մարմնակազմության վերաբերյալ հարցադրումները և մասնավորապես՝ «**Վասն պատկերացուցութեան հարցումն**» գլուխը ևս. մի կողմից հեղինակը, ըստ նախնի փիլիսոփաների ուշադրություն է դարձնում մարմնակազմության և խառնվածքի կապին, սակայն մյուս կողմից՝ հանդես բերում լայնախոհություն և զգուշացնում, որ դրանք հարկ չկա ընդունել իբրև բացարձակ ճշմարտություն, սակայն այնուամենայնիվ, խորհուրդ տալիս հաշվի առնել, որ բնությունը ինչ-որ բան հուշում է այդտեղ. «...այնպիսի նշանք ո՛չ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս» (Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պօլիս, 1729թ., էջ 246. այսուհետև՝ Գիրք հարցմանց): Կա նաև այն հանգամանքը, որ մարդը բանականությամբ կարող է կրթել իր խառնվածքը. «զի բանականությամբ կարեն սանձիլ սոքա, յորժամ կամեցին..., պահօք և աղօթիք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ», ուստի՝ «...ո՛չ է պարտ ենթադատել զմարդ վատն այսպիսի նշանաց երևման» (նույն տեղը): Եվ այս իմաստով այս հատվածում Պլատոնին հղելը դառնում է ընդամենը վերոնշյալ նախազգուշացման հաստատում. «Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ մարդն որ ունի զնմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին» (նույն տեղը)՝ վկայելով, որ Տաթևացին ցանկացած ոլորտում քաջաձանոթ է եղել հայ և օտարազգի հեղինակներին:

Ըստ իմաստային դաշտերի առանձնացված տերմինները և հասկացությունները բաժանվել են երեք խմբի.

1. **հիվանդություններ, բժշկություն, բուժում** (օգտագործված հասկացություններ. բժիշկը, հեքիմն, հիւանդատունն, բուժելի, անբուժն, օգտել ցաւին, առողջութիւն, ողջութիւնն, երկարակեացք, կարճակեաց, հիւանդանալ, հիւանդութիւնն, ծանր հիւանդութիւն, ախտ, մարմնոյ ապականութիւնն, ժահահոտ և խառնակ օդն, ստահակութիւն օդոց, չար կերակուրն, վատ կերակուրն, գիշերոյ կերակուրն, աչքի ցաւ, կոյր, կուրանալ, այսահարութիւնն. գլխացաւ, խոց ծածկեալ, հիւանդութիւն ստամոքաց, փտեալ ատամն, օգտել ցաւին, զփողսն բռնել, բօղմայ, երքունոտն. սնքնոտն, ցաւած ծնող - ցաւածին որդի (ժառանգական հիվանդության դեպքում), փահրիզ առնել, պահք, մանրմանր ծասկել, ողողել, կղկղել, առնել զդեղս հիւանդաց, սպեղանիք և դեղք բժշկականք, մլիհամ, ծաղիկս խոտոյ, յարմատս, տերևս, պտուղս, զօշնարին ջուրն, զկաթն խոզին, զաղբ շանն, զջուր շուշանին).

2. **հոգեվիճակ, խառնվածք** (օգտագործված հասկացություններ. խառնուածք, հպարտություն, նախանձ, որկորստութիւն, բղջախոհութիւն, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, զուարթ, բարկացող, արի, երկչոտ, աներկչոտ, խորամանկ, ամոթխած, աղուեսաբարոյ*, զիճասէր, պարկեշտ)

3. **մարմնակազմություն, կազմախոսություն** (օգտագործված հասկացություններ. ներքին գլխաւոր անդամք. սիրտն, ուղեղն, լեւ'րդն, թո՛քն, փայծեղն, երիկամունքն, լեղին. այլ ներքին անդամներ՝ արգանդ, զօդուածք, ոսկերք, ջիւք, գլխաւոր ջիւքն, ստամոքս (քարշողական, ունակական, հալողական, վտարական - ստամոքսի հատկություններ), քալասիկէ* (լյարդի վերին երակը). արտաքին անդամք. դրունք՝ աչք, ականջք, պինչք, բերանն.

պորտն, ստինք, ջրհեղն. արտաքնոց*. այլ արտաքին անդամներ` գլուխն, ծործորակ, խոչափողն, պորտն, փոր, մորթ, միս, արիւն, զգայարանք, երակք, մազն.

հիւթք, արիւնն. պալղամն. սեաւ և խարտեաշ մաղձն, լեղի, խուլի.

արիւնածուծ լինիլ, սրտին ջերմութիւն և չորութիւն, բարեխառնել, բեղմնաւորիլ, յղացումն, դաշտան, որակ ծնողացն):

Սրանցից **արտաքնոց** բառը գրաբարյան սկզբնաղբյուրները վկայում են «ոտաց ճամփա» (գուգարան) իմաստով. Տաթևացին գործածում է «դրունք» կոչվող շարքում` «հետանցք» իմաստով. «աղուեսաբարոյ»-ն իր նորաբանություններից է. բառարաններում վկայված չէ նաև «քալասիկէ»-ն:

Ընդհանուր տեսական հարցեր: Ընդհանուր առմամբ Տաթևացին կարծում է, որ հիվանդությունը առողջության պակասն է, ինչպես խավարը` լույսի, մահը` կյանքի. «...բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց» (Գիրք հարցմանց, էջ 16): Եվ ընդհանրապես, կարելի է ասել, որ հեղինակի բժշկագիտական հայացքները նրա փիլիսոփայական հայացքների շարունակությունն են. «**Կենսք մարդկան ոչ այլ ինչ է, քան թէ ընթանալ ի մահ**», - գրում է նա (Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ.Պօլիս, 1740թ., էջ 328. այսուհետև` Գիրք քարոզութեան, Ձմեռան): Այս պարագայում հիվանդի գործը, բնականաբար, պետք է դառնա պակասությունը լրացնելը:

Ըստ Տաթևացու` երկարակեցության և առողջ ապրելու գրավականը չափավոր ուտելն ու մսեղեն քիչ օգտագործելն է. հիվանդությունը, ըստ նրա, մեծապես կապված է ուտելու հետ, հետևաբար, առողջությունը կապված է պահեցողության հետ. ի սկզբանէ մարդիկ` «ոչ միս կերին և ոչ գինի արբին, այլ միայն պտուղ և երկարակեացք եղեն յոյժ, բայց յետոյ յորժամ աւելի կերին հաց, միս և գինի, կարճակեաց եղեն, որ դեռևս պակասի յաւելի ուտելոյ... **հիւանդութիւն մարդոյն յուտելոյն է...** ապա ուրեմն **առողջութիւն մարդոյն ի պահոց լինի**» և առավել, քան պատերազմի սուրը ավելի շատ մահացություն են բերում գիշերը ուտելու արդյունքում առաջ եկած հիվանդությունները. «գիշերոյ կերակուրն առաւել սպանէ` քան զսուր պատերազմի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 130):

Նրա ականարկից պարզ է դառնում, որ ոչխարը մեր նախնիները պահել են հագուստի համար բուրդ ստանալու և ոչ թե ուտելու համար. ուտելու համար օգտագործվել է խոշոր եղջերավորների միսը. («Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն **կերակրոյ զեզինս**. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զըշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթոչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս» (Գիրք հարցմանց, էջ 217):

Մարդը որքան զլանում է պահպանել իր առողջությունը, այնքան մոտենում է հիվանդությանը, իսկ ողջության իսպառ բացակայությունը վերածվում է իր հակոտնյային, այսինքն` չկա կյանք, չկա նաև հիվանդություն. «Եւ ծանիր զայս, զի որքան նըւագի ողջութիւնն` առաւելու **հիւանդութիւնն**. և որչափ նըւագի մարմին` առաւելու ապականութիւն. այլ յամեննին նըւագիլ ողջութեան` և **հիւանդութիւնն** կորնչի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 22):

Բագում, բազմաթիվ հիվանդությունների մասին վկայում է հենց բազմապիսի բժշկական միջոցների գոյությունը՝ դեղերը, սպեղանիները, դեղաբույսերը, դրանց արմատները, պտուղները. «Եւ որպէս անշափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բագում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն **հիւանդութեանց** մարմնոյ» (Գիրք հարցմանց, էջ 531):

Ակնհայտորեն Տաթևացու հարցադրումները և վերլուծությունները առաջ են բերում մի հիմնական թեմա, որի շուրջը պտտվում են նրա խորհրդածությունները. նրա հարցադրումների նպատակը մարդու կատարելությունն է (և ոչ միայն այս ոլորտում), ուստի կանխատեսելի է նաև նրա կարծիքը ապագայի մարդու վերաբերյալ: Ինչպիսին պետք է լինի ապագայի մարդը հարցին, քրիստոնյա վարդապետի պատասխանը, որ աստվածաշնչյան չափանիշներով պետք է լինե՞ր, սպասելի է՞ր: Սակայն անսպասելի է Տաթևացու համադրումը. ապագայի մարդը զերծ է բոլոր արատներից՝ հոգևոր, թե՛ մարմնավոր: Նա առողջ է լինելու, ինչպես նահապետ Մովսեսը, որի ծերության օրերում ատամն անգամ չշարժվեց. գեղեցիկ, ինչպես Աբիսողոմը, սրընթաց, ինչպես Ասայելը, ուժեղ, ինչպես Մամսոնը, երկարակյաց, ինչպես Մաթուսաղան, հարուստ, ինչպես Սողոմոնը, հարգարժան ինչպես Հովսեփը, սիրված ինչպես Հովնաթանը, ազատ ինչպես Օգոստոսը. հատվածը բերում ենք ամբողջությամբ. «Քանզի՝ ունիցի մարմինն **Զգեղեցկութիւն. Զարագութիւն. Զուժգնութիւն. Զազատութիւն. Զկամաւորութիւն. Զառողջութիւն. և Զանմահութիւն:** Իսկ հոգին՝ **Զիմաստութիւն. Զսիրելութիւն. Զմիաբանութիւն. Զիշխանութիւն. Զպատիւ. Զանհոգութիւն. և Զուրախութիւն:** Եւ թեպէտ զերազանցեալ են այսոքիկ փառք քան որք այժմ ունին յերկրի. այլ սակայն օրինակաւ սակաւ ինչ բացայայտութիւն առցուք: Հաճոյ լինէր քեզ թէ լինէիր **գեղեցիկ** որպէս **Քաբիսողոմ.** որում ո՛չ գոյր արատ ի մարմնի: Կամ թէ **արագ** որպէս **ասայէլ** որ հասներ այժմեան: Կամ լինէիր **ուժեղ** որպէս **սամփսոն.** որ զհազար այր ծնօտիւ իշոյն եսպան: Կամ լինէիր **ազատ** որպէս **զօգոստոս.** որում բոլոր աշխարհ ծառայեաց: Եւ թէ լինէիր կամօք **փարթամ** որպէս **սողոմոն.** որում ո՛չ անխայեաց գոր ինչ ցանկացաւ ի սրտի: Կամ **առողջ** որպէս **զմովսէս.** որում ո՛չ վատեցին աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: Կամ **երկայնակեաց** որպէս **զմաթուսաղայ.** որ մերձ ի ուամն ժամանեաց: **Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումքք վայելեացէ, զերագոյն բոլոր աշխարհի լինէր:** Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. որում ո՛չ գտաւ հանգոյն նման ՚ի վերայ երկրի: Կամ սիրելութիւն որպէս դաւթի և յովնաթանու. զոր սիրեաց որպէս զհոգի իւր: Կամ միաբանութիւն որպէս առաքելոցն. որոց էր սիրտ և անձն մի: Կամ ունէիր իշխանութիւն որպէս աղէքսանդրու. որ զասիա զերոպիա և զիբբիա ընդ իշխանութեամբ էարկ: Կամ լինէիր **պատուեալ** որպէս **զմովսէփ.** որում երկրպագէին եգիպտացիքն որպէս աստուծոյ: Կամ լինէիր **անհոգ** որպէս **էնովք և էդիա** որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի մահու և ո՛չ յայլ ինչ պատահմանէ երկնչին: Կամ լինէիր այնպէս **ուրախ** որպէս **զայն** որ ի **կախաղան ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի:** Որպէս զսաուդայ ասեն՝ էշ կորուսեալ և թագաւորութիւն գտեալ» (Գիրք հարցմանց, էջ 761- 762):

1. Հիվանդություններ, բժշկություն, բուժում: Տաթևացին հիվանդությունների չորս պատճառ է նշում. առաջին պատճառը բնականն է, որ առաջ է գալիս անհրաժեշտ պետքերի պակասության կամ աղտոտված օդի պատճառով. «Եւ լինի հիւանդութիւն ի չորից իմն պատճառաց: Նա ի՛նչ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ հարկաւոր պիտոյից. կամ յարտաքին

ստահակութենէ օղոց» (Գիրք հարցմանց, էջ 665): Այս դեպքում նա խորհուրդ է տալիս բուժվել դեղամիջոցներով. «Ա՛րդ՝ եթէ ըստ բնականին է հիւանդութիւնն, պարտ է բժշկական դեղով առողջանալ» (նույն տեղը): Մյուս երեք տիպի հիվանդությունների («Երկրորդ, որ անգեղջ են ի մեղս՝ տայ աստուած զհիւանդութիւն ի խրատ ուղղութեան: Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ չարին. որպէս յորայն: Չորրորդ նախախնամութեամբ. զի մի՛ հպարտասցին. որպէս խէթն առաքելոյն պօղոսի: Եւ զի մի՛ մարդիկ թիրեցին արտաքոյ բնութեանս լեալ» (նույն տեղը) բուժումը, այպես ասած, հիվանդի ձեռքում է՝ հանցանքը վերացնել, արդարության գալ, ինքնակարգավորվել, այստեղ բժշկական դեղերը անելիք չունեն. «իսկ թէ յայլ երիցն է, նայիլ պարտ է առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել. և ո՞ր արդարութիւն նուագեալ է՝ զայն ուղղել. յայնժամ լինի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ յաստուծոյ և ո՛չ ի դեղոց» (նույն տեղը):

Իսկ ընդհանրապես հիվանդությունը նա դիտարկում է որպէս միջանկյալ վիճակ կյանքի և մահվան միջև. «Դարձեալ՝ վասն հիվանդութեան զհետելի է, զի է ի մէջ մահու և կենաց» (նույն տեղը):

Նա հորդորում է հիվանդին ժամանակին դիմել բժշկի. «...զի որ ծանր յիւանդութիւն ունի, պարտ է շուտով երթալ առ բժիշկն և ցուցանել նմա, զի յեստ մահուն բժիշկն ոչ կարէ օգնել» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 320): Հիվանդը ամենամոտն է իր հիվանդությանը, այնպես, ինչպէս մանուկը՝ մանկությանը, կամ ալևորը՝ ծերությանը. «Յորժամ հիւանդանաս՝ մերձ ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ մերձ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մերձ» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 37): Նա զգուշացնում է, որ աստիճանաբար առողջութեան նվազելու հետ, ծանրանում է հիվանդությունը. «Զի ի նըւազիլ ողջութեան՝ հիւանդութիւնն երևի. և ի նըւազիլ մարմնոյ՝ ապականութիւնն պատահի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 22):

Թե որքան է կարևորվում շրջակա միջավայրի մաքրությունն այսօր քաղաքակիրթ մարդկանց համար, հայտնի է բոլորիս, սակայն զարմանալի է, որ դա կարևորվել է նաև 14-15-րդ դդ. նույնպես. Տաթևացին հիվանդությունների առաջացման պատճառ է նշում ոչ միայն ուտելիքը, այլև աղտոտված օդը. «Բժիշկք ասեն, թէ ժահահոտ և խառնակ օդն վնասակար է ավելի քան զչար կերակուրն. զի վատ կերակուրն ի փորն գնայ, բայց ի սիրտն ոչ հասանի: Իսկ դառն հոտն ի սիրտն գնայ և առաւել վնասէ զմարդ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 514):

Մեկ անգամ չէ, որ Տաթևացին կարևորում է զհտակ բժշկի դերակատարությունը և զուգահեռ անցկացնում վատ քահանայի ու տգետ բժշկի միջև: Իմաստուն բժիշկը նախ հիվանդության պատճառն է բուժում. «**Իմաստուն բժիշկն զպատճառ հիւանդութեան նախ հանէ դեղօր և ապա յետոյ սպեղանօք բժշկէ**» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 145): Հավատարիմ բժիշկը նախ ինքն է ճաշակում դեղը. «Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց դեղ տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի» (Գիրք հարցմանց, էջ 316): Խելացի բժիշկը դեղը շուտափույթ կամ խիստ ուշացած չի տալիս. «....եթէ զոր օրինակ

բժիշկը՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամեննին անագան տան զդեղ հիւանդին. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջացի» (Գիրք հարցմանց, էջ 467). «Թէ որ ունի ի գլուխն ցաւ և դեղն ի վերայ ոտիցն դնէ, յիմար է այնպիսին, զի ուր ցաւն է, պարտ է անդ դնել զդեղն», - գրում է նա ոչ խելացի բուժման վերաբերյալ (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 191): Հոգատար բժիշկը ոչ միայն բուժում, այլև հետամուտ է լինում հիվանդի հետագա վիճակին. «Դարձեալ՝ որպէս բժիշկը դեղ տան հիւանդաց՝ և ի միւս օրն դարձեալ հարցանեն» (Գիրք հարցմանց, էջ 680):

Հիմար քահանային նմանեցնում է երակահատ [բժշկի], որ արյուն բաց թողնելու հետ կտրում է նաև հիվանդի ջիլը և բազում վնասներ պատճառում (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 320):

Հիվանդություններից խոսում է խոցի, կոկորդացավի, աչքացավի, կեղի, ատամնացավի մասին, որոնցից յուրաքանչյուրի պատասխանը դեղն է. «Դեղն պատասխան է հիւանդութեան» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 15): Կան նաև անբուժելի հիվանդություններ, ինչպիսիք են ըստ նրա երբունոտնը, սնքնոտնը:

«Խոց ծածկեալ ոչ բժշկի, այլ յորժամ ցուցանեմք, դեղ դնէ հեքիմն և ողջանայ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 309):

«Եւ որպէս միւս և դեղ զխոցն բժշկէ, նոյնպէս խոստովանութիւն բառնայ զմեղս և զհոգին բժշկէ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 309):

«...զփոտեալ ստամն՝ հանեն զի մի այլքն ապականեսցեն» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 310):

«Սակաւ - սակաւ փոշին ընկեցեալ յաչս՝ կուրացուցանէ» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 563):

«Բայց ի՞նչ է դեղ այնմ, որ յանկարծակի բռնէ զփողոսն [խոսքը «բողմայ» հիվանդության մասին է]: Ասեն բժիշկը, թէ երակ առնուն ի ծործորակէ զգուշութեամբ, որ բազում արիւն ելանէ և ապա առնու զօշնարին ջուրն ի բերանն և ողողէ:

Դարձեալ ասեն բժիշկը, թէ որ առնու զկաթն խոզին և զաղբ շանն և զջուր շուշանին և կղկղէ, յոյժ օգտէ ցաւին, որ բռնէ զփողոսն» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 264):

«Վեցերորդ՝ երբունոտն. սնքնոտն. անբուժն է» (Գիրք հարցմանց, էջ 371):

Աննկատ չեն նաև հոգուտ համալիր բուժման արվող հարցադրումները, մասնավորապէս պետք է իմանալ, որ ցավի զգացողությունը գլխից է գալիս. «Ցաւք և կսկիծ մարմնոյն ի գլուխն վերաբերի» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 196): Ստամոքսի ցավի դեպքում խորհուրդ է տալիս դիմել ծոմապահության. «...վասն հիւանդութեան ստամոքաց ոչ կարէ ուտել, փահրիզ առնէ, զի մի վասն յաճախ ուտելոյն առաւելացի հիւանդութիւն» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 126), և ընդհանրապէս խորհուրդ է տալիս ուտել «մանր-մանր ծասկելով և գոհութեամբ և մի՛ գազանապէս մեծամեծս կլանել» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 348):

Աչքացավի դեպքում խորհուրդ է տալիս սև շոր կապել. «Ասեն իմաստունք, թէ սեաւ գոյնն զտեսութիւն աչացն ժողովէ և զօրացուցանէ. վասն այն

յորժամ աչքն ցաւի, սև շոր կապեն ի վերայ» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 382):

Ակնարկում է օձի թույնի բուժական հատկությունների մասին. «Այլ թէպէտ արքայիկ օձին թոյնն ի կենդանութեան վնասէ զմարդն, այլ յորժամ մեռանի՝ այրեն և իւր կրակաց մոխիրն՝ ամենայն թունից դեղ է» (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 138):

Խոսում է որոշ հիվանդությունների ժառանգականության մասին. «Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղմնաւորիլն. ի դաշտանւոյն գօղի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս աղամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. **ցաւած ծնողացն ցաւածին որդի**» (Գիրք հարցմանց, էջ 439), «Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի խառնուածն, նոյն որակ գունով ծնանի զաւակն» (նույնը, էջ 245), թէպէտ արձանագրում է նաև, որ արատ ունեցող ծնողը կարող է առողջ երեխա ունենալ. «Անկատար հայրն կարէ կատարեալ որդիս ծնանել, որպէս կոյր հայրն՝ աչքաւոր որդի ծնանի» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 67):

Հավանաբար, միջնադարյան Հայաստանում գործել են անվճար հիվանդանոցներ. «...բժիշկք ի հիւանդատունն առնեն զդեղս հիւանդաց՝ ոչ առնուն զվարձս ի հիւանդաց, այլ միայն ի թագաւորէն», -վկայում է Տաթևացի Բարդգրքի Ձմեռան հատորում (Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 299):

2. Հոգեվիճակ, խառնվածք: Աստվածաշնչյան յոթ մեղքերը ցանկացած միջնադարյան հեղինակի համար քննարկման նյութ են դարձել, հավանաբար, թեկուզ հենց այն պատճառով, որ դրանք շրջանցելը գրեթե անհնար է եղել: Տաթևացի հաճախ է դրանք քննում՝ մարդուն ավելի կատարյալ և առողջ տեսնելու համար: Դրանցից երկուսը՝ **հպարտությունը** և **նախանձը**, նա համարում է հոգեկան կերտվածքի խաթարումներ. «Եւ ոմանք զերկուսն միա՛յն ասեն մարմնական. որ է՝ **որկորստութիւն և բղջախոհութիւն**. և այլքն ամենայն հոգեկան: **Այլ ես ասեմ** թէ յեօթանց անտի երկուքն պարզ հոգեկան են. այսինքն **հպարտութիւն և նախանձ**: Եւ է՝ հպարտութիւնն իմացմանն՝ և նախանձն կամացն» (Գիրք հարցմանց, էջ 559). երկուսը մարմնական են, իսկ մնացյալ երեքը՝ և՛ հոգեկան, և՛ մարմնական. «Իսկ երկուքն պարզ մարմնական. այսինքն **որկորստութիւնն և բղջախոհութիւնն**: Եւ երեքն խառն ի հոգւոյն և ի մարմնոյն. որ է **բարկութիւն, ծուլութիւն և ագահութիւն**: Այլ սոցա երեցունց հաւասար է հոգւոյն և մարմնոյն **բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել հոգւոյն ագահութիւն**: Այս ըստ նոցա որ է **ասեն զմահու չափ մեղքն**» (նույն տեղը): Սրանցից ծանրագույնը, ըստ Տաթևացու, հպարտությունն է [մեծամտությունը], որովհետև ըստ նրա, եթե այլ ախտերը երևակվում են իրենց հատկանիշով, հպարտությունն ամեննին ծածկված է մնում. «**Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամեննին ակնկալութիւն**» (Գիրք հարցմանց, էջ 562):

Այն, որ սրանք հիվանդություններ են և կարող են հաղթահարվել, հեղինակի համար կասկածից վեր է. տրտմությամբ մեղանշողը կարող է ձգտել ապաքինման այնպես, ինչպես հիվանդը՝ հիվանդությունից. «Ձի տրտմութեամբ մեղանշումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ» (Գիրք հարցմանց, էջ 33): Եվ միայն հիմար մարդն է, որ չի պայքարի և կթողնի ամեն ինչ ինքնահոսի. «Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն իմ. եթէ առողջանալոյ չեմ՝ առողջացայց. և եթէ մեռանելոյ՝ մեռայց» (Գիրք հարցմանց, էջ 18-19): Ընչաքաղցը ըստ Տաթևացու նման է ջրգոյյալ հիվանդի («Ձի նման է ջրգոյեալ հիւանդի. որ որքան աւելի խմէ, առաւել ծարաւի» (Գիրք հարցմանց, էջ 570), որի ելքը նույնպես բուժումն է:

Հոգեկան հիվանդություններից այսահարությունն, օրինակ, կարող է պսակի արգելքի պատճառ դառնալ. «...զի **բագում արգելմունք զոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն**» (Գիրք հարցմանց, էջ 610):

Խոսում է նաև ծուլության վտանգի մասին, որ հանգեցնում է տրտմության և անգործության. «ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն» (Գիրք հարցմանց, էջ 559):

«Վասն պատկերացուցութեան հարցումն» գլխում անդրադառնում է մարդու տիպերին, ըստ որի մարդիկ լինում են զուարթ, բարկացող, արի, երկչոտ, աներկչոտ, խորամանկ, ամոթխած, աղուեսաբարոյ, գիճասէր, պարկեշտ և այլն:

Հեղինակի կարծիքով մարդը հասունանում է ոչ միայն ֆիզիոլոգիապես, այլև հոգեկերտվածքի առումով. կատարելության նա հասնում է հիսուն տարեկանում. «Ձի **ծ** ամն յոբելեան է և ազատութեան. որ ազատի մարդ յախտից և յախտաւոր սիրոյ աշխարհի և առ աստուած դառնայ» (Գիրք հարցմանց, էջ 378):

Նշենք նաև, որ Տաթևացուն հատուկ է միտքը հաճախ ընդհանրացնել թևավոր խոսքի տեսքով. ընչաքաղցի վերաբերյալ քննարկումներն, օրինակ, նա ավարտում է հետևյալ կերպ. «այնպիսին քաղցեալ է ի վերայ սեղանոյն և ծարաւի ի մէջ ջրոյն» (Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 262): Թևավոր խոսքի արժեք է ձեռք բերում նաև նրա պատգամը ճիշտ ուտելու վերաբերյալ. «...զկերակուր ձեր կերիցէք ի նմանութիւն դեղի» (նույն տեղը):

3. Մարմնակազմություն, կազմախոսություն: Խիստ ծավալուն են մարմնակազմությանը և կազմախոսությանը վերաբերող հատվածները: Տաթևացին քննարկման նյութ է դարձնում թե՛ ներքին, թե՛ արտաքին օրգանները: Մարդու գլխավոր օրգաններ է համարում սիրտը, ուղեղը, լյարդը, թոքը, փայծաղը, երիկամները, լեղապարկը, քանի որ մնացյալ անդամների վնասվելու դեպքում մարդը կարող է ապրել, իսկ սրանց վնասվելը հանգեցնում է մահվան. «Եւ

գլխաւոր անդամք են տքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ կամ այլն վնասի, մարդն ապրի: Ապա թէ յեօթանց ասացելոցս մինն վնասի, իսկոյն մեռանի մարդն» (Գիրք հարցմանց, էջ 241): («Իսկ է գլխաւոր անդամքն են այսոքիկ ըստ է մոլորակացն ունելով զբնութիւնս նոցա: Առաջինն սիրտն է՝ թագաւոր անձինն. Տա՛ք է և չոր. և իւր տանուտէր արեգակն է: Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. Տա՛ք է և գէճ՝ ունելով զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է նմա: Չորրորդն թո՛քն է. Հո՛ւլ և գէճ. և է՛ տուն պլղամի. և ունի տանուտէր զլուսինն: Հինգերորդն փայծեղն է. որ է՛ ախոռ այրեցած արեանն. Յո՛ւրտ է և չոր. և ունի տանուտէր զգոհալն որ է երևակն ցուրտ և չոր գոլով: Վեցերորդն երիկամուռն որ է տուն սերման. ջերմ և գէջ. և տանուտէր ունի զգոհրայն. որ է լուսաբերն: Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. Տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն որ է հրատն: Եւ որպէս է են գլխաւոր անդամք՝ և է մոլորակք յերկինս» (Գիրք հարցմանց, էջ 241):

«Դրունք» է անվանում աչք, ականջ, քթանցք, բերան, պորտ, ստինք և ինչպէս ինքն է ասում՝ «ջրհեղն. և արտաքնոց» օրգանները: («Դարձեալ բժան դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. ք ականջք. ք պինչք. բերանն. և պորտն. ք ստինք և ...ջրհեղն. և արտաքնոց» (Գիրք հարցմանց, էջ 241):

Ստամոքսը չորս՝ քարշողական, ունակական, հալողական և վտարական գործառնություններով կարգավորում է մարսողությունը: («Քարշողականն է՝ յորժամ կծկի և քաղցի, ներքուստ և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Ունակականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեցի կերակուրն: - 242. Հալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի զ ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Վտարականն է՝ յորժամ եփի և հալի կերակուրն, բանա՛յ զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարին և բաժանէ: - 242»):

Լյարդը 438 անոթներով կարգավորում է արյան շրջանառությունը. «Իսկ լեարդն է սկիզբն արեան երակացն. որ ելանէ ի լերդէն է երակ լի արեամբ: - 244. Եւ բաժանին ամենայն երակք ի լերդէն մլը երակք» (Գիրք հարցմանց, էջ 244): Լյարդի վերին երակը կոչում է «քալասիկէ*». «Եւ կոչի վերին երակն քալասիկէ» (Գիրք հարցմանց, էջ 244):

Մանրամասն նկարագրում է մարդու ոսկորները, ջլերը, երակները, ավիշը, արյունը: («Քանի՞ են գողուածք և ոսկերք մարդոյն: - 243. Ո՞րպէս է յկէ գողուածք: - 243. Ոմանք ասեն, ժէ գլխաւոր ջլօքն որ կապին տքա՝ լինին յկէ գողուածք: - 243-244. Կամ գողուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յողին՝ լինին նոյնքան: - 244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն մլսը. և բժան անդամքն, և է զգայարանքն յողեալ առ միմեանս, լինին յկէ գողուածք: - 244.)

(Եւ ջուրն դ հիւքք. այսինքն արիւնն. պալղամն. սեաւ և խարտեաշ մաղձն: - 232. Երակ արեանն գետոց և աղբերաց: - 232. Վասն որոյ զլուխն է՛ ի վերոյ. և խոչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և հիւքք արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Զի ուղեղն ի մեջն սնուցանէ զոսկրն. և ջիւն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Իսկ մագն է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. Վասն այն յորժամ մարդն տկարանայ՝ և այրեցած արիւնն աւելնայ, մագն ծորի՛ և երկայնանայ: - 240. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թոթ՛ւ դառնայ. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ

յըստակ արհւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243»):

Բավականին հետաքրքիր է սաղմի և հղիության նկարագրությունը. ըստ Տաթևացու սաղմը շնչավորվում է քառասուներորդ օրը. նախ ձևավորվում է սիրտը, իսկ պորտալարից սնուցումը սկսում է յոթերորդ օրը. «Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՝ ատուրն սկսանի արհւնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս դըդում և ձմերուկ ընդ կոթն» (Գիրք հարցմանց, էջ 261) «**Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ՚ի մէջն ժողովի և կազմէ՝ զսիրտն**» (նույն տեղը):

Ավելի քան վեց հարյուր տարի առաջ արված հարցադրումների ճիշտ կամ սխալ լինելու խնդիրը մեր նյութից դուրս է իհարկե, առավել ևս, որ ինքը՝ Տաթևացին, առողջությունից շատ ավելի վեր է դասել իմաստությունը՝ իբրև Աստծո գերագույն շնորհ. «Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն պարզևք գերագոյն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. Այսինքն քան զկեանս և գառողջութիւն, և քան զմեծութիւն և զայլսն» (Գիրք հարցմանց, էջ 178): Սակայն մի բան աներկբա է, որ մենք 14-15-րդ դդ. ի դեմս Տաթևացու ունեցել ենք բժշկության հզոր տեսաբանի: Անժխտելի է, որ Գրիգոր Տաթևացին ունի համակարգված բժշկագիտական հայացքներ, որոնք անվերապահորեն սպասում են իրենց ուսումնասիրողներին, իսկ դրանք ներկայացնելու մեր փորձն ավարտենք նրա Քարոզգրքի Ամառան հատորի մի թևավոր խոսքով, որի առաջին հատվածը անկասկած վերաբերում է հենց իրեն՝ Գրիգոր Տաթևացուն. «**Ասեն իմաստունք, թէ ամենայն մարդ որ գիտէ զբժշկութիւն՝ բժիշկ է**, այլ ոչ ամենայն մարդ որ գիտէ զարդարութիւն՝ արդար է» (Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պօլիս, 1741թ., էջ 76):

Կարծում ենք, որ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող նյութը լուրջ համալրում կարող է բերել հայ միջնադարյան բժշկագիտական մտքին:

Григорян Сусанна - Медицинские термины в литературном наследии Григора Татеваци.- Богатое литературное наследие Григора Татеваци позволило судить о нем как о выдающемся философе, богослове, экономисте, педагоге, толкователе "писательского искусства", грамматике, ораторе и баснописце. Ко всему этому безоговорочно следует добавить и теоретика медицины. В его творческом наследии исследованию научно-медицинских вопросов посвящено около двухсот страниц, а понятий, связанных с этой сферой, - около двухсот единиц. Особый интерес представляют анатомия, физиология, факты детального описания человеческих органов, что еще раз свидетельствует о нем как о великольном знатоке и в медицинской области тоже.

Grigoryan Susanna - Medical terms in literatry legacy of Grigor Tatevatsi.- The rich literary legacy of Grigor Tatevatsi gives u good reason to find him as a great philosopher, theologian, economist, teacher, interpreter of "art writing", grammarist, speaker and fabulist. To all these we can implicitly add an outstanding theorist of medicine as well. In his creative legacy the medical problems include more than two hundred pages and there are more than two hundred terms related to this field. It's worthy of note the fact of anatomical, physiological and human organ's detailed description. Above mentioned is to prove, that he was the great expert of this sphere of medicine too.

Դիրքարյան Նարինե
Երևանի պետական համալսարան

**ԲՆԻԿ ԵՒ ՓՈԽԱՌՅԱԼ ԿԱԶՄԻՉՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Արդի Հայաստանի տեղանվանական համակարգը ձևավորվել է Հայաստանի անկախ Հանրապետության կազմավորմամբ՝ որպես ժառանգություն Հայաստանի Խորհրդային Հանրապետությանից՝ հարստացված մեծ հայրենիքի տեղանվանական տարրերով: Ազգային ենթագիտակցության մեջ հազարամյակների ընթացքում ամրակայված տեղանունները չեն կարող իսպառ ջնջվել, անգամ այն դեպքում, երբ կորսված են աշխարհագրական կամ բնակության այն միավորները, որոնց համար դրանք ծառայում էին իբրև տարածության և ժամանակի մեջ կողմնորոշման նշաններ: Պատմական հայրենիքի կորստից հետո Արևելյան Հայաստանի տարածքում բազմակի կիրառության մեջ դրվեցին շատ անվանումներ, որոնք խորհրդանշում էին քաղաքական և պետական մակարդակներում այլևս հայկական պատկանելություն չունեցող իրակություններ, ընդ որում ոչ միայն տեղանվանական, այլև անձնանունների ցանկերում, ինչպես՝ *Արարատ, Արտաշատ, Արաբկիր, Նարեկ, Նաիրի, Ուրարտու, Մալաթիա, Կիլիկիա, Ջեյթուն, Տարոն, Սասուն, Վան, Անի* և այլն: Այս երևույթն ապացուցում է, որ տեղանունները սոսկ լեզվաաշխարհագրական նշաններ չեն, այլ ազգային ինքնության բաղադրիչներ, որոնց նյութական բովանդակության կորստից հետո տեղի է ունենում յուրօրինակ փոխատեղում-փոխարինում, այսինքն՝ նրանց տրվում է նոր բովանդակություն, դիցուք՝ խոշոր վարչատարածքային միավորի անվանումները դառնում են մանրատեղանուններ՝ *Արաբկիր, Մալաթիա, Ջեյթուն, Կիլիկիա* և այլք, որ այսօր Երևանի թաղամասերի անվանումներ են, բայց միաժամանակ նաև՝ պատմական հիշողության խորհրդանիշներ, որոնք փրկում են մոռացումից Հայքի՝ Թուրքիային անցած տարածքը: Անունները զուտ լեզվական միավորներ չեն, այլ ազգային ինքնության ցուցիչներ, ուստի և ազգերն իրենց անվանացանկերի հանդեպ առավել կամ պակաս պահպանողականություն են դրսևորում՝ իրենց կենսունակության աստիճանին համապատասխան: Միաժամանակ ընդգծենք, որ տեղանուններն իբրև նշաններ պատմական անցյալի գաղափարական կնիքն են կրում, և լեզվի բառապաշարի այն յուրօրինակ շերտն են, որն էապես ենթակա է արտալեզվական գործոնների ազդեցությանը:

Մեր ուսումնասիրության նպատակն է նկարագրական տարժամանակյա վերլուծության ենթարկել Հայաստանի տեղանվանական կաղապարներն իրենց կազմիչներով՝ դրանց կիրառական ներուժի, կենսունակության բացահայտմամբ: Այս հարցը համարում ենք կարևոր, քանի որ 21-րդ դարասկզբին էլ մենք նաև տեղանունների միջոցով խնդիր ունենք ապա-

ցուցելու շատ բնակավայրերի, վարչատարածքային և աշխարհագրական միավորների հայկական ծագումը. շուրջ 5000-ամյա մեր պատերազմառատ, բազմակորուստ պատմությունն անընդհատ փոփոխությունների է ենթարկել Հայաստանը որպես աշխարհագրական և պետական միավոր, որին համահունչ սրբագրվել և փոփոխվել է հայկական տեղանվանացանկը:

Եկվորները, օտար նվաճողները գաղափարական և քաղաքական նպատադրումներով, որպես կանոն, կամ ջնջում, կամ իրենց լեզվին են հարմարեցնում գրավյալ տարածքի տեղանունները: ՀՀ տարածքի տեղանունների հնագույն շերտերի կամ սկզբնաձևերի վերականգնումը դեռևս շարունակում է հրատապ լինել հայ իրականության մեջ, քանզի Հայաստանը չլուծված տարածքային և ազգային նույնականցման խնդիրներ ունի աշխարհի առջև, դա ամենից առաջ Արցախի կամ Ղարաբաղի ճանաչման խնդիրն է միջազգային ատյաններում և, անտարակույս, շուտով հարյուրամյա դարձող 1915 թ. ցեղասպանությունից հետո կորուսյալ Արևմտյան Հայաստանի դատը: Բնավ պատահական չէ, որ Թուրքիան և նրան կուրորեն նմանակող Ադրբեջանն անընդմեջ քարտեզներ են հրապարակում թուրքական տեղանուններով՝ դրանք գործուն շրջանառության մեջ մտցնելով միջազգային ամենատարբեր ատյաններում, ներառյալ գիտության ասպարեզը: Այսինքն՝ թուրքական անվանումները դառնում են պաշտոնական, միջազգայնորեն ճանաչելի և կիրառվող անուններ. այս երևույթը պետք է կասեցվի գիտական վերականգնումներով և դրանց բարձրաձայնումներով:

Հայոց տեղանունների վերականգնումը, դրանց կերտումը և շրջանառության մեջ ամրակայելը բացի լեզվաբանական-պատմագիտական խնդիր լինելուց փաստացի ազգային անվտանգության հիմնաքար է դառնում: Այս ոլորտում հսկայական աշխատանք է կատարված, բայց օտար, հատկապես թուրքական տեղանունների հայկականացումը երբեմն հանգեցնում է պարզունակ կաղապարների ի հայտ գալուն և պատմանկարագրական բեռնվածություն չունեցող անվանումների ավելացմանը: Երբեմն հապճեպություն է նկատվում, որի հետևանքով մեր անցյալի պատմական վկայությունները վերստին խեղաթուրվում են: Տեղանունները վերանվանելիս միշտ պետք է նախապատվությունը տալ նրանց հին տարբերակներին, հակառակ դեպքում անվանման նշանային գործառույթը տուժում է, որովհետև նորակազմ տեղանունները օբյեկտի նկարագրության համար անպիտան են. **Բուրավետ, Լուսակերտ, Հաղթանակ, Բարեկամություն, Վարդաշեն** և նման տիպի անվանումները տարածության և ժամանակի մեջ կոդմնորոշվելու համար դատարկ նշաններ են:

Տեղանունները շատ հաճախ աչքի են ընկնում ոչ օրինաչափ հնչյունական փոփոխություններով, որոնց պատճառը այն էթնո-լեզվական միջավայրն է, որտեղ դրանք գործածվում են: Նման փոփոխությունները կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով. ա. հին և նոր անվանադիրների լեզուների միջև առկա հնչյունական տարբերություններով, որոնք արտահայտվում են տեղանվան մեջ, օրինակ՝ **Շաշնուինի- Սասուն, Ալզինի-**

Աղձնիք, Կումայրի- Գյումրի, Ուրշու- Ուրֆա, Խաչակապ-Խշլապակ, Գանձակ-Գյանջա, Բայան- Բանանց, Կապան-Ղափան, Նորատուփ- Նորադուզ և այլն, տեղանունների փոփոխության այս եղանակը հարակա է, բ. Ժողովրդական ստուգաբանության արդյունքում ի հայտ եկած հնչյունական տարբերություններով, երբ ժողովուրդը բառիմաստն իրեն հասկանալի դարձնելու համար փոխում է բառը՝ յուրովի վերաիմաստավորելով իր համար անհասկանալի սկզբնաձևը, գործրինակ՝ **Ղարաբաղ** տեղանվան թրքաբաղադրիչ Սև այգի «բացատրությունը», այնինչ դրա հիմքում ընկած է *բաղ* եթնոտեղանունը, որից ունենք նաև **Բաղք-Քաշունիք** գավառանունը, կամ **Չայքուրդ**-ը, որ դարձել է **Չարքուրդ**, **Սողք-Սողք** և այլն, երբեմն այս անվանաշտկումը ժողովրդական բանահյուսության ծաղկման հետևանք է, այսպես՝ **Ջուջևան**-ի հնագույն ձևը **Ճիճեան**-ն է, որից ծնվել են 2 տարբեր առասպելներ՝ իրենց համապատասխան անվանական տարբերակներով. **Ճվճվան**- լեզգիները բռնի տեղահանել են հայ բնակչությանը, որոնց ճիչերի սատկությունից գյուղը և վանքը սկսել են կոչվել **Ճչեվանք** կամ **Ճվճվան**, երկրորդ ավանդությամբ՝ թուրքերը եկել են եկեղեցի և ասել՝ այստեղ կարելի է հավի ճուտ՝ ջուջա/թրք./ մատաղ անել¹, գ. կրճատումը կամ ամփոփումը, որը երբեմն անձանաչելիորեն աղավաղում է սկզբնական տեղանունը՝ **Ուտոռստակ-Ռոստակ**, **Որոտնաբերդ-Օրոտո**, դ. սխալագրությունը, որը հատկապես հնարավոր է դառնում տվյալ տեղանվան բարբառային արտասանության տարբերակների գրավոր ամրակայման դեպքում կամ օտար լեզուներով կիրառելու և հիշատակելու դեպքերում, օրինակ՝ **Սոֆենե-Մուպանի-Մոփք**, **Երևյալ- Հերևել**, **Հայրկերտ- Հայկերտ**, **Հայկերդ- Հերկերտ**, **Պարպի**, որը **Փարպի**-ն է՝ ռուսական աղբյուրներում վկայակոչվող, **Փարջիկան- Փարջիխան**, **Պարզկանք- Պարսկանք**, **Պարսաղան- Փարսաղան** և այլ զուգաձևություններ:

Հայկական տեղանունների գործուն կաղապարների, մանրակաղապարների առանձնացումը և դասակարգումը, բնիկ և փոխառյալ տեղանվանակազմիչների, ածանցների և ածանցակերպների լեզվաբանական քննությունն ունի գիտական, կիրառական մեծ նշանակություն: Հայաստանի տեղանվանական համակարգը դեռևս համապարփակ քննության չի ենթարկվել տարբեր գործոնների պատճառով. նախ պատմական ճակատագրի բերումով Հայաստան եզրույթն ինքնին միանշանակ չէ, ինչպես արդեն նշեցինք, այն մի ամբողջություն է իր մասերով. հայկական տեղանուն ասելով՝ հասկանում են և՛ Մեծ, և՛ Փոքր Հայքերի աշխարհագրական և բնակության օբյեկտների անվանումները, ուստի հայկական տեղանվանական համակարգի ամբողջական ուսումնասիրությունը բավական բարդ է, պահանջում է մեծածավալ հայկական և օտար աղբյուրների ընդգրկում:

Պատմական Հայաստանի տարածքում վկայված վաղնջական և հնագույն տեղանվանական հիմքերի և ձևույթների մեծ մասը, կարծում ենք, հիմ-

1. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 429:

նականում բնիկ լեզվաշերտին են պատկանում, սակայն այդ ձևերի մի մասը դարերի ընթացքում դուրս է մղվել հայերենի բառապաշարից, դրանց հնչյունական և իմաստային պատկերները մթագնել են, այսինքն՝ դրանք լեզվական և իմաստային տեսանկյունից թափանցիկ չեն: Իհարկե, վաղնջական շերտում զգալի թիվ կարող են կազմել ենթաշերտային տեղանվանակազմիչները, որոնց հնարավորինս ամբողջական վերհանումը և բնութագրումը դեռևս ապագայի խնդիր է: Այս տեսանկյունից ցեղանուն-տեղանուններն արտացոլում են նախահայկական շրջանում տվյալ տարածքը բնակեցնող ցեղերի անվանումները: Էթնոնիմ կամ գենոնիմ տեղանունների ուշադիր հետազոտությունը հնարավոր կդարձնի ուրվագծել Հայկական բարձրավանդակում ընթացած էթնոգենեզը հավաստիության բարձր աստիճանով, տեղանունները համար նշաններ չեն, վերծանվելու դեպքում դրանք ուղղակի ապացույցներ են տվյալ տարածքի հնաբնակների և ավտոխտոնների վերաբերյալ: Այս առումով առավել գործնական նշանակություն ունեն անվանադրման կադապարների հստակեցումը, ապա՝ ենթադրվող տեղանվանակերտների սահմանագատումը, որի շնորհիվ հնարավոր կլինի տեղանունների անվանացանկը որոշակիացնել, բացահայտել լեզվական ատրիբուցիան², ծագումնաբանությունը:

Հրատապ է ժամանակակից Հայաստանի տեղանվանակերտ ածանցների ողջ կորպուսի գրանցումը և ներկայացումը: Տեղանվանակազմիչների առանձնացումը և լեզվական քննությունը տեղանունների ուսումնասիրության ելակետն է, մասամբ միով նաև հանգման կետը, քանի որ անվանադրման գործընթացը վերջ չունի, հարակա է: Նոր տեղանուններ կազմելիս միշտ պետք է հաշվի առնել անցյալի անվանացուցակը:

Տեղանվանակազմության ընթացքում բոլոր ժողովուրդները մշտապես գործածում են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ արմատներ և ձևույթներ, այս պարագայում կարևորը նրանց հարաբերակցությունն է, ինչպես նաև փոխառյալ ցուցիչների ներդաշնակման աստիճանը տվյալ էթնիկական անվանացանկին, զուգահեռաբար նաև հաղորդակցման լեզվին: Ընդ որում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անունների փոխառությունները անվանադիր հանրույթի կողմից կարող են կատարվել ինչպես անմիջաբար, առանց արտաքին միջամտությունների, այնպես էլ պարտադրաբար: Բնական ճանապարհով կատարվող փոխառությունները հետևանք են ժողովուրդների խաղաղ փոխգոյակցության, մշակութա-կենցաղային սերտ կապերի և հարաբերությունների: Իսկ հարկադրաբար կատարվող փոխառությունները նվաճողների պարտադրանքն են նվաճյալներին:

Հայաստանի տեղանվանական համակարգը բնութագրվում է բազմատարրությամբ, որի հիմքում մեծաթիվ տեղանունների վաղնջական բնույթն է, հայերենի բարբառային խոր տարբերակվածությունը, մեր տարածքում էթնի-

2. Ատրիբուցիա ասելով տվյալ դեպքում նկատի ունենք անվանադրի, անվանադրման ժամանակի և տեղի բացահայտումը:

կական մեծ տեղաշարժերն ու խաչաձևումները, հարուստ պատմական իրադարձությունները, հարատև սերտ շփումները տարածաշրջանի ցեղակից և ոչ ցեղակից ժողովուրդների հետ: Եթե բնորոշելու լինենք Հայաստանի տեղանվանական համակարգը բազմահատկանիշ նկարագրության միջոցով, ապա կարող ենք առանձնացնել հետևյալ 4 բնութագրիչները՝ 1. ծագում, 2. բնույթ, 3. իմաստ, 4. կազմություն: 1. Ըստ ծագման՝ առանձնացնում ենք.

- I. Նախահայկական (ենթաշերտային),
- II. հայկական
- III. ուշ տեղանուններ.
 - իրանական
 - արաբական
 - թուրքական
 - խառն:

2. Ըստ բնույթի տարբերակում ենք՝ ա. Տեղանուններ, որոնք լեզվական և իմաստային տեսանկյունից միանգամայն հասկանալի, բացատրելի են, դրանք տեղանվանագիտության մեջ ընդունված է կոչել «խոսուն, թափանցիկ» տեղանուններ՝ **Արեգունի, Ծաղկունիք, Կապուտան, Կտուց**: բ. Տեղանուններ, որոնք տարածության և ժամանակի մեջ ձևափոխվել են՝ հնչյունական, իմաստային, քերականական առումներով՝ **Շաշնուխի-Սասուն, Կումայրի-Գյումրի, Սոֆենե-Սուպանի-Ծոպք**: Այս շարքում են նաև այն տեղանունները, որոնք ունեն օտար ծագում, բայց ենթարկվել են հայերենի լեզվական ազդեցությանը՝ ընդունելով հայկական ձև՝ **Շամշադին, Ալավերդի**: գ. Բարբառային բառաձևերով կազմված տեղանուններ՝ **Խծկօնք, Խորոնք, Կաճկոնք, Շլորուտ, Ցաքուտ, Ճլուտ, Տրշող, Դալք**:

ե. Օտար և հայկական ձևակազմիչներով ստեղծված խառնածին՝ հիբրիդ տեղանուններ՝ **Հայկաշեն, Բագավան, Վարազաբուն, Անահտաձոր, Վահագնադուռ**:

3. Ըստ իմաստի՝ ա. Տեղանքի առանձնահատկություններն ու հատկանիշներն արտացոլող տեղանուններ՝ **Կարմիր, Բարձր, Սևան, Դալարիկ** և այլն: բ. Տեղանուններ, որոնց հիմքում ընկած են աշխարհագրական եզրերն ու օբյեկտները, որտեղ գտնվում են բնակավայրերը՝ **Լիճք, Լեռ, Ծովեր, Գետիկ, Հովիտ, Հերիեր**: գ. Ժողովրդանուններից կամ ցեղանուններից ծագած տեղանուններ՝ **Վիրք, Կասպք, Պարսք, Հայեկ, Հայ-Հոռոմք**: դ. Տեղանուններ, որոնք առաջացել են դյուցազնանուններից՝ Էպոնիմներից. իսկ ավելի ուշ՝ տվյալ լեզվակիր հանրության համար մեծ հեղինակություն վայելող անձերի անուններից՝ **Հայկաշեն, Տիգրանակերտ, Գագկաշեն, Աբովյան, Պոռշյան**: ե. Մարմնամասերի անվանումներից առաջացած տեղանուններ՝ **Կտուց, Փորափոր, Ճակատ, Գլուխ, Անգճիք**: գ. Բուսանուններից ածանցված կազմություններ՝ **Արմատ, Վարդիկ, Ծաղկունիք, Բարդի**: ե. Կենդանանուններից ածանցված կազմություններ՝ **Ճանճիկ, Օձիկ, Արջուտ, Կաքավ, Աղվեսագյուղ**: ը. Տեղանուններ, որոնց հիմքում ընկած են հասարակական և տնտեսական

իրողություններ՝ **Հաղթանակ, Գոհանամ, Բարեկամություն, Գործարանային, Երևել:** թ. Բնական օգտակար հանածոների անվանումներից կազմված տեղանուններ՝ **Ոսկի, Արծաթ, Պղնձաքար, Պղնձասար, Կավասար:** ժ. Պաշտամունքային հիմք ունեցող բառերից, հատկապես բնության երևույթների անվանումներից կամ դիցանուններից ծագած տեղանուններ՝ **Արեգունի, Արևիք, Արփի, Աստղ, Լուսին, Անահտական, Բագարան, Խաչ:** Իմաստային-թեմատիկ այս դասակարգումը հնարավոր է առավել մանրատել, սակայն դա դուրս է ներկա քննության նպատակներից:

4. Ըստ կազմության տեղանունները լինում են. ա. պարզ, բ. բարդ, գ. ածանցավոր, դ. բաղադրյալ կամ բառակապակցություն տեղանուններ: Գ.Զահուկյանը, անդրադառնալով հայկական տեղանունների կազմության տիպերին, որոցից ամենատարածվածը բարդ և բաղադրյալ տիպերն են, նշում է, որ բաղադրյալ տեղանունները հաճախ ունեն իրենց հոմանշային բարդ ձևերը, այսինքն՝ զուգաձև են՝ Ագռավուց քար- Ագռավաքար, Ձորոյ փոր – Ձորոփոր կամ Ձորափոր³: Տեղանվանագիտական գրականության մեջ տարբերակվում է նաև 5-րդ տիպը, որ կոչվում է թեքությային (ֆլեքսիվ), սակայն այն կարող ենք միավորել ածանցավոր կազմությունների հետ, եթե չտարբերակենք բառակազմական և բառահարաբերական ձևայինները: Տեղանունների կազմության ընթացքում այս 2 ձևայինները կիրառվում են հավասարապես և ըստ էության հավասարաթեք են. երկուսն էլ կազմում են նոր բառանշաններ, ուստի ընդունված է և՛ բառակազմական, և՛ բառահարաբերական ձևայինները կոչել տեղանվանակազմիչներ՝ տոպոֆորմանտներ: Գր.Ղափանցյանը նման մասնիկները կոչում էր ածանցային տարրեր՝ «сфигурируемые элементы»: Վերջիններս էլ մեր այս ուսումնասիրության աղն են:

Հայ տեղանվանագիտության մեջ անվանակազմիչների դասակարգման առաջին փորձը կատարել է Գր. Ղափանցյանը⁴, որն իր «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը» աշխատության մեջ տարժամանակյա դիտակետով առանձնացնում է՝ 1) Նախահայկական շրջանի տեղանվանական կաղապարները, որ կոչվում է իսալոյան, 2) տոհմացեղային շրջանի հայկական տեղանվանական կառույցները, 3) պաշտամունքային շրջանի տեղանվանական կազմությունները, 4) շինարարական և այլ բնույթի տեղանվանական կառույցները և 5) տեղանվանական նորակազմությունները՝ ծագած ա. Բնիկ կամ փոխառյալ բառերից՝ *-ապատ, -կերտ, -ջատ, -շեն, -աւան, - առիճ, - բերդ, -կոթ, -հովիտ, -փոր, -ձոր, -բակ, -սար, -քար, -թաղ, -տուք, -գիւղ*:

բ. Ածանցներից կամ ձևայիններից՝ առաջացած՝ 1. *-աւ* – Զիրաւ, Կճաւ, Պարտաւ:

3. Գ.Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 412-413:

4. Գր. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 4-113:

2. *-օնք*- Կաճկօնք, Բաւօնք, Շահապօնք, Խծկօնք, Խորօնք, Կտրօնք, Դարօնք, Արամօնք:

3. *-ունի(ք)* – Բզնունի(ք), Խնունի(ք), Նոնունի(ք)>Նոնունիս>Նոնուս, Բնունի(ք), Ռշտունի(ք), Ապահունի, Արշամունի, Գեղարքունի:

4. *-ուտ*- Յրդուտ, Յաքուտ, Շլորուտ, Խնձորուտ, Թեղուտ, Լորուտ, Կեչուտ, Շամուտ, Տանձուտ, Վարդուտ, Ճլուտ, հասարակ գոյականներից՝ ծառուտ, ճլկուտ, թփուտ:

5. *-ենի*- Վարդենի, Սշենի, Բղենի, Մորենի:

6. *-եան*- Հաշտեանք>Հաշտէնք, Խորձեանք, Բասեան>Բասեն, Ախուրեան, Դիմաքսեան, Մամիկոնեան, Աբեղեան:

7. *-նի*- Բջնի, Պարնի, Ջոգնի, Մուղնի, Օձնի, Գառնի, Շիրնի:

8. *-ող*- Բարդող, Ջիթող, Շնող, Տրշող կամ Տրող:

9. *-ք*- Նորք, Հագք, Դալք, Հորք, Մարգք:

10. *-իք*- Ոփիք, Որթիք, Եղեգիք>Եղեգիս, Շինիք, Նորիք>Նորիս, Որոգիք, Հացիք, Ուռիք, Փշատիք, Կածիք, Արնիք:

11. *-այ/ա* – Արփայ, Բերնայ, Յղնայ, Ջուղայ, Մաստարայ, Խորժայ, Չաղայ:

12. *-եար*- Տափեար, Բակեար, Վանեար:

Տեղանվանակերտ ածանցների քննությանն անդրադարձել է նաև Գ. Զահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ, որտեղ, ելնելով հայկական հնագույն շրջանի տեղանվանացանկից, արձանագրում է, որ «բուն հայկական ծագման տեղանունների մեջ ածանցավոր կազմությունները բաղադրյալ և բարդ տեղանունների համեմատությամբ ավելի փոքր տեղ են գրավում: Մասնավորապես քիչ են բուն հայկական հիմքերով և հայկական ածանցներով կազմությունները»⁵: Հույժ հազվադեպ են նախաածանցավոր կազմությունները, զուտ տեղանվանակերտ ածանցի արժեք ունի ընդամենը մեկ ձևությո՝ **առ**-ը, որը նախդիր է և հայցական հոլովի հետ «մոտ, մերձ» իմաստով սկզբնապես բաղադրյալ կառույցներ է կազմել, ապա կցվել իր խնդրին, օրինակ՝ *բերան* հայերենում տարածված տեղանվանահիմքից այն կազմում է նոր անվանումներ՝ *Բերան- Տուրուրեան-Առբերան, կամ՝ Առնետ, Առնիս/տ, Առբերդ, Առավան, Առինջ*: **Ան/ամ** տեղանվանակազմիչի վերաբերյալ կարծիքները թեական են. Գ.Զահուկյանը *Անբերդ/Ամբերդ* տեղանվան կապակցությամբ նշում է, որ բերդ հիմքը սեմական է, իսկ **ան**-ը կամ հնդեվրոպական է «համա, միա, միասին» իմաստով, կամ ծագում է պարթևական **am/an** նախաածանցից⁶: Գ. Ղափանցյանն ավելի վաղ պնդում էր, թե **ան**-ը խուռիտական արմատ է «աստված» նշանակությամբ⁷: Սակայն նշենք, որ պետք է հրստակ տարբերակել **ան** հնագույն տեղանվանակազմիչը **ան** ժխտական ածանցից, որն ամենակենսունակ է: Հայկական ավելի ուշ շրջանի տեղանուն-

5. Գ.Բ. Զահուկյան, նշյալ աշխատությունը, էջ 415:

6. Գ.Բ. Զահուկյան, նշյալ աշխատությունը, էջ 416:

7. Գ. Ղափանցյան, Սովետական Հայաստանի նոր տեղանունների մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» N 1, 1954, էջ 15:

ներում երբեմն հանդիպող **ան**-ն արդեն տեղանվանական ձևույթ չէ, այլ ածականակերտ ածանց, որով կազմված բառերը որպես տեղանքի առանձնահատկության, հատկանիշի անուն հետագայում են տեղանուն դարձել, ինչպես օրինակ՝ *Անգոս, Անսուր, Անտերուն, Անքար, Անպարտ, Անաստուած, Անխաչ և այլն*:

Վերջածանց տեղանվանակազմիչներն առավել մեծաթիվ են, բայց սակավաթիվ են բուն հայկական հնդեվրոպական ծագման հիմքով և ածանցով բաղադրված տեղանունները: Գ. Ջահուկյանն իբրև այսպիսի բնիկ տոպոֆորմանտ միանշանակ առանձնացնում է **ի**-ն, որից հայերենում ծագել է ի հոլովիչը՝ և՛ եզակի, և՛ հոգնակի տարբերակներով՝ **ի/իք**, օրինակ՝ *Արծաթի, Երերի, Երկայնարտի, Թաղամայրի, Ականիք, Նորիք, Հացիք, Փլարիք* և այլն:

-**Ուտ** տեղանվանակազմիչի ծագումը ևս մեծ հավանականությամբ համարվում է բնիկ հայկական, որից էլ՝ ու>ո հնչյունական անցումով առաջացել է -**ոտ**-ը, **ոտ**-ին **տ**-ի հավելումով ստեղծվել է -**կոտ/կուտ** ձևույթը: Այս տոպոֆորմանտն իր տարբերակներով՝ ուտ>ոտ>կոտ տարածված է եղել հայոց լեզվի գրեթե բոլոր տարածական և գրական տարբերակներում՝ Բարձրուտ, *Քարուտ, Ջրուտ*: Գործուն տեղանվանակազմիչ հայերենի զարգացման բոլոր փուլերում եղել են հոգնակի ուղղականի, ինչպես նաև հայցականի ձևույթները՝ հին շրջանի համար -ք բնի տարբեր հնչյունների զուգակցմամբ՝ -**այք, -անք, -երք, -ունք, -ինք, -ենք, -իք, -ան, -նեար, -եար, -նի, -ստան**, նոր շրջանում՝ -**ներ, -եր**: Օրինակ՝ *Այրք, Արտաբույնք, Վանք, Բերք, Դալք, Զովք, Հովք, Կիցք, Վիրք, Մարմարք, Ծաղկունիք, Բարձրունիք, Արեգունիք, Կորճայք, Պարնի, Բջնի, Մուղնի, Գառնի, Վրաստան, Հայաստան, Ղազախստան, Ղրղզստան* և այլն:

Գրաբարյան հոգնակի հայցականի **ս**-ն ևս տարբեր կազմիչների հետ, հատկապես -**իս**, հին շրջանում հաճախ կազմում էր խոշոր, միջին և փոքր բնականություններ: Ընդ որում -**ք** կամ -**ս** տեղանվանակազմիչ միաժամանակ կարող էին ստանալ նույն հիմքերը՝ *Բլուրք/Բլուրս, Դողք-Դողս, Մոկք/Մոկս* և այլն:

-**Իս** տեղանվանակազմիչը չպետք է շփոթել կովկասյան լեզուների, նաև վրացերենի սեռականից ծագող **իս**-ի հետ: Այս երկու կազմիչների մասին խոսելիս Գ.Ջահուկյանը մատնացույց է անում վիճահարույց ստուգաբանություն ունեցող **Ագուլիս(Արգուլիս)** և **Թմնիս** տեղանունները, դրանց համար առաջարկելով հնդեվրոպական ծագումնաբանություն՝ առաջինը կապելով բուսանվան հետ, իսկ **Թմնիս**-ը մթին բառի հետ՝ դրափոխությամբ հանդերձ:

Բնիկ ծագում ունի նաև -**աւոր** տեղանվանակազմիչը, որը կարող էր հանդես գալ և՛ հայկական, և՛ պարթևական հիմքերի հետ՝ *Երազգավոր/ք/ս, Երաշխավոր, Կարմրաւոր, Սնավոր, Ջրավոր*: Հայերենի տեղանվանակազմիչներից շարքում ծագումով իրանական, բայց կիրառությամբ լիարժեք հայկական կարելի է բնորոշել՝ -**ակ, -իկ, -ուկ, -ական, -յան** ֆորմանտները: Վերջինիս համար բացառված չէ նաև հնդեվրոպական ծագումը: -**Ակ**-ը գերազանցապես բնականություններ, սակավ ջրանուններ է կազմում, իր կենսու-

նակությամբ զիջում է միայն **-ական** կազմիչին: Նվագական, փոքրացուցիչ իմաստը կարող է ն' դրսևորվել, ն' բացակայել՝ *Անտառակ, Բերդակ, Գանձակ, Դարանակ, Երիզակ, Չորակ, Ծովակ, Կապուտակ, Ճամբարակ, Հանդակ* և այլն: **-իկ**-ը նս կազմում է բնականություններ և ջրանուններ նկատելի փոքրացուցիչ-փաղաքշական իմաստով՝ *Աղվորիկ, Բերդիկ, Գեղմիկ, Դարբնիկ, Դարիկ, Դրախտիկ, Իշխանիկ, Հացիկ, Հերիկ, Քաղաքիկ, Պղնձիկ, Նորիկ* և այլն:

-Ական-ը իրանական ծագման գործուն անվանակերտ ածանց է հայերենում, որ ն' հին, և նոր ժամանակներում կազմում է նահանգների, մարզերի անուններ, բնականություններ, անգամ ջրանուններ ամենատարբեր ծագման հիմքերից, **ական**-ի մեջ կա երկու նշանակություն, նախ՝ հոգնակիության իմաստ, այն գրաբարում հավաքականակերտ –հոգնակերտ էր, որի շնորհիվ էլ հին շրջանում գործուն տեղանվանակերտ էր, ինչպես ք-ն, իսկ հետագայում, հոգնակիության մթագնմանը զուգընթաց նրա մեջ զարգանում է պատկանելության, սերման իմաստը, որը դարձյալ կարևոր է տեղանվանաստեղծման մեջ, ուստի նոր և նորագույն շրջաններում էլ այն մնում է գործուն տեղանվանակերտ տարբեր մեծության բնականությունների համար՝ *Կովսական, Ջրական, Գինական, Կուտական, Խրովական, Արվական, Արզական, Բյուրական, Բուժական, Տափերական, Լեռնական, Այգեգործական, Գետական, Կոճղական* և այլն, թեև փաստենք, որ այս ածանցով կան նաև հին լեռնանուններ և գետանուններ՝ *Նուկրական, Հորական*:

Հայերենի զարգացման տարբեր փուլերում տեղանվանակազմիչ արժեք ունեցող շուրջ 4 տասնյակ ածանցներից՝ **-աշ, -աժ, -ակ, -արան, -ան, -անի, -աս, -ավոր, -ատ, -եկ, -եան/յան, -են, -ես, -իթ, -իկ, -ին, -իս, -իք, -կան, -յալ, -նի, -ոս, -ող, -ս, -ստան, -ավետ/վետ, -ուտ, -ուկ, -ունի, -ունիք, -ք** և այլն, այսօր կենսունակ են մեկ տասնյակը՝ որոշ վերապահությամբ: Այս երևույթը վկայում է հայերենում անվանադրման բանաձևի հստակեցման և միօրինակության համակարգային միտումի հաստատման մասին:

Այս տեղանվանակազմիչների զգալի մասը կենսունակ է նաև 21-րդ դարում և նրանց միջոցով կազմվում են արդի բնականություններ, ջրանուններ և հատկապես՝ մանրատեղանուններ, որոնք լայնորեն կիրառվեցին Հայաստանի Հանրապետության տեղանունների հայկականացման տարբեր շրջաններում՝ սկսած Խորհրդային Հայաստանի ժամանակներից մինչև Հայաստանի անկախ Երրորդ Հանրապետության ներկա պահը:

Ակներև է, որ Գ.Ղափանցյանի և Գ.Ջահուկյանի և այլոց կողմից առանձնացրած տեղանվանակազմիչների հիմնական մասն արդի շրջանում շարունակում է գործածվել՝ սակավ բացառություններով: Ըստ այդմ կարող ենք եզրակացնել, որ տեղանվանադրման բանաձևը մեզանում պահպանողական է և վերժամանակյա, այս իրողությունն ակնհայտ նաև մանրատեղանունների՝ անգամ հպանցիկ դիտարկման դեպքում. հայ անվանադիրն իր արտը, դաշտը, այգին, լիճը և այլք անվանում է հայկական կազմիչներով՝ հաճախ բարբառային, ժողովրդախոսակցական, բայց ոչ՝ օտար: Ակնհայտ է

տեղանունների և անձնանունների ընտրության սկզբունքների տարբերությունը, վերջինս առավել փոփոխական է, և հայ իրականության մեջ անընդհատ ենթակա է եղել դրսի ազդեցություններին, այսպես՝ բնիկ հայկական անձնանվանակերտ հիմքերին և ածանցներին շատ արագ փոխարինելու եկան պարսկա-իրանական կազմիչները, ապա՝ հունահռոմեական, քրիստոնեության ընդունումից հետո՝ աստվածաշնչյան, այնուհետև՝ արաբական, թաթարական, թուրքական և ապա՝ ռուսական ու եվրոպական: Կարծում ենք, որ ազգային ենթագիտակցության մեջ առկա է շրջակա՝ հայրենի աշխարհի անվանման բնիկ կազմիչներին առավելություն տալու կարծրատիպը՝ որպես հայկական ինքնության բաղադրիչ: Անձնանունների ընտրության պարագայում նման կարծրատիպ բացակայում է և գործում է փոքր ազգի համաշխարհային դառնալու միտումը:

Нарине Дилбарян -Исконные и заимствованные форманты в топонимике Армении. -Топонимия современной Армении формировалась с образованием суверенной Республики Армения, в наследие получив топонимию Советской Армении, которая несла идеологическую печать исторического прошлого, так как топонимы представляют тот пласт лексики, который более подвержен влиянию экстралингвистических факторов. Чужеземные захватчики, правящие идеологические структуры могут стереть, видоизменить большие исторические топонимические пласты, вместо них установив знаки, служащие их политическим целям. Цель этого доклада - подвергнуть синхронно-описательному, диахроническому и семантическому анализу топонимические структуры Армении с выявлением их продуктивного потенциала.

Арменизация или восстановление исконных армянских топонимов на территории современной Армении продолжает оставаться в повестке дня. Уже проделана огромная работа, однако арменизация чужеродных, в особенности поздних тюркских топонимов, приводит к возникновению тривиальных словообразовательных клише, повторам, забвению подлинных форм топонимов. С этой точки зрения определение и классификация основных словообразовательных форм армянских топонимов, лингвистический анализ исконных и заимствованных топоформантов, суффиксов и суффиксированных элементов имеет научную и практическую значимость. Процесс именования нескончаем.

Narine Dilbaryan - The discrimination of native and borrowed forms in the toponymy of Armenia. -The toponymy of today's Armenia was formed with the formation of the sovereign Republic of Armenia which had the heritage of Soviet Armenian toponyms. The toponymic structure of Soviet Armenia carried the ideological stamp of the historical past as place names represent the unique layer of vocabulary, which is more liable to the influence of extralinguistic factors. The aim of this report is to make a synchronous, descriptive, diachronic and semantic analysis of the structure of the Armenian place names with the identification of their productive potential.

ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԱՍՏՅԱԿԱՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրավոր խոսքը ոչ միայն հաղորդակցման ինքնուրույն միջոց է, այլև բանավոր խոսքի արձանագրիչ, արդի հասարակության մեջ տեղեկատվությանն առնչվելու առավել ազդու եղանակ: Կառուցվելով հնչող լեզվի համեմատաբար ավելի բարձր զարգացած գործառական բազայի վրա՝ կոչված է ծառայելու հանրային հաղորդակցմանը, մշակույթի հետագա զարգացմանն ու պահպանմանը:

Լեզուն՝ իբրև հաղորդակցման միջոց, արտահայտվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով: Դրանք նույն լեզվի տարբեր դրսևորումներն են, որոնք ոչ թե տարազատված, այլ սերտորեն կապված են իրար և փոխադարձ հարաբերության մեջ են: Միաժամանակ այդ երկու ձևերը մի շարք կողմերով տարբերվում են իրարից. յուրաքանչյուրը մի ուրույն, առանձնահատուկ համակարգ է ներկայացնում¹:

Ի տարբերություն բանավորի՝ գրավոր խոսքը կրկնելի է և, եթե օժտված է խոսքի արժանիքներով, երկարատև կյանք կարող է ունենալ: Այն համեմատաբար քիչ իրադրական է, քիչ է ենթակա միջավայրի ազդեցությանը, առավել ազատ է ունկնդիրների, ընթերցողների միջամտությունից, ձգտում է փաստացիության ու ճշտության, լեզվական առումով ավելի բազմազան է և հարուստ²:

Այսպիսով, լեզվի այս երկու դրսևորումները, չնայած զգալի տարբերություններին, փոխլրացնում և զարգացնում են միմյանց: Այդպես է նաև ասացական բայերի դեպքում:

Ասացական բայերը, ըստ արտահայտման եղանակի, ունեն դրսևորման երեք տեսակ՝ **բանավոր, գրավոր և ներքին խոսքի**՝ պայմանավորված այն հանգամանքով, որ խոսքը լինում է բանավոր, գրավոր և ներքին: Բանավոր խոսքն ունի խոսակցական-արտասանական, գրավոր խոսքը՝ գրավոր իրացում ...³: Եվ ինչպես Ջահուկյանն է նշում. «... գրավոր խոսքը իր հաղորդակցական արժեքով գրեթե չի զիջում բանավորին»⁴:

Եթե բանավոր խոսքի ասացականներն իրենց նշանակություններից ուրևե մեկով մատնանշում են մտքի՝ բառայնորեն ձևավորված բանավոր (հնչողական) արտահայտման գործընթաց, ապա գրավոր խոսքի ասացականները՝ մտքի՝ բառայնորեն ձևավորված գրավոր (չհնչող) արտահայտման գործըն-

¹ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Ե., 1997, էջ 137:

² Պ. Ս. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (Խոսքի տեսություն), Գիրք առաջին, Ե., 1990, էջ 87:

³ Հ. Ջ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 280-281:

⁴ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 96:

թաց, օր.՝ Ա՛յն, Ինչ հիմա ես գրո՛ւմ եմ... Մենք չե՛նք խոսում մինչև անգամ, - Ինչո՞ւ՝ իզուր խոսենք, ասա՛, Մենք...սիրում ենք (ԳԷ, 285):

Գրավոր խոսքի ասացականներն արտահայտում են գրողի խոհերն ու ապրումները, որոնք հաղորդվում են խոսակցին գրավոր ձևով: Եթե բանավոր խոսքի ասացականների համար հնարավոր չէ առանձնացնել **ձևական** որևէ **չափանիշ**, ապա գրավոր խոսքի ասացականների համար ձևական չափանիշ է **գրելու հատկանիշը**, որն այդ խմբի բայերում առկա է **արտակա** կամ **ներակա** ձևով, օր.՝ Վերջին առարկայի մասին գրիչներից մեկը **հիշատակագրել է**, թե համալսարանը տալիս է նաև «խրատատուութեամբ ի բանս և առողանութիւնս և ի ստիք» (ԲՈՒԻ, 270), Նա այդ փաստերն իսկույն **գրանցում էր** ծոցատետրում (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան⁵, այսուհետև՝ ԺՀԼԲԲ, 447):

Գրավոր խոսքի ասացականները Է. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»⁶ 297-ն են և, ինչպես քանակական, այնպես էլ իմաստային հարստության առումով, զիջում են բանավոր խոսքի ասացականներին: Եթե բանավոր խոսքի ասացականներն աչքի են ընկնում իրենց բազմիմաստությամբ, ապա գրավոր խոսքի ասացականներին հիմնականում հատուկ է մեկից մինչև երեք նշանակություն (որոշ բացառություններով հանդերձ):

Այս հարացույցի բայերի **նույնացուցիչը** լայն առումով **գրել** միջուկային բայն է, որը որևէ տեղեկատվության **գրավոր փոխանցման** գործընթացն արտահայտում է ընդհանրացված ձևով՝ առանց մատնացույց անելու նրա կոնկրետ նշանակությունները, օր.՝ Հոգնած երեկվա հանգավոր ու չափավոր կադապրվածությունից, քափի ու փրփուրի չափաբերականությունից, գանգրահեր բառերի վաճառականությունից, սրանք հաճախ **գրում են** մի այնպիսի լեզվով, ասես հարկադրաբար հարկ ու տուրք են տալիս՝ իրենց մտքերն արտահայտելով մի կերպ, զոռով, կարծես թե օտար մի լեզվով (ՊՄ, հ. 3, 190):

Ըստ ԺՀԼԲԲ-ի⁷ **գրել** միջուկային բայի գործածության ընդհանուր հաճախականությունը 2294/84 է⁸, արձակում՝ 336/10, չափածոյում՝ 210/11, դրամատուրգիայում՝ 119/6, մանկական գրականության մեջ՝ 252/13, լեզվաբանական գրականության մեջ՝ 71/6, գրականագիտական գրականության մեջ՝ 464/8, գիտամասսայական գրականության մեջ՝ 27/3, դասագրքերում՝ 279/11, ամսագրերում՝ 283/8, թերթերում՝ 118/7, 15-17 տարեկան պատանիների ու աղջիկների չեզոք բառապաշարում՝ 135/1:

Գրավոր խոսքի մյուս բայերի գործածության հաճախականությունը զիջում է միջուկային բայի գործածության հաճախականությանը:

⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ա-Ե, 1969, Զ-Ծ, 1972, Կ-Ս, 1974, Զ-Ֆ, 1980, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե.:

⁶ Է. Բ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

⁷ Բ. Կ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Ե., 1982:

⁸ Համարիչն արտահայտում է բառի ընդհանուր հաճախականությունը, հայտարարը՝ տարածվածությունն ըստ տեքստերի:

Ինչպես արդեն նշեցինք, գրավոր խոսքի ասացականներն ունեն տարբերակման **ձևական չափանիշ**, որն արտակա ձևով արտահայտվում է գրավոր խոսքի 141 ասացականներում, օր.՝ Հայաստանի ժայռապատկերները, որոնց ամենահին օրինակները թվագրվում են մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներով, ... հետաքրքիր նյութ են տալիս նրանց անանուն հեղինակների կյանքն ուսումնասիրելու համար (ԲՈԻ, 12), իսկ գրավոր խոսքի մյուս ասացականներում **գրելու հատկանիշը ներակայված է**, օր.՝ Այս երկու օրում կգույքավորվեն շուկայի քսան խանութները... (ԺՀԼԲԲ, 457), Ինքս էլ երբեմն խզրզում եմ, բայց ի՞նչ կարող ես անել, բան չի ստացվում, դե իհարկե, դրա համար տաղանդ է պետք, մուսանե՜ր (Ա):

Գրավոր խոսքի ասացականները, ըստ սեռային իմակի⁹, բաժանել ենք երեք ենթահարացույցի՝ **գրավոր խոսքի բուն, վերաբերական և բնութագրական** ասացականների:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ **գրել** միջուկային բայն ունի տասներկու բառաիմաստային տարբերակ՝ ենթահարացույցների նույնացուցիչներն ընտրվել են ըստ **այդ բայի բառաիմաստային տարբերակների**:

Գրավոր խոսքի **բուն ասացականների** ենթահարացույցի նույնացուցիչը **գրել** բայն է, որն արտահայտում է **գրավոր ձևով որևէ տեղեկատվություն հաղորդելու գործընթացը** և՛ ընդհանուր, օր.՝ Ինչ գրել ենք մինչև հիմա՝ Եղել է լոկ առաջաբան Մի վիթխարի երգի համար, Որ գալու է, բայց դեռ չկա (ԵԶ, հ. 2, 267), և՛ կոնկրետ ձևով, օր.՝ Ավագի վրա գրում էր դանդաղ, Դողդոջ մատներով գրում՝ Այբ, Բեն, Գիմ... (ՎԴ, հ. 2, 55):

Այս ենթահարացույցի **բայերն են՝ ամրագրել, արձանագրել, գրանցել, գույքագրել, էջագրել, ընծայագրել, թվագրել, խորագրել, կենսագրել, համարագրել, հոդվածագրել, հոժարագրել, հուշագրել, ճառագրել, մակագրել, մատենագրել, շարականել, շարահյուսել, պատմաբանել, պարսավագրել, սակագրել, ստորագրել, վիպագրել, վիպասանել, տարեգրել, տիտղոսագրել, տոմարագրել, ուրվագրել, փաստագրել, քարտագրել** են, օր.՝ ... հեղինակը, իր կամքից անկախ պատճառներով, նաիրյան այդ քաղաքի մի քանի արգո քաղաքացիների մասին արձանագրել է տեղեկություններ... (ԵԶ, հ. 4, 5), «Օրերի հետ» արտահայտությունը, որով նա խորագրել էր իր առաջին գրքույկը, դրա հարուստ գրավականն էր (ՊՍ, հ. 5, 23), Ո՞նց պատմաբանեմ ձեզ համար ազգե՛ր, Ու՞մ համար վրձնեմ արցունքներս հին, Երբ աչքեր չկան ձեր ականջներին ... (ՀՇ, 226):

Գրավոր խոսքի **վերաբերական ասացականների** ենթահարացույցի նույնացուցիչը **գրել** բայն է, որն արտահայտում է **գրավոր ձևով որևէ տեղեկատվություն հաղորդելու գործընթացի վերաբերությունը**, օր.՝ Գրում եմ քեզ ես պարզ հանգով, Ռիթմով հստակ, յամբով մեկին... (ԵԶ, հ. 2, 265): Այս ենթահարացույցը կարելի է բաժանել երկու խմբի՝ նկատի ունենալով բուն հաղոր-

⁹Իմաստային պլանում բառային-կարգային իմակները ձևավորում են բառաիմաստային խմբեր, սեռային իմակները մեկ բառաիմաստային խմբի կազմում տարբերակում են ենթահարացույցներ, տեսակային իմակները՝ խմբեր, ենթախմբեր, շարքեր:

դումն ու այդ հաղորդումը կատարելու միջոցը կամ առարկան: Ըստ այդմ՝ **առաջին խմբի** մեջ են մտնում այն բայերը, որոնք ցույց են տալիս, թե **ում է վերաբերում գրավոր հաղորդումը** (օր.՝ **գրել որևէ մեկին**): Այս խմբի **բայերն են՝** *անդամագրել, ապահովագրել, բաժանորդագրել, գրացուցակագրել, զինվորագրել, զորագրել, կամավորագրել, հանցագրել, հաշվառել, հասցեագրել, հավատարմագրել, հերթագրել, մեղսագրել, ցուցակագրել* ևն, օր.՝ Եվ **քեզ է ահա հասցեագրվում**, Քե՛զ, իմ սիրելի~, ում անմեղ մեղքով Ես աղքատ էի երեկ տակավին, Ինչպես դրախտը՝ սուրբ գրքերի մեջ ... (ՊՄ, հ. 1, 208):

Երկրորդ խմբի մեջ են մտնում այն բայերը, որոնք, **բացի գրավոր հաղորդման վերաբերությունից, ներակա ձևով արտահայտում են նաև հաղորդման միջոցը, առարկան կամ նյութը** (օր.՝ *անդորրագրել-մեկին անդորրագիր տալ*): Այս խմբի **բայերն են՝** *ատեստավորել* (բնութագիր կամ պաշտոնական կարծիք տալով), *գրախոսել, զեկուցագրել, ընծայել, թատերախոսել, թղթակցել, լիազորագրել, լուսանցագրել, ծանոթագրել, ծանուցագրել, հաղորդագրել, հեռագրել, շնորհագրել* (գրավոր փաստաթղթով), *վարկագրել, փոխգրել* (փոխանակագրով) ևն, օր.՝ Վեց տարի է, ինչ **թղթակցում եմ** շրջանային «Ստալինյան ուղիով» թերթին (Ա), Նալբանդյանը չի նշում գրքի էջերը՝ այդ մասին հատուկ **ծանոթաբանելով** այսպես... (ԺՀԼԲԲ, 639):

Գրավոր խոսքի **բնութագրական ասացականների** ենթահարացույցի նույնացուցիչը **գրել** բայն է, որը **որևէ տեղեկատվություն հաղորդելու գործընթացն արտահայտում է գրավոր հաղորդման տարբեր ձևերով՝ առավելապես ընդհանրացված**, օր.՝ Եվ իմ գողթնեցի պապերի նման Ես **պիտի գրեմ առանց հանգերի**, ինչպես խոսում են մարդիկ իրար հետ (ՊՄ, Ը, 247): Այս ենթահարացույցը բաժանում ենք երկու խմբի: **Առաջին խմբի** մեջ են մտնում այն բայերը, որոնք ցույց են տալիս **գրելու ձևը** (ինչպե՞ս գրել): Այս խմբի **բայերն են՝** *արագագրել, արտագրել, բաշխագրել, գաղտնագրել, գեղագրել, գրոտել, թվակարգել, ժամանակագրել, խզրգել, ծածկագրել, կցագրել, համառոտագրել, հավաստագրել, հիշատակագրել, մաքրագրել, նոթագրել, պահանջագրել, սևագրել, սղագրել, սրբագրել, վավերագրել, վերահասցեագրել, վկայագրել, ուղղագրել* ևն, օր.՝ Մատյաններ էին կազմում մոմած բամբակե թղթից, **ալտագրում էին** Սաղմոս, Մաշտոց մատյան, Երազահան գիրք (ՎԽ, 7-8), Ուստի և Ավետարանի հայտնի տողը նա **կարբագրեր** այսպես. «Ի սկզբանէ էր Մէր» - ը... (ՊՄ, հ. 3, 283), Ուստի այդ հարցը **վերահասցեագրում եմ** համապատասխան պետական մարմիններին (Ա):

Երկրորդ խմբի մեջ են մտնում այն բայերը, որոնք **ցույց են տալիս գրելու ձևն ու միջոցը** (ինչի՞մ միջոցով ինչպե՞ս գրել). ընդ որում, ձևը ներակայվում է: Այդ **բայերն են՝** *գլխագրել, էլեկտրագրել, թափանցագրել, լուսագրել, լուսահեռագրել, կայծագրել, հրամանագրել, հրատարակել, ձայնագրել, ձեռագրել, ձեպագրել, մեքենագրել, նշանագրել, նոտագրել, շանթագրել, ոսկեգրել, պատկերագրել, սեպագրել, ստվերագրել, վիմագրել, տաղաչափել, տաշել, տառադարձել, տպագրել, փորագրել, քարտեզագրել* ևն, օր.՝ Հասա՛վ ամենակատարյալ ձևին, այն է՝ յուրաքանչյուր տառով մի լեզվի մեջ գոյություն ունեցող ձայ-

ները նշանագրելուն (ԺՀԼԲԲ, 38), Դառնամ փառաբանեմ... գերանդու խուլ երգը, որ դժվար է անգամ նոտագրել (ԺՀԼԲԲ, 42), Սալիկի վրա փորագրում էին արքայական հիշատակարաններ՝... այլազան բովանդակությամբ (ԲՈԻ, 333):

Գրավոր խոսքի ասացականներն աչքի են ընկնում իրենց շարակարգային առանձնահատկություններով՝ դրսևորելով **խոսողության** ինչպես **միագիծ ուղղվածություն** (գրավոր հաղորդում, որն ուղղված է գրողից դեպի ընթերցողը), օր.՝ Ճանապարհից կհեռագրեմ քեզ, թե որտեղ կարող ես ինձ գտնել (ԺՀԼԲԲ, 338), այնպես էլ **չուղղորդված գործողություն** (գրավոր հաղորդման փաստը՝ առանց ուղղորդման), օր.՝ Այդպես կարող է գրել նա, ով ոչ միայն գիտի հայերեն, այլև պաշտում է իր լեզուն, ապրում է լեզվով ու ապրեցնում ընթերցողին (ՎՄ, 13):

Գրավոր խոսքի ասացականները, ելնելով **գրավոր հաղորդման նպատակաուղղվածությունից**, ձևավորում են ասացական բայերին հատուկ **շարակարգային** հետևյալ **կառուցատիպերը**¹⁰՝ **Գող^{ենթ} + ԱԲ^{ստ} + Գրդ^{անուղ}**¹¹, օր.՝ 23-ամյա մեկի **գրիչն է գրել**, վերջապես, նաև «**Մահվան տեսիլը**», որը հայոց լեզվով հայ ժողովրդի բախտի մասին 1500 տարվա ընթացքում գրված ամենասակավաթիվ հանճարեղություններից մեկն է (ՊՄ. հ. 5, 317), **Գող^{ենթ} + ԱԲ^{ստ} + Գրդ^{անուղ}**, օր.՝ Քրիստոսը մեծացավ, ինքնին, ևս մեկ տարով, և երկրագնդի պտտվող կողին՝ հասարակածի լայնության վրա սառցե **գրիչով** մեծատառ **գրվեց** նրա **տարիքը**՝ 1914 թիվը (ՊՄ. հ. 2, 256), **Գող^{ենթ} + ԱԲ^{ստ} + Գրդ^{անուղ} + Գրդ^{անուղ}**, օր.՝ Արյան ու մրի թանձր **խառնուրդով երգեր կգրենք**, Ծննդյան օրվա մոմի պես ճերմակ, լուսավոր երգեր, Որ մխիթարենք Դրախտ գնացող հուսահատներին (ԶԲ, 7), **Գող^{ենթ} + ԱԲ^{ստ}**, օր.՝ **Մաքսը գորագրվեց** և միացավ Իսպանիա գնացող մի գորագնդի (ԺՀԼԲԲ, 46):

Գրավոր խոսքի ասացականների իմաստային բազմազանության պակասը լրացնում են **պարագայական հավելիչները**՝ գրավոր խոսքին հաղորդելով լրացուցիչ նրբերանգներ, օր.՝ Բայց գիտենք՝ գրքերն այս մագաղաթյա Որ գրել էք մի օր դուք **խոնարհ տքնությամբ** - Դարձել են ձեզ համար -մահու պատյան (ԵԶ, հ. 3, 197), Կապուտիկյանը **հաճախ** ոտանավոր էր գրում **ի սեր բանաստեղծական գյուտի**՝ վերջին քառյակով կամ երկտողով իր միտքն արտահայտելու համար (ՊՄ. հ. 5, 23) Եվ ակամա հիշում ես Պուշկինին, որ նկատի ունենալով իր ժամանակի գրական իրականությունը, **ցավով գրել է**. «... Մեզանում նշանավոր մարդիկ կորչում են՝ իրենց ետևից հետք չթողնելով...» (ՊՄ. հ. 5, 57):

Գրավոր խոսքի ասացականներն իրացվում են առավելապես **ուրիշի ուղղակի խոսքով** կառույցներում. այս մասին Ս. Գ. Աբրահամյանը վկայել է.

¹⁰ Ռ. Յ. Դոխտյան, Արդի հայերենի ասացական բայերի իմաստակառուցվածքային վերլուծություն, թեկն. առեն., Ե., 2012, էջ 81:

¹¹ Բանաձևերում գործածվում են հետևյալ պայմանական արտահայտությունները. Գող^{ենթ}-գործող՝ արտահայտված ենթակայով, ԱԲ^{ստ}-ստորոգյալ՝ արտահայտված գրավոր խոսքի ասացականով, Գրդ^{անուղ}- գործորդ՝ արտահայտված ուղիղ խնդրով, Գրդ^{անուղ}-գործորդ՝ արտահայտված անուղղակի որևէ խնդրով:

«Գրելիս (ընդգծումը մերն է), խոսելիս հաճախ կարիք է լինում մեջբերելու, վկայակոչելու ուրիշի կամ սեփական խոսքը»¹², օր.՝ Հեռագրում գրված էր երկու տող. «Ալեքսանդր: Հուլիս կարևոր...» (ԵԶ, հ. 3, 78), ինչպես նաև՝ անուղղակի խոսքում, օր.՝ Գրեցիր, թե ես Մոգության դժնի ճամփան եմ ընկել, Հերետիկոս եմ, նեո եմ սրբապիղծ... (ՎԴ, հ. 2, 237): Հետևաբար, գրավոր խոսքի ասացականները կարող են ուրիշի ուղղակի խոսքի վավերագրիչներ համարվել:

Գրավոր խոսքի ասացականները **գործաբանական տեսանկյունից** ևս ի հայտ են բերում կիրառական **առանձնահատկություններ**: Կան ասացականներ (օր.՝ *երաշխավորել, ձևակերպել, նկարագրել, շարադրել* ևն), որոնք կիրառության առումով երկարժեք են. Կարող են գործածվել **և՛ բանավոր, և՛ գրավոր** դրսևորումներով՝ պայմանավորված խոսքային իրադրությամբ, օր.՝ Ինչո՞վ կարող էր երաշխավորել (բանավոր), որ լեռն անպատճառ փիղ կծնի, և ոչ մուկ (ԺՀԼԲԲ, 568), Հաշտության հիշյալ պայմանները երաշխավորվել էին (գրավոր) վեց պետությունների դեսպանների և Բ. Դոան միջև կնքված համաձայնագրով (ԺՀԼԲԲ, 457): Այսինքն՝ գրավոր խոսքի ասացականները կարող են ներառել գրության և արտասանության գործընթացները միաժամանակ. ուղղակի գրավորի ժամանակ կարևորվում է տեսողական ընկալումը: Հենց այս երկարժեքությամբ էլ պայմանավորվում են կիրառական յուրահատկություններն ու հատումները:

Երբեմն միևնույն ասացականի մեջ **գուգակցվում են** և՛ բանավոր, և՛ գրավոր դրսևորումներ, օր.՝ Ես չեմ գնացել «Ազգից», մինչև հիմա էլ թղթակցում եմ և կապերս չեմ խզել թերթի հետ (Ա):

Քանի որ և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքի ասացականների հիմնական նպատակը որևէ տեղեկատվություն հաղորդելն է՝ կախված խոսքային իրադրությունից, բանավոր և գրավոր խոսքի ասացականները երբեմն **հատվում են**, օր.՝ Տակավին 1915 (կամ 1916) թվականին իր նամակներից մեկում նա հաղորդում է. (բանավոր→գրավոր) «... Ես մի քանի բաներ եմ ուզում գրել ու ժամանակ չկա, մինչդեռ պետք է մի քիչ աշխատել ...» (ՊՍ. հ. 5, 63): **Կիրառական այս առանձնահատկությունն ի հայտ է գալիս հատկապես բանավոր խոսքի ասացականների՝ ուրիշի ուղղակի խոսք ներմուծելիս**, օր.՝ Լև Տոլստոյի մոտ կարդում ենք (բանավոր→գրավոր). «Բոլոր բախտավոր ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի» (ԳԲ, 177):

Գրավոր խոսքի ասացականները հաճախ **ներակայվում են** (մտովի վերականգնելու պայմանով)՝ ավելի ընդգծելով ու զորացնելով այդ բայերի կարևորությունն ու հաղորդակցական արժեքը, օր.՝ Լուսահոգի Պարոնյանը հանգուցյալ Արծրունու լեզվի մասին խոսելիս բերել է մի հեռագիր. «Ընչնալ պատերազմական մինիստրին պախարակեց...» (գրելով՝ հավելումը մերն է՝ ՌԴ) (ՊՍ. հ. 5, 151), Իր «Ռուսական երիտասարդ պոեզիան» հոդվածում Յա. Մմելյակովը երիտասարդներին տալիս է շատ ուսանելի և օգտակար խոսք

¹² Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Ե., 2004, էջ 204:

հուրդներ... (**գրելով**՝ հավելումը մերն է՝ ՌԴ) Ահա նրանցից մեկը. «Երիտասարդների համար... բնական պահանջը պիտի լինի գրել մարտական երգեր...» (ՊՄ. հ. 5, 141):

Գրելու ընկալումը կա նաև հետևյալ օրինակներում՝ Միգկևիչի դպրոցական տարիներն անց են կենում Նովոգրուդոկում, որտեղ և նա **կատարում է իր բանաստեղծական առաջին փորձերը** (ՊՄ. հ. 5, 8), Կոմիտասին **պատկերել են նաև գրչով**, և շատերին դա հաջողվել է ոչ պակաս, քան այդ արվել է վրձնով (ՊՄ. հ. 5, 127), **Գիրքը բացվում է Դ. Դեմիրճյանի «Երկու խոսքով»**, որին հետևում է Կոմիտասի քիչ թե շատ հանգամանալից կենսագրությունը, որը շարադրել է Գ. Գասպարյանը ևն:

Գրավոր խոսքի ասացականները դրսևորում են նաև **ռճական առանձնահատկություններ**:

Գրելու հատկանիշը առավելապես ընդգծում են ինչպես **հարադրավոր** ասացականները, օր.՝ ...ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենապարզ կերտվածքներից մեկը Մ. Խորենացու գրի առած (գրառած) չափածո այն պատառիկն է, որ այժմ հայտնի է Վահագնի հիմն կամ Վահագնի ծնունդ անունով (ԲՈԻ, 34), այնպես էլ **գրելու ընկալում պարունակող որոշ արտահայտություններ**, օր.՝ ... նա, չերկնչելով բանադրվելուց, մագաղաթին է հանձնել Գողթան «գինեվետ» գավառի գուսանների շուրթերից լսած այդ երգերը... (ՎԴ, 534), Չարության միջնաբերդը կործանողների մեջ էին մեր նախնիները..., որոնք ևս մինչ այդ երկրներ ու ցեղեր էին նվաճել, այդ նվաճումների մասին **հիշատակարաններ էին թողել (գրավոր ավանդելով)**՝ հավելումը մերն է՝ ՌԴ)՝ հպարտությամբ պատմելով... այդ մասին (ԲՈԻ, 7):

Գրավոր խոսքին **սաստկական երանգ** է հաղորդում ասացականների **կրկնությունը**, օր.՝ Եվ գրվում ու գրվում են ոտանավորներ այնպիսի լյսավառ խոսքերով, որոնք տակմաշ կրկնակոշիկի պես շարունակ սայթաքում ու գետնով են տալիս իրենց, իրենց բանիմաց ընթերցողին ու սրա համբերությունը (ՊՄ, հ. 3, 198):

Գրավոր խոսքի ասացականները գործածվում են **ռճական տարբեր դարձույթներում**, օր.՝ Ու երբ գործում են այդ լեզվակները՝ երկրաշարժային բոլոր սարքերը իրենց տագնապն են արձանագրում (փխբ.) լրագրերի գունատ երեսին՝ սև-սև տառերով... (ՊՄ, հ. 2, 248), Բայց բիլ երկնքի աստղագիր թղթին Իր վայրկենական վարժ ձեռագրով Շանթն է վերստին ինքնաշարժ գրում՝ Ասես պետի պես ստորագրում (փխբ., հմմտ., անձն.), Ա՛յն պետի, Որի մականունն է Կյանք...(ՊՄ, հ. 1, 215) ևն:

Ըստ **ռճական գործառույթի**՝ գրավոր խոսքի ասացականները գործածվում են **պաշտոնական, հրապարակախոսական, գիտական, գեղարվեստական** ռճերում, օր.՝ -**Մակագրում եմ** (պաշտ.)՝ հաստատել (Ա), Հույսով ու հավատով նույն նամակը **հասցեագրում եմ** (հրակյխ.) ձեզ, կարծում եմ՝ անտարբեր չեք լինի սփյուռքում հայտնված մեր հայրենակիցների հայապահպանման, ուժացման վտանգից փրկելու... (Ա), Ձեր ձեռագիրը ես **թվագրում եմ** (գիտ.) հազար յոթ հարյուր երեսուն թվականով (Ա), Ու հիմա, **գրում**

եմ (գեղ.) երբ այս երգը, Ո՞վ գիտե՝ քնած ես, թե արթուն, Բայց նայում է կարծես ինձ քո դեմքը Ու հանդարտ արցունքներ է թափում (Ա):

Այսպիսով՝ բանավոր և գրավոր խոսքի ասացական բայերի հարացույցները, փոխընդանուր միմյանց, համակողմանիորեն նպաստում են հաղորդակցական գործառույթի իրականացմանը:

Համառոտագրություններ

1. Ա – Արևակ, www.eanc.net :
2. ԳԲ – Գ. Բրուտյան, Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2, Ե., 1986:
3. ՎԴ – Վ. Դավթյան, Երկեր երկու հատորով, հ. 2, Ե., 1985, Ի սկզբանե էր բանն..., Ե., 1989:
4. ԳԷ – Գ. Էմին, Երկ. ժող. 3 հատորով, հ. ա., Ե., 1985:
5. ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., Ա-Ե, 1969, Զ-Ծ, 1972, Կ-Ս, 1974, Յ-Ֆ, 1980:
6. ՎԽ – Վ. Խեչումյան, Գիրք լինելության, Ե., 1971:
7. ՎՄ – Վ. Միրզոյան, Գ. Նժդեհի փիլիսոփայությունն ու լեզվաշխարհը, Ե., 2001:
8. ՀՇ – Հովհ. Շիրազ, Հայոց դանթեականը, Ե., 1991:
9. ԵԶ – Ե. Չարենց, Երկերի ժող. 4 հատորով, հ. 1, Ե., 1986, հ. 3, Ե., 1987, հ. 4, Ե., 1987:
10. ՉԲ – Չեխ բանաստեղծներ, Ե, 1979:
11. ՊՍ – Պ. Սևակ, Երկերի ժող. 3 հատ., հ. 1, Ե., 1982, հ. 3, Ե., 1983, Երկերի ժող. 6 հատ., հ. 5, Ե., 1974, Ընտրանի, հ. Ա, Ե., 1991:
12. ԲՈԻ – Բ. Ուլուֆաբյան, Զրուցարան, Գիրք 2, Ե., 1988:

Dokhoyan Ruzanna- The verbs of the group "say" of written speech in modern Armenian. - There are three types of verbs of the group "say" in modern Armenian according to the method of expression: **oral, written** and **internal speech**.

The verbs of the group "say" of written speech describe the situation of the expression of thoughts in written form, by the verbs of the group "say" of written speech.

For the verbs of the group "say" of written speech the **feature of writing** is a formal criterion, which exists either explicitly or implicitly in the verbs of that type.

The **identificator** of the verbs of the group "say" in written speech is the nuclear verb **"to write"** which expresses the process of written transmission of any information in generalized way without indicating its concrete meanings.

We have divided the verbs of the group "say" of written speech into three sub-paradigms according to the seme: **essential / full, referented, characterizing**.

The verbs of the group "say" of written speech show a lot of syntagmatic, stylistic particularities, they are to serve on the public communication and further development and protection of culture.

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՎԵՐ 17-Րդ
ԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ (ԱՍԱՐ ԵՎ ԲՈՒՆԻԱԹ
ՍԵՐԱՍՏԱՅԻՆԵՐ)**

Անժխտելի է, որ միջնադարյան հայ բժշկարանները հսկայական նյութ են պարունակում հայոց լեզվի բառապաշարի, ինչպես նաև կրած քերականական փոփոխությունների ուսումնասիրության համար: Հատկապես զգալի անելիք կա միջին հայերենի երկրորդ շրջանում¹ ստեղծված բժշկարանների ուսումնասիրության առումով: Եթե Կիլիկիայի հայկական պետության գոյության ժամանակահատվածում (12-14դդ.) մենք գործ ունենք քիչ թե շատ նորմավորված գրական լեզվի հետ, ապա պատկերն այլ է 15-րդ դարից հետո. տվյալ ժամանակաշրջանում չկար պետականություն և միասնական լեզու: Այս շրջանում շարունակվող գաղթերը ավելի են ուժեղացնում բարբառների ու ենթաբարբառների ազդեցությունը գրական լեզվի վրա: Լեզվական այն խառնիճադանջությունը, որ կար այս ժամանակ, կարծում ենք՝ ոչ մի շրջանի բնորոշ չէ: Միմյանց են խաչվում գրաբարը, միջին հայերենը և բարբառները: Այս լեզվավիճակն իր անմիջական արտացոլումն է գտել Սեբաստիայի բժշկական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում (17-րդ դար): Դրանցում մեծ չափերի հասնող օտար փոխառությունների կողքին տեղ են գտել նաև զգալի թվով բարբառային բառեր: Գաղտնիք չէ, որ բարբառային բառերի բազմաթիվ գործածությունները սովորական են միջնադարյան բժշկարանների համար², սակայն դրանք բառարաններում ամրագրվել են իբրև միջին հայերեն բառեր՝ առանց բարբառային նշման: Հարց է ծագում. ինչպե՞ս սահմանազատել բարբառային բառերը միջին հայերենից: Գ. Ջահուկյանը բարբառային երևույթները քննել է միջին հայերենի իրողությունների հետ միասին՝ նկատի ունենալով, որ երկուսն էլ իրենց հնչյունական համակարգերով տարբերվում են գրաբարից և նոր գրական հայերենից³:

Մենք նպատակահարմար ենք գտել քննել բժշկարաններում տեղ գտած այն բարբառային բառերը, որոնք, այս կամ այն կերպ շեղվելով միջին

1. Առաջնորդվել ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», գրքում կատարված շրջանաբաժանմամբ, տե՛ս նշված աշխ., Ե., 1972, էջ 42-44:
2. Է. Մկրտչյան, Աշխարհաբարի գրական տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980, էջ 26:
3. Տե՛ս Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Ե., 1997, էջ 20:

հայերենի ընդհանուր օրինաչափություններից, չեն ընդգրկվել ՄՀԲ-ում և ՆՀԲ-ում, արձանագրված են ՀԱԲ-ում և ՀԲԲ-ում՝ բարբառային նշումով, ինչպես նաև ՀԼԲԲ-ում: Այդ բառերի մի մասն էլ արձանագրված չէ բարբառային բառարաններում, սակայն մենք բարբառային ենք դիտել՝ նկատի ունենալով այն հնչյունական տարբերությունները, որոնցով դրանք շեղվում են գրականից: Բհարկե, չի բացառվում, որ այդ բառերի շարքում լինեն նաև սխալագրություններ, բայց դրանք պայմանականորեն ընդգրկել ենք մեր քննության մեջ:

Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարաններում տեղ գտած բարբառային բառերը ուսումնասիրելիս առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

1. Ձայնավորների հնչյունափոխությամբ առաջացած բարբառային ձևեր (միջին գրական հայերենի համեմատ),
2. Բաղաձայնների հնչյունափոխությամբ առաջ եկած բարբառային ձևեր (միջին գրական հայերենի համեմատ),
3. Բարբառային բառեր, որոնց զգալի մասի ծագումը անհայտ է,
4. Փոխառյալ բառեր, որոնք բարբառներում են կիրառվում,
5. Բարբառային կազմություններ:

1. Այս խմբում ընդգրկել ենք ձայնավորների այնպիսի փոփոխություններ, որոնք բնորոշ չեն միջին գրական հայերենին: Դրանք են.

Ա ~ օ. այս հնչյունափոխությունը միջին հայերենի շրջանում արձանագրվում է միայն գործիականի -*ամբ* վերջավորության մեջ (անձամբ – անձօմ, ձեռամբ – ձեռօմ), որն էլ կատարվել է *մբ* շրթնայինի ազդեցությամբ (բ-ն ընկել է հետագայում)⁴:

Ա~օ հնչյունափոխությունը արձանագրվում է Հաջընի, Ագուլիսի, Համշենի բարբառներում⁵: Բունիաթ Սեբաստացու բժշկարանում **ա ~ օ** հնչյունափոխությամբ կիրառվել է թուրքերենից փոխառված *բօղազ* «կոկորդ» բառը, որտեղ առնմանությամբ *ա*-ն փոխվել է *օ*-ի՝ *պօղօզ*. «Նշանն այն է, որ *պօղօզն* չոր լինի և համակ ծարավ լինի»⁶:

Ա ~ Է հնչյունափոխությունը, որ բնորոշ է Ղարաբաղի, Մեղրիի, Կարճևանի բարբառներին⁷, դրսևորվել է *շաքար* բառի *շէքէր* տարբերակում, ինչպես՝ «Անօթուց *շէքէրն* ուտելն զքամին հալե և ուժովցնե զզդերն»⁸: Այս բարբառային ձևի կիրառությունը սովորական է ինչպես տվյալ, այնպես էլ միջին շրջանի այլ բժշկարանների համար⁹: Ի դեպ, հնարավոր է, որ հենց *շէքէր* ձևով փոխառված լինի թուրքերենից:

4. Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 76:

5. Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Ե., 1982, էջ 109:

6. Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան տոմարի, Ե., 1987, էջ 84: Այսուհետև օրինակները կնշվեն փակագծերում ԲՍ համառոտագրությամբ:

7. Հ. Մուրադյան, նշված աշխ., հ. I, Ե., 1982, էջ 107:

8. Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, Ե., 1993, էջ 131: Այսուհետև օրինակները կնշվեն փակագծերում ԱՍ համառոտագրությամբ:

9. Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 594:

Ուշագրավ է ա~է հնչյունափոխության դրսևորումը **ահ** «վախ» բառի դեպքում՝ հայցականի *զ* նախադրից հետո. «Եւ զցաւն և *զէհն* չի զգայ»:

Ը ~ ա հնչյունափոխությամբ է կիրառվել **անգուզ** «ընկույզ» բառը, որ բնորոշ է Նոր Զուղայի և Մեղրու բարբառներին¹⁰. «...դեղերն ամենն *անգուզի* եղով օծէ» (ԱՍ 228):

Ե ~ ը հնչյունափոխությունը գրաբարի համեմատ միջին հայերենում օրինաչափ է *դ*-ից առաջ, իսկ *մէիս* բառի **մըիս** տարբերակը, որ հանդիպում է Ասար Սեբաստացու մոտ, ակնհայտորեն բարբառային է¹¹. «... նավին երկաթե *միս* չեն զարնէ» (ԱՍ 185):

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում *խոստուկ* «որովայնի սաստիկ ցավ, խիթ» բժշկական տերմինը գործածվել է **ու ~ ա** տարբերակով՝ **խոստակ**. «...և *խոստակ* թվի և գիտենա թե յաղիքն մախաթ կու խորեն» (93)

Բարբառային **բօք** (թուրքերեն) «արմատ» բառը կիրառվել է **օ ~ ե** տարբերակով. «...և *զքեքն* ջրով եփե, որ կէսն մնայ» (ԱՍ 232):

Առանձին դեպքերում բժշկարաններում նկատելի է ձայնավորների երկբարբառայնացում, ինչպես՝ **ա ~ ալ**՝ *ճայնփայ* (ԱՍ 91), **ա ~ օյ**՝ *մօյր* (ԱՍ 187): Մեկ այլ դեպքում **ու**-ն դարձել է **ոյ**՝ գողուած - *գողոյած* (ԱՍ 96):

2. Երկրորդ խմբում, ինչպես արդեն նշվեց, ընդգրկել ենք բաղաձայնների ինչպես պատմական, այնպես էլ փոխազդեցական հնչյունափոխություններով առաջ եկած բարբառային ձևերը:

Բժշկարաններում հանդիպում են **հ ~ խ** փոփոխության օրինակներ: Գ. Ջահուկյանի կարծիքով *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը ուրարտական ազդեցության արդյունք է, որ պահպանվել է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում¹²:

Ասար Սեբաստացու բժշկարանում *հ ~ խ* անցմամբ գործածվել է երկու բառ: Առաջինը **խատիճ** «դղմի կուտ, հատիկ» բառն է, որն այդ իմաստով կա Նոր Զուղայի բարբառում¹³. «...առ դղման *խատիճ* ը (8) դրամ» (218):

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում գրանցված է *հեք* բառի բարբառային *հեուք* տարբերակը¹⁴, որն էլ վերոհիշյալ բժշկարանում կիրառված ենք գտնում **խեուք** տարբերակով՝ «շունչ, շնչառություն» իմաստով. «Եթե մարդ, որ ուռեց ունի կամ *խեուքն* բռնվի, լօշտակն եփե, զջուրն խմե» (232):

Բժշկարաններում կիրառություն ունի նաև հակառակ **խ ~ հ** անցումը, որ հատուկ է հատկապես Ագուլիսի բարբառին¹⁵: Այս փոփոխությամբ հանդիպում է երկու բառ: *խորոզ* (պրսկ., թրք) «աքաղաղ» իմաստով բառը Բունիաթ Սեբաստացին կիրառել է նաև **հորոզ** տարբերակով. «...և ի յելնելու ժամն

10. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 56:

11. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Ե., 2007, էջ 51:

12. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 267:

13. Նույն տեղում, հ. Բ, Ե., 2002, էջ 295:

14. Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան», Ե., 1944, հ. Գ, էջ 102:

15. Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Ե., 1982, էջ 252:

մութատիլ կերակուրք ուտե, սպիտակ ուլու միս, գառին միս, հորթի միս, *հորոզի* միս և որ սոցին նման է» (ԲՄ 109):

Նույն կերպ *խասիաթ* (արաբ) «հատկություն» բառը Ասար Սեբաստացու բժշկարանում կիրառվել է *խասիաթ* ձևով. «Եւ ամենաւրինեալ այգի, որ զամէն երկնային *խասիաթն* ի քեզ ունիս» (222): «Այս սամղերիս հասիաթն այն է, որ գինով լինի դրջած» (223):

Ուշադրության է արժանի բարբառային *չախ* բառի կիրառությունը տվյալ բժշկարաններում: Թուրքերենից փոխառված այս բառը, որ ունի «ժամանակ, պահ» իմաստը, գործածական է Թիֆլիսի, Ղարաբաղի, Խոյի բարբառներում¹⁶: Բունիաթ Սեբաստացու բժշկարանում այն կիրառվել է հենց «ժամանակ» իմաստով՝ խ~դ հնչյունափոխությամբ՝ «...զայս այն *չաղն* արա, որ հիւանդն դիժարնա ու ճար չի լինայ՝ յետո մորիս ստածէ» (ԲՄ 82): Իսկ Ասար Սեբաստացու Բժշկարանում վերջինս կիրառվել է «չափ» իմաստով, միջին հայերենին ոչ բնորոշ *ք~խ* փոփոխությամբ. «Իսկ օգտակար կերակուրք ուտել և *զչախն* ոչ աւելի ոչ պակաս» (ԱՄ 118): Այստեղ մենք արդեն գործ ունենք միջին հայերենում գործածական *չաք* բառի հետ, որ առաջ է եկել *չափք* ձևից¹⁷:

Խուլ բաղաձայնների մեկ այլ՝ *փ~խ* անցում է տեղի ունեցել միջինհայերենյան *փերճոկ*¹⁸ «փշուր, կեղև» բառում, որը կիրառվել է նաև *խերճոկ* տարբերակով. «...առ խնկի *խերճոկ* Զ (6) դրամ» (ԱՄ 170):

Բ ~ լ ձայնորդների անցում է նկատվում *կլօլ* «կլոր» բառում. «Ապա փերճոքն տիզի ձիթով *կլօլնի* արա և տուր՝ օգտակար է» (ԱՄ 181):

Բ ~ դ անցմանը պետք է բացատրել *կորիզ* բառի *կղէզ*¹⁹ բարբառային ձևի կիրառությունը Ասար Սեբաստացու բժշկարանում. «Թէ հալիլէն ործուկ լինի, *կղէզն* հանես, ... առանց *կղէզ* ծեծէ ձգէ մեջն» (224):

Փոխազդեցական բնույթի հնչյունափոխություններից ամենից ավելի տարածված է *հնչյունի հավելումը*: Բժշկարաններում ամենահաճախականը *ն* ձայնորդի հավելումն է, որ հանդիպում է հատկապես գրաբարի նույն վերջնահնչյուն ունեցող բառերում: Այն ինչպես գիտենք, միջին հայերենում արդեն ընկել էր: Բարբառներում, սակայն, վերջինս պահպանվել է բառակազմական և քերականական ձևերում, ինչպես՝ *որթնատունկ* (ԱՄ 375), *աչքնով* (ԱՄ 184), *կաթնով* (ԱՄ 164), *կաթնի մէջ* (ԱՄ 187), *դրսնէն* (ԱՄ 105), *հալնէ* (ԱՄ 192), *յանձնէն* (ԱՄ 128), *ճանփնին* (ԲՄ 67):

Բառասկզբում *հ*–ի հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Ալաշկերտի, Բայազետի և մի շարք այլ բարբառներին²⁰: Բարբառային այս

16. Զ. Բառնասյան, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 13:

17. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ Ա, Ե., 1972, էջ 149:

18. Վերոհիշյալ բառը բերում է միայն Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում՝ առանց ծագումը նշելու՝ վկայակոչելով Մ. Հերացուն, ով կիրառել է *փերճոկ*, *փերճոկած*, *փերճկոտած*, *փերճկած* ձևերը (հ.Դ, Ե., 1979, էջ 500):

19. *Կղէզ* ձևը կա Մեղրու և Կարճնանի բարբառներում (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.3, էջ 109):

ձևով են կիրառվել *հանճառելի* «անասելի» (ԱՍ 222) և *հիմանալ* (ԱՍ 104) բառերը:

Միջին հայերենի *ճկիլ* «ծովել, կորանալ» բայը Ասար Սեբաստացու բժշկարանում գործածվել է *թ*-ի հավելմամբ՝ *ճկրիլ* (Զ (6) այն է, որ շատ բարկանայ և *ճրկրի* և հոգս քաշե և ամեն շարժումնք, որ անձինն լինի զգիջութինն պակասեցնէ : (էջ90)):

Կ-ի հավելմամբ են կիրառվել *արաբկերեն* (ԱՍ 126) և *տոփկել* «տրփալ» (ԲՄ 80) բառերը:

Բայական վերջածանցից առաջ *տ* խուլ հպական բաղաձայնի հավելմամբ հանդիպում են *խոշորոցնել* (ԱՍ 94) և *խառնտիլ* (ԲՄ 70) բայերը:

Բժշկարաններում հանդիպում են նաև հնչյունի անկմամբ առաջ եկած բառաձևեր: Դրանք հիմնականում ձայնորդների (*ն, լ, յ*) անկմամբ բառեր են՝ *գորտուկ* (ն), *օգնել* (հ) *ճխել* (յ): Միջին հայերենի բառարանում արձանագրված *գորտնուկ*-ը գործածվել է *ն*-ի անկմամբ (ԱՍ 333): Բառասկզբի *հ*-ի անկումով, որ միջին հայերենում արձանագրված է *հաւատալ*, *հայնց*, *հնձան* բառերում²¹, Ասար Սեբաստացու բժշկարանում կիրառվել է *հոգնել* բայը. «Եւ մարդ, որ հիւանդ լինի կամ շատ աշխատած կամ *օգնած* լինի քուն լինալով թաժանայ (103): «Եւ յորժամ, որ մարդ *օգնած* լինի և շատ աշխատած լինի, տաքութիւնն ի մարդոյ փորոքն յավելնայ» (104):

Ճխել «տրորել» բայը *լ*-ի անկմամբ է հանդիպում. «...առ զպալտուրն և *ճխէ*» (ԱՍ 142):

Ուսումնասիրվող աշխատանքներում միջին հայերենին բնորոշ դրափոխություններից բացի (*վլանալ*, *դարտակվել*), գործածվել են բարբառային նման երևույթներ: Այսպես *մրսել* բայը հանդիպում է *մսրել* ձևով. «Որ օգտէ մարմնոյն թուլութեան և ...որ գիշերն *մսրէ* կամ շատ ջրվէթ լինի» (ԱՍ 228): Պարսկերենից փոխառյալ *փիրուզ* բառը կիրառվել է *փրիւզ* տարբերակով. «Շէխ Զաֆարն ասէ, թէ ով *փրիւզէ* վերցնէ ի մատն չքաւորութիւն չըտեսնու օգնութեամբն Աստուծոյ» (ԱՍ 188):

Ուշագրավ է *ինչքան* բառի *ինչանկ* ձևի կիրառությունը: Ստ. Մալխասյանցի բառարանում *ինչանկ*-ը բերվում է «մինչև» իմաստով²², մինչդեռ այստեղ այն գործածվել է «ինչքան, ինչչափ» նշանակությամբ²³. «Եւ շատք ի բժշկապետացն ասացեր են, թէ աւագ թրիաքն *ինչանկ* գործունեութիւն ունի և սօրութիւն» (ԱՍ 128):

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում «մինչև» իմաստով հանդիպում է *հինչուկ* բառը, որ բնորոշ է Պոլսի, Կարինի, Արաբկիրի բարբառներին²⁴. «Եւ

20. Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Ե., 1982, էջ 315:

21. Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 148:

22. Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. Բ, Ե., 1944, էջ 158:

23. Այս բառը *ինչանկ* ձևով կա Պոլսի (Պարտիզակ) բարբառում: Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Ե., 2002, էջ 174:

24. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Ե., 2002, էջ 175:

դուլինճ մի այլ կա, որ ի բարակ աղիքն լինի, *հինչուկ* ի տափողն կու իջնու» (94):

Հնչյունի ամփոփում է տեղի ունեղել *ճնխաբլիթ* բառում: Այս բուսանունը հայտնի է *ճնճղպաշար*, *ճնճղկաբլիթ* տարբերակներով²⁵:

3. Երրորդ խմբում առանձնացրել ենք բժշկարաններում կիրառված զուտ բարբառային բառերը, որոնց ծագումը դժվար է պարզել: Դրանք են.

Անդ, անդեր «մանր հոդ, ոսկորները իրար միացնող՝ խաղ»: Վերջույթների դողի մասին խոսելիս Բունիաթ Սեբաստացին դրա պատճառներից մեկն էլ համարում է «անդերուն թուլնալը» (71): Աճառյանի վկայմամբ այս բառը «*անկ*» ձևով պահել են Ադանայի թրքախոս հայերը²⁶:

Բառք «ախորժակ». «Եւ կերակուր չառնու *բառքն*» (ԲՄ 100):

Ջեռ «շատ մեծ, անճոռնի» (ԲՄ 160):

Էքս (էգուց ձևից) «հաջորդ օրը». «*Յէքսն* կանուխ նշթայ կեր» (ԱՄ 226):

Խոշապ «չիր ու չամիչով կերակուր, կոմպոտ» (ԱՄ 349):

Խարխաղին «ոչխարի դմակը մանր կտրտած և տապակած». «...և եփե այն չաք, որ տակերն գերդ *խարխաղին* դառնայ» (ԱՄ 140):

Ծանթորան «ծորթին» (ԱՄ 179) ասորերենից փոխառված *ծորոր*, *ծորթին*²⁷ բառի բարբառային ձևն է, որ բնորոշ է Նոր Զուղայի բարբառին²⁸:

Կակալ «ընկույզ կանաչ կեղևով». «...*զկակալն* երեն գմոխիրն դմակ եղով ի տեղն քսեն» (ԲՄ 117):

Շլոր «սալոր» (ԱՄ 374):

Չլավ «փլավի տեսակ՝ բրնձով կամ ձավարով, կաղամբով և տավարի մսով» (ԱՄ 219):

Պլօճիկ «երիկամ». «.....օգտե *պլօճկի* ցավուն» (ԱՄ 223):

4. Այս խմբում ընդգրկել ենք այն փոխառյալ բառերը, որոնք բարբառների սահմաններից դուրս չեն եկել և իբրև այդպիսին էլ գրանցված են բառարաններում: Մեր կողմից ուշադրության արժանացած 25 փոխառություններից 15-ը թուրքերեն բառեր են, 7-ը՝ պարսկերեն, 5-ը՝ արաբերեն: Թուրքերեն բառերի գերակշռությունը բնական պետք է համարել՝ նկատի ունենալով դրանց միայն բարբառներում կիրառվելու հանգամանքը²⁸: Դրանք հիմնականում առօրյա խոսքում գործածական բառեր են և բուսանուններ. *աբլաղ* «այտուցված դեմք» (ԱՄ 223), *աղու* «թույն» (ԲՄ 118), *արտուճի էմիշ* «ցրդենի» (ԱՄ 206), *զենա գերչակ* «տզենի, տիզկանեփատ» (ԱՄ 333), *դալի* «թեթևամիտ, խելառ» (ԱՄ 334), *լապատա* «ավելուկ» (ԲՄ 114), *լախանայ* «ծաղկակաղամբ» (ԱՄ 345), *դազան* «կաթսա» (ԱՄ 216), *դափաղ* «կափարիչ» (ԱՄ 147), *դօզալախ* «դեռ չհասած միրգ» (ԲՄ 21), *սուլուկ* «տզրկախոտ» (ԲՄ 107), *սիկիլ* «գորտնուկ» (ԲՄ 115), *պօյ* «հացհամեմ» (ԱՄ 379): Պարսկերեն բառերից առավել հաճախ են կիրառվել *աթաշակ* «վատ հիվանդություն, սի-

25. Տե՛ս նույն տեղում, հ. Գ, էջ 405:

26. Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ Ա, Ե., 1971, էջ 199:

27. Հր. Աճառյան, Քննություն Նոր- Զուղայի բարբառի, Ե., 1940, էջ 25:

28. Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, էջ 275:

ֆիլիս» (ԱՍ 223), *դանա* «հատիկ» (ԱՍ 221), *թօխմ* «հունդ, սերմ» (ԱՍ 226), *զէրպա* «ճաշատեսակ» (ԲՄ 64), *խորուզփաշայ* «աքլորի ձագ» (ԱՍ 219), *ճումարդ* «առատաձեռն» (ԱՍ 166), *մայրամ մար* «օձի գլխում եղած գորշ նյութ» (ԱՍ 188): Արաբերենից գործածվել են *կառայ* «վայրի փեզենայ» (ԱՍ 352), *հազար* «հանդարտ» (ԲՄ 70), *հէյպէթ* «ահ, վախ» (ԱՍ 188), *ճիպար* «ամրացնող սպեղանի» (ԱՍ 361), *սուստ* «թույլ» (ԲՄ 73) բառերը:

5. Վերջին հինգերորդ խմբում ընդգրկել ենք բարբառային կազմությունները (15բառ): Դրանցից 5-ը բայեր են: Փոխառյալ արմատից են կազմվել *թամամվել* «լրանալ» (ԱՍ 226), *թաժանալ* «թարմանալ» (ԱՍ 104), *պաթլիլ* «կորցնել, զրկվել» (ԲՄ 70), իսկ բնիկ արմատներից՝ *լանցուցել* «լայնացնել» (ԱՍ 95), *խոստել* «սաստիկ ցավել» (ԱՍ 207), *ծկտալ* «կոկորդը այրվել» (ԲՄ 97):

Ածանցավոր բարբառային կազմություններից ուշագրավ են *-ոն* վերջածանցով կազմված *բրթոն* «բրդած հաց» (ԲՄ 117), *հոգոն* «հոգս». «Եւ պատրաստ ի բարկանալոյ և ի հոգոնաց» (ԱՍ 110):

Մեծունաք «մեծերը, նախնիք» «...բժիշկն ի վերայ թագավորացն որ վրա մեծունաց տան համարձակ մտանէ և ելանէ» (ԱՍ 115):

Պարսկերեն *ճումարդ* «առատաձեռն» բառից է կազմվել *ճումարդութիւնը*. «Գինին, որ չափավոր խմեն, կտրիճութիւն և ճումարտութիւն բերէ» (ԱՍ 134):

Իսկական բարդություններից բժշկարաններում գործածվել են հետևյալ բարբառային բառերը. *ընկզմէջ* «ընկույզի միջուկ» (ԲՄ 95), *լեզուատակ* «լեզվի տակի մասը» (ԱՍ 152), *ծիծաղերես* «ժպտադեմ» (ԱՍ 116), *մկնծիրտ* «մկան աղբ» (ԲՄ 93), *մոլոքոր* «մաշկային հիվանդություն, եղձատենդ», *կոսքանջար* «խատուտիկ» (ԱՍ 353), *կրակմուտ* «կրակը մտնող». «...ապա առ կրակմուտ բղուղ մի այլ» (ԱՍ 143):

Այսպիսով՝ 17-րդ դարի բժշկարաններում կիրառվել են զգալի թվով բարբառային բառեր և բարբառային ձևեր (այդ թվում նաև հնարավոր սխալագրություններ), որոնց քննությունը կարող է օգտակար լինել միջին հայերենի ու բարբառների ուսումնասիրության համար:

Համառոտագրություններ

ՀԱԲ – Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՀԲԲ – ՍՏ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան

ՄՀԲ – Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի

Тадевосян Асмик- Диалектные слова и диалектные формы в лечебниках 17-ого века (Асара Себастици и Буниата Себастици).- В статье рассматриваются диалектные слова и формы, которые были использованы в лечебниках Асара Себастици и Буниата Себастици (17-ый век) и не нашли место в словаре средне армянского языка. Эти слова представлены пятью группами: 1) диалект-

ные формы с фонетически измененными гласными, 2) диалектные формы с фонетически измененными согласными, 3) чисто диалектные слова, 4) диалектные заимствованные слова, 5) диалектные словообразования.

Hasmik Tadevosyan- Dialectal Words and Dialectal Forms in the Medical Books of the 17-th Century (Asar Sebastatsy and Buniat Sebastatsy).- This article touches upon dialectal words and forms, which were used in the medical books of Asar Sebastatsy and Buniat Sebastatsy and which weren't included in the dictionary of Middle Armenian. These words are represented in five groups: 1) dialectal forms with phonetic changes of vowels, 2) dialectal forms with phonetic changes of consonants, 3) pure dialectal words, 4) dialectal borrowings, 5) dialect word formation.

ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

XX դարի վերջերին լեզվի կառուցվածքային քննությունն արդեն սպառել էր իրեն, ուստի լեզվաբանական ուսումնասիրությունները տարվում էին ոչ թե լեզվական կառուցվածքն ու նրա բաղադրիչներն իմաստավորելու, այլ նրա լեզվափիլիսոփայական ասպեկտը բնութագրելու առումով, որ, իր հերթին, բխում է լեզվական որոշակի ավանդույթներից: Այդ ավանդույթներում լեզվի փիլիսոփայական ասպեկտը ներառում է նաև մշակութաբանության խնդիրները:

Այդ կարգի ուսումնասիրությունները հենվում էին այն սկզբունքի վրա, որ լեզուն և մշակույթը սերտորեն կապված են միմյանց հետ, և որ լեզուն զարգանում է մշակույթի ընդերքում՝ միաժամանակ արտահայտելով թե՛ մշակույթի էությունը և թե՛ նրա զարգացման փուլերը: Լեզվի և մշակույթի փոխադարձ կապի, ինչպես նաև այդպիսի փոխադարձ կապերի համատեքստում այդ հիմնահարցերն ուսումնասիրելու սկզբունքը առաջ քաշեց նոր գիտության կամ գիտակարգային ուղղության ինքնուրույնության անհրաժեշտությունը, որ անվանվեց լեզվամշակութաբանություն (лингвокультурология):

Լեզվամշակութաբանությունը, որպես գիտություն կամ գիտակարգային ուղղություն, առաջացել է հանրալեզվաբանության, էթնոլեզվաբանության, հոգելեզվաբանության, լեզվաերկրագիտության, մշակութաբանության և փոխկապակցված այլ գիտությունների հատման կետում:

Որպես միջգիտակարգային ուղղություն, այն ուսումնասիրում է ժողովրդի մշակույթի դրսևորումները, որոնք արտացոլվում և միաժամանակ ամրագրվում են լեզվում կամ լեզվական միջոցներով:

Լեզվի և մշակույթի փոխադարձ կապի գաղափարի ընդունումը ունի ընդգծված գործնական նշանակություն. միջգիտակարգային ուսումնասիրություններում լեզվական փաստերը և լեզվաբանական մեթոդները խաղում են վճռական դեր:

Լեզվամշակութաբանությունը փորձում է մեկնաբանել լեզվի հիմնական գործառույթներից մեկը, որ մինչև օրս չէր դիտարկվել նրա մյուս՝ հաղորդակցական, ճանաչողական, կուտակողական և կառուցողական գործառույթների համատեքստում: Լեզվի այդ նոր գործառույթը, որ ընկած է լեզվամշակութաբանության հիմքում, լեզվի կիրառական այն հատկանիշն է, որով նա դառնում է մշակույթի ստեղծման, զարգացման, պահպանման և հաղորդման գործիք:

Լեզվամշակութաբանությունը միատեսակ գնահատական և միատեսակ բնորոշում չի ստացել մասնագետների կողմից: Այդ տարակարծու-

թյունների հիմքում ընկած են լեզվամշակութաբանության վերաբերյալ տարբեր ըմբռնումներ:

Որոշ գիտնականների կարծիքով լեզվամշակութաբանությունը էթնոլեզվաբանության առանձին ճյուղ է (Վ.Ն.Թելիա, Ս.Գ.Վորկաչևա), ոմանց կարծիքով էլ՝ լեզվաերկրաբանության բաժին (Վ.Գ.Կոստոմարով), երրորդների կարծիքով՝ մշակութային հաղորդակցության մաս (Տեր-Մինասովա), չորրորդների կարծիքով՝ էթնոհոգեբանության բաժին (Յու.Սոբոկին):

Այս բոլոր տարակարծություններով հանդերձ՝ մշակութային լեզվաբանության բոլոր ուղղությունները հենվում են Վ. ֆոն Հումբոլդտի այն դրույթի վրա, որ «լեզուն ժողովրդի ոգու արտահայտությունն է»¹:

Հասկանալի է, որ լեզուն և մշակույթը պատկանում են նշանային տարբեր համակարգերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նշանների տեսակները և դրանց համապատասխան՝ նշանային նշանակությունները: Դրանով հանդերձ, լեզուն և մշակույթը շատ **ընդհանուր եզրեր** ունեն, ինչպես՝

1. Մշակույթը, ինչպես լեզուն, գիտակցության ձև է, որ արտացոլում է մարդու աշխարհայացքը:
2. Մշակույթը և լեզուն գոյություն ունեն փոխադարձ երկխոսության ձևով:
3. Մշակույթի և լեզվի սուբյեկտը մշտապես մարդն է կամ հասարակությունը:
4. Մշակույթի և լեզվի ընդհանուր հատկանիշը նորմավորվածությունն է, էական հատկանիշը՝ պատմականությունը:
5. Լեզվին և մշակույթին հատուկ է շարժունություն-կայունություն հակադրությունը²:

Մյուս կողմից՝ լեզուն և մշակույթը ունեն որոշակի **տարբերակիչ գծեր**.

1. Լեզվում գերիշխում է զանգվածային հասցեատեր, իսկ մշակույթի մեջ գնահատվում է արժեքայնությունը:
2. Թեև մշակույթը նշանային համակարգ է (ինչպես լեզուն), սակայն նա ունակ չէ ինքնակազմակերպվածության:
3. Լեզուն և մշակույթը պատկանում են նշանային տարբեր համակարգերի³:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ լեզվամշակութաբանությունը ձևավորվել է լեզվաբանության և մշակութաբանության հատման կետում, որտեղ նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ խնդիրները, ապա պետք է նկատի ունենանք նաև, որ այս գիտակարգային ուղղությունն իր հերթին ունի նույնպես ուսումնասիրության խնդիրներ, որոնք որոշակիորեն տարբերվում են նրա բաղադրիչ գիտությունների խնդիրներից:

Եվ դա բնական է. լեզվամշակութաբանությունը նոր գիտաճյուղ է, ուստի նոր պետք է լինեն նաև նրա ուսումնասիրության խնդիրները:

1. Маслова В.А., Современные направления в лингвистике, М., 2008, էջ 129-130.

2. Телия В.Н., Русская фразеология. Семантический, прагматический и лигвокультурологический аспекты. М., 1996, էջ 225-226.

3. Маслова В.А., Современные направления..., էջ 132.

Ըստ այդմ, լեզվամշակութաբանության խնդիրներն առնչվում են այնպիսի հարցադրումների, որոնց միջոցով հնարավոր է հասնականալ և բացատրել:

1. Ինչպես է մշակույթը մասնակցում լեզվական կոնցեպտների ձևավորմանը:
2. Լեզվական նշանի նշանակության որ մասն է արտահայտում *մշակութային իմաստներ*:
3. Մշակութային այդ իմաստները գիտակցում են արդյոք խոսողներն ու լսողները, և ինչպես են նրանք ազդում խոսքային ռազմավարության վրա:
4. Իրականության մեջ գոյություն ունի արդյոք լեզվամշակութային հավասարություն, որի հիման վրա տեքստում մարմնավորվում և լեզվակիրների կողմից ճանաչվում են մշակութային իմաստները:
5. Ինչպես են բացահայտվում տվյալ մշակույթի կոնցեպտների բնագավառներն ու մշակութային խոսույթները՝ կողմնորոշվելով մեկ մշակույթի, ինչպես նաև բազմամշակույթի կրողների ներկայացուցչությամբ, ինչպես են նկարագրվում տվյալ լեզվական նշանների իմաստները, որոնք ձևավորվում են լեզվի և մշակույթի փոխազդեցության հիման վրա⁴:

Մշակույթը բազմաձև էրևոյթ է. ոմանք պնդում են, որ այն երկրորդ բնություն է՝ հենվելով այն դրույթի վրա, որ մարդը, որպես կենսաբանական արարած, մշակույթի ստեղծողն է, որի միջոցով էլ ինքը բացահայտում է իր բնական ներուժը:

Մշակույթը մարդկային գործունեության արդյունք է. դրանով կարելի է մեկնաբանել պարզ և բարձրագույն մշակույթ ստեղծելու մարդկային գործոնը: Օրինակ, մարմարի բեկորը հանքավայրում դեռևս մշակույթ չէ. նրանից պատրաստված տախտակը պարզ մշակույթի դրսևորում է, այդ տախտակից պատրաստված քանդակագարդ խաչը բարձր մշակույթ է, կամ այդ նույն բեկորից պատրաստված Միքելանջելոյի «Դավիթը» արդեն բարձր աստիճանի մշակույթի դրսևորում է:

Մշակույթը լայն առումով դիտվում է որևէ հանրության կյանքի և կենսագործունեության յուրահատուկ միջոցների ամբողջություն, մարդկանց միջև առկա հարաբերությունների դրսևորում (սովորույթներ, ծեսեր, ավանդույթներ, արարողություններ), արտաքին աշխարհը ուսումնասիրելու, ըմբռնելու և այն վերափոխելու գործիքների միասնություն:

Մշակույթը բարդ էրևոյթ է, գիտությունը դեռ նոր է մոտենում նրա էությանը և նրա գոյաբանական յուրահատկություններին. դրանով էլ պետք է բացատրել այն իրողությունը, որ գիտության մեջ մշակույթի տարբեր ըմբռնումներ կան:

Ֆ. Նիցշեն, օրինակ, ընդունում էր մշակույթի երկու տեսակ՝ ա) **ապոլլոնյան**, որ մարմնավորում է ձևերի և բարոյական նորմերի ներդաշնակությունը (զգացմունքների և լույսի փառաբանություն), բ) **դիոնիսյան**, որ

4. Маслова В.А, Современные направления..., էջ 133.

կապված է զսպվածության և խրախճանքի ու վայելքների վիճակների հետ. վերջինս ըմբոստություն է բանականության դեմ:

Մշակույթի այսօրինակ տարբերակումը փիլիսոփայության համար ունեւ կարևոր նշանակություն. Ապոլլոնի և Դիոնիսի կերպարներում մարմնավորված են տիեզերական կեցության տարբեր բևեոներ: Ապոլլոնյան և դիոնիսյան բևեոների հակադրությունը Նիցշեի կողմից դիտարկվում է առաջին հերթին որպես ձևի և անհատականության սկզբունքների արտահայտություն, որպես ոգու տարատեսակներ: Ապոլլոնյան և դիոնիսյան մշակույթների հակադրությունը կիրառելի է ոչ միայն անտիկ մշակույթի, այլև ամբողջ եվրոպական գիտակցության համար⁵:

Մշակույթը, ինչպես և լեզուն, հասարակական երևույթ է և մշտապես կրում է հասարակական բնույթ: Մակայն, ի տարբերություն լեզվի, որ զուտ հասարակական երևույթ է, մշակույթը հատկանշվում է երկու կողմով՝ ազգային (հասարակական) և անհատական: Իր այս կողմերով մշակույթը համապատասխանում է լեզվին (որպես հասարակական երևույթի) և խոսքին (որպես անհատական երևույթի):

Ազգային (հասարակական) մշակույթի բաղադրիչ են համարվում այն կրողների վարքի բնագավառները՝ ծեսերը, վարքագիծը, ավանդույթները, սովորույթները, իսկ անհատական մշակույթում վճռական դեր է կատարում բառը, որպես լեզվական նշան: Լեզվական իմաստակիր նշանները՝ ձևույթներ, բառեր, նախադասություններ, համարվում են մշակութային կարգեր, ըստ այդմ, լեզվական նշանները, փոխարինելով բառերին, հասկացություններին և նախադասություններին, ընդունակ են կատարելու «մշակույթի լեզվի» նշանների դեր:

Մշակույթը կարողացավ վերացնել ժամանակի և տարածության սահմանափակությունը և տարածել մարդկային փորձը միայն և միայն լեզվի միջոցով: Լեզվական նշանների միջոցով ներթափանցելով մշակույթի աշխարհ և ապրելով այդ միջավայրում՝ մարդ կարող է հատել ժամանակի և տարածության սահմանները և տեղափոխվել պատմության ցանկացած կետ՝ Հին Հռոմ, հայ դպրության արշալույս՝ V դար, կամ մոնղոլական արշավանքների դարաշրջան:

Բազմազան նշանային համակարգերի համատեքստում առաջատար դեր ունեն լեզվական նշանները, քանի որ այդ նշանները, լինելով մշակույթի ցուցանմուշ, միաժամանակ դառնում են նրա (մշակույթի) պահպանողը կամ կուտակողը՝ հանդես բերելով լեզվական նշանին վերապահված կարևոր գործառույթներից մեկը՝ կուտակողական (ակումուլատիվ) դերը: Իբրև մշակույթի լեզվի նշաններ, դրանք իրագործում են լեզվի մյուս կարևոր գործառույթներից մեկը՝ մշակութային տեղեկությունը փոխանցելով սերունդներին, կատարելով հաղորդակցման յուրահատուկ գործիքի դեր:

5. Գուրևիչ Պ.Ս., Մշակութաբանություն, Ե., 2002, էջ 109:

Եթե մի պահ վերանանք մշակույթից և նկատի ունենանք գիտության այլ համակարգեր ու այլ բնագավառներ, կարող ենք միանշանակ պնդել, որ մարդուն վերաբերող բոլոր գիտություններում բոլոր տեսակի գիտելիքները ամրագրվում են լեզվի նշանային համակարգի միջոցով:

Լեզուն և մշակույթը գտնվում են բարդ փոխհարաբերության մեջ. լեզուն հատուկ նշանների միջոցով արտացոլում է արտաքին իրականության առարկաները, երևույթները և նրանց հասկանիչները. ինչքանով մշակույթը արտաքին աշխարհի անբաժանելի մասն է կազմում, այդքանով լեզուն արտացոլում է նաև մշակույթի աշխարհը:

Լեզուն այդ ընթացքում որոշարկում է մշակույթի դրսևորման ձևը, քանի որ իր գոյության և զարգացման ընթացքում այն ձևավորում է մշակութային ծածկագրեր (կոդեր)՝ բառեր, կապակցություններ, դարձվածային միավորներ, արտահայտություններ, որոնք մշակութային աշխարհն արտացոլում են ճանաչողության փուլերով, որպես գիտակցված տարրերի ամբողջություն և ոչ թե այնպես, ինչպես այն գոյություն ունի մեր կամքից անկախ: Մշակութային իրողությունները մտածողական ներուժի դրսևորումներ են և միաժամանակ հանդես են գալիս իբրև աշխարհը տեսնելու և գիտակցաբար ըմբռնելու որոշակի միջոց՝ արտահայտված լեզվական նշաններով:

Այստեղից էլ լեզվի և մշակույթի փոխադարձ կապի խնդիրը: Մշակույթը, կախված լինելով լեզվից (ինչպես բովանդակությունը՝ ձևից), կարող է ազդել նրա վրա (ինչպես բովանդակությունը ձևի վրա):

Մշակույթի բնագավառում որոշիչ դեր է պատկանում մշակութային արժեքներին, որոնք համարվում են **նշանների կոնցեպտներ**: Առավել ևս, մշակույթը գնահատում են նաև որպես տարանջատ, սակայն միախմբված արժեքների համակարգ: Մշակութային արժեքները դիտվում են որպես աշխարհի նկատմամբ մարդու մշակութապես իմաստավորված հարաբերություններ, որոնք ծառայում են նրա մշակութային կողմնորոշվածությանը: Արժեքների մեջ կարելի է առանձնացնել հանրութային, համամարդկային, գաղափարաթնիկական և ազգային արժեքներ: Գոյություն ունեն քրիստոնեական արժեքներ, որոնք ընդհանուր են քրիստոնյա բոլոր ժողովուրդների համար, բուդդայական մշակույթի արժեքները ընդհանուր են բոլոր բուդդիստների համար, զրադաշտական մշակույթի արժեքները համընդհանուր պաշտամունքի առարկա էին իրանական ժողովուրդների համար (Աքեմենյանների շրջանից մինչև Սասանյանների հարստությունը): Մշակութային բոլոր արժեքներն արտացոլվում են լեզվի մեջ՝ բառերի և դարձվածքների նշանակություններում, առակաբանության ու նախատիպային բնագրերի մեջ և այլն⁶:

6. Караулов Ю.Н., Общая и русская идеография, М., 1976.

Ինչպես նշեցինք, լեզուն և մշակույթը փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Հարցն այն է, թե որն է նրանց կապող օղակը: Այս հարցադրումը փորձում են լուծել ոչ միայն լեզվաբանները, այլև փիլիսոփաներն ու լեզվամշակութաբանները, և այդ առումով էլ այս խնդիրը ժամանակակից լեզվամշակութաբանության համար հրատապ նշանակություն է ստանում:

Լեզուն, լինելով մշակույթի դրսևորման նշանային համակարգ, միաժամանակ մշակույթի կամ մշակութային փաստ է, քանի որ՝

- 1) այն մշակույթի բաղկացուցիչ մասն է, որ ժառանգաբար մեզ է անցել մեր նախնիներից,
- 2) լեզուն մշակույթի դրսևորման գործիք է, որի միջոցով մենք յուրացնում ենք մշակույթը,
- 3) լեզուն մշակույթի բաղադրիչներից ամենաէականն է. մշակույթի բովանդակությունը՝ գիտություն, կրոն, գրականություն, ավանդություն և նրանց ենթաբաղադրիչները, յուրահատուկ ծածկագրեր են, որոնք ձևավորվել են լեզվական թաղանթով և դրսևորվում են լեզվական նշաններով,
- 4) մյուս նշանային համակարգերի համեմատ լեզուն անփոխարինելի համակարգ է մշակույթի էությունը արտահայտելու տեսակետից, քանի որ բնական լեզուն ունի առավել վերամշակված կադապար:

Աշխարհի մշակութաբանական ընկալումը մարդու կողմից կատարվում է տարբեր ասպեկտներով, ինչպես՝ տեսողական, լսողական, շարժումնային, զգայական, մտագործունեական և այլն:

Եթե ճանաչողական գործընթացում առաջին պլան է մղվում տեսողությունը, ապա մարդն արտաքին աշխարհի առարկաները, երևույթները և նրանց հատկանիշների գաղափարը պահպանում է նկարների՝ պատկերների տեսքով. Աշխարհի այդօրինակ ընկալումը կարելի է անվանել **տեսողական**: Լեզվում «տեսողական» նշաններ են՝ տեսնել, դիտել, նայել, տեսակետ, հորիզոն, հեռանկար, տեսողություն, նայվածք, դիտում, պատրանք, լույս, լուսավորել, աշխարհին նայել գունավոր՝ վարդագույն ակնոցով, աչքից վրիպել, առաջին հայացքից, ինչ նկատի ունեք, տեսքի գալ, աչքի առաջ ունենալ, աչքի ընկնել, աչքին երևալ, աչքերի առջև մթնել, պատի ծեփ դառնալ, գույն տալ՝ գույն առնել և այլն:

Եթե ճանաչողական գործընթացում առաջին պլան է մղվում լսողությունը, ապա աշխարհի այդօրինակ ընկալումը կոչվում է **լսողական**, իսկ աշխարհի արտացոլումը կատարվում է «լսողական» նշանների միջոցով, ինչպես՝ լսել, ունկնդրել, կանչել, գոռալ, գոչել, անշշուկ, անշշունջ, լեյայն, լուռումունջ, անխոս, տոն տալ, աղմկոտ, խոսող, երգել, հարցնել, ձայնակցել, մեղեդային, ձայն տալ, ձայնը գլուխը գցել, ականջները փակել՝ խցկել, ուղտի ականջում քնել և այլն:

Եթե առաջին պլան են մղվում շարժողական հակազդակները, ապա դա **շարժումնային** (կինետիկ) լեզու է, լեզվում «շարժումնային» նշաններ են՝ շոշափել, սեղմել, ճնշել, ոտքի բարձրանալ՝ կանգնել, ձեռքերը թափահարել, ձեռքով նշան անել, աչքով անել, գլուխը բարձր պահել, ոտքը ոտքին գցել, ծափ

տալ, ձեռքի մատները ծալել, աչքերը փակել, մատը շրթունքներին դնել, ծրնկները ծեծել, մազերը պոկել և այլն:

Եթե առաջին պլան է մղվում զգացողությունը, ապա աշխարհի այդօրինակ ընկալումը կոչվում է **զգայական**, լեզվի «զգայական» նշաններից են՝ սառչել, տաքանալ, սիրել, ատել, համակրել, հակակրել, ծակել, ցավել, ցավեցնել, զգալ, զգացողություն, սիրտը ծակել, գլուխը ցավել, սիրտը կտոր-կտոր լինել, սիրտը հալվել՝ հալ ու մաշ լինել, սիրտը ցավել, տաք գլուխ, լեղին ջուր կտրել, աղիները կտոր-կտոր լինել և այլն:

Եթե առաջին պլան է մղվում մտային գործունեությունը, ապա աշխարհի այդօրինակ ընկալումը կոչվում է **մտագործունեական**, այս դեպքում՝ աշխարհն արտացոլում են մտածական բառերն ու կապակցությունները՝ մտածել, դատել, կշռադատել եզրահանգել, ամփոփել, սահմանել մակաբերել, մտածողություն, դատողություն, կշռադատում, եզրակացություն, ամփոփում, սահմանում, մակաբերում, դատողություն անել, մտքով անցկացնել, գլուխ գլխի տալ, միտք անել, լուծել, վճռել, վճիռ կայացնել, պատասխանը գտնել, գլխի ընկնել և այլն:

Ինչպես նշեցինք, լեզվամշակութաբանական համակարգում լեզուն և մշակույթը մեկուսի իրողություններ չեն. դրանք կապված են՝

- ա) լեզվական նշանների իմաստով (Ե.Ֆ.Տարասով),
- բ) մշակութային կոննոտացիայով (բառական նշանակության ոչ առարկայական կողմը, որ ներառում է զգացմունքայնություն, գնահատողություն, արտահայտչականություն) (Վ.Ն.Թելիա),
- գ) լինգվոկուլտուրեմայով (բառ, բառակապակցություն, նախադասություն) (Վ.Վ.Վորոբև),
- դ) ազգային-մշակութային բաղադրիչներով (Վ. Գ. Կոստոմարով)⁷:

Լեզուն ոչ միայն յուրահատուկ համակարգ է, այլև համակարգերի համակարգ, որ ընդունակ է ծածկագրելու, պահպանելու և հաղորդելու մշակույթի բովանդակությունը: Սակայն լեզվական բոլոր նշանները միատեսակ չեն կարող դառնալ մշակույթի բովանդակության դրսևորման գործիք: Մշակույթի լիարժեք պահպանության (և հաղորդման) համակարգեր են լեզվական **բնագրերը** (տեքստ): Մարդու հոգևոր և նյութական մշակութային արժեքներն արտացոլվում են ոչ թե լեզվի, այլ բնագրերի միջոցով: Բնագրի և մշակույթի կապն անմիջական է. բնագիրը ներառում է մշակույթի բազմազան ծածկագրերը, այն պահպանում է տեղեկություն պատմության, ուզգագրության, ազգային հոգեբանության ու վարքագծի վերաբերյալ, որոնք կազմում են մշակույթի բովանդակությունը: Մյուս կողմից՝ բնագրի հյուսվածքը, նրա կառուցման կանոնները կախում չունեն մշակույթի համատեքստից: Ընդունված է ասել՝ բնագիրը ձևավորվում է լեզվի ստորին մակարդակներից մինչև բարձրակարգ մակարդակային միավորները, որոնք որոշակի հանգամանքների դեպքում կարող են ուժեղացնել մշակութային ազդանշանները:

7. Маслова В.А., Современные направления..., էջ 154-155.

Լեզվի և մշակույթի փոխազդեցության, փոխներգործության գաղափարի ըմբռնումն ավելի է խորացնում գիտական այնպիսի բնագավառների կապերը, ինչպիսին են՝ լեզվաբանությունը, մշակութաբանությունը, ազգագրությունը, մարդաբանությունը, հնագիտությունը և այլն:

Այժմ հարց է դրվում նորովի դիտարկել ժողովուրդների էթնոգենեզի, էթնոպատմության և նրանց մշակույթի պատմության փոխկապակցված ուսումնասիրության խնդիրները:

Համանման ուսումնասիրություններում առաջանակարգ դեր են խաղում՝ ա) լեզուների ընձեռած փաստերը՝ հնաբանություններ, պատմաբաներ, բաների նախնական նշանակություններ, ստուգաբանական իմաստներ, փոխառություններ, հին նախաձևեր և այլն, բ) լեզուների շփումների հետևանքով առաջացած վերնաշերտային, մակաշերտային և ենթաշերտային իրողությունները, գ) լեզուների խաչավորման և խառնածին լեզուների տվյալները, դ) լեզվաբանական հետազոտության մեթոդները:

Լեզվամշակութաբանության բնագավառում ըստ անհրաժեշտության առաջացել են մի շարք եզրույթներ, որոնք արդի լեզվաբանության տերմինահամակարգում կենսունակ գործածություն ունեն, ինչպես՝ **լինգվոկուլտուրեմա** (լեզվաբանական միավոր, որ ներառում է լեզվական և մշակութաբանական պատկերացումները խոսքի առարկայի վերաբերյալ), **մշակութային լեզու**, **մշակութային տեքստ**, **մշակույթի ենթատեքստ**, **ենթամշակույթ**, **լեզվամշակութային հարացույց**, **մշակույթի բանալի անվանումներ**, **մշակութային հանրույթներ**, **մշակութային իրավասություն**, **մշակութային ժառանգություն**, **մշակութային ավանդույթներ**, **մշակութային գործընթաց**, **մշակութային հիմնադրույթ**, **մշակույթների խաչավորում** և այլն:

Այս կարգի հասկացությունների համակողմանի ուսումնասիրությունը կարող է ինչպես նոր կողմերից բացահայտել լեզվի և մշակույթի խորքային կապերի բնույթը, այնպես էլ ամբողջացնել լեզվամշակութաբանության գիտաճյուղի գիտական նկարագրությունը:

Хачатрян Лалик- Вопросы лингвокультурологии. -Лингвокультурология как наука возникла на стыке социолингвистики, этнолингвистики, психолингвистики, лингвострановедения, культурологии и других смежных наук. Как дисциплина она исследует проявления культуры народа, которые отразились и закрепились в языке: тем самым, взаимосвязи и взаимодействия культуры и языка она изучает в процессе их функционирования. Признание взаимовлияния языка и культуры имеет большое практическое значения. В междисциплинарных исследованиях языковые факты и лингвистические методы играют все более важную, роль. Идея связи языка и культуры породила немало продуктивных в современной лингвистике понятий: **лингвокультурема**, **язык культуры**, **культурный текст**, **контекст культуры**, **субкультура**, **лингвокультурная парадигма**, **культурная универсалия**, **культурное исследование**, **культурные традиции** и др.

Всестороннее изучение таких терминов способствует как выявлению глубоких связей языка и культуры, так и целостному научному описанию лингвокультуры.

**14-15-ԲԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ձեռագրերի մեջ կարևոր և անբաժանելի մաս են կազմում հիշատակաբանները, որոնք կարելի է համարել ձեռագրի «անձնագիր»։ Դրանք մշտապես եղել և մնում են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում։ Մասնագետների կողմից հիշատակաբանները դիտարկվել են որպես սկզբնաղբյուրներ, որոնք կրում են տվյալ ժամանակաշրջանի ազդեցությունը։ Գրիչները հիմնականում նկարագրում են իրենց ապրած տարիների ընթացքում կատարված դեպքերը, ընտանեկան հարաբերությունները, կենցաղը և այլն, հետևաբար հիշատակաբանները հարուստ նյութ են տալիս տարբեր բնագավառների ուսումնասիրողների։

Հայերեն ձեռագրերի հիշատակաբանների ուսումնասիրությունը կարևորվում է նաև հայոց լեզվի պատմության դիտանկյունից, քանի որ հիշատակաբանը կենդանի խոսք է՝ չիմբագրված և անկաշկանդ, երբեմն բավական հուզական, լեզվական առումով գրիչն ավելի ազատ է իր մտքերն արտահայտելիս։ Սակայն որքան էլ թվում է՝ հիշատակաբաններում պետք է առատորեն վկայված լինեն ժողովրդախոսակցական, բարբառային իրողություններ, այնուամենայնիվ ուսումնասիրությունն այլ պատկեր է ի հայտ բերում. հայոց լեզվի զարգացման միջինհայերենյան այս փուլում՝ 14-15-րդ դարերում, գրված հիշատակաբանները քերականական և ոճական կողմով առավելապես գրաբարյան են, թեև նկատելի են միջին հայերենին բնորոշ քերականական մի շարք ձևեր։ Նշենք, մեր կարծիքով, երկու հիմնական պատճառ.

- Գրավոր խոսքն առավել պահպանողական է և մշտապես ձգտում է չձեղվել գրական լեզվից և գրական ընդհանուր նորմերից։ Բացառություն չեն նաև հայերեն ձեռագրերի հիշատակաբանները։ Չպետք է մոռանալ, որ գրիչները տարիներով ուսանում էին գրչության կենտրոններում, վանքերում, ընդօրինակում բազմաթիվ ձեռագրեր՝ հմտանալով ոչ միայն գեղեցիկ գրելու արվեստի մեջ, այլև առաջին հերթին քերականության մեջ։ Այսինքն՝ գրչության արվեստը ենթադրում էր ոչ միայն գեղեցիկ գիր, այլև առաջին հերթին անսխալ և քերականորեն ճիշտ աշխատանք։ Միջնադարյան Հայաստանի գրչության կենտրոններում շատ է կարևորվել հատկապես քերականության ուսուցումն ու դրա նշանակությունը։ Այս առիթով Գրիգոր Մագիստրոսը գրում է. «...քերականութեամբս լինել հմուտ ամենայն իմաստից և խտրութեամբ մաքրել զբան և զբայ և զգիր մաքուր և վճիտ առասութեամբ»¹։

1. Н.Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроградъ, 1915, ст. 226.

- Երկրորդ կարևոր պատճառը հիշատակարանների կադապարային բնույթն է: Գրիչները գերազանցապես փորձում էին չշեղվել ընդունված կադապարներից, և շատ հաճախ կարելի է հանդիպել ձևային կողմով գրեթե տարբերություններ չունեցող հիշատակարանների, որտեղ փոխված են միայն գրչության ժամանակի, վայրի, գրչի և այլ նման կարևոր տեղեկություններ:

Բնականաբար, պատճառներն այս երկուսով չեն սահմանափակվում, սակայն դրանց մանրամասն քննությունը դուրս է մեր աշխատանքի նպատակից:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները աղբյուր են եղել նաև հայ բառարանագրության համար: Հիշատակարաններին, որպես հայ մատենագրության ուրույն դրսևորման, անդրադառնում են բառարանների կազմությամբ զբաղվողները: Սակայն վերջիններս հասկանալիորեն չէին կարող ամբողջությամբ քարտագրել հիշատակարանները, քանի որ հայերեն ձեռագրերը սփռված են աշխարհով մեկ, և մինչև 19-րդ դարավերջ և 20-րդ դարասկիզբ ձեռագրացուցակների ամբողջական և համակարգված հրատարակություններ չկային, թեև գրաբարի բառամթերքը պարունակող հայկազյան բառարանը, ինչպես գիտենք, լույս է տեսել 1836-1837 թթ.: Այնուամենայնիվ, Մխիթարյան հայրերի մինչ օրս անգերազանցելի բառարանի աղբյուրների մեջ նշված են հիշատակարանները. «Յիշատ. Յիշատակարանք հին մատենից, և արձանագրութիւնք՝ յանուն տուողաց ինչ ինչ՝ ի յիշատակ եկեղեցեաց և վանորէից»²:

«Հայերեն արմատական բառարան»-ի աղբյուրներում Հր. Աճառյանը ևս նշում է հիշատակարանները. «Յիշատ. Յիշատակարաններ զանազան ձեռագրերի, որոնք հրատարակուած են զանազան գրքերում. ամէն անգամ յիշատակելով տեղը. ինչ. Հնոց և Նորոց...»³: Աճառյանը հիշատակարաններին անդրադարձել է նաև «Հայոց անձնանունների բառարան»-ի կազմության ժամանակ:

Նորայր Բյուզանդացու՝ 2000թ. հրատարակված բառարանի «Անուանք մատենագրաց եւ մատենագրութեանց» բաժնում ևս հիշատակարանները նշված են որպես աղբյուր⁴:

Հետաքրքիր է, որ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի աղբյուրների մեջ հիշատակարանները նշված չեն⁵, սակայն համոզված ենք, որ Մալխասյանցը քաջաձանոթ էր ինչպես հայերեն ձեռագրերին, այնպես էլ հիշատակարաններին:

Թեև վերոնշյալ բառարանները կազմողներն օգտվել են հիշատակարաններից, սակայն այդքանով, բնականաբար, նյութը չէր կարող սպառվել,

2. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ա., Ե. 1979, էջ 16:

3. Հայերեն արմատական բառարան, Կ. Ա., Ե. 1971, էջ 46:

4. Ն. Բյուզանդացի, Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Ժնն, 2000., էջ 759:

5. Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Կ. Ա., Ե. 1944, առաջաբան էջ Ժ.-ԺԳ.:

հատկապես երբ հիշատակարաններն ամբողջությամբ հավաքված և հրատարակված չէին:

Հիշատակարանների բառամթերքը քննության նյութ է եղել նաև մեծօրյա այն բառարանները կազմողների համար, ովքեր անդրադարձել են գրաբարի կամ միջին հայերենի բառային կազմին: Հիշատակարանները որպես աղբյուր նշված են Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում⁶, ինչպես նաև Լ. Հովհաննիսյանի կազմած «Գրաբարի բառարան»-ում⁷:

Գրաբարի կամ միջին հայերենի նոր բառարանների կազմության ժամանակ բառարանագիրները հիշատակարաններին անդրադառնալու ևս մեկ հնարավորություն ունեցան, քանի որ 20-րդ դ. երկրորդ կեսին լայն թափ ստացավ հիշատակարանների ժողովածուներ ստեղծելու գործընթացը: Այս գործում անգնահատելի դեր ունեցան հատկապես Գ. Հովսեփյանը, Ա. Մաթևոսյանը և Լ. Խաչիկյանը:

Առանձին բառարանների հրատարակությունից գատ, 1993թ. ՊԲՀ-ում տպագրած իր հոդվածով Ալ.Մարգարյանը կրկին անդրադառնում է հիշատակարանների բառային քննությանը. այս անգամ շեշտը դրվում է 14-15-րդ դդ. հիշատակարանների նորահայտ բառերի վրա: Հետաքրքիր է, որ նա իր դժգոհությունն է հայտնում առ այն, որ հիշատակարանների լեզվական կողմի ուսումնասիրությանը բավարար չափով ուշադրություն չի դարձվել. «Այդ նյութերը (*նկատի ունի հիշատակարանը- Խ. Հ.*), սակայն ինչ-ինչ պատճառներով լայն ու համակողմանի քննության չեն արժանացել... Իսկ դա, իհարկե, ներելի չի կարելի համարել, որովհետև հայերեն ձեռագրերի հիշատակարաններն իրենց հերթին ու պարզորոշ հայերենի ոչ միայն այն ժամանակվա իրավիճակը, այլև պատմական զարգացման ընթացքը, նրանում կատարված տեղաշարժերն ու փոփոխություններն են պատկերում»⁸: Հավելենք նաև, որ Ալ. Մարգարյանն իր այս հոդվածում 500 նոր բառ է առանձնացրել նշյալ դարաշրջանի հիշատակարաններից:

Սույն աշխատանքում մենք նույնպես անդրադառնում ենք 14-15-րդ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների բառային կազմին՝ նպատակ ունենալով պարզել տվյալ դարաշրջանի հիշատակարաններում կիրառված ոչ միայն հայերեն նորակազմությունները, այլև օտար բառերն ու վերջիններիս գործածության հաճախականությունը:

Բառային քննությունից առաջ կարևոր է դիտարկել հիշատակարանի ներքին կառուցվածքը, որով երբեմն պայմանավորված են բառաստեղծման և բառագործածության աստիճանը և հատկապես ոճական առանձնահատկությունները:

6. Ռ.Ս. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե. 2009, էջ 6:

7. Լ.Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010, էջ 11:

8. Ալ. Մարգարյան, Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV-XV դդ. Հիշատակարաններում, ՊԲՀ, 1993, 1-2, էջ 35:

Բովանդակային առումով հիշատակարանը կարելի է բաժանել երկու ընդհանուր հատվածի՝ «*փառատրական*» և *բուն հիշատակարան*⁹։ Եթե փառատրական հատվածն աչքի է ընկնում հիմնականում բովանդակային մեկ կողմով, այն է Սուրբ Երրորդության փառաբանումը վերամբարձ և ճոխ ոճով, ապա բուն հիշատակարանը կարելի է տարբաբաժանել ևս մի քանի մասերի՝ գրչության ժամանակի ու վայրի մասին տեղեկություններ, գրչի, նրա հարազատների կամ նրա օգնականների մասին տեղեկություններ, ձեռագրի հետ կապված տարբեր մանրամասներ, տարվա եղանակի, տվյալ օրվա կամ սոցիալական վիճակի մասին տեղեկություններ, պատմաքաղաքական անցքեր և այլն։

Փառատրական հատվածին, ինչպես նշեցինք, բնորոշ է վերամբարձ ոճը, որով գրիչները մեծարում և փառաբանում են Սուրբ Երրորդությունը՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի եռամիասնությունը։ Այստեղ երբեմն գրիչներն անդրադառնում են դավանաբանական հարցերի, որոնք ևս շարադրվում են համապատասխան ոճով։ Փառատրական հատվածներին բնորոշ է նաև կաղապարայնությունը, որը պայմանավորված է տվյալ հատվածի բովանդակությամբ։ Հիշատակարանի այս հատվածում գրիչներն աչքի են ընկնում հռետորական արվեստի և հայերենի քերականական, բառակազմական բարձր գիտելիքներով ու հմտություններով։ Ցավոք, հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակության ժամանակ դրանք հիմնականում դուրս են մնացել ժողովածուներից, ուստի չի բացառվում, որ դրանց հետագա հրատարակության դեպքում նորահայտ բառերի թիվը կարող է առնվազն կրկնապատկվել։

Բուն հիշատակարանին, թեև նույնպես բնորոշ է կաղապարայնությունը, սակայն այստեղ է, որ գրիչները հանդես են գալիս ամենատարբեր խնդիրների նկարագրությամբ, անձնական դժգոհություններով և այլն։ Երբեմն նրանք դուրս են գալիս հիշատակարանի սովորական կաղապարից և առանձին պատմություններ կամ բանաստեղծություններ հյուսում՝ նվիրված սիրելի ուսուցչին, ծնողներին և այլոց։ Ահա այստեղ է, որ գրիչների լեզուն առավելապես պարզ է ու ժողովրդական։

Հիշատակարաններում մեծ թիվ են կազմում ժողովրդախոսակցականի վերածված օտար բառերը։ Այս շրջանի համար դժվար է նույնիսկ հստակորեն սահմանազատել փոխառությունն ու օտարաբանությունը։ Ստորև ներկայացնում ենք 14-15-րդ դդ. հիշատակարաններում առավել հաճախ հանդիպող օտար բառերի մի համառոտ ցանկ.

Արաբերեն՝

- *թախսուպ ժՂ, 283* - արաբ. ta'ssub = մոլեռանդ
- *նայիպ ժՂ, 294* - արաբ. nā'ib = փոխարքա, կուսակալ
- *իլախայ ժՂ, 452* - արաբ. ilāxa = կապ, առնչություն

9. Այս մասին տե՛ս Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Ե. 1998, էջ 21-26։

- *անմրրուաթ ժԵ, Ա, 282* - արաբ. mūrūvvet (մեծահոգություն) = փոքրոգի, անմեծահոգի
- *անշաղաւաթ ժԵ, Ա, 282* - արաբ. šāğavat (սիրտ) = անսիրտ
- *պըլաշ ժԵ, Ա, 291* - արաբ. balāš= ձրի, անվճար
- *ղապալ ժԵ, Ա, 439* - արաբ. qabāla= վարձակալություն, կապալ
- *խրէրս ժԵ, Բ, 12* - արաբ. ġarar= վճիռ, որոշում

Պարսկերեն՝

- *բուխտանասաց ժԴ, 379* - պարսկ. buhtan= զրպարտություն
- *խունախ/խնախ ժԴ, 568* - պարսկ. xonağ= բկաբորբ, բկացավ, կոկորդի ցավ
- *քարխանաճի ժԴ, 576* - պարսկ. kar-xaneči= գործատեր
- *նաղարայ ժԴ, 578* - պարսկ. nāğğare= երաժշտական հարվածային գործիք, դափ)
- *թախթան անել ժԵ, Ա, 272* - պարսկ. taxtān= սրարշավ ընթանալ, սուրալ
- *բահադուռ, ժԵ, Ա, 283* - պարսկ. bāhador= քաջ, կտրիճ
- *հատր պաշ ժԵ, Ա, 291* - պարսկ. haser-baš= եղի՝ ր աչալուրջ
- *թարխան ժԵ, Ա, 337* - պարսկ. tarxān= ամեն տեսակ հարկից ազատ անձ
- *դաւեքար ժԵ, Ա, 422* - պարսկ. da'vā-kār= զանգատավոր, պահանջատեր
- *ֆռաշ ժԵ, Բ, 21* - պարսկ. fārraš= սպասավոր, ծառա
- *փագախ ժԵ, Ա, 582* - պարսկ. pagah= ախոռ, գոմ

Թուրքերեն՝

- *չաղաթա ժԵ, Ա, 278* - թուրք. çağatay= չաղաթացի
- *պաշ ժԵ, Ա, 291* - թուրք. baš= գլուխ

Ֆրանսերեն՝

- *բրաջուրաց ժԴ, 173* - ֆրանս. precheur= կաթոլիկ քարոզիչ
- *բրվէլէճ ժԴ, 417* - ֆր. privilege= արտոնություն

Լատիներեն՝

- *գուբեռնաթօր ժԴ, 417* - լատ. gubernator= նահանգապետ
- *գանձաւաւս ժԴ, 469* - լատ. consul= կուսակալ
- *տօրմիթոր ժԴ, 517* - լատ. dormitorium= ննջարան, ննջասենյակ

Հունարեն՝

- *ջունար ժԴ, 446* - հուն. guna = մորթի, մուշտակ

Կան նաև այնպիսի օտար բառեր, որոնք հանդիպում են մի քանի լեզուներում, և դժվար է հստակորեն նշել, թե որ լեզվից է անցել հայերենին, ինչպես՝ *չրախճի ժԴ, 265* (պարսկ., թուրք., čerağči= մոմ թափող), *տամահիլ ժԴ, 509* (արաբ., թուրք. tama, tamah= ազահություն, բուռն կերպով ցանկանալ), *մոլնայ ժԴ, 600* (արաբ. թուրք. molla= մահմեդական կրոնավոր), *քիմխայ ժԴ, 609* (պարսկ. kamxa, թուրք. kemha= մետաքսե նուրբ կտոր), *մընհրայս ժԵ, Ա, 280* (արաբ. mināra, պարսկ. mānare, թուրք. minaret= մզկիթի աշտարակ), *ռայիս ժԴ, 293* (արաբ. ra'is, պարսկ. rāis= գլխավոր, կառավարիչ, գյուղի կամ քաղաքի ազդեցիկ ներկայացուցիչ), *ռիսվ ժԵ, Ա, 580* (արաբ., պարսկ. vaqf, vağf= եկեղեցուն

նվիրված անշարժ կալվածք՝ գույք, առարկա), *հուլիսի ԺԵ, Ա, 282* (արաբ. հսկմ, պրսկ. հոկմ, թուրք. հսկմ, հսկւմ= հրաման) և այլն:

Վերոնշյալ ոչ ամբողջական ցանկից երևում է, որ օտար բառերի կիրառության տեսանկյունից ամենամեծ թիվը կազմում են արաբերեն և պարսկերեն բառերը, ապա թուրքերեն և եվրոպական լեզուներից փոխառած բառերը: Արաբերեն և պարսկերեն բառերի կիրառության մեծ թիվը 14-15-րդ դդ. Հիշատակարանների համար բնական պետք է համարել, քանի որ այս շրջանում գործուն շփումներ կային նշյալ լեզվակիրների հետ: Լատիներեն կամ ֆրանսերեն բառերի առկայությունը հիշատակարանների լեզվում գերազանցապես պայմանավորված է թարգմանական ձեռագրերով, ինչպես որ վերը նշված օրինակներում է: Թուրքերեն բառերի թիվն այս շրջանում համեմատաբար սակավ է, որը նույնպես պայմանավորված է պատմական գործոնով:

Հիշատակարաններում մեծ թիվ են կազմում նորաբանություններն ու նորակազմությունները, որոնք տեղ չեն գտել գրաբարի բառարաններում, ինչպես՝ *արեզագոն ԺԴ, 275, առաքելականաշնորհ ԺԴ, 479, երկնաթռուցիկ ԺԴ, 259, կամաբարձ ԺԴ, 568, պատիրագործ ԺԴ, 453, յուլվածողով ԺԴ, 456, քարակատող ԺԴ, 318, սրտաջան ԺԴ, 400, շատալրծեալ ԺԵ, Ա, 286, ցովագրոյց ԺԵ, Ա, 302*, որոնք հետագայում տեղ են գտել Ալ. Մարգարյանի նշյալ բառացանկում:

Այս բառերի մեծ մասը, սակայն, կարելի է համարել դիպվածային, քանի որ դրանք սահմանափակվում են հիմնականում տվյալ հիշատակարանով և լայն տարածում չեն գտնում: Դրա վառ ապացույցը կարող են լինել նաև հոմանշային այն շարքերը, որոնք ակամա ստեղծվում են գրիչների կողմից միևնույն իմաստը արտահայտելու համար, ինչպես՝ *մեղսաթաւալ, մեղսաթաթախ, մեղսաթարախ, մեղսամաձ, մեղսամակաձ, մեղսամակարթ, մեղսամահ, մեղսաշաղախ, մեղսաներկ, մեղսապարտ, մեղուցեալ մահապարտ, մեռելոտի* կամ *նորաբողբոջ, դեռաբողբոջ, դեռաբոյս, դեռահաս* և այլն:

Հայոց լեզվի պատմությանն առնչվող բոլոր բառարաններում էլ այս կամ այն չափով արտացոլված է հիշատակարանների բառամթերքը, և ինչպես նշել էինք, 500 նոր բառ էլ տեսնում ենք Ալ. Մարգարյանի աշխատանքում, սակայն մեր աշխատանքի արդյունքում կարողացել ենք գտնել ևս մի շարք բառեր, որոնք վկայված չեն որևէ բառարանում: Այդ բառերը ներկայացնում ենք ստորև.

ԲԱՐԱՔԱՐ - հավանաբար քար կամ ուռուցք. «Նայել կարկիչ պիղծ բերանի// Եւ բարաքար ի ճակատի՝ // Որք հաւանի Քաղկեդոնի// Եւ հայհոյողք են Քրիստոսի» ԺԵ, Ա, 319

ԳԵՐԱԶՆԱՄԱՔՈՒՐ - գերմաքուր. «...նաև զգերազնամաքուր աբեղայսն սըրբազան...» ԺԴ, 526

ԴԺՈՒԱՐԱԳՈՒՆԱԿ - դժվարագույն, շատ դժվար. «մոռացումն առնէ դժուարագունակ կրից եկելոց» ԺԴ, 610

ԵՐԳԱՔԱՆՈՂ - զովերգող. «Գրեցաւ երգաբանող սուրբ Շարակնոցս ի յերկիրս Մոկաց» ԺԵ, Ա, 340

ԵՐԿՆԱՊԱՏՈՒՄ – երկինք պատող. «Գրեցաւ տառս աստուածային երկնապատում սրբոյս Դիոնէսիոսի Արիսպագացոյ...» ԺԴ,456

ԵՐՓՆԵՐՓՆ – երփներանգ, բազմագույն. «...բազմախումբ քաղաքի յոգներանկ և երփներփն լուսաշաւիղ պողոտայի...» ԺԴ,454

ԷՄՆՈՒԹԻՆ – մատչելիություն, առատություն. «Էր էմնութին և էթնութին // Ամենեին անգողութին» ԺԵ,Ա,280

ԹԵԹԳՈՒԹ – «թարգման կամ մեկնիչ». այսպես է բացատրվում Եր. Մեղրեցու բառարանում¹⁰: 14-րդ դարի հիշատակարանում կարդում ենք. «Ըոտեմ ընդ այս զթերգութ» ԺԴ,317

ԻՄԱՍՏԱՊԱՃՈՅՃ – իմաստով պատված. «հոգեհրաւեր յուսալիր և իմաստապաճոյճ տառիս» ԺԴ,489

ԼԱԻՄԱՅ – լուսմ. «...իբր զլամայս այրոյն՝ քումդ գանձարանի» ԺԴ,568

ԼՈՒՍԱՇԱԻԴ – լուսավոր. «...բազմախումբ քաղաքի յոգներանկ և երփներփն լուսաշաւիղ պողոտայի...» ԺԴ,454

ԼՈՒՍԱՊԱՐՓԱԿ – լույսով պատված. «Արդ աւարտեցաւ լուսապարփակ և աստուածային սուրբ մատենան» ԺԴ,331

ԽԵՌԱԲԱՐՁ – վրեժից ձերբազատ, անոխ. «...որ այժմ ասի Խառաքաստայ և այլաբանի խեռաբարձայ» ԺԴ,628

ԾԱԳԷ Ի ԾԱԳ – մի ծայրից մյուսը. «...և շինեն զվանքս ծագէ ի ծագ» ԺԵ,Ա,581

ԾՈՒԼԱԼ – ծուլություն. «...որում ծուլալն եղև խափան...» ԺԴ,558

ԿԷՍԱՅՄԱՍ – կես. «...եւ տարաւ զկէսայմասն աշխարհիս...» ԺԴ,375

ՀՈԳԵԶԱՆ – հոգին պարուրող, գերող. «Շնորհիւ Տեառն շարադրեցի զհիսումն հոգեզան խնդրուածութեանս» ԺԴ,337

ՀՈԳԵՀՐԱԻԷՐ – հոգին հրավիրող, գրավող. «այս արհնութեանաբեր հոգեհրաւեր յուսալիր և իմաստապաճոյճ տառիս» ԺԴ,489

ՀՈՔՆՈՒՆԱԿ – բազում, շատ. «ԶՄկրտիչ՝ զ[հ]ոքնունակս մեղաց» ԺԴ,641

ՄԱՇԷԱԳԻՆ – համեմատ, նվաճատ. «...մեզ՝ մէկ մաշէագին արար ծառայութին» ԺԵ,Բ,19

ՄԵԾԱՓԱՓԱՔՈՒՄ – շատ ցանկանալ, փափագել. «մեծափափաքմամբ ստացաւ զսա հիշատակ հոգոյ իւրոյ» ԺԴ,587

ՄԵՂՍԱԹԱՐԱՆ – մեղքերի մեջ թաթախված. «ձեռամբ անարժան և մեղսաթաթախ անձին» ԺԴ,637

ՅՈՐԴԱՅՈՐՁԱՆ – առատահոս. «...յորդայորձան սահման և կնիք երկնագնաց» ԺԴ,537

ՇՐՋԱՊԱՐԵԼ – շրջապատել. «...և շրջապարեալ ընդէլեաց ի հեռատակ ճիւղաց» ԺԴ,568

ՋՂԱԴԱՅ – հավանաբար ունի «բարբարոս» իմաստը. «...ի ձեռն այլազգեաց, որ կոչին ջղադայք» ԺԴ,632

10. Ե. Մեղրեցի, Բաղկիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Մ. Ամալյանի, Ե. 1975, էջ 118:

ՄԻՋԱԶՈՐ - բուսագուրկ. «Միզաչոր առնեն ըզմեզ գրկելով ի մեր հայրենեաց» ԺԴ,600

ՎԱՐԸՍՏԱԿԱՆ – դուրս^օ կամ այլուր. «Ի ժողովոյն իւրեանց պղծի զձեզ արտաքսեն վարքստական...» ԺԴ,268

ՎՍԵՄԱՃԵՄ – վերամբարձ, վեհաշուք. «...ն՝վ վսեմաճեմ երաստ աստուածասէր խմբից...» ԺԴ,536

ՏԱՐՋԱՆԵԼԻ – դժվար, տաժանելի. «...բայց յինէն տարջանելի կրիւք յառաջ եկն ...» ԺԴ,591

ՔԱՂՅՐԱԲԱՐՔ – օրինակելի, լավ վարք. «հեզահոգի և քաղցրաբարք սարկաւազն» ԺԴ,508

ՔԱՊԿԱՊԷՍ - «իբր զճճիս ի տղմուտ վայրի կայտռելով անսգայաբար քապկապէս^օ » ԺԴ,453

Հիշատակարաններում սակավ կիրառություն ունեն նաև բարբառային բառեր, որոնց իր աշխատանքում արդեն անդրադարձել է Գ. Ջահուկյանը:

Harutyunyan Khachik– Analysis of the Vocabulary of Armenian Colophons of 14-15 Centuries. – In this article we investigate the vocabulary of Armenian colophons of 14-15 centuries. The given analysis revealed that there are still many words included neither in general dictionaries of the Armenian language nor in an article by Al. Margaryan addressing the same topic and including about 500 new words taken from the colophons of that period. Loanwords from Arabic, Persian, Turkish and Latin were also quite frequent in the colophons of 14-15 centuries.

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔԸ ԱՐՁԱԿՈՒՄ

Հակոբ Օշականի ստեղծագործություններում առատորեն գործածված են պատկերավորման բոլոր միջոցները: Հեղինակը դրանք գործածել է տարբեր նպատակներով՝ իր ստեղծագործությունների լեզուն դարձնելով հարուստ ու ինքնատիպ: Այս հոդվածում անդրադարձել ենք պատկերավորման միջոցներից համեմատություններին: Քննությունը կատարվել է հեղինակի պատմվածքների և վիպակների նյութի հիման վրա: Համեմատությունն այլաբերության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, ոճական այնպիսի հնարք, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի որևէ կողմ արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը¹: Այդ նմանությունը, ի դեպ, հաճախ կարող է չլինել, սակայն հեղինակի յուրահատուկ մոտեցման շնորհիվ կապ է ստեղծվում առարկաների միջև, և մեկի միջոցով բնութագրվում է մյուսը:

Համեմատությունները սովորաբար կազմվում են երեք բաղադրիչներից՝ համեմատվող առարկան, այն առարկան, որի հետ համեմատվում, է և այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը:

Օշականի պատմվածքներում բազմաթիվ են այսպես կոչված **եռանդամ** համեմատությունները: Դրանց կիրառմամբ հեղինակը կարողացել է հասնել գեղարվեստական պատկերի կատարելության, ընդգծել իր անհատական վերաբերմունքը պատկերվող առարկայի, երևույթի նկատմամբ, ընթերցողի համար աշխարհը բացահայտել այլ տեսանկյունից: Բերենք ասվածը հավաստող օրինակներ. «Քիչ անգամ մազերը այդքան մետաքս ու ոսկի կկախեն աղջկան մը կոնակեն ու քիչ անգամ ճերմակը կրնա խառնվիլ, առանց ավրվելու, թևավոր արյունի մը հետ, որ անոր այտերուն վրա պտտեցավ ու ծիածանի մը պես, օրվան պահերուն համեմատ երանգ փոխեց հոն»²: Կամ՝ «Պատրույզը ծռեց քիչ մը իր բոցը, որ գնաց ու եկավ, բայց շտկեց իր պարարտ և ուղիղ գիծը, և սուզվեցավ դեպի վեր՝ մունջ հարսի մը նայվածքին պես, միօրինակ ու մեռած»³:

Հեղինակի խոսքում, որտեղ կան զանազան գնահատողական բնութագրումներ, համեմատությունների գործածության գործակիցը բարձր է,

1. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 340:

2. Հակոբ Օշական, Երկեր, Ե., 1979, էջ 234:

3. Նույն տեղում, էջ 375:

հեղինակը կարծես իրեն է վերապահում համեմատությունների՝ որպես գեղարվեստական առաջատար միջոցի և շարահյուսական ակտիվ դարձույթի գործածության իրավունքը: Հերոսների խոսքում համեմատությունը շատ քիչ է գործածված: Հանդիպում է այն դեպքում, երբ հեղինակը հերոսներից մեկն է, սակայն այս դեպքում խոսքում գերակշռում են ժողովրդական մտածողությանը բնորոշ, ժողովրդախոսակցական բառերով ու արտահայտություններով կազմված համեմատությունները, որոնք խոսքը դարձնում են ավելի համոզիչ, բնական, նկարագրվող իրադրությանը, թեմային համահունչ, համեմատվող առարկան, երևույթը զգայապես ընկալելի. «Կաթի պես ճերմակ կամ երկինքին չափ անուշ մեղմ կապույտը կփոխվեր հոծ, ջղուտ, լեղակի պես երիտասարդ կապույտի մը, ուր շարժումները, պրկումները, փրփուրի բարակ ձյուն մը տառապանքի չափ սրտին կղպեին»⁴: «Ու վայրկենապես գեղը գնաց իր մտքովը, իրենց տունը, որ եկեղեցիին կուշտին էր փակած: Ու իրենց ետևի պատուհանէն տեսաւ գիւղին զանգակը, որ կապոյտին մէջ կախուած մեծ բաղեղածաղիկի մը նման իրիկուն-առտու իր ձայնը կը թափէր իրենց վրայ»⁵: «Տարուբնակ հորթ մըն էր ան, իր հասակովը, երբ էս ձգեցի գեղը: Անիկա սիրած էի տղու հոգիով: Ո՛հ լացած՝ երբ նշանեցին»⁶:

Ամեն մի համեմատության մէջ կարևոր նշանակություն է ստանում հեղինակի վերաբերմունքը համեմատվող առարկայի, երևույթի և, հատկապես, անձնավորության նկատմամբ: Սրանից ելնելով՝ Ա. Մարությանը տարբերակում է համեմատությունների դրական և ժխտական տեսակներ⁷, որոնց հետ այնքան էլ համաձայն չենք: Նման համեմատություններում երևում է հեղինակի դրական կամ բացասական վերաբերմունքը պատկերվող առարկայի, երևույթի, անձի նկատմամբ: Հեղինակի բացասական վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ ժխտական անվանելը նպատակահարմար չենք գտնում: Պ.Պողոսյանը ևս տարբերակում է **ժխտական համեմատություններ**. «Ժխտական համեմատության դեպքում բացասվում է երկու երևույթների նույնությունը, նրանց նմանությունը ցուցադրվում է ժխտելով այն հասկացությունը, որի հետ համեմատվում է»⁸: Այս տեսակետին լիովին համամիտ ենք: Օրինակ՝ «Ան կդարձնէ շարունակ կոթը անիվին, որ անտեղյակ զինքը հսկող մատներուն, կթավալի խուլ, միօրինակ, առանց նմանելու պալոզ Արթինի օրերուն, որոնք ժանգոտած երկաթի կտորներու նման չեն քալէ՛ր, կքաշվին ու կքաշվին»⁹:

Ինչպես արդեն նշեցինք, յուրաքանչյուր համեմատություն կրում է հեղինակի անհատականության կնիքը: Ֆ. Խլղաթյանը իրավացիորեն նկատում է, որ «Պատկերավոր մտածողության համար կարևորը ոչ թե առար-

4. Նույն տեղում, էջ 105:

5. Յակոբ Օշական, Կայսերական յաղթերգութիւն, Պէյրուք – 1983, էջ 39:

6. Հակոբ Օշական, Երկեր, Ե., 1979, էջ 255:

7. Տե՛ս Ա.Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 159:

8. Պ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճաբանության հիմունքներ, Ե., 1990, էջ 14:

9. Հակոբ Օշական, Երկեր, էջ 228:

կաների, երևույթների ֆիզիկական տեսքի, երկրաչափական ձևերի վերականգնումն է, այլ նրանց էությունը, որը երբեմն կարող է ոչ միայն չհամապատասխանել, այլև նույնիսկ հակասել նրանց արտաքին ֆիզիկական կողմին»¹⁰: Այսինքն՝ գեղարվեստական պատկերի համար կարևորը ոչ այնքան առարկայի պատկերման ճշգրտությունն է, որքան հեղինակի ստեղծագործական խառնվածքի և իրականության ընկալման ու վերարտադրման նրա անձնական մոտեցման բացահայտումը տվյալ կերպարի, պատկերի միջոցով: Օշականը վարպետորեն կարողանում է զուգորդել առաջին հայացքից անզուգորդելի թվացող երևույթները, գտնել դրանց մեջ կապ, նմանություն և համոզել ընթերցողին իր գեղեցիկ գեղարվեստական պատկերներով: Հետևյալ հատվածում պատկերվում է երիտասարդ տղայի հանդիպումը իր մանկության սիրած աղջկա հետ, որն արդեն նշանված է ուրիշի հետ: Աղջկա գնացքը համեմատելով խունկի բույրի տարածման հետ՝ իր ձայնը համեմատում է միայնակ ցավի հետ. «Այն ատեն, ձայնին վրա մեր աչքերը կհանդիպին իրարու: Կարմրած՝ կդառնա կրունկին վրա ու անոր պարեգոտը արևին մեջ բռնկած մեծ շուշանի մը կնմանի, որ կքալե:

Ու անոր գլուխը կնմանի ոսկի սաղավարտի մը՝ կարմիր երիզի մը վրա:

Ու անոր գնացքը քաղցր է ինչպես խունկինը, որ կդանդաղի:

- Բուրո՞ւլ:

Մինակ է իմ ձայնս, արևին մեջ հանկարծ բուսած խորունկ ցավի մը նման»¹¹: Կամ՝ հետևյալ համատեքստում պատկերվում է մահվան դատապարտված հիվանդ տղայի թաքուն հանդիպումը սիրած աղջկա հետ. «Անոր ակոսներեն արիւնոտ աղեղներ ինկան, եղերական մանեակներու պէս, իր բազուկներուն ու ծիծերուն, բայց որ կեցաւ սակայն, մտիկ ընելով հեքիաթն ու երգը, զինով՝ ու տարուած այդ վայրկեաններուն իսկ, ու կղպեց բերանը: Որուն ավերը անհուն աչքերու պէս լաց եղան իր մէջքին վրայ ու խորովուեցան. Բայց մտիկ ըրին: Ու ան գառնուկի մը պէս խելօք ձգեց անոր միսերը»¹²: «Ամէն անգամ, այդ ձայնին սուրին տակ Մաննային դէմքը դեփդեղին կ'ըլլայ: Աչքերը կ'ուռին: Ու մատները կ'երթան երեսները պահելու, մինչ անոնց ճեղքերէն մանր աղբիւրի մը պէս կը հոսի բառը.-Անուշիկ մամաս»¹³:

Միշտ չէ, որ համեմատության մեջ առկա են երեք անդամները, երբեմն բացակայում է համեմատության հիմքը՝ հատկանիշը: Դա սովորաբար լինում է այն դեպքում, երբ տվյալ առարկան բնորոշվում է մեկ հիմնական հատկանիշով, որը տվյալ դեպքում հատուկ է այդ առարկային, կամ համեմատյալը արտահայտված է փոխանվանաբար: Այս կարգի համեմատությունները կոչվում են **երկանդամ** և կառուցվում են կապերով ու համեմատիչ բառերով.

10. Ֆ. Խլղաթյան, Խոսքի պատկերավորությունն իբրև ոճաբանական գիտակարգ, Հայագիտության և գուգադրական լեզվաբանության հարցեր, Բ պրակ, Ե., 2002, էջ 40:

11. Հակոբ Օշական, Երկեր, էջ 257:

12. Հակոբ Օշական, Ծակ-պտուկը, Անթիլիաս, 1996, էջ 41-42:

13. Հակոբ Օշական, Երբ պզտիկ են, Պէյրութ, 1998, էջ 167:

«Պաղտոն նորեն թրթռաց իր երազին մեջ: Հիմա, ան բաղնիքն էր տակավին, ապահովաբար միս-մինակ: Հիմա ջուրը կպագներ անոր նշխարքի պես միսը. հիմա շատրվանին տակ ան իր պորտը տված էր տաքուկ ջուրի արծաթե լեզվին...»¹⁴: Ինչպես տեսնում ենք, չի նշվում, թե նշխարքի որ հատկանիշի հետ է համեմատվում աղջկա մարմինը: Նման համեմատությունները, ի դեպ, ընթերցողին մտածելու, երևակայելու հնարավորություն են տալիս: «Հույս, երազ չկա իր մեջ: Տեսակ մը ծերուկի սեր, իր սիրտին մեջ չմարած տաքություն մը կարթննա մոխիրի տակեն կամաց-կամաց բացվող կրակի նման»¹⁵: «Հաճի Ստեփանը գուցե կ'ապրեր վերստին այն շրջանը, երբ Նազիկին սիրուն արին էր թափեր, բայց քիչ ետքը, առաջին անգամ զայն գիրկը առած պահուն, լացեր էր տղու մը պես, գլուխը դրած անոր կուրծքին, ի՜նք՝ որ կիները սիկառի թուղթի պես կը պլորեր ու կը նետեր թքնելով»¹⁶:

Հաճախ անհատի բնավորության առանձին գծեր, հոգեկան ապրումներ, արտաքին գծեր ավելի պատկերավոր նկարագրելու համար գուգահեռներ են անցկացվում դրանց և բնության երևույթների միջև: Այդ գուգահեռները օգնում են թափանցել հերոսի ներաշխարհը. «Մինակության չարչարանքը, անվերադարձ կորուստի մը ճանչցված ցավը փոթորկեցին զայն: Իր սիրտը կգալարվեր, կրակին բռնված թուղթի մը պես: Ու մեկեն ի մեկ խենթենալու չափ սիրեց Հեղնա ապլան»¹⁷: Գյուղում «քիչ պատահող» շիկահեր ու կապուտաչյա գեղեցկուհին ամուսնանում է մեծահարուստի հետ: Գյուղի բոլոր տղաների երազանքը եղած այդ աղջիկը ամուսնու տանը ճակատագրի բերմամբ հանդիպում է իր պատանեկան տարիների սիրուն և նորից փոթորկում երիտասարդի սիրտը. «Քիչ ետքը կուգա աղջնակը, - ու՜վ պիտի ուզեր Քուղիկին տեղը ըլլալով, հարս ըսել անոր, - կթելու կովերը և տղեկը կբռնե զսպված եղնիկի մը նման իր հոգին, պահելու համար իր հանդարտությունը և կնային անոնք իրարու՝ կենդանիին փորին տակեն, ճիշտ այնպես, ինչպես նայեր էր իրենց մանկությունը, իրենց պզտիկ ծակին առջևեն»¹⁸:

«Մեփ-սեւ մետաքսին մեջէն անոր միսերը, մանաւանդ վիզին փոքուածքեն, կը ճառագայթէին «նշխարքի խմորին» պես, ինչպես պիտի ըսեր Նազիկին մահէն ետք»¹⁹:

Համեմատությունները հաճախ ծառայում են նաև գեղեցիկ բնապատկերների ստեղծմանը: Այս դեպքում էլ բնությունն է համեմատվում մարդկային այս կամ այն հատկանիշի հետ: Ահա ասվածը փաստող օրինակներ. «Այդ տեղվանքը խոտերը իրենց գույն-գույն գլուխներով շղվուն աղջիկներու պես կծռին քիչ մը, կքսվին երեսիդ, համբույրի փափկություն մը

14. Հակոբ Օշական, Երկեր, էջ 87:

15. Նույն տեղում, էջ 183-184:

16. Յակոբ Օշական, Ծակ-պտուկը, էջ 154:

17. Հակոբ Օշական, Երկեր, էջ 123:

18. Նույն տեղում, էջ 240:

19. Յակոբ Օշական, Ծակ-պտուկը, էջ 196:

պտտցնելով միսերուդ վրա»²⁰: Կամ՝ «Բայց ջուրը, անկնճիռ տասնհինգ տարու աղջկան մը նման, կվառի արևին տակ, մեծ ու միակտուր: Ու դիմացի եզերքեն լեռան կոնակը կը նիհարնա դեպի վեր: Ոչ մեկ վանկ: Ոտքիս՝ ջուրին պզտիկ ոլորուն հեծքը, որ ավագին երկարած մեծ համբույր մըն է»²¹:

Օշականի պատմվածքներում և վիպակներում լայնորեն օգտագործված է համեմատությունների մի այլ տեսակ ևս՝ **զուգահեռականությունը**, որը դարձյալ համեմատություն է, բայց առանց համեմատության երկու եզրերը իրար կապող համեմատիչ բառերի: Զուգահեռականությունը ներքին համեմատություն է՝ մտքերի զուգորդման միջոցով: Զուգահեռ համեմատության այս տեսակը ավել խոսուն է. «Երբեք չուզեց մտահոգ ըլլալ այդ խենթի սերին հետևանքներովը: Ի՞նչ էր վերջապես այդ տղան. փողոցն գտնված զվարճալիք մը, զոր սիրած ատենդ ազատ ես մեկդի նետելու: Շատ բարի կըլլաս, երբ խաղալիքը անվնաս ձեռքեդ դուրս ելլե»²²: Հետևյալ հատվածում պատմվածքի հերոսը, որ ջարդերը վերապրած գաղթական է, լսելով հայրենակիցների գալու մասին, գնում է նրանց ընդառաջ՝ անտեսելով հիվանդությունն ու ուժերի լքումը և «մահանում է բարձունքը հաղթահարելուն պես»: Ահա թե ինչու նրա այդ ճանապարհը համեմատվում է Գողգոթայի հետ. «Աղբարիկ կելլար. Գողգոթան կելլար: Քանի ժամեն գտավ բլուրի տակի սարահարթը: Երբ հարթ գետինը գտավ, հանգչեցավ կանաչին վրա: Առջին լիճը պառկեր էր կաթի պես ձերմակ»²³: Իսկ այս հատվածում ծխանի ծուխը համեմատվում է թանկագին զարդի ու քմայքի ժապավենի հետ, քանի որ կյանք է խորհրդանշում. «Բայց չարաշուք բան էր տեսնել ծխանը, որ ամառ ու ձմեռ կմնար աղքատ ու եզակի, երբ արևմուտքի բոլոր տանիքներեն, քմայքի ժապավեններու նման ծուխերը կշտկեին, բերելով այդպես թանկագին զարդը, որ կյանքը կխորհրդանշե ու մարդերուն խորհուրդը կտանի օդերուն»²⁴: «Անիկա կնայեր անխոս իր նայվածքը, որ նյութացած պաղատանք մըն էր գրեթե»²⁵:

Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների ու երևույթների միջև ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը ոչ միայն նուրբ ճաշակի, բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է: Օշականի կենսափորձն ու կյանքի խորը իմացությունը թույլ են տալիս նրան համեմատությունների միջոցով կատարել եզրահանգումներ, որոնք մտքի յուրահատուկ խտացումներ են: Այսպես՝ «Ու անխօսուկ, սուսիկ, ջնջուած՝ սկսաւ անիկա որբին լացը: Ան՝ որ կը նմանի աշնան նիհար անձրեւներուն, կու գայ ու չի հատնիր ու կենալ չի գիտեր: Որ արցունք ալ չէ: Տեսակ մը անգայտ թանձրացու՝ մը մեր հոգիին, որ այդպէս կ'ուզէ դուրս տալ ինչ որ չի

20. Հակոբ Օշական, Երկեր, էջ 46:

21. Նույն տեղում, էջ 256:

22. Նույն տեղում, էջ 85:

23. Նույն տեղում, էջ 164:

24. Նույն տեղում, էջ 333:

25. Նույն տեղում, էջ 366:

կրնար տանիլ»²⁶: «Ու այն անդունդէն, որ մարդերու սիրտ կը կոչուի, իրեն կ'երկննան շշուկներ, վախկոտ ու համեստ ու կը պատմեն իրեն պարզ, բայց խորունկ բաներ: Աշխարհը մինակ մեղք, աղտ, հիւանդութիւն կամ գինովութիւն չէ: Անիկա համակերպուած հերոսութիւն ալ է»²⁷: «Ըլլա անիկա նուրբ ու ժպտուն, ցողի մը պէս ու արտայտին երգին պէս բարի՛, բարի՛, բարի՛:

Ապրելու նահատակությունը, հոգի ըսված թույնէ շոգին՝ դժվար է տանիլ առանց բարության»²⁸:

Գեղարվեստական խոսքում եղած համեմատությունները չեն սահմանափակվում միայն այս կամ այն կադապարներով և կարող են ունենալ դրսևորման բազմազան ձևեր: Հաճախ են հանդիպում իրար հաջորդող համեմատություններ, որոնք ստեղծում են գեղարվեստական հզոր պատկեր: Նույն առարկան համեմատվում է տարբեր առարկաների հետ այս կամ այն հատկանիշի հիման վրա: Սրանք կոչվում են **ծավալուն** համեմատություններ. երբ համեմատվող առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի լայն, ընդարձակ է տրվում, որի շնորհիվ ստեղծվում է մի ամբողջական, ավարտուն գեղարվեստական պատկեր: Հետևյալ համատեքստում թուրք կանայք չեն կարողացել կիսել մարդկային ավարը՝ հայ երեխային: Վեճը լուծվում է արդարացի՝ «չկա կիսելու բան, չկա կոժի՛վ՛ սկզբունքով. «Ու կակաչի պէս, մատղաշ ցորենի հասկի մը պէս աղուոր այդ դիակը բաւական եղաւ խաղաղութիւնը բերելու վրդովուած խղճմտանքին»²⁹: Կամ՝ «Մարդն է խոսողը: Բայց անոր ձայնը ցուրտ է եւ օտար: Ու անոր ձայնը խոռոչի մը կը նմանի, ապառաժ լեռան մը սիրտին փորուած: Ու անոր մարմինն ալ քար է, երկաթ է, հող է: Այնքան ցուրտ է անիկա մարդերուն օրէնքներէն»³⁰: «Ձայնը կելլէ, ողբի մը պէս ծանր ու սրնգի մը չափ թեթև: Մետաքսի թել մըն է, փոխնիփոխ գույն նետող, հովին դեմ վետվետուն: Ո՛հ թելը կերգէ, ոսկի երգն իր մենության ու սխրանքի»³¹:

Բազմաթիվ են Օշականի պատմվածքներում այն համեմատությունները, որոնք ծառայում են ստեղծագործությանը պատկերավորություն, արտահայտչականություն, թարմություն, ինքնատիպություն հաղորդելուն: Դրանով հանդերձ՝ պետք է նշել նաև, որ հեղինակը ունի նաև ոչ այնքան հաջող համեմատություններ, որոնք, ճիշտ է, պատկերը դարձնում են իրական, բայց թերի են գեղագիտական տեսակետից: Օրինակ՝ «...սև դեմքին վրա երկար հիվանդության մը դեղնությունը մեղմության պէս բան մը կը բերեր. հոնքերը շատցեր ու բարձրացեր էին ջուրը դրված սոխի պաճերուն պէս»³²: «Պատանի եմ ես: Ո՛հ նիհար, ու գունատ, ու հիվանդ պատանի: Ու ճերմկած իմ

26. Յակոբ Օշական, Ծակ-պտուկը, էջ 79:

27. Նույն տեղում, էջ 101:

28. Հակոբ Օշական, Երկեր, էջ 289:

29. Յակոբ Օշական, Կայսերական յաղթերգություն, էջ 32:

30. Յակոբ Օշական, Երբ պզտիկ են, էջ 162:

31. Հակոբ Օշական, Երկեր, էջ 286:

32. Նույն տեղում, էջ 164:

մատներուս վրա լիճին ջուրը կդեղնի, մեռելի արցունքին նման»³³: «Արցունքը չէր կրցած, իր վագրին մէջ, մաքրել արիւնին լերդացած կտորները, որոնք նայուածքը կ'ընէին պղտոր, կտրուած կաթի պէս»³⁴: «Գլուխը ծռած էր շատ դեպի ուսը, փրթող դդումի մը պէս դրված հոն: Աչքերը բաց էին ու լույսը արյունոտ երակներու կվերածվեր անոնց ծիածանին վրա»³⁵:

Այսպիսով, Օշականի փոքր արձակում ներկայացված է համեմատությունների տեսակների գրեթե ողջ բազմազանությունը: Դրանք ներկայանում են հիմնականում համեմատական կառույցների չորս տեսակով՝ եռաբաղադրիչ, երկբաղադրիչ, առանց համեմատիչ բառերի /գուգահեռականություն/, ծավալուն:

Այդ համեմատությունները կատարում են հետևյալ գործառույթները՝

- խոսքին հաղորդում են ժողովրդայնություն,
- արտահայտում են հեղինակի վերաբերմունքը, հույզերը, մտածելակերպն ու աշխարհընկալումը,
- նպաստում են հերոսի հոգեբանության, հոգեվիճակի, խառնվածքի, իրադրության, բնության տեսարանների գեղարվեստական պատկերմանը,
- երկը դարձնում են պատկերավոր, արտահայտիչ, ինքնատիպ, գեղեցիկ:

Казарян Шушаник-Сравнения в малой прозе А. Ошакана.-Рассказы и повести А. Ошакана богаты способами образной выражении. Сравнения, как наиболее активные литературно-художественные приемы, употребляются в основном в речи автора. Они представлены 4 типами компаративных построений: трехкомпонентные, двухкомпонентные, без сравнительных союзов (параллелизм), развернутые. Эти сравнения выполняют следующие функции:

- придают речи народность,
- выражают отношение, эмоции, образ мышления и миропонимание автора,
- способствуют художественному описанию ситуации, среды, явлений природы, душевного состояния и характера героев,
- делают произведение выразительным, образным, оригинальным и художественно совершенным.

Ghazaryan Shushanik – The comparisons of H. Oshakan's little prose.- The little prose of H.Oshakan is rich with picturesque funds. From that comparisons are quite much used and basically they are in the author's speech. They are presented with four types of comparative structures: double component, three components, without comparative words (parallel) and comprehensive.

Those comparisons serve the following purposes:

- Give to the speech democracy
- Show the author's attitude, emotions, mentality and perception of the world
- Help the artistic description of hero's emotional state, character, situation, and environment and nature scenes.
- Make the creation figurative, expressive, unique and beautiful.

33. Նույն տեղում, էջ 254:

34. Յակոբ Օշական, Ծակ-պտուկը, էջ 60:

35. Նակոբ Օշական, Երկեր, էջ 375:

**ԱՆԿԱՆ ԱՐՄԱՏՈՎ ԵՎ ԿԱԽՅԱԼ ԲԱՅԱՀԻՄՔՈՎ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Բառակազմական տեսանկյունից բառապաշարի գերակշիռ մասը կազմող բաղադրյալ բառերը, ինչպես հայտնի է, իրար հետ կապված են որոշակի սերման հարաբերությամբ: Համանունները, որպես ելակետային սկզբնաձև՝ նախատիպ հիմք, կարող են զուգորդվել արմատների և ածանցների հետ և նոր բառեր կազմել: Ելնելով այս ամենից՝ սույն հոդվածում կառանձնացնենք համանունության այնպիսի մի ենթախումբ, որի մեջ մտնող համանունական շարքերից յուրաքանչյուրի առաջին ելակետային միավորը բառային ինքնուրույն գործածություն ունեցող՝ արմատական բառ է, իսկ երկրորդ կամ երրորդ (կամ այլ) եզրը՝ բայահիմք, ինչպես՝ *թափ*¹ «*ուժ, կարողություն*»-*թափ*² «*թափել բայի հիմք*» համանունական շարքից *թափ*¹-ը սերող հիմք է մի շարք նոր բառերի համար:

*Թափ*¹ «*ուժ, կարողություն*»-ից կազմվում են՝

1) Ածանցավոր՝ **թափով** (սա իրականում *թափ*-ի գործ. հոլովն է, այժմ ունի «արագ, արագությամբ» իմաստը),

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+գոյ.՝ **թափանիվ, արծվաթափ, թափեթափ, բ)** ած.+գոյ.՝ **մեծաթափ, հզորաթափ, հսկայաթափ, սրաթափ, խոլաթափ, գ)** գոյ.+բայահիմք՝ **թափալից, թափընթաց, դ)** մակբայ+գոյ.՝ **հանկարծաթափ:** Բարդածանցավոր ձևերից են՝ **ահագնաթափ, ուժգնաթափ, մոլեգնաթափ, ահեղաթափ, թափավազք:**

*Թափ*² «*թափել բայի հիմք*»-ը բառակազմության ժամանակ բարդ բառերում հանդես է գալիս որպես բաղադրող հիմք, ինչպես՝ գոյ.+բայահիմք կաղապարով բառերում՝ **լեռնաթափ, կարկտաթափ, մազաթափ, մոմաթափ, հետաթափ, հողաթափ, հուսաթափ, ձյունաթափ, տերևաթափ, ներկաթափ, աղեթափ, ատամնաթափ, բեռնաթափ, անիվաթափ, ծաղկաթափ, խավաթափ, թերթաթափ, թեփաթափ, թովաթափ, ցողաթափ** և այլն:

Ածանցավոր ձևերում *թափ*²-ից կազմվում են նոր բառեր, ինչպես՝ *թափոն*, *թափիչ* («Չուլելու կամ թափելու կաղապար»), *թափկան*, *թափնոց* («ժող. պտուղներ թափ տալու երկայն փայտե ձող. զոլա»), *թափծու(-ո)* (արևմտհ., նշ. է՝ «թափածո, ձուլածո», նաև՝ փխբ. իմ.՝ «շինծու, կեղծ»), *թափվածք*, *թափուր*, **թափ(վ)ելիք** և այլն: Կազմվում են մի շարք բայեր՝ **թափել, թափահարել, թափոտել, թափթփել, արտաթափել:**

*Թուխ*¹ «*սև, գորշ*»-*թուխ*² «*թխել բայի անկատարի հիմքը*» համանունական շարքից *թուխ*¹-ը, մասնակցելով բառակազմությանը, ունենում է՝

1) ածանցավոր ձևեր՝ **ինչպես՝ թխավուն, թուխլիկ** (բաղադրությունները ստացել են *արմատի ցույց տված հատկանիշի մոտ, նրանից քիչ պակաս* բառակազմական նշանակություն):

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) ած.+գոյ.՝ **թուխածամ** (որից՝ **թուխածամավոր**), **թուխամագ, թուխաչ** (որից՝ **թուխաչյա, թուխաչվի**), **թուխավարս, թուխդեղ, թուխերես, թխադեմ, թխաթույր, թխակեղև, թխակերպ, թխապտուղ, թխատես, թխերանգ, թխագույն, թխաբեղ, թխաբաշ, թխագանգուր, բ)** ած.+բայահիմք՝ **թխածուփ, գ)** ած.+ած.՝ **թխանուշ, թխագեղ, թխագորշ, սևաթուխ, կարմրաթուխ, թուխումուխ, թխաթուխ**:

Թուխ²-ը բառակազմության ժամանակ լինում է բաղադրող հիմք, ինչպես՝ ա) բարդ բառերում՝ **հացթուխ** (գոյ.+բայահիմք), **նորաթուխ** (ած.+բայահիմք), **ինքնաթուխ**¹ (դերանուն+բայահիմք), բ) ածանցավոր ձևերում սերող հիմք է դառնում, ինչպես՝ **թխածո** (ուր –ածո ածանցը բաղադրյալ արմատին հաղորդում է «նախատիպ բայի գործողության արդյունք» բառակազմական նշանակություն), **թխովի** (կազմվել է ածական՝ «արմատի ցույց տված գործողությանը ենթարկված եղող կամ ենթարկվող» բառակազմական նշանակությամբ), **թխվածք, թխվածքեղեն, թուխս**²:

*Փոր*¹ «մարմնի մաս, որովայն»-*փոր*² «փորվածք, փորել բայի հիքք, փռս տեղ» համանունական շարքից փոր¹-ը, մասնակցելով բառակազմությանը, ունենում է իմաստային նրբություններ, այսինքն՝ արտահայտում է «որովայն» իմաստը (մեծ մասամբ), արտահայտում է «հացի միջուկ» իմաստը, ինչպես՝ **հացափոր**, արտահայտում է նաև «որոշ իրերի ուռուցիկ մասը» իմաստը, ինչպես՝ **մեծափոր, հաստափոր, լայնափոր** և այլն:

*Փոր*¹ «մարմնի մաս, որովայն»-ից կազմվում են՝

1) ածանցավոր ձևեր՝ **փորոք, փորային, փորեղ,**

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+գոյ.՝ **փորաճարպ, փորատակ, փորացավ, փորընդերք, փորալող, բ)** գոյ.+բայահիմք՝ **փորաբաց/փորբաց, փորախոս, փորապաշտ, փորաքարշ, գ)** ած.+գոյ.՝ **լայնափոր, կլորափոր, մեծափոր, հաստափոր, դ)** դերբայ+գոյ.՝ **ուռածափոր,**

3) Բարդածանցավոր բառեր՝ **փորաթեփուկ, փորախոռոչ, փորխոռություն, փորհարինք** կամ **փորհարություն, փորացավանք**:

*Փոր*² «փորվածք, փորել բայի հիմքը, փռս տեղ»-ից կազմվում են՝

¹ Ս. Գալստյանը նշում է, որ հայերենի բառարաններում թեև **ինքը** դերանվամբ կազմություններից արձանագրված են բազմաթիվ երկարմատ իսկական բարդություններ, իսկ այդ կազմությունների երկրորդ բաղադրիչների գերակշռող մասը բուն բայարմատներ են, սակայն գտնում է, որ այդ կապակցություններում **ինքն** դերանունը երրորդ դեմքի գաղափար չի արտահայտում, այլ դրա կիրառությունը ավելի շատ ածանցական է համարում, նշանակում է՝ «1.երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության իրեն ուղղված լինելը, 2.երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության առանց որևէ օգնության, ինքնին կատարվելը», Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 203:

1) ածանցավոր ձևեր, ինչպես՝ **փորեք** (ուր փոր²-ը ունի «փայտե աման՝ փորված կոճղի մեջ» իմաստը), **փորոք** («խորշ» իմաստով), **փորում**, **փորածո**, **փորակ**, **փորատ**, **փորիչ**, **փորվածք**, **ընդփորվածք**, **արտափորիչ** և այլն,

2) բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+բայահիմք՝ **գետնափոր**, **բահափոր**, **գերեզմանափոր**, **այգեփոր**, **փայտփոր**, **վիմափոր**, **հորափոր**, **հողափոր**, **հիմնափոր**, **ժայռափոր**, **խորշափոր**, **առվափոր**, **արծաթափոր**³, բ) մակբայ+բայահիմք՝ **նորափոր**, **կրկնափոր** և այլն,

3) բարդածանցավոր բառեր՝ **ատամնափորիչ**, **փորատադույլ**, **խրամատափոր**:

Եռ¹ «երեք»-ից կազմվում են՝

1) ածանցավոր ձևեր, ինչպես՝ **եռյակ**, **եռակի**,

2) բարդ բառերում՝ իբրև բարդ բառի առաջին բաղադրիչ՝ սերող հիմք, արտահայտում է «երեք» իմաստը (ընդ որում նման բարդությունների բաղադրիչներն ունեն ստորադասությամբ կապված հարաբերություններ՝ որոշիչ-որոշյալ): Այսպես՝ ա) թվ.+գոյ.՝ **եռաբերան//եռաշեղք**, **եռագիծ**, **եռագլուխ**, **եռագույն**, **եռաթև**, **եռաթիվ**, **եռաթերթ**, **եռալար**, **եռալեզու**, **եռախավ**, **եռածալ**, **եռականջ**, **եռակատար**, **եռակող**, **եռահատոր**, **եռահարկ**, **եռաձայն**, **եռաճյուղ**, **եռամաս**, **եռանիշ**, **եռանիվ**, **եռաշերտ**, **եռավանկ**, **եռատող**, **եռափեղկ**, **եռափող**, **եռատոն** և այլն:

Բարդածանցավոր բառերից են՝ **եռածորակ**, **եռանկյուն**, **եռահնչյուն**, **եռադաշտային**, **եռադաշտություն**, **եռակողմյա//եռակողմյան**, **եռահարկյան**, **եռկողանի**, **եռոտանի** և այլն: Բ) Կան մի քանի բարդ բառեր էլ թվ.+բայահիմք կաղապարով, ինչպես՝ **եռակազմ**, **եռահյուս**, **եռաբաշխ** և այլն: **Եռաբաժին** բարդածանցավոր բառը կարելի է դիտել և՛ թվ.+գոյ.՝ «երեք բաժին», և՛ թվ. + բայահիմք՝ «երեքի բաժանված»:

Եռ² «եռալ բայի արմատ»-ից* կազմվում են՝

1) ածանցավոր ձևեր՝ **եռք** (*գործողության անուն* բառակազմական նշանակությամբ), **եռում**, **եռանդ**, **եռման** (նման ածանցով բառերն հատուկ են բարբառներին, սակայն անցել են խոսակցականին և մտել գրական լեզու), **եռուն**, **եռացկոտ** (ունի *արմատի ցույց տված գործողության կատարմանը տրամադիր լինելու* բառակազմական նշանակությունը), **եռացկուն//եռացկան** բաղադրության մեջ բայարմատից կազմվել է ածական՝ *արմատի ցույց տված գործողության կատարման հակում ունեցող կամ մշտապես կատարող* բառակազմական նշանակությամբ:

³ Ի դեպ, **փորագիր** բառը, որպես նախատիպ, հիմք է դառնում մի շարք բառերի համար՝ **փորագրագարդ**, **փորագրանկար**, **փորագրատուն** (հնգ.), **փորագրարվեստ**, **փորագրական**, **փորագրիչ**, **փորագրովի**, **փորագրություն**, **փորագրում**, **փորագրել**, **փորագրելիք** և այլն:

*Եռ²-ը կարող է ինքնուրույն գործածություն ունենալ (ինչպես՝ Եռը իջել էր:) Կարող է հարադրական բայ դառնալ, ինչպես՝ եռ գալ=եռալ: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Ե., 969, էջ 556:

Ասենք, որ եռ²-ը կարող է նաև փոխաբերական իմաստ ունենալ, ինչպես, օրինակ՝ **եռուն** բառը նշանակում է «եռացող», բայց ունի նաև փոխաբերական իմաստ՝ «բուռն, աշխույժ»: Այսպիսի իմաստ կարելի է տեսնել նաև **«եռանդ»** բառի մեջ, որը նշանակում է «ներքին ուժ, աշխուժություն», թեև արդի հայերենի համար որպես ածանց լիովին չի գիտակցվում *անդ* ձևույթը: **Եռանդ** բառից էլ ունենք՝ **եռանդագին, եռանդալի/եռանդալից, եռանդահորձ** (հզվդ.), **եռանդոտ, եռանդուն** և այլն:

2) Բարդ բառեր՝ հետևյալ կաղապարներով՝ ա) գոյ.+գոյ.՝ **եռուքոր**. մի փոքր տարակուսանք կա, քանի որ այստեղ տեսնում ենք և՛ գոյ.+գոյ. (հիշենք եռ²-ի ինքնուրույն գործածության մասին), և՛ բայահիմք-բայահիմք, նույնը կարելի է ասել նաև **եռուզեռ, եռնեփ** բառերի մասին (չնայած այստեղ ավելի շատ «եռալը և եփելը» իմաստն է, այսինքն՝ բայահիմք+բայահիմք):

Նշենք նաև, որ **եռուքոր** բառի մեջ եռ²-ը ունի «մարմաջ, քոր, մորմոք, գրգիռ» փոխաբերական իմաստը: Փոխաբերական իմաստ ունի եռ²-ը նաև **«եռմունք»** բառում, որ նշանակում է «հուզմունք» (ինչպես նկատեցինք, վերոհիշյալ բարդությունները (**եռուքոր, եռուզեռ, եռնեփ**) համադասական հարաբերություն են արտահայտում. շաղկապական հարադրություններից ստացված կցական բարդություններ են):

բ) մակբայ+բայահիմք, ինչպես՝ **մշտաեռ**:

Փրփրաեռ բառն ունի «սաստիկ փրփրած» իմաստը:

Ինչպես ասացինք, եռ²-ը **եռալ** բայի հիմքն է՝ արմատը, որը կարող է ունենալ նաև «բորբոքել, գրգռել» փոխաբերական իմաստը: **Եռալ** բայից էլ ունենք **եռացնել** պատճառական ձևը:

Ասենք նաև, որ եռ¹**«երեք»-եռ² «եռալը»** երկանդամ համանունական շարքին կարող ենք ավելացնել եռ³, որն ունի **«գիծ, զոդում»** իմաստը, ինչպես՝ **եռակցում, եռակցել, եռացում, եռացնել, եռքար** և այլն:

Ուսումնասիրելով արմատական համանունների բառակազմական հնարավորությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ համանունական շարքի անդամները, հանդես գալով երկու ձևով՝ իբրև անկախ գործածվող արմատներ և մասամբ կախյալ, տարբեր հաճախականությամբ կարող են գուգորդվել հիմնական և երկրորդական ձևույթների հետ՝ կազմելով նոր բառեր՝ բառակազմական կաղապարներում պահպանելով իրենց բուն բառիմաստը, երբեմն էլ ձեռք բերելով նոր, փոխաբերական իմաստներ:

Ghamoyan Lusine – Semantics of the Word-building of the Homonyms with the Independent Root and Dependent Verbal Stem. – Homonyms are law-governed phenomenon, because it's impossible to create an apart form for each concept and its corresponding word-meaning. The homonyms can appear in two forms: as independently using roots and partly dependent, which can associate with an equivalent and subordinating relation with basic and secondary morphemes, composing new words, preserving their essential word-meaning in the word-formative models, and sometimes acquiring new, metaphoric meanings.

**«ԲԱՐԿԱՆԱԼ» ԵՎ «ՎԱԽԵՆԱԼ» ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱ-
ԲԱՆԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԻՏԱԼԵՐԵՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Իտալերենի և հայերենի կազմաբանական դարձվածքների իմաստային ընդհանրությունները և տարբերությունները վեր հանելու նպատակով ուսումնասիրվել են իտալերենի և հայերենի ԿԴ-ների առկայությունը *բարկանալ* և *վախենալ* իմաստային դաշտերում: Հետազոտության նպատակով իտալերեն օրինակները վերցվել են Կ.Լապուչիի *Իտալերենի դարձվածաբանական* և նույն հեղինակի՝ *Իտալական ասացվածքներ* բառարաններից (Lapucci C. *"Modi di dire della lingua italiana"*, Valmartina Editore in Firenze, 1984 և Lapucci C. *"Dizionario dei proverbi italiani"*, Le Monnier, 2006): Հայերենի օրինակները՝ Ա. Սուքիասյանի *Հայերենի հոմանիշների բացատրական բառարանից* (Սուքիասյան Ա.Մ., «Հայերենի հոմանիշների բացատրական բառարան», ԵՊՀ հրատ., Ե., 2009): Հետազոտության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը:

Ուսումնասիրելով *բարկանալ* հասկացությոն ներկայացնող իմաստային դաշտի՝ կազմաբանական բաղադրիչներով դարձվածքների իմաստագործառական առանձնահատկությունները՝ արձանագրվել են հետևյալ իրողությունները:

Աչք բաղադրիչով կազմաբանական դարձվածքներ առկա են թե՛ իտալերենում և թե՛ հայերենում: Իտալերենում դրանք երկուսն են. առաջինում առանձնանում են իրենց յուրահատուկ բառացի թարգմանությամբ՝ *perdere il lume degli occhi*, *աչքի լույսը կորցնել*, ունի բարկանալու իմաստ, իսկ հայերենում գործածվում է *կուրանալ* նշանակությամբ: Այս դեպքում գործունենք դարձվածաբանության մեջ առկա *կեղծ բարեկամներ* կոչված բառիմաստային երևույթի հետ, երբ բացարձակապես միևնույն արտահայտության պլանը տարբեր բովանդակային պլանների դրսևորման միջոց է, փաստորեն այս դեպքում առկա են նույնանուն դարձվածքներ: *Աչք* բաղադրիչով մյուս դարձվածքները կամ ավելի ճիշտ՝ դարձվածային տարբերակներն են՝ *avere gli occhi fuori delle orbite/schizzanti dalle orbite*, բառացի՝ *աչքերը բնից դուրս գալ* և *աչքերը բնից դուրս պրծնել*, որոնցում նկատվում է, որ զայրույթի աստիճանի չափորոշիչ է *աչքի բունը*, հանգիստ ժամանակ աչքն իր տեղում է պահում:

Աչք բաղադրիչով հայերենի դարձվածքները, սակայն, *բարկանալ* իմաստն արտահայտում են աչքերում *արյան* և *կրակի* առկայության միջոցով՝

արյունը աչքերը կոխել, աչքերը արյուն կոխել, աչքի լույսից պեծ ու կրակ թափվել (վար թափել):

Գլուխ բաղադրիչը *բարկանալ* իմաստային դաշտի իտալերեն դարձվածքներում հանդես է գալիս *testa*-գլուխ, *capo*-գլուխ, *cervello*-ուղեղ ձևերով, *montare*-բարձրանալ, *salire*-բարձրանալ, *andare*-գնալ բայաձևերով և ծուխ կամ արյուն լրացումներով, որոնք երեք դարձվածքներին էլ տալիս են միևնույն՝ *զայրույթի իմաստ* արտահայտող բառերի միջոցով. *montare i fumi al capo, alla testa*-բառացի՝ ծխերը գլխին բարձրանալ/տալ, *salire i fumi al cervello*-բառացի՝ ծխերը ուղեղին բարձրանալ, *montare, andare il sangue alla testa*-բառացի՝ արյունը գլուխը գնալ/գլխին բարձրանալ: Վերջինս հայերենում ունի իր գուգահեռ համարժեքը՝ *արյունը գլխին խփել, գանգը տաքանալ* (արյան հոսքից): Հայերենում առկա են նաև *գլխի տուփը վեր կենալ, գլխի կափարիչը շարժվել* դարձվածքները, որոնք իտալերենում չունեն իրենց համարժեքները, քանի որ հայերի լեզվամտածողությանն է բնորոշ գլուխը կամ գանգը կափարիչով պատկերացնելը: Բացի *բարկանալու* գործընթաց արտահայտող դարձվածքներից, հայերենում կան նաև արդեն բարկացած վիճակում գտնվող անձին բնորոշ բարկությունը մեկի վրա թափելու նշանակությունները՝ *բարկությունը (մեկի) գլխին թափել, գլխին կրակ թափել, շան լափը թափել մեկի գլխին և այլն*:

Իտալերենում *սիրտ* բաղադրիչով՝ *բարկանալ* նշանակությամբ, միակ՝ *mangiarsi/mordersi il cuore/fegato* դարձվածքը (*բառացի՝ ուտել/կրծել ինքն իր սիրտը/յարդը*) հայերենում ունի *զայրույթից ինքն իրեն ուտել* համարժեքը: Սակայն հայերենն ունի նման շատ դարձվածքներ, ինչպես՝ *սիրտը ելնել, սիրտը նեղանալ, սիրտը շուռ գալ, սիրտը ճաքել* և այլն, որոնք բառացիորեն կապվում են *սիրտ* օրգանում տեղի ունեցող ֆիզիոլոգիական և կազմաբանական երևույթների հետ:

Հարկ է նշել, որ *սիրտ* բաղադրիչը իտալերենի դարձվածքներում կարելի է տեսնել հիմնականում՝ *հուզմունք, սեր, աստելություն, ուրախություն, տխրություն, ցավ, վիշտ, տառապանք, անտարբերություն* նշանակություններով:

Իտալերենում *քիթ* բաղադրիչով դարձվածքներից՝ *բարկանալ* նշանակությամբ, առկա է՝ *andare i fumi al naso*-բառացի՝ *ծուխը քթից դուրս գալ*, որը նույնպես հայերենում ունի իր *կեղծ բարեկամ*՝ նույնանուն համարժեքը, որը, սակայն, ունի *չափազանց հոգնած լինելու նշանակություն*: Մյուս դարձվածքում՝ *dare la bile al naso*-բառացի՝ *լեղին քթին խփել*, առկա են երկու կազմաբանական բաղադրիչներ՝ *քիթ* և *լեղի*, որոնցից յուրաքանչյուրն իր չափով ներկայացնում է ֆիզիոլոգիական և կազմաբանական առանձնահատկությունները՝ վերագրելով դրանք մարդու բարկությունը արտահայտելու ձևերին:

Իտալերենի *լեղի* բաղադրիչով դարձվածքները, որոնք ունեն *բարկանալ* նշանակություն՝ *montare la bile fin sotto il palato*-բառացի՝ *լեղին մինչև քիմքի տակը բարձրանալ* կամ *dare la bile al naso*-բառացի՝ *լեղին քթին տալ/խփել*,

արտահայտում են մարդկային ցասումը՝ թաքնված ձևով համեմատելով այն լեդու՝ օրգանիզմում չափից ավելի քանակությամբ արտազատվելու հետ: *Crepere dalla bile*-բառացի՝ լեդուց պայթել, դարձվածքը գործածվում է *բարկանալ* նշանակությամբ, մինչդեռ *essere verde dalla bile* – լեդուց կանաչելը՝ ոչ միայն այն կարող է նշանակել նաև *նախանձից կանաչել*: Մինչդեռ հայերենի հայտնի՝ *լեդին պատռվել* և նման այլ դարձվածքներ կապվում են հիմնականում վախի զգացողության հետ. աշխատանքում դրանք տեղ են գտել *վախենալ* իմաստային դաշտում:

Բերան բաղադրիչով դարձվածքներում նույնպես իտալերենը դիմել է մարդկային ցասման վառ արտահայտված միջոցների՝ *avere la schiuma alla bocca* – բառացի՝ *բերանում փրփուր ունենալ*: Հայերենում *տաք ջուրը բերանն առնել* դարձվածքի նշանակությունը հիմնվում է ցավի զգացողության պահին մարդկային վարքագիծը պատկերացնելով, երբ տաք ջրի պատճառած ցավը ակամա կարող է վերջինիս հանել հավասարակշռությունից:

Հոնքեր, նոթեր, ճակատ բաղադրիչներով դարձվածքները՝ *ճակատը կնճռել (կնճռոտել)*, *հոնքերի աղեղը լարել*, *հոնքերը կիտել*, *նոթերը կիտել*, առկա են միայն հայերենում, և նրանց արտահայտած նշանակության հիմքում ընկած է վերը նշված մարմնի մասերի ձևափոխություններով ուղեկցվող դիմախաղը, որը մարդն ունենում է բարկացած ժամանակ:

Բարկանալ հասկացությունը հայերենում զուգորդվում է նաև *ատամների*՝ որոշակի իրավիճակներում, օրինակ, բարկության պահին, ձեռք բերած գործառնությունների հետ՝ *ատամները սրել*, *ատամները իրար տալ (սեղմել)/ մեկի վրա*, *ատամները կրճտացնել (չխկչխկացնել)*: Իտալերենում, իբրև այդպիսին, այն բացակայում է:

Արյուն բառը իտալերենում *բարկություն* արտահայտելիս ուղեկցվում է *եռալ*, *տաք լինել*, *փչանալ* բայերի հետ. դրանք ցույց են տալիս բարկության պահին արյան մեջ տեղի ունեցող փոփոխությունները, որոնք էլ իրենց հերթին համեմատվում են ջերմելու ժամանակ արյան մեջ տեղի ունեցող քիմիական փոփոխությունների հետ. *bollire il sangue nelle vene, ribollire il sangue, avere il sangue caldo/bollente: Guastarsi il sangue* դարձվածքն իր զուգահեռ համարժեքն ունի հայերենում՝ *արյունը պղտորել*: Իտալերենի մյուս դարձվածքը՝ *ribollire il sangue*, իր հերթին կարելի է զուգադրել հայերենի՝ *արյունը տաքանալ* դարձվածքի հետ: Իտալերենի *bollire il sangue nelle vene* դարձվածքը հայերենում ևս առկա է զուգահեռ համարժեքի ձևով՝ *արյունը երակներում եռալ*: Միայն հայերենին բնորոշ դարձվածքներից են՝ *արյունը աչքերը կոխել*, *արյունը գլխին խփել*, *աչքերը արյուն կոխել*:

Ստորև բերված համապատասխան բաղադրիչներով դարձվածքները իրենց համարժեքները չունեն զուգադրվող լեզվում:

Իտալերենում *բարկանալ* նշանակությամբ առկա են *երես* բաղադրիչով հետևյալ դարձվածքները. *fare (o avere) la faccia scura*-բառացի՝ *անել/ունենալ մուգ/սև երես կամ դեմքը մզանալ/դեմքի գույնը փոխվել* և *fare (o avere) la*

faccia feroce – բառացի՝ կատաղի դեմք ընդունել/ունենալ, որը բացի բարկանալ նշանակությունից ունի նաև սպառնալ նշանակություն:

Մազ, աղվամազ բաղադրիչներով իտալերենում առկա են՝ *avere un diavolo (un fulmine) per capello, per pelo* – բառացի՝ մազերում/ աղվամազում հրեշ/կայծակ ունենալ:

Ոտք բաղադրիչով է կազմված *Battere i piedi* – բառացի՝ ոտքերը խփել, դարձվածքը, որն արտահայտում է զայրույթ: Ինչպես հայտնի է, հայերենում առկա է *ոտքը գետնին խփել* դարձվածքը, որն ավելի շուտ նշանակում է՝ մի բան արգելել կամ մի բանից հրաժարվել:

Լյարդ, կուրծք բաղադրիչներով դարձվածքներ առկա են միայն իտալերենում. *scaldarsi il fegato* – բառացի՝ լյարդը տաքացնել, *sentirsi infiammare il petto* – բառացի՝ զգալ, թե ինչպես է հրդեհ ընկնում կրծքում:

Բեղերը կրծոտել դարձվածքը՝ բարկանալ նշանակությամբ բնորոշ է միայն հայերենին:

Այսպիսով՝ վախենալ հասկացությունը խնդրո առարկա երկու լեզուներում էլ առկա է մարմնի տարբեր մասեր ցույց տվող բառերով կազմված մեծ թվով դարձվածքներում:

Իտալերենում այս իմաստային դաշտում *աչք* բաղադրիչով դարձվածքներ չկան, մինչդեռ հայերենում առկա է՝ *աչք ճպել* դարձվածքը, որը նշանակում է վախենալ:

Սիրտ բաղադրիչը իտալերենում վախենալ նշանակությամբ դարձվածքներում հանդես է գալիս, օրինակ, հետևյալ ձևերով. *agghiacciare il cuore* – բառացի՝ արյունը սառչել/սառույց դառնալ, *sentirsi il cuore farsi di ghiaccio* – բառացի՝ զգալ, թե ինչպես է սիրտը սառչում, *tremare il cuore* – բառացի՝ սիրտը դողալ, *cascare il cuore* – բառացի՝ սիրտը ընկնել, *balzare il cuore in gola, in bocca* – բառացի՝ սիրտը կոկորդը/բերանը թռչել: Իտալերենի *tremare il cuore* – բառացի՝ սիրտը դողալ, դարձվածքին, իբրև զուգահեռ տարբերակային համարժեքներ, երբ թե՛ արտահայտության և թե՛ բովանդակային պլանները երկու լեզուներում համընկնում են, հայերենում հանդես են գալիս *սիրտը դողալ, սիրտը դող ընկնել* դարձվածքները: *Ccascare il cuore* – բառացի՝ սիրտը ընկնել իտալերենի դարձվածքի հայերեն համարժեքներ կարող են լինել՝ *սիրտը փորն ընկնել, սիրտը պորտի գլուխը թռչել* դարձվածքները, որտեղ ի տարբերություն իտալերենի, մասավորեցվում է, թե սիրտն ուր է ընկնում (փորը, պորտի գլուխը), մինչդեռ իտալերենի *balzare il cuore in gola, in bocca* – բառացի՝ սիրտը կոկորդը/բերանը թռչել դարձվածքը կարող է զուգադրվել արևմտահայերենի *սիրտը վեր էլնել* դարձվածքին: Ինչ վերաբերում է իտալերենի *agghiacciare il cuore* – բառացի՝ արյունը սառչել/սառույց դառնալ, *sentirsi il cuore farsi di ghiaccio* – բառացի՝ զգալ, թե ինչպես է սիրտը սառչում դարձվածքներին, թերևս կարելի է զուգադրել հայերենի՝ *արյունը սրտում ցամաքել* դարձվածքին, որտեղ, իհարկե, նկատվում է, որ իտալերենում պատկերը ստեղծվում է արյունը սառչելու, իսկ հայերենում՝ սրտում արյունը ցամաքելու՝ բացակայելու, չափազանցության հնարի կիրառմամբ: Իտալերենում առկա մենաբա-

ռույթով արտահայտված *crepacuore*՝ *սրտաճաք*, *սրտապատառ*, խոսակցական լեզվում գործածվող բարդ բառը, որը հիմնականում հանդես է գալիս *morire di crepacuore*- բառացի՝ *մեռնել սրտի կաթվածից* արտահայտության մեջ, կարող է երբեմն ձեռք բերել դարձվածային իմաստ և արտահայտել «ափազանց շատ վախենալ» իմաստը: Ինչ վերաբերում է հայերենի՝ *սրտապատառ լինել*, *սրտաճաք լինել*, *սիրտը փրթել*, *սրտի թելը փրթել*, *սիրտը պատռվել* դարձվածքներին, ապա պետք է ենթադրել, որ այստեղ նույնպես պատկերի հիմքում ընկած է սրտի կաթվածի երևույթը, որը նույնպես փոխաբերաբար, կրկին չափազանցության հնարի գործածմամբ, վերագրվել է դարձվածքներին:

Ինչ վերաբերում է հայերենի՝ *սիրտը փորում/ը ձիավոր դառնալ* դարձվածքին, ապա վերջինիս նշանակության հիմքում ընկած է վախի ժամանակ սրտի արագացված զարկեր ունենալու երևույթը, այսինքն՝ *սիրտ* օրգանի գործառնություններից մեկի չափազանցված արտահայտությունը, որը թաքնված ձևով համեմատվում է ձիավորի ձիավարման արագության հետ: Հետևյալ՝ *սիրտ չանել*, *սիրտ չունենալ*, *սիրտը վախ ընկնել*, *սրտավախ լինել*, *սիրտը ահ ընկնել*, դարձվածքները, որտեղ առկա է նաև *վախ* բաղադրիչը, բնորոշ են միայն հայերենին: Հայերենի՝ *սիրտը թելի վրա լինել* դարձվածքի պատկերը ևս առկա չէ իտալերենի նույն բաղադրիչով իմաստային դաշտի դարձվածքների շարքում:

Իտալերենում *գլուխ* բաղադրիչով դարձվածքներից այս իմաստային դաշտում հանդիպել ենք մեկը՝ *rizzarsi i capelli in testa*-բառացի՝ *գլխի մազերը քիզ-քիզ կանգնել*, այն էլ՝ *մազեր* երկրորդ բաղադրիչի առկայությամբ, իսկ ուսումնասիրված հայերեն նյութերում այն բացակայել է:

Իտալերենում *արյուն* բաղադրիչը նույնպես հաճախակի գործածություն ունի տվյալ իմաստային դաշտը կազմող դարձվածքների շարքում: *Rimanere senza sangue*-բառացի՝ *մնալ անարյուն/արյունը ցամաքել*, *non aver più una goccia di sangue nelle vene* –բառացի՝ *երակներում այլևս ոչ մի կաթիլ արյուն չունենալ/արյունը ցամաքել*, *non rimanere sangue addosso*-բառացի՝ *մեջը արյուն չմնալ/արյունը ցամաքել* իտալերենի դարձվածքները կարող են զուգադրվել հայերենի՝ *արյունը սրտում ցամաքել* դարձվածքի հետ, որում առկա է *սիրտ* բաղադրիչը, որը ճշգրտում է հաղորդում արտահայտությանը: Իտալերենում նույնպես առկա է տեղայնացման երևույթը, որը, սակայն, տարբերվում է հայերենից՝ *երակներում*, *մեջը*: Իտալերենի *perdere il sangue*-բառացի՝ *արյուն կորցնել կամ արյունահոսել*, դարձվածքը կարող է ձևով զուգադրվել հայերենի՝ *սրտից արյուն կաթել* դարձվածքի հետ, սակայն առկա է բովանդակային պլանների տարբերություն, քանի որ, ինչպես գիտենք, հայերենում այն գործածվում է *ափսոսանք*, *ցավ* արտահայտելու համար և ոչ թե՝ վախենալ: *Sentirsi rimescolare il sangue*-բառացի՝ *զգալ, թե ինչպես է արյունը խառնվում* դարձվածքը հայերենում չունի իր զուգահեռ համարժեքը: Իտալերենի *avere il sangue gelato*-բառացի՝ *սառած արյուն ունենալ* դարձվածքի համարժեքը հայերենում *արյունը սառչել*-ն է:

Ոսկոր, ողնաշար բաղադրիչներով իտալերենի երկու՝ *essere senz'ossa*-բառացի՝ լինել առանց ոսկրի, *non avere spina dorsale*-բառացի՝ ողնաշար չունենալ, դարձվածքների հիմքում ընկած են նյարդային համակարգին բնորոշ հատկանիշներ, երբ որոշ գործառնությունների արդյունքում մարդու մարմնի տարբեր մասերը դադարում են զգայուն լինել:

Այս իմաստային դաշտում իտալերենում հանդիպել ենք միայն մեկ դարձվածք՝ միաժամանակ *կոկորդ* և *բերան* բաղադրիչներով կազմված. *balzare il cuore in gola/ in bocca*-բառացի՝ սիրտը կոկորդը/բերանը թռչել, որի մասին արդեն խոսել ենք *սիրտ* բաղադրիչով դարձվածքները մեկնաբանելիս:

Ինչ վերաբերում է *քունք* բաղադրիչին, հարկ է նշել, որ երկու լեզուներում էլ այն գտնվում է ամենաանկենսունակ բաղադրիչների շարքում: Սակայն իտալերենում *վախենալ* իմաստային դաշտում մեկ դարձվածք գտնվել է՝ *suonare le mascelle*-բառացի՝ *քունքերը ձայն հանել/կանչել*: Այս դարձվածքը հայերենում չունի իր համարժեքը:

Հետաքրքրական է, որ իտալերենում *ատամ* բաղադրիչով կազմված դարձվածքը՝ *battere i denti*-բառացի՝ *չխչխկացնել/կրճտացնել ատամները*, զուգադրվում է *վախենալ* գաղափարի հետ, մինչդեռ հայերենում այն հանդիպում է *բարկանալ* իմաստային դաշտում: Այստեղ ևս նկատվում է հոգելեզվաբանության առարկա հանդիսացող երևույթ, այն է՝ երկու տարբեր ազգերի լեզվամտածողության տարբերություն, որի արդյունքում միևնույն արտահայտության ձև ունեցող դարձվածքը կարող է տարբեր բովանդակություն և պատկերներ նշանակել:

Իտալերենի *նոտք, ծունկ* բաղադրիչներով՝ *sentirsi piegare, tremare, mancare le gambe*-բառացի՝ *զգալ, թե ինչպես են ծալվում, դողում նոտքերը կամ չզգալ նոտքերը, tremare le ginocchia*-բառացի՝ *ծնկները ծալվել*, դարձվածքները կարող են զուգադրվել հայերենի՝ *նոտքերը դողալ, թուլանալ, ծնկները ծալվել* դարձվածքների հետ, որոնք նույնպես գործածվում են *վախի* զգացողությունն արտահայտելու համար:

Իտալերենում *վախենալ* իմաստային դաշտում հանդիպում են նաև այնպիսի դարձվածքներ, որոնք պարունակում են *մաշկ, աղվամազ* բաղադրիչներ. *venire la pelle d'oca*-բառացի՝ *մաշկը սագի դառնալ*, դարձվածքը հայերենում իբրև այդպիսին գոյություն չունի, սակայն նույն երևույթը և պատկերը ընկած են *փշաքաղվել* բայի նշանակության հիմքում, որը բացի *վախենալ* նշանակությունից, հայերենում կարող է գործածվել նաև հուզմունքի նշանակությամբ (օրինակ՝ արվեստի գործերի, հուշերի, հիշողությունների ազդեցությամբ): Ինչ վերաբերում է իտալերենի *tremare pelo per pelo*-բառացի՝ *աղվամազ առ աղվամազ դողալ*, դարձվածքին, ապա հայերենում այն առկա չէ:

Իտալերենի՝ *երակ* բաղադրիչով *avere il ghiaccio nelle vene*-բառացի՝ *երակներում սառույց ունենալ*, դարձվածքը վերը նշված՝ *սիրտ* և *արյուն* բաղադրիչներով դարձվածքների հոմանշային տարբերակն է, և հայերենում

առկա է *երականերում արյունը սառել* նույնանուն դարձվածքը, որը սակայն, *մեռնել* իմաստային դաշտին է պատկանում:

Ինչպես տեսանք, *բարկանալ* իմաստային դաշտում, իտալերենի՝ *լեղի* բաղադրիչով դարձվածքները արտահայտում են գայրույթ, մինչդեռ *վախենալ* նշանակությամբ գործածվողներ չենք հանդիպել: Ինչպես նշել ենք *բարկանալ* իմաստային դաշտի մաս կազմող դարձվածքների մեկնաբանության ժամանակ, հայերենում *լեղի* բաղադրիչով դարձվածքները բացակայում են, սակայն դրանք առկա են *վախենալ* նշանակությամբ. *լեղին ճաքել*, *լեղին պատռել*, *լեղին չորանալ* (*ցամաքել*), *լեղին ջուր կտրել* (*ջուր դառնալ*), *լեղաճաք լինել*, *լեղապատառ լինել* *վախից լեղին պայթել*, *վախից լեղին պատռվել*: Վերջին երկու դարձվածքներում առկա է դարձվածքի նշանակության մասին ակնարկող *վախ* բաղադրիչը:

Իտալերենում *թուք* բաղադրիչով կազմված դարձվածքները այս իմաստային դաշտում բացակայում են, մինչդեռ հայերենի դարձվածապաշարից գտել ենք՝ *թուքը կպչել/սառչել*, *թուքը կատիկը թռչել*, *թուքը ցամաքել*, *թուքը չորանալ*, *թուքումուքը կպչել/սառչել/ցամաքել*, դարձվածքները: Եվս մի իրողություն, որը բնորոշ է ուսումնասիրության առարկա լեզուներից միայն մեկին. մի բան, որ տվյալ ազգերի լեզվամտածողության վառ արտացոլման արդյունքն է:

Վախենալ իմաստային դաշտում *երես* բաղադրիչով իտալերեն դարձվածքներ առկա չեն: Դրանք առկա են *բարկանալ* իմաստային դաշտում: Սակայն հայերենում դրանցից են՝ *երեսը թան* (*թանաջուր*) *դառնալ*, *երեսի գույնը գնալ* (*թռչել*): Ինչպես տեսնում ենք, առաջին դարձվածքի *թան/թանաջուր* բառերը և դրանց ռեֆերենտը հայերենին բնորոշ իրակություններ են և չեն կարող իրենց համարժեքն ունենալ այն լեզուներում, որտեղ այդ իրողությունը գոյություն չունի: Այսպիսի դեպքերում է, որ թարգմանիչը դիմում է նկարագրական կամ բացատրական հավելյալ տեքստերի:


Լեզու բաղադրիչով իտալերեն դարձվածքները բացակայում են այս իմաստային դաշտից: Մինչդեռ հայերենի երկու՝ *լեզուն չորանալ*, *լեզուն ցամաքել* դարձվածքները *վախենալ* են նշանակում:

Վախենալ է նշանակում նաև հայերենի *լյարդ*, *թոք*, բաղադրիչներով կազմված հետևյալ դարձվածքը՝ *լերդն ու թոքը ջուր կտրել*: Իտալերենում դարձյալ բացակայում են այս բաղադրիչով կազմված դարձվածքները:

Հայերենի *փոր*՝ խոսակցական լեզվին բնորոշ բաղադրիչով դարձվածքներից են՝ *ձայնը փորը գցել*, *ձայնը փորն ընկնել*, *ձայնը փորը քաշել*, *փորը կատու ընկնել*, իսկ իտալերենում այդ նշանակությամբ և բաղադրիչով դարձվածքներ ևս առկա չեն:

Իտալերենում *պոռոշ* կամ *շրթունք* բաղադրիչներով կազմված դարձվածքներ՝ *վախենալ* նշանակությամբ, առկա չեն, մինչդեռ հայերենում դրանցից են՝ *պոռոշը ճաքել*, *պոռոշը պատռվել*:

Ստորև բերված գծագիրը արտահայտում է *բարկանալ* և *վախենալ* իմաստային դաշտերում տեղ գտած ԿԴ-ների քանակական պատկերը հայերենում և իտալերենում:



Այսպիսով՝ *բարկանալ* իմաստային դաշտում տեղ գտած 28 ԿԴ-ներից 11-ը առկա են միայն իտալերենում, 6-ը՝ միայն հայերենում, 11-ը՝ և՛ իտալերենում, և՛ հայերենում: *Վախենալ* իմաստային դաշտում տեղ գտած 40 ԿԴ-ներից 10-ը առկա են և՛ իտալերենում, և՛ հայերենում, միայն իտալերենում առկա ԿԴ-ները 17-ն են, միայն հայերենում՝ 13-ը:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, II Մաս, Շարահյուսություն, Ե., 1975:
2. Աղայան Է. Բ, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984 :
3. Առաքելյան Ռ., Հոգելեզվաբանություն, Ե., 2007:
4. Բեդիրյան Պ. Ս., Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն, Ե., 1973:
5. Գալստյան Ա. Ս., Փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծություն, Ե., 2008:
6. Հովհաննիսյան Գ., Հոգելեզվաբանություն, Ե., 2011:
7. Lapucci C., Dizionario dei proverbi italiani, Le Monnier, Firenze, 2006.
8. Lapucci C., Modi di dire della lingua italiana, Garzanti Editore, Milano, 1984.
9. Per modo di dire, Dizionario dei modi di dire, Eli, Recanati, 2002.
10. Pittàno G., Dizionario dei modi di dire, Zanichelli editore, Bologna, 2009.

11. Radicchi S., In Italia: Modi di dire ed espressioni idiomatiche, Bonacci editore, Roma, 1985.
12. Սուրբաթյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
13. Սուրբաթյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2009:
14. Зорько Г. Ф., Майзель Б. Н., Скворцова Н. А., Большой итальянско-русский словарь, «Русский язык», Москва, 2000.

Mkryan Aram – Comparative Analysis of the Somatic Phraseological Units Expressing the Meanings “To Be/Get Angry” and “To Be/Get Frightened” (based on the material of Armenian and Italian). –The article deals with the functional-semantic fields representing the concepts “To Be/Get Angry” and “To Be/Get Frightened”. We have analyzed the semantic peculiarities of 28 phraseological units within the semantic field of “To Be/Get Angry” and 40 phraseological units representing the semantic field of “To Be/Get Frightened” and classified them into 3 main groups: phraseological units that exist only in Italian, phraseological units that are found only in Armenian, and those that function in both languages. In conclusion we give some statistic data provided by the comparative analysis.

Мкрян Арам – Сопоставительный анализ соматических фразеологизмов со значениями “сердиться” и “бояться” (на материале армянского и итальянского языков).– В статье рассматриваются функционально-семантические поля, обозначающие концепты “сердиться” и “бояться”. Мы анализируем семантические особенности двадцати восьми фразеологических единиц, представляющих семантическое поле “сердиться” и сорока фразеологических единиц со значением “бояться” в армянском и итальянском языках и классифицируем их следующим образом: ФЕ, которые существуют только в итальянском языке, ФЕ, которые существуют только в армянском языке и ФЕ, которые функционируют в обоих языках. В заключении представлены статистические данные, полученные в результате сопоставительного анализа.

**ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ**

Ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայությունը հաղորդակցվում է հայոց գրական լեզվի երկու տարբերակներով՝ արևելահայերենով և արևմտահայերենով: Աշխարհաբարի այս երկու գրական տարբերակներն ունեն հնչյունական, ուղղագրական, քերականական, ոճական, բառային տարբերություններ:

Մենք անդրադառնում ենք միայն բառային տարբերություններին, քանի որ մեր ուսումնասիրության առարկան դարձվածային միավորներն են, ինչպես նաև նրանց հոմանշությունը, իսկ վերջիններս ուսումնասիրվում են բառագիտություն բաժնում:

Վերջին ժամանակներս արևմտահայերենի բազմաթիվ բառեր են մուտք գործել մեր լեզվի բառապաշար՝ դրանով ստեղծելով ավելի շատ բառային ընդհանրություններ: Ա. Սարգսյանը նշում է, որ դրանք երեք տոկոս են կազմում (հայերենի ընդհանուր բառաքանակը 150 հազար բառային միավոր ընդունելու դեպքում)¹:

Ռ. Սաքապետոյանը կարծում է, որ թռուցիկ քննությունն իսկ ի հայտ է բերում ավելի մեծ թիվ: 2000 թ. լույս տեսած իր «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»-ում շուրջ 16 հազար բառ և դարձվածային միավոր է ընդգրկել, որոնք արևելահայերենի բառապաշարի հետ համեմատելիս ի հայտ են բերում ձևային կամ իմաստային գոնե մեկ տարբերություն²:

Հեղինակի՝ 2011 թ. լույս տեսած «Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան»-ում այս թիվն ավելացել է 4000-ով:

Անգամ տարբերությունների առկայության դեպքում մեր ժողովրդի երկու հատվածները կարողանում են միմյանց հասկանալ և հաջողությամբ հաղորդակցվում են աշխարհաբարի այս երկու տարբերակների և՛ գրավոր, և՛ բանավոր ձևերով:

Բացի այդ, երկու գրական լեզուները փոխհամագործակցում են միմյանց հետ:

«Նկատելի է արևելահայ եւ արևմտահայ գրական լեզուների բառապաշարների մերձեցման ակնյայտ միտում: Երբ որևէ նոր հասկացողություն արտայայտելու համար հայերեն բառ է անհրաժեշտ լինում, եւ դա արդեն կայ

¹ Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Ե., 1991, էջ 3:

² Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Ե., 2000, էջ 6:

արեւմտահայերէնում, այլեւս չեն դիմում նորակազմութիւններին, այլ գործածում արեւմտահայերէնի բառը: Ահա, օրինակ, մի քանի այդպիսի բառեր. *եզր/տերմին- եզրույթ* տարբերակով/, *ընկերային, ընկերաբան, խօսնակ, ծաւալապաշտ, կարգախօս, նախարար, նախարարութիւն, սակարան, սղաճ, ահաբեկիչ, ահաբեկութիւն* եւ այլն»³:

Աշխարհաբարի երկու տարբերակներում իրենց ուրույն տեղն ունեն դարձվածային միավորները: Դրանք փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող բառակապակցություններ կամ նախադասություններ են և խոսքում վերարտադրվում են իբրև խոսքային պատրաստի միավորներ:

Տարբեր լեզուներում դարձվածային միավորների քանակը տարբեր է: Այն տարբեր է լինում անգամ միևնույն լեզվի տարբեր փուլերում: Աշխարհաբարը չափազանց հարուստ է դարձվածային միավորներով, որոնց մեջ մտնում են լեզվի զարգացման տարբեր փուլերի միավորներ: Երբեմն նույնիսկ դժվար է լինում որոշել, թե տվյալ դարձվածային միավորը պատկանում է աշխարհաբարի՝ ենթաշրջանին, թե՛ եկել է լեզվի զարգացման նախորդ փուլերից:

Կատարել ենք դարձվածային միավորների զուգադրական-համեմատական քննություն աշխարհաբարի երկու գրական տարբերակներում:

Ինչպես արևելահայերէնում, արևմտահայերէնում ևս մենիմաստ դարձվածային միավորները համեմատաբար ավելի շատ են⁴: Օրինակ՝ *մենիմաստ՝ վերեն վար-*ամբողջովին, *կեանքին թելը փրթիլ/կեանքեն ըլլալ*-մեռնել, *ճանճ բռնել*-անգործ մնալ, *հրաման առնել*-թույլտվություն ստանալ, *աշխարհ մտնել*-ամուսնանալ, *վերջինը ըլլալ*-հաղթող լինել:

բազմիմաստ՝ ակոռ սրել-1.զինվել՝ հարձակվելու կամ պաշտպանվելու համար, 2. պատասպարվել մեկից վրեժ լուծելու, մեկին ծեծելու, 3.ուտելու՝ հոշոտելու տրամադիր լինել, *վեր առնել* - 1.վերցնել, 2. գնահատել, *տունը կոխել* - 1.խուզարկել, 2.տուն ընդունել, *փորը քշել* - 1.փորհարինք՝ լուծ ունենալ, 2.խիստ վախեցած լինել:

Օրինակներում ներկայացված են միայն արևմտահայերէնում գործածվող դարձվածային միավորները Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ից, Ա. Սարգսյանի «Արևմտահայերենի բառարան»-ից, Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ից, Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերէն-արևելահայերէն նոր բառարան»-ից, Պ. Բեդիրյանի «Հայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ից:

Վերը նշված օրինակներում դարձվածային միավորների իմաստները երբեմն արևելահայերենի համեմատությամբ որոշակի տարբերություն ունեն: Օրինակ՝ *վեր առնել, փորը քշել* դարձվածային միավորների երկրորդ իմաստները արևելահայերենի բառապաշարում չկան, իսկ *աշխարհ մտնել* դարձվա-

³ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց, պրակ Գ, Մարսել, 1998, էջ 64:

⁴ Հաշվարկները կատարել ենք ըստ Ռ. Սաքապետոյանի <<Արևմտահայերենի և արևելահայերենի նոր բառարան>>-ի, որտեղ 1-50 էջերում եղած 40 դարձվածային միավորներից 30-ը մենիմաստ են, 10-ը բազմիմաստ:

ծային միավորը, բացի նշված իմաստից, արևելահայերենում ունի նաև *1. ծնվել, 2. կյանքի փորձ ձեռք բերել, 3. աշխարհականի կյանքով ապրել* իմաստները:

Արևմտահայերենում, ինչպես և արևելահայերենում, մեծ քանակ են կազմում սոմատիկ դարձվածային միավորները: Օրինակ՝

աչք առնել - 1. մտադրվել, 2. աչքի առաջ ունենալ, նկատի ունենալ, 3. հաճելի նայվել, աչք ծակել, շլացնել, *աչք բանալ* - 1. ծնվել, 2. ուշադիր լինել, *աչք բռնել* - հավանել, *աչքը գոցել* - չնկատելու տալ, անտեսել, *աչքը կապել* - խաբել, *աչքե հանել* - աչքից գցել:

գլուխ գլխի տալ - խորհրդակցել, *գլուխը գուլպայ հիսել* - մեկին մեծ վնաս հասցնել, *գլուխը ոտքեն ծանր բերել* - գլխիվայր դարձնել, *գլխուն ջուր մաղուիլ* - 1. սարսափել, 2. վատ լուր լսելով՝ ընկճվել:

Արևմտահայերենի դարձվածային միավորները, ինչպես և արևելահայերենում, երկու խմբի են բաժանվում.

1. բառային արժեք ունեցող (տրամաբանորեն հասկացություն արտահայտող),
2. որպես նախադասություն հանդես եկող (տրամաբանորեն դատողություն արտահայտող):

Բառային արժեք ունեցող դարձվածային միավորներ: Միննույն հասկացությունը կարելի է արտահայտել և՛ բառերի, և՛ դարձվածային միավորների միջոցով: Օրինակ՝ *արելը երդիքեն տեսնիլ* - շատ փակ՝ քաշված ապրել, *արելը սեւ* - դժբախտ, *երկինքը գլուխը փլիլ* - մեծ փորձանքի հանդիպել, *հորմեն-մօրմեն մազ մը չունենալ* - 1. հորն ու մորը չնմանվել, 2. ժառանգություն չստանալ, *օր աշխատիլ, օր ուտել* - օրվա դատածով ապրել, *գետին շահիլ* - ազդեցության ոլորտը ընդարձակել, *դասարան կրկնել* - մնալ նույն դասարանում, *հանգանքը երեսին տալ* - մեղադրել և այլն:

Նախադասություն-դարձվածային միավորներ: Այս կառուցվածքի դարձվածային միավորների համար կարևոր չափանիշը ստորոգում և նվազագույնը երկու բաղադրիչ ունենալն է:

Սովորական նախադասությունների նման նախադասություն-դարձվածային միավորներն ըստ հնչերանգի լինում են պատմողական, հարցական, հրամայական, բացականչական: Օրինակ՝ *Աչքը առած է* (պատմող.) - Մտադրված է, *Ինձի կուգայ* (պատմող.) - Ինձ թվում է, *Աշխարքը ճե՞ստ տիղնես* (հարց.) - Ամեն մարդ պիտի խաբե՞ս, *Ո՞ր աչքը որուն համար կու լա* (հարց.) - Մարդիկ անտարբեր են, *Ականջ մի՛ կախեր անոր խօսքին* (հրամ.) - Բանի տեղ մի՛ դիր նրա ասածը, *Անցու՛ր այս բաժակը ինձմե՛* (հրամ.) - Այս փորձանքից ինձ ազատի՛ր, *Վա՛յ* մեկի *գլխուն* (բացականչ.) - 1. եղած կամ լինելիք բանի համար ցավի արտահայտություն է, 2. արհամարհական արտահայտություն է և այլն⁵:

Չանտեսենք մի հանգամանք ևս. բառային արժեք ունեցող բայական դարձվածային միավորները ստորոգման շնորհիվ կարող են գործածվել որ-

⁵ Նախադասություն-դարձվածային միավորներն ըստ խոսքաշարի կարող են գործածվել համապատասխան հնչերանգով:

պէս նախադասություն. **մեջք տալ** (արևմտ.) – դիմակալել, **Մեջք պիտի տան այդ անլուր սակին: Տեղ մը պորտ նետել** (արևմտ.) – հանգրվանել, **Ապաշխարող մեղավոր մը ողջունելու համար... հոն, քաղաքի միսիոնարն ալ պորտ կը նետե՞:**

Արևմտահայերենում շատ են հանդիպում ասացվածքների, դիպուկ արտահայտությունների արժեք ունեցող նախադասություն–դարձվածային միավորներ, որոնք արևելահայերենում կարող են իրենց համարժեքն ունենալ: Օրինակ՝ **Ասեղի մեջէն Հնդկաստանը կը դիտէ** - 1.Շատ խորամանկ է, 2.Երգների աշխարհում է ապրում, **Երեսին ձուածեղ եփես՝ չուտուիր** – Խիստ տգեղ է, **Հոյս որ ըսէ՝ լուսնկայ հասկըցիր** - Ասելիքը կեսից հասկացիր, **Ծովը իյնողը օձին կը փաթթուի** – Խեղդվողը փրփուրներից է կառչում և այլն:

Արևմտահայերենի բուն դարձվածային միավորների կազմում ևս հնարավոր է այլ բառերի գործածությունը: Օրինակ՝ **Ինչ վրա չափել** – իրենով դատել, **բանի մը բովեն անցընել** - այսինչ գործողության ենթարկվել, **մեկի օձախը մրեղել** - տան, ընտանիքի պատիվն արատավորել, **բանի մը հետ գույգ երթալ** – համապատասխան՝ ներդաշնակ լինել, մեկուն պողազը խոփով ծակած ըլլալ - բարձրախոս լինել (կշտամբական արտ.) և այլն:

Արևմտահայերենում մեծ թիվ են կազմում դարձվածային հարադիր բայերը: Գործածական են հատկապես *առնել, ձգել, ելլել, ըլլալ, ընել, բռնել, գալ, դառնալ* և նման բաղադրիչ բայերով կազմված հարադրությունները: Օրինակ՝ **լեզու ելլել** – խոսել սկսել, **ճանճ բռնել** – անգործ նստել, **ձեռքին մեջ ըլլալ** – մեկից կախված լինել, **սեղանի վրա գալ** – քննարկման նյութ դառնալ, **ճամբան բռնել** – հեռանալ, **ճամբէ ելլել** – շեղվել, խոտորվել, **միտքը ձգել** – հիշեցնել, **միտքէն ըլլալ** – մտադրվել, **ուրիշ ատենի ձգել** – 1.հետաձգել, 2.ձգձգել, **երեսին մորթին փոթ-փոթ դառնալ** – կնճռոտել և այլն:

Հետաքրքիր երևույթ է նաև արևելահայ և արևմտահայ լեզուների դարձվածային միավորների հոմանշությունը: Երկու տարբերակների դարձվածային միավորները հանդիսանում են հոմանշային շարքերի հարստացման աղբյուր: Դարձվածաբանական բառապաշարում արևելահայերենի և արևմտահայերենի դարձվածային միավորները հոմանշային հարաբերություն ոչ հաճախ են հաստատում: Ավելի հաճախ սրանք կազմում են հոմանշային տարբերակներ, որոնց բաղադրիչները տարբերվում են գրական լեզվի այդ երկու տարբերակներին յուրահատուկ բառաքերականական ձևերով:

Հոմանշային տարբերակներ են կազմվում՝

1. դարձվածային միավորների բաղադրիչների արևելահայերենում և արևմտահայերենում հոմանիշներ լինելու դեպքում: Օրինակ՝ **աչքերը փակ** (արևել.) և **աչքերը գոց** (արևմտ.) – 1.ոչ ճարպիկ, միամիտ, 2.անփորձ, 3.անվարան, 4.կուրորեն, 5.մտովի, 6.վարժ, 7.բնագդաբար, **դես-դեն ընկնել** (արևել.) և **ասդին-անդին ընկնիլ** (արևմտ.) – 1.փնտրել, որոնել, 2.թրև գալ, աննպատակ

⁶ Օրինակները տե՛ս Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, 2011, էջ 940, 1098:

թափառել, *ատամ սրել* (արևել.) և *ակոռա սրել* (արևմտ.) – 1. զինվել՝ հարձակվելու կամ պաշտպանվելու համար, 2. պատրաստվել մեկից վրեժ լուծելու, մեկին ծեծելու, 3. ուտելու՝ հոշոտելու տրամադիր լինել, *լավ աչքով նայել* (արևել.) և *աղէկ աչքով նայիլ* (արևմտ.) – 1. բարյացակամ վերաբերմունք ցույց տալ, 2. լավ ընդունել (կատարվածը, եղածը) և այլն:

Վերը նշված օրինակներում հոմանիշներ են *փակ* և *գոց*, *դես-դեն* և *ասդին-անդին*, *ատամ* և *ակոռա*, *լավ* և *աղէկ* բառերը: Կարծում ենք՝ այս չափանիշը ոչ բոլոր դարձվածային միավորների համար է ընդունելի: Օրինակ՝ *խոսք գցել* (արևել.) և *խօսք նետել* (արևմտ.) դարձվածային միավորներում, թեև *գցել* և *նետել* բայերը հոմանիշներ են, բայց *խոսք գցել* նշանակում է *1. ակնարկել, 2. խոսել, 3. սիրահետել*, իսկ *խօսք նետել*՝ *վիրավորել*:

2. Թեքման ձևերի տարբերություններով կազմվելու դեպքում. օրինակ՝ *խելքից-մտքից դուրս* (արևել.) և *խելքե-միտքե դուրս* (արևմտ.) – 1. անչափ, աներևակայելի, 2. ցնորական, *գրպանում (գրպանի մեջ) մկներ խաղալ* (արևել.) և *գրպանը (գրպանին մեջ) մուկեր խաղալ* (արևմտ.) – աղքատ լինել, ծախսելու դրամ չունենալ, *խելքը գլխին* (արևել.) և *խելքը գլուխը* (արևմտ.) – 1. խելոք, խելացի, հասկացող, բանիմաց, 2. ուշադիր, մտածված, զգոն, 3. կարգին, հարմար, 4. նշանակալից, *վրայից անցնել* (արևել.) // *վրայեն անցնել* (արևմտ.) – 1. վերանայել, վերընթերցել, 2. թերթել, նայել և այլն:

Հոմանշային տարբերակ կարելի է համարել նաև միևնույն դարձվածային միավորի արևելահայերենում և արևմտահայերենում ունեցած ուղղագրական տարբերությունները⁷: Օրինակ՝ *մեջտեղ քաշել* // *մեջտեղ քաշել* – 1. հարց հարուցել, 2. ներգրավել, մասնակից դարձնել, *լեզուով ճնճողուկ բռնել* // *լեզվով ճնճողուկ բռնել* – 1. սնապարծ լինել, 2. ստախոսել, *ձեռքեն խալսել* // *ձեռքեն խալսել* – նույնն է՝ *ձեռքից պրծնել* – ազատվել, օձիքը մեկի ձեռքից ազատել և այլն:

Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորները որոշակի քանակով հոմանիշներ, այնուհանդերձ, կազմում են, որոնք կարող են և՛ բառային արժեք ունենալ, և՛ նախադասություն-դարձվածային միավորներ լինել: Ստորև երկու տարբերակների հոմանիշ դարձվածային միավորները ներկայացնում ենք հետևյալ դասակարգմամբ.

1. Միայն արևմտահայերենում գործածվող դարձվածային միավորներ, որոնց մի մասն իր հոմանիշ(ներ)ն ունի արևելահայերենում⁸:

Բառային դարձվածային միավորներ՝ *գէշին գալ* (արևմտ.) // *սիրտը կուչ գալ* (արևել.) – ազդվել, նեղվել, *անուշի կապել* (արևմտ.) // *գլխին յուղ քսել* (արևել.) // *քթին ձեթ տալ* (արևել.) // *օձի լեզու թափել* (արևել.) – համոզել, հաշտեցնել, *արեւէն զարնուիլ* (արևմտ.) // *երեսից ընկնել* (արևել.) – արհամարհվել, *բերանը պղպեղ քսել* (լեցնել) (արևմտ.) // *դատը անել* (արևել.) // *պատիժ չափել* (արևել.) // *շաշ դամարը թեքել* (արևել.) // *պատասխա-*

⁷ Արևմտահայերենը հիմնականում պահպանել է գրաբարյան ուղղագրությունը:

⁸ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 317:

նատվության կանչել (արևել.) // *երեսը քորել* (արևել.) – պատժել, *սեղան շտկել* (արևմտ.) // *սեղան գցել* (արևել.) – ուտելիքներ շարել սեղանի վրա և այլն:
Նախադասություններ– դարձվածային միավորներ՝ *Գրպանս գրպանդ է* (արևմտ.) // *Մեր մեջ իմ ու քո չկա* (արևել.) – Նույն գրպանից ենք ծախսում, *Մէկու մը ամանէն ջուր խմել* (արևմտ.) // *Մէկի գուռնան փչել* (արևել.) – մի բանի մասին ուրիշի հայտնած կարծիքը մեջ բերել, *Մըկետուն ծէ փարու կը գընի* (արևմտ.) // *Մկան բնին տասը շահի է տալիս* (արևել.) – Շատ նեղն է, *Թուքս կլլելու ժամանակ չունիմ* (արևմտ.) // *Քիթ սրբելու ժամանակ չունեմ* (արևել.) – Շատ զբաղված եմ և այլն:

2. Առածների, թևավոր խոսքերի, դիպուկ արտահայտությունների, անեծքների, օրհնանքների միջոցով հանդես եկող հոմանիշներ: Օրինակ՝ *Ագռավը կերակրողին աչքը կհանէ* (արևմտ.) // *Օձը տաքացնողին է կծում* (արևել.) – Ապերախտ է, *Լեզուդ չորնա* (արևմտ.) // *Լեզուդ քար դառնա* (արևել.) // *Լեզվիդ թուր (փուշ) բուսնի* (արևել.) – անիծական արտահայտություն (պապանավել), *Նաւ մը երկու նաւապետ ունենայ՝ կ'ընկղմի* (արևմտ.) // *Երկու գլուխ մի կաթսայի մեջ չի եփվի* (արևել.) – Ամեն գործի գլուխ մի մարդ պետք է կանգնած լինի և այլն:

Մասնագիտական գրականության մեջ չի նշվում, որ արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորների հոմանշային շարքեր կարող են կազմվել և՛ տարբեր բաղադրակազմ ունեցող միավորներով, և՛ կառույցի որոշ բաղադրիչների համընկնումով:

1. Տարբեր բաղադրակազմ ունեցող հոմանիշ դարձվածային միավորներ. օրինակ՝ *երկիրը կոխել* (արևմտ.) // *կալմեջ անել* (արևել.) // *չորս կողմը բռնել* (արևել.) – պաշարել, *գեշություն գալ վրան* (արևմտ.) // *ուշքը գնալ (կորչել, կորցնել, մարել, մաղվել)* (արևել.) // *խելքից բաժանվել* (արևել.) // *խելքը մաղվել* (արևել.) – ուշաթափվել, *թել ու դերձան դառնալ* (արևմտ.) // *կաշին ու ոսկորը մնալ* (արևել.) // *մասունք կտրել* (արևել.) // *փորը մեջքից կպնել (կպչել)* (արևել.) // *մոմի պես հալվել* (արևել.) – նիհարել, *ձանձրություն առնել* (արևմտ.) // *սիրտը նեղանալ* (արևել.) // *գլուխն ուռչել* (արևել.) // *զահլան գնալ* (արևել.) – ձանձրանալ և այլն:

2. Բաղադրիչների համընկնումով կազմված հոմանիշ դարձվածային միավորներ. օրինակ՝ *գլխուն շան քարոզ կարդալ* (արևմտ.) // *գայլի գլխին ավետարան կարդալ* (արևել.)– խրատել, *բաց պատարագ* (արևմտ.) // *բաց բերան* (արևել.) – անգաղտնապահ, *գլուխը հանել* (արևմտ.) // *գլուխը (գլխին) կապել* (արևել.) – 1.խաբելով վատը լավի փոխարեն անցկացնել, 2.խաբելով ամուսնացնել, 3.մեկին տհաճ, անցանկալի բան պարտադրել, *թել ու դերձան դառնալ* (արևմտ.) // *օգոստոսի աղվես դառնալ* (արևել.) // *ասեղ կերած շուն դառնալ* (արևել.) // *վիզը տանձի կոթ դառնալ* (արևել.) – նիհարել և այլն:

Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորների հոմանշային շարքերը կարող են լինել սակավանդամ և բազմանդամ: Ստորև ներկայացնում ենք բազմանդամ շարքի մեկ օրինակ, որտեղ ընգրկվել է շուրջ 15 արևմտահայերեն և 42 արևելահայերեն դարձվածային միավոր՝ բացառե-

լով հոմանշային տարբերակները. *վախենալ* // *սարսափել* // *երկյուղել* // *ահաբեկվել* // *զարհուրել* // *զարգանդել* - (արևմտ.) *արյունը (երակներում) ցամաքիլ* (արևել. ցամաքել) // *արյունը ջուր կտրիլ* // *լեզուն փորը քաշել* // *լեղաճաք (լեղապատատ) ըլլալ* (արևել. լինել) // *լեղին պատռիլ* // *լեղին (սիրտը) փրթիլ* // *փորը քշել* // *սիրտը դող ելլել (դող առնել)* // *սիրտը դողի մէջ ըլլալ* // *սիրտը վեր ելլալ* // *սիրտը թելի մը վրայ ըլլալ* // *սիրտը պատռիլ* // *սիրտը փորին մէջ իյնալ* // *սիրտը վեր ելլել* // *սիրտը փորում ճաթիլ* // (արևել.) *ահ առնել* // *ահը սրտին առնել* // *ահը սիրտն ընկնել* // *ահ (վախ) ունենալ* // *ահուդողը ջանն առնել* // *ահուդողի մէջ ընկնել (լինել)* // *աչք ճպել* // *աչքը (աչքերը) վախենալ* // *արյունը թան դառնալ* (հզվդպ.) // *արյունը (լեղին, սիրտը) ջուր դառնալ* // *երկյուղ կրել (զգալ)* // *զարգանդ բռնել (զալ, պատել)* // *երկյուղով բռնվել* // *թուքը կուլ տալ* // *թուքը (լերդը) կատիկը թռչել* // (բերանի, բերանում, բերանի մէջ) *թուքը (թուք-մուքը, թուք ու մուքը) կպչել (չորանալ, սառչել, ցամաքել)* // *լեղին ճաքել (պատռ(վ)ել, տրաք(վ)ել, չորանալ, ցամաքել)* // *հոգին կորեկի հատիկ դառնալ* // *ձայնը (ձենը) փորը գցել (քաշել, ընկնել)* // *վախը բռնել* // *վախից լեղին պայթել (պատռվել)* // *վերք ընկնել* // *փոխանը կատու ընկնել* // *փոխանը ոտներն ընկնել* // *փորումը սիրտ չմնալ* // *շունչը փորն ընկնել* // *սիրտ չանել* // *սիրտ չունենալ* // *սիրտը արյուն կոխել* // *սիրտը դողալ (դողացնել, դողդողալ, դող բռնել)* // *սիրտը թելի վրա լինել* // *սիրտը ծով ելնել (լինել)* // *սիրտը կռնակը ծեծել* // *սիրտը կտրվել` փորն ընկնել* // *սիրտը պորտի գլուխը թռչել* // *սիրտը փորում(ը) ձիավոր դառնալ* // *սրտի թելը կտրվել* // *մկան ծակը (ծակին) հազար (հարյուր) թումանով (թուման, մանեթ) առնել (խնդրել)* // *մկան ծակին երանի տալ* // *մկան ծակը ծախու առնել* // *մկան բնին հազար ոսկի տալ* // *մկան սիրտ ունենալ* և այլն:

Կան նաև նույն ձևն ունեցող դարձվածային միավորների այնպիսի օրինակներ, որոնք գրական երկու լեզուներում բոլորովին տարբեր և իրար հետ ոչ մի առնչություն չունեցող իմաստներ են արտահայտում: Այսինքն` նման դարձվածային միավորները արևելահայերեն և արևմտահայերեն լեզուներում պետք է համարել համանուններ: Օրինակ` *խոսք ուզել* - (արևել.) խնամախոսել, նշանել, (արևմտ.) խոսելու ցանկություն հայտնել, խոսելու իրավունք խնդրել, *գլուխ գլխի տալ* - (արևել.) 1.միաբանել, միանալ, 2.խորհրդակցել, 3.որոշել, վճռել, 4.իրար գալ, (արևմտ.) ամուսնանալ, *աչք առնել* - (արևել.) 1.չարակնել, չար աչք կպչել, 2.տեսնել, նկատել, (արևմտ.) 1.մտադրվել, 2.աչքի առաջ ունենալ, նկատի ունենալ, 3.հաճելի նայվել, աչք ծակել, շլացնել, *աչք բռնել* - (արևել.) հսկել, հետամուտ լինել, (արևմտ.) հավանել, *արն առնել* - (արևել.) 1.լուսավորել, 2.արն ծագել, (արևմտ.) տաքանալ, *ճամփա (ճանապարհ) տալ* - (արևել.) ճանապարհն անցնել, թույլ տալ անցնել, (արևմտ.) վնդել, հեռացնել և այլն:

Այսպիսով` արևմտահայերեն և արևելահայերեն դարձվածային միավորները հոմանշային շարքեր ոչ հաճախ են կազմում: Դրանք հիմնականում հանդես են գալիս որպես հոմանշային տարբերակներ: Հոմանշային տարբերակ կարելի է համարել նաև դարձվածային միավորի արևելահայերենում և

արևմտահայերենում ունեցած ուղղագրական տարբերությունները: Միայն արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորներից կազմված հոմանշային շարքերը կարող են ունենալ և՛ տարբեր բաղադրակազմ ունեցող, և՛ կառույցի որոշ բաղադրիչների համընկնումով միավորներ:

Կան դարձվածային միավորներ, որոնք գրական լեզվի երկու տարբերակներում տարբեր իմաստներ են արտահայտում, ուստի դրանք պետք է համարել համանուններ:

Мкртумян Армине – Фразеологические единицы восточноармянского и западноармянского языков и их синонимия. – Фразеологические единицы восточноармянского и западноармянского языков чаще составляют синонимичные варианты, чем входят в синонимичные отношения. Синонимичными вариантами можно считать также существующие в восточноармянском и западноармянском различных написания одних и тех же фразеологических единиц. Синонимические ряды, состоящие лишь из фразеологических единиц восточноармянского и западноармянского языков, могут содержать как единицы, различные по составу, так и единицы, имеющие некоторые структурные совпадения.

Существуют фразеологические единицы, которые выражают различный смысл в обоих вариантах литературного языка, поэтому их следует считать омонимами.

Mkrtumyan Armine– Synonym phraseologisms in east and west armenian languages. –The author discusses phraseologisms that have the same meanings in East and West Armenian languages. Some of them have different orthography and various structures. There are also some phraseological units in both languages which have different meanings but the same writting.

**ՀԱՅՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ-ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՆՈՐ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՎԱՂ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ**

Նորակազմ, իմաստափոխված, փոխառյալ բառերից բացի հայերենի բառապաշարը վաղ աշխարհաբարում հարստացել է նաև հնչյունափոխական ճանապարհով¹։ Վաղ աշխարհաբար ասելով առավելապես նկատի ունենք միջին հայերենից աշխարհաբարի անցման այն փուլը, երբ նորմավորված չլինելու պատճառով հայերեն բնագրերում միաժամանակ գոյակցում էին գրաբարի, միջին հայերենի, բարբառների լեզվական իրողությունները՝ Այդպիսի բնութագիր ունի 17-18-րդ դարերի պատմագրական երկերի, ուղեգրությունների, հիշատակարանների, ժամանակագրությունների, վիճաբանությունների, դիվանական փաստաթղթերի և այլ ժանրերի երկերից շատերի լեզուն։

Զնորմավորված լինելը վերաբերում է բնագրերի ինչպես ձևաբանական, այնպես էլ, և գուցե՝ առավելապես հնչյունական կողմին՝ Վաղ աշխարհաբարում ստեղծված երկերը խիստ հարուստ նյութ են մատուցում հնչյունական քննության համար։

Հայերենագիտությունը հնչյունափոխության՝ իբրև բառապաշարի հարստացման ուղիներից մեկի մասին մեծ գիտելիքներ ունի ամբարած։ Տարբեր բնութագրումներով աշխարհաբարի վաղ շրջանի և այդ թվում՝ նրա հնչյունական ու հնչյունափոխական դրսևորումների մասին են խոսել Ղևոնդ Հովնանյանը, Հրաչյա Աճառյանը, Գևորգ Զահուկյանը, Ռաֆայել Իշխանյանը, Հովհաննես Մուրադյանը և անվանի այլ հայերենագետներ²։ Բուն միջին հայերենի և դրա հետ կապված³ նաև վաղ աշխարհաբարի հնչյունական համակարգերի ուշագրավ քննություններ են Հ.Մուրադյանի և Ռ.Ղազարյանի աշխատությունները³։ Ընդ որում «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության հնչյունաբանության բաժնի հեղինակը ամենայն մանրամասնությամբ քննում է գրաբարի ձայնավորների, երկբարբառների, պայթական և պայթաշփական բաղաձայնների կրած համակարգային

¹ Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դրսևորումների մասին խոսելու առիթ ունեցել ենք, տե՛ս **Նորայր Պողոսյան**, Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դասակարգման նոր փորձ, Պատմաբանասիրական հանդես, Ե., 2012, ք. 2։

² **Ղ.Յովնանյան**, Հետազոտությունը նախնեաց ռամկօրենի վրայ, Վիեննա, 1897։ **Հ.Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Եր., 1951։ **Ռ.Իշխանյան**, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Եր., 1979։ **Գ.Զահուկյան**, Բարբառային երևույթները հայկական հիշատակարաններում, Ե., 1997։

Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատոր I, հնչյունաբանություն, Եր., 1982։ **Է.Ակրտյան**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980։

³ **Հ.Մուրադյան**, Հնչյունաբանություն/Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հտ. Ա, Ե., 1972։ **Ռ.Ղազարյան**, Միջին հայերենի բառապաշարը, Ե., 2001։

փոփո միջին հայերենում, նաև հնչյունափոխական այլ երևույթներ, ինչպես՝ հնչյունների հավելում, անկում, ամփոփում և այլն:

Նշենք, որ պայթական և պայթաշփական բաղաձայնների համակարգային տեղաշարժերին ներկա հրապարակման մեջ չենք անդրադառնում, որովհետև դրանք նախ³ վաղաշխարհաբարյան շրջանից շատ ավելի առաջ տեղի ունեցած հնչյունական դրսևորումներ են և շարունակաբար գործել են ու բնականաբար արտացոլվել են նաև 17-18-րդ դարերում ստեղծված բնագրերում, և հետո՝ ուշ միջնադարի ցանկացած բնագրում սփռված են նման հնչյունական փոփոխությունների անհամար օրինակներ, և տեղին չի լինի դրանք զուտ վաղաշխարհաբարյան իրողություն համարել: 17-18-րդ դարերի աղբյուրներից քաղված այդպիսի օրինակներ են հետևյալները՝

Ձայնեղացում - անգանին, արղուն, բառաբանել (փառաբանել), բարեբաշտ, բողբատ, գիրգ, գերթողահայր, գահանայ, գրգ(կ)ախառնեալ, գեղծաւոր, Գիրակոս, գաղա, դեսբան, ընձայիւք, թաբուր, լաբել, կերղամ, հագիմ, հնձ(ց)կուն, ձնկախառն, միղի (միթէ), յաղղեցաւ, ջաղջին, սաղաւարդ, տնգուրք (տնկի) և այլն:

Շնչեղ-խլացում - աթինեան (ադենեան), թ(դ)ուրանամք, լերթ (լեարդ), հորթ(դ)է, ձեռնայթ(դ)րեցայ, սիրամարթ, քաջութին և այլն:

Խլացում - ամպար, տիւան, ձաղուկ, կանկատ, զանկակ, կուլիստան, կաւաթ, ճրակ(զ), փափակ(զ), արտակս (արտաքս), կանկ(զ)նել, պատրոյկ(զ), հրաշակործութին, քղամիտ(դ) և այլն:

Մեր տեսադաշտից դուրս ենք թողել նաև հայերենի գրեթե բոլոր բարբառներին ու վաղ աշխարհաբարյան բազմաթիվ բնաբերին հատուկ ԱՅ>Է, ԱՅ>Ա, ԻԻ>Ի, ՈՅ>ՈԻ հնչյունափոխությունների փաստերը (հայր>հէր, հայրապետ>հէրապետ, հարապետ, սփիւռ>սփիւր և այլն): Որպես ուրույն մի փաստ մատնանշենք միայն **հայրենիք**, **պապենիք** բառերի համաբանությամբ առաջացած ՄԷԴԵՆԻՔ բառը հետևյալ նախադասության մեջ. «Ես՝ Խուռումի դուստր Յեղիսէս, իմ **մերենիք** դարի արտի կէսն իմ մօր հոգոյն վախույ տվի Սուրբ Նախավկային» (Կալավաճագր., 65): **Մայրենիք** կամ **մերենիք** բառը նշանակել է ամուսնացող աղջկան որպես օժիտ տրվող մուլք՝ տուն, այգի, վարելահող և այլն: Այսպիսի սեփականությունը զավակների համար հանդիսացել է **մայրենիք**:

Պայթական և պայթաշփական բաղաձայնների հնչյունափոխությունների շարքում ուշագրավ են և բնագրերը ընթերցելու համար կարևորություն կարող են ներկայացնել հատկապես այն ձևերը, որոնց դեպքում համանուն արմատներ կամ բաղադրիչներ են գոյացել: Դրանք նաև բնագրերի տարընթերցման առիթ կարող են տալ, օրինակ.

ԳԻԴԳ (գիրք) - «Մին **գրգում** տէսայ, թէ թվին ՌՂԱ-ումն փոքր Շահաբաս Ըսպիան թախտ նստաւ թագաւոր» (Զ.Ագուլ., 109):

ԳՈՂԱԿԻՑ (կողակից) - «Այս է հանգիստ Մարանին, որ **գողակից** Մարտիրոսին. ես՝ Թագագուլ Դապանս կագուցիմ (սխալագր.) ԹՎ ՌՃԿ (1711)» (Դիւան III, 195):

ԹԱԳԵԼ (թակել) - «Գլխերանին **թագելով** ողջ ասացին, թե մեր ջարն ոնց գլնի» (ԶօՅ, 425):

ԿՆԿԱՀԱՅՐ (կնքահար) - «Ընկերոջս **կնկայհայր** եղաւ Տիօտաթօն» (Մանր ժամ. II, 406):

ԿՏԱԿ (գդակ) - «Արգրում եւս ամր դրկեցին (հրաման հղեցին), բերթի միջի եկեղեցին մէջիդ արարին եւ ամենայն քրիստոնէից գլուխն սեաւ **կտակ** անցուցին» (Մանր ժամ. I, 242):

ԶՆԷԲԵԿ (ծնեբեկ) - «Կլայեկ և արճիճ ո՛չ գտանի բնաւ, բայց ոսկի շատ՝ Գ կերպիւ. Ա որպէս զաւագ, և Ա որպէս նօխուտ և բակլայ, և Ա որպէս **ձնեբեկ** բուսովի» (Յ.Թութունջի, 308):

ՍՊԱՌԱՊԵՏ (սպարապետ) - «Որք երբեմն թագադիրք լեալք Արշակունեաց եւ այժմ վերստին ստեղնեալ եւ պտղաբերեալ թագաւորութեամբն, զի այժմ **սպառապետ** կոչեցեալ» (Մանր ժամ. II, 336):

ՍԸՐՍԿԱՊԱՐ (սրսկապան) - «Եւ աստ յԱրտագ զաւառի պատահէ նմա օթեւանս առնել մօտ առ դուրս ի ներքսագոյն **սըրսկապարի** խորանի» (Մանր ժամ. II, 315):

ՏԱՆԴՐՈՒԹԻՒՆ (տանուտերութիւն) - «Գեղիս Կ տարի **տանդրութիւն** արի Մէլիք Պէկի չախովն» (Դիւան III, 383):

ՓՈՂԵԼ (փոխել) - «Բարեխօս է Սբ. Նշան Տէր Աստուածայտուրին, որ **փողեցաւ** առ Քրիստոս թվին ՌՃԽԵ (1698)»: «**Փողեցան** առ Քրիստոս թվին ՌՃԽԵ (1698)» (Դիւան VII, 41):

ՓՈՒՌՎԱՌ (բուրվառ) - «Լուսաւորչի աջոյն մասն կայր ի վաղընջուց, մէկ արծաթէ **փուրվառ**, զագաթն Թօմայի սուրբ առաքելոյն, որ կայր աստ ի նախնեաց» (Յիշ. Սանահն., 115):

Նման փաստերը **պատմական համանունության** մասին խոսելու հնարավորություն են ընձեռում: Դրանք այն բառերն են, որոնք, ծագած լինելով լեզվի տարբեր փուլերում, նույնական կամ մոտիկ հնչյունական ձևավորում են ստացել և միաժամանակ տարբեր իմաստներ ունեն: Վերը բերված օրինակներից նման բնորոշում կարող ենք տալ, օրինակ՝ գիրգ (գիրք և փափուկ), կտակ (կտակ և գտակ), փողել (փողահարել և փոխել) բառերին: Անշուշտ նման բառերի առաջացման ուղիներից մեկը ժողովրդական ստուգաբանություններ են:

Ա) Չհնչունափոխված ձայնավորով բառեր: Մի շարք դեպքերում բաղադրյալ բառերի առաջին բաղադրիչի կամ միջին դիրքի ձայնավորը մնացել է անփոփոխ՝ ընդհանուր առմամբ շեղվելով շեշտից կախված հնչյունափոխության հայերենի օրինաչափություններից: Այդ կերպ մի շարք բառերում անփոփոխ են մնացել առաջին բաղադրիչի Ի, ՈԻ, Է ձայնավորները, ՈՅ երկբարբառը:

ԲԺԻՇԿՈՒԹԻՒՆ - «Քո բարի ինքնակալութենէդ լինի մեր ցաւիցն **բժիշկութիւն**» (ԶօՅ, 154):

ԳԻՐՔԱԿԱԼ - «Տէր Յոհան և իւր հայր Գրիգորն [ետուն] ... մէկ **գիրքակալի** շապիկ» (Ակոռի քյոթ., 208):

ԼՈՅՍԱԻՈՐԻՉ-«Աջով **Լոյսատրչին** մեռնոն, որ մեր է» (ՈԻՄՀԲ, II, 178):
ԽԻՂՃՍՏԱՆՔ - «Դպրութիւնք բացեալ յաւուրս դատաստանին ե՛ն **խիղճմտանք** իւրանաքնչիրոց» (ՄՄ 1756, 47ա):

ՀԱՆԳԻՍՏՈՒԹԻՒՆ - «Ոչ թողին անօրէնքն, որ **հանգիստութիւն** էր առել կամ շոր փոխել» (Օգոստ. Բաջ., 223):

ՀԻՐԵԼ - «Մղել-**հիրել**» (ՄՄ 1127, 146ա):

ՄԻՇՏԱՅԱԻԷՏ - «Ամենագօրն Աստուած ... անթառամ պսակացն, **միշտայաւէտ** խնդութեանն և ցնծութեանն արասցէ արժանի» (Դիւան Նոր Զուղ., 49):

ՇԷՆԱՐԱՐ - «Այր բարերար եւ շէնարար եւ սիրօղ քրիստոնէից» (Զաք. Ա, 10):

ՈՒՂԻՂԱՓԱՌ - «Ես՝ անարժան ֆրայ Աւգոստինոս քահանայս էի ... կրօնիք հնազանդ **ուղիղափառ** հաւատոյն Քրիստոսի» (Օգոստ. Բաջ., 5):

ՈՒՅՆԵԼ (ունել) - «Թագգաւորն թաթարաց եկեալ տիրէ ամենայն Պարսից, որ զթագաւոր ոչ **ոյնէին**» (Ստ. Ռոքշա, 130):

ԶՈՒՐԱԻՐՀՆԷՔ - «Իմ մօտիկ գեղորից կարդացողն ամէն ժողովեցէք, ջուրարիներք արարէք» (Զ. Ագուլ., 138):

ՍԷՐՈՒՆ - «Ես՝ անարժան Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին ... այնպէս **սէրուն** էր, որ գիշերն քուն չկէ» (Դիւան V, 170):

ՏԷՐԱՅՈՒ - «Այս է տապան Քասբարի որդի **տէրացու** Գրիքորին» (Դիւան II, 65):

ՓՈՒՉԱՅԱԻ - «Շատ խաներ դիվան արին, ամէն ապրանքն **փուչացաւ**» (Զ. Ագուլ., 145):

ՔԵՑԵԼ - «Քեցեցին զամբոխն աշխարհաժողով և ի գետն մղեցին, և սկսաւ ջուրն լինել նոցա գերեզման և յուղարկաւոր» (Մանր ժամ. I, 183):

Շատ դէպքերում հնչյունափոխական նման փաստերը կարող են լեզվի ավելի վաղ շրջանի դրսևորումների ուշ վերապրուկները ներկայացնել կամ ցույց տալ այսօր համագործածական դարձած բառի նախնական ձևը, ինչպէս՝ փուչանալ>փչանալ, սէրուն>սիրուն, քեցել>քցել և այլն: Կարող են նաև հայերենի որոշ տարածքներում շեշտն առաջին վանկի վրա կրելու վկայությունները լինել, ինչպէս՝ հի՛րել, տէ՛րացու, սէ՛րուն:

Բ) Ձայնավորների և երկբարբառների հնչյունափոխություն:
Ձայնավորների հնչյունափոխության շարքում իրենց տարածվածությամբ աչքի են ընկնում Ո>ՈԻ և դրա հակադիր՝ ՈԻ>Ո(Օ) փոփոխությունները:

Ո(Օ)>ՈԻ : ԱՂՕԹԱԻՈԻՐ - «Խղճալի ազգն մեր ... **աղօթաւորք** և բարերանք լիցին յաղագս ինքնակալ կայսերն մեծի» (Հայերը Մոլդ., 126):

ԳՈԻՆԴԱԿ (կոնդակ) - «Ահա Դ տարի էանց, ի մէջ եղև նվիրակի ժամ գալստեան, զոր ամենեցունց ի խնդրոյ կարգեալ **զգունդակիւ** և լոյս մեռնաւ» (Դիւան Նոր Զուղ., 63):

ԼՈՒԿ (լոկ) - «**Լուկ** մատնեցին զինքն ի յատեան» (ՈԻՄՀԲ, I, 44): Սրա արմատները ավելի հին են և օրինակները հանդիպում են ավելի վաղ շրջաններից:

ԼՈՒՍԱՓՈԻԽ - «Խաչատուր վարդապետն եկաւ Էջմիածնայ **լուսափուխ** մեռնաւ, որ էր նուիրակ նորընծա տէր Մովսէս կաթողիկոսի» (Մանր ժամ. I, 217):

ՀՌՌԻՄ - «Մին **հռուս** վարդապետ, անունն Անաստաս ... եկին Աքուլիս ժողով անելու» (Զ. Ագուլ., 129):

ՄՈՒՄ - <<Գէորքն եբեր ... Բ ջարմակ ատենի **մուս**>> (Ակոռի քյոթ., 202):

ՊԱՇՏՈՒՆ (պաշտոն՝ պաշտամունք) <<**Պաշտուն** պատարագ մատուցինք բարեխօսութեամբ Սուրբ Ստեփանոս Նախավկային>> (Կալավածագր., 158):

ՊԱՐՈՒՆ (պարոն) - <<Այս է տապան Տիդանցի Լալի որդի **պարուն** Աւետիսին>> (Դիւան II, 65):

ԶՐՀՈՒՄ - <<Կարիճ կրկին նահանջ բերէ / Աղեղնաւորն, այծեղջիր է / **Ջրհուսն** և ձուկն նահանջ է>> (Դ. Զեյթ., 186):

ՈՒ>Ո(Օ)

Նկատելի է, որ այս հնչյունափոխությանը ենթարկված բառերից մի քանիսը (թողթ, շոտով) պահպանվել են Ղարաբաղի բարբառի կնիքը կրող ուշ միջնադարյան բնագրերում, սակայն այս փաստին հանդիպում ենք Հայաստանի արևելյան մյուս հատվածներում ստեղծված այլ բնագրերում ևս:

ԹՈՂԹ - <<Չունիմք կարողութիւն այդ կողմն խօսակցութիւն ուղարկել կամ **թողթ** կամ գանձ (ԶօՅ, 156): <<Այս **թողթս** կարգեցաք ուղարկել>> (ԶօՅ, 163):

ԼՈՄԱՅ - <<Եւ տաճիկն պահանջէ ի սմանէ **զլոմայն**>> (ՈՒՄՀԲ, II, 612):

ՄՈՆԵՏԻԿ - <<Արդ պատուիրեմ քեզ՝ Լալա՛յ, զի կոչեացես **զմոնէտիկսն**>> (Զաք., 23):

ՇՈՏՈՎ - <<Այս անգամ **շոտով** այդ մեծ թագաւորէդ և քո բարերարութենէդ որ մեզ մին ճար չի լինի>> (ԶօՅ, 162):

ՈՂԱՐԿԵԼ-«Փետրվարի Ժ-ումն Երեւան դուս **ողարկեց**» (Զ. Ագուլ., 122):

ԶՈԽՏ, ԶՈԽՏԱԿ - <<Իւր որդի Գէորքն եբեր մէկ **ջոխստ** շամատան>> (Ակոռի քյոթ., 202): <<Ազիզբէկն և Գիրակոսն բերին մէկ լաւ փառաւոր խաչ տեղի պատմութեանով (հավանաբար՝ պատվանդան), մէկ ջուխտ շամատան **ջոխտակ** մումատեղով>> (Ակոռի քյոթ., 203):

ՏԱՆՈՅՏԵՐ - <<Այս է հանգիստ Ակորճանին, որ է որդի **տանոյտէր** Սարքսին, ԹՎ ՌՂԴ (1645): <<Այս է հանգիստ պարոն Բաճին, որ է մայր **տանոյտէր** Սարքսին, ԹՎ ՌՂԴ>> (Դիւան III, 207):

ՏՈԳԱՆՍ - <<**Տոգանս** առեալ շատ և ո՛չ փութացեալ>> (ՈՒՄՀԲ, II, 458):

ՔՕՉԱԿ (Քուչակ) - <<Բանն զոջական երգեալ ի Վանեցի **Քօչակէ**>> (ՈՒՄՀԲ, I, 56):

Իրար հակադիր դրսևորումներով են հանդես գալիս նաև Ա>Ե և Ե>Ա փոփոխությունները, օրինակ՝

Ա>Ե : ԼԵԻ - <<**Լէւ** տարի, **լէւ** հավայ, առատ, բարելի>> (Զ. Ագուլ., 133):

ԵՐԵՇԽԱԻՈՐ - <<**Երեշխաւոր** – քաֆիլ>> (ՄՄ 1127, 138բ):

ԵՐԾԱԹ - <<Ահայ այս չափ **երծաթէ** ու անօթ փողի տեղ տվինք այտ մարդիդ>> (Զ. Ագուլ., 139):

ՀԱՅԵՍՏԱՆ (Հայաստան) - <<Ես՝ անարժան ֆրայ Աւգոստինոս, քահանայս էի ի աշխարհէն մեծ **Հայեստանոյ**, ի գաւառէն Էրինջակոյ>> (Օգոստ. Բաջ., 5):

ՀԵՐԵՒԱՆ - <<Հերևան **հերևանին** է փափակ մնացել>> (ՅՅՅ, 416):

ՏԵՂԱԻԱՐ (տաղավար՝ կացարան) - <<Երբ իջնեաք, ամենայն մարդ տեղաւար շինէր, ի մէջն մտնէր>> (Օգոստ. Բաջ., 10):

Ե > Ա: ԶԱՐՄԱԿ (ճերմակ) - <<Գրիգորի կին Շահասանամն [ետ] ... մէկ սուրմայեախայ շապիկ, մէկ էլ **ջարմակ** փէշկիր>> (Ակոռի քյոթ., 206):

ԿՈՂՊԱՔ (կողպէք) - «Դուռն փակ, **կողպաքն** ի վրան» (ՌԻՄՀԲ, II, 384):

ՈՒՂԱԻՈՐ - <<Զինչ պատասխան տացուք մեր գլխաւոր **ուղաւորացն** (ուղարկողներին)>> (ՅՅՅ, 370):

Չայնավորների այլ կարգի փոփոխությունները, ճիշտ է, համակարգային բնույթ չեն ստացել բնագրերում, սակայն հանդիպում են ուրույն ձևեր, որոնցից ներկայացնում ենք մի փունջ:

Ե > Ո: ՄՈՌՈՆ - <<Մուրատէնց Ղազարի որդի Սամուէլ ... մեծ բեմի քանդաքար (պրսկ. փորագրած) խաչկալն, Բ պատկեր, մէկ մոռոնտանէք երեստ Սբ. Յակոբայ>> (Ակոռի քյոթ., 201):

Ե > ՈԻ: ԿԱՇԱՌԱԿՈՒՐ - <<Իսկ նա որ առեալ էր ի պատրեացն զոսկի դահեկանսն, ոսկեան այնու **կաշառակուր** լեալ էր տեսարան մտաց նորա>> (Առ. Դաւրիժ., 171):

Ե(Է)>Ի: ԳԵՂԻՑԿԱԳՈՅՆ - «Հաւատարիմ դատաստան առ սէնէթօռացոյ և մերս բարերարք և **գեղիցկագունեղք** Գաբրիէլ յԻվանօվիճիդ» (ՅՅՅ, 371):

ԾԻԾԻՌՆԱԿ - <<Արտուտիկ ու կարկաչուն / Կարմիր կաքաւ, գարնան **ծիծիռնակ**>> (ՌԻՄՀԲ, II, 151):

ՏԵՂԻԿԱՆԱԼ - <<Տեսի և **տեղիկացայ**, որ ոչ են քրիստոնեայ և ոչ զմեզ էխպայր համարեն>> (Եղիա Մուշ., 495):

ՕՐԻՆՍՊԵՏ - <<Ի տեղիս տեղիս յոյժ սխալի, յայտ է զի ոչ էր **օրինսգէտ**>> (Ստ. Ռոքշա, 125):

Ո > Ա : ԱՂԶԱԳՈՒՐԵԼ - <<Մոլորեալ ազգն հրէից ամենեքեան ընդ առաջ ընթանային եւ **աղջագուրէին** (ողջույն տային)՝ ի հեռուստ եւ ի մօտոյ>> (Առ. Դաւրիժ., 493):

Ի > ՈԻ: ՇՈՒՇ - <<Մուսէլէնց Մարտիրոսն [եբեր] Ա արծաթէ **մեռոնաշուշ**, Ա պղընծէ բուրվառ>> (Ակոռի քյոթ., 211):

ՏԻՐԱՅԻ - <<Առայ Դաստակեցի **տիրացի**...>> (Ձեռ. հիշ., 43):

Ի > Է : ԱՐՃԷՃ - <<Ի Հապաշի երկիրն ոչ գոյ բնաւ արծաթ, պղինձ, կլայէկ, **արճէճ**, բայց ոսկի շատ>> (Յ.Թութունջի, 310):

ՊԵՂՇ - <<Ի ժամանակին յայնմիկ **պեղծ** ազգն քրդաց ապրստամալ եւ ջալալի բազում են եղեալ>> (Մանր ժամ. I, 246):

Ա > Ի: ԱՆԴԱԴԻՐ (անդադար) - <<Այտ ձեր քաջ զօվելի վէհագունին մեր **անդադիր** ամենեքումք առ Աստուած կու հայցենք>> (ՅՅՅ, 139):

ԱՊԻԿԵՂԷՆ - <<Մնայ ասել բրդեղենս, **ապիկեղենս**, երկաթեղենս և այլն յամենայն ի մեջ եկեղեցոյս և արտաքինս>> (Յիշ. Սանահն., 115):

ԼԵՀԻՑԻ (լեհացի) - <<Այս սուրբ տեղս ուխտ կատարեցի և Բ **լեհիցի** հետ ելայ ճանապարհ>> (Օգոստ. Բաջ., 21):

ՎԱՐԿՊԱՐԻՁԻ - <<Վասնորոյ ոչ **վարկպարիզի** համարիմ զմահ սոցա>> (Զաք., 23):

ՈՒ > Ի : ԶԻՐԿ (զուրկ) - <<Ի սուրբ գրոց **զիրկ** և ունայն>> (ՈՒՄՀԲ, I, 17):

ԿԻՏԵԼ - <<Ոչ թե միայն Աքուլիս, ամէն երկրէ առին, որ մինչի ԲՈ թուման **կիտեց** (կուտակեց>> (Զ. Ագուլ., 110): <<Ամէն **կիտվեցան** Երեւան, խանն կոխեցին բերթն, ոչ թողին դուս գայ>> (Զ. Ագուլ. 136):

ՅԻՆՎԱՐ - <<ՌԻ հայոց թվին և յամենան **յինվարին** խոճա Անդրէաս Կաֆայեցին շինել ետուր գտուն զանկակին>> (Դիվան VII 195):

ՎԵՐԱԿԱՅԻ - <<Ի թվին Հայոց ՌՃԻԹ ի թագաւորութեան Շահ Սլէմանին եւ իշխան տեղացս Մադստտ պէկին, որ էր **վերակացի** տանն արքունի, շինեցաւ կամուրջս>> (Դիւան II, 113):

ԱԻ(Օ) > Ա: ԱՐՀՆՈՒԹԻԻՆ - <<Ի թվին ՌՀԴ (1625) եկայք ի սուրբ Երուսաղէմ և այսքան տարիս զվանաց **արհնութեան** նամակներն կու գրէաք>> (Մկ. Աղանունի, 356): <<Աստուած արինէ Խօճա Զիրաքն արդորեցի և **սինեցի**>> (Մկ. Աղանունի, 107):

Նկատելի են նաև երկբարբառացման օրինակներ, երբ պարզ ձայնավորն է վերածվում երկբարբառի, և դա իր դրսևորումն է ստանում գրության մեջ, օրինակ՝

Ե > ԵԱ : ՇԵԱՂԶ (շեղջ) - <<Վասն վաճառելոյ **շեաղջ** գարւոյ կուտեալ>> (ՈՒՄՀԲ, II, 597):

Ա > ԱՅ : ԽԱՅՁ - <<Ես՝ անարժան Աթանէս էրեցս կանկնեցի **խայջս** փրկութեան հոգոյ իմոյ>> (Դիւան III, 48):

ՎԱՅՐԱԳՈՒՐ - <<Յամենայն թագաւորէ հոն պարգևք կայ ... զաւագանէ, **վայրագուրէ** և այլ ցեղ բաներէ>> (Օգոստ. Բաջ., 21):

ՈՒ > ՈՅ : ԳՈՅԹ (գութ) - <<**Գոյթ** – սէր.. (ՄՄ 1127, 145ա):

Գ) Բաղաձայնների ոչ համակարգային փոփոխություններ

Խ-Դ : ԾԱՂԵԼ (ծախել) - <<Թնոցի հողի կէսն ծախած էր, կէսն էլ նոր **ծաղեցինք** ի վերայ Սարգիս պարոնտիրին>> (Յիշ. Սանահն., 156): <<Ոչ գտանէին կերակուր ամենեքեան մարդիք եւ անասունք. զի փակեալ եղեն ամենայն դրունք եւ ամենայն **մրքածաղք, մսածաղք** եւ **հացածաղք** (Մանր ժամ. I, 212):

Հ-Խ : ՈՒՀ միջնադարի բնագրերը նոր փաստեր են մատուցում Հ-Խ հնչյունական անցման վերաբերյալ: Լեզվաբանական գրականության մեջ նկատված է, որ հնագույն շրջանում Խ-ն լծորդվում էր Հ-ի հետ, և դրա ապացույցն են համարվում ուշ շրջանի բարբառներում ոչ միայն Հ-ի դիմաց Խ-ի արտասանությունը (հայր>խէր, հաց>խաց, հայրապետ>խէրապետ և այլն),

այլև Խ-ի փոխարեն Հ-ի արտասանությունը⁴: Ընդ որում վերջին այդ անցումը առավել շատ նկատվում է Ագուլիսի բարբառում⁵, թեև մեր քաղաձ օրինակների աշխարհագրությունն ավելի լայն է և չի սահմանափակվում միայն Ագուլիսով:

ՀԵՂԴ- (խեղդ-) - <<Փետրվարի ԺԷ, օրն ուրբաթ, աշխարհս ժողով եղաւ, մարդիք հօն ժողովեցան քարերն պեղեցին, Զ լաշ հանեցին, Բ ալ տըղայ մեռան քարա**խեղդ** եւ փատա**հեղդ** եղան>> (Մանր ժամ. I, 220): Դժվար չէ նկատել, որ միևնույն նախադասության մեջ արմատը կիրառվել է երկու գուգահեռ ձևերով՝ **հեղդ**- և **խեղդ**-, և այդ բազմաձևությունը վաղ աշխարհաբարի բնորոշ առանձնահատկություններից մեկն է:

ՀԱՐԱԶՆԱԶԳԵԱՅ - <<Աւելի էին քան գութսուն ոգի՝ Ի՛ր վարդապետք եւ այլքն արեղայ եւ **հարազնազգեաց** կրօնաւորք>>(Մանր ժամ. II, 352):

ՀԱՀԱՆԴ (խախանդ) - <<Մեղմ-**հահանդ**>> (ՄՄ 1127, 146ա):

ՆԱՀԻՐ (նախիր) - <<Դուս արին ամենայն մարդ իւր յերկրէն որպէս **նահիր**, և ինքեանք եղեն սրով և նիզակով քշողք>>(Օգոստ. Բաջ., 6):

ՄԺԵՀ - <<Ունի անլեզու կվարտիան / Մեծ մեծ **մժեհ** և շատ լվան>> (ՈՒՄՀԲ, II, 91):

ՀՈՐԴԱԿ (խորտիկ) - <<ՈՒտելով, ըմպելով քաղցրահամ հորդակաց>> (ՈՒՄՀԲ, II, 392):

ՎԱՀԵԼ - (վախել) «Մի՛ **վահեք** ի թագաւորէ, ոչ յիշխանաց» (ՈՒՄՀԲ, II, 648):

Ծ > Յ: ԿՄԿԻՑ - <<Շատ փորձանք, շատ տրտմութիւն, շատ **կսկից** եկաւ մեզ վերայ վասն իմ անպատմելի մեղացն>> (Զ. Ագուլ., 102):

ԿԱՑՔԱՐ - <<Ոչ ունի լոյս, ոչ **կացքար**, ոչ աբերթ (աբերթ) և ոչ ծծումբ, զի արասցէ լոյս հնարից>> (Եղիա Մուշ., 245):

Զ > Ս: ԱՄԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ - <<Ես՝ նորա հայր, ըստ **ասդարարութեան** վանահայրին մերոյ>> (Յ.Կոլոտ, 271):

ՍԳՈՒՇՈՒԹԻՒՆ - <<**Սգուշութեամբ** կացէք ի վերայ գործարանին>> (ԶՅՅ, 139):

ԸՍԳԱՍՏՈՒԹԻՒՆ - <<Նոքա խիստ **ըսգաստութեամբ** այս կողմն և այն կողմն կարծիք կանեն>> (ԶՅՅ, 163):

Ս > Զ: ԶԹԱՓԵԼ (սթափվել) - <<**Զթափեա՛ց** յանխելութեանէ և միտքդ ժողովէ և զօրստն քո ընտրեա>> (Դիւան Նոր Զուղ., 88):

Շ > Ս: ՍԵՂԶ - <<Թէ գնայր ի վերայ **սեղջի**՝ ասէր, այսքան լիտր է>>(Զաք., 68):

Ր > Ռ: ԳԱՂԱՓԱՌ - <<Գթանի մօտ պրօկուրաթօրին գաղափառ ինչ դէգրէթի>> (Նշխարք, 25):

Ր > Ը: ԱՐԱԳԱՍՏ - <<Մին հնձանատուն իւր **արագաստովն**>> (Կարվաճագր., 25):

⁴ Հ.Դ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հտ. I, Ե, 1982, էջ 252:

⁵ Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 103-104:

Դ) Հնչյունափոխական այլ դրսևորումներ: Հնչյունափոխական վերը նշված դրսևորումներից զատ՝ վաղաշխարհաբարյան աղբյուրներում հանդիպում են այլ փոփոխություններ: Դրանք դասակարգում ենք հայերենագիտության մեջ ընդունված խմբերում:

Հնչյունի հավելում: ԱԲԵՐԹ (աբերթ) - <<Ոչ ունի լոյս ... ոչ **աբերթ** և ոչ ծծումբ>> (Եղիա Մուշ., 245):

ԱՂՄՈՒԼԿ (աղմուկ) - <<Այս բազում **աղմունկ** լիներ առ նոսին>> (ՌԻՄՀԲ, II, 477):

ԱՆԶԲՈՒԺ (անբույժ) - <<Ի հոգի խոցեալ եմ գոլով / **Անզբուժ** վիրոք շրջելով>> (ՌԻՄՀԲ, II, 396):

ԱՆՍԵՂԱԼ - «Անմեղ և **անսեղալ** բեր մարդ մի ինձի» (ՌԻՄՀԲ, II, 485):

ԲԵԿՏՈՐ (բեկոր) - <<Այլ եւ հնացեալ փոկ կաշէ եւ մաշեալ տըրեխ, ի **բեկտոր** ինչ խեցոյ ի յեփոցի եղեալ եւ առեալ ուտէին>> (Մանր ժամ. II, 243):

ԳՕՀՎԱՐ (ոհար) - <<Ազնիւն ակն ու **գօհվար** և մարգարիտ ես>> (ՌԻՄՀԲ, II, 219):

ԴԻԺՈՒԱՐ (դժվար) - <<Թէ աղքատ է, այլ **դիժուար** է>> (ՌԻՄՀԲ, II, 576):

ԵՐԿԻՆԻՍԻՍ - <<Պահ մի ուղղիմք դատաստանին / Արդ **երկինյիսը** պատուիրանին>> (ՌԻՄՀԲ, II, 307):

ԶՈՒՐՈՒՅԵԼ - <<Համ փաշայ է, համ ամիլտար (թուրք. ameldar-կառավարիչ) է, նազըր է, ով կու **զուրուցէ**, զինչ որ անէ>> (Մանր ժամ. I, 216):

ԹԵԶԵՆԻ - <<Փախան ու **թեզենին** ելան>> (ՌԻՄՀԲ, II, 376):

ԼԵԳԵՀՈՆ - <<Սա կորուսիչ Սադայելի / Եւ բազմութեան **լեգեհոնի**>> (ՌԻՄՀԲ, I, 52):

ԼԾԱԿԻՑ - <<Ես՝ Տէր Խաչատուրի **լծնակից** Մարին, որքս փոխեցա առ այն, որում ցանկայի>> (Դիվան VII 269):

ՀԱԲԵՂԱՅ - <<Պոստանճի ոմն ըստ Ղազար **հաբեղին**>> (Մկ. Աղանունի, 227):

ՀԱՄԱՌ (ամառ) - «Որ պիսէ **համառան** տաք եղանակին» (ՌԻՄՀԲ, II, 656):

ՀԱՅՎԱՅ (հայացք) - <<**Հայվացդ** եղան ու ճէրան>> (ՌԻՄՀԲ, II, 360):

ՀՈՒՐԱՐ (ուրար) - <<Տըլիր **հուրար**, գիրս կարդացի>> (ՌԻՄՀԲ, II, 371):

ՆՈՒՎԱԶ - <<Ես բնութեամբ տկար եմ, քան զամենայն որդիս մարդկան և մարմնով **նուվազ**>> (Եղիա Մուշ., 244): <<Ես բնութեամբ տկար եմ, քան զամենայն որդիս մարդկան և մարմնով **նուվազ**>> (Զաք. 244):

ՎԱՐԱՅԻ - <<Այս Բ բինադարս **վարացի** են, ազգաւ հայ, ... անունն Շահվերդի, միոսն Գասպար, սոքայ իւրեանք մֆլիս սնդուն հանեցին>> (Զ. Ագուլ., 72):

ՎԱՐԴԱՎՊԵՏ - <<**Վարդավպետ** ծայոյայ Կարապետ զարդարեսին>> (Զեռ. հիշ., 13):

ՎԷՐԵԺ - <<Ձեռն է, մի թէ աստուած **վերեժն** անէ>>: <<Աստուած **վերեժ** անէ նոցին>> (Մանր ժամ. I, 224):

ՓԹԻԹԵԼ (փթթել) - <<**Փթիթել** բացուած ծաղիկ>> (ՄՄ 1127, 155բ):

ՔԻՆԹ (քիթ) - <<Աստուծով մին **քինթ** չարիւննեցաւ, անվնաս մնաց Աստուծով>> (Զ. Ագուլ., 96):

ՔԻՇԵԼ (քշել) - <<Անիծած Նողայն ... ոչխար ու տաւարն **քիշեց** ու ձիանն ամենն ասքերին կերցուց>> (Մանր ժամ. I, 214): <<Ետ այնորիկ Շահինքերայ ելաւ գնաց, թէ սէֆեր կերթամ, գնաց եւ բազում նողայ **զիշեց**, ի ներս իբեր>> (Մանր ժամ. I, 213):

ՕՎԺԱՐ (յօժար) - <<Մեր կամաւ և **օվժար** սրտիւ ծախեցինք Համզանց խուց իր մառանով>> (Յիշ. Սանահն., 159):

Հինյունի անկում: ԱՆԴՈՒԳ (յանդուգն) - <<Նա սիրելի է, քան իմաստուն **անդուգ**>> (ՈՒՄՀԲ, II, 523):

ԱՆՏԳՆԵԼ (յանդգնել) - <<Եթէ՛ պարոն, եթէ՛ տանուտեր, թէ՛ իր, թէ՛ աւտար՝ ով **անտգնի** յետ ու յառաջ տայ՝ զայս անիծից տակին կենայ որդաւք և ընդանաւք>> (Յիշ. Սանահն., 171):

ԱՐՄԱՐ (յարմար) - <<Որ զքեզ գովեմ խիստ զանազան, գեղգեղելով քերեմ **արմար**>> (ՈՒՄՀԲ, I, 63):

ԵՐԿԻՔ (երկինք) - <<Ստեղծեցեր **երկիք**, գետին>> (ՈՒՄՀԲ, II, 372):

ՄՍԵԼ (մրսել) - <<Բազումք ի ձիւնն **մսեցան**>> (ՈՒՄՀԲ, I, 20):

ՈՒԺԱՐ (յօժար) - <<Իմ կամաւ և **ուժար** սրտիւ մլայփոսի Ազիզբեկանց հողն տվի Սանահնու առաջնորդ Սարգիս յեպիսկոպոսին>> (Յիշատ. Սանահն., 173): <<Իմ կամաւ և **ուժար** սրտիւ հողն տվի>> (Յիշ. Սանահն., 176):

ՍԿԻ (սկիհ) - <<Յիշատակ է **սկիս** Քիլիու ի դուռն Սր.Աստուածածնայ եկեղեցուն տիրացուներուն>> (Դիվան VII 322):

ՏԱՐԱՄ (տարտամ) - <<Ես միշտ ի մաղթանս յիշել զիս **տարամ**>> (ՈՒՄՀԲ, II, 501):

ՔԱՆՉԵԼԻ (սքանչելի) - <<Թվին ՌԿԶ յուլիսի ԺԷ քաղաքս անձն եկաւ, գետոց արուցմունք (վարարում) եղաւ, Ժ-Ի կարմունճ տարաւ, Ե-Զ հոգի խեղդեցաւ և շատ **քանչելիք** ցուցաւ>> (Մանր ժամ. I, 208): <<Խիստ **քանչելիք** եղաւ ամսեանն օոստոսի Բ>> (Մանր ժամ. I, 209):

Հնյունների ամփոփում: ՀԱՏՈՒԱԶԵԻ (հատուածաձև) - <<Եւ մագլադն **հատուածն**>> (Ստ. Ռոքշա, 62):

ՄԱԳԻԱՐ (մագաղաթ) - <<Եւ **մագլադն հատուածն**, որ ցուցաւ գրեալ ի սկզբանէն կարգս ոսկեղէն գրով>> (Ստ. Ռոքշա, 62):

ՅԱՊՈՎԵԼ (ապաւինել) - <<Այսուհետն ամենայն բան քեզանից գիտեմ և քեզ **յապովեմ**, լաւն և վատն քո աչացն կու տեսանեմ>> (Դիւան Նոր Զուղ., 105):

ՊԱՏՈՆԴԱՆ (պատուանդան) - <<Երիջանէնց Գուրիագն ետ մէկ լաւ խաչ իւր **պատոնդանովն**>> (Ակոռի քյոթ., 206):

ՔԱՀԱՆԱՊԵՏ - <<Պետրոս կացեալ անդ **քահանապետ** ամս է>> (Զեռ. հիշ., 26):

Դրափոխություն: ԲՇԻԺԿ - <<Անտիոնոս **բշիժկ** առաքեաց եւ թունաւոր դեղովք սատակեցին զնա>> (Մանր ժամ. II, 311):

ԶՈՆՔԱԶ - <<Քեզ **գոնքաչ** լինիմ, դուստր իմ՝ կին քեզի>> (ՈՒՄՀԲ, II, 479): Հայերենի շատ բարբառների ու խոսակցական տարբերակին բնորոշ այս բառը ներկայացնում ենք՝ ծագման հնությունն ի ցույց դնելու համար:

ԺՈՎՈՂԵԼ - <<Այս ասկարս ամեն **ժովողին**, մին օր դաֆիլ (հանկարծ) բերթին դուս գայ, կանչե՛ ով որ խանի կողմն է, ձի նստի>> (Զ.Ագուլ. 135):

ՃԱՂԱՊԵԼ (ճապաղել) - <<Փաթրիքն յաւելի քան զՃ քսակ բոլոր **ճաղապեալ**, զի շարջակայ եղեալ տանց զինն վճարեալ>>(ՄԺ I, 38):

ՈՒՍՏՈՒԿԱՊԷՍ (սուտակասպաս) - <<Սուտ եղբարց, Կայեն ընկերաց / **Ուստուկապէս** յարակցաց>> (ՈՒՄՀԲ, II, 428):

ՉԻՃ (ճիչ) - <<Քոյր թագուհոյն Թէոդոսիէ **չիճ** բարձեալ առ զօրսն թէ՛ ուր է ծիրանափառ թագուհին (ՄԺ I, 364):

ԶՈՐԻԼ (ջուր) - <<**Ջորիլ**-ժողով>> (ՄՄ 1127, 151ա):

ՏՕՐՊԱԿ - <<Եկեղեցին վասն շինութեան իւրոյ ունի 30 եւ 40 **տօրպակ** պարսք>> (Յ.Կոլոտ, 258):

Նշված հնչյունափոխական դրսևորումների արդյունքում հաճախ միևնույն բառը ստացել է հնչյունական մի շարք տարբերակներ: Օրինակ՝ **բուրվառ** բառը հանդիպում է **հուրվառ**, **հուովառ**, **փուովառ** տարբերակներով:

Կանթեղ – **կանդեղ**, **կանթդեղ**,

Մահտեսի – **մդտեսի**, **մդտեցի**, **մդդեցի**, **մդտսի**, **մուդտասի** և այլն:

Վերը բերված հնչյունափոխական փաստերով վաղ աշխարհաբարն անշուշտ չի սահմանափակվում: Տասնյակ աղբյուրներից կարելի է քաղել հնչյունափոխության դրսևորումների նորանոր փաստեր, որոնց մեջ քիչ չեն նաև եզակի օրինակները: Այսինքն՝ աշխատանքներն այս ուղղությամբ երբեք չի կարելի ավարտված համարել:

Հնչյունափոխական դրսևորումները մենք դիտարկում ենք բառապաշարային, հաճախ նաև՝ բառակազմության հարթության վրա, քանի որ մեր հետաքրքրության առարկան այս դեպքում որքան հնչյունափոխությունն է ինքնին վերցրած, նույնքան էլ՝ այդ ճանապարհով նոր բառերի, բառաձևերի առաջացումը: Այսպես՝ **տաղաւար-տեղաւար**, **ուղեւոր-ուղաւոր-օղաւոր(ել)**, **աղմուկ-աղմունկ**, **աբեղա-հաբեղա** **գույգերում** հնչյունական մեկ փոփոխությամբ իմաստային նոր անցումներ են ստացվել, և լեզվի զարգացման շարունակությունը նման դեպքերում հանգեցնում է ուղղակի նոր արմատի կամ բառի առաջացմանը՝ հնչյունափոխության ճանապարհով: Այդպիսով հնարավոր է ցույց տալ, որ արմատների, բաղադրիչների հնչյունափոխությունը նոր իմաստների հանգեցման չղաղարող ընթացք է, և լեզվական այդ ընթացքը շարունակական է եղել ինչպես հայերենի նախագրային, գրաբարյան, այնպես էլ՝ աշխարհաբարյան շրջաններում: Բացի այդ՝ մեր քաղած փաստերից շատերը հայերենի հնագույն շրջանի բառային վերապրուկներ են, որոնք պահպանվել են վաղաշխարհաբարյան աղբյուրներում՝ շրջանցելով գրաբարն ու միջին հայերենը: Այդպիսի բառեր կարող են դիտվել **ոյնել (ունել)**, **կաշառակուր**, **աղջագուրել**, **անդադիր**, **շեաղջ** և այլն: Այս բոլոր փաստերը հայերենի պատմական զարգացման ընթացքը պարզաբանելու

լրացուցիչ մարզարտահատիկներ են, որոնք ավանդվել են 17-18-րդ դարերի աղբյուրներով:

Համառոտագրություններ

Առ. Դաւիթ. - Առաքել Դաւիթեցի, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ.Ա.Խանլարյանի, Երևան, 1990:

Ակոռի քյոթ. - Հակոբ Փափազյան, Ակոռու Ս.Հակոբ վանքի քյոթուկը, Բանբեր Մատենադարանի, թ. 12, Եր., 1977, էջ 191-213:

Դ. Զեյթ. - Դաւիթ Զեյթունցի, Չափածո տոմար, տե'ս Դաւիթ Զեյթունցի, Մեկնութիւն քերականի, Եր., 1981, էջ 183-187:

Դիւան Նոր Զուղ. - Դիւան Նոր Զուղայի Ս.Ամենափրկիչ վանքի, մասն Ա, Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705), աշխատասիրեց՝ Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003:

Դիվան II, III, IV, V, VII - Դիվան հայ վիմագության, պրակներ II, III, IV, V, VII, Եր., 1960, 1967, 1973, 1982, 1996:

Եղիա Մուշ. - Եղիա Մուշեղեան և իր գրական արտադրութիւնները, Հ.Ոսկեան, Հանդէս ամսօրեայ, 1927 :

Զ. Ագուլ. - Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, Եր., 1938:

Զաք. - Զաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:

Կալվաձագր. - Կալվաձագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ I, կազմեց Հար. Աբրահամյան, Եր., 1941:

Հայերը Մոլդ. - Լեւոն Բաբայեան, Հայերը Մոլդաւիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911:

Մանր ժամ. I - Մանր ժամանակափութիւններ (XIII-XVIII դ.), հատոր I, կազմեց՝ Վ.Ա.Հակոբյան, Եր., 1951, 454 էջ:

Մանր ժամ. II - Մանր ժամանակագրութիւններ (XVII-XVIII դ.), հատոր II, կազմեց՝ Վ.Ա.Հակոբյան, Եր., 1956, 682 էջ:

Մկ. Աղաւնունի - Մկրտիչ Եպս. Աղաւնունի, Միաբանք և այցելութ Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929:

ՄՄ 1127 - Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր N 1127:

ՄՄ 1756 - Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր N 1756:

Յ. Թութունջի - Յովհաննէս Թութունջի, Ուղեգրութիւն (1678-80թթ.), Հ.Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 301-311:

Յիշ. Սանահն. - Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեթուկը), աշխատ. Պարոյր Մուրադեանի, Ս.Էջմիածին, 2007:

Յ.Կոլոտ – Հ. Սահակ Ճեմճեմեան, Նոր նիւթեր Կ.Պոլսոյ երջանկայիշատակ պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին (քաղուած Ս.Ղազարի դիւանէն), <<Բազմավէպ>>, 1978, 3-4:

Նշխարք - Նշխարք մատենագրութեան Հայոց, հրատ. Ք.Պատկանեան, Ս.Պետերբուրգ, 1884:

Պատմ. Երուս. - Սարգիս Վարդապետ, Պատմութիւն Երուսաղէմի, <<Սիոն>>, 1931 թ.:

Ձեռ. հիշ. - Նորայր Պողոսյան, Հայ հնաստիպ գրքի ձեռագիր հիշատակագրութիւններ (1512-1712), Եր., 2012:

Ստ. Ռոշքա - Ստեփանոսի Ռոշքայ Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, հրատ. Հ.Ոսկեան, Վիեննա, 1964:

ՈՒՄՀԲ I, II - ՈՒՀ միջնադարի հայ բանաստեղծութիւնը, աշխատասիրութեամբ Հասմիկ Սահակյանի, հտ. I-II, Եր., 1982-86:

Օգոստ. Բաջ. - Աւգոստինոսի Բաջեցոյ ճանապարհորդութիւն յԵւրոպայ, <<Բանասէր>> հանդէս, հատոր 1-ին, գիրք Գ, Փարիզ, 1899:

Эзов - Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом (документы), С. Петербург, 1898:

Poghosyan Norayr – New Sound Interchange-Vocabulary Manifestations in Modern Armenian. – Armenian vocabulary is continually changing and enriched with new words. One of the ways of creating new words is sound interchange. Both in the old stages of Armenian and in the early stages of Modern Armenian we can come across different types of sound interchange; the words, created by means of these sound interchange types, differ from Old Armenian (grabar) and often also take new meanings.

From numerous sources of Late Middle Armenian we collected a number of examples of words that underwent sound interchange, then we distributed them according to vowel, consonant interchange as well as to other types. Armenology has achieved significant results in this sphere and the sound interchange facts of early ashkharhabar come to complement to the notions about Armenian sound interchange.

The subject of our interest is sound interchange as well as the creation of new words by means of it. In such a way it becomes possible to demonstrate that sound interchange in words and roots is a continuing process of creating new meanings which has never stopped in all the stages of Armenian.

ԶՐՈ. ԳՈՅԱԿԱՆ, ԹԵ՞ ԱՆԿԱՆՈՆ ԹՎԱԿԱՆ

Թվական անուններն իրենց առաջացմամբ կապված են եղել որոշակի առարկաների հետ: Հաշվելու կարիք զգալով և թվի գաղափար չունենալով՝ մարդը դիմել է, որպես կանոն, ձեռքի և ոտքի մատների, մարմնի մասերի և կամ էլ այլ առարկաների օգնությանը: «Տասը մատները, - գրում է Ֆ.Էնգելսը, - որոնց վրա մարդիկ սովորել են հաշվել, այսինքն սովորել են առաջին թվաբանականը կատարել, ամեն ինչ են, բայց ոչ երբեք բանականության ազատ ստեղծագործության արդյունք»¹:

Աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ մատներով հաշվելու բազմաթիվ փաստեր կան: Այսպես՝ «Հարավային Աֆրիկայում բերգղամա ժողովուրդը հաշվում էր հետևյալ ձևով. նախ հաշվում էին ձախ ձեռքի մատները, սկսելով ճկույթից, հետո՝ աջ ձեռքը, հետո՝ ձախ ոտքը, ապա՝ աջ ոտքը. ոտի ու ձեռքի հինգ մատների համար հինգ տարբեր անուն ունեին: Հաշվում էին նաև զույգ-զույգ և մատների յուրաքանչյուր զույգը բռնելիս ասում էին՝ այս երկուսը, իսկ երբ թիվը զույգ չէր, մի մատ բռնելով՝ ասում էին՝ «այս մեկը»²:

Թվական անունների՝ անմիջաբար մարմնի մասերի կամ առարկաների հետ կապված լինելու մասին են վկայում նաև լեզվական փաստերը³: Այսպես՝ Լաբրատորում հինգն է *tallek*, որ նշանակում է «ձեռք», իսկ քսանը անվանում են մի բառով, որ նշանակում է «ձեռք ու ոտք միասին»: Հայ բոշաները հինգը կոչել են «աթ մը», որ նշանակել է «ձեռք մը»: Դահոմեի էվե բարբառով 15 նշանակում է «երեք ոտք», իսկ ամերիկյան տակելմա լեզվով քսանը նշանակում է «մի մարդ»:

Բացի մարմնի անդամների անուններից և նրանց հետ առնչվող բառերից՝ հաշվելու համար գործածվել են նաև նույնքան միություն պարունակող զանազան առարկաներ: Այսպես Դահոմեի էվե բարբառում 40-ը նշանակում է «թելի վրա շարված 40 խեցի»⁴: Կորեերենում *duram* նշանակում է «20 ձկան մի կապոց»: Անգլերեն *score* նշանակել է «նշան անել, խազ քաշել». անցնելով «հաշվեփայտի վրա քաշված խազ» իմաստից՝ հասել է «քսան» նշանակության, այժմ էլ *three score* «երեք խազ» նշանակում է «60»⁵:

¹ Ֆ. Էնգելս, Անտի - Դյուրինգ, Ե., 1952, էջ 48:

² Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I, Ե., 1952, էջ 135: Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 135-137:

³ Տե՛ս Հր.Աճառյան, նշվ. աշխ., էջ 232-239:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 166:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 167:

Ինչ-որ քանակությամբ առարկաների տրված անունը կարող է կորցնել իր նախնական նշանակությունը և վերագրվել ոչ միայն այդ չափով այսինչ առարկայի, այլև ընդհանրապես ամեն մի բանի (օր.՝ շվեդերեն *decher* բառացի նշանակել է «10 հատ կաշի կամ մորթի»⁶) և կամ ուղղակի վերածվում է թվականի (օր.՝ ռուս. *сорок* բառը⁷): Նմանատիպ փաստերի կարելի է հանդիպել նաև այժմ. հմմտ. *մի տուփ ծխախոտ*, որ նշանակում է (և հասկացվում է) «քսան հատ» (օրական ինչքա՞ն էս ծխում: - 2 տուփ), *մի արկղիկ ձու*, որ նշանակում է «30 հատ», *մի արկղ զարեջուր*, որ նշանակում է «20 շիշ»⁸:

Այս և նմանատիպ փաստերը վկայում են, որ զրոն չկա և չէր էլ կարող լինել թվականների համակարգում: Ջրոյի մասին վկայություն չկա «Աստվածաշնչում», այն վկայված չէ նաև գրաբարյան բառարաններում (ՆՀԲ, ԱԲ) և բանահյուսական նմուշներում:

Ջրոյի ստեղծման և՛ ժամանակաշրջանի, և՛ տեղի վերաբերյալ կարծիքները տարբերվում են: Ջրոյի ներմուծումը վերագրվում է հնդիկ մաթեմատիկոսներին⁹, չինացիներին¹⁰, բաբելոնացիներին¹¹, հույներին, հին տիբեթավիժնյան մշակույթին¹², Ինդոսի ավազանի մինչարիական մոհեջարո քաղաքակրթությանը, ինկերին¹³:

Պետք է ասել, որ զրոյի ծագման վերաբերյալ տարակարծությունները հիմնականում պայմանավորված են զրոյի՝ գրավոր տեքստերում տարբեր արտահայտվածություն ունենալու հանգամանքով: Արաբներն ու հնդիկները զրոն պատկերել են կետի տեսքով¹⁴, մայաները՝ կիսախուփ աչքի տեսքով¹⁵, զրոն պատկերվել է նաև արակի դատարկ ժետոնի կամ ձևափոխված կետի ձևով¹⁶: Իսկ հույները զրոն նշանակեցին «Օ» նշանով, որ *oysel* «ոչինչ» բառի

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 198:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 199:

⁸ Տվյալ դեպքում *տուփ*, *արկղ* բառերը կոնկրետ թվական նշանակություն են ստանում՝ կապվելով ինչ-որ կոնկրետ առարկայի կամ բայի հետ, իսկ նրանց նշանակությունը առանց այդ առարկաների (*ծխախոտ*, *ձու*, *զարեջուր*) կամ բայերի խոսքային իրավիճակից դուրս չի վերացարկվում, ուստի և նրանք թվականի չեն վերածվում:

⁹ Տե՛ս Начала Евклида, кн. VII-X, перевод с греческого и комментарии Д.Д. Мордухай - Болтовского, при редакционном участии И.Н. Веселовского, М-Л, 1949 г., стр. 260: Володарский А.И., Очерки истории средневековой индийской математики, М, 1977, стр.29:

¹⁰ Տե՛ս Юшкевич А.П., История математики в средние века, М., 1961, стр. 25:

¹¹ Տե՛ս Начала Евклида, кн. VII-X, перевод с греческого и комментарии Д.Д. Мордухай - Болтовского, при редакционном участии И.Н. Веселовского, М-Л, 1949 г., стр. 260:

¹² Տե՛ս Выготский М. Я., Происхождение ноля в вавилонской нумерации: Историко-математические исследования, Вып. 12, 1969 г.: Նույն հեղինակի «Арифметика и алгебра в древнем мире, М., 1967, стр. 392-420»:

¹³ Տե՛ս Вернадский В.И., Размышления натуралиста, кн. 2, М., 1977, стр. 45:

¹⁴ Տե՛ս ван дер Варден Б.Л., Пробуждающая наука. Математика древнего Египта, Вавилона и Греции, М., 1959, стр. 78:

¹⁵ Տե՛ս Детская энциклопедия, М., 1959, стр. 38:

¹⁶ Տե՛ս Энциклопедия элементарной математики, М., стр. 49-50:

առաջին տառն է, կրճատումը¹⁷: Զրոյի՝ այսօրվա ձևի կիրառումը (Օ միկրոն) վերագրվում է նաև հույն աստղագետ Կլավդիոս Պտղոմեոսին (մ.թ. II դար)¹⁸:

Մեր նպատակից դուրս է պարզելը, թե ով է առաջինը կիրառել զրոն ու ինչ ձևով, բայց թե ինչ նշանակությամբ է այն սկսել կիրառվել, առավել քան կարևոր է:

Զրոյի նշանակությունը բացատրվում է այսպես. «Զրոն հնարող հնդիկները այն անվանեցին սունյա (sunga), որ նշանակում է «դատարկ», և դրանով ցույց տվեցին զրոյի իմաստը, որը փոխարինում է դատարկ պոնակները կամ կարգերը»:

Արաբները, փոխառելով զրոն և գործածելով այն սեփական թվաբանության մեջ, թարգմանեցին «դատարկ» բառը սեփական լեզվով՝ as-sifer (աս սիֆր): Եվրոպացիները, փոխառելով արաբական թվանշանները, զրոյի արաբական անվանումը՝ as-sifr, փոխարինեցին zephirum բառով, որը հետագայում ֆրանսերենում և իտալերենում հանեցրեց ze'ro - ի: Մյուս կողմից՝ արաբական as-sifer ձևը յուրացվել է ziffer ձևով, որից էլ առաջացել են ֆր. chiffer, գերմ. ziffer և ռուս. нуль¹⁹: Լատինական անվանումը՝ nullus «ոչինչ», զրոն նշանակելու համար սկսել է շրջանառվել XVI դ.:

Ինչպես նկատում է Ֆ. Էնգելը, «Մաթեմատիկական առաջ է եկել մարդկանց պրակտիկ կարիքներից (ընդգծումը բնագրում՝ Ա. Ս.), հողամասերը և անոթների տարողությունը չափելու պահանջից, ժամանակի հաշվարկումից և մեխանիկայից: Բայց ինչպես մտածողության բոլոր բնագավառներում, իրական աշխարհից աբստրակտ օրենքները զարգացման մի որոշ աստիճանի վրա կտրվում են իրական աշխարհից, հակադրվում են այդ աշխարհին իբրև մի ինչ-որ ինքնուրույն բան, իբրև դրսից եկած օրենքներ, որոնց հետ աշխարհը պետք է համակերպվի»²⁰:

Զրոն էլ, թվականներից տարբեր կերպով առաջանալով, բայց ծառայելով մաթեմատիկային, կարող էր անցնել թվականների շարքը՝ դառնալով թվական²¹: Բայց լեզվական փաստերը վկայում են, որ զրոն ոչ թե թվական է, այլ գոյական:

¹⁷ Ст' у ван дер Варден Б.Л., նշվ. աշխ., էջ 77:

¹⁸ Ст' у Демпан И.Я., История арифметики, М., 1959, стр. 72:

¹⁹ Ст' у Володарский А.И., նշվ. աշխ., էջ 26:

²⁰ Ст' у Ф.Энгелс, Անտի - Դյուրինգ, Ե., 1952, էջ 49:

²¹ Թվականի մի յուրահատկությունն այն է, որ նա, որպես կանոն, այլ խոսքի մասի կամ այլ խոսքի մաս թվականի չի վերածվում: Թվականներից խոսքիմասային փոխանցում է ապրել ու վերածվել ածականի *բոլոր* բառը, ինչպես նաև *մի* թվականը, որը վերածվել է անորոշ դերանվան: Իսկ ածականից թվականի շարքն է անցել *առաջին* դասական թվականը (տե՛ս Ս.Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 171):

Խոսքիմասային փոխանցման ենթարկված բառերի շարքում պետք է ավելացնել *քառորդ* բառը, որը, կոտորակային թվական մնալով հանդերձ, նաև գոյական է՝ «ուսումնական տարվա մաս» նշանակությամբ: Հենց այս նշանակությամբ *քառորդը* ուսումնական տարվա չորս **հավասար** մասերից մեկը չէ, այլ ուղղակի չորս մասերից մեկն է, ուրեմն և բառի բուն իմաստով կոտորակային թվական չէ: Որպես թվական գնահատելիս, բացի վերոբերյալ նշանակությունից, հաշվի ենք առնում նախ՝ որ *քառորդ* բառի հոլովումը փոխանվանական չէ

1. Հայտնի է, որ բառակազմորեն թվականը բնորոշվում է իր կազմության հատուկ օրինաչափությամբ, այն է՝ սակավաթիվ արմատական թվականների ամենատարբեր զուգակցումներով լեզուն հնարավորություն ունի արտահայտելու թվականների անսահման բազմությունը²²: Ընդ որում՝ թվականների ամեն մի տեսակ ունի յուրահատուկ կազմություն, որով և տարբերվում է մյուսներից:

Ա. Քանակական թվականները, որոնք սկզբնաձև են կոտորակային, դասական և բաշխական թվականների համար, կազմվում են արմատական և ածանցավոր թվականների տարաբնույթ համադրումներով: Մինչդեռ զրոն չի մասնակցում և ոչ մի քանակական թվականի կազմությանը, չի հանդիպում թվականի մեջ և ոչ մի դիրքում:

Բ. Դասական թվականները կազմվում են քանակականներից *-որոր* կամ *-երորդ* ածանցներով, իսկ զրոյից դասական թվական չի կազմվում, նրանով թվային կարգ ցույց տալ հնարավոր չէ, ուստի և *զրոյերորդ* ձև սպասելի չէ:

Գ. Բաշխական թվականները, որոնք ցույց են տալիս առարկաների հավասար քանակական բաշխում, կազմվում են քանակականներից *-ական* ածանցով, և այս եղանակով բաշխական թվական կարելի է կազմել բոլոր թվականներից: Մինչդեռ զրոյից *-ական* ածանցով ոչ թե դասական թվական, այլ ածական է կազմվում, այսպես՝ *զրոյական գիտելիքների տեր* կապակցության մեջ զրոն ոչ թե բաշխում է ցույց տալիս, այլ գիտելիքի ինչպիսին լինելը, ավելի ստույգ՝ բացակայությունը:

Բաշխական թվականներ կարող են կազմվել նաև քանակականների կրկնությամբ: Կազմության այս եղանակը, սակայն, սահմանափակումներ ունի. «կրկնավորով բաշխական սովորաբար կարող են կազմվել փոքր թվականներից և սակավաթիվ կլոր թվերից»²³: Այս եղանակով նույնպես զրոյից բաշխական թվական չի կազմվում:

(ինչպես սպասելի էր թվականների դեպքում): Երկրորդ՝ *քառորդ* բառի հետ կարող են կիրառվել *առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ* դասական թվականները, օրինակ՝ *առաջին քառորդում*, ածական, օրինակ՝ *վերջին քառորդում*, դերանուն, օրինակ՝ *բոլոր քառորդները*՝ ձևավորելով որոշիչ – որոշյալ կապակցություն: Մինչդեռ *քառորդ* բառի հետ վերջինիս թվականական (կոտորակային) կիրառության դեպքում գործածվում է քանակական թվական: Ընդ որում՝ ոչ միայն 1-4 թվականները, այլև ավելի մեծ թվական ևս, ինչպես՝ *մեկ քառորդ, հինգ քառորդ*: Երրորդ՝ *քառորդ* բառից ածական է կազմվում, հմմտ. *քառորդային գնահատականներ, քառորդային առաջադիմություն*:

Նման խոսքիմասային փոխանցում է ապրել, ստանալով «մեկ երկրորդ» կամ «հինգ տասնորդական» նշանակությունը, *կես* ածականը՝ հավանաբար այդ ածականի փոխանվանական կիրառության հետևանքով: Այդպիսին է նաև *կեսի կեսը* կապակցությունը, որը կարող է գործածվել «մեկ քառորդ» նշանակությամբ, օրինակ՝ *Սորա կեսը, կեսի կեսը, Գեթ երևեր մեր ազգում. Բայց մեր կանայք... ու՛ր Եղիշե, Ու՛ր մեր տիկնայք փափկասուն*: Հմմտ. նաև *կես քառորդ* (տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ. էջ 312):

²² Տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Ե., 1983, էջ 162:

²³ Ս.Գ.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 174:

Ս.Գյուլբուղայանն առանձնացնում է բաշխականների մի ձև, որ գործածվում է մարզական գրականության մեջ և հաղորդումներում: «Առարկայի քանակային բաշխման գաղափարը, - գրում է նա, - կարող է արտահայտվել նաև 1:1, 2:2, 5:5 ձևով, օրինակ՝ խաղն ավարտվեց 2:2 հաշվով: Բայց երբեմն կարող է անհավասար բաշխում լինել.... դաշտի տերերը հաղթանակով դուրս եկան, խաղի հաշիվն է 3:4: Տվյալ դեպքում խփված գնդակների ընդհանուր քանակը՝ 3:4, բաշխված է թիմերի միջև, բայց ոչ հավասար»²⁴:

Մարզական այս հաշիվներում գրոն կարող է հանդես գալ թե՛ իբրև կրկնավոր, թե՛ որևէ թվականի համադրությամբ, ինչպես՝ *խաղն ավարտվեց 0:0 // 3:0 հաշվով*: Բայց այս դեպքերում էլ այն թվական չէ, քանի որ ցույց է տալիս ոչ թե միավորների քանակ, այլ դրանց բացակայությունը:

Դ. Կոտորակային թվականը հարադիր բարդություն է, որի առաջին բաղադրիչը՝ համարիչը, քանակական թվական է, իսկ երկրորդը՝ հայտարարը՝ դասական: Ջրոն չի մասնակցում նաև կոտորակային թվականների կազմությանը՝ չլինելով ո՛չ համարիչում և ո՛չ էլ առավել ևս հայտարարում (գրոյի բաժանել չի կարելի):

Ջրոն կարող է հանդիպել խառը (կամ տասնորդական) կոտորակներում՝ *ամբողջ* բառի համադրությամբ. հմմտ. *չորս ամբողջ հինգ տասնորդական* և *գրո ամբողջ հինգ տասնորդական*: Բայց նույնիսկ այս դեպքերում գրոն չունի թվական նշանակություն, ավելին, այն հավելյալային է, այսինքն՝ *գրո ամբողջ հինգ տասնորդական* կապակցությունը առանց գրոյի էլ գիտակցվում է իբրև կոտորակ:

2. Թվականները պատասխանում են *որքան, ինչքան, որերորդ* հարցերին: Մինչդեռ գրոն չի պատասխանում թվականներին տրվող հարցերից և ոչ մեկին:

3. Բացատրական բառարաններում գրոն ուղեկցվում է *գոյական (q.)* նշումով²⁵:

²⁴ Ս.Գյուլբուղայան, Թվական անունը ժամանակակից հայերենում, Ե., 1964, էջ 27: Բաշխականների այս ենթատեսակը «ավանդականից» տարբերվում է ոչ միայն նրանով, որ կարող է ցույց տալ նաև անհավասար բաշխում, այլև հետևյալով. դասական սահմանումով բաշխական թվականները առարկաների հավասար բաշխում են ցույց տալիս՝ առանց բաշխվող առարկաների ընդհանուր քանակը նշելու: Այսպես՝ *Յուրաքանչյուրն ստացավ երկուական տետր*՝ նախադասությունից հայտնի չէ, թե ընդհանուր առմամբ քանի տետր է բաժանվել: Մինչդեռ մարզական հաշիվներում գործածվող բաշխական թվականներից հայտնի են թե՛ միավորների ընդհանուր թիվը, թե՛ համապատասխան բաշխումը: Պետք է նկատի ունենալ նաև, որ նման բաշխականները *հաշիվ* բառի գեղջմամբ «մակբայանում են»՝ ուղղակի կապակցվելով բայի հետ. հմմտ. *խաղն ավարտվեց 3:3 (հաշվով)*: Մարզական հաշիվներում ի հայտ եկող բաշխականները թվային ինչ-ինչ սահմանափակումներ պիտի ունենան, քանի որ մարզական խաղերն իրենք տարածական ու ժամանակային սահմանափակումներ ունեն: Դժվար է պատկերացնել մի խաղ, որն ավարտվել է 1000:1000 (կամ ավելի մեծ) հաշվով:

²⁵ Տե՛ս *գրո* բառահոդվածի տակ՝ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Ե., 1969: Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Ե., 1977:

4. Թվականների շարահյուսական հիմնական կիրառությունը որոշ-
չայինն է, երբ թվականը հանդես է գալիս որպես գոյականական բառա-
կապակցության ստորադաս անդամ, ինչպես՝ *հինգ մարդ, ութ օր*: Մինչդեռ
անհնար է պատկերացնել *գրո մարդ, գրո օր* կապակցություններ: Նման բոլոր
դեպքերում գրոյի դիրքում գործածվում է *ոչ մի* բառը: Իսկ այն դեպքում, երբ
գրոն գոյականական բառակապակցության ստորադաս բաղադրիչ է, այն
թվականական նշանակություն չունի, ինչպես՝ *գրո վերջավորություն, գրո ձև*:
Այլ կերպ ասած՝ եթե, օրինակ, *ութ* և *հինգ* թվականները նույն բառա-
կապակցության մեջ իրար կարող են փոխարինել²⁶, ինչպես՝ *հինգ օր* կամ *ութ*
օր, ապա գրոն նրանց դիրքը զբաղեցնել չի կարող:

5. Զրոն բոլոր կիրառություններում հանդես է գալիս ոչ որպես փո-
խանուն: Մինչդեռ թվականները, գոյականական պաշտոններում կիրառվելով,
փոխանվանական նշանակությամբ են հանդես գալիս՝ ներառելով առարկայի
իմաստ²⁷:

6. Ըստ Պ. Բեդիրյանի «Դարձվածաբանական բառարանի» տվյալների՝
գրոյով ձևավորված 18 դարձվածային միավոր կա: Դրանցից կեսից ավելիում
գրոն կապակցվում է անմիջապես բայի հետ: Մինչդեռ հայտնի է, որ թվականը
բայի հետ չի կապակցվում: Այսինքն՝ եթե գրոն թվական լիներ, դարձվածային
միավորների նման առատություն սպասելի չէր լինի: Ուրեմն և՛ այն փաստը,
որ գրոն ի գործ է անմիջապես բայերին կապակցվելու, խոսում է այն մասին,
որ գրոն թվական չէ:

Այստեղ հարկ է մանրամասնել. թվականներով բաղադրված բազմաթիվ
դարձվածային միավորներ կան, բայց դրանց մի չնչին մասում են միայն
թվականները անմիջապես կապակցված բային (հմմտ. *յոթ չափել, մեկ կտրել,*
մեկը հազար // տաս // հարյուր անել, հազար ասել, ութ գրել, միլիոն տալ, փո-
րը վեց-վեց անել և այլն: Սակայն դրանցում կա մ՝ ա) զեղչված անդամ կա,
կա մ՝ բ) թվականը փոխաբերական նշանակություն ունի կա մ՝ գ) թվականը
գործածված է գոյականաբար, փոխանուն է (*միլիոնների հետ է խաղում, քեզ*
նման հազարն էլ ասի):

Մինչդեռ գրոյով բաղադրված դարձվածային միավորներում գրոն ո՛չ
փոխաբերական իմաստով է հանդես գալիս, ոչ փոխանուն է, ո՛չ էլ զեղչված
անդամ է վերականգնվում: Դա էլ հենց լավագույնս վկայում է, որ գործ ունենք
ոչ թե թվականի, այլ գոյականի հետ: Հմմտ. գրոյով բաղադրված հետևյալ
դարձվածային միավորները՝ *հավասարեցնել գրոյի, հանգեցնել գրոյի,*
վերածել գրոյի, դարձնել, գրո, գրո լինել:

²⁶ Անշուշտ, նկատի ենք առնում այն դեպքերը, երբ տվյալ գոյականի համար տվյալ թվականը
տրամաբանորեն սպասելի է: Հմմտ. *շաքաթվա հինգ օրն էլ*, բայց ոչ՝ *շաքաթվա ութ օրն էլ*:

²⁷ Իհարկե, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխանվան մեջ ներառված չէ այս կամ այն
առարկայի իմաստ, ինչպես՝ *չորսը երկուսի կրկնապատիկն է* (տե՛ս Ս.Գ.Աբրահամյան,
Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարա-
բերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 201):

Հետաքրքիր է նաև հետևյալը. թվականները, որպես կանոն, դարձվածային միավորներում համարժեք են թարգմանվում: Մինչդեռ գրոն, օրինակ, ռուսերեն մի շարք դարձվածային միավորներում կամ կայուն կապակցություններում ուղղակիորեն չի թարգմանվում: Հմտ. *Стричь под НОЛЬ* (գլուխը մերկ խուզել), *НОЛЬ ВНИМАНИЯ* (ոչ մի ուշադրություն), *В ДВЕНАДЦАТЬ НОЛЬ-НОЛЬ* (ճիշտ ժամը տասներկուսին):

7. Նույնիսկ որպես թվանշան՝ գրոն տարբերվում է մյուսներից. այն սկզբնային դիրքում չի հանդիպում (չհաշված տասնորդական կոտորակները, որտեղ այն, ինչպես ասացինք, հավելուրդային արժեք ունի): Իսկ վերջնային դիրքում էլ ոչ թե արտահայտում է իրեն, ինչպես մյուս թվականները, այլ կարգային նշանակություն է արտահայտում՝ մեծացնելով թվի արժեքը տասն անգամ:

8. Բոլոր թվականները բաժանվում են կենտ կամ գույգ թվերի: Զրոյի ընդգրկումը նման խմբերից մեկում միայն պայմանական բնույթ կարող է ունենալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնական թվերի շարքում գույգ թվին պետք է նախորդի ու հաջորդի կենտ թիվ (կամ կենտ թվին պետք է նախորդի ու հաջորդի գույգ թիվ), գրոն պետք է (կրկնում ենք՝ պայմանականորեն) համարվի գույգ թիվ, քանի որ նրան հաջորդում է կենտ թիվ՝ մեկը:

9. Եվ վերջապես, գրոյի բովանդակությունը տարբերվում է մյուս թվականների բովանդակությունից: «Այն բանի հետևանքով, որ գրոն (ընդգծումը բնագրում - Ա.Ս.) բացասումն է հանդիսանում ամեն մի որոշակի քանակության, նա գուրկ չէ բովանդակությունից: Ընդհակառակը, գրոն ունի խիստ որոշակի բովանդակություն: Որպես սահման բոլոր դրական և բացասական մեծությունների միջև, որպես միակ իսկապես չեզոք թիվ (ընդգծումը մերն է - Ա.Ս.), որը չի կարող լինել ոչ դրական, ոչ բացասական, նա ոչ միայն չափազանց որոշակի թիվ է ներկայացնում իրենից, այլև իր բնույթով շատ ավելի կարևոր է մյուս այն բոլոր թվերից, որոնց ինքը սահմանափակում է: Իսկապես, գրոն բովանդակությամբ շատ ավելի հարուստ է, քան մի այլ թիվ: Աջից ավելացնելով ամեն մի այլ թվի, նա մեր թվահամարման սիստեմի մեջ տասնապատկում է տվյալ թիվը: Զրոյի փոխարեն այս նպատակով կարելի է գործածել ամեն մի այլ նշան, բայց միայն պայմանով, որ այդ նշանը, ինքնին վերցրած, նշանակեր գրո, հավասար լիներ գրոյի: Այսպիսով, գրոյի հենց բնույթով է պայմանավորված այն, որ նա այդպիսի գործադրություն է գտնում, և որ միայն նա կարող է (ընդգծումը բնագրում - Ա.Ս.) այդպիսի գործադրություն ունենալ: Զրոն ոչնչացնում է ամեն մի ուրիշ թիվ, որով այն բազմապատկում ենք: Եթե այն դարձնենք բաժանարար կամ բաժանելի ամեն մի այլ թվի համեմատությամբ, ապա այդ թիվը կդառնա առաջին դեպքում անվերջ մեծ, իսկ երկրորդ դեպքում՝ անվերջ փոքր. գրոն այն միակ թիվն է, որը անվերջ հարաբերության մեջ է գտնվում ամեն մի այլ թվի նկատմամբ: Բայց ամեն մի առանձին որոշակի քանակությունից

ստացված ոչինչն ինքն ունի քանակական բնորոշում, և միայն այդ պատճառով էլ կարելի է գործառնել զրոյով:

Նույն այն մաթեմատիկոսները, որոնք միանգամայն անարգել կերպով զրոն գործառնում են վերոհիշյալ եղանակներով, այսինքն՝ նրանով գործառնում են մի որոշակի քանակական պատկերացումով, նրան քանակական հարաբերության մեջ դնելով այլ պատկերացումների հետ, սարսափելի վայնասուն են բարձրացնում, երբ այդ բառը Հեգելի մոտ գտնում են այնպիսի ընդհանրացված ձևով, թե որևէ ինչից ստացված ոչինչը մի ինչ-որ որոշակի (ընդգծումը բնագրում – Ս.Ա.) ոչինչ է.....»²⁸:

Երկրաչափության մեջ զրոն այն որոշակի կետն է, որից սկսած տվյալ ուղիղի վրա մի ուղղությամբ հաշվվում են դրական մեծությունները, իսկ հակառակ ուղղությամբ՝ բացասականները: Մեխանիկայում շարժումների հաշվման ժամանակ զրո կետը ամբողջ գործողության գլխավոր կետն ու առանցքն է կազմում: Ջերմաչափի զրո կետը միանգամայն որոշակի ստորին սահմանն է ջերմաստիճանային հատվածի, որը բաժանվում է որոշ թվով աստիճանների և, դրա շնորհիվ, ծառայում իբրև ջերմաստիճանների չափ՝ ինչպես ինքն իր ներսում, այնպես էլ ամենաբարձար ու ամենացածր աստիճանների համար²⁹: «Այսպես ուրեմն, որտեղ էլ մենք հանդիպենք զրոյի, նա ամենուր իրենից ներկայացնում է չափազանց որոշակի մի բան, և նրա պրակտիկ կիրառումը երկրաչափության, մեխանիկայի մեջ և այլն, ապացուցում է, որ իբրև սահման նա ավելի կարևոր է, քան թե նրանով սահմանափակվող բոլոր իրական մեծությունները»³⁰:

Այսպիսով՝ առաջադրված թե՛ բառակազմական, թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական չափանիշները վկայում են, որ զրոն գոյական է: Այն կա՛մ ցույց է տալիս համապատասխան կարգի դատարկ լինելը, կա՛մ հանդես է գալիս որպես հաշվական համակարգի ելակետ կամ սահման:

Santoyan Aren – Zero: noun or irregular numeral?.– Being formed differently from other numerals, zero first of all refers to mathematics, and consequently could be classified as a numeral. Linguistic facts, however, testify that zero is not a numeral, but a noun:

1. As is known, from word-formational view point numerals stand out for their regular way of formation: each set of numerals possesses a standard model with which it differs from others. Zero, nonetheless, is not classed under none of the models, holding a lot in common with the noun.
2. In syntactical constructions numerals mainly perform the function of the attribute when they are a secondary member of a noun phrase, e.g. five people, five days, whereas such combinations as *zero people*, *zero days* do not exist.
3. It is impossible to employ metonymy with zero while numerals when substantivized acquire a metonymical sense.

²⁸ Ֆ.Էնգելս, Բնության դիալեկտիկա, Ե., 1969, էջ 269-270:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 270-271:

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 271:

4. According to *Phraseological Dictionary* by P. Bediryan, zero is contained in eighteen phraseological units. In most of the idioms zero is directly collocated with a verb while as is known numerals do not collocate with verbs.
5. Even as a number zero is distinguished from other numerals: it is not used in pre-position not taking into account decimal fractions where its presence bears a formal character since such collocations are considered as fractions without zero too.
6. All numerals are grouped into odd and even ones. Classing zero under either of these categories would bear a conventional character.
7. Finally, the semantics of zero differs substantially from that of other numerals.

Сантоян Арен - Ноль: существительное или нерегулярное числительное?–

Ноль, образованный отличным от числительных способом, относится прежде всего к математике и мог бы тем самым пополнить ряды счетных слов, превратившись в числительное. Но языковые факты свидетельствуют, что ноль не числительное, а существительное.

1. Известно, что с точки зрения словообразования числительные характеризуются особой закономерностью своей структуры: каждый разряд числительных имеет специфическую модель, чем и отличается от других. Между тем, ноль не входит в указанную модель, во всем отождествляясь с существительными.
2. В синтаксических конструкциях числительные, в основном, употребляются в функции определения, когда они выступают в качестве подчинительного члена субстантивированного словосочетания. Например: *пять человек, пять дней*. В то время как невозможно представить сочетания типа *ноль человек, ноль дней*.
3. Ноль никогда не образует метонимии, а числительные, употребляясь в субстантивированном значении, приобретают метонимическое значение.
4. Согласно данным “Фразеологического словаря” П. Бедиряна, существуют 18 фразеологизмов с компонентом “ноль”. В большей части из них ноль сочетается непосредственно с глаголом. Между тем, известно, что числительные с глаголами не сочетаются.
5. Даже как цифра ноль отличается от других счетных слов: он не встречается в препозиции, не считая десятичные дроби, где имеет плеонастический характер, т.е. подобные сочетания и без нуля осознаются как дроби.
6. Все числительные делятся на четные и нечетные числа. Включение нуля в одну из этих групп может нести только условный характер.
7. И, наконец, семантика слова “ноль” резко отличается от содержания других числительных.

**ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՄԲ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՂ
ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ**

Այդպիսիք են դերանունները, ձայնարկություններն ու վերաբերականները, ինչպես նաև կապերի ու շաղկապների առանձին տեսակներ: Հոդվածում ներկայացնում ենք միայն դերանունների գործածության ակտիվությանն առնչվող մի քանի բնորոշ առանձնահատկություններ:

Բնութագրություններ ու որակումներ կատարելիս, ինչպես նաև տերմինակազմն օգտագործելիս մնում ենք այն տեսության շրջանակներում, ըստ որի դերանունները, որքան էլ տարատեսակ են ու բազմազան, կազմում են մեկ առանձին, ինքնուրույն խոսքի մաս, և նրանց միավորող գլխավոր հատկանիշն ամեննին էլ այլ խոսքի մասերին փոխարինելը չէ, որովհետև դերանունների մեծ մասը գուրկ է փոխարինման գործառույթից. դա հատուկ է դերանունների միայն մի մասին, այն էլ ոչ միշտ, նույնիսկ նման դեպքերում այլ բառերի փոխարեն դրվելը բխում է նրանց գործածության որոշ պայմաններից, դա դերանունների ոչ թե էությունն է, այլ <<այդ էությունից ու գործածության յուրահատուկ պայմաններից բխող հետևանք, ուրեմն և պայմանական է>>/1/: Իսկ այդպես փոխարինման գործառույթ հաճախ կարող են կատարել նաև այլ խոսքի մասեր:

Քննարկվող երկու համակարգերում էլ /գրական և խոսակցական/ իրենց խոսքամասային գլխավոր հատկանշով դերանունները նույնական են, ոչ թե անվանում են առարկա, հատկանիշ, այլ ցույց են տալիս դրանք որևէ հարաբերությամբ: Այս առումով դժվար է էական տարբերություններ գտնել, առավել ևս՝ բացահայտել ու բացատրել դերանունների գործածության ակտիվացումը. մի հանգամանք, որ հաստատվում է նաև վիճակագրությամբ: Ընտրած խոսույթների բնույթով պայմանավորված՝ խոսակցական լեզվում դերանունների գործածության դեպքերը տասնչորսից-քսան տոկոսով շատ են: Ուշադրությունը պետք է բևեռել տարբերություններին: Բայց դրանք էլ են բազմանշանակ ու տարատեսակ: Առանձին դերանուններ բնորոշ են նշված համակարգերից մեկին և տիպական չեն մյուսի համար /սույն-այս, յուրաքանչյուր-ամեն մի, ամենայն-ամեն և այլն/, որոշ դեպքերում այդ տարբերություններն արտահայտվում են դերանունների ուղիղ կամ թեք ձևերի հնչյունափոխությամբ /այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես և այլն –էս, էդ, էն, էսպես, էդպես, էնպես, մեզնից-մեզանից, ձեզնով-ձեզանով և այլն/: Հաճախ էլ խոսակցական լեզվում հանդիպում են սխալ ձևեր, որոնք խրախուսելի չեն

գրականում /իր տունը-իր տունը, իր մեջ-իրեն մեջ, երախտապարտ եմ ձեզ-երախտապարտ եմ ձեզնից և այլն/:

Սակայն այս կարգի տարբերությունները ևս չեն օգնում լուծելու խոսակցական լեզվում գրականի համեմատությամբ դերանունների քանակական գերակշռության հարցը: Այս երևույթի հիմքերն ու պատճառները պետք է փնտրել դերանունների գործառության ոլորտում:

Գրական լեզվում դերանունները սովորաբար հանդիպում կամ այլ խոսքի մասերին փոխարինում են գոնե մեկ անգամ խոսքաշարում գործածվելուց հետո: Եզակի բացառություններ են որոշ անձնական, ինչպես նաև հարցական-հարաբերական դերանուններ, բայց այդ հանգամանքը էականորեն չի փոխում նրանց գործածության հիմնական սկզբունքը: Սա հանրահայտ իրողություն է, որը նույնիսկ օրինակներով հաստատման կարիք չունի:

Իսկ խոսակցական լեզվում դերանունները կարող են ազատ հանդես գալ, փոխարինել այլ խոսքի մասերի՝ առանց դրանց նախապես գործածության: Սա է սկզբունքային, էական տարբերությունը: Ավելին, ի տարբերություն գրական լեզվի՝ խոսակցականում դերանունները անսահմանափակ հնարավորություններ ունեն կիրառվելու անվանողական արժեք ունեցող ցանկացած բառի նշանակությամբ և լինել հաղորդակցության առաջնային լիարժեք բաղադրամաս՝ կոնկրետ իմաստով, առանց լրացուցիչ ճշգրտում կատարելու անհրաժեշտության:

Դրանցով կմրսես, իմ գործածները տար հետդ: Սա է կարճը, սա հարմար է: Էսքանը ինձ մեկ շաբաթ հերիք է: Էսպես քեզ կհիվանդացնես և այլն:

Բերված օրինակների դերանունները գրական լեզվում կարող էին հանդիպել որոշակի խոսքաշարում, փոխարինման գործառությամբ, համապատասխան մեկնություններով, նկարագրություններով կամ ճշգրտումներով: Մինչդեռ հաղորդակցության մասնակիցների համար դրանք իրենց առարկայական կամ հատկանշային նշանակությամբ միանգամայն հստակ են, կոնկրետ ու հասկանալի: Այսպիսի դեպքերում և ընդհանրապես դերանունների գործածության ժամանակ հաճախ են օգտագործվում նաև զանազան շարժանքներ, դիմախաղ, որոնք չեն կարող իրենց դրսևորումների բազմազան ձևերով առկա լինել գրական լեզվով հաղորդակցության դեպքում:

Հիմնական տարբերությունը մատնանշող այս երևույթը մեծապես պայմանավորված է խոսակցական լեզվի ընդհանուր հատկանիշներով ու առանձնահատկություններով, մասնավորապես՝ իրադրության հետ կապի սերտության աստիճանով ու բազմագործառայնությամբ: Դա նշանակում է, որ խոսակցական լեզվում դերանուններն օժտված են գործառական ավելի մեծ բեռնվածությամբ, կատարում են ավելի մեծ թվով գործառույթներ, որոնք գրական լեզվում ա/ կամ բացակայում են, բ/ կամ, եթե կան էլ, զիջում են իրենց քանակով ու տարածվածությամբ, խոսակցական լեզվի ազդեցության արդյունք են, ոճական ցուցիչ:

Առանց մանրամասնելու և համակարգային ու հանգամանալից նոր խմբավորումներ կատարելու՝ հակիրճ ներկայացնենք մի քանի բնութագրական իրողություններ, որոնք առավել հստակ ու տեսանելի կդարձնեն ինչպես երկու համակարգերում դերանունների կիրառության հիմնական տարբերությունների, այնպես էլ խոսակցական լեզվում դերանունների գործառական ակտիվացման պատճառների բնույթը:

Առօրյա խոսքում ավելի հաճախական են դերանունների նրբիմաստային, հուզական կիրառության դեպքերը: Իհարկե, տրամաբանական շեշտի և որոշակի հնչերանգի ուղեկցությամբ հուզական նրբերանգով կարող է կիրառվել գրեթե ամեն մի դերանուն, բայց այդ տեսակետից հատկապես աչքի են ընկնում ցուցական և հարցահարաբերական մի քանի դերանուններ /ինչ, ինչքան, այնքան-էնքան և այլն/: Մեր կատարած ձայնագրություններում ու գրառումներում, օրինակ, ինչ դերանվան այդպիսի բազմաթիվ կիրառություններ ենք գտել, որոնցում առկա են տարատեսակ նրբերանգներ՝ հորդոր, խրախույս, հիացում, հավանություն, մերժում, հեզմանք, սպառնալիք, հակադրում և այլն: Դրանց մի մասը գրական լեզվի համար տիպական չէ, վերցված է խոսակցականից: Իսկ նույն դերանվան տարբեր զուգակցումները այլ խոսքի մասերի կամ նախադաս ուր-ի հետ կարծես դարձել են յուրատեսակ շարահյուսական կարծրատիպեր՝ համապատասխան նրբերանգներ դրսևորելու համար:

Ինչ հարևան, հետո մարդ չի եղել: Ինչ փող, ինչ բան, շալվարիդ գրպանը դատարկ էր: Ինչ հեյ, ինչ հույ, արդեն ուշ է: Ինչ ուտել, արդեն ուշանում ենք: Քեզ ու քեզ խնդմնդում ես /որ ինչ: Թարս ես նայում /որ ինչ, ես ինչ անեմ: Բոլոր զարդերը կախել է /որ ինչ և այլն:

Նմանատիպ կառույցներ խոսակցական լեզվում շատ կան, և դրանցում հաճախ են պատահում նախադասության անդամի պաշտոն չկատարող կամ ոչ բնորոշ շարահյուսական դերով հանդես եկող մի շարք ցուցական, հարցահարաբերական, մասամբ նաև ժխտական դերանուններ:

Ա. Վայ, ես սրբիչը մոռացել եմ: Բ. Ոչինչ, ոչինչ, մեծ հանցանք չես արել: Ա. Ջավենը հրաժարվում է: Բ. Ինչպես, հիմա ինչ, ուրեմն երկուսով կգնանք: Բուժ, բուժ, էդքան բուժ:

Այսպիսի դեպքերում ևս հաճախ գործ ունենք ձևավորված կարծրատիպերի հետ: Մասնավորապես. Ա. Գնամ, խոսեմ հետը: Բ. Ուր խոսես, տրամադրությունը տեղը չի /այսինքն՝ մի խոսիր, խոսել պետք չէ/: Այդպես նաև՝ ուր տեսնես, ուր համաձայնես, ուր ներես և այլն /բոլորն էլ ժխտական նշանակությամբ/: Նույն ձևով՝ երբ խոսեցինք, երբ հանդիպեց, երբ տեսավ /այսինքն՝ չխոսեցինք, չհանդիպեց, չտեսավ/: Անշուշտ, տարածված բոլոր կարծրատիպերը չէ, որ ընդունելի են. հիշենք, թեկուզ, գործողության ձև մատնանշող որոշ ցուցական դերանունների որոշչային կիրառությունները /էդպես մարդ չի լինի, էսպես երեխա ունենամ՝ չեմ պահի և այլն/, որոնք սխալ են, մերժելի, լեզվական ցածր մակարդակի արդյունք:

Դժվար չէ տեսնել, որ նշված դեպքերում դերանունները գործառնությունով հիմնականում նույնանում են վերաբերականների, միջանկյալ բառերի հետ:

Խոսակցական լեզվում դերանունները հաճախ են կիրառվում պարզապես որպես խոսքի դադարները լցնող միավորներ. դրանք այսպիսի գործածությամբ դառնում են ավելադրություններ: Խոսողը ստիպված է տարբեր պատճառներով դադար տալ /չի հիշում դեպքերի հետագա ընթացքը, չի գտնում անհրաժեշտ բառը, ուզում է կատարել որևէ էական ճշգրտում կամ փոխել նախադասություն կառուցելու համար ընտրած պլանը և այլն/, բայց ինքնընթացորեն շարունակում է արտահայտվել, հնչեցնել որոշ ավելորդ բառեր, որոնց մեջ կարող են լինել նաև դերանուններ: Այս գործառնությամբ կարող են հանդես գալ տարբեր դերանուններ, հատկապես՝ դադարին նախորդող արդեն գործածված որևէ դերանուն, բայց ակտիվությամբ ու տարածվածությամբ առանձնանում են մի քանի ցուցականներ /էս, էդ, էսպես, էդպես, էնպես և այլն/: Բերենք միայն մեկ նմուշ:

Երեկ տեսա, է, /էս/ հենց Զվարթնոցում, /էս/ բանի՝ երգչի, /էս/ Դարբինյանի հետ:

Առարկա ցույց տվող դերանունները և առհասարակ դերանունները գրական լեզվում կոչական չեն լինում, բայց խոսակցական լեզվում դա ոչ միայն հնարավոր է, այլև բավականաչափ տարածված է և ամեննին էլ անհատական իրողություն չէ:

Դո՛ւք, դո՛ւք, մի հատ մոտեցեք, էլի: Այսքա՛նդ, դե հիմա լսե՛ք՝ ինչ եմ ասում: Ա՛յ ոչինչ, քեզ են կանչում, է:

Այդ դերանունները որոշյի պաշտոն էլ չեն կատարում գրական լեզվում:

Սակայն տեղին է վերհիշել, որ, օրինակ, *ի՛նչ* դերանունը հենց գրական լեզվում էլ <<որ>>, <<որքան>>, <<ինչու>>, <<ինչպիսի>> և այլ իմաստներով ազատորեն գործածվում է ոչ միայն որոշյի, այլև գրականին ոչ բնորոշ շարահյուսական այլ դերով: Այդ բոլորն էլ գալիս են խոսակցականից:

Այս ինչ փորձանք բերեցիր գլխներին: Դու ին՛չ ընկեր ես, որ տեղյակ չես: Ա՛յ տղա, ինչ ես խառնվել իրար: Հանգի՛ստ ասա, ի՛նչ ես ճշում և այլն:

Անձնանիշ դերանունները գրական լեզվում որոշյալ էլ չեն դառնում, դա ևս պարզ է, սակայն հատկապես կրկնաթանկա կառույցներում խոսակցականից գրականին են անցել *նրանք*, *իրենք* դերանունների այդպիսի կիրառություններ /նրանք բոլորը փախստականներ են – բոլոր նրանք փախստականներ են/: Հետաքրքիր է, որ շուրջ վեց տասնամյակ առաջ տպագրված իր գրքերից մեկում, որ մինչև այսօր էլ դերանուններին նվիրված ուսումնասիրությունների մեջ մնում է լավագույնը, Ս. Աբրահամյանը դրանք կանոնական է համարում երկրորդական նախադասության առկայության դեպքում՝ բոլոր նրանք, ովքեր.../2/: Բայց լեզվի զարգացման այս փուլի համար նման վերապահում կարելի է և չանել:

Գրական լեզվում բացահայտչի պաշտոն կատարող առարկայանիշ դերանունները հազվադեպ կիրառություն ունեն, մինչդեռ խոսակցական լեզվում դրանք բավականաչափ գործուն են ու տարածված:

Էդ նոր եկածներդ՝ դու, դու և դու, զանգից հետո կմնաք լսարանում: Այս երեքդ՝ դու, ինքը, ինքը, պարզենք եք ստանալու: Ուշացածներիս՝ ինձ, քեզ և Արտոյին, ցուցակից հանել են և այլն:

Նույնը կարելի է ասել հատկացյալի շարահյուսական դերի մասին. գրական լեզվում այդպիսի գործածությունները քիչ են, ընդգրկում են հազիվ մեկ-երկու դերանուն և հիմնականում ոճական երանգավորման արդյունք են, իսկ խոսակցական լեզվում դրանք անհամեմատ շատ են և առնչվում են ավելի մեծ թվով դերանունների:

Մեր ամեն ինչը կիսատ է մնացել: Դու նրա ի՛նչն ես: Ձեր էդքանի տները վթարային են: Մեր էսքանի թոշակները դեռ չեն բերել և այլն:

Խոսակցական լեզվի բնորոշ առանձնահատկություններից են, այսպես կոչված, նախադաս ստորոգական անվանումներով կառույցները, երբ անվանվող անձը կամ առարկան բացակայում են, դրանց նշույթավորողը դառնում է նախադաս երկրորդականի ստորոգական մասը, որն էլ գրեթե միշտ զուգակցված է լինում որևէ դերանվան հետ /հիմնականում՝ որ, էս, էս որ և այլն/:

Էս որ կաթ էր բերում // էսօր չի եկել: Որ կարմիր ակնոցով էր // ձեր շենքի աղջիկ է: Էստեղ որ խնձոր էր առնում // արդեն չի գալիս: Էս որ աթոռի վրա դրված էին //երբ տաքան և այլն:

Առանձին դերանուններ էլ, խոսակցական լեզվում հանդես գալով փոփոխված գործառույթով և ունենալով հաճախական կիրառություն, ամրակայվում են որպես տվյալ իրողության դրսևորման միջոց, կարգային ցուցիչ: Օրինակ, *էնպես* դերանունը բայերի հետ նախադաս գործածվելիս կայուն կերպով ասվածին հաղորդում է սաստկացման երանգ /էնպես խոսեց, էնպես արտասանեց, էնպես երգեց և այլն/, մի այլ դեպքում՝ կարող է դրան չտալ էական նշանակություն /էնպես եմ ասում, մի նեղվիր/, իսկ ածականների հետ կարծես դառնում է համեմատության աստիճան կազմող բաղադրիչ /էնպես լավ, էնպես սիրուն, էնպես հետաքրքիր և այլն/:

Խոսակցական լեզվում դերանունների գործառույթների փոփոխության դեպքերի թվարկումը կարելի է շարունակել, բայց ասվածն էլ բավական է՝ համոզվելու համար, որ դերանունների բազմագործառայնության, գործառական ակտիվացման հիմքում հենց նման տարբերություններն են: Այս հարցի վերաբերյալ բավական հետաքրքիր մի դիտողություն ունի Գ.Ջահուկյանը: Դերանունները համարելով ինքնին որոշյալ կամ ինքնին անորոշ իրադրական բառեր և փաստելով, որ դրանք գոյականներից կարող են տարբերվել ոչ միայն ձևաբանական փոփոխության առանձնահատկություններով, այլև ըստ կապակցելիության, նա գրում է. <<Որոշյալին բնույթի երկրորդական նախադասությունների քննությունից նկատում ենք, որ այս դեպքում կապակցելիական տարբերությունը վերանում է, և գոյական դերանունները ձեռք են բերում որոշիչ ստանալու հատկություն....եթե գոյական դերանունները կարող են որոշիչ երկրորդական նախադասություն ստանալ, ապա որոշիչ դերանունները /դերանվանական որոշիչները/ չեն կարող փոխարինվել

որոշիչ երկրորդական նախադասությամբ: Այս դեպքում նրանք հանդես են գալիս որպես հարաբերիչ բառեր կամ հարաբերյալներ՝ անմիջական առարկայական իրադրության մեջ առարկաներ նշանակելու փոխարեն դառնալով այդ առարկաների նշանակումների նշանակիչներ>>/3/:

Մեզ համար տվյալ դեպքում կարևորը այն միտքն է, որ հաղորդակցության բուն գործընթացում դերանունները ձեռք են բերում նոր գործառույթներ: Իսկ դա կարող է կատարվել ինչպես գրական լեզվի ներսում, այնպես էլ խոսակցականում, այնտեղից էլ մուտք գործել գրական լեզու:

Մի հանգամանք ևս. պետք է նկատի ունենալ, որ առհասարակ խոսակցական լեզվում գրական լեզվի նորմերից կատարվող շեղումները տարբեր բնույթի են: Լեզվի համակարգը խաթարող, բացասական ազդեցություն ունեցող շատ շեղումների, օտարաբանությունների, բարբառաբանությունների և այլ կարգի անընդունելի, անթույլատրելի սխալների կողքին կան նաև համակարգի պարզեցմանը միտված, լեզվի բնականոն զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված տարբերություններ: Եվ դրանց որակումն ու գնահատությունը կատարելիս պետք է զգոն լինել, նույն մոտեցմամբ չդիտարկել մերժելին ու ոչ մերժելին, որովհետև խոսակցական լեզուն էլ ունի իր նորմերը, որոնց հաշվառումը նույնպես կարևոր է: Դերանունների գործառության ոլորտում էլ կան այդպիսիները՝ կապված հոգնակի թիվ չունեցող և չհոլովվող մի քանի դերանունների հոլովման, հոգնակի թվով գործածելու և այլ երևույթների հետ: Բայց դրանց վերլուծությունն արդեն առանձնակի քննություն է պահանջում և այս հոդվածի նպատակներից դուրս է:

Ծանոթագրություններ

1. Ս. Արրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956, էջ՝ 40:
2. Ս. Արրահամյան, նշվ. աշխ., էջ՝ 211:
3. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ՝ 541:

Саркисян Нвер – Активные грамматические классы слов в армянском разговорном языке. – Между системами армянской разговорной речи и книжного литературного языка в сфере распределения и функционирования частей речи и грамматических классов слов существуют разного рода количественные и качественные отличия, которые обусловлены более тесной связью с ситуацией и синкретизмом. Особенно выделяются те, которые характеризуются высокой активностью. По примеру местоимений анализируются и представляются основные причины и виды обнаружения этих явлений.

Գրաբարի *յ* նախամասնիկով բայերը

Գրաբարի *յ*-ով սկսվող արմատների թիվը, ըստ Հր. Աճառյանի արմատական բառարանի, 250 է: Այդ արմատներից հավաստիորեն հ.-ե. ծագում է վերագրվում միայն 13-ին՝ *յազ, յեռ, յատակ, յաւ* «ծայր», *յղի, յոլով, յիսուն, յորայ, յեղ, յարել, յարմար, յորդ, յորձ* և *յօղ* (մյուս արմատները կամ փոխառյալ են, կամ անստույգ ծագման): Հայերեն արմատների բառասկզբում հանդես եկող *յ*-ն հ.-ե. *s-ի (*յազ, յեռ*), հ.-ե. *p-ի (*յատակ, յաւ, յղի, յոլով, յիսուն, յորայ*) կամ հ.-ե. *k-ի արտացոլումներն են: Միայն չորս արմատ կա, որոնց հ.-ե. նախաձևերը սկսվում են ձայնավորով, իսկ հայերենում առկա է *յ*. դրանք են *յարել*՝ հ.-ե. *ar- (այս արմատի մ-ով աճած ձևը՝ *յարմար*), *յորդ (յորձ)* տարբերակային ձևերը՝ հ.-ե. *ordh, և *յօղ (յաւղ)* արմատը՝ հ.-ե. *audh-: Ոչ արմատական *յ*-ի ծագման մասին ընդունված է կարծիք, որ այն հանգում է հ.-ե. *en «մեջ» նախաձևին և «...համապատասխանում է հին հայերենի *ի* նախորդին, որը ձայնավորից առաջ գրաված դիրքում ունեցել է *յ* ձևը»¹: Ջահուկյանը գրում է, որ «...երբեմն դժվար է որոշել սկզբնային *յ*-ի բնույթը՝ նրա ածանցական, թե ոչ ածանցական ծագումը. այս դեպքում պետք է նկատի առնել 1) առանց *յ*-ի ձևերի առկայությունը և 2) բառերի ստուգաբանությունը»²:

Գրաբարում կան շատ բայեր, որոնց բառասկզբի *յ*-ն արմատական չէ. օրինակ՝ *յականել, յանձնել (յանձանձել), յանցանել, յաչաղել, յաղել, յառնել, յերհւրել, յերկուանալ, յարդարել, յանգիլ, յարմնիլ, յօրինել, յողնիլ (ընդողնել «մեջքի վրա պառկել»)*: Այս բայերի քննությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը անվանական արմատներից առաջացած բայեր են՝ *ակն, անձն, աչ, այց, երհւր, երկու, արդ, օրէն, ողն* և այլն: Այս բառերում *յ*-ն, կարծում ենք, նախորդային ծագում ունի, այսինքն՝ *յ*-ն իբրև նախդիր կիրառվել է այդ գոյականների հետ, հետագայում նախորդավոր ձևերից առաջացել են *յ*-ով բայեր. հմմտ. *ակն-յակն անկանել-յականել, անձն-յանձն առնուլ, յանձն լինել-յանձնել-յանձանձել, ողն-յողն անկանիլ, յողն երթալ-յողնիլ* և այլն: Քանի որ *յ*-ով այս բայերի կողքին առկա են և արմատական ձևեր, կարելի է որոշ հետևություններ անել *յ*-ի բերած իմաստային նրբերանգների մասին: Որոշ դեպքերում այն բայերին հաղորդում է սաստկականության երանգ. օրինակ՝ *ականել* (դիտել, տեսնել)-*յականել* (դիտել, տեսնել, քաջ նայել)³, իսկ Ռ. Ղազարյանի գրաբարի բառարանում *յականել* բայի բացատրության մեջ

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ), Ե., 1987, էջ 244:

² Նույն տեղում:

³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ.1, Եր., 1978, էջ 24:

նշվում են նաև «ուշադիր նայել, հսկել, աչքը վրան պահել» իմաստները⁴: Նույն դիտարկումը կարելի է անել նաև *արդեմ* և *յարդարեմ* բայերի վերաբերյալ. Հր. Աճառյանը *արդ*-ը բացատրում է «ձև, կարգաւորութիւն»: *Արդ*-ը հանգում է հ.-ե. *art- նախաձևին. հունարենն ունի ἄρτος «կարգաւորութիւն», ἄρτος, ἄρτον «կարգաւորել, պատրաստել, յօրինել, շինել», ἄρτος «յարդարում»⁵: Հնդեվրոպական լեզուներից միայն հայերենում և հունարենում են պահպանվել «կարգավորել, հորինել» նշանակությունները: Հետաքրքիր է, որ *արդ* արմատից հայերենն ունի *q-արդ*, իսկ թոխ. Բ-ում կա ar(t)kye ձևը՝ «հարուստ, թանկարժեք, արժեքավոր» իմաստներով⁶: Հր. Աճառյանը *արդ* բառահոդվածում *արդեալ* բառի բացատրության մեջ գրում է «տաշուած, կոկուած»⁷, այսինքն՝ ինչ-որ ձև տված, իսկ *յարդարեւ*-ը բացատրում է «ուղղել, կանոնաւորել, կարգաւորել»: ՆՀԲ-ում *արդեմ* բայի համար որպէս առաջին իմաստ նշվում է «հարթել, ձևացուցանել»⁸, իսկ *յարդարեմ* բայի համար՝ «գարդարեմ»⁹: Կարելի է եզրակացնել, որ այն դեպքերում, երբ յ-ն ավելանում է անվանական արմատներից առաջացած բայերին, այն նախդիր է. վերջինս բայերին հաղորդել է սաստկականության իմաստ:

Յ-ն գործածվում է նաև բայարմատների հետ (*ածեմ- յածեմ, անցանեմ- յանցանեմ, արի-յառնեմ, ելանեմ-յելուզակ, աղել-յաղել*)՝ բայերին հաղորդելով իմաստային նոր երանգ. հմմտ. *անցանել* «խաղալ, գնալ, փոխիլ տեղուջէ ի տեղի»¹⁰-*յանցանել* «անցեալ գօրինօք, մեղանշել, զանիրաւիլ»¹¹:

Այժմ անդրադառնանք *աղել-յաղել* զույգին: Հայտնի է, որ *աղ* արմատը հանգում է հ.-ե. *sal-«աղ» նշանակությամբ նախաձևին: Նախ անդրադառնանք այս արմատի իմաստներին և հ.-ե. լեզուներում արտացոլված զուգահեռներին: Հնդեվրոպական լեզուների մեծ մասում (հուն. ἄλς, սեռ. ἄλος, լատ. sal, salis, հին լատ. sale, հին եկսլավ. solъ, հին իռլ. salann, կելտ. sala, կիմր. halen և այլն) այս արմատն ունի «աղ» իմաստը: Որոշ լեզուներում այս արմատից են ծագում «*ծով, ծովի աղ, ծովային* (գոյական), *ձկնորս*» նշանակությամբ բառեր (հմմտ. հին հնդկ. sal-ilá *ծով*, լատ. salēs *ծով, ծովաջուր*, հուն. ἄλιος *ծովային (գոյական), ձկնորս*¹²: Հ.-ե. *sal- արմատից են նաև լիտվ. sālti *քաղցրացնել*, salia *քաղցրավենիք*, սլավ. *soldъk-ից հին եկսլավ. sladъkъ, լեհ. slodki, որոնցում առկա են *sal- նախաձևի՝ d-ով աճած ձևերը: Հ.-ե. *sal- նախաձևից ծագած արմատների թվում Պոկոռնին նշում է նաև հին պրուսերեն saltan արմատը՝

⁴ Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 886:

⁵ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, էջ 307-308:

⁶ J.Pokorny, Indodermianisches etymologisches Wörterbuch, 2. Bern-München, 1959-1969, p. 57:

⁷ ՀԱԲ, հ. 1, էջ 306-307:

⁸ ՆՀԲ, հ. 1, էջ 588:

⁹ ՆՀԲ, հ. 2, էջ 546:

¹⁰ ՆՀԲ, հ. 1, էջ 248:

¹¹ ՆՀԲ, հ. 2, էջ 518:

¹² Տե՛ս J.Pokorny, նշվ. աշխ., էջ 878-879:

(speck) «*ճարպ, ճրագու*» նշանակությամբ: Սլավոնական լեզուներում сало բառը նշանակում է 1. «*ճարպ, ճրագու* 2. *բարակ սառույց, սառցասեղների կույտ*»: Մ. Ֆասմերը сало բառը ուկր. сало, հին ռուս. сало, բուլղ. сало, սերբախորվաթ. сáло, սլովեն. sálo, չեխ. sádlo, սլովակ. sadlo ձևերի հետ կապում է сaди́ть արմատին՝ բացատրելով՝ «այն, ինչ նստում է մսի վրա» «то, что садится на мясо»¹³: Կարծում ենք, որ այս բացատրությունը այնքան էլ համոզիչ չէ. նախ՝ իմաստային առումով այնքան էլ հավանական չէ *ճարպ* իմաստը բխեցնել *նստել* իմաստից, երկրորդ՝ սլավոնական լեզուներին բնորոշ չէ d – l անցումը, իսկ չեխերենի sádlo և սլովակերենի sadlo ձևերը ամենայն հավանականությամբ դրափոխության արդյունք են (հմմտ. *sal- արմատի d-ով աճած ձևերը բալթիկ-սլավոնական լեզուներում): Դ. Ուշակովի բառարանում сало բառի բացատրության մեջ նշվում է նաև «սննդամթերք աղ դրած խոզի ճարպից» «пищевой продукт из посоленного свиного жира, шпик» (հմմտ. հին պրուսերենի saltan բառի՝ Պոկոռնու նշած իմաստը՝ speck): Մ. Ֆասմերի բառարանում сaди́ть բառահոդվածում սլավոնական լեզուներից բերված ոչ մի արմատ չունի «*մսի վրա նստելուն*» վերաբերող որևէ նրբիմաստ: Դ.Ն. Ուշակովի բառարանում жир բառի բացատրության մեջ գրված է «*ջրում չտարրալուծվող յուղային նյութ, որ պարունակվում է բուսական և կենդանական հյուսվածքներում*» «нерастворимое в воде маслянистое вещество, содержащееся в растительных и животных тканях», և բերվում են օրինակներ՝ гусиний жир, говяжий жир, рыбий жир. չկա свиной жир¹⁴: Նույն բառարանի 4-րդ հատորում сало բառի բացատրության մեջ նշվում է «*пищевой продукт из посоленного свиного жира, шпик*»¹⁵: Ուրեմն сало ոչ թե առհասարակ յուղ է կամ ճարպ, այլ խոզի՝ աղ դրած ճարպաշերտը: Կարելի է ենթադրել, որ այստեղ դեր է խաղացել խոզի ճարպի (сало) պատրաստման եղանակը՝ աղ դրած, աղ արած, քանի որ այն պատրաստվում է խոզի ճարպաշերտը աղով համեմելու միջոցով: Կարծում ենք, որ սլավոնական լեզուների сало բառը ևս կարելի է ծագած համարել հ.-ե. *sal- «աղ» արմատից (հմմտ. Յ. Պոկոռնու բառարանում բերված հին պրուս. saltan speck): Ֆրանսերենում salé (լատ. sal-ից) բառը ունի «*աղի*» և «*աղը դրած խոզի միս*» իմաստները¹⁶:

Յ. Պոկոռնու բառարանում հ.-ե. *sal- նախաձևից ծագած արմատների մեջ նշվում է նաև հուն. ἄλες բառը՝ «կատակ, սրախոսություն, սրամտություն» (գերմ. Witz) իմաստներով¹⁷: Հ.-ե. մյուս լեզուներում ևս աղ արմատից ծագած բառերի մեջ հանդիպում են «սրամտություն, սրախոսություն» իմաստներով բառեր, կան լեզուներ էլ, որոնցում աղ բառը գործածվում է «համ, հետաքրքրություն, սրախոսություն» իմաստով: Գրեթե բոլոր լեզուներում

¹³ М. Фасмер, Этимологический словарь русского языка, М.1971, т. 3, стр. 550:

¹⁴ Д.Н. Ушаков, Толковый словарь русского языка, М., 1935, т. 1, стр.874:

¹⁵ Նշվ. աշխ., հ. 4, էջ 26:

¹⁶ St u K.A. Ганшина, Французско-русский словарь (далее ФРС), М., 1971 г., стр. 714:

¹⁷ Յ. Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 878:

(գերմ., հայ., ռուսերեն, ֆրանսերեն) առկա է լատիներենից փոխառված *ատտիկյան աղ* շրջասությո՜ւր՝ «նուրբ սրախոսություն» իմաստով:

Ռուսերենում *солъ* արմատից է *слотить* բառը, որը Վ. Դալը բացատրում է «կատակել, սրախոսել, սրամտել»¹⁸: Ֆրանսերենում *sel* բառի համար իբրև երկրորդ իմաստ նշվում է «*սրամտություն*»¹⁹, իսկ ռուս-ֆրանսերեն բառարանում *սրամտություն* բառի դիմաց տրված է *sel* (աղ)²⁰:

Հայերենում *ևս աղ* բառը ունի «*համ, ախորժելիություն*» իմաստը (Խօսածիդ մեջ աղ չկա)²¹: Հայերենի համար հատկապես նշելի է *անալի* բառը՝ «*անհամ՝ անախորժ կատակ՝ սրախոսություն*» իմաստով²²:

Հ.-ե. **sal-* նախաձևը հ.-ե. լեզուներում արտացոլված է նաև «կեղտ, կեղտոտ, գորշ» իմաստներով:

Յ. Պոկոռնին հ.-ե. **sal-* արմատի երկրորդ ձևը՝ **sal-* բացատրում է «կեղտոտ, գորշ» (*Schmutziggrau*)՝ ըստ գույնի, նաև ըստ նշանակության՝ *աղ* և բերում է *sal-uo-*, *sālo-* «գորշ՝ կեղտոտ գույն» իմաստներով. հինդլ. *sāra-*, *sāla-* «գորշ», անգլասաքս. *sōl* «կեղտոտ», հին իռլ. *sal* և *sa(i)le* «կեղտ», *salach* «կեղտոտ», հին իսլ. *sōlr* «կեղտ», հվգերմ. *salō* «պղտոր, մռայլ (գույն), գորշ գույնի», մվգերմ. *sal*, սեռ. *salwes* «կեղտ»²³:

Սլավոնական լեզուներում *ևս солъ* արմատին են հանգում *солоть*, *слоть*, *слотина* «ցեխ, կեղտ, слякоть, вязкое жидкое, кислое и стоячее болото»: Վ. Դալի բառարանում *слотить* բառի համար նշվում է նաև «կեղտոտել, грязнить, пачкать» իմաստները²⁴: Ֆրանսերենում *sale* նշանակում է նաև «*անմաքուր, կեղտոտ*», նաև «*անվայելուչ*»²⁵. (հմմտ. ռուս. *сальный* “непристойный”):

Հայերենում *աղ* բառը ունի նաև *աղտ* և *աղծ՝ տ*-ով և *ծ*-ով աճած ձևեր²⁶, ընդ որում *աղծ*-ի մասին Աճառյանը գրում է, որ այն առանձին չի գործածվում, այլ միայն *աղծեալ* ձևով, որ նշանակում է «*աղ դրած*»²⁷, իսկ *աղտ*-ի մասին գրում է, որ «...գործածուած է միայն տեղ ցոյց տվող մի քանի անունների մեջ, ինչ. Ծով աղտից, Քաղաքք աղտիցն, Ի հովիտս աղտիցն, Ձոր աղտից»²⁸, իսկ ՆՀԲ-ում՝ նաև «ջրհորք նաւթի»²⁹:

Կարծում ենք, որ հայերենի *աղտ* «կեղտ» իմաստով բառը *ևս* կարելի է ծագած համարել հ.-ե. **sal-* *աղ* արմատից, մանավանդ եթե նկատի ունենանք հ.-ե. մյուս լեզուներում պահպանված արմատները: Հայերենի *աղտ* «կեղտ»

¹⁸ В. Даль, Толковый словарь живого великорусского языка, т. IV, стр. 223:

¹⁹ К.А. Ганшина, ФРС, 1971, стр. 776:

²⁰ Д.В. Сеземан, Русско-французский словарь, М., 1959, стр. 396:

²¹ Տե՛ս Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Ե., հ. I, 1944, էջ 36:

²² Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 20:

²³ Յ. Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 879:

²⁴ В. Даль, նշվ. աշխ., հ. 4, էջ 223:

²⁵ К.А. Ганшина, ФРС, 1971, էջ 764:

²⁶ Տե՛ս, ՀԱԲ, հ. I, էջ 132, 136 և ՀԼՊ, էջ 146:

²⁷ ՀԱԲ, հ.1, էջ 132:

²⁸ Նույն տեղում, էջ 136:

²⁹ ՆՀԲ, հ. I, էջ 44:

իմաստով արմատը Հր. Աճառյանը համեմատում է հուն. ἄρθρον «աղտ, կեղտ, անմաքրություն» արմատի հետ և գրում է, որ այս արմատը հայերենում պետք է արտացոլվեր իբրև *արտ, իսկ հայերենն ունի աղտ՝ *p→t*, որը հայերենի համար օրինաչափ չէ³⁰: Գ. Ջահուկյանը ևս այս արմատի մասին խոսելիս անբացատրելի է համարում հայ. դ – հուն. ρ համապատասխանությունը³¹: Ամենայն հավանականությամբ այս ստուգաբանությունը այնքան էլ հավաստի չի կարելի համարել, մանավանդ որ հ.-ե. այլ լեզուներում, բացի հունարենից, գոգահեռներ չկան: Իսկ աղ արմատից կարող էր աղտ ձևը ծագել. այս դեպքում բառի և՛ հնչյունական, և՛ իմաստային կողմը որևէ դժվարություն չի ներկայացնում: ՆՀԲ-ում աղտ բառի իմաստների մեջ նշվում է նաև «անմաքուր ինչ, ցեխ, տիղմ»³² (հմմտ. ռուս. солоть, слота, слоть “слякоть, жижа” բառերի հետ):

Այսպիսով, հ.-ե. *sal- «աղ» նախաձևը ինչպես հ.-ե. մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում ունի և՛ «աղ», և՛ «քաղցր» (հայ. աղու), և՛ «ծովային» (աղտաղտուկ, որը ՆՀԲ-ում³³ բացատրվում է «աղի և ծովային վայր, երկիր աղի և խոնաւ»), և՛ «կեղտ՝ անմաքրություն», և՛ «սրամտություն, սրախտություն» իմաստները:

Աղ արմատից հայերենում կան աղել «աղ անել», կրկնությամբ՝ աղաղել բայերը: Աղաղել բայը ՆՀԲ-ում ունի «աղելով աղել, յաղաղ դնել» բացատրությունը³⁴: Աղել բայից բացի՝ հայերենում կա նաև յաղաղել, որն ունի ոչ այնքան «աղ անել», որքան «համեղացնել, աղով համեմել» իմաստը: Հիշենք «եթե աղն անհամեղի, ի՞նչ համեմեղի»³⁵:

Յ-ն, հայերենի բայական արմատներից առաջ դրվելով, այդ բայերին հաղորդում է նոր իմաստ և այս դեպքում ակնհայտորեն ածանցական կիրառություն ունի:

Симонян Нектар – Глаголы с начальным j- древнеармянского языка – В статье рассматривается вопрос о происхождении j- в начале древнеармянских глагольных корней. Выдвигается версия, что j- является предлогом в тех глаголах, которые образованы от номинативных корней, и j- префиксом в тех глаголах, которые образованы от глагольных корней. Делается также попытка новой этимологии слова աղտ “cop”.

Simonyan Nektar – The Old Armenian verbal Roots with initial j – The article is dedicated to the origin of initial j- of old Armenian verbal roots. It is supposed that in some verbal roots the initial j- is preposition, and in the other's is prefix. The new etymological attempt of the root աղտ “mud, dirt” is done.

³⁰ ՀԱԲ, հ. I, էջ 136:

³¹ ՀԼՊ, հ. I, էջ 169:

³² ՆՀԲ, հ. I, էջ 44:

³³ Նույն տեղում:

³⁴ ՆՀԲ, Ե., 1979, հ. I, էջ 32:

³⁵ ՆՀԲ, Ե., 1979, հ. I, էջ 31:

**ԱՐԴԱՐԵՎ ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ԱՐԵՎԱԿ»-ՈՒՄ**

Հանրահայտ է, որ լեզվի բառապաշարը շարունակաբար փոփոխությունների է ենթարկվում. հայոց լեզվի պատմության տեսանկյունից ժամանակակից փուլն արտակարգ կարևոր և հետաքրքրական է նրանով, որ ժամանակակից տեխնոլոգիաների աննախադեպ առաջընթացն իր հետ բերեց մի քանի տերմինային համակարգերի ձևավորում, տեղաշարժեր նկատվեցին բառիմաստների և բառերի ձևաբանական կարգերի ու շարահյուսական պաշտոնների մեջ: Այս պարագայում իր անփոխարինելի դերն է կատարում Արևելահայերենի ազգային կորպուսը՝ «Արեվակ»-ը: Այն տեքստերի էլեկտրոնային հավաքածու է՝ նկարագրված այնպիսի ձևով, որ նրանում արագորեն գտնվեն լեզվաբանին անհրաժեշտ քերականական կամ այլ նշումներով բառերն ու կառույցները: Կորպուսն ընդգրկում է շուրջ 110 միլիոն բառամթերք, իսկ տեքստերը ներառում են 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը ստեղծված գրավոր (արձակ և չափածո) և բանավոր նյութեր, լրագրային և ամսագրային հոդվածներ, արևմտահայ հեղինակների ստեղծագործություններ, այդ թվում՝ նաև թարգմանական: Այն ներկայացնում է ոչ թե բառերի ճիշտ կամ սխալ գործածությունները (դա կարելի է անել ուսումնասիրելով նյութը), այլ լեզվի զարգացման միտումները, թե ինչ ուղղությամբ է զարգանում լեզուն, ինչ գերակայություններ են նկատվում, ինչպիսին է լեզվի առկա վիճակը:

Կորպուսին դիմելով՝ կարող ենք պարզել լեզվական այս կամ այն միավորի տարածման աստիճանը՝ հաճախականությունը, հատկապես ո՞ր ժանրում, ինչ տեքստերում, արևելահայերենում թե՞ արևմտահայերենում ավելի շատ գործածվելը և այլն: Այսպես, օրինակ, **այլևս** մակբայը՝ առաջին իմաստով՝ *այսուհետև, սրանից հետո*, երկրորդով՝ *էլ, ևս, բացի դրանից*, երրորդով՝ (հնցծ.) *դարձյալ, կրկին*, չորրորդով՝ (հնցծ.) *դեռևս, դեռ*, հինգերորդով՝ (հնցծ.)՝ *արդեն*, [5, էջ 41], արդի արևելահայերենում սկսել է գործածվել ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» իր 5-րդ՝ հնցծ.՝ *արդեն* իմաստով, որը արևմտահայերենում տարածված ու միակ իմաստն է:

1. Հիմա, ով Տէր, քու ծառադ պատրաստ է իր հոգին խաղաղությամբ աւանդելու, որովհետեւ ան **այլևս տեսավ** քու խոստացած Փրկիչը, որ հեթանոսներուն եւ ամբողջ աշխարհին համար Լոյս պիտի ըլլայ: (Հայրենիք, 2003, 02.21)

Արևելահայերենի օրինակներից են՝

2. Թվում էր, թե հանդիպման ելքն **այլևս** որոշված է: (Առավոտ, 2002, 09.10)

3. Այսօր Հայոց ցեղասպանության հարցն **այլևս** դարձել է համամարդկային խնդիր: (Ազգ, 2005, 04.02)

4. Շղթայակապ անցկացրած 457 օրերն **այլևս** ետևում են: (Առավոտ, 2005, 09.10)

5. **Այլևս** ձանձրալի էր այդպես դանդաղ գնալը: Զորայր Խալափյան, Ռոտե՞ղ էիր, մարդ աստծո)

Կորպուսի 33481 համատեքստերից քաղելով 1000-1050 օրինակներ, որոնցում **այլևս** մակբայը գործածվել է թե՛ հաստատական, թե՛ ժխտական կառույցներում, հանգում ենք եզրակացության, որ հենց հաստատական կառույցներում է այն հանդես գալիս **արդեն** իմաստով (որը կազմում է ամբողջ ընտրանքի շուրջ երկու երրորդը)՝ գերազանցապես արևմտահայերեն տեքստերում, բայց հաշվի առնելով տեքստերի ժամանակագրությունը՝ նրա հինգերորդ իմաստի վիճակագրությունն ավելի կաճի:

Ինչ վերաբերում է խնդրո առարկա **արդարև** վերաբերականին, ապա այն, ըստ կորպուսի տվյալների, գործածության տեսակետից ակտիվացել է հենց որպես **եղանակավորող** բառ:

Ռ. Սաքապետյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարանում», որն ընդգրկում է շուրջ 20 հազար բառ և դարձվածային միավոր, նշված բառը վկայվում է որպես արևմտահայերենի բառապաշարի մաս. ընդ որում, բառարանի առաջաբանում առանձնացրած բառախմբերից և ոչ մեկին, մեր համոզմամբ, այն չի պատկանում: Այդ խմբերն են.

1. գուտ արևմտահայերեն բառեր,

2. արևմտահայերենում նախընտրելի գործածություն ունեցող բառեր, որոնք արևելահայերենի համեմատությամբ գործածության ավելի մեծ հաճախականություն ունեն,

3. երկու տարբերակներում ձևային ընդհանրություն ունեցող, բայց տարբեր իմաստներ արտահայտող բառեր, որոնց իմաստները մասամբ կարող են համընկնել և այլն (ընդամենը 7 կետ), որոնցից միայն երկրորդին մասամբ կարող է հարել **արդարև**-ը, այն էլ որոշակի վերապահումներով:

Լեզվաբանական գրականության, այլև հայոց լեզվի բացատրական բառարաններում **արդարև** բառը գերազանցապես վկայված է որպես **մակբայ**, մասամբ՝ **ածական** և միայն «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (քառահատոր) փաստվում է դրա **եղանակավորող** բառ լինելը՝ **իրոք, ճիշտ որ, իսկապես** իմաստներով. «Մեծ է, **արդարև**, մեծ է քո հոգին, որ ընդգրկել է ժայռերն ահագին» [9, էջ 213]:

Ստորև բերվում են հայերենի բառարաններում **արդարև** բառի մեկնաբանությունները՝ օրինակներով.

Հայերեն արևմտական բառարան (Հր. Աճառյան)՝ **արդարև** (արդ-ից ձև, կարգավորություն) «ճշմարտի, իրաւ, իրօք, ստուգութեամբ, ճշմարիտ որ» իմաստներով ՍԳ Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց [4, էջ 307]:

Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց)՝ **արդարև**, 1. մկ. ստուգիւ, յիրաւի, իրօք, ճիշտ որ (գործ է ածվում խոսքի եզրակացության մեջ,

որով հաստատվելու է առաջին մասում յայտնված միտքը): «Արդարեւ, ոճիրն ուրիշներն են կատարում, բայց որ նա է եղել թելադրողը՝ այդ անկասկած է»: 2. **աճ.** իսկական, ստույգ, իրական [7, էջ 256]:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, **արդարեւ- մ.** (որպես թե արդարիւ, արդարութեամբ) ճշմարիտ, ճշմարտապէս, ստուգիւ, յիրավի, ամէն, իսկապէս, հաստատապէս, անշուշտ, այո, իրոք, իրաւ, **ա.** ճշմարիտ, իսկական, հարազատ, ստույգ Արդարն ավերեցին զաշխարս, և հրձիգ արարին ըզկոռս նոցա ...[6, էջ 548]:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան՝ **արդարեւ, եղնկ.** բառ, իրոք, ճիշտ որ, իսկապէս [8, էջ 213]:

Արդի հայերենի բացատրական բառարան (Էդ. Աղայան)՝ **արդարեւ, 1. մկ.-** իսկապէս, հիրավի, իրոք, ճիշտ որ, 2. **աճ** (հնգ.) իսկական, իրական, ստույգ [5, էջ 127]:

Հայոց լեզվի հոմանիշների բառարան (Ա.Սուքիասյան)՝ **արդարեւ, - մ.** հիրավի, իրավ, անշուշտ, իրոք, ստուգապէս, իսկապէս, արդարապէս, ստուգիվ, ճշմարտապէս ...[10, էջ 93]:

Հայոց լեզվի նոր արևմտահայերեն բառարան (Արտաշես Տեր Խաչադրյան)՝ **արդարեւ – 1. մ. ստուգիւ,** ստուգությամբ, իրավամբ, իրաւցնէ, իրավ որ, ճշմարտապէս, հավաստեաւ, իրօք, յիրաւի, անտարակոյս, անկասկած. 2. **աճ.** ստույգ, իսկական, իրական, հաւաստի, բուն, ճիշդ [Համակարգչային կազմ էջ «Նաիրի»]:

Նշված բոլոր բառարաններում հիմնական իմաստները՝ **իսկապէս, իրոք, ճիշտ որ,** համընկնում են, խոսքիմասային պատկանելությունը՝ գրեթե նույնպէս բացատրությամբ մեկի:

Ս. Աբրահամյանն իր «Ժամանակակից գրական հայերեն» ուսումնասիրության մեջ գրում է. « Այս խոսքի մասի ճանաչումը երկար պատմություն չունի: Այն մեր և ուրիշների կողմից նկարագրական ձևով անվանվել է **եղանակավորող բառեր**, որը թե՛ ինքնին վերցրած և թե՛ մանավանդ մյուս խոսքի մասերի անունների շարքում հաջող տերմին համարել չի կարելի: Ավելի նպատակահարմար է այն անվանել մեկ բառով՝ **եղանակավորիչ**, որն արտահայտում է գոյություն ունեցող բաղադրյալ տերմինի իմաստը» [1, էջ 257]: Ապա ժամանակակից գրական հայերենի եղանակավորիչների շարքում նշում է նաև **արդարեւ-ը** (տե՛ս նույն տեղը):

Պ. Պողոսյանն այս մասին նշում է, որ. « ...մի շարք եղանակավորող բառեր էլ, գործածվելով բայի դիմավոր ձևերի հետ, նրանց տալիս են հավաստիության եղանակավորություն. Այդ եղանակավորիչ բառերն են՝ անշուշտ, անկասկած, իհարկէ, ... **արդարեւ**» [12, էջ 328 – 329]:

Մ. Ասատրյանն իր «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության «Եղանակավորող բառեր» բաժնում նշված բառերի հետևյալ սահմանումն է տալիս. «Հաստատական եղանակավորող բառերը արտահայտում են մտքի, ասվածի հաստատական, հավաստի, ստույգ, ճշգրիտ լինելը, ինչպէս՝ ան-

շուշտ, հիարկե, իսկապես, իրավ, իրոք, **արդարև**. Օրինակ՝ Դա, **արդարև**, մի լեռնային դրախտ էր (Մուր.), [2, էջ 410-411]»:

Ֆ.Խլղաթյանը **արդարև** միավորը եղանակավորող բառերի տեսակներից հաստատականների մեջ ներկայացնում է հոմանիշների շարքով՝ **անշուշտ, անկասկած, անպայման, հարկավ, հիրավի, այո, իրոք որ, իսկապես որ, արդարև, իրավ**. սա , **արդարև** - ի իմաստների լիարժեք ու ամփոփ այն ցանկն է, որը համատեղում է նշված բառարաններում վկայվածները [3, էջ 221]:

Ունենալով տեսակետ, թե արդարև-ը ինչպես արևելահայերենին, այնպես էլ արևմտահայերենին անցել է գրաբարից ուղղակիորեն, այլ ոչ թե երկրորդից առաջինին, հիմնավորենք ասվածը՝ «Արեւակ»-ի նյութերով:

Այսպես, **արդարև** վերաբերականը կորպուսում հանդիպում է 1661 համատեքստում և 600 տեքստում, որոնցից 167 նախադասություններում (ընտրանքի մոտ մեկ երրորդում) **միջանկյալ, եղանակավորող կամ վերաբերական բառ** պաշտոնով (ընդ որում, Հին կտակարանից, Նարեկացուց առ այսօր). Բերենք օրինակներ կորպուսից՝ օրինակից հետո փակագծերում փորձելով նշել **արդարև**-ի իմաստներից ամենահամապատասխանը.

1. **Արդարև**, հողից չէ, որ ելնում է տառապանքը, ոչ էլ լեռներից են բուսնում ցավերը: (**արդարև= հիրավի**) Հին կտակարան

2. Քանզի, **արդարև**, բարեգութ տերը, Որպես օրինակ մարդկության, լացեց Նան իր թաղված ազգակցի համար ... (**արդարև= իսկապես**) Գ. Նարեկացի, Մատյան ողբերգության

3. Այս հարցին, **արդարև**, անցյալը կպայմանավորե ներկան ... (**արդարև= անշուշտ**) Հորիզոն, 1983, 08, 22

4. Եվ, **արդարև**, միայն հանճարեղ լեզվաբանը կարող էր 4-րդ դարի վերջերին հասնել այսպիսի արդյունքի: (**արդարև = անկասկած, անտարակույս**) Թրի դեմ գրիչ, Պ. Սևակ

5. Ինչու՞, մի՞ թե, **արդարև**, անկարելի է: (այստեղ **արդարև-ը** սաստկացնում է հարցը) Արամբին, Ալ. Շիրվանզադե, 1893

6. **Արդարև**, ինչպես կարելի է ճիշտ կազմակերպել նյութերի գնումն ու մատակարարումը առանց գիտենալու նրանց քանակն ու գումարը: (**արդարև=իրոք, իսկապես**) Կարալիս Կարազյան, Հաշվապահական հաշվառման հիմունքներ, 1982

7. **Արդարև**, աշխարհի վրայ քանի՞ ժողովուրդ ունեցած է այբուբենն եւ ուղղագրություն, որ անփոփոխ կերպով օգտագործած ըլլայ 15 դար: (**արդարև= հիրավի**) Ազգ, 2005, 05, 14

8. **Արդարև**, Վաչե Սողոմոնեան մէկ շաբաթով պիտի շրջի Հայաստանի տարբեր շրջանները, մարդասիրական օժանդակութեան հրավիրելով հայերը: (**արդարև = անկասկած, անտարակույս**) Հայրենիք, 2004, 08, 27

9. **Արդարև** ռուսահայը հաճախ պարզության կամ անկեղծության քողի տակ մի կոշտ խոսքով վիրավորում է իր բարեկամի սիրտն ու թունավորում նրա

օրը: (**արդարև = բնիկ**` այս իմաստը որևէ բառարանում վկայված չէ) Ալ. Շիրվանզադե, Ուղևորություններ և ակնարկներ

10. Այս աշխարհին աշխարհի **արդարև**: (**արդարև = ճշմարիտ**) Երևանի համալսարան, 1972, 12.02

Արդարև-ը վերաբերականի պաշտոնով գերազանցապես հանդես է գալիս «Արեվակ»-ի նյութերում և հիմնականում տրոհվում է նախադասության մյուս անդամներից (որպես միջանկյալ բառ), սակայն զգալի են դեպքերը, երբ այն տրոհված չէ. այդ օրինակներում **արդարև**-ը կարող է լինել ինչպես վերաբերական, այնպես էլ ածական կամ մակբայ, և խոսքիմասային տարբերակումը, այլև իմաստի զանազանումը մնում է լեզվաբանի հայեցողությանը. ստորև բերվող օրինակները տարբեր ժանրերից, ինչպես նաև դարաշրջաններից ու հայերենի երկու գրական լեզուների տարբերակներից են:

Թվում էր նրան, որ **արդարև** յուր ուղեղին մի վտանգ էր սպառնում, որ այդ վտանգը շատ մոտիկ է ... Շիրվանզադե. Արսեն Դիմաքսյան. 1893

Մի քանի հորեր **արդարև** դատարկ էին: Պ. Պոռշյան. Հացի խնդիր. 1879

Արդարև գովում ենք Քեզ, Մեր Տեր Աստված: Խոսքով Անձևացի. Սուրբ պատա մեկնություն. 2001

Արյունն **արդարև** դադարեց: **Արդարև** երկուքն ալ կորսնցուցած են իրենց կեանքի կողակիցներ ... Հայրենիք. 2005. 06.17

Արդարև բերրի և թագավորական դաստակերտ: Վարազդատ Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն

Արդարև մերն են սեր-լեցուն արտերը անծիր, Այս հիասքանչ ժեռ-հոգեթով լեռները բամբիռ, **Արդարև** մերն են հատուցման մեծ կրակները ծիր-ծիր, Ողորմյա՛, Տեր, Դու ստեղծեցիր, Դու մի՛ կործանիր: Օքրո Օքրոյան, Բանաստեղծություններ

Այդպես և պատահեց **արդարև**: (այստեղ **արդարև**-ը ռուսիզմ է, և նշանակում է «*իրականում*»), Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, 1983

Դվ նրանք, որ նավակի մեջ էին, մոտեցան, երկրպագեցին նրան ու ասացին, «**Արդարև** Աստծու Որդին ես դու»: Նոր կտակարան

Արդարև մենք իրար չէինք հասկանում: Ավ. Բսահակյան, Պատմվածքներ, պոեմներ, լեզենդներ ...

Արդարև նա արժանի էր իր անվանը: Ալ. Շիրվանզադե, Ուղեգրություններ և ակնարկներ

Արդարև կարճ ժամանակամիջոցի մը մեջ, բեմադրիչին պարտականությունն է ամեն բան հստակեցնել: Հայրենիք, 2006, 07. 28

...Եվ ոչ մեկ վայրն է **արդարև** Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա, Աշխարհ՝ որ ինձ ետուր արև: Ժողովրդական երգեր

Արդարև հայ ժողովրդի նահատակություններեն ոչ մեկը կարելի է բաղդատել հիշյալ աննախընթաց աղետին հետ: Երևան, 1947, 04.22

Այսպիսով, աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ժամանակի ընթացքում բառերը ակտիվացնում են իրենց իմաստները՝ վերջին կամ հնացած իմաստները առաջին կամ երկրորդ դարձնելով, այլև դրսևորելով նոր իմաստներ,

2. տեղափոխություններ են կատարվում դրանց ձևաբանական կարգերում՝ ավելի հաճախական դարձնելով անտեսված որևէ կարգը, ուստի և շարահյուսական գործառնությունները,

3. ճշտվում, հստակեցվում են բառերի փոխառության աղբյուրները,

4. նման աշխատանքները նպաստում են դիտարկվող ժամանակակից բառարանների (ի մասնավորի՝ Էդ. Աղայանի, Արդի հայերենի բացատրական բառարանի) ճշգրտված, լրամշակված, արդիականացված տարբերակը կազմելուն:

Վերը նշվածը հնարավոր է դառնում Արևելահայերենի ազգային կորպուսի ընձեռած հնարավորության շնորհիվ:

Օգտագործված գրականություն

1. Մ. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, 1981:
2. Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, 2002:
3. Ֆ. Հ. Խլդաթյան, Ժամանակակից հայոց լեզու, 2010:
4. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1971, էջ 307:
5. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 1976, էջ 258:
6. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, 1979, էջ 548:
7. Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 1944, էջ 258:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, 1969, էջ 213:
9. Ռ. Կ. Սաքապետոյան, Արևմտահայերեն – արևելահայերեն նոր բառարան, 2011, էջ 44-45:
10. Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, 1967, էջ 93:
11. Արտաշես Տեր Խաչադրյան, Հայոց լեզվի նոր արևմտահայերեն բառարան, Պեյրուք, 1992, Համակարգչային կայք էջ «ՆԱԻԴԻ»:
12. Պ. Մ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, 1990, էջ 32:

Tioyan Susanna - The semantic manifestations of the particle *արդարև* in the *arevak*. – The National Corpus of Eastern-Armenian *Arevak* is an indispensable instrument in solving of certain linguistic problems.

In the article – using the example of concrete word *արդարև* – is depicted, how the dictionary meanings of the words and their morphological categories are defined more precisely by means of the above mentioned *Corpus*.

Тюян Сусанна – Семантические проявления модального слова *արդարև* в восточноармянском национальном корпусе *аревак*. – Для решения конкретных лингвистических задач Восточноармянский национальный корпус *АРЕВАК* является незаменимым средством.

В статье на примере одного слова *արդարև* показывается как с помощью данного Корпуса уточняются словарные значения и морфологические категории слов.

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՌԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՄՇԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում ՀԲԱ ծրագրով¹ գրառված հայերենի տարածքային տարբերակների նյութերի համակարգչային մշակման՝ թվայնացման հարցը առաջ է քաշվել դեռ անցյալ դարի իննսունական թվականներին: Գործի կազմակերպմանը, սակայն, առաջին հերթին խանգարում էր մոտ 500 ձեռագիր միավորներում հայերեն բարբառների հնչատարբերակների համար օգտագործված տառադարձման անմիօրինակությունը, ոչ համակարգային բնույթը:

Բանն այն է, որ այդ նյութերի (այսուհետ նաև՝ տետրեր) հեղինակները ոչ միշտ են կիրառել հիշյալ հարցարան-ծրագրի կողմից առաջարկվող տառադարձումը: Հատկապես երբ անհրաժեշտ է եղել գրավոր արտահայտել մինչ այդ չնկարագրված, հետևաբար՝ համապատասխան գրանշաններ չունեցող հնչյուններ, նրանք օգտագործել են նաև այլ, երբեմն անհասկանալի տարբերակիչ (դիակրիտիկ) նշաններ կամ տառակապակցություններ: Բացի այդ, բարբառային հնչյունների համար ՀԲԱ ծրագրի կազմողների ստեղծած տառադարձման նոր համակարգը սկզբունքորեն հնից՝ աճառյանականից, ինչպես ընդունված է այն կոչել, չէր տարբերվում, թեպետ ուներ որոշ լրացումներ: Այս դեպքում, սակայն, պահպանվելով հին, արդեն ավանդորդ են ընկալվող գրանշանները, պահպանվում էին նաև հնչյունի գրանցման բազմիցս քննադատվող երկակի մոտեցումները: Այսինքն՝ մեկ պարզ հնչյունը տառադարձվում էր ոչ միայն մեկ, այլև երկու, իսկ երկբարբառը՝ նաև մեկ տառով: Ծրագրում, օրինակ, նշվում է. «*բ* պարզ ձայնավոր (թեև արտահայտված է երկու տառով) ունի *բ*-ի և *ե*-ի միջին արտասանություն»²: «...երկբարբառների արտահայտման համար պետք է առաջնորդվել ընդհանուր սկզբունքով՝ դրանք արտահայտելով ձայնավոր և ձայնորդ տառերի զուգորդություններով (*ուա, ուէ, աու, քա, ուոյ* և այլն): Այստեղ բացառություն են կազմում միայն *ուօ, իէ, իիօ* երկբարբառները, որոնք ընդունված է բառամիջում արտահայտել *ու, է, ի* տառերով»³:

Պարզ էր, որ ձեռագիր նյութի թվայնացումը սկսելուց առաջ նախ անհրաժեշտ էր ստեղծել հայերենի բարբառային հնչատարբերակների տառադարձման համապարփակ, բայց միևնույն ժամանակ խիստ կանոններով ու

1. «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր», Ե., 1977:

2. Նույնը, էջ 21:

3. Նույնը, էջ 22:

սկզբունքներով կարգավորվող բաց համակարգ: Այն պետք է գերծ մնար երկակի չափանիշներ գործադրելուց և ընձեռներ ավելի մեծ հնարավորություններ ոչ միայն մեզ հայտնի, այլ նաև նոր, դեռ չբնութագրված հնչյունները գրավոր ձևով նկարագրելու համար:

Անցյալ դարի իննսունականների կեսերին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի մի քանի աշխատակիցներից կազմված խումբը մշակեց և գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց տառադարձման նոր համակարգի կազմման սկզբունքները, որոնք հավանության արժանացան: Երկու տարվա լարված աշխատանքի հետևանքով համակարգչային մշակմամբ ստեղծվեց հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը⁴, որը գիտխորհուրդը նույնպես դրականորեն գնահատեց: Այնուհետև 2009 թ. սկսվեցին ՀԲԱ հարցարանով գրառված բարբառային միավորների թվայնացման աշխատանքները:

Բարբառագետների փոքր խումբը պետք է այդ տետրերը նախապատրաստեր թվայնացման համար: Առաջին հերթին անհրաժեշտ էր նոր տառադարձմամբ շտկել ձեռագրերի բարբառային ձևերը: Խնդիր էր դրված ուղղումները կատարել այնպես, որ չխաթարվի թվայնացման աշխատանքների ընթացքը:

Ինչպես ձեռագիր բարբառային նյութերի համակարգչային մշակման խմբի, այնպես էլ այս կամ այն նպատակով դրանց առնչվողների համար գուցե ավելի հարմար կլինեք ձեռքի տակ ունենալ առկա բոլոր գրանշանների նորագույն համարժեքների առանձին աղյուսակ: Սակայն դրա ստեղծումը բավական ժամանակ կխլեր և կուշացներ թվայնացումը: Ուստի մենք հարմար գտանք ուղղումներն անել յուրաքանչյուր առանձին տետրում և այն հանձնել համակարգչային մշակման: Իսկ նշված տիպի աղյուսակ կարելի է կազմել հետագայում՝ բոլոր բարբառային ձեռագրերի տառադարձման աշխատանքները ավարտելուց հետո:

Հենց 2009 թ. սկսվեցին տետր առ տետր բարբառային նյութերի նոր տառադարձմամբ ուղղումները: Դրանք, բնականաբար, կատարվում են տեքստից դուրս, այլապես կառաջանան խճողումներ՝ խաթարելով բառաձևերի հնչարտաբերական յուրահատկությունների ընկալումը: Այսինքն՝ տվյալ հնչյունի համար օգտագործված, այսպես ասած, ոչ ճիշտ տառադարձումը տետրի սկզբում «Տառադարձում» վերնագրի տակ արտագրվելով՝ = նշանով ավելացվում է նրա նոր համարժեքը ($n=ն$, o , $l'=լ$, $q'=ղ$ և այլն): Բայց այդ նյութը թվայնացման նախապատրաստելու կամ հենց թվայնացման ընթացքում ի հայտ են գալիս զանազան խնդիրներ, որոնք անհապաղ լուծում են պահանջում:

Նախ նշենք, որ մենք հարմար ենք գտնում տետրի տեքստում չուղղել ոչ միայն կոնկրետ այս կամ այն բարբառային ձևի, ըստ մեզ, ոչ ճիշտ՝ հին

4. Մ. Աղաբեկյան, Ա. Հանեյան, Ռ. Ուռուտյան, Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 2010, էջ 5-22:

գրանցումը կամ ընդհանրապես չտառադարձելը, այլ անգամ՝ վրիպակները: Որոշ դեպքերում, ասենք, տվյալ էտալոնային հնչյունի բարբառային երկու տարբերակները միանման ձևով են տառադարձվել կամ հակառակը՝ միևնույն երևույթը տարբեր ձևերով է ներկայացվել: Բնականաբար, միջամտությունը ճիշտ չի լինի, քանի որ մեր նպատակը ոչ թե հեղինակի կողմից հնչյունական ընկալումները, այլ տառադարձումները նորովի շտկելն է: Դա թողնելով հետագա հետազոտողներին՝ խուսափում ենք ձեռագրում հապճեպ արվող ուղղումների անընդունելի հետևանքներից:

Հաճախ դժվարություններ են հարուցում տառադարձման հին սկզբունքները: Այսպես՝ երկբարբառների, եռաբարբառների բաղադրիչները, ինչպես վերը նշվեց, տեսրերում կողք կողքի առանձին տառերով ներկայացվելով՝ *ուա, ուէ, աու, քա, ուոյ* և այլն, անտեսվում է այդ երկբարբառների բնույթը՝ բարձրացող-իջնող, իջնող-բարձրացող կամ բարձրացող-իջնող-բարձրացող և այլն: Տառադարձման նոր կանոնով, երկբարբառների բաղադրիչներից մեկը մյուսի ցուցիչում գրելով (բարձրացող՝ ^{ու}օ, իջնող՝ օ^{ու}, իջնող-բարձրացող-իջնող՝ *քüüü = քüü^{ու}*), կարողանում ենք տալ այդ հնչյունների ամբողջական նկարագիրը: Որոշ հեղինակներ (ինչպես օրինակ՝ Ա. Հանեյանը) սովորաբար նախաբանում գրում են, թե տվյալ բարբառային միավորի որ երկբարբառներն են բարձրացող կամ իջնող, որով հեշտանում է դրանց նորովի տառադարձումը: Մակայն, ցավոք, բարբառը գրանցողները քիչ դեպքերում են հարկ համարում ներկայացնել երկբարբառների համար օգտագործված այդպիսի տառամիացությունների արտասանական բնութագիրը:

Մյուս կողմից, ձայնավորների միմյանց հաջորդող գրությունը շփոթ է առաջացնում բուն երկբարբառների և երկհնչյունների կամ առանձին վանկեր կազմող տարբեր ձայնավորներով հորանջային երևույթների միջև: Այստեղ դժվարությունը տեսրերում միանման գրությամբ ներկայացվող այդ տարբեր բնույթի հնչյունական արտահայտությունները միմյանցից զանազանելն է: Դարձյալ շատ քիչ դեպքերում է, որ տվյալ տեսրի հեղինակը նշում է դրանց ինչպիսին լինելը: Այսպես. Խարբերդի նյութը գրանցողը (տեսրում անունը նշված չէ), օրինակ, գրում է, որ խոսվածքը երկբարբառ չունի, և բարբառին միջձայնավորային դիրքում *յ*-ի հավելումը բնորոշ չէ: Հետևաբար՝ *էա*-ն երկբարբառ չէ. *կըքաշէաք, կըվարէաք*, նույնը և՛ *բաղըլաին մէչը, կըպառնաին, չաղաին* «երեխային», *ծիու, կը խաղաին*, (տե՛ս տեսր 213): Մինչդեռ շատ այլ տեսրերում, կարելի է ասել, այս առումով լռություն է տիրում:

Տառադարձման հարցում կողմնորոշվելը ավելի դժվար է լինում, երբ բարբառային միավորը գրանցողները հնչյունները, առանց նկարագրելու, ներկայացնում են ինչ-որ անձանոթ գրանշաններով: Այդպիսի երևույթների սովորաբար հանդիպում ենք ոչ մասնագետ հեղինակների լրացրած նյութերում: Ընդհանրապես, ՀԲԱ հարցարանով ոչ մասնագետների գրառած բարբառային միավորները լեզվի ինստիտուտի բարբառագետները ժամանակին ստուգել և համապատասխան շտկումներ են արել: Բայց և այնպես,

որոշ քանակի տետրեր, ինչպես երևում է, նման ձևով չեն խմբագրվել: Այս և վերը նշված մյուս դեպքերում հարցը պարզելու համար օգտվում ենք տվյալ բնագավառում առկա հետազոտություններից, դիմում ենք համապատասխան մասնագետի կամ կոնկրետ բարբառախոսի օգնության: Մակայն լուրջ դժվարություններ են առաջանում հատկապես արևմտահայ խոսվածքների համապատասխան շտկումների ժամանակ: Դրանցում ի հայտ եկող հարցականների պատասխանները գտնելը այսօր չափազանց դժվար, եթե չասենք՝ անհնար է: Ոչ քիչ դեպքերում տվյալ անհատը, որի խոսքը ժամանակին գրառել են, գտնված միակ, հաճախ՝ խիստ առաջացած տարիքում, բարբառակիր է եղել:

Ինչպես նշեցինք, նոր համակարգը ընձեռում է հնչյունները հնարավորինս ճիշտ տառադարձելու միջոցներ: Մինչդեռ մեր ուղղումների ընթացքում առայժմ որոշ գրանշաններ շատ քիչ կամ բոլորովին չեն օգտագործվել: Դրա հիմնական պատճառը, կարծում ենք, այն է, որ բարբառային միավորը գրանցողը այս կամ այն հնչյունի հատկանիշները ոչ միշտ է ճիշտ ընկալել կամ էլ՝ էտալոնային հնչյունի համեմատ փոքր տարբերությունը ոչ էական համարել: Բայց պարզվեց նաև, որ նոր համակարգում չենք տեղադրել, օրինակ, քմային բոլոր բաղաձայնները, որոնք բնորոշ են հատկապես Արցախի որոշ խոսվածքների: Թվայնացնող խմբի ղեկավարը՝ Ռ. Ուռուտյանը, բացը լրացրեց՝ օգտագործելով տառադարձման նոր համակարգի՝ հնարավորությունները (*բ, բ, դ, դ, ւն, ւն ճ* և այլն)՝ առանց խախտելու ընդունված սկզբունքներն ու կանոնները:

Մեր նախաձեռնությամբ սկսեցինք նաև հայերենի տարածքային տարբերակների ՀԲԱ ծրագրով լրացված ձեռագիր միավորների բազմահատկանիշ դասակարգմամբ թվայնացման աշխատանքները: Ինչպես հայտնի է, Գ. Զահուկյանը իր աղյուսակներում տեղադրել է այդպիսի 120 միավոր⁵: Մինչդեռ մենք պետք է կարողանանք ձեռագիր վավերացում ունեցող մոտ 500 բարբառային միավորների ճիշտ տեղերը գտնել այդ նույն աղյուսակներում: Մեզ այս հարցում, իհարկե, օգնում են բարբառը լրացնողի հաղորդած՝ հատկապես արևմտահայ բարբառախոսների հայրենիքի, այնտեղի բարբառակիր բնակիչների մասին տվյալները: Երբեմն տետրերում հանդիպում է տվյալ բարբառային նյութը գրանցող կամ խմբագրող բարբառագետի հստակ կարծիքը այդ միավորի, այսպես ասած, բարբառային պատկանելության վերաբերյալ: Բայց նման տեղեկությունները, ցավոք, դարձյալ ընդհանուր բնույթ չեն կրում:

Ծագումնաբանական խնդիրները լուծելու ամենավստահելի մեթոդը, իհարկե, տետրերում գրանցված և Գ. Զահուկյանի ընտրած 100 բարբառային հատկանիշների⁶ համեմատության արդյունքներով կողմնորոշվելն է: Մենք, առաջնորդվելով այդ սկզբունքով, հրաժարվում ենք, սակայն, հեղինակի

5. Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 132-136:

6. Տե՛ս նույնը, էջ 45-119:

օգտագործած վիճակագրական մեթոդը գործադրելուց, քանի որ այն մեզ համար առայժմ դժվար ու ժամանակատար է: Այդպիսով խնդրո առարկա միավորների մեր դասակարգումը ինչ-որ չափով ընդհանուր բնույթ ունի: Այսինքն՝ որոշվում է, թե քննվող միավորը մոտավորապես որ բարբառին է պատկանում, բայց վերջինիս խոսվածքների հետ նրա ունեցած առնչակցությունների բացահայտումը մնում է հետագա հետազոտողներին: Իսկ տետրերում առկա և ջահուկյանական հատկանիշների համեմատությամբ որոշված բարբառային միավորը մեր կազմած աղյուսակում տեղադրվում է աստղանիշով: Մինչ այժմ բազմահատկանիշ դասակարգման աղյուսակում կարողացել ենք տեղադրել տետրերում գրանցվածների մեծ մասը:

Այսպիսի աղյուսակը առաջին հերթին կօգնի տետրերից օգտվողներին առանց երկար փնտրտուքների իրենց անհրաժեշտ բարբառային նյութը ավելի արագ գտնել: Այն միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս պարզելու ՀԲԱ ծրագիր-հարցարանով հավաքված նյութերում այս կամ այն բարբառային միավորի ներկայացվածության քանակը կամ՝ իսպառ բացակայությունը: Հասկանալի է, որ դաշտային աշխատանքների (սկսվել են յոթանասնականների վերջերին) հիմնական ուղղվածությունը եղել է Արևմտյան Հայաստանի, իրանահայ միջավայրի բարբառային միավորները կորստից փրկելը, և գրանցվածների մոտ կեսը (200-ից ավելի) հիշյալ տարածքներից է: Այդ նյութը, սակայն, ըստ բարբառների, հավասարաչափ բաշխվածություն չունի հասկանալի պատճառներով: Եթե Մուշի, Սասունի, Վանի, Խոյի բարբառներն, ասենք, դասակարգման աղյուսակում կարողանում ենք ներկայացնել՝ յուրաքանչյուրը մի քանի տասնյակ միավորով, իսկ մյուսները՝ ընդամենը մեկով կամ մի քանիսով, ապա Մարզվան-Ամասիայի, Ղրիմ-Նոր Նախիջևանի, Միլիիհիսարի, Կյուրինի, Սյոլյոզի, Կեսարիայի, Արդեալի բարբառների վանդակները դեռ բաց են մնում: Գրեթե նույնը կարելի է ասել նաև արևելյան խմբակցության բարբառների վերաբերյալ:

Այսպիսով՝ սկսվել է հայագիտության համար շատ կարևոր մի գործ: Հայերենի տարածքային տարբերակների ձեռագիր նյութերի թվայնացմամբ ոչ միայն դրանց երկարակեցությունը, այլև համացանցի միջոցով միջազգային շրջանառությունն է ապահովվում: Ցավալին այն է, որ մեր բարբառային միավորների ամբողջական պատկերը թերի է, քանի որ դրանց հավաքչական գործը դեռ չի ավարտվել: Այն ընդհատվեց, և վերականգնումը աններելիորեն ուշանում է, մինչդեռ և՛ արևմտյան, և՛ արևելյան տարբերակների անկասելի կորուստը շարունակվում է:

Агабекян Меладэ – Проблемы оцифровки письменных материалов армянских диалектов. – В институте языка НАН Армении с 2009 года начались работы над оцифровки письменных материалов армянских диалектов. Задачей группы диалектологов института -подготовление около 500 письменных единиц к оцифровк. В основном надо транскрибировать диалектные формы этих материалов по новой, единой транскрипционной системе. Во время работы возникают разные проблемы требующие неотложные решения. Началась также оцифровка классификации этих диалектных единиц.

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ
ՈՐՈՇ ՁԵՎԵՐԻ ՇՈՒՐՋ**

Հայ մեծանուն լեզվաբան Հ.Աճառյանն իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» կոթողային աշխատության 2-րդ հատորն ամբողջությամբ նվիրել է դերանուն խոսքի մասին՝ աշխարհի բազմաթիվ լեզուներից (562) քաղած հարուստ տվյալները վերլուծության ենթարկելով և ցույց տալով այն բազմաթիվ դրսևորումները, որ ունի դերանունն աշխարհի բազմազան լեզուներում և հայերենում (գրաբար, աշխարհաբար, գրական երկու լեզուներ և հայերենի բարբառներ), ներկայացնելով հայերենի բարբառներում առկա իրողությունները պատմական զարգացման մեջ:

Բարբառների բառապաշարում դերանունները ներկայանում են գերազանցապես բնիկ արմատներով, երբեմն էլ փոխառյալ ձևերով՝ իմաստային նրբերանգներ արտահայտելու համար: Հանդիպում են նաև դերանվանական ինքնատիպ բառաձևեր, որոնցից մի քանիսն ընտրողաբար ուղղակի ներկայացնենք՝ հիմք ընդունելով բարբառագիտական, ազգագրական մենագրությունների և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում կուտակված մոտ 500 խոսվածքային միավորների մատուցած նյութերը:

Հայերենի բարբառներում **անձնական և անդրադարձ** դերանունների իմաստագործառական քննությանը նվիրված մեր ուսումնասիրության մեջ¹ առանձնացրել ենք ընդհանրական կամ մասնավոր իրողություններ, դերանվանական և անվանական հոլովումների ներթափանցումով առաջացած ինքնատիպ հոլովաձևեր, օրինաչափ կամ ոչ օրինաչափ հնչյունափոխությամբ, մասնիկների հավելումով, կրկնահավելումով, ինչպես նաև հնչյունների անկումով անձանաչելիության աստիճանի փոխված դերանվանական բառաձևեր, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև: Բառապաշարի համահայերենյան շերտին պատկանող անձնական դերանունները երբեմն ներկայանում են առաջին հայացքից տարօրինակ թվացող բառանվանումներով, ինչպես ասենք՝ եզակի առաջին դեմքի համար փաղաքշական **-իկ** մասնիկի բազմակի հավելումով Շամախիի բարբառում գործառող **յէսիկիկիկըս** բառաձևը²: Անձնական դերանունների հոլովական համակարգում առկա բազմապիսի հետաքրքիր իրողություններից ներկայացնենք մի քանիսը: Վանի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ Հ. Աճառյանն ուշադրություն է հրավիրում անձնական դերանունների ինքնատիպ հոլովաձևերի վրա, օրինակ **յէս** դերանվան տրականն ու հայցականը՝ **ձի, ձիկ**

1. Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2012, էջ 14-26:

2. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.Բ., Ե., 1973, էջ 33:

բացառականը՝ **ձիյնից (ինձնից)**, իսկ գյուղերում՝ **ձինէ, ձըկնէ**: Այդ հոլովաձևերը Աճառյանը համարում է նախավանկի անկումով **ինձի(կ)** ձևից սերող, ինչն էլ տալիս է այն հարցի պատասխանը, թե բառասկզբի ձայնեղ բաղաձայնն ինչու՞ օրինաչափորեն չի խլացել (**ձ>ծ**), ինչպես՝ **տուք-ծէգ-ծէզնից**: Այդ առիթով նաև նկատում է, որ բարբառին անծանոթ մարդու համար դժվար կլինի տարբերել՝ **ձիզնից (ինձնից)** և **ծէզնից (ձէզնից)**³: Հետաքրքիր բառակազմական պատկերով են ներկայանում անդրադարձ դերանունները, որոնք իրենց բնույթով ձևաբանական, շարահյուսական, ոճական խնդիրներ են լուծում խոսքում՝ արտահայտելով նույնություն գործողության սուբյեկտի հետ: Վանի բարբառում ինքս ինձ իմաստով գործառող **ձիձի** բառաձևն ակնհայտորեն վերոհիշյալ տրականաձև **ձի** դերանվան կրկնությամբ է առաջացել:

Ինքնատիպ դերանվանական մի հոլովաձև էլ Աճառյանը հայտնաբերել է Վան-Վասպուրական ազգագրական գոտու բանահյուսության մեջ՝ **մէնէս** (ինձնից): Նշելով, թե բարբառում այդ ձևն արդեն կենսունակ չէ՝ Աճառյանն այն համարում է բացառական հոլովի **մէն** մասնիկը, որից առաջ եղած արմատը կորել է, իսկ **մէնէս** ձևի վերջահար **ս**-ն առաջին դեմքի ստացական հոդն է⁴:

Ցուցական դերանունները, որոնք մատնացույց են անում առարկան կամ նրա հատկությունը, թիվը, ինչպես նաև գործողության հատկանիշը՝ ձևը, չափն ու քանակը, հայերենի բարբառներում ներկայանում են բառակազմական, ձևակազմական բազմազանությամբ՝ գրեթե միշտ պահպանելով եռադիմայնությունը: Մեծանուն գիտնական Ա. Մեյեն զարմանքով է նշում հայերենի ցուցական դերանունների կանոնավորության մասին՝ ավելացնելով, թե «վերին աստիճանի համաչափ այս համակարգը հայերենի ստեղծագործությունն է. հնդեվրոպական ոչ մի ուրիշ լեզու չունի դրա համագործը, և միայն հատուկենտ լեզուներից կարելի է համեմատելի ձևեր ներկայացնել»⁵: Այդ կանոնավորության խնդրին հաճախ է անդրադառնում նաև Հ. Աճառյանը հայ բարբառներում գործառող դերանունների, մասնավորապես ցուցականների հարցը քննելիս: Ասենք, Արևմտյան խմբակցության շատ բարբառներում առկա **hou, hon, hol** ցուցականները, որոնք վկայված են նաև միջինհայերենյան գրական հուշարձաններում, Հ.Աճառյանը չի ստուգաբանում, սակայն նրանց ցուցականությունն արժևորում է հենց **ս, դ, ն** վերջնահնչյուններով՝ դերանվանական արմատական այդ հնչյունները համարելով բնիկ հայկական ծագման վկայություն:

Փոխադարձ դերանուններից հետաքրքիր է Ղարաբաղի բարբառում գործառող **տուրուր տալ** արտահայտությունը՝ **ընդ+իրար+տալ** բաղադրությամբ, ուր **ընդ** նախդիրը անձանաչելիորեն «մաշվել է»: Նույն իրողությունն առկա է նաև բարբառների Արևմտյան խմբակցության Քեսաբի բարբառում,

3. Հ. Աճառյան, Քննություն Վանի վարբառի, Ե., 1952, էջ 150:

4. Նույն տեղում:

5. Ա. Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 293:

ուր վիճել, բախվել, իրար մեջ անցնել իմաստով գործառում է *դիրքօր իյնիլ* կայուն բառակապակցությունը⁶:

Անորոշ դերանունների արժեքով հայերենի բարբառներում բնիկ հայերեն բառանվանումների կողքին գործառում են նաև պատմական շփումների ընթացքում տարբեր ժողովուրդների բառամթերքից վերցված համապատասխանություններ՝ այդ հասկացության վերացականությունը հաղթահարելու նպատակով: Հ. Աճառյանի վկայությամբ՝ աշխարհի շատ լեզուներում սովորական է *մարդ* բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը: Անդրադառնալով հայերենին՝ նա գրում է. «Հայերենի մեջ էլ սրա գործածությունը շատ հին է և մինչև 5-րդ դար է հասնում, շատ հաճախ Փարպեցու մոտ ունենք *ամենայն մարդ*՝ փոխանակ *ամենայն ք*»⁷: Անորոշության երանգն առավել խտանում է *մարդ-մուրդ* հարադրության մեջ, ինչպես օրինակ՝ *Մառտ-մուռտ* տէսա՞ր հօնի (Մշո բարբառով): Հետաքրքիր է Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում առկա *օքմին* անորոշ դերանունը, որը, հավանաբար, *ոք+մի* բառաբաղադրությունն է՝ մարդ, էակ բառիմաստով: Հետաքրքիր է, որ արտաբերվելով մեկ շեշտով՝ *օքմին* (վերջընթեր վանկի շեշտումն օրինաչափ է), կարող է հանդես գալ անորոշ հոդին համարժեք *մի* բառի կրկնահավելումով, որից՝ *մի օքմին*՝ «ինչ-որ մարդ նշանակությամբ»: Հ. Աճառյանը Թիֆլիսի բարբառում հաճախադեպ գործառող *օքմին* -ի կողքին բերում է նաև դրափոխությամբ առաջացած *օմքին* ձևը, իսկ Երևանի խոսվածքում՝ *օքմին*, *օքնիմ*, Ագուլիսի բարբառում՝ *ուխման*, իսկ հոգնակին՝ *ըխմընատիք*, ինչպես նաև վկայում է որպես անորոշ դերանուն կիրառվող *ուխման*, *էխման* բառաձևերը⁸: Վանի բարբառի անորոշ դերանունները թվարկելիս Հ. Աճառյանը ներկայացնում է բանահյուսական պատարիկից քաղված «հնության մի հետաքրքրական մնացորդ՝ *ոմը*». *Ոմը* զարկի բուլկարին, *ոմը* զանի քյամանչեն, *Ոմը* ասի խաղ, *ոմը*՝ տաղ.....⁹ (պահպանել ենք աճառյանական տառադարձումը):

Որոշյալ դերանվան մի եզակի օրինակ կա Ղարաբաղի բարբառում. ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ *ամենքը* որոշյալ դերանվան իմաստով միայն այդ բարբառի խոսվածքներում է գործառում *լօխ* համապատասխանությունը: Վերջերս հրատարակված «Ղարաբաղի բարբառային բառարանում» *լօխ* բառահոդվածի դիմաց նշված է «ողջ, ամբողջ, բոլոր» իմաստները, թեև չի նշվում ծագումը¹⁰: Այդ ինքնատիպ դերանվան մասին խոսել է նաև Հ. Աճառյանը՝ նշելով, որ միայն Ղարաբաղի բարբառում *ողջ*, *բոլոր* որոշյալ դերանվան արժեքով գործառող այդ *լօխ* ձևը. «հոլովման ժամանակ ստանում է չ հավելվածը, օր.՝ *լօխյանը յետը* (բոլորից հետո): Հոգնակին լինում է *լօխյունք*, սեռ. *լօխյունց*, բաց. *լօխյունցան*: Այս բառը այնքան բնորոշ է Ղարաբաղի

6. Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Հալեպ, 1986, էջ 92:

7. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 415:

8. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 426:

9. Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 150:

10. Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառային բառարան, Ե., 2013, էջ 252:

համար, որ շրջակա գավառներում **լօխ** բառը ծածկալեզվով նշանակում է դարաբաղցի, օրինակ՝ լօխերը եկան (դարաբաղցիք եկան)»¹¹:

Կարնո բարբառում **որոշյալ դերանվան** արժեք ունի **մէհօկավօր** բաղադրությունը, որ գործածական է խոսակիցներին ծանոթ անձի մասին խոսելիս: Օրինակ՝ **էն մէհօկավօրը** հ^{ու}ր է: Ոճական առումով արհամարհական նրբերանգ ունի:

Ինչ վերաբերում է **ժխտական դերանունների** գործածությանը, նշենք, որ հետաքրքիր իրողություն է խոսքի շղթայում շարահյուսական հատուկ կառուցվածքով ժխտական իմաստ արտահայտելը, ինչպես՝ Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում «ոչ ոք» ժխտական դերանվան արժեքով գործածվում է **մինն էլ ա**, իսկ ոչ մի դերանվան իմաստով՝ **մի բան էլա, բան էլա** կապակցությունները: Ինչպես՝ **Միննէլա** յեկավ վօջ («ոչ ոք չեկավ»), կամ՝ **բանէլա չրկա** («ոչինչ չկա»): Խոսվածքի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ նշվում է, թե «խոսվածքը փաստորեն ժխտական դերանուններ չունի»¹²:

Հարցահարաբերական դերանունները հայերենի բարբառներում հանդես են գալիս բառակազմական, ձևակազմական բազմազանությամբ: Հին գրական հայերենի հարցական **ո՞, զի՞նչ, ո՞ր** դերանունների կողքին առկա **ընդէ՞ր, վասն է՞ր** հարցականները կենսունակ են և գործառում են պարսկահայ խոսվածքներում **հէ՞ր** բառանվանմամբ՝ «ինչու՞, ինչի՞ համար» իմաստներով, ինչպես՝ **հէ՞ր ասամ** («ինչու՞ ասացի»):

Բնիկհայերենյան **ո՞** դերանվան կենսունակության ուղղակի վկայություն կարելի է համարել նախդրիվ հայցականի՝ **յո՞** («դեպի ու՞ր») ձևի կիրառությունը Քեսաբի բարբառում, ինչպես՝ **Զո՞ւրթուք** («ու՞ր եք գնում») ¹³:

Ինչպես գիտենք, Հ. Աճառյանը Նոր Ջուղայի բարբառի նախահայրենիքը տեսնում է Ագուլիսի և Ղարաբաղի միջավայրում՝ Հին Ջուղայում: Համեմատելով Նոր Ջուղայի բարբառում **դո՞րըն** կամ **ի՞նչ դո՞րըն** և Ղարաբաղի բարբառում գործառող **թօ՞ռն** կամ **ի՞նչ թօռն** հարցական դերանունները՝ Աճառյանը առավել հին է համարում Ջուղայի բարբառում առկա ձևը՝ **ընդ որ > դօր** անցումով: Այսպես՝ **Ի՞նչ դօրն աս գճնում** (Ջուղա) և **ի՞նչ թօռն** ըս քիս (Ղարաբաղ) ¹⁴: Վանի, Բայազետի, Մշո բարբառներում նույնպես առկա է տեղի, շարժման ուղղության մասին հարցում անող **դո՞ր** հարցական դերանունը: Հնչյունափոխական մի այլ օղակ է ներկայացնում Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում առկա **ղըվօ՞րը** բառաձևը:

Ո՞ր հարցական դերանվան հետ կարելի է կապել **օրի, հօրի** ձևերը՝ **ի՞նչ բանի** համար, **ինչու՞** իմաստներով Արևմտյան խմբակցության հարավ-կենտրոնական բարբառախմբի Մուշ-Ալաշկերտի, Տիգրանակերտի, Մասունի

11. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 424:

12. Մ. Սաստրյան, Լոռու խոսվածքը, Ե., 1968, էջ 113:

13. Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Ե., 2009, էջ 368:

14. Հ. Աճառյան, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1940, էջ 24:

բարբառներում գործառնող: **Օ՞րհ** հարցականը կիրառվում է նաև Համշենի բարբառում, ինչպես՝ Մօնչըս, **օ՞րհ** չիս ասիլ, օր օնօտի իս (սոված ես)¹⁵:

Հետաքրքիր, գրեթե անճանաչելիության աստիճանի կրճատված դերանվանական ձև է Վանի բարբառում գործառնող **դու՞ց** (որտեղի՞ց) հարցականը, ինչպես՝ **դու՞ց կնկնաս**, որը Հ. Աճառյանը համարում է *ի՞նչ տեղից* բառակապակցության խիստ մաշված ձևը. «Ջնջվել է ամբողջապես **ինչ** բառը, բայց միայն մնացել է **ն** ռնգայինի ազդեցությունը տեղ բառի **տ**-ի վրա և վերածել է դ-ի»¹⁶: Կարծում ենք, որ այդ **դ**-ն ոչ թե հնչյունափոխության արդյունք է, այլ պարզապես **դէհ**, **դիհ**՝ ուղղություն ցույց տվող բառի կրճատված բացառական հոլովաձևն է:

Դերանվանական ինքնատիպ ձևեր շատ կան Համշենի բարբառում, ինչպես՝ **վէ՞լ** հարցական դերանվան սեռականն է՝ **վու՞մ**: Բերենք օրինակ համշենահայ բանահյուսությունից. Ամօթ չըլլի հայծընուշը, տուն **վու՞մ** հայսն իս («Ամօթ չլինի հարցնելը՝ դու ու՞մ հարսն ես»)¹⁷: Այդ **վում**-ը, հավանաբար, **վել** և **ում** ձևերի բաղադրության արդյունք է: Համշենի բարբառի Տրապիզոնի խոսվածքով գրառված հեքիաթում գտել ենք **նյու՞ր** հարցական դերանունը, որի կազմում **ու՞ր** բաղադրիչն ակնառու է: Այսպես՝ Դուն ի՞նչ մաշդ իս, **նյու՞ր** տեղէն գութաս, **նյու՞ր** կէշտաս («դու ի՞նչ մարդ ես, որտեղի՞ց ես գալիս, ու՞ր ես գնում»)¹⁸:

Հետաքրքիր մի բառաձև է կիրառվում Եդեսիայի բարբառում՝ **ուշկաց** կամ **ուշկըց**, որը բարբառագետ Ա. Հանեյանը բարբառի քննությունը կատարելիս **ուստ**-ի բացառական ձևն է համարել¹⁹:

Իբրև դերանվանական ինքնատիպ ձև՝ կարելի է նշել նաև Ն. Նախիջևանի բարբառում **ինքը** դերանվան «իրենք» հոգնակին ներկայացնող **ժենք**-ը՝ ձայնավորի անկումով և **ք>ժ** օրինաչափ հնչյունափոխությամբ²⁰:

Անատոլիայի տարածքի Սիվրի-Հիսարի բարբառը հարուստ է արագախոսության հետևանքով «սեղմված» բառերով (ընդունված է *ամփոփում* անվանել), որն առկա է նաև հարցահարաբերական դերանուններում, ինչպես՝ **ինչիկ** («ինչ+իրք, ինչ բան»), **իփիս** («ինչպես»), **վըտօխ** («որտեղ») և այլն: Բերենք օրինակներ՝ Օսկիերը **ի՞նչիկ** չըհանեցիր, **վըտօ՞խ** է, **ի՞շ** տեղ է («Ոսկիներն ինչու՞ չհանեցիր, որտե՞ղ է, ի՞նչ տեղ է»)²¹:

Այսպիսով՝ բարբառների բառապաշարում գործառնում են դերանվանական բազմաթիվ ձևեր, որոնց քննությունը փաստում է դրանց ծագումը բնիկհայերենյան արմատական ձևերից, որով էլ հաստատվում է նշանավոր բարբառագետ Ա. Ղարիբյանի կարծիքը, թե ոչ մի բարբառ դերանվանական

15. Հ. Գուրունյան, Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991, էջ 88:

16. Հ. Աճառյան, Քննություն Վանի բարսառի, Ե., 1952, էջ 200:

17. Հ. Գուրունյան, Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991, էջ 124:

18. Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, Ե., 1986, էջ 18:

19. Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982, էջ 221:

20. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 129:

21. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 129:

նոր արմատ չի գործածում: Բոլորն օգտագործում են համաժողովրդական լեզվի միևնույն արմատական ձևերը՝ տարբեր արտասանությամբ²²: Արդի հայերենի բոլոր դերանուններն էլ առկա են հայ բարբառներում, թեև դերանվանական որոշ ձևեր կարող են բացակայել տարբեր խոսվածքներում:

Джемма Барнасян– О некоторых разновидностях местоименных форм в диалектах армянского языка. – В армянских диалектах есть множество местоименных форм, своеобразных лексических единиц, исследование которых свидетельствует об их коренном исконно армянском происхождении. Следует заметить, что ни в одном из диалектов нет нового местоименного корня. Все диалекты используют одни и те же корневые формы общенародного языка в соответствие с фонетическими закономерностями каждого диалекта.

22. Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 144:

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱՅԻ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐՈՒՄ**

Քերականական համանիշությունը լեզվաբանության կարևորագույն հարցերից է, սակայն հայ քերականագիտության մեջ այն քիչ է ուսումնասիրված¹: Քերականական համանիշները² քերականական միևնույն իմաստների, հարաբերությունների դրսևորումն են քերականական տարբեր միջոցներով, որոնք ունեն իմաստային կամ ոճական նրբերանգներ, և որոնց հիմքում ընկած են առարկայական նույն հարաբերությունները³:

Հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերին բնորոշ է համանիշությունը, այսինքն՝ նույն իմաստի արտահայտման համար քերականական տարբեր կառույցների կիրառումը: Անցյալի ժամանակային իմաստների դրսևորման համար դրանցում գործառնում են այնպիսի կառուցատիպեր, որոնք հատկանշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարաբերությամբ: Բարբառային նյութի դիտարկումից պարզվում է, որ տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերում առկա համանիշության դրսևորումները զուրկ են միօրինակությունից և անհամասեռ պատկեր են ներկայացնում ոչ միայն ըստ տարածական բնութագրի, այլև բայական միևնույն հարացույցի ներսում⁴:

Բարբառային միավորների՝ անցյալ ժամանակաձևերում առկա համանիշության դրսևորումները պայմանավորված են տարբեր կազմությունների՝ մասնիկակազմ և դերբայակազմ, դերբայական տարաբեր ձևերի, տարբեր հիմքերով բայաձևերի, նույն դերբայի փոփոխականների գործառնմամբ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ կարելի է սահմանագծել բարբառային հետևյալ տարածքները: Բուրդուրի, Ջեյթունի, Հավարիկի բարբառները, Նախիջևանի որոշ խոսվածքներ կազմում են առաջին տարածքը, որտեղ միևնույն ժամանակաձևի իմաստային դրսևորման համար տարբեր կազմություններ են գործածվում: Այսպես՝ Բուրդուրի, Ջեյթունի բարբառներում անցյալ ժամանա-

1. Տե՛ս Ն. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 9:

2. Լեզվաբանության մեջ քերականական համանիշների խմբում միավորվում են ձևաբանական և շարահյուսական մակարդակներում առկա համանիշները: Հոդվածում տերմինը գործածվում է միայն ձևաբանական համանիշների համար:

3. Տե՛ս Ն. Պառնասյան, նշվ. աշխ., էջ 24:

4. Քանի որ լեզվաբանական գրականության մեջ նույնանիշները միավորվում են համանիշների խմբում և կոչվում են բացարձակ համանիշներ (տե՛ս Ն. Պառնասյան, նշվ. աշխ., էջ 24), այդ պատճառով էլ դրանց դրսևորումները կներկայացվեն քերականական համանիշություն անվանմամբ:

կաձների իմաստը արտահայտող կաղապարային կառույցները (*քիցէս իղի//քիցէյի, քիցէս իղի//քիցէյիր, քիցէր իղի//քիցէր, քիցէնք իղի//քիցէյինք, քիցէք իղի//քիցէյիք, քիցէն իղի//քիցէյին*) հակադրվում են *իղի* բառ-մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով⁵: Բուրդուրի բարբառում անցյալ ժամանակաձևերի՝ *իղի* մասնիկով բաղադրված կաղապարային կառույցի գործառությունը Ն. Մկրտչյանը բացատրում է օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերում հոգնակի թվի 1-ին դեմքերի (երկու դեպքում էլ հոգնակի թվի 1-ին դեմքերն ունենում են *ինք* դիմաթվանիշ թեքությոյն) համանունության փաստով⁶: Վերոբերյալ կարծիքին հարկ է հավելել, որ հավանաբար *իղի* մասնիկով կազմությունները արևմտյան տարածքի բարբառային ազդեցությունների և ներթափանցումների հետևանք են (գուցե Հաջընի, Ջեյթունի), իսկ վերջամասնիկագուրկ ձևը կարելի է դիտել որպես Ղարաբաղի բարբառին հատուկ հատկանիշ (բուրդուրցիները Փոքր Ասիա են գաղթել Ղարաբաղից):

Նախիջևանի Տանակերտ և Փառակա գյուղերի ենթախոսվածքներում, Հավարիկի բարբառում անցյալ կատարյալի իմաստն արտահայտվում է պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի զուգահեռ կիրառությամբ, այսինքն՝ այստեղ համանիշությունը դրսևորվում է համադրական և վերլուծական կազմություններով, այսպես՝ *խըմամ, խըմաս, խըմալ ա, խըմաք, խըմաք, խըման//խըմալ ըմ, խըմալ ըս, խըմալ ա, խըմալ ըք, խըմալ ըք, խըմալ ըն* (ՀԲԱՆ, Ագուլիս, 22): Անցյալ կատարյալի պարզ կազմությունը, ըստ Ս. Սարգսյանցի, առաջացել է բաղադրյալ ձևերից լ ձայնորդի անկմամբ՝ *թակալ ըմ>թակամ, թակալ ըս>թակաս, թակալ ըք>թակաք* և այլն⁷: Հ. Աճառյանը թեև չի մերժում հիշյալ մեկնությունը, սակայն չի բացառում մեկ այլ բացատրություն. <<Անտարակույս այս կատարյալը շարունակությունն է հին հայերենի հասի, աշխարհաբար հասա ձևի. առաջին դեմքի վրա ավելացել է մ՝ նմանությամբ սահմանական ներկայի. կարելի չէ՞ ենթադրել, որ նույնը տեղի ունեցած լինի նաև Ագուլիսի բարբառում, բայց այստեղ նմանությունը շարունակվելով՝ երկրորդ դեմքն էլ ստացած լինի ս: Երկու բացատրություններից մինը կամ մյուսը հաստատելու նպաստեր թերևս, եթե իմանայինք, թե ինչ պատճառով պարզ կատարյալի եզակի Գ դեմքը գոյություն չունի, և միայն բաղադրյալ ձևն է, որ գործածվում է նույն դեպքում>>⁸: Կարծում ենք՝ Ս. Սարգսյանցի բացատրությունը հավանական կարելի է համարել անցյալ կատարյալի՝ Ագուլիսի բարբառում գործառող պարզ կազմության համար, որը, լինելով բաղադրյալ ժամանակաձևի հետա-

5. Ն. Մկրտչյան, Բուրդուրի բարբառը, Ե., 1971, էջ 126:

6. Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 119:

7. Տե՛ս Ս. Սարգսյանց, Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883, էջ 116:

8. Համանման կազմություն է նկատել Հ. Աճառյանը Մուշավալի բարբառում. <<Այս միևնույն երևույթը տեղի է ունեցել նաև Մուշավալի բարբառի մեջ, անշուշտ, ազդեցությամբ գերմաներենի: Այս բարբառը կատարյալի ժամանակը (սիրեցի կն) գործածությունից զրկել և նրա տեղ դրել է հարակատարը՝ նույն իմաստով, ինչպես սիրիլ իմ, սիրիլ իս կն>> (Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, մաս Ա, Ե., 1959, էջ 576):

զա զարգացման արդյունք, պատմական գոյացություն է և առկա է միայն Ագուլիսի բարբառում: Գուցե հիշյալ բարբառում վաղակատար դերբայով հարադրությունները արտալեզվական և ներլեզվական գործոնների ազդեցությամբ լեզվի պատմական զարգացման ընթացքում կրել են որոշ փոփոխություններ: Թերևս սրան կարող էր նպաստել այն հանգամանքը, որ Ագուլիսի բարբառը հայերենի բարբառների համատարած շղթայում առանձնանում է ենթադրական եղանակի կազմությամբ: Շեղվելով հայերենի բարբառներին հատուկ զարգացման միտումից՝ Ագուլիսի բարբառը հիշյալ եղանակի իմաստն արտահայտում է ոչ թե եղանականիչ մասնիկով, այլ անորոշ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ: Գուցեն հետագա ժամանակաընթացքում անորոշ դերբայով և ե(ե) լծորդության բայերի վաղակատար դերբայով հարադրված կազմությունների քերականական համանունությունից խուսափելու համար Ագուլիսի բարբառում վաղակատարի –շ վերջնահնչյունի անկմամբ առաջացել է կատարյալի պարզ կազմության մի երկրորդ տարբերակ, որը ծագումնաբանորեն չի կապվում գրաբարյան անցյալ կատարյալի հետ՝ տարբերվելով դրանից եզակի թվի բոլոր դեմքերում: Այս կերպ կարելի է մեկնել Ագուլիսի բարբառում վաղակատար դերբայի՝ Հ. Աճառյանի համար տարակուսանք առաջացնող գործածությունը անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքում⁹՝ այն համարելով որպես անցյալ կատարյալի նախնական ձևի՝ վաղակատար դերբայով բաղադրված կազմության մնացուկային արտահայտություն: Վերոհիշյալ ժամանակաձևը, սակայն, տարածման միտում չի ցուցաբերել և մնացել է մեկուսի՝ կղզիանալով Ագուլիսի տարածքում¹⁰: Հիշյալ վարկածի հավաստիությունը կարելի է հիմնավորել հետևյալ փաստարկներով.

1) Ա. Ղարիբյանը, նշելով Ագուլիսի բարբառում անցյալ կատարյալի կազմության երկու ձև՝ պարզ և բաղադրյալ, գրում է. <<Այս ձևը (իմա՝ պարզ) քիչ գործածական է, ըստ երևույթին նոր է ձեռք բերված: ...Ավելի գործածական է անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը, որ հարազատ է Ագուլիսի բարբառին>>¹¹: Հետագայում նա, անդրադառնալով անցյալ կատարյալի բաղադրյալ կազմություններին, նկատում է. <<....այդ վերլուծական

9. Հ. Աճառյանը դժվարանում է որևէ կապ տեսնել Սուչավայի և անցյալ կատարյալի բաղադրյալ կազմություն ունեցող մյուս բարբառների միջև (Ագուլիս, Մեղրի). <<Որևէ կապ Սուչավայի բարբառի և Ագուլիսի ու Մեղրու բարբառների միջև անհնարին է երևակայել: Ավելորդ է մտածել նաև շրջակա որևէ լեզվի ազդեցության մասին, որովհետև թե՛ թուրքերենի և թե՛ պարսկերենի մեջ կատարյալը այնպես կանոնավոր, պարզ ու մաքուր ձև ունի, որ կարիք չի զգացվել հարակատարի օգնության: Ուստի երևույթը բացատրում եմ այն դժվարությամբ, որի մեջ ընկել են Ագուլիսի և Մեղրու բարբառները, այնքան որ կարիք են զգացել ջնջելու կատարյալի եզակի Գ դեմքը և նրա տեղ դրել են բաղադրյալ ձևը>> (Հ. Աճառյան, նույն տեղում):

10. Տե՛ս Գ. Գևորգյան, Անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությունների գործածական-տարածքային բնութագիրը, Գիտական աշխատություններ: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, պրակ. 4, Ե., 2004, էջ 153:

11. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 248:

ձևերը նույնն են սլավոնական պերֆեկտի հետ....>>, և եզրակացնում, որ դրանք, գալով հնդեվրոպական նախամայր լեզվից, ավելի հին են, քան անցյալ կատարյալի համադրական կազմությունները¹²:

2) Բարբառային նյութի քննությամբ պարզ է դարձել, որ միայն Ագուլիսի բարբառին են բնորոշ անցյալ կատարյալի հետևյալ դրսևորումները՝ անցյալ կատարյալի հարացույցում պարզ և բաղադրյալ կազմությունների գուգահեռ գործածություն, *մ* և *ս* դիմանիշների առկայություն եզակի 1-ին և 2-րդ դեմքերում՝ *խըմամ, խըմաս, խըմալ ա...*, եզակի 3-րդ դեմքում *վաղակատար դերբայ + օժանդակ բայ* կաղապարային կառույցի գործածություն, այսպես՝ *ծակամ, ծակաս, ծակալ ա, ծակաք, ծակաք, ծական*:

Վերոբերյալ փաստարկները, կարծում ենք, հավաստի վկայություն են այն մասին, որ անցյալ կատարյալի՝ Ագուլիսի բարբառում գործառող կազմությունները պատմական գոյացություններ են, որոնք, լեզվական որոշակի գործոնների ազդեցությամբ դուրս մղելով վաղակատար դերբայով հարադրված ժամանակաձևերը, դարձել են այդ տարածքում անցյալ կատարյալի իմաստն արտահայտող դրսևորումներից մեկը:

Հավարիկի բարբառում ևս անցյալ կատարյալը կազմության երկու եղանակ ունի՝ պարզ և բաղադրյալ, սակայն այստեղ բաղադրյալ կազմությամբ անցյալ կատարյալի իմաստը դրսևորվում է հարակատար դերբայով և օժանդակ բայով հարադրված կաղապարային կառույցով՝ *մնացած ըմ, մընացած ըս, մընացած է, մընացած անք, մընացած աք, մընացած ան* (ՀԲԱՆ, Հավարիկ, 40): Նկատենք, որ այս բարբառը վաղակատար դերբայ չունի, և վաղակատար ժամանակաձևերի իմաստներն արտահայտվում են հարակատար դերբայով գուգորդված կազմություններով:

Բարբառային տարբերակների մի մասում հարակատար դերբայով բաղադրված կազմությունները գործառում են վաղակատար ժամանակաձևերի հարացույցներում, որի հետևանքով քերականական համանիշություն է առաջանում հարակատար և վաղակատար դերբայներով հարադրված կառուցատիպերի միջև: Այսպես՝ Մուշի (Միրբար), Մոկսի (Խալենց), Վանի (Խոշաբ, Զենիս, Քոեր), Խուրի (Թաղվու) խոսվածքներում հարակատար դերբայով կազմությունը առկա է շրջուն շարադասությամբ կառույցներում՝ հոգնակի 3-րդ դեմքում, այսպես՝ *ընդօք ա գըրաձ* (Մուշ, Բուլանուխ, Միրբար, 96): Ուղիղ շարադասության դեպքում գործածվում է վաղակատար դերբայի *-եր* վերջամասնիկով դիրքային տարբերակը, այսպես՝ *կըրիի իմ (էր), կըրիի իս (էր), կըրիի ի (էր), կըրիի ինք (էնք), կըրիի իք (էք), կըրիի ին (էն)* (ՀԲԱՆ, Մոկս, Հաղին, 287): Մուշի բարբառի Ալաշկերտ, Սպարկերտ, Վանի բարբառի Շատախ, Բիթլիս, Մոկս, Աղբակ (Հասպատան) խոսվածքներում, Բուն Սասունի, Հաջընի բարբառներում հարակատար դերբայով կազմված հարադրությունները հատուկ են ներգործական սեռի որոշ բայերի. Վերջին-

12. Ա. Ղարիբյան, Հայ բարբառների ծագման հարցի շուրջ, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1958, էջ 259:

ներս գործածվում են վաղակատար դերբայով բաղադրված ժամանակաձևերի հետ միևնույն հարացույցում՝ եզակի և հոգնակի 3-րդ դեմքերում՝ *կըրէր էմ, կըրէր էս, կըրած ա, կըրէր էնք, կըրէր էք, կըրած էն* (ՀԲԱՆ, Գավաշ, Հարպերտ, 290): Հարակատար դերբայով և օժանդակ բայով զուգորդությունները արտահայտում են վաղակատար ժամանակի իմաստային նրբերանգր՝ կատարված, ավարտված, հետևանքային կողմով հատկանշվող գործողություն՝ *կըրած ի* (նշանակում է գրել, վերջացրել են), *տարած ի* (տարել են), օրինակ՝ *Պուլո ախչիկ տարած ի* (Պողոսի աղջկան տարել են, այսինքն՝ նա ամուսնացել է) (ՀԲԱՆ, Շատախ, 17):

Ի տարբերություն վերոնշյալի՝ Արճեշի (Ծայծակ), Սասունի (Իրցանք, Կոմք, Հոսներ) բնակավայրերի խոսվածքներում օժանդակ բայը եզակի և հոգնակի 3-րդ դեմքերում չի գործառում: Հոգնակի 3-րդ դեմքի իմաստը արտահայտվում է հարակատար դերբայով, իսկ եզակի թվի 3-րդ դեմքինը՝ վաղակատար դերբայով հարադրված կառուցատիպերով՝ *մացեր էմ, մացեր էս, մացեր, մացեր ենք, մացեր էք, մացած* (ՀԲԱՆ, Արճեշ, Ծայծակ, 58):

Հաջորդ տարածքը կազմում են բարբառային այն միավորները, որոնցում համանիշություն է առաջանում անցյալ կատարյալի ցոյական և արմատական բայահիմքերը զուգահեռաբար գործառելու հետևանքով: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի ժամանակաձևերը գործառում են երկու հիմքով՝ ցոյական կամ արմատական: Արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի, Վանի, Եդեսիայի, արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի, Ագուլիս-Մեղրիի բարբառախմբերում անցյալ կատարյալի հարացույցում զուգահեռաբար գործածվում են անցյալ կատարյալի ժամանակաձևերը՝ կազմված անցյալ կատարյալի ցոյական կամ արմատական հիմքերի ու դիմաթվանիշ թեքությունների համադրությամբ, այսպես՝ *չափիցի//չափի, չափիցիր//չափիր, չափեց, չափիցինք//չափինք, չափիցիք//չափիք, չափիցին //չափին* (ՀԲԱՆ, Լիզ, Մուշ, 255):

Շատախի խոսվածքում, որը կազմում է վերջին տարածքը, *-իր* ձևությամբ վաղակատար դերբային զուգահեռ գործածվում է նաև երկրորդ տարբերաձևը՝ *ի* վերջնահնչյունով: Վաղակատարի հիշյալ ձևերը գործառական և իմաստային որևէ տարբերակվածություն չեն դրսևորում և հավասարապես կիրառվում են վաղակատար ներկայի և անցյալի՝ ժխտական խոնարհման հարացույցներում՝ *չըմ (չի) խակիր//խակիրի, չըս (չիր) խակիր//խակիրի, չը (չէր) խակիր//խակիրի, չընք (չինք) խակիր//խակիրի, չըք (չիք) խակիր//խակիրի, չըն (չին) խակիր//խակիրի*¹³:

Այսպիսով՝ անցյալ ժամանակաձևերի կառուցատիպերում դրսևորվող քերականական համանիշությունը արտահայտվում է ձևաբանական տարբեր միջոցների՝ մասնիկակազմ և դերբայակազմ կազմությունների, դերբայական

13. Տե՛ս Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 21:

տարածք ձևերի, տարբեր հիմքերով բայաձևերի, նույն դերբայի փոփոխականների գործառնամբ:

Геворкян Гаяне– Проявление грамматической синонимии в армянских диалектах в формах выражающих смысл прошедшего времени – Для региональных версий систем наклонения и времен армянского языка характерна грамматическая синонимика, т.е. применение различных грамматических структур для выражения одного смысла. В них применяются такие морфологические средства, для которых характерны семантическая синонимика и разновидность форм. После изучения материала становится ясно, что проявление грамматической синонимии в формах, выражающих смысл прошедшего времени, обусловлено разными глагольными структурами: с аффиксами и деепричастиями, а так же различными деепричастиями, глаголами с разными основами, использованием различных форм одного и того же деепричастия.

Gevorgyan Gayane – The expression of grammatical synonymy in past tenses in the Armenian dialects – The grammatical synonymy is typical of the mood and tense system of regional variations of the Armenian language, i.e. the reflection of the same grammatical meanings through different grammatical means. Such morphological means, for which the semantic synonymy and a version of forms are characteristic, are applied. The study of the material shows, that the expression of the synonymy in the past tenses is conditioned with the use of different verbal constructions- constructions with affixes and the ones with verbals, the use of different verbal forms, forms of verbs with different stems, the variants of the same verbal.

**ԱՌՈՒ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Առու հասկացության բառանվանումները դիտարկել ենք *տուն* և *տնտեսություն* իմաստային դաշտն արտացոլող բառանունների շարքում՝ հաշվի առնելով **առու** բառի սերտ առնչակցությունը տնտեսության հետ: Մարդու բնակության վայրը սովորաբար հիմնում էին այնտեղ, որտեղ կար ջուր, որն անհրաժեշտ էր կենսական կարիքները հոգալու համար: Ավելի մեծ ջրային տարածքներ չունենալով՝ Հայաստան աշխարհում մարդիկ իրենց բնակավայրերը հիմնում էին գետերի հովիտներում կամ նրանց վտակներին կից և ոռոգման նպատակով օգտագործում էին առուների ջրերը:

Առու հասկացության բառանունները հայերենի բարբառներում աչքի են ընկնում բարբառային տարբերակների բազմազանությամբ: Դրանք են՝ **առու**, **ուրդ արխ**, **կօրի**, **կավառ** և այլն:

Առու: Տարածքային մեծ ընդգրկում ունի **առու** հասկացության համանուն բառանունը՝ չնայած հայերենի բարբառներում որոշակի տարբերակվածությանը, որին կանդրադառանք հընթացս: Հիշյալ բառանունը գրեթե համահայերենյան կիրառություն ունի. գործածվում է և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառախմբերի խոսվածքներում (օրինակ՝ Սասուն, Զեյթուն, Նախիջևան և այլն): Բառը բարբառներում փաստված է նաև շնչեղ ձայնեղ՝ **հառու** (Փերիայի շրջանի գ. Բոլորան, Մարտունու շրջանի գ. Վարդենիկ), առաջնալեզվային **յւ-ով՝ հյւռու** (Վանի Ոստանի շրջանի Քարադաշտ գ.), ինչպես նաև **յւռո** (**հյւռո**^m) երկբարբառային արտասանությամբ (Մոկսի Մամոտանց): Ի դեպ, բարբառագիտական ատլասի ծրագրով Մոկսի խոսվածքը գրանցող բարբառագետ Ա. Հանեյանը փաստել է, որ **առու**-ն լճից եկող առվակն է, **կուրեյ**-ը, այսինքն՝ **կորին**, արտի երկայնքով հոսող առվակն է, **դյւրյւլ**-ը՝ փոքրիկ առվակը: Հաջրնի բարբառում և Նախիջևանի Ագա գ.-ի խոսվածքում բառի կոշտ **ռ**-ն փոխվել է փափուկ **ր**-ի (**արու**), իսկ Սեբաստիայի Կանգալի գավառի Մանջալիկ գ.-ում փաստված է առաջնալեզվային **յւ**-ով և **ր**-ով տարբերակը՝ **յւրու**:

Առու բառը, ըստ Հր. Աճառյանի, հնդեվրոպական արմատ է: Գիտնականը **առու**- 1. գետակ, վտակ, 2. ջրի ճամփա, անցք, փոս, երակ իմաստներն է ներկայացնում՝ հին մատենագրությունից բերելով հետևյալ վկայությունները. <<Առուս աղբանոցաց (Ոսկ. մ.գ.կ), Զառուս տղմոյն ձգել (Ոսկ. յի. բ. 30), Մեծութին թե առուով գայցե (Մաղմ. կա. 11)>>. առաջին երկուսի մեջ **առու** <<**անցք**>> նշանակությամբ է, և թեև հունարենում համապատասխան հատվածն ունի <<**hnutugh**>> իմաստը, բայց հայերենում դարձյալ <<**անցք**>>

նշանակությունն ունի (ՀԱԲ, հ.1, էջ 264): Լեզվաբանական գրականության մեջ վիճարկվում է՝ արդյոք **առու** բառի նախնական նշանակությունը կապված է **հոսելու**, թե **փորելու** և կամ **անցնելու** գաղափարի հետ: Ըստ Հր. Աճառյանի՝ եթե բառը առնչվում է **փորելու**, **անցնելու** գաղափարին, ապա բառը կապ չունի **ռոռոգել** բառի և ոչ էլ հնդեվրոպական ***sru** արմատի հետ, սակայն գիտնականը ավելի հավանական է համարում բառի առնչակցությունը **հոսելու** գաղափարին: Եվ այս պարագայում **առու** բառը ծագմամբ նույնանում է **առոգել**, **ռոռոգել** բառերի հետ: Աճառյանը հայերենից փոխառյալ է համարում նաև վրաց. **րու**, **րուվի** <<ջրանցք>> բառաձևերը, որոնք, ըստ նրա, ներկայացնում են հայերենի հնագույն ձևը՝ առանց նախաձայն ձայնավորի: Գիտնականը արձանագրում է, որ հայերենի նման են հնչում մինգրելերեն **րեկա** <<առու>>, ուտիերեն **ուրեյն** <<առու, ակունք>>, արևելյան թուրքերեն **arya, arav** <<առուակ>>, չադաթ. (հին թուրքերեն) **arık, aruk** <<ջրանցք, փոս>>, այս բոլորը կցվում են պարսկերեն **aryā, aryāb** <<գետակ>> բառերին, և հայերենի հետ նմանությունը պատահական է համարվում: Իսկ Պետերսոնը, սրան հակառակ, վերոհիշյալ ձևերը փոխառյալ է համարում նախահայերեն ***aragu** ձևից (ՀԱԲ, հ. 1, էջ 264-265):

Գ. Ջահուկյանը ևս բառը համարում է հնդեվրոպական արմատ՝ կապելով հետ. **sru-t** արմատի հետ: Նա, ներկայացնելով վաղնջահայերենի բառապաշարի իմաստային խմբերը, ֆիզիկական աշխարհին վերաբերող բնիկ հնդեվրոպական բառերի մեջ առանձնացնում է մի շարք բառախմբեր, որոնցից են հոսող և կանգնած ջրի հետ կապված բառերը՝ **ջուր**, **լիճ**, **լիկ**, **գետ**, **հեղեղ**, **ողող**, **լավ** (հեղեղ), **առու**, **կաւառն** և այլն (ՀԼՊ. ՆԺ, էջ 207):

Առու-ն, բացի բուն իմաստով գործածությունից, բարբառներում ունի նաև դարձվածային բազմաթիվ կիրառություններ: Այսպես՝ **առու բանալ** դարձվածը Եվդոկիայում նշանակում է **գլխի մազերը երկու մասի բաժանել**, **առուին վերի դին սերմ կը ցանե** արտահայտությունը Քեսաբում **անխելք**, **հիմար գործ բռնել** իմաստն ունի, **հազար առուէ հազար ջուր բերել՝ զանազան փաստեր, օրինակներ մեջ բերել** (Հազար առուէ ջուր բերի, չեղավ, չհամոզվեցավ՝ Ակն), **առու թռչել՝ ապօրինի կենակցել** (առավելապես կնոջ մասին, օրինակ՝ Ձի դրկից առու կըթոնա), իսկ Վանում **առուն թռած** դարձվածը **կրոնափոխ եղած**, **թուրքացած** է նշանակում, **առուն թռչել, դենը կանգնել՝ ստացածն ուրանալ** (Ասեցի փոխ տված ցօրենս տու՛ր, **առուն թռավ**, են կօղմը կաննեց), **առուն խեղը մըտնել՝ շատ ամաչել** (Ըմուն պօ մը աստավ, օր **առուս խեղը մըղնա**՝ Համշեն), **այսինչի առուն ջուր կըզա**, այսինքն՝ **այսինչն էլ կբախտավորվի** (Սպասե՛ք ձեր առուն էլ ջուր կուգա՝ (Սասուն):

Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ հայերենի բարբառներում **առու** հասկացության բառանուն է արձանագրված **կօրի** բառաձևը: **Կօրի**-ն արտերում կամ բանջարանոցներում բացված առուն է, որով ջուր են բերում արտը կամ բանջարանոցը ջրելու համար, սակայն բարբառներում այն նաև բանջարանոցներում չորս կողմից ակոսներով կտրված, որևէ բույս ցանելու համար հատկացված փոքրիկ տարածությունն է: Բառը հանդիպում է

Ալաշկերտի Կազի, Ապարանի շրջ. Ծաղկալանջ, Մարտունու Լիճք, Անիի շրջ. Մառնադբյուր գյուղերում: Օրինակ՝ մարտունեցին կասի. <<Հինգ կորի կարտուլ էմ ցանէ>>: Մուշի Հաղոն գ.-ի խոսվածքում փաստված են ն՝ **կորի**-ն, ն՝ **ուրդ**-ը, ն՝ **հառու**-ն, ն՝ **ջրրգրնա**-ն: Ինչպես վերևում արդեն հիշատակեցինք, Մոկսի Մամոտանցում **hüno**^m (լճից եկող առվակ) բառին զուգահեռ գործածվել է **կուրեյ** բառանունը՝ որպես արտի երկայնքով հոսող առվակ: Հ. Աճառյանը **կորի** բառի ծագումնաբանության վարկածներն է վկայակոչում, սակայն ինքը խնդրին վերաբերող որոշակի կարծիք չի հայտնում: Իսկ որ **կորի** բառանունը բարբառներում պահպանվել է իմաստային որոշակի տարբերակվածությամբ, փաստում է նաև նա: Գավառական տարբերակները ներկայացնելիս գիտնականը արձանագրում է, որ **կորի**-ն բարբառներում գործածվում է զանազան նշանակություններով: Այսպես՝ Ալաշկերտի, Բուրանիայի, Երևանի (**գորի**), Նոր Բայազետի, Մուշի (**կոռի**), Ոզմի (**կուրեյ**), Մոկսի (**կուրը**) բարբառային միավորումներում՝ արտի ոռոգման համար բացված նեղ առու, Ղարաբաղում՝ արտը վարելու ժամանակ առաջին անգամ վերևից ներքև քաշած ակոսը, որով արտը երկու մասի են բաժանում, Ակնի, Կարինի, Մաշկերտի, Շիրակի խոսվածքներում՝ արտի ամեն մի ածուն կամ բաժանմունքը, Համշենում (**գորին**, **գորիմ**)՝ երկու արտի սահմանը, միջավայրը կամ արտի մի տեսակ չափը (ՀԱԲ, հ.2, էջ 648):

Գ. Ջահուկյանը երկրագործություն, բուսականություն իմաստային թեմատիկ խմբում վկայում է **կորի** (փոքր ջրանցք արտը ջրելու համար) բառանունը՝ փաստելով նրա աղերսները հայ. **կորի**՝ **առու** հ.-ե. ***geu ðnēl, րեքել** արմատի հետ (ՀԼՊ. ՆԺ, էջ 212): Ըստ հեղինակի՝ հին հայերենը առատ է եղել երկրագործության հետ կապված բնիկ հնդեվրոպական անվանումներով, ինչը փաստում է, որ զարգացած է եղել վաղնջահայերի երկրագործական մշակույթը: Թվարկելով **արտ**, **անդ**, **հարաունք**, **այգի**, **սերմն**, **պտուղ** և երկրագործությանն առնչվող այլ բառեր՝ նա ավելացնում է, որ բացի հնդեվրոպական տերմիններից, վաղնջահայերենում պետք է հանդես եկած լինեին իմաստով մասնավորված և երկրագործական արժեք ստացած այլ բառեր, ինչպես, օրինակ, **կորի**՝ փոքր ջրանցք արտը ոռոգելու համար (ՀԼՊ. ՆԺ, էջ 264): Ինչպես տեսնում ենք, հասարակական-տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ տեղի է ունենում հնդեվրոպական արմատների իմաստային մասնավորեցում, որի ակնառու դրսևորումն է **կորի** բառը. **կորի**՝ արտը ոռոգելու նեղ ջրանցք իմաստից այսօր բառիմաստի նեղացումով բարբառներում ձեռք է բերել այլ իմաստներ՝ **ակոս**, **թումբ** և այլն:

Հուրթ: Հայերենի բարբառներում որպես **առու** հասկացության բառանուն է արձանագրված **հուրթ**-ը, որի ծագումնաբանությունը հստակ չէ: Այսպես՝ ՆՀԲ-ում **ուրդ** կամ **որդ** բառաձևերը լծորդված են **յորդ**-ի և **հորդ**-ի հետ, տրվում է հետևյալ մեկնաբանությունը. <<Առուակ ոռոգանելոյ զպարտեզս, և սահանք նորա. առու փոքր. խողովակ, ջրանցք, աւազան, *Ած՝ գորէն յորձանաց ուխից զարկածս չարութեն ընդ այլ ուրդս արձակել ցանկացեալ>> (ՆՀԲ, հ.2, էջ 560): Աճառյանը ևս ՀԱԲ-ում անդրադառնում է **ուրդ** բառաձևին՝

որպես <<պարտեզները ջրելու համար փոքրիկ առու>>, վկայում է **որդ** բառաձևի առկայությունը ըստ Փիլ. Նիս. Բ. 70 Նիս. Կազ. (Վրք. հց), ինչպես և ըստ ՆՀԲ-ի, նաև՝ ըստ Տերվիշյանի, որը բառի ***ուրդ** նախաձևն է տալիս՝ կցելով այն սանս. **udra**, լտ. **unda**, հալ. **voda** բառերի հետ (ՀԱԲ, 3, էջ 616): Մեծանուն գիտնականը արձանագրում է նաև բառի գավառական տարբերակները. այսպես՝ Ջուղա, Մուշ՝ **ուրդ**, Ալաշկերտ՝ **ուրթ**, Մալմաստ՝ **յուրթ**, Ագուլիս՝ **՛օնդ**:

Գ. Զահուկյանը, <<Հայերենի ստուգաբանական բառարանում>> փաստելով **ուրդ** (**որդ**)՝ <<պարտեզ ջրելու առու, ջրանցք>>, իմաստներով բառը, համարում է, որ բառի ծագումն անհայտ է, և հազիվ թե այն կապ ունենա **յորդ** բառի հետ (***ordh > ուրդ**) (ՀԱԲ, էջ 753):

Ստ. Մալխասյանցը **ուրդ** բառահոդվածում տալիս է հետևյալ բացատրությունը. <<1. Առու, որով ջուրը գնում է պարտեզ՝ արտը ոռոգելու, և նույն առվով հոսող ջուրը, 2. Առվի բերանը պարտեզ մտնելիս>> (ՀԲԲ, հ. 3, էջ 612):

Ինչպես տեսնում ենք բառարանային օրինակներից, բառի սկզբնական նշանակությունը **առու**-ն է եղել, այնուհետև ժամանակի ընթացքում բառիմաստի ճյուղավորմամբ **ուրդ** բառանունը հայերենի բարբառներում ձեռք է բերել **առվի բերան** նշանակությունը: Օրինակ՝ Արարատ գ.-ի խոսվածքում <<**հուրթը** կապի՝, **հուրթը** բա ց, **հուրթը** փակի՝>> արտահայտություններում **հուրթ** ասելով՝ նկատի են ունենում **առվի բերանը**:

Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ **ուրդ** բառանունը արձանագրված է **հուրթ** (Մոկսի Կճավ գ.), **ուրդ** (Մարտունի Թագա գ.), **ուրդ** (Մուշի Հաղոն գ., Խնուսի Գոպալ գ.), **ուրթ** (Մասունի Քոփ գ.), **ուրթ** Նախիջևանի Ագնաբերդ գ.) հնչյունական տարբերակներով: Թալինի շրջանի Մաստարա և Գավառի Սարուխան և Գանձակ գ.-երում առկա է նաև **ուրդ** բառի **ուրց** բարբառային տարբերակը: Հայոց լեզվի բարբառային բառարանում ևս փաստված է հիշյալ բառանունը. <<**Ուրդ**՝ Մուշ, **օրդ**՝ Ագուլիս, 1. Արտի կորիների (առու) բերան, կավառ, որտեղից ջուր է մտնում մարգերի մեջ: 2. Ագուլիս, Մաստարա. Այգու՝ պարտեզի մարգերի բերան>> (ՀԼԲԲ, հ. 2, էջ 320): <<Քննութիւն Ագուլիսի բարբառի>> աշխատության մեջ Հր. Աճառյանը ևս փաստում է **ուրդ**՝ <<**՛օնդ**՝ ջրի ճամբայ>> բառանունը (էջ 383):

Առու հասկացության իմաստով հայերենի բարբառներում գործառող բառաձևերի մեջ մի առանձին խումբ էլ կազմում է **արխ** բառանունը: Ստ. Մալխասյանցը այն համարում է թուրքական փոխառություն՝ **արխ-arg, arg-առու** (ՀԲԲ, հ. 1, էջ 477): Հ. Աճառյանը վկայում է, որ **արխ-ը**՝ որպես առու, հայերենում առաջին անգամ հիշատակված է մի արձանագրության մեջ 996 թ. <<Բերկկայ այգին, որ ջրանցքի **արխի** տակն է. թրք. թթր. **arg** կամ **arg** ջրանցք, առու (ՀԱԲ, հ.1, էջ 317):

Արխ բառանվան գործառության շրջանակն ընդգրկում է գերագանցապես բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքները: Օրինակ՝ Գորիս, Հադրութ, Գանձակ, Դաշ-

քեսանի Բանանց գ., Հավարիկ, Շամախի, Կապան և այլ խոսվածքներում փաստված է **արխ** փոխառյալ բառանունը: Բառը սահմանափակ կիրառություն ունի նաև արևմտյան խմբակցության որոշ բարբառներում: Այսպես՝ Անտիոքի Բեյլանի Սովալուխ և Աթրիս գ.-երում վկայված է **օռդ-մր/ռդ**, Մարաշում՝ **օրդօ**, Եդեսիայում՝ **արրդ/խ**, Եվդոկիայում և Կարինի բարբառի Ջավախքի խոսվածքներում (Փոգա, Աբուլ, Լոմատուրցիս գ.-եր)՝ **հարդ**: Ինչպես տեսնում ենք, **արխ** բառաձևը արձանագրված է տվյալ խոսվածքներին բնորոշ հնչյունական համապատասխանություններով:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի կողմից հավաքված շուրջ 500 խոսվածքային միավորներում **առու** հասկացության բառանուն է դիտարկվել նաև **կավառ** բառաձևը: Վերջինս առկա է Բիթլիսի նահանգի Չխուրի շրջանի Քիսամ գ.-ում, իսկ Էջմիածնի Ամբերդ և Դոդս գ.-երում, որոնք, ի դեպ, բնակեցված են խոյեցիներով, ըստ գրանցողի՝ **առու**-ն մայր առուն է, իսկ **կավառ**-ը՝ այգու (բախչի) առուն: Գավառի Սարուխան գյուղում ևս առկա է **կմվառ** բառանունը՝ որպես առվի ջրի բերանի հողաթումբ:

Հ. Աճառյանը ՀԱԲ-ում տալիս է **կաւառ** բառի <<ջրի նեղ առու>> իմաստը, ինչպես նաև ներկայացնում է ՀՀԲ-ի (Մխիթար աբբայի Բառգիրք Հայկազեան լեզուի) և ՆՀԲ-ի ու ՋԲ (Ջախջախյանի) մեկնաբանությունները, որոնցում բառը բխեցվում է **կաւ** բառից՝ <<**ի կաւոյ** արարեալ>>: Նա պատահական է համարում նաև ճապոներեն **kawa առու** բառի հետ նմանությունը, ինչպես և փաստում է, որ <<առուի ջրաբերանը>> իմաստով **կավառ**-ը առկա է նաև բարբառներում՝ Երևան, Ակն, Արաբկիր, Բաբերդ, Խարբերդ, Կյուրին, Մեքաստիա (ՀԱԲ, հ. 2, էջ 561):

Ըստ Գ. Ջահուկյանի՝ <<գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները երկու տիպի են. 1. Արմատներ, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ, և 2. արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին>>: Այս շարքում գիտնականը նշում է նաև **կաւառ**-ը (**gəu -**)՝ <<նեղ առու, արիս>> իմաստով (Ակն, Արաբկիր, Խարբերդ, Կյուրին), և <<ջրաբերան>> նշանակությամբ (Երևան, Ջեյթուն): Գ. Ջահուկյանը ենթադրաբար հնարավոր է համարում, որ **կաւառ**-ը կապ ունենա հնդեվրոպական ***geu-ծռել, թեքել** արմատի հետ, որտեղից ծագում է **կորի** համիմաստ բառը՝ ***goʳ-noʔ > կաւառն**, այսինքն՝ հեռավոր աղերս է տեսնում **կաւառ** և **կորի** բառերի միջև (ՀԲՆ, էջ 286, ՀՄԲ, էջ 395):

Կաւառ բառանվանը անդրադառնում է նաև Ստ. Մալխասյանցը՝ ներկայացնելով բառի հետևյալ իմաստները. <<1. Նեղ արիս, որով ջուրը կապում են ածուների մեջ, 2. Ջրաբերան, այն կետը, որտեղ ջուրը առվից բաժանվում է և ուղղվում դեպի այգին, արիսի գլուխ, 3. հեզն. բերան. **Կաւառոյ** շատ մեծ մի՛ բանար>> (ՀԲԲ, հ. 2, էջ 416):

Լեզվի ինստիտուտի կազմած ՀԼԲԲ-ում ևս վկայված է **կաւվառ** բառա-
նունը՝ հետևյալ տարբերակներով և իմաստներով՝ <<1. **կաւվառ**՝ Ակն, Արաբ-
կիր, Խարբերդ, Խոտրջուր, **կաւվար**՝ Մալաթիա. Նեղ առու, որով ջուրը
կապում են ածուներին, 2. Արարատյան, Խարբերդ, Զեյթուն՝ Ջրաբերան,
որտեղից ջուրը մտնում է այգու մեջ, ջրի մուտք: (Եվ օրինակ է բերվում Պերճ
Պոռշյանից. <<Վարդիթե՛ր ջան, տա՛ր փարխաջը վիրին **կաւվառիցը** լցրո՛ւ՝ բեր,
որ տղեքը ձեռները լվանան>>), 3. Խարբերդում և Ուրմիայում՝ առվի առջև
շինված թումբ՝ ջուրը կտրելու և այլ հողամաս տանելու համար <<Նա գնաց
հիքին, տեսավ, որ ջրի հերթն իրանց հարևանինն ա, բահով **կաւվառի** տակիցը
հենց բաց արեց, որ ոչ ով չիմացավ>>, Պ.Պ.) (ՀԼԲԲ, հ. Գ, էջ 50): Հ. Աճառյանը
<<Հայերեն գավառական բառարանում>> ներկայացնում է **կաւվառ** բառով
հետևյալ դարձվածները. <<**Կաւառ մը փլցունել**>> (Խարբերդ), այսինքն՝
փորձանք բերել մեկի գլխին, <<**Մեկուն կաւառը վար անել**>> (Ակն)՝ բարևը
կտրել, հետը հարաբերությունները խզել (ՀԳԲ, էջ 561):

Հայ բարբառներում փաստված են նաև **առու** հասկացության՝ սահմա-
նափակ գործածություն ունեցող բառեր: Օրինակ՝ Սասունի Գեղեգուզանում
առու բառին զուգահեռ վկայված է **օվիդ** բառանունը, Խանլարի Գետաշեն գ.-
ում՝ **արխ/առու**-ն, նաև՝ **դաջ**-ը, Մոկսում փաստված է **անո/կուրեյ/դանրսնվ**-ը
(փոքրիկ առվակ), Համշենի Օրդուի խոսվածքում՝ **եղեգ**-ը, Նիկոմեդիայի
Խասկալ գ.՝ **սըրալըխ**-ը, Արաշատի Ազատավան գ.՝ **արաբա**-ն՝ որպես մեծ
առու, Մուշի Հաղզունում՝ **ջրըզընա**-ն, Նախիջևանի Աստապատ գ.-ում՝
հառու//ջրդար-ը, որը, կարծում ենք, **ջրատար** բառի հնչյունափոխված
բարբառային տարբերակն է: Ի դեպ, **ջրատար** բառանվան հնչյունական մեկ
այլ տարբերակ էլ՝ **ջրդար**-ը, առկա է Բայազետի բարբառում, որը փաստված է
Գավառի Սարուխան և Գանձակ գյուղերում: Որոշ բարբառներում վկայված
են նաև ռուսերենից փոխառյալ **կանալ** (Ջավախք), **կանավա** (Համշենի Ճանիկ,
Օրդուի Զիբուխլու գ.-եր, որոնց բնակիչները, ի դեպ, վերաբնակվել են
Աբխազիայում, և, բնականաբար, ռուսերենի հետ շփումներն ավելի սերտ են):

Այսպիսով՝ **առու** հասկացության բառանվանումների բարբառային
քննությունից ակնհայտ է դառնում, որ հայ բարբառները անադարտորեն
պահպանել են հնդեվրոպական **առու**, **կօրի**, **կաւառ** բառանունները, թեև **կօրի**,
կաւառ բառերի դեպքում կան որոշակի իմաստային տեղաշարժեր:
Բառիմաստային փոփոխության է ենթարկվել նաև **ուրդ** բառանունը, իսկ
բարբառների մի հատվածում էլ առկա են փոխառյալ **արխ**, **կանալ**, **կանավա**,
սըրալըխ և այլ բառաձևեր:

Համառոտագրություններ

ՀԱԲ- Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան
ՀԲՆ- Գ.Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն
ՀԲՈՒԲ -Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան
ՀԳԲ- Հ.Աճառեան, Հայերեն գաւառական բառարան

ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան
 ՀԼՊ. ՆԺ- Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան
 ՀՍԲ- Գ.Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան
 ՆՀԲ- Աւետիքեան, Գ., Միրմելեան Խ., Աւգերեան Մ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի:
 գ. – գյուղ, շրջ.-շրջան, ք.-քաղաք

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4. Ե., 1971-1979:
2. Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թ., 1913:
3. Աճառեան Հ., Քննութիւն Ագուլիսի բարբառի, Ե. , 1935:
4. Աճառեան Հ., Քննութիւն Համշենի բարբառի, Ե. , 1947:
5. Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
6. Աւետիքեան Գ., Միրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Ե., 1979-1981:
7. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
8. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, 2001-2012:
9. ՀԲԱ ծրագրով հավաքած նյութեր:
10. Ղազարյան Ռ., Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009:
11. Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1955:
12. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
13. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե. 2010:
14. Սուրիապյան Ա., Գալստյան Ս. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

Хачатрян Асмик – Сопоставительное изучение значений понятия առու (aru) в диалектах армянского языка.– Понятие առու (aru) в диалектах армянского языка отмечено лексемами առու (aru), ուրդ (urd), արխ (arkh), կորի (kori), կաւառ (kavar) и др. В статье представлены зафиксированные в армянских диалектах фонетические модификации упомянутых словоформ, сформированные с ними речевые обороты и устойчивые выражения, а также их территориальная характеристика. В результате диалектологического исследования понятия առու (aru) становится очевидным, что армянский язык в чистом виде сохранил индоевропейские лексемы առու, կորի, կաւառ, хотя в случае со словами կորի и կաւառ произошли некоторые смысловые сдвиги. Семантическим изменениям подверглась и лексема ուրդ (urd), а в некоторых диалектах присутствуют заимствованные словоформы արխ (arkh), կանալ (kanal), կանավա (kanava), սըրաւրխ (səraləkh) и др.

Khachatryan Hasmik - Study of the isoglosses of the concept “stream” in the dialects of Armenian.— The following versions of the concept “stream” have been observed in the dialects of the Armenian language: **(aru)/առու**, **(urd)/ուրդ**, **(arkh)/արխ**, **(kori)/կօրի**, **(kavar)/կաւաւ**, etc. The article describes the phonetic versions of the abovementioned words in the dialects of the Armenian language, the idioms formed with them, as well as the territorial characteristics of these words. A study of the words representing the concept “stream” in the dialects of Armenian reveals that the dialects of Armenian have preserved the following Indo-European words intact – **(aru)/առու**, **(kori)/կօրի**, **(kavar)/կաւաւ**, although there are certain semantic shifts in case of **(kori)/կօրի** and **(kavar)/կաւաւ**. The word **(urd)/ուրդ** has also undergone semantic changes. Several dialects contain the following borrowed forms: **(arkh)/արխ**, **(kanal)/կանալ**, **(kanava)/կանավա**, **(səraləkh)/ սըրալըխ**, etc.

**ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Բարբառի հնչյունական համակարգի ամբողջական բնութագրումը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր հնչյունի հնչյունախոսական ու հնչույթաբանական նկարագրություն, այլ նաև նրա սերման, պատմական ու համաժամանակյա հնչյունափոխական, տարբեր հնչյունադիրքերում հանդես գալու յուրահատկությունների, ձևակազմական ու բառակազմական դրսևորումների ներկայացում¹: Այս առումով հետաքրքրական պատկեր է ներկայացնում Բայազետի բարբառի ձայնավորական համակարգը, որն ընդհանուրիայերենյան ձայնավորներից բացի ընդգրկում է նաև բարբառային մի շարք հնչյուններ: Անդրադառնանք բարբառիս ձայնավոր հնչյուններին առանձին – առանձին:

ա. հետին շարքի ստորին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի **ա**-ից: Ունի դիրքային և տարբերակ, նվազագույն հակադրության մեջ է և հնչույթի հետ /քար-քա՛ր, թափուկ - թափուկ, թալ - թալ/: Համապատասխանում է հինհայերենյան **ա**-ին /բարձր > բ՛անցըր, քար > քա՛ր, վարդ > վա՛ռթ/, երբեմն էլ՝ այլ հնչյունների, ինչպես՝ գովել > գ՛ովալ, դեպի > դըբա, խօսել > խօսալ, շնորհաւոր > շընախավոր, սկեսրայր > կեսրա՛ր, փայծաղն > փա՛ցեղ: Պատմականորեն սղվել է երեք և ավելի վանկ ունեցող բառերի նախաշեշտ վանկում /բաժանել > բ՛աժնել, վաստակել > վաստրկել, չարչարել > չարչըրել, ուրախանալ > ուրխընալ, մկրատել > մըգըղել, միայնակ > միյնակ, դադարել > դ՛աթրել, արիւնաթաթախ > արընթըթախ/, երբեմն էլ սղվել է առաջին վանկում /համար > իըմար, շալակ > շըլակ, լակել > լըկել, ամեն > հըմեն, անցանել > հընցընել/²: Շեշտից գրկվելով՝ բազմավանկ բառերի վերջնավանկի **ա**-ն սովորաբար սղվում է /բ՛ամբակ – բ՛ամբըկե, բ՛արակ – բ՛արկել, գ՛անգատ – գ՛անգըտել, գ՛անգըտվոր, գ՛երեզման – գ՛երեզմըները, երկանք – երկընքի/: Բառավերջի **ա**-ն բառի հոլովման ժամանակ ընկնում է /տըղա – տըղի, տըղից, տըղօվ, գ՛աթա – գ՛աթի, գ՛աթից, գ՛աթօվ/,

1. Տե՛ս նաև Հ.Պետրոսյան, Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմը, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 1986, 2, էջ 53-54:

2. Պատմական մասնավոր փոփոխություններին այստեղ չենք անդրադառնում:

ավելացող հոդից և **ք** հոգնակերտից առաջ դառնում է **է** /տըդէս, տըդէն, գհաթէն, գհաթէքը, գհաթէքով/: Բարբառումն **ա** ձայնավորը լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ է մ հնչյունի հետ, ուստի ունի գործառական սահմանափակություն. հանդես չի գալիս բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ բաղաձայններից /բացի **հ** և **խ** շփականները/, **մ** և **ն** ձայնորդներից հետո³: Այլ դիրքերում **ա** ձայնավորը կիրառության որևէ խոչընդոտ չունի, չնայած նկատելի է, որ բառավերջում սրա դրսևորման դեպքերը համեմատաբար սակավ են: Բառակազմական պլանում **ա**-ն հանդես է գալիս հոդակապի արժեքով /ջոշախան, գեղախրոհիկ, խանքապատառ, ծամապօթիկ/: Ձևակազմական պլանում **ա**-ն դրսևորվում է իբրև օժանդակ բայի ձև /էթում **ա**, նըստում **ա**/, բայական վերջավորություն /տէս**ա**, գըր**ա**՝ <<գրի՛ր>>, գըր**ա** <<գրի>>/, խոնարհիչ /էթալ, մընալ, խասկընալ/, հոլովիչ /Հէրէվն**ա** <<Երևանի>>, Հէրէվն**ան** <<Երևանին>>, Հէրէվն**ա** <<Երևանից>>, թունդըր**ա**, բանակ**ա**/:

Ա. հետին շարքի ստորին բարձրացման շրթնայնացած ձայնավոր է՝ մոտավորապես **ուա** սերտ արտասանությամբ: Ա հնչույթի դիրքային տարբերակն է, որ հանդես է գալիս բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ /բացի **խ** և **հ** շփականները/ բաղաձայններից, **մ** և **ն** ձայնորդներից հետո /մբրանք, մթօռ, մքլօր, պանիր, կատու, շատ, սմբ, մատ, նախիր/: Համապատասխանում է նշված դիրքերի հինհայերենյան **ա**-ին: Այս հնչյունի առկայությունը բարբառային որոշակի տարածքում ենթադրվում է նաև հինհայերենյան շրջանում⁴: Նոր և նորագույն փոխառությունների համապատասխան դիրքերում ևս **ա** հնչյունի դիմաց հանդես է գալիս մ-ն /մդաշ, մդյալ, մգաբ, մդրէս, կմսինգա, կմսաբ, մմլա, մմլադօ, նմդարա, նմսկի, շմնջու, շմրիկ/: Բայերի սկզբի մ-ն դառնում է **ա** ժխտական չ- մասնիկից հետո /մսել – չասել, չասա, մոնել – չառնել, չառավ/, ինչպես նաև **ինչ** բառից հետո՝ սերտ արտասանության դեպքում /ինչ ասում, ինչ առար/:

Ա. առաջնային շարքի ստորին բարձրացման ձայնավոր է, ինքնուրույն հնչույթ է և **ա** հնչույթի հետ կազմում է նվազագույն հակադրական զույգեր, ինչպես՝ քար – քնր <<շահ>>, թաթ <<անհասկացող>> – թնթ /ձեռքի/, լալ <<համբ>> – լնլ <<լալ>>, թառ /հավի/ – թնռ <<մաքուր, սպիտակ>>: Բայագետի բարբառում հանդիպում է հիմնականում նոր փոխառյալ բառերում /թնմբնլ, մգիգ, մմնկ, բէջմբել, գնդն/։ Որոշ դեպքերում հարևան բարբառների ազդեցությամբ ա հնչյուն է ի հայտ եկել նաև ընդհանուրհայերենյան բառաշերտի

3. Բացառություն են կազմում մի քանի ձայնարկություններ, ձայնարկության արժեք ստացած բառեր (**այ**, **ահա**, **այսի**, **այտի**, **այնի**, **այտենց**, **այսենց**, **առռա**, **ախար**, **ա հա հա**, **պա պա պա**, **պահօ**, **պահ**, **տաշ**, **այմառթ**), որոնցում այնուամենայնիվ **ա**-ն հանդես է գալիս իր համար ոչ սովորական դիրքում:

4. Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 163 – 165:

բնիկ և փոխառյալ բառերում, ինչպես՝ գնտիկ, թնթիկ, թննաք, ժանգ, ժանժել, լնց, խնյլի, կիրանկի, հանշկ, հանռէ, հանռու, միյնակ, շիտակ, վըրն, տէքնրկընիկ, փան, փեսան, քանի և այլն: Ընդհանուր առմամբ, այս հնչյունը դիրքային սահմանափակումներ չունի, այն պայմանավորված չէ բարբառիս արտասանական բազայի առանձնահատկությամբ, և նրա դրսևորումը բարբառիս հնչյունական օրինաչափություններից չի բխում: Շեշտից գրկվելով՝ բազմավանկ բառերի վերջնականի ան սովորաբար սղվում է /դանակ - դանակի, ջիգնր - ջիգրի, սիֆտակ - սիֆտըկել, դնրգնի - դնրգընները, դուշման - դուշմընակ, գնվգնկ - գնվգըկել/, բայց որոշ դեպքերում էլ պահպանվում է /բնգըրգն - բնգըրգնի, թննաք - թննաքի, դոշնր - դոշնրով, լնչնո - լնչնոություն, խննաք - խննաքվնրի/: Բառավերջի ան, **ա** ձայնավորի պես, բառի հոլովման ժամանակ ընկնում է /կըսն > կըսի, կըսից, կըսով, թուլն > թուլի, թուլից/, ավելացող հոդից և **ք** հոգնակերտից առաջ դառնում է **է** /գնյլն - գնյլետ, գնդն - գնդէք/:

Է. առաջնային շարքի միջին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի **է** ձայնավորից: Շեշտակիր վանկում նվազագույն հակադրական գույգեր է կազմում երկբարբառային **ե** հնչյունի հետ, ինչպես՝ մեր <<մայր>> - մեր, աներ /**անել** բայի խոնարհված ձև/ - աներ <<կնոջ հայրը>>, կեր <<կար>> - կեր <<անասնակեր>>, գըրեր /ըղձ. ապառնի/ - գըրեր ա /վաղակատար/: Համապատասխանում է հինհայերենյան **է** երկբարբառակերպին /կես > կես, մեջ > մեջ, աղուես > մղվեզ, տեր > տեր, էգ > էք, գրեր > գըրեր/, որոշակի դիրքերում՝ գրաբարյան **ե** գրով արտահայտվող հնչյունին /երթալ > էթալ, երկու > էրկու, երագ > էրագ, եփել > էփել, բերան > բէրան, գերան > գէրան, գերի > գէրի, բարեկամ /> բարեկամ/, **այ** երկբարբառին /գայլ > գէլ, ձայն > ճէն, կայծակն > կեծակ, այս > էս, փայտ > փեդ, լայն > լէն/⁵:

Սակավ դեպքերում պատմականորեն դարձել է **ի** /երեք > իրեք, երեկոյ > հիբկուն, երես > հիբես, սկեսուր > կիսուր, փեսուր > փիդուր, լեզու > լիզու, հրեշտակ > խըրիշտակ/: Շեշտից գրկվելով՝ **է**-ն սովորաբար դառնում է **ի** /գէլ - գիլվանք, ծեր - ծիրի, էշ - իշի, կես - կիսատ, ջեր - ջիբի/, երբեմն սղվում է /գօմէշ - գօմշի, մեջ - մըշի, մղվեզ - մղվըզի, հըմեն - հըմընով, հէրկեն - հէրկընալ, անջեր - անթնտես, հանռէ - հանռի/, այլ դեպքերում որևէ փոփոխության չի ենթարկվում /հէրեկ - հէրեկվա, բէտ - բէտընալ, բըփոեճ - բըփոեճի, ժակեր -

5. Ավելի հանգամանորեն տե՛ս Վ. Կատվայան, Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Ե., 2006, էջ 101:

ժակեթով, ջրրեզ - ջրրեզի, հավես - հավեսով/: Բայազետի բարբառում **է** ձայնավորը հանդես է գալիս ն՝ բառասկզբում /էշ, էրկու, էթալ, էրեցել, էտի, էկա/, ն՝ բառամիջում /Հ՞երեվան, լենքեն, կեսք՞երան, կըլետկա, կուզէկուզ, կօղբես/, ն՝ բառավերջում /օրէ, փէդէ, կըդէ, կըլէ, կըճէ, կուռէ, ճէլէ, մէ, մէրէ/: Որևէ դիրքում չի հանդիպում **ռ, ղ, խ** բաղաձայններից առաջ՝ այդպիսով **ե** երկբարբառի հետ գտնվելով նաև լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Բառակազմական պլանում հանդես է գալիս իբրև արմատ՝ **է՛** /ձայնարկ./, ածանց /երկըթէ, վոսկէ, բ՞րոթէ, բ՛ամբըկէ, փէդէ/, կրկնավոր բարդությունների ձևավորման միջոց /բ՞երնէք՞երան, հ՞իբկընէհ՞իբկուն, ճ՞եռնէճ՞եռ, դ՞ըռնէդ՞ուռ/, հասարակ ու հատուկ անձնանունների հուզաարտահայտչական իմաստի ձևավորման միջոց /մէրէ, խէրէ, նմնէ, պմպէ, Սօնէ, ճըկըթէ, գըսկէ, զընգըլէ, Կօլէ, Վըլէ, ցընէ/: Ձևակազմական պլանում դառնում է բացառական հոլովի իմաստի ցուցիչ /տընէ, մօրէ, հ՞առավտընէ, խօրէ, քեզնէ/:

Ե. առաջնային շարքի միջին բարձրացման երկբարբառային արտասանությամբ ձայնավոր է: Շեշտակիի վանկում նվազագույն հակադրական զույգեր է կազմում **է** պարզ ձայնավորի հետ, միաժամանակ **է**-ի հետ գտնվում է լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ ինչպես շեշտակիի, այնպես էլ անշեշտ վանկերում⁶: Համապատասխանում է հինհայերենյան շեշտակիի վանկի՝ **ե** տառով արտահայտված հնչյունին /աշակերտ > ամշակետո, աւել > հ՞ավել, գետ > գ՞ետ, գիշեր > գ՞ըշեր, դեղ > դ՞եղ, ընկեր > հ՞ընգեր, ծեփ, ծեր, կճեպ > կըճեփ, ձմեռն > ճ՞ըմեռ/, ոչ շեշտակիի վանկի՝ **ղ, խ, ռ** հնչյուններից առաջ **ե** տառով արտահայտված հնչյունին /սեղան, լեղի, խեղդել > խեխտել, հեռանալ > յեռվընալ/, սակավ դեպքերում՝ **եա** երկբարբառին /լեառն > լեռ, ցորեան > ցորեն, բարեաւ > բ՛արեվ, սեաւ > սեվ, մեռեալ - մեռել/, **իւ** երկբարբառին /իւղ > յեղ, գիւղ > գ՞եղ, միւռոն > մեռոն/, շեշտակիի վանկի՝ բաղաձայնական խմբից առաջ հայտնված **է**-ին /անէծք > անեսկ, օրէնք > օրենք, վերք > վերք/: Պատմականորեն վերածվել է **յե** կապակցության միավանկ բառերի սկզբում /երգ > յերք, եզն > յեզ, ել > յել, երբ > յեփ/, բազմավանկ բառերի սկզբում՝ **ղ, ռ** բաղաձայններից առաջ /եղիճ > յեղըռճիկ, եղունգն > յեղունգ, եռալ > յեռալ, երեսուն > յեսուն/: Սակավ դեպքերում այն ընկել է /երեսուն > յեսուն, թեթել > թեթըվ, թիթեռնիկ > թիթըռնեկ/: Շեշտից զրկվելով՝ հաճախ սղվում է /հ՞ավել - հ՞ավըլնալ, ճ՞ըմեռ - ճ՞ըմըռվա, ցօրեն - ցօրնի, հ՞իբես - հ՞իբսով, կըշեռք - կըշըռքի, շեռ - շըռել, գ՞ըլխըվեր - գ՞ըլխըվըրել, ցեռ - ցըռան/, այլ դեպքերում պահպանվում է /գ՞ըշեր - գ՞ըշերվա, հ՞ընգեր - հ՞ընգերտանք, ամեր - ամերանք, վիրել - վիրեվնալ,

6. Տե՛ս նշվ. աշխ., էջ 43-49:

օրենք - օրենքով, իրեք - իրեքսմկ/։ Շեշտագրկված **ե**-ն հաճախ դառնում է **է** /ծեփ - ծեփել, ծեփոն, խելք - խելօք, կե՛ր - կերա, խերկ - խերկել, ներկ - ներկել/, հաճախ էլ չի փոփոխվում /ցեց - ցեցօտել, սեվ - սեվնալ, թել - թելել, ծեր - ծերանալ, թեք - թեքել, շենք - շենքել, ցեփ - ցեփավոր/։ Բարբառումս **ե** հնչյունը հանդես է գալիս շեշտակիր փակ վանկում /բացառությամբ **շ, ժ, ջ, ճ** հնչյուններին նախորդող դիրքը, որտեղ միշտ ունենք **է**, անշեշտ դիրքերում հանդես է գալիս **դ, խ, ռ** հնչյուններից առաջ։ Անշեշտ դիրքում հանդիպում է նաև բառաբարդման կամ ածանցման արդյունքում շեշտագրկման հետևանքով չհնչյունափոխվելու դեպքում։ Բառավերջում հանդիպում է որոշ կրճատ ձևերում՝ սակավ բայերի եզակի հրամայականում /բե՛ն <<բե՛ր>>, կե՛ <<կե՛ր>>, տե՛ <<տե՛ս>>/, առանձին դերանունների ուղիղ կամ թեք հոլովներում /ըստե <<այստեղ>>, ըտե <<այդտեղ>>, ընդե <<այնտեղ>>, քե <<քեզ>>, մե <<մեզ>>, ձե՛ն <<ձեզ>>/, վաղակատար դերբայի ձևերում /գ՛րբե – գ՛րբեր ա, նըստե – նըստեր ա/։ Բառասկզբում հանդես չի գալիս, եթե հաշվի չառնենք օժանդակ բայի **եմ, ես, ենք, են** ձևերը, որոնք միշտ նախորդ բառի հետ սերտ արտասանություն ունեն /էթում եմ/։ Երբեք հանդես չի գալիս բառասկզբի **հ**՝ հնչյունից հետո։ Ձևակազմական պլանում հանդես է գալիս իբրև խոնարհիչ /ուտել, թըռնել, ըսկըսվել, նեխարոտել/։

օ. հետին շարքի միջին բարձրացման շրթնային ձայնավոր է, լրացուցիչ բաշխման մեջ է **ռ** երկբարբառային հնչյունի հետ, սակավ դեպքերում այդ հնչյունի հետ կազմում է նվազագույն հակադրական զույգեր. թօռ <<ցանց>> - թոռ <<թոռ>>, խօր /հայր բառի սեռ./ - խոր <<հոր>>, դօր <<հերթ>> - դոր <<ուր>>։ Համապատասխանում է **աւ** երկբարբառից առաջացած հինհայերենյան **օ** հնչյունին /օր, օց <<օձ>>, օղ, օքուղ <<օգուտ>>, մքօտ <<արօտ>>, կմքօտ <<կարօտ>>, ծմնօթ <<ծանօթ>>, խօսալ <<խօսել>>, մդօտկ <<աղօթք>>, գօրք, ճօճ/, անշեշտ վանկի **ռ** տառով արտահայտված հնչյունին /ցօրեն <<ցորեան>>, կօճակ <<կոճակ>>, օղորմի <<ողորմի>>, օխճար <<ոչխար>>, մօթթել <<մորթել>>, օրօտում <<որոտումն>>, օշիլ <<ոջիլ>>/, վ-ից առաջ գրվող **ռ**-ին /կօվ <<կով>>, սօվոր <<սովոր>>, ժօղօվ <<ժողով>>, սօվ <<սով>>/, ենթակայական դերբայի վերջավորության ձայնավորին /գ՛րթօղ <<գրող>>, գ՛ացօղ <<գնացող>>/, որոշ դեպքերում՝ շեշտակիր վանկի **ռ**-ին /մխօռ <<ախորո>, մթօռ <<աթոռ>>, մքլօր <<աքլոր>>, ջ՛օկ <<ջոկ>>/։ Սակավ բառերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ դառնալով երկբարբառային **ռ** /առաւօտ > հառավոտ, պաշտօն > պմշտոն, օրօր > օրոր/ կամ **ռւ** /մօրուք > մուրուս, յօնք > հունք, թոնիր > թունդիր, կորնչել > կուրել⁷։ Շեշտից գրկվելով ևս սակավ է հնչյունափոխվում /գ՛ըլօխ - գ՛ըլխի, գ՛ըլխանց, ժօղօվ - ժօղվել, կօղօվ - կօղվի, մըռթօշ - մըռթըշվորել/։ Բարբառումս **օ** հնչյունը դիրքային

7. Վերջին երկու բառերում, կարծում ենք, **ռ** տառով արտահայտվել է պարզ **օ** ձայնավոր։

սահմանափակում չունի /օթ, օթաղ, բօջակ, գօտիկ, համօգել, կօլօտ, հաջօղ, պօլ, կօն, ջնջօ, Մուրօ/: Բառակազմական պլանում դառնում է հասարակ ու հատուկ անձնանունների կրճատ ձևի կամ հուզաարտահայտչական իմաստի ձևավորման միջոց /ցրնօ, գրնջօ, գրոխօ, քրոչօ, յեգօ, Մըռոտօ, Հօվօ, Գուգօ, Նունօ, Նըվօ/: Ձևակազմական պլանում հանդես է գալիս իբրև **օ** ներքին հոլովման ցուցիչ /խեր - խօր, մեր - մօր, միսպեր - միսպօր/:

ո. հետին շարքի միջին բարձրացման շրթնային ձայնավոր է՝ երկբարբառային արտասանությամբ: Հնչմամբ նույնանում է **ա** ձայնավորի հետ և արտասանվում է իբրև **ուա**: Լրացուցիչ բաշխման հարաբերությունների մեջ է **օ** և **ա** ձայնավորների հետ, սակավ դեպքերում նվազագույն հակադրական զույգեր է կազմում **օ-ի** հետ՝ հանդես գալով իբրև առանձին հնչույթ: Համապատասխանում է հինհայերենյան շեշտակիր վանկի **ո** գրով արտահայտվող հնչյունին /բոլոր > բօլոր, բոց > բոց, գորտ > գոռտ, գործ > գոռծ, դող > դող, խմոր > խըմոր, կոտոշ > կօտոշ, խնձոր < խընձոր, փոս, փոր/: Միավանկ բառերի սկզբում ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ վերածվելով **վո** կապակցության /որ > վոր, որդ > վորթ, ոխ > վոխ, որձ > վորց, ոտն > վոտ, որբ > վորբ/, նման փոփոխություն կատարվել է նաև երկվանկ ոսկի > վոսկի, որդի > վորթի բառերում: Շեշտից զրկվելով՝ **ո**-ն երբեմն սղվում է /կօլոն - կօլնել, կօտոշ - կօտըշխըրել, բօլոր - բօլըրել, հառավոտ - հառավտընէ, բօրփոս - բօրփըսնել, ծամոն - ծամնի, մօլոր - մօլըրել, օլոր - օլըրել, օսկոռ - օսկըռխընել, սմպոն - սմբնի/, հաճախ էլ բայակազմության ժամանակ դառնում է **օ** /զըլոր - զըլօրել, գոդ-գօդնալ, դոդ-դօդալ, թեփոտ-թեփօտել, քորքօրել, տըլոտ- տըլօտել, գոռծ- գօռծել, թոդ- թօդել/: Այլ դեպքերում **ո** հնչյունը որևէ փոփոխության չի ենթարկվում /խըմոր - խըմորագունդ, խընձոր - խընձորներ, գոռծ - գոռծի, գոռտ - գոռտալող, վորթ - վորթընել, վոտ - վոտբօպիկ, բոց - բոցել, կըտոր - կըտորտանք, դիլխոր - դիլխորնալ/: Բայագետի բարբառում **ո** հնչյունը բառասկզբում և բառավերջում չի հանդիպում: Հանդես է գալիս շեշտակիր վանկում /փոր, դոր, կող, մոմ, կըլոր, խոց, քրոչոտ, կօտոշ/: Անշեշտ վանկերում հանդիպում է, եթե շեշտազրկման հետևանքով հնչյունափոխության չի ենթարկվում /դիլխորնալ, կըտորտանք, վորդնաման, զըլորզընդի, գոդեգոդ, կօտոշավոր, փոցիսել/: Գործառական նման բաշխումը որպես կանոն բացառում է **ա** հնչույթի շրթնային տարբերակի հետ նույն դիրքում հայտնվելու և իմաստային շփոթ առաջ բերելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, միավանկ մի քանի բառերի դեպքում առաջ է գալիս նույնահունչ համանունություն. շոր <<հագուստ>> - շմր <<շաբլը>>, մոմ - մամ <<մայրիկ>>, կոթ <<բահի կոթ>> - կմթ <<կաթ>>: Մի շարք դեպքերում էլ **օ-ո** հակադրությունն ուղեկցվում է նախորդող բաղաձայնների ձայնեղություն

– շնչեղ ձայնեղություն հակադրությամբ. դճող /դոդալը/ – դօղ <<անվադող>>, բճոզ <<անբարոյական>> – բօզ /գույն է/, գճոլ /ոչ շատ տաք/ – գօլ <<լիճ>>: Նկատելի է նաև, որ **ո** հնչյունի փոխարեն **օ** արտասանությունը իմաստային շփոթ չի առաջացնում, այլ թողնում է գրական արտասանության տպավորություն, մինչդեռ **օ**-ի փոխարեն **ո** արտասանությունը աղճատում է իմաստը: Ձևակազմական պլանում հանդես է գալիս իբրև հոլովիչ **քուր** բառի դեպքում՝ սեռ. քրվոր, բաց. քրվորից:

Ի. առաջնային շարքի վերին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի **ի** հնչյունից: Համապատասխանում է հինհայերենյան **ի** ձայնավորին /հօինքը <<ինքն>>, ինչ, իմ, հօմնալ <<իմանալ>>, գին, խին <<հին>>, խիվանդ <<հիւանդ>>, բ՛մժինք <<բաժինք>>, գանշելի <<գարշելի>>, գերընդի <<գերանդի>>, գերի <<գերի>>, գինի, թունդիր <<թոնիր>>/: Սակավ դեպքերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության /**ի** > **ե** – անդրանիկ – անդրանեկ, ջիղ – ճեղ, դրակից – դճրկեց, թիթենիկ – թիթըռնեկ, ծիրտ – ծերտ, կոտիմն – կօտեմ, **ի** > **է** – գիժ – գէժ, մի – մէ, **ի** > **ա** կամ՝ **ւ** – դէպի – դըբա, եղի – յեղա, սպի – սըբւ, **ի** > **զոռ** – ճիպո – ճըբուռ, շիճուկ – շըտուկ, պիտի – պըտի, գիշեր – գըշեր, գլխիվայր – գըլխըվեր, ճիպոտ – ճըպոթ, ծիծաղ – ծըճաղ/: Շեշտազրկված **ի**-ն ընկնում է, և դիրքով պայմանավորված՝ նրա փոխարեն կարող է հնչել կամ չհնչել **ը** /ինը – ընոց, ինչ – հօրնչի, գիր – գըրել, միտկ – մըտկել, քըռտինք – քըռտընքի, էրինջ – էըրնջի, լիտըր – լըտըրանոց, խըլինք – խըլընքոտ, գըրիչ – գըրչօվ, մմիս – մմսըվա, հօառիք – հօառքի, բօպիկ – բօպկընալ, գէտին – գէդնախընոր, դէդին – դէդնել, կըռիվ – կըռվել, օշիլ – օշլոտ/: Սակավ դեպքերում շեշտազրկված **ի**-ն չի հնչյունափոխվում /խըմիշկ – խըմիշկներ, խավիժ – խավիժի, թիթիզ – թիթիզնալ, ժարիթ – ժարիթի, խօպանիստ – խօպանիստներ, հմրիֆ – հմրիֆցընել, քերիկ – քերիկի, քըծիբ – քըծիբություն, քըսիկ – քըսիկի/: Բազմավանկ բառերի վերջի **ի**-ն հոլովվելիս սեռականում հերթագայվում է **ու** հոլովիչով /գինի – գինու, քամի – քամու, գարի – գարու/, բացառականում և գործիականում սղվում է /գինուց, գինօվ, քամուց, քամօվ, գարուց, գարօվ/, բառաբարդման ու ածանցման ժամանակ ընկնում է /քամի – քամապընչուկ, խընամի – խընամակմնչ, խընամ ոնք, խօքի – մէ խօքավ որ, թըշնամի – թըշնամություն, փօշի – փօշոտ, գէրի – գէրություն, լեղի – լեղաճմք, մնօթի – մնօթնալ, վոսկի – վոսկէ, գընջի – գընջոտ, գօջի – գօջանոց, կմրնչի – կմրնչություն/: Միավանկ բառերի վերջի **ի** ձայնավորը որևէ փոփոխության չի ենթարկվում /ճի < ճիյավոր, թի < թիյակ/: Բարբառումս **ի** հնչյունը դիրքային սահմանափակում չունի /իմալ, իսան, տիգնակըլօնձ, թունդիր, ժեխթափիկ, գէրընդի, գարի/: Բառակազ-

մական պլանում **ի**-ն դրսևորվում է իբրև ձայնարկություն /ի՛/, սակավ բառերում հանդես է գալիս իբրև ածանց /մլնի, ճճրի, նեղի, խօսկի, լենի, կմնանչի/: Ձևակազմական պլանում **ի**-ն դրսևորվում է իբրև օժանդակ բայի ձև (էթում **ի** /էի/, նըստում **ի** /էի/), բայական վերջավորություն /գճրի <<գրեցի>>, նըստի՛ <<նստի՛ր>>/, հոլովիչ /գճեղի <<գյուղի>>, մըտկի <<մտի>>/:

ու. հետին շարքի վերին բարձրացման շրթնային ձայնավոր է: Արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի ու ձայնավորից: Համապատասխանում է հինհայերենյան ու-ին /ուր, ուտել, տուն, հճառու <<առու>>, էրմունգ <<արմունկ>>, բճագուկ, դճու <<դուրս>>, թըթու, թուխտ <<թուղթ>>/, ոյ երկբարբառին /բճուն < բոյն, լուս < լոյս, բճուն < բոյն, քուր < քոյր, պմդրուք < պատրոյգ/, բառավերջի ոյ կապակցությանը /կու < կոյ, մմօթու < ամօթոյ, հիբկուն < երեկոյ, գճրելու < գրելոյ/, իւ երկբարբառին /մլուր < ալիւր, հճախպուր < աղբիւր, գճողութուն < գողութիւն, դճուրել < դիւրել, խուս < խիւս, հուսիս < հիւսիս, ճճուր < ձիւր, ճճուն < ձիւն, ճուղ < ճիւղ, շուղ < շիւղ/: Բարբառումս ու-ն սակավ դեպքերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության. սղվել է բայի պատճառական ածանցում (իջուցանել - հիչըցընել), խոնարհիչի դերում փոխարինվել է ե-ով /առնուլ > մռնել, թողուլ > թօղել/. դարձել է օ /գլուխ > գճլօխ, ուղարկել > հճողըրկել, ուղղորդ > ողղորթ/. ընկել է /ուղարկել > դըրկել, հճըղըրկել, ուղեղ > հճըղեղ, քուրջ > քըռջ/: Գավառի խոսվածքում բաղիյուսական բարդություններում ու-ն փոխարինվել է ը ձայնավորով /դճուրդճուս, լենըթօլ, դճարըճաշտ, տունըտեղ/: Շեշտագրկված ու-ն ընկնում է, և դիրքով պայմանավորված՝ նրա փոխարեն կարող է հնչել կամ չհնչել ը /ջճուր - ջճըրվոր, հճառավտուն - հճառավտընէ, բճուք - բճքէլ, դճթում - դճթմի, կմկուղ - կմգդել, կմկըղել, ճճմէրուկ - ճճմէրկի, փըշուր - փըռշել, քառսունք - քառսընքան/: Այլ դեպքերում շեշտագրկված ու-ն չի հնչյունափոխվում /մբրուստով <<ապրուստով>>, թըթուռի <<թըթուրի>>, խանութի, կունգուխի <<կնգուղի>>, մուրուսով <<մորուքով>>, հճուսումի <<ուսման>>/: Միավանկ և երկվանկ բառերի վերջի ու-ն ձայնավորից առաջ դառնում է վ (ճճու - ճճվի, թըթու - թըթվել, յեռու - յեռվընալ, հճառու - հճավի, լիգու - լիգվանի), բազմավանկ բառերի դեպքում նման փոփոխություն տեղի չի ունենում (ճըրաքու - ճըրաքույ, դճասատու - դճասատույ): Բարբառումս ու հնչյունը հանդես է գալիս և՛ բառակցում (ուրախ, ուտել), և՛ բառամիջում (սուր, մըմուռ), և՛ բառավերջում (մըռու, մըշու): Բառակազմական պլանում ու-ն հանդես է գալիս իբրև արմատ՝ ու /շաղկապը/, ածանց /գճլխու, մմօթու, հախու/: Ձևակազմական պլանում ու-ն հանդես է գալիս իբրև հոլովիչ (գճարի -

գարու, թըշնամի – թըշնամու), խոնարհիչ (նըստըցում <<նստեցնեմ>>, խասկը-
ցուս <<հասկացնեմ>>), բայական վերջավորություն (մօտկըցո՛ւ):

ը. միջին շարքի միջին բարձրացման ձայնավոր է, արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենի ը ձայնավորից: Համապատասխանում է հինհայերենյան ինչպես գաղտնավանկի, այնպես էլ գրության մեջ արտահայտված ը-ին (գ՛ըլօխ < գլուխ, թըփըռտալ < թպրտալ, հ՛ընգեր < ընկեր, հ՛ընդըրել < ընտրել, լիտըր < լիտր, ըսկըսել < սկսանել, ըսպանել > սպանանել, ըստեռճ < ստերջ, տեքըր < տեգր), պատմական կամ շեշտափոխական հնչյունափոխության ենթարկված այլ ձայնավորների (կմրկըրտան < կարկատան, խըմար < համար, հ՛ընցընել < անցանել, հ՛ըմեն < ամեն, գ՛անգըտել – գ՛անգատ, սիֆտըկել – սիֆտանկ, հ՛երկըմալ – հ՛երկեն, մըչի – մեչ, թեթըվ < թեթել, թիթըռնել < թիթռոնիկ, հ՛ավըլնալ – հ՛ավել, մըթըշվորել – մըթօշ, բ՛օլոր – բ՛օլըրել, պըտի < պիտի, ծըձաղ < ծիձաղ, ըմոց < ինը, մըտկել – միտկ, հ՛ըդեղ < ուդեղ, քըռչ < քուրջ, քառսընքան – քառսունք, մըթըվեր – մութ): Սակավ բառերում ենթարկվել է պատմական հնչյունափոխության՝ փոխարինվելով այլ ձայնավորով (շիվար < շուար, կուկու < կկու, կունգուխ < կնգուղ, հ՛իստըկել < յստակել): Բառի աճման հետևանքով գաղտնավանկի ը-ի անկում սովորաբար տեղի չի ունենում (մստըղօվ – մստըղ, մմնդըրաբ՛անիկ – մմնդըր, պօվըրական – պօվըր, սմլըխօվ – սմլըխ, քախծըրություն – քախ-
ծըր, բ՛անցըրություն – բ՛անցըր), բայց հանդիպում են և ը-ի անկման դեպքեր (խաթրաշմիխ – խաթըր, փոցխել – փոցըղ): Բարբառումս ը հնչյուն առավել հաճախ հանդիպում է բառամիջում, երբ բաղաձայնական կուտակումները չեն կարող արտասանվել առանց ձայնավորական հենարանի (կըրրոնգ, բ՛ըլօջ, գ՛ըղգըղալ, գ՛ըմփիկ, գ՛ըռեխ, ծմնդըր, ծըմըրկըտալ, քըլուփըստ, գ՛ըրել, սըթից, հ՛ավըլնալ): Այլ դեպքերում ը-ի առկայությունը պայմանավորված է ոչ թե արտաբերական պահանջով, այլ բառի ձևավորման և իմաստա-
րտահայտման պահանջով (բալըշ, չըփըցընել, տըլըբալ, ճըլըթալ, զաբընել, մըթըվեր, չարընալ, գըռըթըփ, հ՛առչըկըտուր, տմխտըկել, տըրըփալ, կըրըփոց, էրկուտըկել): Կան դեպքեր էլ, երբ բարբառային խոսքում բառամիջյան ը-ն կարող է և չարտասանվել, բայց նման արտասանությունը կունենա գրական երանգ (գ՛ըռտընակ – գ՛ըռտնակ, գ՛ոռտընուկ – գ՛ոռտնուկ, պմոզըկա – պմոզկա, կօպըտել – կօպտել, շուստըրի – շուստրի, կըտըցել – կըտցել): Բառասկզբում ը-ն սակավ բառերում /այն էլ՝ բաղաձայնական խմբից առաջ/ է հանդես գալիս (ըխտիբար, ընձի, ըստե, ըսկի, ըսկըթօ, ըշպիյօն, ըտե), բառավերջում ևս քիչ է հանդիպում իբրև բառամաս (խառը, դուզը, լիքը, լը, հ՛ըլը, հ՛իներ, բը, դը, դ՛մոը): Սակայն բառավերջում ը-ի գործառույթը ընդ-
լայնվում է իբրև հոդ հանդես գալու շնորհիվ: Ը-ն կարող է լինել մի շարք միա-

վանկ ու բազմավանկ բառերի միակ ձայնավորը (բըռ, բըսկ, դընգ, դըրբ, ծըպկ, ձըքս, մըզմըզ, մըղըրըր, նըֆս, շըխկ, շըրըխկ, չըռ, որթըրբ, սըռ, տընգըվըզ, փըռչ, քըլք, քըռթ): Բառակազմական պլանում ը-ն հանդես է գալիս իբրև ձայնարկություն՝ ը: Ձևակազմական պլանում ը- ն գործառում է իբրև որոշիչ հոդ:

Այսպիսով՝ Բայազետի բարբառում գործառում են ձայնավոր 10 հնչյուններ՝ ա, ւ, ւ, է, ե, օ, ո, ի, ու, ը: Սրանցից իբրև հնչույթ հանդես չի գալիս միայն ւ ձայնավորը՝ լինելով ա-ի դիրքային տարբերակ: Ընդհանուր-հայերենյան ա, է, ի, ու, օ, ը ձայնավորները սերում են հինհայերենյան համապատասխան ձայնավորներից, հաճախ էլ դրսևորվում են ընդհանուր և մասնավոր հնչյունափոխությունների հետևանքով: Ե, ո երկբարբառային ձայնավորները դեռևս հինհայերենյան շրջանում որոշակի տարածքում և որոշակի դիրքում առաջ եկած իրողություններ են ներկայացնում, իսկ ւ հնչյունը բարբառիս բնորոշ դիրքային պայմանավորվածությամբ հնչյուն է: Միայն ւ հնչյունն է, որ բարբառ է ներթափանցել այլ լեզուներից ու բարբառներից: Հնչյունափոխության քիչ է ենթարկվում ը-ն, գրեթե չի ենթարկվում ւ-ն: Բառակազմական գործառույթ չեն ունենում ւ, ւ, է, ո հնչյունները: Ձևակազմական գործառույթ չունեն ւ, ւ հնչյունները: Դիրքային սահմանափակումներ չունեն ի, ու, ւ հնչյունները, սակայն վերջինս սահմանափակում ունի բառաշերտի առումով:

Katvalyan Viktor – General description of dhe vowels used in the dialect of Bayazet.– Ten vowel sounds are used in the dialect of Bayazet – [a], [a̠], [ä], [e], [ye], [o], [vo], [i], [u], [ə], from which the sound [a̠] is a positional variant of the phoneme [a]. The common Armenian vowels originate from the corresponding vowels of the Old Armenian language; the diphthongized sounds [ye] and [vo] are language phenomena occurred during the Old Armenian period; the sound [a̠] is a sound typical to this dialect and conditioned by its position; the sound [ä] has penetrated into the dialect of Bayazet from other languages and dialects. The sound [ə] undergoes few sound changes, and the sound [a̠] undergoes almost no sound changes. The sounds [a̠], [ä], [ye], [vo] have no word-building functions. The sounds [a̠], [ä] never function as non-root morpheme endings in the structure of word-forms. The sounds [i], [u], [ä] have no positional restrictions.

**ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Բազմահատկանիշ դասակարգմամբ Կոզենի բարբառը մտնում է Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ և ունի միայն մեկ՝ Կոզենի խոսվածք [*Ջահուկյան*, էջ 136]: Ըստ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության՝ այն պատկանում է *ՀԻՄ* ճյուղին:

Անցյալ դարի 60-ական թթ. տվյալներով Կոզեն գյուղը գտնվում էր Ադրբեջանի տարածքում՝ Քուռ գետի աջափնյա դաշտավայրում: Այն մշտապես կտրված է եղել հայկական բնակավայրերից և շրջապատված ադրբեջանական գյուղերով. «....միակ հայաբնակ գյուղն է սա, որի հիմնադրման թվականը հայտնի չէ» [*Բաղրամյան*, 1961, էջ 1]: Այդ նույն՝ 60-ականներին Կոզենն ուներ 50 տուն հայ և 30 տուն ադրբեջանցի ընտանիք: Իսկ ներկա պահին գյուղը, անտարակույս, հայաթափված է, և դժվար է ասել՝ որտեղ են հաստատվել նրա նախկին բնակիչները, արդյո՞ք ցաքուցրիվ տեղափոխվել են զանազան վայրեր, թե համայնքով հիմնվել են, ասենք, մեկերկու կոնկրետ բնակավայրում: Հնարավոր է՝ Կոզենի բարբառը արդեն հայերենի մեռած տարբերակների թվին է պատկանում, եթե մտածենք, որ գյուղի բնակիչները տարբեր միջավայրերում են ապրում և ստիպված այլևս չեն հաղորդակցվում իրենց մայրենիով:

Կարծիք կա, որ միջին դարերում կոզենցիներին ձուլվել են ուտիացիներ, որոնք նույնպես դարձել են հայախոս ու հայադավան: Եթե դա ճիշտ է, ուրեմն, հավանական է՝ այս բարբառն ունի նաև եկվորների լեզվի ազդեցությունը: Սակայն այդ փաստին չենք անդրադառնա՝ այն համարելով մեր բուն նպատակից դուրս:

Ռ. Բաղրամյանի հավաստմամբ՝ Կոզենի բարբառը բառապաշարի և քերականական որոշ «ընդհանրություններ ունի Շամշադինի ու Լոռու ենթաբարբառների և Գանձակի միջբարբառի հետ»: Այնուհետև հեղինակը հավելում է, որ «....բարբառս ավելի շատ շփման կետեր ունի Արեշի միջճյուղային բարբառի հետ...» [նույնը, էջ 5]:

Կոզենի խոսվածքն (նույնն է՝ Կոզենի բարբառը) ունի 6 դերբայ. անորոշ, անկատար, ապառնի, հարակատար, ենթակայական և մակբայական: Վերջինս իր մեջ ներառում է անորոշ դերբայի բացառական և գործիական հոլովները: Այս ցանկում բացակայում է վաղակատար դերբայը:

Սակայն հեղինակը նշում է, որ «նոր սերունդն» արդեն տարբերակում է վաղակատար և հարակատար դերբայները: Դերբայների օրինակներ (*ա* և *ե* խոնարհման). անորոշ - *աղալ*, *ընգնեմ*, անկատար - *աղաս* կամ *աղալի*, *ընգնեմ/իս* կամ *ընգնեմի*, հարակատար - *աղացած*, *ընգնած*, ենթակայական *աղացող*, *ընգնող*, մակբայական - *աղալով*, *ընգնելի* կամ *ընգնելով*, ապառնի - *աղա(լ)*, *ընգնեմ/ի(լ)*: Վերջինս ձևով նման է խոսվածքի անորոշ դերբային:

Բայի խոնարհման յուրահատկություններից մեկն այն է, որ «....ըն-
ձական եղանակի անցյալի ապառնին առնվում է իբրև անցյալի անկատար,
որ նշանակում է, թե գրաբարյան անցյալի անկատարը պահվում է անփո-
փոխ»: Այսպես. *դո՛ւ ըսիք* «դու ասում էիր», *Համբոն գրենք* «Համբոն գնում էր»
[նույնը, էջ 123]:

Հիմնական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար,
ապառնի, հարակատար դերբայներով և օժանդակ բայով: Օրինակ՝ *Տըղին
տարած ըմ, ցաքի տակին դըրած...* Նօս ը («վերցնում է») *խընէցին գըցէլի,
թըռընէլի, բէրէլի էտ տըղին տալի* [նույնը, էջ 157]:

Կոզենի բարբառում «Պակասող ժամանակները լրացվում են *ինէլ/լւնլ*
բայով» [նույնը, էջ 158]: Փաստորեն տվյալ դեպքում խոսքը վերաբերում է
բայի երկրորդական բաղադրյալ ժամանակներին: Ապա Ռ. Բաղրամյանը
գրում է. «Բաղադրյալ ձևերը կազմվում են **անկատար** կամ **հարակատար**
դերբայներից և օժանդակ բայից կամ *ինիլ/նիլ* «լինել» բայից» (ընդգծումները
մերն են - Ժ.Մ.) [նույնը, էջ 159]: Անհասկանալի է, թե ինչու է հեղինակը
երկրորդ դեպքում այլ բառաձևեր բերում՝ որպես «*լինել*» օժանդակ բայի
բարբառային տարբերակներ: Ինչնէ: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ
բաղադրյալ երկրորդական ժամանակները կազմվում են խոնարհվող բայի
անկատար կամ հարակատար դերբայներով և *լինել* բայի խոնարհված
ձևերով:

Կոզենի բարբառում *ինիլ* «լինել»-ի դերբայական ձևերն են՝ անկատ. –
ինիս/ըլիս, ինէլի, ապառ. – *ինի*, հարակ. – (*ի*)*լւնծ/ըլւնծ/լւնծ*, ենթ. – *ինող*, մակ-
բայական – *ինէլով, ինէլէն*: Իսկ *էմ* օժանդակ բայի սահմանականի ներկան է՝
– *ըմ, ըս, ի, ընք, ըք, ըն*. անցյալը՝ *էլի, էլիր, էր, էլինք, էլիք, էլին*:

Հեղինակը մեզ հետաքրքրող խնդրին առնչվող ուրիշ ոչինչ չունի
վկայած: Սակայն աշխատության մեջ բերված օրինակներից և բարբառային
տեքստերից հստակ կարող ենք առանձնացնել երկրորդական բաղադրյալ
ժամանակաձևերը: Այսպես. *Առտընէն ձիյանի յէմը վէր տալիս ինիս* («...որ
տալիս լինես»): *էտ յէզան միսը համա յէրկու դօվ ի վէր նուլիս ըլւնծ* («...երկու
դն է **վերցնելիս եղել**»): *էն մարդը օրական գընալիս իլւնծ, տապըլ ընօլիս*
(«...գընալիս (է) եղել, ձուկ բռնելիս»): *Հինգ տապիկ բէրէլիս, ամաքին մինը*

տալիս ըլնծ: («Հինգ ձուկ բերելիս ամեն մեկին մեկը տալիս (է) եղել»): *Աճկէրը հըրէն պատըմը դըրած ըլնծ* («...դրած (է) եղել»): *Յէրթած ըմ լնծ* («Գնալիս եմ եղել») [*Բաղրամյան*, 1961, էջ 159-160]: Սրանք բոլորը տրված են բաղադրյալ ժամանակների անվան տակ, գլխավոր բաղադրյալ ժամանակներին գուգահեռ՝ առանց լրացուցիչ բացատրության: Հարկ է նշել, որ այս նույն օրինակները կրկնվում են նաև Ռ. Բաղրամյանի աշխատության բարբառային տեքստերում:

Այդ տեքստերից այլ օրինակներ. *Կընաս ինի սանէլի մի շէն* («Գնալիս (է) լինում, տեսնում մի գյուղ»): *Էտ կընիկը թաքավերի յէղը կընիկը լնծ, տըղին մօրթած, գըլօխը քնրվանի բախանէյըմը դըրած լնծ* («...տղին մորթած, գլուխը ... դրած (է) եղել») [նույնը, էջ 247]:

Ինչպես բերված օրինակներից է երևում, և նաև Ռ. Բաղրամյանն է վկայում, գրեթե միշտ բացակայում են *եմ* օժանդակ բայի խոնարհված ձևերը: Դրանք գործառում են հատկապես հարադիր բայերի հետ կամ էլ խոնարհված բայի շրջուն ձևերում, այսինքն՝ երբ օժանդակ բայը նախադաս դիրքում պետք է լինի:

Դատելով խնդրո առարկա հարցին վերաբերող օրինակների սակավությունից՝ կարելի է ենթադրել, որ երկրորդական բաղադրյալ ժամանակներն արդեն իսկ քիչ գործածական էին այս բարբառում: Ռ. Բաղրամյանի՝ բարբառն ուսումնասիրելու պահին գուցե դրանք աստիճանաբար անհետանալու միտում ունեին:

Կոզենի խոսվածքի (բարբառի) երկրորդական բաղադրյալ ժամանակների ժխտականը, ինչպես և բաղադրյալ մյուս՝ գլխավոր ժամանակներինը, դարձյալ կազմվում է չ- մասնիկի օգնությամբ, որը կցվում է *եմ* օժանդակ բային: Այսպես. *Յէրթած չըմ լնծ, դըրած չի լնծ, կընաս չի ինի* և այլն: Հիշեցնենք, որ այս դեպքում չ- ժխտական մասնիկի հետ *եմ* օժանդակ բայը նախադաս է և պարտադիր գործառում է:

Մեր ուսումնասիրության՝ արևելյան խմբակցության հաջորդ՝ Շամախիի բարբառի մասին Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագիտութիւն» աշխատության մեջ գրում է, որ դրանով խոսում են Շամախի քաղաքի մեջ և նրա մոտակա մի քանի գյուղերում: Նա նշում է նաև, որ այն պատկանում է ՌԻՄ ճյուղին և «...կը կազմե միջին օղակ մը Ղարաբաղի և Ջուղայի բարբառներուն» [Աճառեան, էջ 76]: Հեղինակը, ցավոք, հիշյալ աշխատությունում բարբառային այս միավորի հնչյունական համակարգին վերաբերող որոշ տվյալներ է միայն ներկայացրել: Բայական համակարգի որևէ քննություն չկա: Սույն բարբառախոս տարածքը, Աճառյանի վկայությամբ, գտնվում է Աղվանքի մեջ [նույնը, էջ 25]:

Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ բարբառիս մեջ մտնում են Շամախիի և Քյարքյանջի խոսվածքները [*Ջահուկյան*, էջ 136]: Բայի սահմա-

նական եղանակի ներկա ժամանակի կազմությամբ Շամախիի խոսվածքը պատկանում է ՈՒՄՃյուղին, իսկ Քյարքյանջինը՝ ԼԻՄ-ին:

«Շամախիի բարբառը» գրքում Ռ. Բաղրամյանն ուսումնասիրել է այդ խոսվածքով խոսող Շամախի քաղաքի և շրջակա գյուղերի՝ Մեյսարիի, Մադրասայի, Քյալախանիի, Սադյանի, Շիրվանգադեի, Միրիշենի, Քյարքյանջի ենթախոսվածքները (ինչպես և այլ դեպքերում, պայմանականորեն ենք «ենթախոսվածք» անվանում): Հեղինակը վկայում է, որ Շիրվանգադե գյուղում նախկինում հիմնականում խոսել են պարսկահայ բարբառով, իսկ այն ուսումնասիրելու պահին այդտեղ ավելի շատ իշխում էր գրական արևելահայերենը կամ Շամախիի ու Ղարաբաղի բարբառներին մոտ մի խոսվածք [Բաղրամյան, 1964, էջ 9,10]:

Խնդրո առարկա բարբառում *եւ* օժանդակ բայի սահմանականի ներկա ժամանակն է՝ *ա/էւ, էս, ա, ա/ենք, էք, ա/են, իսկ անցյալը՝ ի, իր, էր, ինք, իք, ին:* Այստեղ գործառում են անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները: Բացակայում է ժխտական դերբայը:

Իր այս աշխատությունում, ի տարբերություն նախորդի, Ռ. Բաղրամյանն ունի «Երկրորդական բաղադրյալ ձևեր» վերտառությամբ բաժինը: Հեղինակը գրում է, որ դրանք «...կազմվում են անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար դերբայներից, *էական* բայից կամ *իլիլ* «լինել» բայից» [նույնը, էջ 169]: Սակայն վաղակատարով ժամանակաձևեր աշխատանքում չգտանք: Ստորև նույնությամբ ներկայացնում ենք աշխատության՝ երկրորդական ժամանակներով խոնարհված բայերը՝ գրական թարգմանություններով հանդերձ. *տալիս ա իլիմ* «տալիս է լինում», *կսլիլի յս իլիմ* «գալու է լինում, գալիս է լինում», *յէկած կիլէր* «եկած կլիներ», *կիրած կամ* «գրած կամ, երբևէ գրել եմ», *տուլ բիդի կարթացած իլիր* (Մեյսարի) «դու պիտի կարդացած լինեիր», *յէս ալ բիդի կարթացած չիլի* (Մյ.) «ես էլ պիտի կարդացած չլինեիր», *բիդի կարդացած չիլի* (Սադյան) «պիտի կարդացած չլինեիր», *տուլ յէլ բրդէր կարթացած չիլիր* (Քյարքյանջ) «դու էլ պիտի կարդացած չլինեիր», *յէս էլ բրդէր կարթացած չիլի* (Քյ.) «ես էլ պիտի կարդացած չլինեիր», *նա քէզ հէսնէ պսն ասած կա*^օ (Քյար.) «նա քեզ այդպիսի բան ասած կա^օ», *կսլիլի ա իլիմ* «գալիս է լինում» (Սդ.), *ճընանչէլիլի կիլի* «ճանաչելիս կլինի, կարող է ճանաչել» (Մեյ.) [նույնը, էջ 169- 170]:

Վերոհիշյալ աշխատության բարբառային տեքստերի բաժնում երկրորդական հարադրական ժամանակների գործառությամբ միայն մեկ օրինակ գտանք. ...*կօվը ծանդրած ա ընըմ* «կովը (ծանդրոել «հղիանալ») հղիացած է լինում» (Մադրասա) [նույնը, էջ 276]:

Ինչպես տեսնում ենք, խոնարհված բայերը չեզոք ու ներգործական սեռերի են: Բնարկե, չենք բացառում, որ կրավորական և պատճառական բա-

յաձևերով նույնպես երկրորդական բաղադրյալ ժամանակներ կարող են կազմվել: Ժխտականը, ինչպես և այլ բարբառային միավորներում, կազմվում է օժանդակ բայի վրա դրվող չ- մասնիկի օգնությամբ:

Ուսումնասիրելով խնդրո առարկա ժամանակաձևերը բարբառային այս միավորում՝ դրանց համար նոր ձևակերպում կարելի է տալ. **Շամախիի բարբառում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են խոնարհվող բայի որևէ դերբայի (անորոշից բացի) և օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ**: Տվյալ դեպքում որպես օժանդակ բայեր հանդես են եկել ոչ միայն *լինել*-ը (*լիլի*), այլ նաև *կամ*-ը և *պիտեղ*-ը: Ի դեպ, վերջինս բարբառում սահմանափակ կիրառություն ունի՝ *բըդէր* (եզ. 3-րդ դեմք) բառաձևով միայն, և դրա կամ *պիտի*-ի օգնությամբ հարկադրական եղանակն է կազմվում: Նրանց զուգահեռ՝ նույն նախադասության մեջ կարող է նաև *լինել*-ը գործառել՝ դարձյալ որպես օժանդակ բայ: Նշված երկու օժանդակ բայերի՝ *կամ*, *պիտեղ*, առկայությամբ երկրորդականները նմանվում են Ղարաբաղի բարբառի՝ բայական այդօրինակ կառույցներին (օր. *յէս քüցած կամ, յէս քüցած պիտի* և այլն):

Բուրդուրի բարբառով «....խոսել է Արևմտյան Անատոլիայի Բուրդուր քաղաքի հայ համայնքը՝ մինչև 1915թ. Մեծ եղեռնը»: Բնակչության թիվը այդ ժամանակ եղել է մոտ 2500 հոգի [*Մկրտչյան*, էջ 5, 6]: Հ. Աճառյանի վկայությամբ՝ բուրդուրցիները «գաղթել են Ղարաբաղից ժե դարում կամ ավելի ուշ» և իրենց լեզուն պահել են «անկորուստ» [*Աճառյան*, 1911, էջ 61]:

Բարբառը միահատկանիշ դասակարգմամբ պատկանում է *ՈԻՄ* ճյուղին: Բազմահատկանիշ դասակարգմամբ այն ունի միայն մեկ՝ Բուրդուրի խոսվածքը և մտնում է արևելյան խմբակցության մեջ [*Ջահուկյան*, էջ 136]:

Բարբառումս գործառում են հայերենին ընդհանրապես հատուկ հետևյալ դերբայները. անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ըղձական կամ ժխտման: Եղանակային ձևերի կազմությանը, ինչպես և այլ բարբառային միավորներում, չի մասնակցում միայն անորոշ դերբայը: Հարկ է նշել, որ հայ քերականագիտության մեջ ընթացական (համակատար) դերբայը նախկինում համարում էին անկատարի տարբերակը՝ *-ոււմ* վերջավորության կողքին նաև *-իս* վերջավորությամբ բայաձևը, որը առանձին դերբայ չէր համարվում: Այդ պատճառով շատ հեղինակների աշխատանքներում այն չի հիշատակվում:

Երկրորդական բաղադրյալ ժամանակները, ըստ Ն. Մկրտչյանի, կազմվում են անկատար, ապառնի, հարակատար դերբայներով ու «լինել» բայի խոնարհված ձևերով: Այսպես. *նէլիս ըմ ընում*, «գնալիս եմ լինում», *նէլըս ըմ ընում իղի* «գնալիս էի լինում», *նէլու վէմ ընում* «գնալու եմ լինում», *նէլու վի ընօլու* «գնալու էի լինելու» (օժանդակ *եւ*՝ բայի խոնարհված ձևերի վրա, ինչպես Ղարաբաղի բարբառային միավորներում, ավելանում է *վ*- բաղաձայնը՝ հորանջից խուսափելու համար), *նէցած ըմ իլած* «գնացած եմ եղել»,

նեցած ըմ ընում «գնացած եմ լինում», *պէտք ա նեցած ընէմ* «պիտի գնացած լինեմ», *պէտք ա նեցած ինիմ իղի* «պիտի գնացած լինեի»:

Ըստ Ն. Մկրտչյանի՝ *իղի*-ն փոխառյալ մասնիկ է, որի միջոցով «անկատարի իմաստ է դրսևորվում»: Խնդրո առարկա ժամանակների վերաբերյալ հեղինակը որևէ այլ բացատրություն չի տալիս [*Մկրտչյան*, էջ 158]: Վերը բերված օրինակներում *գնալ* բայը խոնարհված է միայն սահմանական և հարկադրական եղանակներով: Սակայն, ծանոթանալով բայի խոնարհման ընդհանուր համակարգին, դժվար չէ նման ձևով կազմել նաև ըղձական ու պայմանական եղանակների երկրորդական բաղադրյալ ժամանակները: Օրինակ՝ ըղձ. *նէլու ինէմ* «գնալու լինեմ», *նէլու ինէմ իղի* «գնալու լինեի», պայմ.*նէլու կինէմ, նէլու կինէմ իղի* «գնալու կլինեի»:

Բուրդուրի բարբառում թուրքերենից փոխառյալ *իղի* մասնիկը գործառում է սահմանական, պայմանական, ըղձական և հարկադրական եղանակների՝ անցյալի բաղադրյալ բոլոր ժամանակաձևերում: Ի դեպ, հիշյալ անցյալ ժամանակները ունեն առանց *իղի* մասնիկի գուգաձևեր նույնպես (*քիցած ի* և *քիցած ըմ իղի*): Այսինքն՝ այդ փոխառյալ մասնիկը թուրքերենից Բուրդուրի խոսակցական լեզու է թափանցել ավելի ուշ շրջանում:

Արևելյան խմբակցության Արդվին-Թբիլիսիի բարբառի խոսվածքներն են Թբիլիսիի և Արդվինի բարբառային միավորները [*Ջահուկյան*, էջ 136]:

Սայաթ-Նովայի՝ մեր օրերը հասած երգերի և Գ. Սունդուկյանի պիեսների շնորհիվ լեզվական առատ նյութ կա Թբիլիսիի խոսվածքն ուսումնասիրելու համար: Նախ՝ ասենք, որ բայը բարբառային այս միավորում ներկա ժամանակում (սահմ. եղ.) խոնարհվում է *ՈԻՄ*-ով կամ *ԿՈԻ* մասնիկով: Վերջինիս առկայությունը *ՈԻՄ* ճյուղի կողքին, ինչպես և այլ խոսվածքներում ենք նման երևույթի հանդիպում, անշուշտ, պայմանավորված է Արևմտյան Հայաստանից Թբիլիսի ներգաղթած բարբառախոսների լեզվից տվյալ խոսվածք թափանցելու փաստով:

Երկրորդական հարադիր կազմություններով ժամանակներ գտնում ենք և՛ Գ. Սունդուկյանի պիեսներում, և՛ Սայաթ-Նովայի խաղերում (ավելի սակավ):

Գ. Սունդուկյանի երկերի լեզվի բարբառային կառուցվածքին է անդրադարձել Ա. Քոչոյանն իր ծավալուն ատենախոսության մեջ: Ըստ հեղինակի՝ Թբիլիսիի խոսվածքում բայն ունի երկու լծորդություն՝ *ա* և *ի*: Այստեղ գործառում են անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման կամ ըղձական դերբայները (իրենց կառուցվածքով նման են գրական արևելահայերենի համապատասխան դերբայներին, միայն խոսվածքումս *ի* խոնարհման բայերի անորոշի և վաղակատարի վերջավորությունը *-իլ* է) [*Քոչոյան*, էջ 114-120]:

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *իմ, իս, է, ինք, իք, ին, իսկ* անցյալինը՝ *էյի, էյիր, էր, էյինք, էյիք, էյին*: Հարկ է նշել, որ Սայաթ-Նովան իր երգե-

րում *էս* օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքում *է*-ի փոխարեն գործածում է նաև *ա* բայաձևը՝ միայն բանաստեղծական հանգը պահելու համար:

Նախքան բայի խոնարհման ընդհանուր պատկերը ներկայացնելը Ա. Քոչոյանը գրում է, որ Գ. Սունդուկյանի երկերում առկա են երկրորդական բաղադրյալ ժամանակներ, և դրանք կազմվում են *ըլիլ*-ի՝ որպես օժանդակ բայի թեքված ձևերի օգնությամբ: Օրինակ. *Ըլէլու՝ քան է, վուր ինչրու էտի, նա մըտէն ըլի գրցի գըլուխը: Հէնց գիղէնաս աստղիքը հիտըդ մասլահաթ ըլին անում: Էլա ծ քան է, վուր զանդուկը տակէն ըլին կօտրի* [նույնը, էջ 122]: Հիշյալ ժամանակաձևերի վերաբերյալ աստենախոսության մեջ այլ նկատառումներ չկան:

Գ. Սունդուկյանի ստեղծագործություններից մենք խնդրո առարկա բայաձևերով նույնպես օրինակներ ենք առանձնացրել: Այսպես. *Էս էլ վուր առանց փուղ չըլի ճարվում* («ճարվելիս չլինի»), *օ՛վ արժանի կօնիր միգ* [Հայ դրամատուրգիա, Պեպո, էջ 26]: *Հէնց գիղէնաս աստղիքը հիղըդ մասլահաթ ըլին անում* («անելիս լինեն»)[նույնը, էջ 27]...*կօսիս շահ-զաղի վուրթիք ունենանք մէճրած* («ունենք մեծացրած»)[նույնը, էջ 47]: *Փուղ ու բաժինք էլ էնքան կու տան, վուր ջէր օջօվու էլ չըլին տըվի* («տված չլինեն»)[Սունդուկյան, 1984, Խաթաբալա, էջ 63]: ...*կընիկըս մընում կուլի* («մնալիս կլինի»), *ամա մէ քիչ պրավաժատ կօնիմ* [նույնը, էջ 64]: *Էս չախըն ի նչ կուլիս շինում* («ինչ ես շինելիս լինում, շինում») *դուն էստի* [նույնը, էջ 68]: *Քու արիվը, իմացիլ կուլի* («իմացած կլինի») *վուր փուղ շատ ունիմ ...*[նույնը, էջ 78]: *Ստէփան Դանէլիչը, էն միլիօնէրու տէրը, ախչիկ ըլի տալի...*(«տալու լինի»)[նույնը, *Էլի մէկ գոհ*, էջ 323]:

Բերված օրինակները բավական են՝ եզրակացնելու համար, որ Գ. Սունդուկյանի ստեղծագործելու ժամանակաշրջանում բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը բավականին կենսունակ են եղել Թբիլիսիի խոսվածքում: Դրանք կազմվում են *լինել*-ի և *ունենալ*-ի՝ որպես օժանդակ բայերի խոնարհված ձևերով և խոնարհվող բայի որևէ դերբայով: Ի դեպ, ի տարբերություն արևելյան խմբակցության այլ բարբառային միավորների՝ Թբիլիսիի խոսվածքում խնդրո առարկա հարադրական կառույցներում հաճախ են հանդիպում անկատար և վաղակատար դերբայները: Իսկ ժխտական ձևերը դարձյալ կազմվում են չ- մասնիկով, որը դրվում է օժանդակ բայի վրա (*չունենանք մէճրած*):

18-րդ դ. ստեղծագործած Սայաթ-Նովայի խաղերում հանդիպում են հարադիր կազմությամբ երկրորդական ժամանակներ, սակայն դրանք ավելի սակավաթիվ են: Պատճառը, թերևս, այն է, որ բայական այդ կազմությունները հեղինակի ապրած ժամանակաշրջանում դեռևս նոր էին մտնում կիրառության մեջ: Օրինակներ. *Քու դըռանըտ նընգած ըլիմ* (ըղձ. ապառնի), օվ տէսնէ, ասէ՛ տուսաղ իմ. [Սայաթ-Նովա, 1987, էջ 22]: *Տարին տասներկու ամիս մագիբըտ հուսած կուլի*. (պայմ. ապառ.) [նույնը, էջ 27]: *Հաքիլ ըլիս զար-*

գարբաբրն խաս ալօվ («հագած լինես...», ըղձ. ապառ.) [նույնը, էջ 32]: Արտասունքըս արուն շինեցիր, խիլքըս գրվիսես **ունիմ տարած** (սահմ. հարակ.) [նույնը, էջ 34]: Հատկանշական է, որ խոսվածքումս խնդրո առարկա կառույցներում օժանդակ բայի դեր է կատարում նաև *ունեմ*-ը:

Արևելյան խմբակցության Թբիլիսիի բարբառի Արդվինի խոսվածքին նվիրված իր ատենախոսությունում («Արդվինի բարբառը») Ս. Ալավերդյանը գրում է, որ այն «...տարածված է եղել պատմական Հայաստանի Տայոց գավառում»: Մինչև 1878 թ. դրանով խոսել են Արդվին քաղաքում, Արդանուշում, Տանձոտ, Նորաշեն գյուղերում, ինչպես նաև Շավշետի շրջանի մի քանի այլ գյուղերում: Իսկ այնուհետև բարբառակիրների մի զգալի մասը գաղթել և բնակություն է հաստատել Արդահանում, Սև ծովի ափի մի շարք ռուսական բնակավայրերում [Ալավերդյան, էջ 1]:

Արդվինի խոսվածքի բայական համակարգում գերակշռում է **ԼԻՄ** ճյուղի խոնարհումը: Սակայն երբեմն սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են **ԿՈՒ** մասնիկով, ինչպես և Թբիլիսիի խոսվածքում: Այսպես՝ սահմ.ներկա - *կու խօսիմ*, *կու խօսիս*, *կու խօսի* և այլն [նույնը, էջ 125]:

Բարբառային այս միավորում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են որևէ բայի անկատար, ապառնի, հարակատար դերբայներով և *ըլնեղ* «լինել» բայի խոնարհված ձևերով: Ս. Ալավերդյանի աշխատանքում բերված է *խօսեղ* բայի խոնարհումը հիշյալ երկրորդական ժամանակաձևերի բոլոր եղանակներով (ըղձականից բացի), նույնիսկ հրամայականով: Ներկայացնենք տրված ժամանակներով խոնարհված բայի միայն եզակի առաջին դեմքը՝ *խօսեղիս ըլնեմ* (սահմ. ներկա), *խօսեղիս ըլնեղ* (սահմ. անց. անկատ.), *խօսեղու ըլնեմ* (սահմ. ապառնի), *խօսեղու ըլնեղ* (անց. ապառնի), *խօսած ըլնեմ* (սահմ. հարակ.), *խօսած ըլնեղ* (անց. հարակ.), *խօսած էղա* (անց. կատար.), *կու խօսած ըլնեմ* (պայմ. ապառնի), *կու խօսած ըլնեղ* (պայմ. անց. ապառնի), *տի խօսած ըլնեմ* (հարկ. ապառնի), *տի խօսած ըլնեղ* (հարկ. անց. ապառնի), *խօսած էղի ը/ց* (հրամայական եղ.): Հրամայականի հոգնակի թվի համար Ս. Ալավերդյանը գրում է, որ այն գործածական չի եղել [Ալավերդյան, էջ 150- 152]: Ժխտական խոնարհման օրինակներ՝ *խօսեղիս չըլնեմ*, *կու խօսած չըլնեմ*, *տի խօսած չըլնեմ*:

Մեր ուսումնասիրած հաջորդ բարբառը Հավարիկինն է՝ միայն մեկ՝ Հավարիկի խոսվածքով [Ջահուկյան, էջ 136]: Ընդունված է նաև հայերեն այդ տարբերակը կոչել Արեշի բարբառ: Ըստ Ռ. Բադրամյանի, օրինակ, քանի որ Արեշ գավառի վարչական կենտրոնը միշտ եղել է Արեշը, ուրեմն բարբառն էլ ճիշտ է կոչել դրա անունով, մանավանդ, որ գավառի բոլոր 7 գյուղերը խոսում են միմյանցից չնչին տարբերություններ ունեցող ենթախոսվածքներով: Նույն կարծիքին է նաև Ա. Լուսենցը [Բադրամյան, 1961, էջ 6. Լուսենց, էջ 9]: Վերջինս, բնիկ արեշցի, մայրենի բարբառին նվիրված գիրք ունի հրատարակած: Հեղինակի վկայությամբ՝ Արեշի գավառի բնակչության թիվը 1918թ.

դրությամբ 10 հազար էր: Այդ նույն ժամանակ գավառը մտնում էր Ելիզավետպոլի, այսինքն՝ Գանձակի նահանգի մեջ, որը ներկայիս Ադրբեջանի տարածքում է գտնվում: Անցյալ դարի կեսերից արեշցիներ են տեղափոխվել ու վերաբնակվել Երևանի Նոր Արեշ թաղամասում: Ռուսաստանի Կրասնոդարի մարզի Անապայի շրջանի Պավլովկա, Վառվառովկա, Սուպցեխ, Հայկաձոր գյուղերում և Անապա քաղաքում նույնպես նախկին արեշցիներ են ապրում [*Լուսենց*, էջ 7]: Ներկա պահին, անշուշտ, ողջ Արեշ գավառը, Ադրբեջանի տարածքում գտնվող մյուս հայկական բնակավայրերի նման, հայաթափված է:

Հավարիկի (Արեշի) խոսվածքում (կամ բարբառում) բայը սահմանականի ներկա ժամանակում խոնարհվում է *ԼԻՄ* և *ՈԻՄ* ճյուղի բարբառների նմանությամբ: Բարբառիս դերբայներն են՝ անորոշ – *կըտանէլ* «գտնել», *մօտանալ*, անկատար – *կըտանէլիս*// *կըտանէլի*// *կըտանէլըմ*, *մօտանալիս*// *մօտանալը*// *մօտանալըմ*, հարակատ. – *կըտած*, *մօտացած*, ապառ. – *կըտանէլա* // *կըտանէլացուկ*, *մօտանէլա*, *մօտանէլացուկ*, ենթ. – *կըտանօղ*, *մօտացող*// *մօտանող*: Այս բարբառային միավորում, ինչպես և Կոզենի խոսվածքում, բացակայում է վաղակատար դերբայը:

Սահմանականի ներկա ժամանակով *եմ*՝ օժանդակ բայի խոնարհումը՝ *ըմ*, *ըս*, *ի*, *անք*, *աք*, *ան*. անցյալով *էյ*, *էյր*, *էր*, *էյք*, *էյք*, *էյն*:

Ուսումնասիրելով սույն բարբառի բայական համակարգը Ա. Լուսենցի աշխատության մեջ՝ երկրորդական բաղադրյալ ժամանակներին վերաբերող ոչ մի օրինակ կամ ակնարկ չգտանք: Դրանք չեն հանդիպում նաև աշխատության բարբառային տեքստերում: Նույն հեղինակի՝ ըստ ՀԲԱ (Հայերենի բարբառագիտական ատլաս) ծրագիր-հարցարանի լրացրած «Հավարիկի բարբառը» աշխատանքում էլ չկա խնդրո առարկա ժամանակին առնչվող որևէ օրինակ (հիշեցնենք, որ ՀԲԱ ծրագրում ներառված չեն երկրորդական բաղադրյալ ժամանակները):

Իսկ Գրիգոր Տեր-Պողոսյանի՝ սույն բարբառին նվիրված հոդվածում հեղինակը փաստում է *իւնէլ* օժանդակ բայով կառույցի առկայությունը. «Ամեն բայի դերբայները կցում են *իւնէլ* օժանդակ բայի կատարելալի արմատին և նրա գրաբարաձև խոնարհման կարգով կազմում են այլ ևս 7 ձև՝ 3 յարակատար, 2 պայմանական և 2 ըղձական ...» [*Տէր-Պօղոսեան*, էջ 168]: Հեղինակը նաև մի այլ հետաքրքիր դիտարկում ունի խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Նա գրում է, որ շատ ժամանակաձևեր՝ անցյալ և ապառնի, իրենց «...**նրբութիւններն** (ընդգծումը մերն է - Ժ.Մ.) արտահայտում են բարդ բաղադրություն... դերբայական ձևը՝ կցուած *եմ*՝ օժանդակ բային, ընդունում է այլև միւս օժանդակ բայի՝ *իւնէլ*, ոչ միայն կանոնավոր խոնարհումը, այլև բարդ և բարդ բաղադրյալ ձևերը» [նույն տեղում]: Բերում է օրինակ՝ *գըրէլիս էմ լինում*: Հոդվածում բերված բարբառային սակավ քանակի տեքստերում, սակայն, չգտանք հարադիր կազմությամբ որևէ երկրորդական ժամանականակ:

Վերը շարադրվածը, ինչպես նաև մինչ այժմ կատարած մեր ուսումնասիրությունները ի մի բերելով՝ փաստում ենք, որ հայերենի արևելյան խմբակցության գրեթե բոլոր բարբառներին հատուկ է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի գործառությունը: Դրանք հիմնականում կազմվում են խոնարհվող բայի հարակատար, ապառնի, ընթացական (համակատար), անկատար, նաև վաղակատար (Թբիլիսիի խավ.) դերբայներով: Որպես օժանդակ բայ մշտապես ծառայում է *լինել*-ը, որոշ դեպքերում՝ նաև *կամ*-ը, *պիտել*-ը (վերջին երկուսը՝ ներկա և անցյալ ժամանակներով): *Ունենալ*-ը (*ունենալ*) միայն Արդվին-Թբիլիսիի բարբառում է հանդիպում, որը հայերենի արևմտյան տարբերակներից այս բարբառ ներթափանցելու հետևանք է: Արդվինի խոսվածքում երկրորդական ժամանակները հանդես են գալիս նաև հրամայական եղանակով: Սա հազվադեպ է հանդիպում հայերեն բարբառներում: Պետք է նշել, որ հիշյալ նկարագրական բայաձևերը այսօր էլ կենսունակ են հատկապես Ղարաբաղի և Արարատյան բարբառներում: Այդ ժամանակաձևերը, ընդհանրապես, ի հայտ են գալիս ավելի ուշ շրջանում՝ տվյալ բայական համակարգի պատմական զարգացման ընթացքում առաջացած կերպաժամանակային բացերը լրացնելու պահանջով:

Օգտագործված գրականություն

1. Ալավերդյան Ս. Ա., Արդվինի բարբառը, թեկն. ատենախոսություն, Ե., 1970:
2. Աճառեան Հր., Հայ բարբառագիտութիւն, Մոսկուա - Նոր-Նախիջեւան, 1911:
3. Բաղրամյան Ռ. Հ., Կոզենի բարբառը, Ե., 1961:
4. Բաղրամյան Ռ. Հ., Շամախիի բարբառը, Ե., 1964:
5. Լուսենց Ա. Ղ., Արեշի բարբառը, Ե., 1982:
6. Հայ դրամատուրգիա, Գ. Սունդուկյան, Պեպո, էջ 18- 84, Ե., 1985:
7. Մկրտչյան Ն., Բուրդուրի բարբառը, Ե., 1971:
8. Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
9. Սունդուկյան Գ., Երկեր, Ե., 1984:
10. Տեր-Պողոսեան Գր., Հաւարիկի բարբառը, Բանբեր, Էջմ., գիտ. ինստիտուտի, 1921-1922:
11. Քոչոյան Ա. Կ., Թբիլիսիի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Սունդուկյանի երկերում, թեկն. ատենախոսություն, Ե., 1958:

Микаелян Жанна—Второстепенные составные временные формы глагола в некоторых армянских диалектах восточной группы. — В статье изучаются особенности *второстепенных составных временных форм* глагола в крзенском, шамахинском, бурдурском, ардвин-тбилисском и аварикском диалектах. Во всех этих диалектах данные времена образуются при помощи вспомогательного глагола *լինել* “есть, быть” и соответствующего деепричастия спрягаемого глагола. В шамахинском диалекте в роли вспомогательного глагола так же функционируют *կամ* и *պիտել*, а в тбилисском говоре — глагол *ունենալ*.

Второстепенные составные временные формы характерны для повествовательного стиля речи и передают оттенок предположительности, недостоверности сказанного. В ардвинском говоре во *второстепенных составных временных формах* глагола функционирует и повелительное наклонение, которое очень редко встречается в таких диалектных конструкциях. Надо отметить, что эти времена особенно продуктивны в араратском и в карабахском диалектах по сей день.

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ
(հնչյունաբանական քննություն)

Արաբերենի հնչյունական համակարգը Անտիոքի կամ ծայր հարավ-արևմտյան բարբառախմբի (Քեսաբ-Սվեդիայի բարբառ՝ Քեսաբի, Քաբուսիեի, Յոդուն-Օլուկի, Հաջի-Հաբիբլիի, Արամոյի խոսվածքներով և Բեյլանի բարբառ՝ Բեյլանի խոսվածքով)¹ հայերեն բարբառներում արտացոլվում է հիմնականում արաբերենից կատարված փոխառություններով²: Հայտնի է, որ արաբերենը և հայերենը՝ իրենց տարածքային տարբերակներով հանդերձ, տարբեր լեզվաընտանիքների անդամներ են, ուստի նրանց միջև ընդհանրություններն ավելի հաճախ ի հայտ են գալիս հնչյունաբանական մակարդակում՝ փոխառությունների միջոցով³:

Արաբական երկրներում ընդհանուր արաբերենը ներկայանում է գրական (al-fuṣḥā) և խոսակցական (al-‘aāmmiyya) տարբերակներով⁴: Դասական արաբերենը ձևավորվել է 7-րդ դարում՝ Ղուրանի և հինարաբական պոեզիայի հիմքի վրա: Ներկայումս այն օգտագործվում է հիմնականում կրոնական ոլորտում: Ժամանակակից գրական լեզուն, որ դասականի զարգացման արդյունք է, իր գործառությամբ բազմաբնույթ է: Այս երկուսն ունեն բառապաշարային էական, մասամբ նաև շարահյուսական տարբերություններ⁵: Սակայն գրական արաբերենի երկու ենթաշրջաններն էլ բնութագրվում են բաղաձայնների, հատկապես՝ կոկորդային, միջատամնային և ուժգին արտաբերմամբ (վերհատությամբ), լայն զարգացած համակարգերով: Ընդհանուր արաբերենն ունի յուրաքանչյուր երկրում գործառոդ խոսակցական, այսինքն՝ տարածքային տարբերակներ, որոնք կոչվում են նաև բարբառներ⁶: Միրիայի բարբառն իր հատկանիշներով

1. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 132:

2. Արաբական փոխառությունները վերցրել ենք Յ. Չոլաքեանի «Քեսապի բարբառը», Ե., 2009, Տ. Անդրեասյանի «Սվեդիայի բարբառը», Ե., 1967, Հ. Քյուլեյանի «Բեյլանի բարբառը» (ատենախոսություն), Ե., 2008, Պ. և Կ. Մախչիկյանների Քեսաբի բարբառի բառարան, Ա. Փաշայանի «Քեսապի բարբառը» ձեռագիր աշխատություններից:

3. У. Вайнрайх, Языковые контакты. Перевод с английского языка, Киев, 1979, с. 102.

4. S. Altoma, The Problem of Diglossia in Arabic. A Comparative Study of Classical and Iraqi Arabic. Harvard Middle Eastern Monograph Series, 1969, p. 3-6.

5. В. Шагаль, Языковой аспект национальных процессов в арабских странах, М., 1987, с. 52.

6. М. эль-Массарани, В. Сегаль, Арабско-русский словарь сирийского диалекта, М., 1978, с. 3, В. Шагаль, նշվ. աշխ., էջ 39:

գրական լեզվին ամենամոտն է⁷: Գրական լեզվի յուրահատկությունները պահպանելով հանդերձ՝ այն արտաբերական դժվարություններով աչքի ընկնող որոշ բաղաձայններ, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում պարզեցրել է:⁸

Խնդրո առարկա հայերեն բարբառային միավորների բաղաձայնական ենթահամակարգերը հին հայերենի՝ գրաբարի համեմատությամբ բնորոշվում են հպականների տեղաշարժ-տեղափոխությամբ, այսինքն՝ հին ձայնեղների խլացմամբ և խուլերի ձայնեղացմամբ⁹: Շնչեղ խուլ հպականները և բոլոր շփականները համակարգային փոփոխության գրեթե չեն ենթարկվել: Ավելացել են *ṣ* խուլ շփական և արաբերենից փոխառյալ խոր հետնաքիմքային *ḡ* (q) և *ḥ* (ʿ) բաղաձայնները: Այսպիսով, Անտիոքի բարբառային միավորներում, այնուամենայնիվ, առկա է հպականների հինհայերենյան եռաշարք հակադրությունը (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ):

Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգերը, ի տարբերություն հայերենի և արաբերենի գրական տարբերակների, փորձառական քննության չեն ենթարկվել: Մեր հետազոտության ժամանակ հենվել ենք վերոհիշյալ բարբառային միավորների վերաբերյալ հրատարակված ուսումնասիրությունների և ձեռագիր նյութերի հեղինակների դիտարկումների վրա: Դրանցում այդ բարբառների բաղաձայնական ենթահամակարգերը ներկայացված են հիմնականում գրական արևելահայերենի համապատասխան հնչյունների համեմատությամբ. տարբերություններ գրեթե չկան:

Արաբերենի և մեր կողմից ուսումնասիրվող հայերեն բարբառների բաղաձայնների մի մասը, եթե անգամ հնչարտաբերական հատկանիշներով չեն նույնանում, այնուամենայնիվ, միմյանց մոտ գծեր են ցուցաբերում: Հետևաբար՝ փոխառություններում արաբական բաղաձայնները, իրենց յուրահատկություններով նմանվելով Անտիոքի բարբառախմբի համապատասխան հնչյուններին, նույն կերպ են արտացոլվել և ունեն միևնույն գործառությունները¹⁰:

Այսպես, արաբական փոխառությունների *b* և *d* ձայնեղ հպականները համապատասխանաբար նույնացել են բարբառների *p* և *t* բաղաձայններին. *բեդեվի* – badawī¹¹ «բեդվին», *կաբր* – qabr «մահմեդականի գերեզման», *սի-*

7 . А. Ковалев, Г. Шарбатов, Учебник арабского языка, М., 1969, с. 6.

8. В.Шагаль, Языковой аспект национальных процессов в арабских странах, М., 1987, с. 60.

9. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 59

10. Այդ հնչյունները հիմնականում հանդիպում են բառի բոլոր դիրքերում, ուստի կրկնություններից խուսափելու համար ոչ միշտ ենք այդ մասին նշում:

11 . Գրական արաբերենի բառաձևերը վերցված են 'Al-Qāmūs 'al-jadīd, Tūnīs, 1985 (արաբերեն) և X.Баранов, Большой арабско-русский словарь, т.1-2, М., 2002 բառարաններից: Արաբերեն բառերի տառադարձումը կատարվում է Encyclopedia of Arabic Language and Linguistics –ի կողմից ընդունված համակարգով, 2008, Amst:

բսբ – sabab «պատճառ», *դին* – dīn «հավատ, կրոն», *բսդսլ* – badal «փոխարեն, փոխարժեք, փրկագին», *ջէլադ* – jallad «դահիճ»:

Արաբերենի ոչ լարված, թույլ շնչեղությամբ խուլ հպական **տ**-ն նմանվում է հայերենի **թ**-ին¹²: Իսկ միջքիմքային **կ**-ն, որն արտաբերվում է փափուկ և որոշ շնչեղությամբ, նույնացել է հետքիմքային **ք**-ին: Այսինքն՝ հայերենի նշված հնչյունների հետ արաբական այդ բաղաձայնների, հատկապես **կ**-ի, նույնացումը պայմանավորված է նրանց ընդհանուր հատկանիշով՝ շնչեղությամբ. *թենք^{ու}օհ* – tanbīh «զգուշացում», *քելիմու* – kalmia «բառ, խոսք», *մսքթուք* «նամակ» – «1. գրված, 2. գրություն, ուղերձ» – maktūb, *ֆսլսբ* «ճակատագիր» – falak «1. երկինք, ուղեծիր»:

Հարկ է նշել նաև, որ գրական արաբերենում բացակայում են հայերենին, ինչպես և քննվող բարբառներին հատուկ **փ, պ, գ, կ** հպականները, **ձ, ծ, ց, ճ, չ** կիսաշփականները, ուստի և դրանք փոխառություններում չեն հանդիպում: Այն ունի միայն մեկ կիսաշփական ձայնեղ բաղաձայն՝ **յ**-ն, որն արտասանությամբ գրեթե նույնանում է հայերեն **ջ**-ին: Թեև Սիրիայի բարբառում, անգամ նաև գրական արաբերենի սիրիալիբանանյան, թունիսյան տարբերակներում արաբական այս կիսաշփականը բոլոր դիրքերում հիմնականում փոխարինվում է ձայնեղ շփական **ջ(ժ)**-ով¹³, երբեմն նաև՝ խուլ կիսաշփական **ջ(չ)**-ով¹⁴, սակայն հայերեն բարբառների արաբական փոխառություններում **յ**-ի նման տարբերակվածություն չկա. *ջուլլա* «ամբողջը, բոլորը» – jumla «1. նախադասություն, 2. հանրագումար», Սիր. բար. žimle¹⁵, *դերեջու* – daraja «աստիճան, մակարդակ», Սիր. բար. daraže, *իլաջ* – ‘ilāj «ղեղ»:

Առավել մեծ ընդհանրություններ են ցուցաբերում երկու լեզուների շփական բաղաձայնները: Արաբերենի **զ, ս, շ, ց, ք, ֆ, հ** շփականները վերոհիշյալ բարբառախմբում համարժեք են համապատասխանաբար **զ, ս, շ, դ, խ, ֆ, հ** բաղաձայններին. **զ** – *զընքօր* – zunbūr «իշամեղու», *հսլքզուն* – ḥalazūn «խխունջ», *ըրրօզ* – ‘urz «բրինձ», *մսքբսզ* – markaz «կենտրոն», **ս** – *սըր* – sir «զադտնիք», *թիմսսի* – timsāh «կոկորդիլոս», *բսս* – bas «բավական է», **ֆ** – *ֆսլսբ* «ճակատագիր» – falak «1. երկինք, ուղեծիր», *իֆտար* – ifṭār նախաճաշ», *շսրսֆ* – šaraf «պատիվ», **շ** – *շահադ* – šāhid «վկա», *մըշմէշ* –

12. Հնչյունների նկարագրության համար հիմք ենք ընդունում փորձառական հետազոտությունների արդյունքները՝ հենվելով Գ. Шарбатов, Современный арабский язык, М. 1961, А. Ковалев, Г. Шарбатов, Учебник арабского языка, М., 1969, Ա. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, աշխատությունների տվյալների վրա:

13. В. Э. Шагаль, Языковой аспект национальных процессов в арабских странах, с. 9

14. М. эль-Массарани, В. Сегаль, Арабского-русский словарь сирийского диалекта, с. 17.

15. Որպես Սիրիայի բարբառային ձևեր բերվում են գրականից տարբերվողները:

mišmiša «ծիրան», տարբուշ - ʔarbūš «զվարկ», **x** - խըշղ - xušt «նիզակ», մասխարու «ծաղրածու» - masxara «1. ծաղրի առարկա 2. դիմակ», բեղ^hէխ - baṭṭiḥ ʾašfar «սէխ», **ġ** - ղւրբււ «արևմտյան հով» - ġarb «արևմուտք», բաղ-բաղան - babbagāʾ «թութակ», լաղըմ - laġam «ական» (ġ-ն փոխառությունների բառավերջում չի հանդիպում), **h**-հավու - hawaāʾ «օդ», քահրիբար - kahrābāʾ «սաթ», թենբ^mօհ «զգուշացում» - tanbīh:

Արաբերենի **m**, **n**, **l**, **y** ձայնորդները նույնպես հայերենի համեմատությամբ հնչարտաբերական և գործառական յուրահատկություններ չեն ցուցաբերում, միայն **l**-ն ունի ավելի փափուկ արտասանություն. **m** - մինն - mīnāʾ «նավահանգիստ», ջմմա - jumla «ամբողջը», նիզամ - nizām «կարգապահություն», **n** - նիկնի «կաթիլ» - nuqṭa Միբ. բար. nīʿta, բինա - bināʾ «շենք», զէման - zamān «Ժամանակ», **l** - լըբ^mօու - labūs «ապուր», հալըզուն - ḥalazūn, Միբ. բար. ḥalazōn «խիտուն», ֆաթիլ - faṭīl «պատրույզ», **y**-յունի - yaʿnī «այսինքն», խայալ - xayāl «ուրվական»:

Արաբերենի **r** ձայնորդն հնչարտաբերական հատկանիշներով ավելի մոտ է *ռ*-ին: Անտիոքի բարբառախմբում, որտեղ գործառում են և՛ *ռ*-ն, և՛ *ր*-ն, հիմնականում այն համապատասխանում է *ր*-ին և բառասկզբում ձայնավորային հենարան, ինչպես հայերենին է հատուկ, ոչ միշտ է ստանում. րահուն - riḥān «ռեհան», շըրըղ - šarīṭ «Ժապավեն», ջուրաբ - jaurab «գուլպա», խումար - xumār «բախտախաղ», րըրօզ - ʾurz «բրինձ», ըրօպ - rubʿ «քառորդ», րըրօբ, ռուպ - rubʿ «ռուպ», խումուն - qurna «անկյուն»: Ըստ Հ. Չոլաքյանի *ր* ձայնավորային հենարանով բառաձևերն ավելի հին փոխառություններ են¹⁶: Այսինքն՝ հայերեն հիշյալ բարբառները բառասկզբի *ր*-ի ձայնավորային հենարան ստանալու ավանդույթն արդեն կորցրել են:

Հայերեն բարբառների արաբերեն փոխառություններում **w** հնչյունը և՛ բաղաձայնային, և՛ երկբարբառային դիրքերում արտահայտված է որպես *վ*/բաղաձայն: Հավանաբար պատճառն այն է, որ արաբերենի **w**-ն հիմնականում գործառում է որպես ձայնեղ շփական բաղաձայն. վալա-բիլա- waʾallah biʾallah «իրավ որ, Աստված վկա», բեդեվի - badawī «բեդվին», հավըշ - ḥawuš «բակ»:

Արաբերենի բաղաձայնական ենթահամակարգը, Անտիոքի բարբառախմբի հետ որոշ ընդհանրություններ ցուցաբերելով հանդերձ, ունի նաև հստակորեն առանձնացող յուրահատկություններով հնչյուններ, որոնք հաճախ դարձյալ նույնացել են քննվող բարբառների այս կամ այն հատկանիշով նման հնչյուններին: Հայերենը չունի միջատամնային ձայնեղ **d** և խուլ **t** շփականներ, որոնք հնչարտաբերական հատկանիշներով նմանվում են անգլերենի ձայնեղ *th*-ին [ð], օր.՝ this «այս» և խուլ *th*-ին [θ], օր.՝ thing «իր»: Միրիայի բարբառում **d**-ն, արտաբերմամբ պարզեցվելով, նույնացել է տվյալ համակարգի պարզ ձայնեղ շփական **z** -ին: Հիշյալ բարբառախմբում ևս այն

16. Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Ե., 2009, էջ 22:

արտացոլված է *q*-ով: Դրանով փոխառյալ բառերը մի քանիսն են. *üqün* «մուլայի աղորթ» - 'adān «աղորթի կանչ», *üqün qhñşih* - 'adān «աղորթի կանչ», *üqüp* - 'adāb «տառապանք: Իսկ *t* բաղաձայնն իր արտասանական հատկությունը պահպանում է գրական արաբերենի իրաքյան, բայց ոչ եգիպտական, սիրիալիբանանյան տարբերակներում, որոնցում հաճախ արտասանվում է շնչեղ խուլ հպական *t* կամ շփական *s*¹⁷: Քեսաբի խոսվածքում, որում արաբական փոխառությունները մյուսների համեմատ ավելի շատ են, այն հանդիպում է ընդամենը մի քանի փոխառյալ բառում: Ընդ որում, բառակցում և բառավերջում՝ բաղաձայնից հետո, համապատասխանում է *թ-ին*՝ *թեռթ* - տւթ, Սիր. բար. տւթ «մեկ երրորդ», իսկ միջձայնավորային դիրքում և բառավերջում՝ ձայնավորից հետո՝ *ս-ին*. *misūl* - matal, Սիր. բար. matal «1.օրինակ, 2.ասացվածք, առակ», *mirāṭ* «Ժառանգություն»:

Արաբերենի խոչակային խուլ շփական *h*-ն այս բարբառներում փոխարինվել է հիմնականում հայերենի կոկորդային խուլ շփական *h*-ով. *h^mol* - haqq «իրավունք», *maḥrūm* «զրկված», *maḥrūh* «համրիչ» - tasbīḥ «1.փառաբանում, 2.տերողորմյա, համրիչ»: Իսկ բառամիջում և բառավերջում *h*-ն որոշ փոխառություններում համապատասխանում է հայ. *խ* խուլ շփականին. *maḥkama* «դատարան», *maḥlaḥ* / *maḥlaḥ* - maḥlaḥ «լայն վերնագգեստ», *maḥlaḥ* - 'aflaḥa «1.հաջողություն ունենալ, 2.բախտավորվել»: Հարկ է նշել, որ Սիրիայի բարբառում *h*-ն պահպանվել է. *maḥkame*, *maḥlaḥ*:

2.Արաբերենի *ḍ*, *ṭ*, *ḏ*, *ṣ* բաղաձայնների շարքը բնութագրվում է որպես վերատամնային, վերհատութային (ուժգնային) հնչյուններ, որոնք Սիրիայի բարբառում պահպանվել են: Չայնեղ հպական *ḍ*-ն Անտիոքի բարբառախմբում ձայնավորից առաջ և միջձայնավորային դիրքերում համապատասխանում է *դ-ին*, իսկ բաղաձայնից առաջ՝ *զ-ին*. *ḍaḡṭ* «ճնշում», *ḍarba* «հարված», *ḍaḡṭ* «դատավոր», *ḥaḍm* «պատրաստ» - ḥaḍīr «1.ներկա 2.ընթացիկ», *ḥaḍm* «մարսողություն»: Խուլ հպական *ṭ*-ն Անտիոքի բարբառախմբի փոխառյալ բառերում հիմնականում դարձել է շնչեղ խուլ հպական *թ*. *ṭabaq* «պնակ», *ṭabarṭ* - barṭīl «կաշառք», *ṭabarṭ* - šarṭ «պայման, պահանջ»: Կան նաև *ṭ*-ով (բառավերջում դրա գործածության օրինակ առկա չեն) և *դ*-ով համապատասխանություններ՝ *ṭabarṭ/ṭabarṭ* - ṭarbūš «զլխարկ», *ṭaḡṭa* «կետ», *ṭaḡṭa* - ifṭār «նախաճաշ», *ṭaḡṭa* - «1. հագուստ, 2. ատամնաշար» - ṭaqm «1.լրակազմ, 2. կոստյում», *ṭaqm al-'asnān* «արհեստական ատամնաշար»,

17. В. Шагаль, Языковой аспект национальных процессов в арабских странах, с. 96.

նիկդի - nuqta «կաթիլ», *շրրըդ* - šarīt «ծապավեն»: Միրիայի բարբառին հատուկ է արաբերենի ձայնեղ շփական *ž* –ի ինչպես պահպանումը, այնպես էլ *ž > ɟ* հնչյունափոխությունը՝ *naɟar*: Հիշյալ փոխառություններում *ž* –ն հանդիպում է միայն բառամիջում, այն էլ՝ մի քանի բառում և արտասանությամբ պարզեցվելով՝ նույնացել է հայերենի *q*-ին. *նազար* - *naɟar* «1.տեսողություն, 2.հայացք», Միր. բար. *naɟar*, *նիզամ* - *nizām*, Միր. բար. *nizām* «կարգապահություն»: Խուլ շփական *ʃ*–ն քննվող փոխառություններում նույնացել է *u-ի*ն. *սահի* - *šahi* «իրավ», *մախսու* «մասնավոր» –*maxsūs* - «հատուկ, յուրահատուկ», *նունլ* - *ʿuṣl* «կանոն, կարգ»: Միրիայի բարբառը պահպանել է *ʃ*-ի գրական արտասանությունը՝ *šahi*:

Արաբերենի՝ վերը նկարագրված բաղաձայնները Անտիոքի փոխառյալ բառերում նույնացել են այդ տարածքի հայերեն բարբառների համապատասխան հնչյուններին: Բայց արաբերենն ունի նաև *q* (կաֆ) *ħ* ‘(այն) բաղաձայնները, որոնք հայերենին խորթ են հնչարտաբերական իրենց գրեթե բոլոր հատկանիշներով: Խոր հետնաքիմքային խուլ պայթական *q* բաղաձայնն արտաբերվում է որոշակի ուժգնությամբ և արտաբերական ապարատի լարումով: Միջքիմքային *k* -ից տարբերվում է արտաբերման տեղով և լարվածության առկայությամբ ու շնչեղության բացակայությամբ և ունի գործառության բարձր հաճախականություն: Այն փոխառություններում նույնությամբ պահպանվել է. *կարար* - *qarār* «որոշում», *ինթիկամ* - *intikām* «վրեժ», *թասդիկ* «1. փաստ, 2. փաստացի» - *taṣḏīq* «1. հավատ, 2. Վավերացում»: Օտար այս հնչյունը, ամրանալով Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգերում, սկսել է ի հայտ գալ հայերեն բառերում նույնպես՝ փոխարինելով հետնաքիմքային խուլ *q*-ին, որը ծագում է հինհայերենյան *q*-ից (*q < q*). *կըմիլ* «գտնել», *կըլօխ/կըլօխ* «զուլխ», *կուրծ* «գործ», *կուրտ* «գորտ» և այլն: Արաբերենից փոխառյալ *q*-ն, ինչպես երևում է *կ/կըլօխ*, սանտոլ/խ/կ «սանդուղք», *կ/զըրտ/դիմ* «կտրեմ» և այլն զուգաձևություններից, ինքնուրույն հնչույթ չէ և համապատասխան բաղաձայնների հետ հնչույթային հակադրություն չի ստեղծում: Փոխառություններում առկա են նաև հիշյալ օրենքից եզակի շեղումներ. *q > q*՝ *հուլ^moq* - *ḥalaq* «օղակ», *q > ɟ*՝ *խունուն* - *qurna* «անկյուն»: Արաբական բարբառներում, այդ թվում նաև՝ Միրիայի, *կաֆը* (*q*) փոխարինվել է մեկ այլ բաղաձայնով՝ *համզայով* (‘)¹⁸. գրակ. *qatqat* - Միր. բար. *ʿatʿat* «ժլատ», գրակ. *fauqa* - Միր. բար. *fōʿ* «վերևում»:

Համզան (‘) խուլ հպական խոչակային բաղաձայն է, որի արտասանության ընթացքում ձայնալարերը միմյանց հպվում են և օդի հոսանքի ուժգին արտամղումով բացվում: Միրիայի բարբառում այն ավելի հաճախ առկա է բառասկզբում և բառավերջում, իսկ Անտիոքի փոխառություններում չի պահպանվել. *նունլ* - *ʿuṣl* «կանոն, կարգ», *բինա* - *bināʿ* «շենք»: Միջձայ-

18. В.Э. Шагаль, Языковой аспект национальных процессов в арабских странах, с 59-60.

նավորային դիրքում և՛ Անտիոքում, և՛ Սիրիայի բարբառում դրա փոխարեն *յ* կիսաձայնն է ի հայտ գալիս, որը կարելի է համարել նաև ձայնավորների միջև առաջացած հորանջը վերացնող հնչյուն. *խայրն* - xā'in, Սիր. բար. xayen «դավաճան», *դայման* - dā'iman «միշտ»:

Արաբերենից փոխառյալ մյուս բաղաձայն հնչյունը՝ *հ*¹⁹, կոկորդային ձայնեղ շփական այնն (') է¹⁹: Հնչարտաբերական հատկանիշներով այն արաբերենի ամենաբարդ հնչյունն է. վերջինիս արտաբերման ընթացքում խոչակի մկանները լարված են և կիպ հպվում են միմյանց: Դադարից հետո տեղի է ունենում մկանների ակնթարթային թուլացում, և օդի դուրս մղումով ձայնալարերը թրթռում են, որի հետևանքով այդ հնչյունը արտաբերվում է որպես ձայնեղ բաղաձայն: Սիրիայի բարբառում այնը (') առկա է բառի բոլոր դիրքերում, իսկ Անտիոքի բարբառախմբում՝ միայն բառամիջում. *մահիդու* - ma'ida «ստամոքս», բայց՝ *ալլամ* - 'aalam «մարդկություն», *ռրբոբ* - rub' «քառորդ»:

Ընդհանուր արաբերենի հնչյունական համակարգում գործառում են նաև տևական բաղաձայններ, որոնք Անտիոքում արտացոլված են որպես այդպիսիք, քանի որ հայերենի տարածքային այս տարբերակին նույնպես, գուցե հենց արաբերենի ազդեցությամբ, հատուկ է նմանատիպ արտասանությունը, բայց միայն՝ բառամիջում. *կուբբա* - qubba «զմբեթ», *ամմ* - 'amm «1. հորեղբայր, 2. աներ», *իլլա* - 'illā «բացառությամբ»: Իսկ բառավերջում բաղաձայնների տևականությունը չի պահպանվում. *յարաբ* - yā rabb «ո՛վ Աստված», *շակ* - šaqq «շերտ, ճեղք»:

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքներից ելնելով, կարող ենք անել որոշ եզրակացություններ:

Արաբական փոխառություններն, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, հիմնականում կատարվել են Անտիոքի բարբառախմբում հպական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունից հետո, քանի որ դրանցում արաբական հնչյունների ձայնաբանական հատկանիշները նշված հնչյունափոխության չեն ենթարկվել: Դրանք՝ որպես հայերենի խնդրո առարկա տարածքային տարբերակների հնչյունական համակարգերի անդամներ, ենթարկվում են միայն բառում դիրքից կախված տվյալ համակարգին բնորոշ փոխազդեցական հնչյունափոխության, ինչպես՝ *ն*-ի մոտ խուլերի ձայնեղացում, իսկ *բ*-ից հետո՝ ձայնեղների խլացում և այլն:

Արաբերեն այն հնչյունները, որոնք հնչարտաբերական հատկանիշներով բավական մոտ կամ նման գծեր են ցուցաբերում վերոհիշյալ բարբառախմբի բաղաձայններին, վերջիններիս հետ նույնացել են: Դրանք հիմնականում շփականներն ու ձայնորդներն են: Համապատասխան հնչյուններով

19 . Ն. Չոլաքյան, Քեսաբի բարբառը, Ե., 2009, էջ 16:

են փոխարինվել նաև մեկ-երկու հատկանիշով հայկականին նմանվող արաբերենի միջատամնային *ḍ*, *ṭ* և վերհատության *ḍ*, *ḏ*, *ṣ*, *ṭ* բաղաձայնները:

Ուշագրավ է, որ *կաֆ* (q), լինելով զուտ գրական արաբերենի հնչյուն, որը գործառու է հատկապես մտավորականների խոսքում²⁰, իսկ խոսակցական տարբերակներում և բարբառներում փոխարինվել է համզայով, ըստ Հ. Չոլաքյանի՝ պահպանվել է Քեսաբի խոսվածքում՝ խուլ *ḳ*: Սակայն Անտիոքի բարբառների մյուս հետազոտողները (Տ. Անդրեասյան, Ա. Փաշայան, Ա. Հանեյան, Գ. Հանանյան) դա ներկայացնում են հայերեն ձայնեղ շփական *ḳ'-ով*: Մինչդեռ Հ. Չոլաքյանը այդպես տառադարձում է Քեսաբի խոսվածքում մի քանի բառերով վկայված մեկ այլ հնչյուն՝ *այնը* (‘), որը նշված հեղինակները որևէ ձևով չեն առանձնացնում: Ընդհանրապես հայերեն բարբառների փոխառություններում *կաֆ* (q) միատեսակ չի արտացոլվում: Արաբախոս տարածքների հայերեն խոսվածքներում այն ունի արաբերենին մոտ արտասանություն և տառադարձվում է խուլ *ḳ'-ով* կամ ձայնեղ *ḳ'-ով*, իսկ մյուսներում նույնանում է հայերեն *կ*, *ղ*, *խ* հնչյուններին: Դա առաջին հերթին գուցե պայմանավորված է *կաֆ* (q) արտաբերման տեղով (խոր հետնաքիմքային), որը միջին դիրք է գրավում հետնալեզվային *կ*-ի և փափկաքիմքային *ղ*-ի, *խ*-ի միջև:

Հին հայերենի համեմատությամբ, Անտիոքում, ինչպես վերը նշվեց, ավելացել է նաև *ջ* շփականը, որով կան բավական թվով փոխառություններ և՛ արաբերեն, և՛ հարևան մյուս լեզուներից: Սակայն տեղի հայերեն բարբառներում դրա կայունացմանը, կարծում ենք, նպաստել է նաև արաբերենը:

Արաբերենի ազդեցություն է, հավանաբար, փոխառյալ բառերի սկզբում շփական *ր* բաղաձայնի գործածությունը՝ առանց ձայնավոր հենարանի:

Անտիոքի հայ բնակչությունը, հարյուրավոր տարիներ սերտ շփումներ ունենալով Միրիայի արաբների հետ, բնականաբար, կատարել է անմիջական փոխառություններ: Դրանց մեծագույն մասը առօրյա խոսակցական բառապաշարից վերցված ձևեր են: Սակայն տեղի՝ Միրիայի բարբառի կրած բաղաձայնական փոփոխությունները քիչ դեպքերում են արտացոլվել այդ փոխառություններում:

Микаелян Сона– Отражение арабских согласных в антиокских армянских диалектах. – Арабские заимствования вошли в антиокские армянские диалекты после завершения в последних функционирования исторического закона смычных передвижение-переход (*р>щ*, *щ>р*). В этих словах арабские согласные в основном заменились соответственными фонемами антиокских армянских диалектов. Лишь два арабские согласные - айн и каф, сохранили свои артикуляционные свойства. Более того, каф (**q**) вошел в фонетическую систему названных армянских диалектов, заменяя глухого смычного *ḳ* в некоторых позициях.

20. В. Э. Шагаль, Языковой аспект национальных процессов в арабских странах, с. 59.

Տեր-Գրիգորյան Լիլիթ
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ
Մկրտումյան Անահիտ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

**ԳՈՒՆԱՆՈՒՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՀԱՅ ՏԱՐԱԾՔԻ
ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՕՐՀԱՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՆԵԾՔՆԵՐՈՒՄ**

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի գունային իր խորհրդանիշները, որոնք ձևավորվել են վաղնջական ժամանակներից: Անցնելով տարբեր մշակույթների ու կրոնական պատկերացումների բովով՝ գույների նշանակությունները, անշուշտ, փոփոխությունների ենթարկվել են, սակայն ժողովրդի գունամտածողությունը պահպանել է նախնական շերտը՝ հարազատ մնալով գունային խորհրդանիշների վաղնջական ընկալմանը [տե՛ս *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, էջ 28]: Այդ պատկերացումներն իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ տարազներում, զարդանախշերում, կենցաղային արարողություններում, նաև լեզվում: Բնական է, որ լեզուն, որպես ժողովրդի կյանքի հայելի, չէր կարող չարտացոլել ժողովրդական ընկալումների ու պատկերացումների այս շերտը: Խորհրդանիշը, տվյալ դեպքում՝ գունային խորհրդանիշը, որպես պատկերային վերացական և այլաբանական մտածողության բաղադրիչ, իր ազդեցությունն է ունեցել ժողովրդի բառուբանի վրա, այսինքն՝ բանահյուսական մանրապատում ստեղծագործությունների, լեզվական կայուն, վերախմաստավորված միավորների վրա, ինչպիսիք են դարձվածքները, առածներն ու ասացվածքները, օրհնանքներն ու անեծքները, խաղիկները և այլն: Հայերենի տարբերակներում, ինչպես հայտնի է, առավել խորն են արտացոլված տվյալ տարածաշրջանի հանրության մեջ ընդունված հավատալիքներն ու դրանց առնչվող ավանդույթները, աշխարհընկալումն ու պատկերացումները. այդ բոլորը սերտ միասնություն են կազմում: Եվ պատահական չէ, որ շատ հաճախ հենց տվյալ բարբառային միավորի միջոցով է հնարավոր լինում վերականգնել, հիմնավորել չպահպանված կամ արդեն գոյություն չունեցող սովորությունների և պատկերացումների ընդհանուր նկարագիրը:

Սույն աշխատանքում փորձ է արվել դիտարկելու գունանունների ընդգրկումն ու նշանակությունները պարսկահայ տարածքի խոսվածքների օրհնանքներում և անեծքներում՝ նկատի առնելով նաև դրանց փոխկապվածությունը ծիսակարգերին: Պարսկահայ խոսվածքները գրեթե ուսումնասիրված չեն: Այդուհանդերձ, այն փշրանքները, որոնք հնարավոր է եղել հավաքել, թույլ են տալիս ազգագրական և բանահյուսական-լեզվական շատ սակավ տվյալների համադրության ու վերլուծության ճանապարհով, թեկուզ առանձին պատառիկներով, վերականգնելու մեր ժողովրդի՝ իր արմատից

կտրված այդ հատվածի ունեցած և երկար ժամանակ պահպանել կարողացած յուրահատուկ լեզվամտածողությունը: Այս տեսանկյունից նույնիսկ ամենափոքր ուսումնասիրությունը ոչ միայն նորություն է այդ բնագավառում, այլև որոշակի երանգ կարող է հաղորդել պարսկահայության ազգային նկարագրի վերականգնման խճանկարում՝ հնարավորություն տալով անգամ ենթադրություններ կատարելու Արարատյան դաշտավայրում ապրողների լեզվամտածողության մասին: Ի դեպ, պարսկահայ տարածքին վերաբերող ցանկացած ուսումնասիրություն արժևորվում է նաև այնքանով, որ այս խոսվածքները, ցավոք, անհետացման եզրին են:

Հարկ ենք համարում նշել, որ <<Հայերենի բարբառագիտական ատլասի>> ծրագիրը սույն ուսումնասիրության վերաբերյալ նյութեր չի ընդգրկում: Այդ բացը ինչ-որ չափով լրացվել է սեփական նախաձեռնությամբ. ուսումնասիրվող տարածքի մի շարք խոսվածքներ այդ ծրագրով լրացնելու ընթացքում գրառել ենք բավականաչափ հավելյալ նյութ, որն էլ օգտագործվել է սույն ուսումնասիրության մեջ:

Ի՞նչ նկատի ունենք *պարսկահայ տարածք* ասելով: Պատմությունից հայտնի է, որ Պարսկաստանում հայկական գաղթավայրեր ստեղծվել են դեռևս 10-11-րդ դարերում: Այդ գաղթավայրերը մեծացել ու համալրվել են Շահ-Աբասի կողմից բռնագաղթի ճանապարհով: Նա Արևելյան ու Արևմտյան Հայաստանից մեծ թվով գերիներ է տարել և վերաբնակեցրել Սպահանում ու նրա շրջակայքում:

Հ.Աճառյանը իր <<Քնություն Նոր Ջուղայի բարբառի>> մենագրության մեջ գրում է. <<Ամբողջ այս շրջանի հայությունը հայախոս է և իր բարբառի կողմից բաժանվում է երկուսի. <<Ամբողջ հյուսիսային մասը՝ Էնգելիից մինչև Նոր Ջուղա, խոսում է մեկ բարբառ, որ շատ նման է Արարատեան (Երևանի) բարբառին: Այս միևնույն բարբառին են ենթարկվում նաև Թավրիզի բնիկները (Ղալա թաղ) և յետոյ Հյուսիսային Կովկասի մեջ՝ Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի և Մաճառի հայերը: Այս բարբառը կարելի է կոչել պարսկահայ անունով:

Սկսած Նոր Ջուղա քաղաքից մինչև Ջավա՝ խոսում է մի ուրիշ բարբառ, որ կոչվում է Նոր Ջուղայի բարբառ և տեղացոց մեջ յայտնի է ջուղացվար անունով>> [Հ.Աճառյան, էջ 17]:

Մեր ուսումնասիրությունը վերաբերում է Էնգելիից մինչև Նոր Ջուղա ընկած տարածքի խոսվածքների լեզվական իրականություններին: Գ.Ջահուկյանն իր <<Հայ բարբառագիտության ներածություն>> աշխատության մեջ քննում է այս տարածքի խոսվածքները՝ կոնկրետ Չիվանահալ գավառի Լիվասյան գյուղի օրինակով՝ բազմահատկանիշ դասակարգմամբ այն ընդգրկելով Ջուղայի բարբառի մեջ, իսկ ձևաբանական դասակարգմամբ դրանք պատկանում են <<-ուս>> ճյուղին [Գ.Ջահուկյան, էջ 135]:

Ժողովրդական գունամտածողության մեջ տարբերակվում են հետևյալ հիմնագույները՝ *կանաչ, կարմիր, կապույտ, դեղին, սև, սպիտակ* [Հայ ազգագրություն և բանահյուսություն, էջ 30]: Գույների խորհրդանշային

իմաստները նոր երևույթ չեն. դրանք որպես փոխաբերական իմաստներ տեղ են գտել նաև բառարաններում. այսպես՝ Էդ. Աղայանի <<Արդի հայերենի բացատրական բառարանում>> ուղիղ իմաստից բացի՝ **սև** գույնն ունի <<մռայլ, չարագուշակ, չարագույժ, դժնի, հոգսերով լի (սև օր), բացասական, դժբախտ, անգուրթ, կեղտոտ, սգի խորհրդանշան>> իմաստները, **կարմիրը**՝ <<առողջ, երջանիկ, բախտավոր>>, բայց նաև՝ <<արյուն>>, **կանաչը**՝ <<թարմ, դալար, չորացած, մատղաշ>>, **սպիտակը**՝ <<մաքուր, ջինջ, պարզերես, մաքուր խղճով>>, **դեղինը**՝ <<գունատ, դժգույն, դալուկ>>, բայց նաև՝ <<մաղձոտ, թունոտ>> իմաստները և այլն [Աղայան Է., էջ 1292, 709, 683, 1323, 287]: Հոգվածում կղիտարկենք դրանցից միայն երեքը՝ **կարմիր**, **կանաչ** և **սև** գունանունները, որոնք իրենց խորհրդիմաստներով հակադիր են և հաճախ կազմում են <<հականիշներ>> օրինանք-անեծք հակադրագույզեր:

Գունամտածողության համակարգում հետաքրքրական է նաև հայերի վերաբերմունքը **պայծառ** և **մուգ** գույների հանդեպ. պայծառ գույները դիտվում են որպես դրական, իսկ մուգերը՝ բացասական: Պայծառ և մուգ գույների հակադրությունը հայերի մտածողության մեջ արտահայտել է նաև տարիքային տարբերությունը, ինչը դրսևորվել է հատկապես հագուստների գույների ընտրության պարագայում. այսպես՝ **կարմիրը** և **կանաչը** բնորոշ էին երիտասարդ տարիքին՝ հատկապես նորապսակներին, իսկ **սևը** և **կապույտը**՝ հասակն առած մարդկանց կամ ծերերին [Հայ ազգագրություն և բանահյուսություն, էջ 31]: **Կարմիրը** արյան գույնն է, խորհրդանշում է կյանքը, ուստի ժողովուրդը կարմիր գույնի հետ էր կապում լավագույն սպասումները. **կարմիր** հայերենում նշանակել է <<լավ>> և դրսևորվել է մի շարք դարձվածային արտահայտություններում՝ **կարմիր հաց** <<լավ թխած հաց>>, **կարմիր օր** <<լավ օր>>, **կարմիր հարս** <<նշանված աղջիկ>>, **կարմիր գոգնոց** <<կին>>, **կարմիր թել /նոխտա/ կապել** <<նշան դնել>>, **կարմիր կանչել** <<հարսանիքում փեսայի համար դրամ հավաքել>> և այլն: Համանման իմաստով այդ գույնը դրսևորվել է նաև օրինանքներում, տվյալ դեպքում՝ պարսկահայ խոսվածքներում՝ **բ'արօվ կապ'են կարմիրըդ, բ'արօվ դ'ու էլ դաքվօր ըլնենաս, կապ'ենք կարմիրըտ** և այլն, որոնք ասվում են չպսակվածներին (թեև կա նաև այդ գույնի անեծքի մեջ արտահայտություն՝ **կարմիր գուլուլ ուտ'էս**. այստեղ դրսևորվել է **կարմիրի**, որ նույնն է՝ **արյան**՝ որպես մահվան, այլ ոչ թե կյանքի խորհրդանշան իմաստը):

Կարմիր գունանվանը շատ բնութագրական է պսակադրության խորհրդիմաստը. այն հարսանեկան ծիսակատարության անբաժան մասն է կազմել նաև Պարսկահայքում: Այդ խորհրդիմաստի վրա են խառնված այն օրինանքները կամ անեծքները, որոնք վերաբերում են մարդու կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկին՝ պսակին: Այսպես՝ արարողությանը մասնակից կանայք հարսին համամից (բաղնիքից) դուրս բերելուց հետո գլխին **կարմիր քող** էին գցում, հարսի տուն գալուց և հարսի շորերը հագցնելուց հետո գլխին գցում էին սպիտակ քող, իսկ վրայից՝ **կարմիր թաշկինակ**՝ <<պամբիրի>>: Փեսային տնից հանելուց և աներոջ տուն գնալուց

առաջ մայրը *կարմիր ժապավեն* էր կապում նրա պարանոցին, փեսայի կրծքին ոսկեգույն սադափներով ծածկված *կարմիր թաշկինակ* էին ամրացնում, որն էլ հենց իրականացումն էր *բճարով կարմիրը կապեն* օրհնանքը. օրինակ՝ *բճարով կապէք Արթունի կարմիրը, բճարով Վարթունշին էլ հարս շինէք*:

Կանաչը խորհրդանշել է թարմության, հավերժ երիտասարդության, կյանքի շարունակականության, հետևաբար այն ևս ընդգրկված է օրհնանքների մեջ՝ *ճէճորտ կանանչի, ճէճորտ դ՛ալարի, մէճկըտ կանանչ* (որ ասվում էր ջահել հարսին՝ շատ գավակներ ունենալու մաղթանքով): Համանման խորհրդիմաստով կանաչ գունանունը դրսևորվել է նաև պարսկահայ խոսվածքների օրհնանքներում՝ *պատարաքի օշնությունը կանանչ արէվիտ ըլնէնա, ճէճորտ դալար մընա* և այլն, թեև կարող է դրսևորված լինել նաև անեծքներում, այսպես՝ *չիր կանընչի* <<երանի չկանաչեիր>>: Ինչպես նկատում ենք, ժխտական ձևի գործածությամբ օրհնանքը վերածվել է անեծքի:

Ժողովրդական պատկերացումներում, համապատասխանաբար՝ դարձվածքներում և օրհնանքներում, հաճախ է հանդիպում *կարմիր* ու *կանաչ* գույների համադրությունը, ինչպես օրինակ՝ *բճարով կապէս խիզնիտ կանանչ-կարմիրը, բճարով դաքօր շինէք, կապէք կանանչ ու կարմիրը, բճարով դու՛ էլ կապէս քու խիզնանց կանանչ-կարմիրը* օրհնանքները, որոնք դարձյալ իմաստի խորքում առնչվում են մի կողմից՝ գույների ունեցած խորհուրդին, մյուս կողմից՝ ծիսակատարության ժամանակ գործածվող իրերին. *կանաչ-կարմիր* էին ամուսնության՝ միության խորհրդանշել համարվող <<մետաքսե թաշկինակները, որոնք խաչաձև կապվում էին փեսացուի ուսով>>. հաճախ դրանք հենց *կանանչ-կարմիր* էլ կոչվում էին: Խնամախոս գնալիս կանաչ-կարմիր թելերով պարսկահայերը շաքարի կտորի վրա կապում էին հարսի մատանին, որը, ի դեպ, կանաչ քարով պետք է լիներ: Կանաչն ու կարմիրը միասին խորհրդանշում էին կյանքի շարունակականությունը՝ սերնդափոխությունը՝ ծլելը, ծաղկելը, բազմանալը. համեմատենք՝ *ծըլէս ծախկէս, բճարով հայս շինէք, ծըլի ու ծախկի, գօրանաս, ծըլէս ու ծախկէս, համիշա տունըտ լիքըն ըլնէնա...*, կամ՝ *ծախկած ծառ ըլնէնաս*, օրհնանք, որ ասվում էր տղային, *ծախկած տու՛ն ըլնէնաս*, որ ասվում էր աղջկան¹: Պատահական չէ, որ հարսանեկան խաղիկներում էլ այդ գունանունները գործածվել են համանման խորհրդիմաստով. *Ծառըտ ծախկեցավ, ճուղկը բազմացավ կանանչ ու կարմիր*:

¹ Ի դեպ, օրհնանքներն ու անեծքները որոշակի մասնավորումներ են ունեցել ոչ միայն այն առումով, թե ու՛մ են հասցեագրված՝ երիտասարդ տղային, աղջկան, երեխային, այլև այն տեսանկյունից, թե ու՛մ կողմից է ասվում. անեծքներ, որոնք աղջիկներն են ասել միմյանց, տղամարդիկ են ասել միմյանց և այլն:

Գունանունների այդ գույգը գործածվել է նաև *կանանչ ու կարմիր զեղինը դայիմ տօտա՛*՝ օրինանքի մեջ, որն ասվում է նոր քայլել սովորող երեխային՝ հավանաբար <<կանաչ ու կարմիր աշխարհով ամու՛ր քայլիր (գուցե՛՛ ն ծղի՛ր ու ծաղկի՛ր)>> իմաստով:

Հակառակ *կանաչ* ու *կարմիր* գույների՝ *սևը*, իր խորհրդիմաստով պայմանավորված, ձևավորել է գերազանցապես անեծքներ՝ *ս՜եկ ու կապուտ ըլնէնաս* (սա մեզ հանդիպած միակ անեծքն է, որի մեջ տեղ է գտել *կապույտ* գունանունը), *ս՜եկ սէլավը ք՜եզ տանի, օր ու արժէվըտ ս՜եկ ըլնէնա, ս՜եկ քուն մըտնէս, ս՜եկը տանի ք՜եզ, ս՜եկ ու սաստիգ վէր գ՛ա գ՛ըլխիտ* (ի դեպ, տարիների ընթացքում մեր/իմա՝ Անահիտ Մկրտումյանի/ կողմից իրականացրած հավաքչական աշխատանքների ժամանակ *սաստիգ* բառը գոյականական արժեքով՝ <<արհավիրք, փորձանք>>, հանդիպել է միայն պարսկահայ խոսվածքներում), *անունըտ ս՜եկ քարին գ՛ըրվի, ս՜եկաթաթախ ըլնէնաս, օրըտ ս՜եկ ըլնէնա* և այլն: Սևը գույներից ամենամութն ու մռայլն է և ընկալվել է միայն բացասական իմաստով՝ մարդու համար վնասաբեր. *սև գիր, սև օր, սև քար* և նման այլ արտահայտությունները ևս ակնարկում են *սև* գույնի կապը մի դեպքում՝ <<չար բախտի>>, մյուս դեպքում՝ <<մահվան, հողի, անդրաշխարհի հետ>>: Հր. Աճառյանը գտնում է, որ *սև* բառի իրանական փոխառություն լինելը մեկնվում է արգելքով՝ թաքուով. <<Արդի բերբերական լեզուների մեջ, - գրում է նա,- ընդհանրապես խուսափում էին արտասանել <<սև>> բառը, և ամեն մի գավառ ունի այս բառն արտահայտելու մի առանձին ձև: Դրա համար է, որ հնդեվրոպական լեզուների մեջ չկա <<սև>> իմաստով ընդհանուր բառ>> [Աճառյան Հ., էջ 186]: Լ. Սարաջևան հայտնում է այն տեսակետը, որ *սև* անվանումը նախապես կարող էր ունենալ <<մութ>>, <<կեղտոտ>>, <<բծերով ծածկված>> նշանակությունը և փոխաբերական իմաստով նշանակել <<մահ>>, <<ղժբախտություն>> [Շարաձևեա Մ., շ. 93]: *Սև* գունանունը պարունակող ստորև բերվող անեծքները ձևավորված են *կանաչ* ու *կարմիր* գույների խորհրդիմաստներով՝ պայմանավորված համապատասխան ավանդույթների հիման վրա և օրինանք-անեծք հակադրագույգեր են կազմում *կանաչ ու կարմիր* գունանուններ պարունակող օրինանքների հետ: Ըստ Հր. Աճառյանի՝ *օրհնանք* նշանակում է <<բարեմաղթանք>>, իսկ անեծքն ունի դրա հակադիր իմաստն ու նպատակը. այն նշանակում է <<նզովք, բանադրանք, հանդիմանություն, նախատինք, ատելություն և այլն>> [Աճառյան Հ., 1979, էջ 619, 1971, էջ 193]: Այս առումով գրական հայերենում, ինչպես նաև պարսկահայ խոսվածքներում, հանդիպում է այսպիսի հակադրության երկու ձև. մի դեպքում ծիսակարգում կան երևույթներ, առարկաներ, որոնք ուղղված են անձին օրհնելու և բարեմաղթանքի նյութական խորհրդանիշ են, սակայն լեզվում դրանք օրհնանքի ձևով արտացոլված չեն, այսինքն՝ լեզվական մարմնավորում չունեն, մյուս դեպքում՝ լեզվում դրսևորված կա և՛ օրհնանքը, և՛ նրա հակադիր միավորը՝ անեծքը. օրհնանքով մաղթում ես, որ մարդն ինչ-որ հաջողություն ունենա, իսկ անեծքով նզովում

ես, որ չունենա, կամ ունենա անհաջողություն: Համեմատենք՝ *ս՜էվ լաչիզ գ՛ըք՛էս/գ՛ըլիսիտ, քողըտ ս՜էվ կարվի, պըսակըտ ս՜էվ ըլնէնա, պամբրիտ ս՜էվ ըլնէնա* (կա նաև՝ *պամբրիտ քամուն տանի*) անեծքները, որ աղջիկներն են միմյանց ասում, հիմքում ունեն վերը բերված ավանդությունները, ըստ որոնց՝ երջանկության, հաջող ամուսնության և հետագա ամուսնական կյանքի խորհրդանիշներ էին *կարմիր քողը, կարմիր պամբրին, կարմիր պսակը...* Հարկ ենք համարում նշել, որ կարմիր գույնը թե՛ հայ և թե՛ ուրիշ ժողովուրդների մեջ համարվել է նաև չարահալած պահպանակ (երեխաների և կանանց կարմիր ներքնագգեստը դիտվում էր իբրև միջոց՝ չար աչքի դեմ): Ուստի *կարմիր* կամ *կանաչ* գույնը *սևույ*՝ փոխարինելով՝ փոխվում է խորհրդիմաստը, և օրհնանքի՝ առարկայական աշխարհում գոյություն ունեցող խորհրդանիշ դեմոտատի դիմաց ունենում ենք դրա հակադիր խորհուրդն ունեցող <<լեզվական միավոր>> անեծք:

Երբեմն էլ լեզվական մակարդակում արտացոլված են լինում բարեմադրանքն ու անեծքը, այսինքն՝ ունենք համապատասխան օրհնանք - անեծք հականիշությունը: Ընդ որում՝ հակադրության հիմքում մի դեպքում կարող է ընկած լինել բայի ժխտականությունը, մեկ այլ դեպքում՝ գունանունների խորհրդիմաստների հակադրությունը: Համեմատենք. եթե *ծըլ՛էս, ծախկ՛էս* օրհնանքի դիմաց ունենք *չիր կանընչի* անեծքը՝ բայի ժխտականության դրսևորմամբ, ապա՝ *բ՛արօվ կապ՛էն կարմիրըտ, բ՛արօվ կապ՛էս խիզնիտ կանանչ-կարմիրը* օրհնանքների դիմաց կա *ս՜էվ կապ՛էս* անեծքը, որի հիմքում ընկած է գույների խորհրդիմաստների հակադրությունը:

<<Հայոց լեզվի բարբառային բառարանում>> *կարմիր, կանաչ, սև* գունանունների՝ վերևում ներկայացված խորհրդիմաստները դիտարկված են միայն հետևյալ տարածքներում՝ Արարատ, Թբիլիսի, Նոր Բայազետ, Շիրակ, Ուրմիա, Մուշ, Գորիս, Ղարաբաղ, Բուլանուխ. այսպես օրինակ՝ *կարմիր թ՛էլ կապ՛էլ, կանանչ-կարմիր կապ՛էլ, կանանչ պըսակը հյուս՛էլ (մէկի հ՛էտ), կանանչ-կարմիրըտ թարս կապ՛էմ* <<պսակի չարժանանաս>>, *ս՜էվ թագ ու պըսակ կապ՛էս* <<դեռ չամուսնացած՝ նշանածին կորցնել, նշանածը մեռնի>>, *ս՜էվ կօսպանդ կապ՛էս* <<հարսանիքի օրը մեռնես>>, *ս՜էվ պըսակի արժանանաս* <<1. պսակի չարժանանաս, 2. պսակի դուռը չհասած՝ մեռնես>>, *ս՜էվ լալաչակ ըլն՛էս* <<ամուսինդ մեռնի>> [Հայոց լեզվի բարբառային բառարան, էջ 302-309]:

Պարսկահայ տարածքի խոսվածքները և Արարատյան բարբառը երկար ժամանակահատված գտնվել են միմյանցից անկախ զարգացման պայմաններում. եթե պարսկահայ խոսվածքները չորս դար եղել են կղզիացած՝ չունենալով շփումների հնարավորություն, ավելի անխառն են պահպանել իրենց բարբառային հատկանիշներն ու լեզվամտածողությունը, ապա նույնը չի կարելի ասել Արարատյան բարբառի մասին, որը, շարունակ ազդվելով շրջակա բարբառներից, շատ հատկանիշներ կորցրել է:

Այսպիսով՝ երեք գունանունների դիտարկումը պարսկահայ խոսվածքի օրինանքներում և անեծքներում թույլ է տալիս ասելու, որ գունամտածողությունը տվյալ ժողովրդի, երբեմն գավառի բնակչության կրոնահավատալիքային պատկերացումների վառ արտահայտություններից մեկն է, իսկ տվյալ տարածքում գործածվող օրինանքներում և անեծքներում գունանունների ընդգրկումը արտացոլումն է հանրության մեջ այդ պատկերացումների հիման վրա ձևավորված մարդկային փոխհարաբերությունների և արժեքների:

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հհ. 1,2, Ե., 1976:
2. Աճառյան Հ., Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Ե., 1940:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ.1-4, Ե., 1971-1979:
4. Անդրեասեան Վ., Չհարմահալ գաւառը, Նոր Ջուղա, 1977:
5. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
6. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութեր, անտիպ:
7. Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ե., 2007, հ. 22:
8. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ.Ա-Զ, Ե., 2001-2010:
9. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
10. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
11. Сараджева Л., Армяно-славянские лексико-семантические памятники, Е., 1986, с. 93.

Тер-Григорян Лилит, Мкртумян Анаит – Наименования цвета в благословениях и в проклятиях говоров армян проживающих на территории Ирана.—У каждого наименования цвета, на ряду с основным значением, есть также символично-метафорические значения, в основе которых легли национальные представления, верования и традиции конкретного народа или жителей соответствующего региона.

В цветовом мышлении армян, проживающих на территории Ирана, красный и зеленый представляют символику брака и начала семейной жизни, которые нашли свое отражение как в обрядах, так и в благословениях соответствующей тематики. Между тем заменой этих цветов черным, изменяется не только значение, но благословения превращаются в проклятия, что обусловлено противоположной символикой черного цвета.

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ
ՁՈՒԳԱԴՐԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հայ բարբառագիտության զարգացման հեռանկարում այսօր կարևոր նշանակություն է ստանում հայերենի առանձին բարբառների ու միջին հայերենի զուգադրահամադրումը: Հայերենի բազմաթիվ բարբառների ամբողջական կազմավորման համայնապատկերը լեզվական համապատասխան դրսևորումներով տեսանելի է հենց հայերենի զարգացման միջինհայերենյան շրջանում: Սույն ուսումնասիրությամբ դիտարկվում են Մշո բարբառի ու միջին հայերենի հոլովումների առանձնահատկությունները՝ ընդհանրությունները և տարբերությունները:

Միջին հայերենի և Մշո բարբառի անվանական հոլովումներն աչքի են ընկնում բազմաձևությամբ: Ըստ սեռական-տրական հոլովաձևի՝ միջին հայերենի համար ընդունվում են արտաքին թեքման 8 տիպ՝ *ի* [ազգ-ազգի], *ո* [աթոռ-աթոռոյ], *ու* [այգի-այգու], *ա* [Ադամ-Ադամայ], *ան* [երիկ-երկան], *եան* [գալուստ-գալստեան], *ոջ* [տիկին-տիկնոջ], *վան* [ցորեկ-ցորեկվան], իսկ ներքին թեքման 6 տիպ՝ *ա* [արեգակն-արեգական], *ի* [անձն-անձին], *է* [դուստր-դստեր], *օ* [եղբայր-եղբոր], *եա* [արին-արեան], *աու* [օր-աուր] [Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, 1975, էջ 11]: Ի տարբերություն բոլոր գոյականներն ընդգրկող¹⁴ հոլովումներով ներկայանալի միջին հայերենի՝ Մշո բարբառի համար ընդունելի է կանոնավոր հոլովման 8 տիպ՝ արտաքին՝ *ու*, *ի*, *ան*, *վա*, *ոջ*, *ա*, *ց*, իսկ ներքին՝ *ո* և *ա* հոլովումները: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառի համար չի տարբերակում *ա* ներքին հոլովում [Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, 1958, էջ 81]. այլ լեզվավիճակներում *ա* ներքին թեքման բառերի ճնշող մեծամասնությունը, ինչպես կտեսնենք, Մշո բարբառում ներկայանում են արտաքին թեքման այլ հոլովումներով: Ընդամենը հինգ բառ Մշո բարբառում *ա* ներքին թեքման են՝ պահպանելով ավանդականությունը՝ *տան*, *շան*, *սան*, *ճան*, *անվան*: Մշո **Մկրագումի** խոսվածքում և «Մասնա ծոեր»-ում *անուն* բառը ներկայանում է նաև *ի* հոլովիչով՝ *անու/ընի*:

Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքն ուսումնասիրած Բ. Մադաթյանը նույնպես տարբերակում է հոլովումների 8 տիպ՝ որոնցից *ի*, *ու*, *ան*, *վա*, *ոճ*, *ա* հոլովումներն արտաքին թեքման են, իսկ *ո* և *ա* հոլովումները՝ ներքին: Ալաշկերտի խոսվածքում Բ. Մադաթյանը առանձնացում է *ա* հոլովման տիպը՝ արտաքին և ներքին թեքումներով: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանն իր «Մշո բարբառը» մենագրության մեջ գրում է. «Մի հոլովիչով հոլովվող բառը երբեք այլ հոլովիչ ընդունել չի կարող» [նույն տեղում, էջ 81]՝ որպես բացառություն

նշելով **տեք** բառը, որը հոլովվում է երկու կերպ՝ սեռականում ունենալով **տեքէր/տեքօր** ձևերը, և **-ում** ածանց ստացող բառերը, որոնք **ի** հոլովիչով հոլովվելուց բացի, կարող են հոլովվել նաև **-ան** հոլովիչով՝ **կօղօրում-կօղօրումի/ան**: Բարբառագետի այս բնութագրումը կասկած է հարուցում, քանի որ Մշո բարբառին ու նրա խոսվածքներին հոլովումների փոխանցումները՝ միևնույն բառի տարբեր հոլովական տիպերով ներկայանալը, օրինաչափ դրսևորումներ են, որոնք հիմնավորվում են ոչ միայն տարբեր ժամանակներում ավանդված Մշո բարբառի բանահյուսական ու գեղարվեստական գրականության տվյալներով, այլև Մշո բարբառով հաղորդակցվող մերօրյա բարբառախոսների լեզվական տվյալներով: Խոսքը հատկապես վերաբերում է այն գոյական անուններին, որոնք ներունակ են զուգահեռ ներկայանալու **ի/ու**, **ի/ու/ան**, **ի/ու/ա**, **վա/ան**, **ոջ/ի** հոլովումներով:

Ինչպես միջին գրական հայերենում, այնպես էլ Մշո բարբառում **ի** արտաքին հոլովման տիպը ձևախմաստային տարբերակում չունի, ներառում է բառերի մեծ խմբեր: Ի հակադրություն սրա՝ Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառում ամենատարածված հոլովումը համարում է **ու**-ն՝ առանց հիմնավորելու դրա հանգամանքները: Ինչպես մեր վիճակագրական փաստերն են վկայում, Մշո բարբառում **ի** և **ու** հոլովման տիպերի սահմաններն անկայուն են, դժվար է սպառիչ որոշել նրանցից որևէ մեկի ընդհանրական լինելը: Ըստ մեզ՝ այս երկու հոլովումների գործառական ծանրաբեռնվածությունը հավասարազոր է: Ք. Մաղաթյանը «Ալաշկերտի խոսվածքը» ուսումնասիրության մեջ գերակշռողը **ի** հոլովման տիպն է համարում՝ դարձյալ չհիմնավորելով փաստարկը: ՀԲԱ ծրագրով լրացված Մշո բարբառի մի խումբ խոսվածքներ [տետեր 35, 56, 55, 152, 36, 312], ըստ մեր վիճակագրական քննության, իրարամերժ տվյալներ են տրամադրում **ի** և **ու** հոլովման տիպերի՝ միմյանց նկատմամբ ունեցած գերակշռության հարցում: Առկա նյութի քարտագրմամբ վերլուծումը ցույց է տալիս, որ, օրինակ, Մշո **Մկրագումի** խոսվածքում **ու** հոլովումն ավելի ընդհանրական է, քան **ի**-ն, իսկ Մշո բարբառի Արծկեի շրջանի **Առնջկույս**, **Հառեն** և **Արջրա**, Բիթլիսի շրջանի **Շամիրամ** գյուղի խոսվածքների, ՀՀ Արագածի **Վարդաբլուր** գյուղ գաղթած Խնուս և Մանազկերտ քաղաքների բարբառախոսների լեզվում **ի** հոլովումը զգալի գերակշռություն ունի **ու** հոլովման համեմատությամբ:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ուսումնասիրության հավելվածում բերվում է **ի** հոլովման պատկանող շուրջ 1600 բառանունների ցանկ: Նշված բառերի մի մասը բազմաթիվ գործոններով պայմանավորված չի գործածվում Մշո բարբառում, ինչպես՝ **ազգակ-ազգակի, աղջոյր-աղջոյրի, բազմական-բազմականի, գեղջ-գեղջի, դեկան-դեկանի** և այլն, մի մասը ներկայանում է **ի** հոլովման տիպով, իսկ մի սովորական մասն էլ ներկայանում են ոչ միայն հոլովական **ի**, այլև **ու**, **ա**, **ան** տիպերով, այն է՝ **ագռավի/ու**, **ահի/ու**, **աշտարակի/ա**, **բլթի/ան**, **բլնի/ ու/ ան**, **գեղի/ու/ան**, **դեկտեմբերի/ու/ա**, **կրժի/ան/ու**, **կօղի/ու/ան** և այլն: Եթե միջին հայերենում **ի** հոլովման տիպը ձևախմաստային տարբերակում չունի, ապա Մշո բարբառի

խոսվածքներում, կարելի է ասել, նման տարբերակման միտում կա: Ըստ որի, ձևային տարբերակման հիմունքով կարող ենք կատարել հետևյալ խմբավորումները՝ ա) ու վերջնահանգ ունեցող բառերը՝ *ճամլի, կաղվի, ճճվի, լըվի, ճամլի, բ)* -ազան, -ելիք, -ուր/տէն, -օղ, -ուգ, -իկ/գ, -անք/կ, -ում, -ավօր, -ածու, -էղէն, -արան, -իճ, -օռտ, -վօր, -օծ վերջածանցներով կազմված բառերը, այդ թվում՝ -ազ վերջածանց ունեցող մի քանի բառեր, գ) ա ձայնավորով վերջացող բոլոր բառերը՝ *ագոի, թալվի, գհատի, շուրվի, քէճի, բհալի, շօրվի* և այլն, դ) մա-յիս, հունիս, հուլիս ամսանունները, իսկ մյուս ամսանունները բացի այս տիպից կարող են ներկայանալ ա արտաքին հոլովմամբ ևս, ե) անձնանունների մեծ մասը՝ *Արուսի, Շօղիգի, Պօղօսի, Նօվիգի, Պէդրօսի, Հօվանէսի* և այլն, զ) Մշո բարբառում և նրա խոսվածքներում ի հոլովման են պատկանում ռուսերենից ու գրական լեզվից կատարված նորագույն փոխառությունները՝ բացի ի-ով և ում-ով վերջացող բառերի՝ *մաշինի, կօլիսօգի, տրրակտօրի, դհասարանի, բրրիգաղիրի, կաբինի* և այլն, է) մարմնի մասերի հետևյալ անունները՝ *քրտի, բհերնի, մէճկի, անգաճի, մաղի, ըղունգի, լընդի* և այլն, ը) ազգ, ժողովուրդ նշանակող բառերի մեծ մասը՝ *թուրկի/ու, ռուսի, տաջիգի, պառսիգի, արաբի, աղվանի* և այլն, թ) գրաբարում ն վերջնահնչյուն ունեցող բառերի մի մասը՝ *վօղի, բհէրի, գհառի/ու, հառսի, թօռի/ու, դհիսցի, աղմի, ասիսի* և այլն, ժ) ձևաիմաստային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ *ախշըրի, քաղքի, օխշըրի, օքուղի, արմաղի, ամնի/ու, աբառածի, ավզի, հացի, գհութնի, արնի, քարի, հողի* և այլն: Այդուհանդերձ, ինչպես կտեսնենք, ի հոլովման տիրույթը մեծանում է, քանի որ մյուս հոլովումներին ենթարկվող բառերը գուցահեռ կարող են ստանալ նաև ի թեքույթը:

Այստեղ ուշադրության է արժանի մի կարևոր հանգամանք: Շատ հաճախ վերջնահանգում ձայնավոր ունեցող անձնանունները, սեռական հոլովում, բացի մեզ հայտնի ի ընդհանրական հոլովակերտ ունենալուն, գուցահեռ կարող են ստանալ յ կիսաձայնը կամ չստանալ, որը, ըստ էության, թեքույթի գործառույթ է կատարում՝ *գհէվօյ, Կարօյ, Մարօյ, Ավօյ, Սօւէյ* և այլն: Օրինակ՝ *Կարօյ տուն հարսնիկ է, Զալօ ախճիգ փախավ Անդօ տրղի հէղ, Սօւէ ախճիգ կարկըվավ, առավ գհրկէ տրղին* և այլն: Ըստ Ք. Մադաթյանի՝ այս իրողությունը բացատրելի է հնչյունական հիմունքով. շեշտը մնում է արմատական ձայնավորի վրա, չի անցնում ի հոլովչին, վերջինս թույլ է արտասանվում ու փոխարկվում է յ-ի [Ք. Մադաթյան, 1985, էջ 75], ապա հեղինակը հավելում է, որ, որպես հատկացուցիչ, այս բառերի յ-ն ընկնում է: Այս դեպքում հոլովական իմաստն արտահայտվում է զրո վերջավորությամբ: Անկախ այս բացատրության հիմնավոր կամ ոչ հիմնավոր լինելուց, այս պարագայում կարևոր նշանակություն է ստանում բերված անձնանունների հոլովման տիպի արտահայտման սկզբունքը: Եվ քանի որ հոլովման տեսակները որոշելիս կարևոր է ձևաբանական գործոնը, որոնք թեքությավորվում են

համապատասխան մասնիկներով կամ հերթագայությամբ, ապա այս դեպքում **յ**-ն հանդես է գալիս որպես թեքույթ: Հետևաբար, հիմք ընդունելով բերված անձնանունների կիրառությունները՝ Մշո բարբառի համար կարելի է տարբերակել **յ** կիսաձայնով արտաքին հոլովական տիպ: Այս իրողությունը, թեև հոլովման տեսակի արտահայտման յուրահատուկ դրսևորում է, բայց նորագույնացություն չի կարելի համարել. այն իր պատմական վկայությունն ունի հայերենի զարգացման ավելի վաղ փուլերից սկսած: Դեռևս գրաբարում **ա** վերջնահանգն ունեցող մի քանի հատկանուններ՝ *Աննա/Աննայ, Յուդա/ Յուդայ* և այլն, սեռական հոլովում, որպես վերջավորություն, ստանում են **յ** թեքույթը, իսկ այդօրինակ բառերը **ա** վերջնահանգն ունենալու պատճառով գրաբարի քերականները ընդգրկում են **ա** արտաքին հոլովման մեջ [Ա. Աբրահամյան, 1958, էջ 30]: Մշո բարբառում ավելի լայն ընդգրկում է ստացել այս երևույթը՝ ներառելով **ա, է, օ** վերջնահանգ բներ ունեցող ավելի մեծ թվով անձնանուններ:

Միջին հայերենում տարբերակվում են **ռ** և **ռւ** արտաքին հոլովումները, որոնք գործածության հաճախականությամբ հաջորդում են **ի** հոլովմանը: Սրանց տարածման ոլորտները իրենց ծավալի զգալի մասով համընկնում են միմյանց [Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, էջ 17]: Ընդգծենք, որ միջին հայերենում **ռ** և **ռւ** հոլովման սահմանները հստակեցված չեն, քանի որ անունները կարող են ներկայանալ երկու հոլովման տիպերով էլ: Մշո բարբառում **ռ** արտաքին հոլովում չի առանձնացվում, քանի որ **ոյ>ու** հնչյունափոխական անցմամբ միջինհայերենյան այս հոլովումին պատկանող բառերը համալրել են **ռւ** հոլովման շարքերը: Եթե միջին հայերենում **ռ** և **ռւ** հոլովումների բաշխման ոլորտի մեծագույն մասն ընդգրկում է **ի** ձայնավորով ավարտվող բառերի շարքը, ապա Մշո բարբառը, բացի **ի** ձայնավորով ավարտվող բառերից, ներառում է ձևախմաստային տարբերակում չունեցող բառերի մեծ շերտ, ինչպես նաև հոգնակի թվի հոլովումը: Չենք բացառում, որ այս հիմունքով է Ս. Բաղդասարյանը Մշո բարբառում հոլովման **ռւ** տիպը իշխող համարում:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ուսումնասիրության մեջ բերվում է այս հոլովման շուրջ 700 բառ: Այս ընտրանքը քննելով՝ պետք է ասել, որ այդ բառերը Մշո բարբառում հայտաբերում են որոշակի յուրահատկություններ. Մշո բարբառում միջինհայերենյան **ռ** հոլովումը ներկայանում է զուգահեռ և՛ **ու**, և՛ **ի** տիպերով՝ *ազոաւոյ-ազոավի/ու, գլխոյ-գ՛լլի/ի/ու, գրաստոյ-գ՛ըրաստի/ու, դիհոյ-դ՛ըհի/ու, երեցոյ-երիցու/ի, արծրոյ-արծրվի/ու* և այլն, մի չնչին մասը ներկայանում է **ի** ընդհանրականով՝ *աթոռոյ-աթօռի, անասնոյ-անասնի, խաղողոյ-խաղօղի, հաւատոյ-հավատի, խորհրդոյ-խօրհրդի* և այլն: Վիճակագրական հաշվարկումները և զուգադրահամեմատումը ցույց են տալիս, որ Մշո բարբառում միջինհայերենյան **ռ** և **ռւ** հոլովման տիպերը գտնվում են **ի** և **ռւ** հոլովումների կիրարկման հավասարազոր տիրույթում: Թե՛ միջին հայերենի, թե՛ Մշո բարբառի համար

ընդհանուր է **հ** ձայնավորով ավարտվող բոլոր բառերի՝ հոլովման **ու** տիպին պատկանելը:

Ու հոլովումը, ըստ էության, Մշո բարբառում ձևախմաստային հոլովում է: Կարելի է կատարել հետևյալ ստորաբաժանումները՝ ա) **հ** վերջահանգ ունեցող միավանկ ու բազմավանկ բոլոր բառերը վերցրած ամբողջությամբ, այդ թվում նորագույն փոխառությունները՝ **ճիու, թիու, էգէդէցու, գինու, օսկու, հօքու, խընամու, հայլու, սինու, մըշէցու, գէդացու, դ՛օլշու** և այլն: Բացառություն են կազմում **ի**-ով վերջացող ժամանակ ցույց տվող բառերը՝ **տարվա, կիրազվա, իրէքշափթվա, չօրէքշափթվա, հինգշափթթվա** և այլն, բ) ազգությունների անունները, որոնք կարող են զուգահեռ ներկայանալ **ի** ընդհանրականով՝ **հայու/ի, վրացու, բլրթու/ի, թրթրու/ի, ըռըսու/ի, գ)** կրոնական իմաստ ունեցող հետևյալ բառերը՝ **աստրձու, վանքու, դրժոխքու/ի, դրրախտու/ի, ժամու/ի, էրիսկօբօսու/ի** և այլն, որոնք զուգահեռ կարող են հանդես գալ նաև **ի** հոլովման տիպով, դ) մի շարք կենդանիների անուններ՝ **բ՛ադու, գինու, կօվու, մադագու, օցու, կաքավու, ձէդու, հավու, ջանավըրու, ուլու, լազլագու, քավէջու, գըմէշու, էղըվնէգու, Վանձէդու** և այլն: Ստորև բերվող բառերը հավասարաչափ կարող են պատկանել նաև **ի** ընդհանրական հոլովման, ե) մարդու մարմնի մասերի անուններ՝ **գըլխու/ի, Վանգըջու/ի, ճագադու/ի, փօրու/ի, ձէտվու, էրէսու/ի, սըրդու/ի, գ)** արյունակցական հարաբերություններ ցույց տվող՝ **զավագու, մանչու, լամկու, էրէխու, ճրժու, պաքու, մամու** բառերը, է) ձևախմաստային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ **բ՛ընու, ամսու, գ՛օմու, կարօդու, մըթու, առավօտու, ծաղդու, ջ՛արթու** և այլն, որոնք կարող են նաև **ի** հոլովիչով ներկայանալ, ը) տեղանուններ՝ **էրէվընու, Ալվառինջու, Մըշու, Ալաշկերտու, Հանրճըրու** և այլն, թ) բնության և դրա երևույթների անուններ՝ **էրգընքու, էրգըրու, արէվու, լուսու, անձրէվու, մըթու, ցըրդու, շօքու** և այլն, ժ) Ալաշկերտի խոսվածքում **ու** ձայնավորով վերջացող երկու բառ՝ **կադվու, բըվու, ա** ձայնավորով վերջացող մեկ բառ՝ **ճամպու, -ում**-ով վերջացող **էթում** բառը՝ **էթում, -ուգ** ածանց ունեցող երկու բառ՝ **գէդագու, դըռնագու**, ամսանուններից **աբրիլ** բառը՝ **աբրիլու, ամսու/վա, մըտու/ան, ժա)** տեղանունները պատկանում են **ա** հոլովման տիպին, բայց պատահում է նրանց գործածությունը նաև **ու** տիպով՝ **Ապարանա/ու, Ալազյագա/ու, Լէնինագանա/ու, Թիլվիզա/ու, Թավրէզա/ու**: Հոգնակի թիվը միջին հայերենում ենթարկվում է **ոյ** հոլովման տիպին, իսկ Մշո բարբառում ամբողջությամբ ենթարկվում է **ու** հոլովման, թեև բարբառն ունի եզրային առանձին խոսվածքներ, որոնք ենթարկվում են **ի** հոլովման, ինչպես ասենք՝ Բիթլիսի նահանգի Խիզանի շրջանի **Պռոշէնց** գյուղի՝ ներկայիս Արարատի մարզի **Ավշար** գյուղի խոսվածքն է՝ **անընէրի, պանցէրի, պէրնէրի, գ՛ագանէրի, կիշէրնէրի** և այլն: Ըստ էության, Մշո բարբառում **ի/ու** հոլովումների հստակ տարանջատում

երբևէ չի եղել, որի հիմքերը գալիս են դեռևս միջին հայերենից: Այս չհաղթահարված լեզվական խնդիրը եղել է Պատմական Հայաստանում, երբ մշեցիները չէին կորցրել իրենց տարածական բուն հիմքերը, և այն պահպանվել է մինչ օրս:

Ինչպես միջին հայերենում, այնպես էլ Մշո բարբառում **ա** արտաքին հոլովումը իմաստային հոլովում է: Միջին հայերենում արտաքին թեքման **ա** հոլովումը սահմանափակ կիրառություն ունի: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ բերվում է այս հոլովման պատկանող շուրջ հիսուն անուն՝ հիմնականում անձնանուններ ու անձնանիշ բառեր, ավելի քիչ՝ տեղանուններ՝ *Ադամայ, Անթափայ, Յակոբայ, Վասակա, մամկայ, տիկնայ, քրմուհեայ* և այլն [Ակնարկներ..., էջ 26]: Մշո բարբառում այս հոլովման տարածման սահմաններն ավելի մեծ են, քանի որ ընդգրկում են ոչ միայն վաղ շրջաններից ավանդված, այլև նորագույն շրջանում ի հայտ եկած հատկանունները, ինչպես նաև որոշ ամսանուններ: Ընդ որում, ի տարբերություն միջին հայերենի, Մշո բարբառում այս հոլովման պատկանող տեղանուններն ավելի շատ են, քան անձնանունները. **ա)** անձնանուններ՝ *Հովսիգա, Ավիգա, Ծաղգա, Լուսիգա, Թըթիգա, Սաազա, Մէսրոպա, Սարգա* և այլն, **բ)** տեղանուններ՝ գյուղ, քաղաք, շրջան՝ *Խըլաթա, Էռզըրումա, Վանա, Սասնա, Հացիգա, Բըլխերա, Այաշկէռդա, Մըսրա, Խընուսա* և այլն, լեռներ, գետերի անուններ՝ *Մասիսա, Ալագազա, Շողանկատա, Արագա, Առպաչայա* և այլն, **գ)** -ստան ածանցով երկրների անունները՝ *Հայաստանա, Վըրաստանա, Ըռուսաստանա* և այլն, **դ)** ամսանուններ՝ *հունվարա, փեդրովարա, մառդա, աբրէլա, մաիսա/ի, հունիսա/ի, հուլիսա/ի*: Վերջին երեք ամսանունները կարող են զուգահեռ **ի** թեքությոթ ստանալ: Ա արտաքին հոլովման են պատկանում նաև հետևյալ՝ *մայրիգա, ախչըգա, իրիգա, թօնըգա, սանիգա, կընգա* անձնանիշ գոյականները, այդ թվում՝ *թունդըրա, վառկա, ավագանա/ի, հօտորկ/գա* հասարակ գոյականները:

Արտաքին թեքման **վան/ուան/ւան** հոլովումը միջին հայերենում դիտվում է նորակազմ հոլովում՝ ընդգրկելով ժամանականիշ բառերի մի խումբ, այն է՝ *գիշերվան, յեգուցվան, ցորեկվան, օրվան, մահուան* և այլն: Վերջին՝ **մահ-մահուան** բառն ավելի հին կազմություն է, քան ժամանականիշ բառերը, քանի որ վկայված է տակավին դասական հայերենում: Մշո բարբառում այս հոլովման տիպը, որը ներկայանում է **վա** թեքությոթ, ավելի է ընդլայնել իր գործառման սահմանները՝ ընդգրկելով ժամանակ ցույց տվող բոլոր բառերը, այդ թվում՝ այն բաղադրությունները, որոնց եզրի անդամը ժամանականիշ բառ է՝ *գախվա «ժամանակ», սաբախստանվա, շուղվա, շուղուցվա, Կավալք/վա, շափաթվա/ու* և այլն: Նշված բառերից *շափաթ* և *առավօղ* բառերը կարող են հոլովվել և **ու** հոլովիչով: **Կէս** բառը, թեև ժամանակ չի ցույց տալիս, բայց գործածվելով ժամանակ ցույց տվող բառերի հետ՝ նույնպես հոլովվում է **վա** հոլովիչով՝ *օրուկիսվա, տարիուկիսվա, շաբաթուկիսվա*: Ալաշկերտի խոսվածքում **վա** հոլովման սահմաններն ընդլայնվել են ի հաշիվ **ի**

ձայնավորահանգ բնիկ ու փոխառյալ տեղանունների՝ *Մուկըվա, Ջանգըվա, Լոռվա, Փառպըվա* և այլն:

Միջին հայերենում արտաքին թեքման *ան* հոլովման պատկանող անունների մեծ մասը միավորվում է ձևական ընդհանուր հատկանիշով, քանի որ բառավերջում ունեն *իկ, ալ, ուկ* հանգը: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունը վկայում է շուրջ 32 բառ՝ *երկան, անձկան, աշնան, գարնան, Գորգկան, ըղեղան, եղբայրկան* և այլն [Էջ 26-27]: Մշո բարբառում այս հոլովման տիպն ընդլայնել է կիրառության սահմանները՝ ներառելով հետևյալ բառաշերտերը՝ *ա) -ում* հանգ ունեցող բոլոր բառերը, որոնք միաժամանակ ենթարկվում են նաև *ի* հոլովման՝ *ոուսման, հէտուման, սիլոսածման, սօծմըծման, խօսուման* և այլն, *բ)* գրաբարում *ն* վերջնահնչյուն ունեցող և բարբառում այն կորցրած բառերի մի մասը՝ *շըրթան, խըփան, յէզան, ճըզան, ասխան, դըռան, նըռան* և այլն, *գ)* ուն-ով վերջացող բառերը: Այս հոլովման ենթարկվող *աշուն, գարուն* բառերը բարբառում ունեն նաև *աշունք, գարունք* ձևերը, որոնք հոլովվում են *վա* հոլովիչով, *դ)* այս հոլովմանն են պատկանում տարվա եղանակների անուններից երկուսը՝ *ամռան, ճըմռան*՝ զուգահեռ ենթարկվելով *վա* հոլովման՝ *ամըռվա, ճըմըռվա*, *ե)* ձևախմաստային տարբերակում չունեցող մի խումբ բառեր՝ *ճըղան, մագան, լըձան, թըմբան, կըղըցան, կըժան, լընդան, գժորդան* և այլն:

Միջին հայերենի հոլովման համակարգում *ոջ* հոլովումը իր ոլորտում ներառում է մի շարք ազգակցական առնչակցություն ունեցող անուններ և այն բաղադրությունները, որոնց եզրի անդամը ազգակցական հարաբերությունների ցույց տվող բառ է՝ *այրոջ, այրուկնոջ, ընկերոջ/չ, տիկնոջ, տիրոջ/ու, քուրոջ* և այլն: Ոջ հոլովման իմաստային այս ընդգրկումն արտացոլված է նաև Մշո բարբառում՝ *քըրօջ/չ, տալ/վօջ/չ, կիսրօջ/չ, տիրօջ/չ, հօրքըրօջ/չ, քալօ-րօճ/չ* և այլն: *Տեքըր* բառը *ոջ* հոլովումից բացի կարող է ընդունել նաև *ե, ո* ներքին թեքույթները՝ *տէքէր/տէքօր*: Մշո բարբառի Առնջկույս գյուղի խոսվածքում *ոջ* հոլովումը տարածվում է *թօռ* գոյականի վրա՝ *ի*-ով ձևին զուգահեռ ունենալով *թօռօջ* տարբերակը: Բիթլիսի Շամիրամ գյուղի խոսվածքում *անէր, ընկէր, կիսուր* գոյականները կարող են ընդունել նաև *ի* հոլովումը՝ *անէրի, ընկէրի, կիսուրի*:

Միջին հայերենում սահմանափակ կիրառություն ունեցող արտաքին թեքման *եան* հոլովումը ներառում է գրաբարյան հոլովումը պահպանող *խստ, ուստ, ունդ, ուրդ* վերջավորությամբ բառերը՝ *գալստեան, գալստէն, թագստեան, ժողովրդեան* և այլն: Այս կարգի բառերը Մշո բարբառում ներկայանում են հոլովման *ի* տիպով:

Մշո բարբառում տարբերակվում է նաև *ց* հոլովումը, որին ենթարկվում են *ենք*-ով վերջացող հավաքական գոյականները՝ *Ավիգէնց, Արմօէնց, գհրքօրէնց* և այլն:

Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում ներքին թեքումը գործառական ծանրաբեռնվածության հարցում մեծ ընդգրկում չունի, որը պատմականորեն հիմնավորվում է տարբեր գործոններով: Պահպանված ներքին թեքումներն էլ, ըստ էության, ավելի վաղ շրջանից ավանդված օրինաչափ հոլովական մնացուկներն են, որոնք տակավին ներկայանում են որպես համակարգ, և միջին հայերենն ու Մշո բարբառը դեռ չեն հաղթահարել արտաքին թեքման ամբողջականությունը: Միջին հայերենում ներքին թեքման հոլովումների մեջ գործառական ծանրաբեռնվածության տեսանկյունից առաջնային տեղում է **էա** հոլովումը, որին պատկանում են **-ին, -ութին** հանգով հիմքերը՝ **առողջութեան, արեան, ձեան, ծերութեան, մեծութեան** և այլն: Այս հանգով բառերը, ինչպես արդեն ներկայացրել ենք, Մշո բարբառում **ա** ներքին հոլովման են պատկանում, **-ութին** ածանցով հիմքերը զուգահեռ ունակ են կրելու **ի** թեքույթը, իսկ **-էա**-ի վերածումը **ա**-ի հնչյունափոխական օրենքներով է պատճառաբանվում:

Ինչպես ասացինք, Մշո բարբառում հայերենի ամենակենսունակ **-ություն** ածանցով կազմված բառերը ենթարկվում են ընդհանրական **ի** հոլովման, սակայն Արծկեի շրջանի **Հառեն** և **Արջրա** գյուղերի խոսվածքներում լավագույնս պահպանել են գոյականի ներքին թեքման առանձնահատկությունները՝ **ախպերության, ջջության, զճողութան, թացութան**, թեև այդ խոսվածքները գրանցած մասնագետը վկայել է, որ դրանք հազվադեպ հանդիպող ձևեր են: Իսկ Բիթլիսի շրջանի **Շամիրամ** գյուղի խոսվածքում **-ություն** հանգով բառերի **ա** ներքին թեքմամբ գործառելը կայուն համակարգ է:

Ներքին թեքման **ա, ի, է** հոլովումները միջին հայերենում սահմանափակ կիրառություն ունեն և պահպանել են հոլովման գրաբարյան պատկերը: Բաղաձայն-ձայնորդ կապակցություն ունենալու շնորհիվ **ա, ի, է** հոլովումները ձևային հոլովումներ են դիտվում: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ բերվում է **ա** ներքին հոլովման շուրջ իննսուն բառամիավոր, որոնց մի մասը միաժամանակ կարող է հոլովվել նաև արտաքին թեքման այլ հոլովումներով: Այդ միավորներից այստեղ կհիշատակենք միայն նրանք, որոնք Մշո բարբառում գործածվում են՝ զուգահեռ կրելով այլ թեքույթներ՝ **աղեղան/ի, ամռան/վա, յեզան/ի/ու, թաղման/ի, ծաղկման** և այլն: Մշո բարբառում **ի** և **է** ներքին հոլովումներ չկան, միջին հայերենում գործառող բառերը ավելի վաղ շրջանների և գրաբարյան մնացուկներ են՝ **ակին, անձին, բեռին, թոռին, լերին** և այլն: Մշո բարբառում **է** ներքին հոլովման երկու բառ կարող ենք հիշատակել՝ **քվեր, տեքեր**:

Միջին հայերենում ու Մշո բարբառում **օ** ներքին թեքման են ենթարկվում **հայր, մայր, եղբայր** հանգով հիմքերը, որոնք, ըստ էության, նեղ ազգակցական կապեր նշանակող անուններ են՝ **հեր, մեր, ախպեր, սանամօր, հորօխպօր, քալօփօր** և այլն: Միջին հայերենում առանձնացվող **աւու** հոլովման ամբողջ ոլորտը սահմանափակվում է միայն **օր** բառով և հաշվի առնելով հոլովակազմության սուպլետիվությունը՝ տարարմատությունը, կարելի է այն համարել անկանոն՝ **օր-աւուր**, որը Մշո բարբառում **օրվա** ձևին

գուգահեռ պահպանել է նախնական ձևը: Օրինակ՝ «Սասնա ծռեր»-ի պատումներից մեկում այդ սուպլետիվությունը դրսևորվում է հետևյալ կերպ. **«Չորս ավուր մէջ լման զքառսուն ավահիք շինեցին երկու աղբեր»** [Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, էջ 12]:

Բացի վերոհիշյալ համակարգերի նկարագրությունից՝ Մշո բարբառին հատուկ են որոշ բառաձևեր ու արտահայտություններ, որոնք կանոնավոր ձևեր են, ասենք, գրաբարում՝ **քօ մեղաց/ծ տագ մըղավ, ընի իմ ճճեաց/ծ տագ է մեձցի, խելաց/ծ կըղուր է քու ըսուգ, ընի խօսաց/ծ տագ չըմնա** և այլն: Այս տարբերակների առկայությունը հաշվի առնելով՝ Ք. Մաղաթյանը **օր, աճկ, ճճե, վօղ, գճարուն, աշուն** բառերը համարում է գրաբարաձև հոլովման բառեր [Ք. Մաղաթյան, էջ 84]: -Ք ածանցն ունեցող մի խումբ գոյականներ էլ հոգնակի թվում ներկայանում են գրաբարատիպ՝ **ախպերդիք/ կ-ախպըրդօց/ծ, քուրվը-տիք/կ-քուրվըրդօց/ծ, տէքըրտիք/կ-տէքըրտօց/ծ, գճեղացիք/կ-գճեղացօց /ծ, կընկըտիք/ կ-կընկըտօց/ծ** և այլն, իսկ Արծկեի շրջանի Հառեն և Արջրա գյուղերի խոսվածքում նշված բառերի մի մասը հոգնակի թվում ներկայանում է հոլովման **ա** տիպով՝ **ախպըրտեկաց, քուրվըտեկաց, տէքըրտեկաց, կընթիք-կընթեկաց, խընամըրտեկաց, դուշմընեղաց, մարդոց** [«Սասնա Ծռեր»]: Այս տարբերակների առկայությունը փաստելով՝ Մշո բարբառի համար տարբերակվում է նաև **ոց/ծ** հոլովումը:

Այսպիսով՝ միջին հայերենի և Մշո բարբառի հոլովման համակարգերը բնութագրվում են թեքույթների բազմազանությամբ, արտաքին թեքման հոլովումների առավելությամբ: Եթե միջին հայերենն ունի արտաքին թեքման 8՝ **ի, ո, ու, ա, ան, եան, ոջ, վան**, ներքին թեքման 6՝ **ա, ի, ե, օ, եա, աու** տիպերը, ապա Մշո բարբառը ներկայանում է արտաքին թեքման 8՝ **ի, ու, ա, ան, ոջ, յ, ց, օց**, ներքին թեքման 4՝ **ա, օ, ե, աու** հոլովման տիպերով:

Օգտագործած գրականություն

1. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958:
2. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Ե., 1975:
3. Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958:
4. Ժողովրդական բանահյուսություն, Բ, Ժողովրդական վեպ, 1944:
5. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 10, Ե., 1967, հ. 13, Ե., 1985:
6. ՀԲԱ ծրագրով լրացրած տետրեր՝ 35, 56, 55, 152, 36, 312:
7. Ք. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985:
8. Գ. Մկրտչյան, Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն (ատենախոսություն), Ե., 2011:

Мкртчян Гарик - Сопоставительно-сравнительная характеристика именных склонений среднеармянского языка и диалекта Муша.— В данной статье обсуждаются типы склонений в среднеармянском языке и диалекте Муша и выявляются их схожие черты и различия. Анализ показывает, что как в среднеармянском, так и в диалекте Муша склонения характеризуются неоднотипностью, многообразием окончаний, преимуществом склонений внешней флексии и свободным переносом между их вариантами.

Mkrtchyan Garik - The comparative description of the nominative declensions of Middle Armenian and the Dialect of Mush. – This paper discusses types of declension in Middle Armenian and the dialect of Mush and reveals their similarities and differences. The analysis shows that both in Middle Armenian and in the dialect of Mush the types of declension are characterized by nonuniformity, variety of endings, the advantage of declension of external flexion, and free transfer between the variants.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գալստյան Հասմիկ

Երևանի պետական համալսարան

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԱԾԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ

ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

(Ժամանակակից ֆրանսերենի նյութի հիման վրա)

Ֆրանսերենում գոյականների ածականացումն իրականանում է հետևյալ եղանակներով՝ 1) վերջածանցում, 2) կոնվերսիա, 3) նախդիրով կառույցներ (նախդիր + S):

Հոդվածում կանդրադառնանք ֆրանսերենում գոյականների ածականացման եղանակներից մեկին՝ նախդիրային կառույցներին: Այս գործընթացին մասնակից հիմնական նախդիրներն են՝ *de*, *à*, *sans*, *en* և այլն:

Նախդիր + S տիպի կառույցները մեծ տարածում ունեն արդի ֆրանսերենում: Նրանք գործածվում են ածականական արժեքով: Ֆրանսերենը վերլուծական լեզու է, և այնտեղ, ուր մեկ այլ լեզու կկիրառեր ածանցական ձևեր, ֆրանսերենը գործածում է իր նախդիրները և հատկապես *de* նախդիրը՝ ֆրանսերենի ամենաընդհանրական, ամենավերացական նախդիրը: Շատ դեպքերում նախդիր + S տիպի կառույցները չունեն իրենց համարժեքը ածանցավոր ածականների դասում, սակայն եթե այդ համարժեքը, այնուամենայնիվ, գոյություն ունի, այն ամենուր հանդիպում է նախդիրային կառույցների մրցակցությանը: *De* նախդիրի ընդհանրականության և վերացականության ապացույցը կարող է լինել հետևյալ կառույցների քննությունը՝ *fils de roi* և *fils du roi*¹:

Առաջինը նախդիր + S տիպի է, երկրորդը՝ նախդիր + հոդ + S տիպի: Տարբեր է սրանց ածականացման աստիճանը: Առաջինը նշանակում է առհասարակ թագավորի որդի, մարդ, որի հայրը թագավոր է: Երկրորդ կառույցը մատնանշում է որոշակի թագավորի որդու: *De* նախդիրն ընդհանրական իմաստ ունի: Այն մատնանշում է վերացարկման ավելի բարձր աստիճան, մինչդեռ *du* ձևը, լինելով *de* + *le* ձուլման արդյունքը, ավելի կոնկրետ է, քանի որ *du* (*de la*) ձևերում առկա է նաև որոշյալ հոդը, որը կոնկրետության ցուցիչ է: *De*-ով կազմված կառույցները միտված են դեպի որակականություն:

Ըստ իմաստի նախդիր + S տիպի կառույցները խիստ բազմազան են: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ որակական արժեք և հարաբերական արժեք ունեցող ձևեր:

¹ Bally Ch. Linguistique générale et linguistique française, 1932, էջ 116-118:

Որակական արժեք ունեցող նախդիրային կառույցները լեզվում բավականին հաճախ են հանդիպում, un homme de talent (հմմտ. տաղանդավոր մարդ), un écrivain de génie, une personne de mérite, une femme de goût, un homme de cœur, une personne d'action, une fille de courage, un cri de douleur, un air d'impatience, un mot d'esprit, un geste de menace և այլն:

Այս օրինակներում նկատվում է մի հետաքրքիր օրինաչափություն, բոլոր ածականացված գոյականները վերացական են: Պատճառը, երևի, այն է, որ վերացական գոյականների արտահայտած իմաստներում ավելի շատ հատկությունն է առկա, քան որոշակի սուբստանցը:

Հարաբերական արժեք ունեցող նախդիրային կառույցները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. գոյականական, 2. ածականական, 3. մակբայական:

Գոյականական խմբի կառույցներում գոյականը ավելի մեծ չափով է պահպանում իր խոսքիմասային իմաստը: Այս կառույցները ըստ իմաստի շատ բազմազան են, կարող են մատնանշել՝ ա) գործողության սուբյեկտ, բ) գործողության օբյեկտ, գ) գործիք, դ) պատկանելություն և այլն:

ա) Գործողության սուբյեկտ մատնանշող փոխանցված ձևեր, le retour du prisonnier, le coucher du soleil, le voyage du président, l'arrivée du minisfre, la circulation du sang և այլն:

Բոլոր այս ձևերում գործողություն կատարողը փոխանցված գոյականն է: Նման ձևերի հիմքում առկա են խորքային ստորոգումներ (la circulation du sang - le sang circule և այլն):

բ) Գործողության օբյեկտ մատնանշող փոխանցված ձևեր, la production de la betterave (հմմտ. ճակնդեղի արտադրություն), la découverte de l'Amérique, la récolte des pommes. l'exportation des voitures և այլն:

Նման բոլոր ձևերում փոխանցված գոյականը գործողության օբյեկտ է (la production de la betterave - on produit de la betterave): Երբեմն դժվար է հստակ տարբերակել, թե ինչ հարաբերություն է արտահայտում այս կամ այն կառույցը (օր. la peur de l'ennemi): Խնդիրը լուծվում է, երբ կառույցը դիտարկվում է համատեքստում:

գ) Գործիք մատնանշող փոխանցված ձևեր, brosse à habits (à dents, à souliers, à cheveux, ciseaux à ongles (à raisins).

դ) Պատկանելություն մատնանշող փոխանցված ձևեր, le chien du braconnier (հմմտ. որսագողի շուն). le livre de Pierre, la loge du concierge, le fils duroi և այլն: Խորքային ստորոգումները կլինեն՝ le fils du roi - le roi a un fils, li livre de Pierre - Pierre a un livre և այլն:

Հետաքրքիր է նախդիր + S կառուցվածքի ածականի և վերջածանցով կազմված ածականի համեմատությունը;

օր. Tindustrie de France / l'industrie française,
l'équipe de Strasbourg / l'équipe strasbourgeoise,
la décision d'Angleterre / la décision anglaise,
le voyage du président / le voyage présidentiel,

la crise du ministère / la crise ministérielle և այլն:

Վերջին գույգը դիտարկելիս կարելի է եզրակացնել, որ տարբերությունը որոշակիության աստիճանն է: Այսպես, կասենք la crise du ministère, եթե տվյալ նախարարության մասին արդեն խոսվել է, իսկ եթե տվյալ պահին հարկ է ընդգծել crise բառը, ապա կասենք la crise ministerielle:

Այս բնույթի փոխանցումները հատկապես հաճախ են հանդիպում մամուլում և բառապաշարի՝ տեխնիկային առնչվող շերտերում:

Ածականական խմբի մեջ ընդգրկել ենք այն փոխանցված գոյականները, որոնք մատնանշում են առարկայի որակը, նյութը, որից այն պատրաստված է: Այստեղ մի հետաքրքիր փաստ է արձանագրվում, չեն հանդիպում առարկայի գույն մատնանշող ձևեր: Գործում է լեզվական միջոցների խնայողության օրենքը: Գույն մատնանշելու համար լեզուն կիրառում է կոնվերսիայի եղանակով ածականացված գոյականներ (հմմտ. chapeau de paille - chapeau paille), այսինքն՝ լեզուն ունի հատուկ միջոցներ՝ այս կամ այն հասկացությունը մատնանշելու համար:

Նյութ ցույց տվող փոխանցված գոյականներ, gilet de flanelle, jaquette de cachemire, couverture de fourrure, robe de coton. chapeau de feutre և այլն:

Այս կամ այն հոդի գործածությունը բխում է ոճից: Գրական լեզուն նախապատվությունը տալիս է de նախդիրով կազմված ձևերին, մինչդեռ խոսակցական լեզուն՝ en նախդիրին:

Նյութ մատնանշող փոխանցված գոյականների օրինակները կարելի է շարունակել. chaîne d'or (հմմտ. ոսկե, ոսկյա, ոսկի)², couteau d'argent, lit de fer. marche de pierre. escalier de marbre. couronne de laurier. bouton de corne և այլն:

Եթե կառույցը փոխաբերական իմաստ ունի, ապա լեզուն նախընտրում է de նախդիրը, սակայն կարելի է հանդիպել նաև en նախդիրով ձևերի, femme de fer, visage de pierre, muscles d'acier, ciel de suie, Terre de feu, toison d'or, րայց՝ idee en or, sujet en or:

Երբ հարկ է նշել, որ տվյալ նյութը առարկայի մի մասն է կազմում, գործածվում է à նախդիրը, couleurs à l'huile. bombe à l'hydrogene և այլն:

Բազմաթիվ են կերակրատեսակներ մատնանշող նախդիրային կառույցները:

à նախդիրով	de նախդիրով
potage à groseille	huile d'amande(s)
riz au lait	gelé de groseille(s)
dinde aux marrons	pâté d'alouettes
poulet à l'estragon	rôti de porc և այլն:

Կարելի է նկատել, որ à նախդիրը գործածվում է այն դեպքերում, երբ նշվում է կերակրատեսակի կամ խմիչքի լրացուցիչ բաղադրիչը, իսկ de-ն -

² Ս.Գ.Արքահամյան, Ն.Ա. Պառնասյան, Հ.Ա. Օհանյան, Խ.Գ. Բաբիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, 1976, էջ 180-186:

գործածվում է կերակրատեսակի կամ խմիչքի հիմնական բաղադրիչը մատնանշելու համար:

Խմբում կարելի է ընդգրկել նաև պարունակություն ցույց տվող ձևերը, *goutte de vin, bouquet de fleurs. tasse de the, pot de lait, brin d'espoir, goutte de franchise, verre d'eau* և այլն:

Հետաքրքիր է *une tasse de thé* (մի գավատ թեյ) և *une tasse à thé* (թեյի գավատ) ձևերի համեմատությունը: Առաջինը մատնանշում է քանակություն, սահման, որին արդեն հասել ենք, իսկ երկրորդը՝ նախատեսվածություն, սահման, որին ձգտում ենք հասնել³:

Մակբայական խմբում ընդգրկել ենք այն փոխանցված գոյականները, որոնք մատնանշում են տեղ, ժամանակ, ձև, պատճառ, նպատակ, նախատեսվածություն: Սրանք մակբայական իմաստներ արտահայտող կառույցներ են:

ա) տեղ մատնանշող փոխանցված ձևեր, *cèdre d'Espagne, mère de Chine* (հմմտ. Չինական ծով), *pin de Sibérie, lac de Genève, bataille d'Austerlitz, rivière de montagne, maison de campagne* և այլն:

Այս ձևերի հիմքում ընկած են խորքային ստորոգումներ (*qui se trouve, qui est de. qui vient de, qui a eu lieu* և այլն):

բ) ժամանակ մատնանշող փոխանցված ձևեր, *bruit de nuit, école de dimanche* (հմմտ. կիրակնօրյա դպրոց), *jour d'automne, soir d'été, vent de novembre, papillon de nuit, vol de nuit* և այլն: Խորքային ստորոգումներն են՝ *qui a lieu, qui vole, qui se passe* և այլն:

գ) ձև մատնանշող փոխանցված ձևեր, *yeux en amande* (հմմտ. նշաձև աչքեր), *escalier en colimaçon, lit à baldaquin, lampe à arc* և այլն:

Խորքային ստորոգելիական բանաձևը կլինի «*qui a la forme de*»:

Սա երևի թե միակ դեպքն է, երբ լեզուն նույն հասկացությունը (տվյալ դեպքում՝ ձևը) արտահայտելու նպատակով կիրառում է երկու տարբեր միջոցներ (հմմտ. *chapeau melon - ongles en amande*):

դ) նախատեսվածություն մատնանշող փոխանցված ձևեր, *cabinet de toilette, salle de spectacle, robe de chambre, verre à lunettes, boîte à outils, corbeille à pain, verre à eau, tasse à thé* և այլն:

Սրանց թիվը բավականին մեծ է: Գործածվում են *li*՝ *à*, *li*՝ *de* նախդիրները: Հանդիպում են նաև *pour* նախդիրով ձևեր, *crème pour chaussure, livres pour enfants* և այլն:

Որպես վերջաբան կցանկանայինք նշել, որ հոդերի միջոցով ածականացված գոյականները ֆրանսերենում լայն տարածում ունեն: Ամենից հաճախ գործածվող նախդիրներն են՝ *de, à, en. De* նախդիրը ամենաընդհանրական և ամենավերացական նախդիրն է: Սրանք վերլուծական կառույցներ են, հետևաբար՝ ֆրանսերենին հարազատ: Ոճական տեսանկյունից այս կառույցները պակաս արտահայտիչ են, և սրանց ներքին լարվածությունն

³ Pottier B. Systematique des éléments de relation. 1962.

ավելի փոքր է, քան կոնվերսիայի եղանակով փոխանցված կառույցներում, քանի որ լեզվի համար սրանք ավելի սովորական են, ավելի շատ են գործածվում: Ըստ իմաստի բազմազան են: Կարող են մատնանշել առարկայի որակ, նյութ, գործողության սուբյեկտ, օբյեկտ, գործիք, պատկանելություն, տեղ, ժամանակ, ձև, նախատեսվածություն և այլն:

Ասվածից բխում է, որ երևույթը հետաքրքիր է, բազմապլան և ուսումնասիրության նոր հորիզոնների բացահայտման հնարավորություններ է ընձեռում:

Օգտագործված գրականություն

1. Ս.Գ.Արքահամյան, Ն.Ա. Պառնասյան, Հ.Ա. Օհանյան, Խ.Գ. Բաբիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, 1976, էջ 180-186:
 2. Աթայան Է. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981
 3. Bally Ch. Linguistique générale et linguistique française, 1932
 4. Балли Ш. Французская стилистика, 1961
 5. Brøndal V. Les parties du discours. Parties orationis, 1948
 6. Cohen M. Nouveaux regards sur la langue française: 1963
 7. Damourette J., Pichon Ed. Des Mots à la Pensée: Tome Premier, 1911-1927
 8. Galichet G. Grammaire structurale du français moderne, 1967
 9. Grevisse M. Nouvelle grammaire française, 1980
 10. Guillaume G. Langage et science du langage, 1969
 11. Pottier B. Systematique des éléments de relation. 1962.
 12. Guiraud P. La sémantique, 1964
 13. Tesnière L. Eléments de syntaxe structurale, 1959
- Kurylowicz J. Dérivation lexicale et dérivation syntaxique. Esquisses de

Galstyan Hasmik- Essay of the semantic analysis of nouns adjectivized by transmission (on the basis of modern French material).- The phenomenon of transposition is rather common in modern French. Within the ranges of this article we've tried to consider the adjectival usage of nouns and the means of linguistic expression of that kind of usage.

We've tried to classify the adjectivized nouns according to sense groups and subgroups. Nouns adjectivized through prepositions. Nouns transferred with the help of prepositions can indicate subject of the action, object of the action, instrument, quality, substance, place, time, form, destination, etc.

**ԱՐԴԻ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ**

Սույն հոդվածում ներկայացված է արտերկրում գործող ուսումնական և գիտահետազոտական այն հաստատությունների մասին տեղեկություն, որտեղ ուսումնասիրություններ են կատարվում լեզվաբանության, մասնավորապես հնչյունաբանության բնագավառում՝ ներկայացնելով այն նորություններն ու առաջընթացը, որոնք արձանագրվել են այդ հաստատություններում:

Վերջին տարիներին փորձառական հնչյունաբանության նկատմամբ մոտեցումը փոխվել է, քանի որ փոխվել են այն մեխանիզմները, որոնք կիրառվում են խոսքի արտասանության և ընկալման գործընթացում: Եթե նախկինում լեզվաբանները տալիս էին խոսքի գրավոր նկարագրությունը, հնչյունաբանական վերլուծությունները կատարվում էին լսողական, անհատական (սուբյեկտիվ) մակարդակով, ապա այժմ հնարավորությունների սահմանները բավականին ընդլայնվել են: Այս մոտեցումը տևեց մինչև այն պահը, երբ հայտնվեցին լաբորատորիաներ, որոնք հնարավորություն ընձեռեցին տալու խոսքի ամբողջական և գիտական հավաստի նկարագրությունը:

Հնչյունաբանները տասնամյակների ընթացքում հիմնականում օգտվում էին ինժեներական ակուստիկայի, կապի, բնախոսության (ֆիզիոլոգիայի), հոգեբանության և խոսքի ախտաբանության (պաթոլոգիայի) ոլորտներում առկա մեթոդներից, այսինքն՝ դիտարկման առարկան՝ խոսքը, ուսումնասիրվում էր ոչ լեզվաբանական տեսանկյունից, այլ ուրիշ գիտաճյուղերի դիտարկումների ներքո: Սրա արդյունքում 1950-ականներին ի հայտ եկան միջգիտաճյուղային խմբեր, որոնցից էին *Հասկինսի լաբորատորիաները*:

Հասկինսի լաբորատորիաները հետազոտողների բազմագիտաճյուղային միջազգային անկախ կազմակերպություն է, որն իրականացնում է խոսակցական և գրավոր լեզվի հետազոտություններ: Գիտության մի շարք ճյուղերի համագործակցության արդյունքում նրանք կատարում են նորարարական հետազոտություններ, որոնք բացահայտում են մեր ըմբռնումները խոսքի վերաբերյալ և ցույց տալիս այն ուղիները, որոնք կատարելագործում են մարդկային հաղորդակցությունը կամ վերացնում խոսքի ընկալման ու արտասանության հետ կապված արատները:

Այժմ էլ շատ համալսարաններ փորձառական հնչյունաբանությունը ուսումնասիրում են այլ գիտաճյուղերի հետ մեկտեղ: Օրինակ, *Միդնեյի համալսարանում* խոսակցական լեզվի ախտաբանության (Speech Language Pathology) բաժնում ուսումնասիրում են բուժական խնդիրներ՝ կապված արտասանելու, այդ թվում կակազելու, խոսելու, գրելու, կարդալու, ըմբռնելու հետ:

Լոնդոնի գլոբալ համալսարանում կա Ուդելի ֆակուլտետ, որը ներառում է հոգեբանության և լեզվական գիտությունների բաժին, որն ուսումնասիրում է մարդու ուղեղը, լեզուն և վարքը: Այստեղ համախմբված են մասնագետներ մի շարք բնագավառներից՝ ճանաչողություն, նեյրոգիտություն, լեզվաբանություն, հնչյունաբանություն, կրթություն, կապ, առողջապահություն, բժշկություն, որոնք թույլ են տալիս հասկանալու երևույթի բազմակողմանի հիմնարար և կիրառական խնդիրներ:

Խոսքի ընկալման և լեզվի կենտրոնը, որը գործում է *Մակքարի համալսարանի* (Միդնեյ) մարդու վերաբերյալ գիտությունների ֆակուլտետի լեզվաբանության բաժանմունքում, բաղկացած է մի շարք հետազոտական խմբերից՝ խոսքի հետազոտություն, Աուդիոլոգիա (Audiology), խոսքի և լեզվի պաթոլոգիա, հոգելեզվաբանություն, հաշվողական լեզվաբանություն, խոսքի և լեզվի տեխնոլոգիաներ և այլն: Կենտրոնի գիտահետազոտական խմբերն իրականացնում են միջգիտաճյուղային կիրառական հետազոտություններ: Կենտրոնը նաև համագործակցում է խոսքի և լեզվի ախտաբանական կլինիկաների հետ:

Աշխարհի մի շարք երկրներում գործող Խոսքի տեխնոլոգիայի և ուսումնասիրման լաբորատորիաները հայտնի են որպես խոսքի տեխնոլոգիաների համաշխարհային առաջատար կազմակերպություններ: Այս լաբորատորիաները գտնվում են SRI International գիտահետազոտական ինստիտուտի կազմում, որը զբաղվում է գիտության առաջընթացով: Այստեղ աշխատում են գիտնականներ, ինժեներներ, համակարգչային մասնագետներ և լեզվաբաններ, ովքեր ստեղծում են նոր տեխնոլոգիաներ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ազդանշանային գործընթացները, հնչյունաբանություն/հնչութաբանություն, մաթեմատիկական մոդելավորում, ինժեներական ծրագրեր և այլն:

1990-ականներին խոսքի տեխնոլոգիայի և ուսումնասիրման լաբորատորիաներում մշակվեցին նոր տեխնոլոգիաներ, և ստեղծվեց Nuance Communications-ը, որն այսօր համաշխարհային շուկայի առաջատարներից է: Nuance-ի ծրագրային լուծումներն իրականացվեցին՝ օգտագործելով ընդամենը մարդու ձայնը՝ խոսքը, և հնարավորություն տվեցին ավտոմատացված ստանալ տեղեկություններ և իրականացնել ավտոմատացված ծառայություններ:

Բլլինդյսի համալսարանի գրականության, մշակույթի և լեզվաբանության դպրոցի հնչյունաբանության և հնչութաբանության լաբորատորիան, որը ստեղծվել է 1967թ., աջակցում է մասնագետներին և ուսանողներին՝

հետազոտություններ կատարելու և ուսուցանելու խոսքի հետազոտության բնագավառում՝ խոսքի արտաբերում, ընկալում, վերլուծում, խոսքի ձևավորում և կադապարում: Ներկայումս լաբորատորիայում գործածվում են նորագույն սարքավորումներ և տեխնիկա՝ փորձառական հնչյունաբանական հետազոտություններ կատարելու համար: Լաբորատորիայի գործունեության մեջ հարկ է նշել բարձրորակ թվային ձայնագրման և խոսքի ընկալման և արտաբերման փորձարկումները, խոսքի աերոդինամիկան, էլեկտրագլոտոգրաֆիան (Electroglottography), էլեկտրապալատոգրաֆիան, (Electropalatography (EPG)), հավաքված տվյալների վերլուծությունը:

Էդինբուրգի համալսարանի փիլիսոփայության, հոգեբանության և լեզվական գիտությունների դպրոցում գործում է լեզվաբանության և անգլերենի բաժինը, որն ուսումնասիրում է մարդկային լեզվի հնչյունաբանությունն ու հնչյունաբանությունը փորձարարական և ինժեներական տեսանկյուններից: Բաժինն աշխատում է երկու ուղղություններով՝ հնչյունաբանական լաբորատոր հետազոտություններ և մարդու հոգելեզվաբանություն:

Բելոռուսի ազգային ակադեմիայի Ինժեներական կիրառական փիլիսոփայության 1974 թ. առ այսօր գործում է խոսքի ճանաչման և վերլուծության լաբորատորիան, որն իրականացնում է ծրագրաշարի (software) և սարքաշարի (hardware) ծրագրեր, որոնցից է խոսքի վերլուծության բազմալեզու մոդելը՝ հիմնված խոսքի ազդակների ֆորմանտների նկարագրության վրա: Օրինակ՝ ստեղծվել է այդպիսի մոդել ռուսերենի, անգլերենի, գերմաներենի և ֆրանսերենի համար: Լաբորատորիայում ստեղծել են նաև ռուսերենի, բելոռուսերենի, ուկրաիներենի, լեհերենի և չեխերենի սինթեզատոր, որը հնարավորություն է տալիս տեքստը վերածելու հնչող խոսքի:

Ստենֆորդի համալսարանի հնչյունաբանական լաբորատորիան, որը լեզվաբանության ֆակուլտետի կազմի մեջ է մտնում, ուսումնասիրում է խոսքի արտաբերական, ձայնաբանական, ընկալողական երևույթները սոցիալական և իմացական տեսանկյուններից: Լաբորատոր հետազոտություններն այստեղ կենտրոնացված են երեք թեմաների շուրջ՝ հնչյունաբանական փոփոխություններ և ընկալում, հանրալեզվաբանություն, նախադասության գործընթաց: Լաբորատորիան սարքավորված է ձայնագրման երկու խցիկներով՝ խոսքի արտաբերման և ընկալման/ըմբռնման գիտափորձ կատարելու համար: Լաբորատորիան համալրված է համակարգչային տարբեր ծրագրերով, որոնք ապահովում են օպտիմալ ակուստիկ վերլուծություններ:

Ստենֆորդի համալսարանում անցկացվում են հետազոտություններ այն երևույթների վերաբերյալ, թե ինչպես են ունկնդիրները ընկալում խոսքը, և թե ինչպես են փոխգործակցում լեզվական և սոցիալական գործոնները խոսքի ընկալման և ճանաչման ընթացքում: Այստեղ ուսումնասիրվում են հնչյունաբանական այն հատկանիշները, որոնք ստեղծում են տարբեր ոճեր արտաբերության վերլուծության մեջ: Թեև շատ հանրահնչյունաբաններ կենտրոնանում են ձայնավորի որակի վրա, սակայն ոմանք էլ նախընտրում են ուսումնասիրել լեզվական և սոցիալական նշանակություն ունեցող

վերհնչությամբ հատկանիշները, այդ թվում՝ խոսքի դադար, հնչերանգ, շեշտ և այլն:

Ընկալման, խոսքի և ազդանշանի ընթացքի կենտրոնը *Սուտոնյի համալսարանի* Ճարտարագիտության և ֆիզիկական գիտությունների ֆակուլտետում գործող գիտական կենտրոններից մեկն է, որը հիմնադրվել է 1986 թ. պրոֆ. Յոզեֆ Կիտլերի կողմից: Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել ազդանշանային գործընթացները և ստեղծել համակարգչային ծրագրեր մուլտիմեդիայի պատկերավորման և վիդեո և աուդիո կիրառման դաշտում: Դա Մեծ Բրիտանիայում գործող ամենամեծ գիտահետազոտական կենտրոններից մեկն է, որը զբաղվում է ազդանշանի մշակման և մեկնաբանման հարցերով: Այստեղ փորձարկումներ են կատարվում համակարգչային ընկալման, թվայնացված ազդանշանների գործընթացի, ուսուցման և մեքենայացված արհեստական բանականության ուսումնասիրման, համակարգչային գրաֆիկայի, համակարգչային պատկերի վերլուծության և մուլտիմեդիայի, կապի բնագավառներում: Կենտրոնում գործում են վեց գիտահետազոտական լաբորատորիաներ, որոնք զբաղվում են մեքենայական լսողության, հաղորդակցության հետազոտության և այլ հիմնահարցերով:

Նիդեռլանդների *Մաաստրիխտ համալսարանի* հոգեբանության, նեյրոգիտության, ուղեղի պատկերավորման ինստիտուտում գործում է խոսքի վերլուծության լաբորատորիա, որտեղ կատարում են ձայնաբանական հետազոտություններ՝ ձայնագրություններ, լսողական վերլուծություններ՝ օգտագործելով համակարգիչ, բարձրախոս, ականջակալ և այլն, որոնք կատարվում են ձայնամեկուսիչ խցիկներում: Համակարգչային ծրագրերից օգտագործում են Պռաստը և Գոլդվեյլը՝ փորձառական հետազոտություններ կատարելու համար:

Խոսքի արտաբերման փորձարկումները լաբորատորիայում իրականացվում են նաև այլ նպատակներով: Օրինակ, փորձարկման մասնակիցը նայում է համակարգչի էկրանին ցուցադրված պատկերին, անվանում է դա, որից հետո հաշվարկվում է պատկերի ցուցադրման պահից մինչև արտաբերության պահը եղած ժամանակահատվածը: Այս ամենը կատարվում է անձայնանցիկ տաղավարում ֆոնային աղմուկը կանխելու նպատակով:

Համալսարանի խոսքի լաբորատորիայում տարբեր հետազոտություններ են կատարվում, որոնցից են հոգեբանական-ձայնաբանական, հոգեբանական ուսումնասիրությունները, որոնց ընթացքում հաշվարկվում է փորձարկվողի պատասխանի ժամանակահատվածը, թեստի ընթացքում մասնակցի կատարած սխալների քանակը:

Մաաստրիխտ համալսարանի այս լաբորատորիայի հետազոտական կարևոր թեմաներից է խոսակցական լեզվի ճանաչումը: Փորձարկումները կատարվում են տարիքային տարբեր խմբերի համար, օրինակ՝ ուսումնասիրվում են նորմալ զարգացած երեխաների կարդալու խանգարումները՝ դիսլեքսիա ունեցող մանկահասակների խոսքը, ինչպես նաև շրջակա միջավայրի ճանաչումը ձայների և երաժշտության հնչյունների ընկալման միջոցով:

Ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեթոդների և սարքերի մասին: Քանի որ խոսքը արագ և անցողիկ երևույթ է ժամանակի մեջ, ուստի այս առումով լեզվաբանները դժվարությունների առջև են կանգնում: Սակայն հարցի լուծման ուղիներից մեկը խոսքը ձայնագրելն է, երբ խոսքը վերածվում է նյութական մի ձևի, որը կոչվում է տեսողական ձևափոխություն (*visual transformation*):

Առաջին բանը, որ սովորաբար արվում էր և դեռևս արվում է փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում, խոսքի ձայնագրումը և դրա փոխակերպումն է էլեկտրական էներգիայի: Ապա այս էլեկտրական էներգիան, որը փոխակերպված խոսքն է, իր հերթին փոխակերպվում է տեսողական ձևի՝ թղթի վրա: Տեսողական ներկայացման համար անհրաժեշտ է նաև նկատի ունենալ ժամանակի առանցքը: Այսպիսով՝ հնչյունաբանը ի վիճակի է լինում ուսումնասիրելու ֆիքսված խոսքը, հետ և առաջ տանելու, լսելու մի շարք անգամներ, ցանկացած հատվածներ: Եթե կազմելու լինենք այս երևույթի՝ փոխակերպման, ձայնագրման և պատկերավորման դիագրամը, ապա կունենանք հետևյալը՝ խոսք – պերմանենտ ձայնագրում-արձանագրում/գրանցում⁴

Փորձառական հնչյունաբանության մեջ գործածվող առավել տարածված մեթոդը մագնիսական ժապավենի վրա ձայնագրումն էր: Ձայնի վերլուծության համար գործածվող սարքերից էին խոսափողը (միկրոֆոն), օդաչափիչը (Aerometer), էլեկտրագլոտոգրաֆը (Electroglottograph), արագացուցիչը (Accelerometer), էլեկտրամկանագիրը (Electromyograph), որոնք օգտագործվում են նաև այլ բնագավառներում՝ բժշկության, ֆիզիկայի և այլն:

Ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվում են հետևյալ սարքերը.



Խոսափող (Microphone): Փոխակերպում է ձայնային ալիքը էլեկտրական ազդակների:




Օդաչափիչ (Aerometer): Հայտնաբերում և փոխակերպում է օդի խոսքը էլեկտրական ազդակների:


⁴ Պերմանենտ ասելով պիտի հասկանալ անփոփոխելի ձայնագրությունը:




Էլեկտրագլոտոգրաֆ (Electroglottograph): Նախատեսված է դիտարկելու 2 ձայնալարերի միջև կոնտակտային մակերեսը: Բարձր հաճախականության հոսանքն անցնում է 2 էլեկտրոդների միջով, և ձայնալարերի բացումն ու փակումը առաջացնում է տատանումներ, որից դիմադրողականությունը փոխվում է:



Աքսելերամետր (Accelerometer): Սա մի սարք է, որը հայտնաբերում է շարժման արագության փոփոխությունը: Հնչյունաբանական լաբորատորիայում դա օգտագործվում է, օրինակ, պարանոցի պատի կամ քթի խոռոչում տատանումները հայտնաբերելու համար:



Էլեկտրամկանագիր (Electromyograph): Էլեկտրամկանագիրը հնարավորություն է տալիս բացահայտելու և ձայնագրելու էլեկտրական ազդանշանները, որոնք առաջացել են մկաններում:



Տատանագրիչ (oscillograph): Սա էլեկտրական ազդանշանները դիտելու և չափելու սարք է (լատ. *oscillum տատանում* + հուն. *grapho գրում էմ*):

Ժամանակակից հնչյունաբանության մեջ այժմ օգտագործվող նորագույն մեթոդներից է խոսքի ճանաչման և սինթեզի ավտոմատ ծրագրերի և համակարգչային վերլուծության կիրառումը: Ինչպես հեռախոսները, համակարգիչները և այլ սարքեր չափերով փոքրացան, այնպես էլ ձայնի վերլուծության սարքերը, որոնք մեծ տեղ էին գրավում սենյակում, ամփոփվեցին ընդամենը համակարգչի մեջ, որում տեղադրվեցին ձայնային տարբեր ծրագրեր:



Ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող խոսքի վերլուծության ծրագրերից այժմ օգտագործվում է մի ծրագիր, որի անունն է Պռատ: Praat-ը (հոլանդերեն՝ «խոսք, խոսել») համակարգչային ծրագրային փաթեթ է, որը հնչյունաբանության մեջ նախատեսված է խոսքի վերլուծության, այդ թվում սպեկտրաֆիկ վերլուծության և խոսքի սինթեզի համար: Դա մշակվել է և շարունակում է զարգանալ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից Ամստերդամի համալսարանում: Ծրագիրը ստեղծվել է 1995թ. (տարբերակ 3.1), ունեցել մի քանի տարբերակներ. վերջինը ստեղծվել է 2013-ի հունվարին (տարբերակ 5.3.39):

Ներկայումս գոյություն ունեն մի շարք սոփտվեր ծրագրեր, որոնք իրականացնում են ձայնի վերլուծություն: Դրանցից են նշված Պռատը, Գոլդվեյվը (Goldwave), Վասպը (WASP), Աուդասիթին (Audacity), Վոյսագեյնը (VoiceAgain) և այլն: Նորագույն շատ համակարգիչների մեջ տեղադրված է ձայնի վերլուծության ծրագիր՝ ձայնի ձայնագրիչ (Sound Recorder), որը հնարավորություն է տալիս ձայնագրել և ստանալ ձայնի պատկերը: Վերջինս ստանալուց հետո կարելի է հաշվարկել ժամանակը, կտրել ձայնապատկերի ցանկացած հատված, պատճենահանել, արձագանք տալ, հատվածները բազմիցս լսել և այլն:

Григорян Гаяне – Состояние современной экспериментальной фонетики зарубежом.—В данной статье представлена информация о деятельности тех научно-исследовательских учреждений, университетов и инснититов за рубежом, которые занимаются лингвистикой, в частности фонетикой и экспериментальной фонетикой. Представлены новости и технический прогресс, которого ученые добились в этих учреждениях в сфере экспериментальной фонетики.

В последние годы, экспериментальный подход к фонетике изменился в связи с изменениями в механизмах, которые используются для обработки произношения речи. Если в прошлом лингвисты давали письменное описание речи, а фонетические анализы делались слуховым, индивидуальным (субъективным) путем, то в настоящее время границы возможностей довольно расширились в этой сфере.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայտնի է, որ առանձին հեղինակների լեզվի, հատկապես բառապաշարի ուսումնասիրությանը մեծապես նպաստում են բնագրային համաբարբառները: Դրանցում հավաստի փաստերով և համակարգված արտացոլվում են տվյալ հեղինակի երկի լեզվական միավորները, որոնց քննությամբ կարող են բացահայտվել հայերենի զարգացման միտումներն ու լեզվի քերականական կառուցվածքի տարժամանակյա յուրահատկությունները:

Համաբարբառային մշակման է ենթարկվել նաև Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը, որը հնարավորություն է ընձեռում երկի բառապաշարը բազմակողմանիորեն քննել վիճակագրական, լեզվաոճական և բառակազմական տեսանկյուններից⁵:

Հեթում պատմիչը հայ պատմագիր է, պետական գործիչ: Մերել է Հեթումյանների տոհմից: Եղել է հայոց սպարապետ (1294-1305թթ.), վարել է մի շարք հաղթական ճակատամարտեր հարևան մահմեդական իշխանությունների դեմ:

1842թ. վարդապետ Հ. Մկրտիչ Ավգերյանը Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիներենից թարգմանել է գրաբար՝ նրան կցելով նաև Հեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպական մի շարք պետությունների 1096 - 1307թթ. շրջանի պատմությունից⁶:

Ներկա հոդվածի շրջանակներում կփորձենք համակողմանիորեն ներկայացնել երկում հանդիպող վերլուծական կազմությունների բառակազմական այն հիմնական դասերներն ու մասնակադասարները, որոնք ստեղծվել են հարադրության ուղիով, ցույց տալ վերջիններիս կառուցվածքային առանձնահատկությունները՝ խոսքի մասերի հնարավոր զուգորդումներով, կազմիչ միավորների քանակով ու կազմով, կրած փոփոխություններով և գործածման հաճախականությամբ:

Հեթումի երկի բառապաշարում վերլուծական կազմությունները գերակշիռ թիվ չեն կազմում համադրականների համեմատությամբ: Դրան-

⁵ Հայկական համաբարբառ 17, Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Ե., 1981:

6. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Ե., 1980, էջ 331:

ցում ավելի հաճախական են բայական հարադրությունները, որոնք վկայում են աշխատության յուրօրինակ բառակերտումների առատության մասին:

Ըստ մեր հաշվարկների՝ երկուս գործածվել են ավելի քան 200 հարադիր բայեր, որոնք ունեն պատմաքաղաքական, ռազմական, կրոնաեկեղեցական բովանդակություն և աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, բազմազանությամբ, բառակազմական եղանակների ու միջոցների գործածականության հաճախականությամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվական օրինաչափություններով:

Ըստ բաղադրիչների լրացական-կախումային հարաբերությունների՝ բայական հարադրությունները համարվում են ստորադասական բարդություններ⁷: Այդպիսի բարդություններում բայական անդամը հարադրվում է անվանական բաղադրիչին՝ բայական իմաստ հաղորդելով կապակցությանը: Դրանցում բայական և անվանական հարադիրները պահպանում են իրենց ձևական և իմաստային ինքնուրույնությունը՝ ունենալով բառային մեկ միավորի արժեք: Բարդության առաջին բաղադրիչը՝ անվանական միավորը, բայական հարադրության համար կատարում է հիմքի, իսկ բայական բաղադրիչը՝ ընթացայնության գաղափարի ցուցիչի դեր⁸:

Որպես բայական հարադիր առավելապես գործածվում են **առնել** և **լինել** վերացական իմաստի բայերը, որոնցով Հեթումի երկում հանդիպում են մի քանի տասնյակ կազմություններ: Օրինակ՝ **ազդ առնել, բուռն առնել, դարձ առնել, յարձակմունս առնեմ, չու առնեմ, ականատես լինիմ, անձնատուր լինիմ, անյոյս լինել, դիմակալ լինել, նետաձիգ լինել, սարակինոս լինիմ** և այլն:

Ըստ գործածման հաճախականության՝ հաջորդ տեղում է **տալ** բայը, որով երկում վկայված են հետևյալ հարադրությունները՝ **հրաման տամ, խորհուրդ տամ, խրատ տամ, խոյս տամ, ձեռն տալ, նեղութիւն տամ, պատերազմ տալ, պատուէր տամ** և այլն:

Մյուս բայերով վկայված կազմությունները քանակով զիջում են վեր նշվածներին, թեև ի հայտ են բերում թե՛ բայական, թե՛ անվանական բաղադրիչների բազմազանություն և զուգորդելիություն, ինչպես՝ **ակն** ածել /անել/, **ակն** / **խնամ**, **հոգ**, **շնորհ**/ ունիմ, **առաջի** արկանել /դնել/, **անձնատուր** /**կարեկից**/ եղեալ, **արժանի** /**հակառակ**/ կամ, **գուն** գործեմ /դնեմ /, **կին** / **հանգիստ**, **ճախր** / առնուլ և այլն:

Ինչ վերաբերում է բայական հարադրությունների բաղադրիչների շարադասությանը, ապա պետք է ասել, որ բայերը հիմնականում գրավում են վերջադաս դիրք, թեև կան և նախադաս բայերով հարադրություններ, ինչպես՝ **բառնալ զգլուխ, առնեմ աւար / յաղթութիւն, սէր/, ելանեմ**

7. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի բառակազմություն և իմաստաբանություն, էջ 225 - 227:

8. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 70:

արտաքս, կամ յաղօթս, լինիմ միջամուխ, տամ /մկրտել, յարձակիլ, պաշարել, պատերազմ, քարոզել/ և այլն:

Երկի բառապաշարի ինքնատիպությունը պարզելու և չվկայված բառային միավորներն առանձնացնելու համար վերջինիս հարադրավոր բոլոր բարդությունները համեմատել ենք <<Նոր հայկազյան բառարանի>> (ՆՀԲ), Լ.Հովհաննիսյանի <<Գրաբարի բառարանի>> (ԳԲ), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի <<Միջին հայերենի բառարանի>> (ՄՀԲ), ինչպես նաև Ստ. Մալխասյանի <<Արդի հայերենի բացատրական բառարանի>> գլխաբառերի հետ և պարզել, որ երկուս գործածված բայական հարադրություններից 50-ը արտացոլված չեն նշված բառարաններում. դրանք են՝ **անհայտ լինիմ, առնեմ յայտնություն, առնեմ ժողով, առնում գերի, արժանի կամ, դժնդակ լինիմ, դիակապուտ առնեմ, դնեմ ի բանտի, ի կարգի եղեալ, ի կշիռք դնել, ի հարգի լինիմ, ի ձեռն բերել, ի մօռացօնս լինիմ, ի մտի եղեալ, մարդ յարդարեմ, մարտ յարուցանել, խաղամ յառաջ, կամ յաղօթս, կրօնաւոր լեալ, ձերբակալ լինիմ, յաղթող գտանեմ, յապշութիւն կրթիմ, յարձակմունս առնեմ, յաւարի առեալ, յաւարի առնում, յօշօշ առնեմ, յոչինչ դառնամ, չարիս առնեմ, չարիս առնել, պարգևս առնում, պարգևս տամ, սարակինոս լինիմ, փոխիմ առ Քրիստոս, օրինակ տամ և այլն:**

Կան նաև այնպիսի բառամիավորներ, որոնք ընդհանրապես դուրս են մնացել ՆՀԲ-ից, բայց հանդիպում են Ստ. Մալխասյանի բառարանում՝ **ի գութ շարժեալ, առնում կին, գուշակ լինիմ, վրեժ խնդրեմ, փոյթ տանիմ:**

Այս բարդությունների անվանական հարադիրներն անկախ բառեր են, երկի մեջ նաև ինքնուրույն գործածություն ունեն՝ հանդես բերելով գուգորդելիություն, ինչպես՝ **մարտ և մարտ յարդարեմ // մարտ յարուցանել**՝ և եղև **մարտ** սաստիկ (12): Յորժամ Ապաղայ **մարտ յարդարեմ** ի վերայ սուլդանին Եգիպտոսի... (55): ... սա սկսաւ **մարտ յարուցանել** ընդդէմ կայսեր Յունաց (27): **մեկնիմ և մեկնիմ ի փախուստ** ...և առանց ի խնդիր լինելոյ նորա՝ զոր խնդրէինն, **մեկնեցան** ի տեղուղէն՝ ասելով ...(34): ...զոր տեսեալ այլոց՝ անդէն վաղվաղակի **մեկնեցան ի փախուստ** յետս ընդ կրունկն (23):

Նմանող բառը գրաբարի մատենագրության մեջ անկախ գործածությամբ չի հանդիպում. այն գործածվել է **նմանող լինի** հարադրության մեջ, իսկ երկուս ինքնուրույն գործածություն ունի՝ ... զինուք, ձիովք և զգեստուք **նմանողք** են սովորութեան և ձևոց Թաթարաց (14):

Քննությունը ցույց է տալիս, որ կիրառված բայական հարադրություններում առկա են ժամանակի բառակազմական գրեթե բոլոր կաղապարները.

1. Անվանական հարադիր տարբեր խոսքի մասերով և համապատասխան քերականական ձևավորումով: Օրինակ՝ **գոյական՝ բուռն** առնել, **հրաման** տամ, **ածական՝ անյայտ** լինիմ, **հնազանդ** լինիմ, **դերանուն՝ յոչինչ** դառնամ, **մակբայ՝ առաջի** դնեմ, **ընդդէմ** կալ, **շուրջ** պատեալ, **դերբայ՝ յաղթող** գտանեմ, **բանտարգել** լինիմ և այլն:

Երկում վկայված բազմաթիվ օրինակներում ավելի շատ են այն կազմությունները, որոնցում մակբայական հարադիրը ձևավորված է **ի (յ)** նախդրով և տարածական իմաստ ունեցող բառերով, ինչպես՝ **ի բաց** արձակեմ, **ի դուրս** վարիմ, **ի ներքոյ** անկեալ և այլն:

2. Անվանական հարադրի

ա) ուղիղ ձևով (ուղիղ ձև է նաև եզակի հայցական հոլովաձևը՝ առանց **զ** նախդրի): Օրինակ՝ **գուշակ լինիմ**, **կրօնաւոր լեալ**, **հրաման տամ**, **պատերազմ տալ**,

բ) թեք հոլովներով, որոնք ձևավորված են լինում տարբեր նախդիրներով՝

1. Անվանական հարադրի տրական հոլովաձևով .

ա) **ի (յ)** նախդրով (որոշ դեպքերում ձեռք է բերում ներգոյական հոլովի արժեք)՝ **դնեմ ի բանտի**, **ի մտի եղեալ**, **ի յարգի լինիմ** և այլն ,

բ) **զ** նախդրով՝ **զահի հարեալ**, **զահի հարկանեմ**:

2. Անվանական հարադրի հայցական հոլովաձևով.

ա) առանց նախդրի՝ եզակի թվով՝ բայական հարադրի վերջադաս դիրքով՝ **մարտ յարդարեմ**, **մարտ յարուցանել**, հոգն. թվով՝ **յարձակմունս առնեմ**, **չարիս առնեմ** և այլն,

բ) **ի (յ)** նախդրով՝ եզակի թվով՝ բայական հարադրի նախադաս և վերջադաս դիրքերով՝ **ի գութ շարժեալ**, **ի խնդիր լինել**, **ի պարտութիւն մատնիլ**, **մեկնիմ ի փախուստ**, **վարեմ ի գերութիւն**, հոգն. թվով՝ **ի թիկունս դարձուցանել**, **յարձակմունս առնեմ**, ներգոյ. իմաստով՝ **արկանել ի բուռն**, **մտնեմ ի կարգ**, **մտանեմ ի կրօն** և այլն ,

գ) **զ** նախդրով՝ եզակի կամ հոգնակի թվով՝ **բառնալ զգլուխ**, **գործեմ զերկիր**, **զփորձ առնուլ**, **լնում զաւուրս**, **վճարեմ զկենցաղս** և այլն,

դ) **ընդ առ** նախդիրներով՝ **ընդ առաջ ելանեմ**, **փոխիմ առ Քրիստոս** :

3. Անվանական հարադրի բացառական հոլովաձև.

ա) **ի** նախդրով՝ եզակի թվով՝ **բառնամ ի միջոյ**,

բ) **ի** նախդրով՝ հոգնակի թվով՝ **վճարեալ ի կենաց**, **լուծանել ի կենաց** և այլն:

4. Անվանական հարադրի գործիական հոլովաձևով.

ա) **զ** նախդրով՝ **զմտաւ ածիմ** (= «մտքին դնել», «մտմտալ»):

Հեթումի երկում կիրառված են նաև եռանդամ բայական հարադրություններ, որոնք դարձվածքի արժեք ունեն, ինչպես՝ **զահի զամօթի հարեալ**, **զահի զերկյուղի հարկանիմ** (**զահի հարեալ** (= «խիստ վախենալ»), **զամօթի հարեալ** (= «խաղք ըլլալ»)):

Հազվադեպ հանդիպում են բարդություններ

ա) հոմանիշ անվանական բաղադրիչներով՝ **զահի հարկանիլ // զերկիւղի հարկանիլ**, **մղել մարտ // մղել պատերազմ**,

բ) հոմանիշ բայական բաղադրիչներով՝ **զհետ գնամ // զհետ երթամ**,

գ) բաղադրիչների արմատների կրկնությամբ՝ **փորձ փորձել**:

Ինչ վերաբերում է **անվանական (ոչ բայական)** հարադրություններին, ապա դրանք գրեթե կիսով չափ պակաս են բայականներից: Բարդությունների այս տեսակը, ինչպես և գրաբարում, այնպես էլ Հեթումի բառապաշարում շատ տարածված չէ: Այնուամենայնիվ, թեև ոչ մեծ քանակությամբ, հանդիպում են և՛ դերանունների, և՛ այլ խոսքի մասերի հարադրությամբ կազմված միավորներ՝ զուգորդելիության տարբեր դրսևորումներով:

Մեր կատարած համեմատական քննությունից պարզել ենք, որ

ա) բազմաթիվ հարադրություններից շուրջ 40-ը նորակազմ են և տարբերվում են դասական գրաբարի ընդունված նորմերից: Դրանցից

բ) 29-ը վկայված չեն նշված բառարաններից և ոչ մեկում. դրանք են՝ **աւագ պարոն**⁹, **բարի բարի**, **ընդ երկայն**, **երկայն ընդ երկայն**, **յօշ յօշ**, **տեղոջէ ի տեղի**, **ի տեղիս տեղիս**, **իբր զի**, **որպէս և**, **նոյնպէս և**, **և ահա**, **ոչ սակաւ**, **յո** (=«դեպի ուր») և **է**, **կամք է**, **ի հաճոյս**, **ի փառս**, **եյք արեգական**, **ճակատ մարտի**, **պատմութիւն թագաւորաց**, **սուրբ զիր**, **ճարակ սրոյ**,¹⁰ **երկաթի դուռն**¹¹, **խլիճ** (խըլիճ) **ասլան**¹²:

գ) 5-ը՝ հանդիպում են միայն Ստ. Մալխասյանի բառարանում. դրանք են՝ **ի հանդիպոյ** (բայց՝ **ի հանդիպէ**, **ի հանդիպոջ** տարբերակով),¹³ **մանաւանդ որ**, **թող զի**¹⁴, **որպէս զի**, **սուրբ երկիր**:

դ) 3-ը՝ **հետ զհետէ**¹⁵, **ոչ ինչ**, **դէպ ի**¹⁶, գործածվում են հիշյալ հեղինակների բառարանագիտական աշխատանքներում միայն որպես համադրական բարդություններ:

ե) 1-ը՝ **սուրբ խաչ-ը**, ընդգրկված է ՄՀԲ-ում և Ստ. Մալխասյանի բառարանում, ԱԲ - ում չկա, իսկ ՆՀԲ- ում հանդիպում է միայն օրինակներում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ <<Պատմութիւն թաթարաց>> երկում գործածված ոչ բայական հարադրությունների մեծ մասը կազմվել է շաղկապների և նախդիրների միջոցով: Շաղկապներով բաղադրված անվանական հարադրություններից աշխատության մեջ վկայված են դերանուններով և թվականներով կազմություններ, իսկ նախդիրներով երկում հանդիպում են մի քանի բաղադրություններ, որոնք վերլուծական կառուցվածք ունեցող մակբայներ են, այսինքն՝ առաջացել են գոյականների տարբեր քերականական ձևերից:

9. ՄՀԲ-ում՝ **ավագ իշխան**:

10. Ստ. Մալխասյանի բառարանում հանդիպում ենք միայն օրինակներում՝ **սրի ճարակ դարձնել** :

¹¹ ՄՀԲ- ում տրվում է **երկաթէ** ձևով:

¹² ՄՀԲ-ում առկա է **ասլան** գ. (= « առյուծ », փխբ. « խիզախ, քաջ, անվեհեր »), իսկ Ստ. Մալխասյանի բառարանում՝ **խլիչ** գ., ած. (= 1. « ատամը հանելու գործիք », 2. « լող »)

¹³ **ի հանդիպէ** (= « հակառակ կողմից, դիմացի կողմից »), **ի հանդիպոջ** (= « դեմուդեմը »):

¹⁴ **թող զի** (= « մի կողմ թողնելով որ », « բացի այն, որ »):

¹⁵ Տե՛ս , ՆՀԲ-ում, ՄՀԲ-ում՝ **հետզհետէ**:

¹⁶ Տե՛ս , ՄՀԲ և ՄՏ. Մալխասյանի բառարանում՝ **դէպի** (= « ձախ ») :

Հարկ է նշել, որ ըստ խոսքիմասային պատկանելության՝ ոչ բայական հարադրությունները մեծ մասամբ վերլուծական կազմություն ունեցող դերանուններ ու դերանվանական մակբայներ են: Դերանուններից այս տիպի բաղադրությունների մեջ ամենից ավելի գործածական են անորոշը, որոշյալը և ժխտականը, ավելի սակավ՝ ցուցականն ու հարցահարաբերականը: Օր.**՝** **գամենայն ինչ, զոր ինչ, զայս ամենայն, մի ոմն, մի ոք, ամենայն ոք, այն ինչ, այս ինքն (այսինքն), իրաքանչիւր ոք, ոչ այլուր, ոչ այլ, ոչ ինչ (ոչինչ), ոչ իւիք, ոչ ոք, որ ոք, քանի մի:**

Համաբարբառի տվյալներով նշված դերանուններից հաճախականության ամենամեծ ցուցիչն ունի **ոչ ոք** ժխտականը (15), երկրորդ տեղում է **այն ինչ-ը** (8): Մնացած դերանուններն ունեն մեկից մինչև յոթ հաճախականություն:

Դերանունները մասնակցում են նաև բաղադրյալ մակբայների կազմությանը

1. ածականների կամ դերանվանական մակբայների գուգորդմամբ, ինչպես՝ **ամենայն ուրեք, բազում ինչ, այլ ուրեք,**
2. **ոչ** ժխտական մասնիկով և մի շարք ածականների ու մակբայների գուգորդությամբ՝ **ոչ այնչափ, ոչ երբեք, ոչ սակաւ, ոչ ուրեք,**
3. **ի (յ)** նախդրով, շաղկապով և պակասավոր բայով՝ **յո և է :**

Ինչ վերաբերում է վերլուծական կառուցվածք ունեցող մակբայներին, ապա դրանք իրենցից ներկայացնում են նախդիրների կապակցություններ տարբեր հոլովների հետ: Համաբարբառում որպես առանձին գլխաբառ ներկայացված են նշված տիպի մակբայները՝ **առ, ընդ, ըստ, ի (յ)** նախդիրներով, որոնց գուգորդությունները տարբեր հոլովաձևերի հետ ներկայացնում ենք ստորև.

առ նախդիրը հայցական հոլովաձևի հետ՝ **առ հասարակ,**

ընդ նախդիրը հայցական հոլովաձևի, ածականի, գոյականի և մակբայի հետ՝ **ընդ առաջ, ընդ երկայն, ընդ երկար** (= « երկար ժամանակով»), **ընդ կրունկն, ընդ մեջ,**

ի նախդիրը տրական հոլովաձևի հետ՝ **ի միջի** (= «մեջտեղը»), **ի վայրի,**

ի նախդիրը հայցական հոլովաձևի հետ, եզակի թվով՝ **ի բաց, ի դեպ, ի ծածուկ, ի մեջ, ի տեղի, ի վեր,** մակբայների հետ՝ **ի միասին, ի վերայ, ի ստորև,**

ի նախդիրը հայցական հոլովաձևի հետ, հոգնակի թվով՝ **ի հաճոյս , ի պէտս, ի փառս,**

ի նախդիրը բացառական հոլովաձևի հետ, եզակի թվով՝ **ի բնէ, ի հանդիպոյ, ի միջոյ, ի ներքոյ, ի սկզբանէ, ի վաղուց,** մակբայի հետ՝ **ի հետէ,**

ի նախդիրը բացառական հոլովաձևի հետ, հոգնակի թվով՝ **ի ձեռաց,** մակբայի հետ՝ **ի վաղնջուց:**

Գործածված է և երկու մակբայների հարադրմամբ **ի վաղնջուց հետե** վերլուծական կազմությունը:

Նկատելի է, որ մակբայների կազմության եղանակներից է նաև կրկնությունը. ընդ որում հանդիպում են ինչպես ազատ բաղադրիչներով, այնպես էլ շաղկապներով և նախդիրներով միավորված կրկնավորներ: Երկում հաճախ գործածվում են տարբեր խոսքի մասերի պատկանող և տարբեր հոլովածն ունեցող բառերի կրկնությամբ կազմված մակբայներ: Այսպես, **ազատ** բաղադրիչների կրկնությամբ վկայված օրինակներ են՝ **ազգի ազգի, աւուր աւուր, իրաց իրաց, գունդ գունդ, յօշ յօշ** (գոյականներ), **մի մի** (թվական), **բարի բարի, փոքր փոքր, ուրույն ուրույն** (ածականներ), **արագ արագ, յետս յետս, տեղի տեղի, յոյժ յոյժ** (մակբայներ):

Շաղկապով միավորված բաղադրիչների կրկնությամբ վկայված է միայն **այլ և այլ** օրինակը:

Ավելի շատ օրինակներ են վկայված նախդիրներով միավորված բաղադրիչների կրկնությամբ.

առ նախդրով՝ մի առ մի,

ըստ նախդրով (բաղադրիչների տարբեր հոլովածներով)՝ **մի ըստ միոջե, օր ըստ օրե, ամ ըստ ամե,**

ընդ նախդրով՝ **երկայն ընդ երկայն,**

ի նախդրով (բաղադրիչների տարբեր հոլովածներով)՝ **կարճ ի կարճոյ, տեղուջե ի տեղի :**

Որոշ դեպքերում նախդիրը դրվում է կրկնվող բաղադրիչներից առաջ՝ **ի տեղիս տեղիս, առ փոքր փոքր:**

Կրկնավորների շարքում կարելի է դասել նաև իմաստային մերձավորություն կամ հակադարձ իմաստ ունեցող բաղադրիչների հարադրությունները, ինչպես՝ **բայց սակայն, բայց միայն, և կամ, ճակատ մարտի, ծով Ովկիանոս:**

Վերլուծական կազմություն ունեն նաև մի շարք մակբայներ, որոնք բաղադրվել են **ևս** շաղկապով, **քան, յետ (հետե)** նախադրություններով, ինչպես՝ **այլ ևս, զայլս ևս, զայն ևս, անդր ևս, և ևս, ոչ ևս, անդր քան, առաւել քան, յառաջ քան, նախ քան, յետ որոյ, յայնմ հետե // յայնմհետե, յորմէ հետե:**

Նմանատիպ կառուցվածք ունեն և որոշ վերաբերականներ, որոնք բաղադրված են զանազան խոսքի մասերից կամ քարացած քերականական ձևերից՝ **և եթ, միայն թէ, և ահա:**

Երկի բառապաշարում առկա են վերլուծական կազմության բազմաթիվ շաղկապներ, որոնցից մի քանիսն ունեն բավական բարձր հաճախականություն: Համաբարբառում վկայված հարադրավոր կազմության շաղկապներն են՝ **և ապա (3), ապա եթե (1), բայց սակայն (2), բայց միայն (2), բայց և (1), զի և (1), իբր զի (1), իբրև զի (1), թեպետ և (6),**

մանաւանդ թէ (1), մանաւանդ որ (1), մինչ դեռ (4), մինչ զի (2), որպէս զի (6), որպէս և (6), վասն զի (25), և ահա (6), և զի (2), եւ կամ (2):¹⁷

Սակավ գործածությամբ վկայված է նաև երեք հարադիրներից կազմված **ապա եթէ ոչ (2)** վերլուծական շաղկապը:

Անվանական վերլուծական կազմությունների շարքում առանձնանում են բաղադրյալ թվականները: Հանդիպում են հիմնականում քանակական թվականներ, իսկ կոտորակային թվականներից կիրառված է միայն **երկու և կես** բաղադրությունը: Երկում վկայված են բաղադրյալ թվականների հետևյալ տեսակները.

ա) 11-ից մինչև 99-ի սահմաններում տասնավորի և միավորի բաղադրությամբ գործածված է երեք օրինակ՝ եռաբաղադրիչ բաղիյուսական կազմությամբ՝ **քսան և չորս, քառասուն և երկու, վաթսուն և չորս,**

բ) **հարյուր** թվականի և տասնավորների բաղադրությամբ՝ **հարիւր քսան, հարիւր իննսուննուր** (վերջին բաղադրիչը կցական բարդություն է),

գ) միավորների և **հարյուր, հազար** թվականների բաղադրությամբ հանդիպում են հետևյալ բարդությունները՝ **երկու հազար, եօթն հազար, հինգ հազար, վեց հազար, տասն հազար:** Սրանք երկբաղադրիչ հարադրություններ են, իսկ **երեքհարիւր հազար, չորեքհարիւր հազար, վեցհարիւր հազար** թվականներում առաջին բաղադրիչները կցական բարդություններ են,

դ) տասնավորների և հազարավորների բաղադրությամբ վկայված են ավելի շատ օրինակներ՝ **երեսուն հազար, երկոտասան հազար, մետասան հազար, քառասուն հազար** և այլն,

ե) քառաբաղադրիչ կազմություն ունեն **երկու օրինակ՝ հարյուրավոր + տասնավոր + միավոր** կաղապարով՝ **երեքհարիւր քսան և ինն, վեցհարիւր քսան և երկու:**

Այսպիսով, <<Պատմութիւն թաթարաց>> աշխատության մեջ գործածված բաղադրյալ թվականների ընդհանուր քանակն է 20, որոնց հաճախականությունը նույնպես բարձր չէ, հիմնականում՝ 1-ից 3:

Նշենք նաև, որ համաբարբառում առանձնացված և ինքնուրույն գլխաբառերով ներկայացված են երկում օգտագործված կայուն կապակցությունները, որոնք առանձին բառային միավորների արժեք ունեն: Դրանք կա՛մ

Ա.անվանողական արժեք ունեցող գոյականական բառակապակցություններ են, որոնց բաղադրիչների միջև գոյություն ունեն որոշիչ որոշյալի և հատկացուցիչ հատկացյալի շարահյուսական հարաբերություններ՝ **աւագ պարոն, արքունի դուռն** և այլն, կա՛մ

Բ. կայուն կապակցություններ են, որոնք անվանողական արժեք չունեն և նախադասության մեջ հանդես են գալիս պարագայական պաշ-

¹⁷ Փակագծում նշել ենք համաբարբառում վկայված հարադրավոր կազմության շաղկապների հաճախականության ցուցիչը:

տոններով: Օր.՝ առ ժամանակ մի, զայնու ժամանակաւ, ի սուղ ժամանակի, յետուստ կողմանէ:

Ստորև ներկայացնում ենք այդ կապակցություններն ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների, նրանց խոսքիմասային պատկանելության և գերադաս անդամի դիրքի:

1. Որոշիչ որոշյալ հարաբերություն

Ա + Գ կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝ աւագ պարոն, արքունի դուռն, երկաթի դուռն, յունական ծով, սուրբ գիր, սուրբ երկիր, Գ + Ա կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝ դուռն արքունի, երկիր սուրբ,

Թ + Գ կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝ երկրորդ Հայք,

Գ + Գ կաղապարով՝ աւր յայտնութեան, Դաւիթ արքակաղնի,

2. Հատկացուցիչ հատկացյալի հարաբերություն

Գ ուղղ. հ. + Գ սեռ.հ. կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝ գրուածք Եգիպտոսի, ելք արեգական, երկիր աւետեաց, երկիր թաթարաց, պատմութիւն թաթարաց, ճակատ մարտի, ճարակ սրոյ և այլն,

Գ սեռ. հ. + Գ ուղղ. հ. կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝ նիկոմիդացոց քաղաք, Թուրքաց աշխարհ,

Գ ուղղ. հ. + Գ սեռ. հ. + Ա կաղապարով՝ անապատ Արաբիոյ փոքու:

Որոշ վերապահությամբ կայուն կապակցությունների մեջ կարելի է դասել վասն, սակս նախադրությունների գուգադրումները մի շարք դերանունների հետ՝ վասն այն, վասն այնորիկ, վասն այսորիկ, վասն որոյ, յայն սակս:

Կարծում ենք՝ Հեթումի երկի վերլուծական բարդությունները, որոնք աչքի են ընկնում ինչպես գրաբարի, այնպես էլ իրենց հատուկ բառակազմական կաղապարներով, կարող են տեղ գտնել գրաբարի բառարաններում:

Օգտագործված գրականություն

1. Աւգերեան Մկ., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1988:
2. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003:
3. Հայկական համաբարբառ 17, Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Ե., 1981:
4. Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Ե., 1980:
5. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987:
6. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Ե., 2010:
7. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:
8. Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հ.1, Ե., 1979, հ.2, Ե., 1981:
9. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
10. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ.Մ., Միջին հայերենի բառարան, Ե. 2009:

Мурадян Анаит, Хачатрян Офелия – Аналитические осложнения в труде историографа Етума "История татар". – Полагаем, что составные слова в труде историографа Етума, которые выделяются эффективными словообразовательными конструкциями древнеармянского языка (грабара), а также словообразовательными особенностями, присущими им, могут обогатить армянский язык научной терминологией и появиться в словарях древнеармянского языка.

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐԻ ՀԱՃԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ բոլոր բնական լեզուներն ունեն իրենց հատուկ տառերի բաշխման հաճախություն: Այդ բաշխումը բացահայտելու համար դիմում են տեքստային տեղեկատվության վերլուծությանը:

Տառերի հաճախության վերլուծությունը ենթադրում է, որ տեքստում տվյալ տառի հանդես գալու հավանականությունը տվյալ լեզվի բավականաչափ երկար տարբեր տեքստերի դեպքում իրարից քիչ են տարբերվում: Տառերի հաճախության հաշվարկը կատարվում է ըստ հետևյալ բանաձևի՝ $\text{Freqx} = Qx / Q_{\text{all}}$, որտեղ Freqx -ը տառի հաճախությունն է, Qx -ը՝ x տառի հանդիպելու քանակը, Q_{all} -ը՝ տեքստի տառերի ընդհանուր քանակը: Հաճախությունը սովորաբար ներկայացվում է տոկոսներով, վերջնական արդյունքները՝ ըստ հետևյալ բանաձևի՝ $\text{Freqx} = \frac{Qx}{Q_{\text{all}}} \cdot 100$:

Հ. Աճառյանը իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության ներածություն մեջ ներկայացնում է տառերի և հնչյունների իր կատարած հաշվարկը գրաբարի, արևմտահայերենի և արևելահայերենի համար: Ինչպես նշում է հեղինակը. «Տառերի հաշվի մեջ բացարձակապես հետևել եմ ձայնական գրության»¹: Ահա արևելահայերենի համար Հ.Աճառյանի ստացած աղյուսակը²:

ա	բ	գ	դ	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
մ	յ																
2290	213	176	151	107	1880	813	264	44	850	322	112	171	490	289	66	166	39
764	780																
ն	շ	չ	պ	ջ	ռ	ս	վ	տ	ր	ց	ու	փ	ք	օ			
1711	140	231	212	76	150	406	990	555	1367	301	708	49	306	820			

Նման աշխատանքներ հետազայում կատարել են Է. Աղայանը³ և Ա. Սարգսյանը⁴ գրաբարի տեքստերի համար: Վերջիններս անցկացրել են գրաբարի հնչյունների հաճախության վերլուծություն և ստացել են որոշ չափով տարբերվող հաջորդականություն:

Հետազայում Ա. Սարգսյանը հնչյունների հաճախության վերլուծություն է կատարել նաև 19-20-րդ դդ. հայ գրողների ստեղծագործությունների հիման

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ.1, Ներածություն, Ե., 1955, էջ 265:

² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 277:

³ Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ.1, Ե., 1964:

⁴ Ա. Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, Ե., 1975:

վրա⁵: Համեմատենք հայերենի այս երկու տարբերակների համար ստացված հերթականությունը՝

Արևելահայերեն՝ Ա Ն Ե Բ Դ Ը Մ Ո Ի Յ Ո Վ Կ Տ Ս Լ Յ Հ Ք Թ Գ Չ Բ Դ Պ Ղ Օ Խ Ռ Զ Փ Ժ Ձ Ճ Ջ Ֆ:

Արևմտահայերեն՝ Ա Ն Ե Բ Ը Դ Ո Ի Գ Յ Վ Օ Մ Դ Ք Թ Ս Հ Յ Չ Լ Փ Բ Ղ Ձ Շ Ռ Խ Զ Ձ Ժ Ֆ:

Երկրորդ տողում բացակայում են որոշ հնչույթներ, քանի որ համապատասխան տառերը այլ կերպ են հնչում արևելահայերենում:

Սակայն այբուբենի տառերի հաճախության հաշվարկի համար չենք կարող օգտագործել նշված աշխատությունների տվյալները, քանի որ, ինչպես նշվեց, դրանք նվիրված են հնչույթների քննությանը, երբ, օրինակ, **ե** և **է**, **ո** և **օ** տառերը դիտվում են որպես մեկ հնչույթ, որոշ բաղաձայնների համար (**ձ-ց**, **բ-փ** և այլն) հաշվառվում են արտասանական տարբերակներ, իսկ արևմտահայերենում շատ բաղաձայններ այլ կերպ են հնչում:

Արդեն ասվել է՝ գոյություն ունեն այս կամ այն լեզվում տառերի բաշխման բազմաթիվ տարբեր աղյուսակներ, սակայն դրանցից և ոչ մեկը չի պարունակում վերջնական տվյալներ, տարբեր աղյուսակներում տառերի հերթականությունը կարող են տարբեր լինել:

Տառերի հաճախությունները կախված են տեքստի հեղինակի ոճից, թեմայից, ստեղծման ժամանակից և տեքստի այլ բնութագրերից: Թեև չկա մի որոշակի հաջորդականություն, որը կարող է հաշվի առնել տեքստերի բոլոր տեսակները, կան, սակայն, տառերի բաշխման ընդհանուր օրինաչափություններ, որոնք կարելի է վեր հանել վերլուծելով, հաշվարկելով և համեմատելով նույն ժամանակաշրջանի տարբեր բնագավառների տեքստեր:

Քանի որ մեր նպատակն է վեր հանել ժամանակակից հայերենի տառերի հաճախությունը, ընտրվել են տարբեր բնագավառների մոտավորապես միևնույն երկարությունն ունեցող տեքստեր (մոտ 1000-ական բառ), որոնք լույս են տեսել 2000թ. հետո: Տեքստերի ընդհանուր ընտրանքը գերազանցում է 10 000 բառը: Տեքստերն (T1 - T10) իրենց նշանակումներով հետևյալներն են (տե՛ս Աղյուսակ 1)。

T1 (Ֆիզ.) - **Ֆիզիկա** (Հայկական վիքիպեդիայի «Ֆիզիկա» հոդվածը),

T2 (Ճարտ.1)- **Ճարտարապետություն 1**(Ալեքսանդր Թամանյանի կյանքին և գործունեությանը նվիրված տեքստը),

T3 (Օրենք) - **Կրթության մասին օրենքի** տեքստը,

T4 -(Մամ.) - **Մամուլ** (համացանցի մամուլի տեսությունից),

T5 (Գեղ.գ) - **Ժամանակակից գեղարվեստական գրականություն** (Կարինե Խոդիկյանի «Յոթերորդ օրը» պատմվածքի տեքստը),

T6 (Գիտ.գ.) - **Լեզվաբանություն** (Լ.Հովսեփյանի «Լեզվաբանությունը Հայաստանում» ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կայքէջի հոդվածը՝ <http://language.sci.am/>),

⁵ Ա.Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:

T7 (Քիմ.) - **Քիմիա** (հատված քիմիայի դպրոցական VII դասարանի դասագրքից),

T8 (Կրոն) - **Կրոն** («Կրոնի ազատությունը Հայաստանում» Մ.Երանոսյանի, Վ. Բշխանյանի, Ա.Բշխանյանի ուսումնասիրությունից մի հատված),

T9 (Հաս.) - **Հասարակագիտություն** (դպրոցական VIII դասարանի դասագրքից «Ժողովրդավարության սկզբունքները» հատվածը),

T10 (Ճարտ.2) - **Ճարտարապետություն 2** (Մ.Հասարթյանի «Հայկական Ճարտարապետություն» աշխատությունից հատված):

Վերլուծելով նշված տեքստերը (նախապես դրանցից հեռացնելով թվերը, կետադրական ու այլ նշանները և թողնելով միայն հայերենի այբուբենի տառերը)՝ կազմվել են դրանց տառերի հաճախությունների աղյուսակներ, որոնք ինչ-որ չափով իրարից տարբերվում են, միավորելով դրանք և կիրառելով վերը նշված բանաձևը՝ հայերենի այբուբենի համար ըստ տառերի հաճախությունների ստացվել է հետևյալ դասավորությունը (տե՛ս Աղյուսակ 1): Աղյուսակի առաջին տողում նշվում են տեքստերը (T1-T10), 2-11 սյունակներում տրվում են համապատասխան բնագավառի համար ստացված տառերի քանակը, 12-րդ սյունակում՝ տառերի ընդհանուր քանակը, վերջին՝ 13-րդ սյունակում ներկայացվում են տառերի հաճախությունները՝ տոկոսներով՝ ըստ վերը նշված բանաձևի:

Տառերի այս հաջորդականությունը կարելի է ժամանակակից հայերենի համար ընդունել օբյեկտիվ իրողություն, քանի որ այն կազմված է տարբեր բնագավառների տեքստերի հիման վրա (դասավորությունը ներկայացվում է թվերով՝ այբբենական կարգով, հաճախության նվազմամբ և համապատասխան տոկոսներով): Ստորև տրվում է տեքստերի տառերի հաջորդականությունը հաճախությունների նվազմամբ՝ տոկոսներով.

Ա	Ն	Ը	Ե	Ի	Ու	Կ	Մ	Ո	Տ	Յ	Վ	Ս	Թ	Հ	Լ	Ց	Ը	Դ	Գ
17,3	10,9	7,5	6,4	5,6	4,9	4,0	3,9	3,6	3,3	3,2	2,5	2,2	2,1	2,0	1,7	1,6	1,5	1,4	1,4

Ք	Բ	Պ	Ղ	Ծ	Զ	Է	Խ	Շ	Ռ	Խ	Չ	Ջ	Ժ	Ջ	Փ	Ճ	Օ	Ֆ
1,3	1,2	1,1	1,1	0,9	0,9	0,9	0,9	0,8	0,7	0,6	0,5	0,4	0,3	0,3	0,3	0,3	0,2	0,1

Սույն դասավորության, ինչպես նաև այբբենական դասավորության համար կազմվել են գծանկարներ ըստ տառերի քանակի և տոկոսների (Գծանկարներ 1, 2, 3,) և տեքստերի տառերի ծածկույթը նկարագրող աղյուսակ (Աղյուսակ 2) և պատկեր (Պատկեր 1): Այս պատկերից երևում է, որ հաճախության շարքի տառերի 1-ին տասնյակը ծածկում է տեքստի համարյա 68%, երկրորդը՝ մոտավորապես 20%, երրորդը՝ մոտ 10%, իսկ վերջին 9 տառը՝ տեքստի ընդամենը 3%:

Նմանատիպ աշխատանք կատարվել է նաև տեքստերի բառերի սկզբնատառերի համար: Սկզբնատառերի հաճախությունների այս հաջորդականությունը ստացվել է վերը նշված եղանակով: Ստորև տրվում է տեքստի սկզբնատառերի հաջորդականությունը՝ հաճախության նվազմամբ (տոկոսներով).

Ա Ն Մ Կ Է Ե Ն Ո Բ Տ Ու Ի Պ Ս Գ Դ Թ Ք Լ Վ
10,8 10,1 6,5 5,9 5,8 5,0 4,9 4,9 4 4 3,3 3,1 3,0 3,0 2,9 2,6 2,2 1,9 1,8 1,7

Շ Չ Օ Փ Ձ Ժ Խ Ը Ժ Ձ Ֆ Ձ Յ Յ Ռ Ղ Դ Լ
1,5 1,2 1,2 1,1 1,0 1,0 1,0 0,9 0,8 0,7 0,6 0,5 0,4 0,2 0,2 0,2 0,1 0 0


Այս հաշվարկները հնարավորություն ընձեռեցին ստանալ նաև նշված բնագավառների տեքստերի բառերի միջին երկարությունը.արդյունքները տե՞ս Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 1. Տառերի ընդհանուր հաճախությունը՝ ըստ տեքստի բնագավառների


1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
	Ֆիզ.	Ճարտ.1	Օրենք	Մամ.	Գեղ.գ.	Գիտ.գ.	Քիմ.	Կրոն	Հաս.	Ճարտ.2	Ընդ	%
	T1	T2	T3	T4	T5	T6	T7	T8	T9	T10	.	
ա	1075	1326	1593	1079	676	1532	1317	1350	1501	1275	12724	17.34
բ	85	81	77	65	53	143	102	69	95	71	841	1.15
գ	120	109	170	67	52	130	79	92	61	111	991	1.35
դ	102	86	66	80	89	81	86	107	183	128	1008	1.37
ե	496	458	257	434	384	542	596	563	469	518	4717	6.43
զ	99	39	40	37	25	150	84	79	59	41	653	0.89
է	69	64	37	74	83	31	97	41	87	53	636	0.87
ը	111	110	89	84	67	94	156	119	166	108	1104	1.50
թ	132	131	259	114	50	163	169	167	251	125	1561	2.13
ժ	17	25	15	21	11	14	23	19	80	8	233	0.32
ի	537	418	336	334	251	364	580	485	394	430	4129	5.63
լ	126	144	42	139	102	165	171	127	108	109	1233	1.68
խ	40	61	35	52	30	40	28	57	55	37	435	0.59
ծ	52	80	76	37	46	58	110	81	73	86	699	0.95
կ	311	270	403	187	130	331	333	355	304	310	2934	4.00
հ	129	157	180	131	78	186	132	214	148	135	1490	2.03
ձ	19	21	36	22	19	20	26	13	25	37	238	0.32
ղ	60	77	70	90	63	57	85	88	118	93	801	1.09
ճ	13	39	20	15	9	12	12	18	13	44	195	0.27
ւ	251	220	328	205	233	330	413	284	370	242	2876	3.92
Յ	247	214	256	179	110	274	225	297	328	197	2327	3.17
ն	769	744	907	669	411	995	931	904	977	720	8027	10.94
շ	36	84	38	55	45	59	46	36	72	78	549	0.75
ո	527	245	202	245	167	157	296	259	319	233	2650	3.61
չ	26	24	20	52	79	19	47	36	48	31	382	0.52
պ	40	98	103	88	62	79	94	90	94	90	838	1.14
ջ	37	19	25	40	22	18	40	36	34	31	302	0.41
ռ	49	47	41	48	54	74	55	41	43	58	510	0.70
ս	154	138	228	136	116	147	173	204	164	153	1613	2.20
վ	154	152	178	141	127	182	207	218	285	200	1844	2.51

տ	264	277	299	226	164	200	305	229	220	250	2434	3.32
ր	589	547	618	458	375	581	737	207	762	648	5522	7.53
ց	125	78	96	122	161	101	115	161	94	149	1202	1.64
ու	338	258	506	245	202	447	388	391	579	278	3632	4.95
փ	14	15	17	37	21	17	36	17	33	14	221	0.30
ք	58	82	72	113	78	56	118	117	173	109	976	1.33
և	66	69	52	26	26	79	81	72	83	73	627	0.85
օ	14	14	14	13	11	5	28	21	18	7	145	0.20
ֆ	43	4	3	1	0	1	9	3	2	4	70	0.10
												100,0


Գծանկար 1



Գծանկար 2




Գծանկար 3



Աղյուսակ 2

**Տեքստի ծածկույթը
տասնյակներով**

Տասնյակ	Տոկոս
Ա-Տ	67.7
Զ-Գ	19.6
Ք-Ռ	9.7
Խ-Ֆ	3.03



Պատկեր 1. Տեքստի ծածկույթը հաճախության շարքի տասնյակներով

Աղյուսակ 3. Բառի միջին երկարությունը ըստ տեքստի բնագավառի

Տեքստի համարը	Բնագավառը	Տեքստի տառերի քանակը	Բառերի քանակը	Բառի միջին երկարությունը
T1	Ֆիզիկա	7394	1030	7,2
T2	Ճարտ.1	7025	1055	6,1
T3	Օրենք	7804	1022	7,6
T4	Մամուլ	6161	1080	5,7
T5	Գեղ. գրակ.	4682	1045	4,5
T6	Լեզվաբանութ.	7934	1032	7,7
T7	Քիմիա	8530	1498	5,0
T8	Կրոն	7667	1189	6,4
T9	Հասարակագիտ.	8888	1268	7,0
T10	Ճարտ.2	7284	1244	5,1

Анджела Манукян, Роберт Урутян – Частотный анализ букв армянского алфавита. – В статье приводятся результаты подсчета частот букв алфавита современного армянского языка. Для объективности полученных результатов выбраны тексты примерно равной длины, относящиеся к разным областям: физика, химия, языкознание и т.д. Подсчитана также средняя длина слова в различных текстах.